BnF Gallica

Xohk' ew xosk' : ir keank'in verjin srjanin mej (Yetmahow Hratarakowt'iwn)

Source gallica.bnf.fr / Bibliothèque nationale de France

BnF Gallica

Ormanian, Malachie (1841-1918). Xohk' ew xosk' : ir keank'in verjin srjanin mej (Yetmahow Hratarakowt'iwn). 1929.

1/ Les contenus accessibles sur le site Gallica sont pour la plupart des reproductions numériques d'oeuvres tombées dans le domaine public provenant des collections de la BnF. Leur réutilisation s'inscrit dans le cadre de la loi n°78-753 du 17 juillet 1978 :
- La réutilisation non commerciale de ces contenus est libre et gratuite dans le respect de la législation en vigueur et notamment du maintien de la mention de source.
- La réutilisation commerciale de ces contenus est payante et fait l'objet d'une licence. Est entendue par réutilisation commerciale la revente de contenus sous forme de produits élaborés ou de fourniture de service.

CLIQUER ICI POUR ACCÉDER AUX TARIFS ET À LA LICENCE

2/ Les contenus de Gallica sont la propriété de la BnF au sens de l'article L.2112-1 du code général de la propriété des personnes publiques.

3/ Quelques contenus sont soumis à un régime de réutilisation particulier. Il s'agit :

- des reproductions de documents protégés par un droit d'auteur appartenant à un tiers. Ces documents ne peuvent être réutilisés, sauf dans le cadre de la copie privée, sans l'autorisation préalable du titulaire des droits.
- des reproductions de documents conservés dans les bibliothèques ou autres institutions partenaires. Ceux-ci sont signalés par la mention Source gallica.BnF.fr / Bibliothèque municipale de ... (ou autre partenaire). L'utilisateur est invité à s'informer auprès de ces bibliothèques de leurs conditions de réutilisation.

4/ Gallica constitue une base de données, dont la BnF est le producteur, protégée au sens des articles L341-1 et suivants du code de la propriété intellectuelle.

5/ Les présentes conditions d'utilisation des contenus de Gallica sont régies par la loi française. En cas de réutilisation prévue dans un autre pays, il appartient à chaque utilisateur de vérifier la conformité de son projet avec le droit de ce pays.

6/ L'utilisateur s'engage à respecter les présentes conditions d'utilisation ainsi que la législation en vigueur, notamment en matière de propriété intellectuelle. En cas de non respect de ces dispositions, il est notamment passible d'une amende prévue par la loi du 17 juillet 1978.

7/ Pour obtenir un document de Gallica en haute définition, contacter
reutilisationcommerciale@bnf.fr.

ՄԱՂԱԲԻԱ ԱՐՔԵՊՍ. ՕՐՄԱՆԵԱՆ

ԽՈՀՔ ԵՒ ԽՕՍՔ

ԻՐ ԿԵԱՆՔԻՆ ՎԵՐՋԻՆ ՇՐՋԱՆԻՆ ՄԷՋ

(Ցեսմահու Հրատարակութիւն)

ՏՊԱՐԱՆ ՍՐԲՈՑ ՅԱԿՈԲԵԱՆՑ
ԵՐՈՒՍԱՂԷՄ
1929

Source gallica.bnf.fr / Bibliothèque nationale de France

41223847

ՄԱՂԱԲԻԱ ԱՐՔԵՊՍ. ՕՐՄԱՆԵԱՆ

ԽՈՀՔ ԵՒ ԽՕՍՔ

ԻՐ ԿԵԱՆՔԻՆ ՎԵՐՋԻՆ ՇՐՋԱՆԻՆ ՄԷՋ

(Յեսմահու Հրատարակութիւն)



ՀՐԱՄԱՆԱՒ

ՍՐԲՈՅ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԱԹՈՌՈՅՍ ԵՐՈՒՍԱՂԷՄԻ

ՊԱՏՐԻԱՐՔ

Տ. ԵՂԻՇԷ Ս. ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ ԴՈՒՐԵԱՆ

ՏՊԱՐԱՆ ՍՐԲՈՅ ՅԱԿՈԲԵԱՆՑ

ԵՐՈՒՍԱՂԷՄ

1929

2008-124208

ՏՊԱԳՐԵԱԼ ԾԱԽԻՐՔ

ՏԷՐ ՄԱՏԹԷՈՍ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ ԳԱՅԸԳՃԵԱՆ

Ի ՅԻՇԱՏԱԿ ԾՆՈՂԱՑ ԻՒՐՈՑ

ԱՒԵՏԻՍԻ ԵՒ ՆՈՒՆԵԱՅ

ԳԱՅԸԳՃԵԱՆ

Օրմանեան Սրբազանի 1916 թն Երուսաղէմ հանել տուած վերջին լուսանկարը։



BM
L&A

Eingeschrieben unserer Schriftsprache
zu. Dank Sohn

ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

Հոգելոյս Տէր Մաղաքիա Արքեպս. Օրմանեանի Ազգապատումի *Գ. Մասին հրատարակութենէն եմք, Ս. Աթոռս Տպարանէն լոյս կը տեսնէ իր* խոնարհ *եւ* խօսքը, *իր ինքնակենսագրութիւնը։*

Օրմանեան Արքեպսն իր սոյն գործոյն ինքզինքը կը ներկայացնէ պատմութեան բեմին վրայ, խօսելով իր անձին, իր կեանքին եւ իր գործունէութեան մասին, եւ ասիկա իրաւունքն է հեղինակին։

Բայց թէ ո՛րչափ իրաւունք ունի իր պատումներուն մէջ անոնց հանդէպ՝ որոնց հետ շփում եւ գործակցութիւն ունեցած է, ընթերցողներուն կը թողուի վերապահումներ ընել, եթէ ուզեն։

Պէտք է ըսել որ խոնարհ *եւ* խօսքին *մասնաւոր ուշադրութեան արժանի էջերը անոնք են ուր հեղինակը իր կարծիքները կը յայտնէ հայ ժողովուրդի քաղաքական ճակատագրի մասին եւ դիտել կուտայ եւրոպական պետութիւններու մեզի անմատոյց դիւանագիտութիւնը։*

Հրատարակելով սոյն հատորն իր ամբողջութեամբը՝ հայ ժողովուրդին առիթ տուած պիտի ըլլանք իր ամէնէն բազմարդիւն Հաւակներէն մէկուն կեանքը գնահատելու, իբրեւ Հայաստանեայց Եկեղեցւոյ Պաշտօնեայ, իբրեւ Ուսուցիչ, իբրեւ Քարոզիչ Աւետարանի, իբրեւ Մատենագիր եւ իբրեւ Վարչագէտ Գործիչ մը։

Շնորհակալութեամբ կ'արձանագրենք որ Տիար Գէորգ Մոսիչեան (ի Կ. Պոլիս)՝ որուն քով կը գտնուէր խոնարհ *եւ* խօսքին *բնագիրը, սիրով տրամադրեց Ս. Աթոռս, զայն հրատարակուած տեսնելու փափաքով։*

ԽՈՀՔ ԵՒ ԽՕՍՔ

Ի քեզ Տէ՛ր յուսացայ,
մի՛ ամաչեցից յաւիտեան։

Ա.

Երուսաղէմ, 1915 փետրուար 12/25, Երկ.

Երեկ գիշեր, 1915 փետրվար 11/24, չորեքշաբթի, ժամը 3 տասնվականը, կամ 8,45 եւրոպական ժամահաշուով, լրացուցի կենացս 74րդ տարին։ Երբոր այդ վայրկեանին աչքերս կը դարձնեմ ետեւ, կը տեսնամ որ բաւական ապրեր եմ։ Ըսել է թէ կեանքի վերջերուն մօտեցեր եմ, մանաւանդ որ այս օրերու մահերն ալ կ'ազդեն կեանքի վերջաւորութեան վրայ մտածել։ Հազիւ ամիս մը առաջ, յունուար 6/19 երեքշաբթի, վախճանեցաւ եղբայրս, բժիշկ Կոմիտաս, ինէ չորս ու կէս տարու պզտիկ. անկէ քանի մը ամիս առաջ ալ, 1914 հոկտեմբեր 25/7 նոյեմբեր, վախճանեցաւ քեռայրս Միհրան Տէր-Ներսէսեան, ինէ տասնըմինգ տարի պզտիկ։ Իրաւ մահը տարիքին չնայիր, բայց կեանքի տեւողութեան ալ սովորական չափ մը կայ, եւ Դաւիթ մարգարէ իւր ատենը զայն եօթանասունի վրայ կը դնէր, իսկ առ առաւելն ութսուն։ Ըսել է որ ես սովորականը անցուցեր եմ, և յաւելուածական շրջանին մէջ կը գտնուիմ։ Այս մտածմունքները կը թելադրեն ԽՈՀՔ ԵՒ ԽՕՍՔ մակագրութեան ներքև գիրի առնել կեանքիս և ընթացքիս և գործերուս մասին բռնած ուղղութիւնս և հետեւած սկզբունքներս, ըլլայ իբր խոստովանու-

թիւն, ըլլայ իբր կենսագրութիւն, յուսալով որ աչքս լոյսին փակելէս ետքը, երբ այս տողերս ի լոյս ելլան, կարենան իմ վրայ ուղիղ դատաստան մը կազմելու նպաստել, և ուրիշներու ալ օգտակար ըլլալ։

Միտք չունիմ ժամանակի և կամ նիւթի դասաւորութիւն պահել, որուն համար պէտք էր ծրագիր կազմել, այլ ինչ որ երբ որ միտքիս ներկայանայ, զայն պիտի գրեմ անջատ և ընդհատ հատուածներով։

Այսօր կը գտնուիմ Երուսաղէմ, ուր հասած եմ 1914 մայիս 6/19ին, երեքշաբթի օր, ապրիլ 26/9 մայիսին Կոստանդնուպոլիսէն մեկնած։ Պաշտօնս է Լիազօր Պատուիրակութիւն, Երուսաղէմի խնդիրը վերջացնելու և Երուսաղէմը կարգադրելու յանձնարարութեամբ, բայց ինը ամիս է, նշանաւոր գործ մը եղած չէ, զի ընդհանուր պատերազմը և Սզգ. Պատրիարքարանի ուղղութիւնը դժուարացուցին գործունեայ դեր մը վարել։ Ուստի լսւագոյն պարագաներու սպասելով, առ այժմ կը բաւականանամ վանական վարչութեան հսկել և ներքին հանդարտութիւնը պահել։

Այսչափ ինչ այսօր իբր սկզբնաւորութիւն և իբր կանխաբանութիւն։

Բ

Երուսաղէմ, 1915 փետրուար 15/28 Կիր.

Գոհութիւն Աստուծոյ, առողջութիւնս տեղն է, Երուսաղէմի մէջ ալ օգտուեցայ ու չվնասուեցայ. բժշկական զննութիւններ նպաստաւոր արդիւնք տուին, և տեսնողներն ալ զիս լաւ կը գտնեն։ Բայց ասոր հետ մէկտեղ մարմնոյս մեքենան իր հինցած ըլլալը կը մատնէ։ Մազերս թափած, կէս ճաղատ, աչքերս վատացած, ակնոցով ալ համարձակ կարդալ չեմ կրնար, ականջներս ծանրացած, ակռաներս արուեստական, պորտս գօտիի կա-

բոտ, ծունկերս յօդացաւով, ոտքիս երակները ուռած, առաձգական գուլպայի պարտաւորուած, վերջապէս ամէն մասեր տկարացած։ Ներքին կազմութեան կողմանէ ալ թէպէտ բաւական տոկուն էի, բայց 1913 օգոստոսի վերջին օրերու մահացու հիւանդութենէ ետքը, շատ փոփոխուեցայ, և ստամոքսի և ուղեղի մասին խիստ զգուշութեամբ ապրելու ստիպուած եմ։ Այս կէտերը կը յիշեմ ըսելու համար թէ հինցած մեքենան շուտով կրնայ խանգարուիլ ու չգործել, որչափ ալ սիրտս ու թոքերս բժշկական զննութեամբ առողջ կը վկայուին։

Ահա այդ պարագաները, որ զիս կը յորդորեն ներկայ գրքոյսս ձեռնարկել, և վերջին մտածումներս ու յայտարարութիւններս հետզհետէ գիրի առնել։

Գ

Երուսաղէմ, 1915 մարտ 28/10 ապրիլ Շբ.

Կեանքիս ամենէն ցայտուն և ամենէն նշանաւոր կէտը եկեղեցի փոխելս է, ուստի առաջ կ'ուզեմ սոյն պարագային վրայ խօսիլ։ Այդ տեսակ փոփոխութիւններ կամ դարձեր, յաճախ բախտախնդրութեան ձեւեր կը ներկայեն, և ես ընելէս առաջ ալ այդ բանը գիտէի, ուստի աշխատեցայ այդ ձեւէն խուսափիլ։ Հռոմէադաւան ծնողաց զաւակ եմ եղած, մանկութենէ անոր մէջ սնած, տասը տարիներ հպիւ լրացուցած, Հռոմի մէջ Անտոնեանց վանքն եմ մտած, և կատարեալ կերպով անոնց ուղղութեամբ կրթուած, և նոյն միաբանութեան մէջ ուխտադիր կրօնաւորած եմ տասնուեօթներորդ տարիս լրացնելէ ամիս մը առաջ։ Անկէ ետքը սկսած եմ լատին եկեղեցական վարժարաններու հետեւիլ, և հռոմէական կղերին օրրանն եղող Ս. Ապոլինարի կամ Հռոմէական Դպրանոցի համալսարանական ուսմանց ընթացքն եմ լրացուցած, երկու տարի իմաստասիրութեան, չորս տարի աստուածաբանութեան և երեք տարի կանոնագիտութեան

դասերը աւարտած, և երեք ճիւղերու մէջ զատ զատ մագիստրոսութեան (Doctorat) աստիճաններ ստացած եմ։ Աստուածաբանութեան ընթացքը աւարտած եմ ցանցառ տեղի ունեցող, իսկ արեւելցիի մը կողմէ բնաւ չկատարուած, հրապարակական եւ հանդիսական քննութեան (Atto pubblico) ձեւով և Պապի հովանաւորութեամբ։ Հռոմէական Աստուածաբանական կաճառին ալ անդամ ընտրուած եմ՝ պայմանեալ քննութիւնները լրացնելով։ Մէկ խօսքով կաթոլիկութեան թափանցած և անով տոգորուած ու զարգացած անձ մը եղած եմ, անոր մէջ բարձր դիրք մըն ալ գրաւելու ճշմարտանման հաւանականութեամբ։ Ասոր հետ մէկտեղ հռոմէադաւանութենէ հրաժարած եմ, ինչ որ շատերուն զարմանալի երեւցած է, և ասոր մեկնութիւնն է որ հարկ կը սեպեմ տալ։

Առաջին միտքը ծագած է յիս, նոյն իսկ ուսանողութեանս օրերէն, քանի տեսած և ուսած եմ հռոմէադաւանութեան քաշկրատուք պատճառաբանութիւնները, նախապաշարեալ տեսութիւնները, այլայլեալ մեկնութիւնները և կամայական եզրակացութիւնները։ Այս կէտը այնչափ յայտնի էր որ դպրոցական վարժութիւններու մէջ, զուտ հռոմէական վարդապետութիւններու դէմ բուռն առարկութիւններս, դասընկերներուս ալ դիտողութեան առարկայ եղած էին, որոնք սովոր էին կրկնել, թէ հերձուածող մը (scismatico) ըլլալս կը տեսնուի, զի անոնց աչքին ամէն արեւելցի ուղղադաւան չէ, զի հռոմէական չէ։ Քանի դասընթացներու մէջ յառաջեցի, այդ ըմբռնումս ալ աճեցաւ։ Սոյն աճումին հետզհետէ ոյժ տուին հռոմէական պապութեան կամ պապական վարչութեան կողմէ նախ հայ Անտոնեան միաբանութեան, և յետոյ հայ կաթոլիկ հասարակութեան հանդէպ բռնուած ընթացքները, և զանոնք օտարացնելու և լատինութեան ձուլելու համար կատարուած գործողութիւններն ու բռնադատիչ միջոցները, միշտ կաթոլիկութեան պահանջից պատրուակին ներքև։ Ասոնք իմ վրաս շատ ներգործեցին, և աշակերտական միջոցիս ստացած տեսութիւնները զօրացուցին։ Տասնըհինգ տարիներ անցուցեր էի ի Հռոմ, 1851էն մինչև 1866, երբ առաջին անգամ Կ. Պոլիս դարձայ, և հայ կաթոլիկութեան ու հայ Անտոնեան միաբանութեան կողմէ պապական վարչութեան հետ յուզուած խնդիրներուն մէջ մտայ, և գործով և մանաւանդ գրիչով, Հր-

ռոմի հետ մաքառելու ասպարէզին հետևեցայ, և ընդդիմադիր լաւ գործիչ մը դարձայ։ Պատմական յիշատակներով գրուածս խճողել չեմ ուզեր, բաւական ըլլայ յիշել Անտոնեան կանոնագիրքին և միաբանական վարչութեան խնդիրը, Լիբանանի հռոմէական կաթողիկոսութեան գործը, Հասունեանի կաթողիկոսանալը, Ռեվերսուրուս (Reversurus) կոնդակի նորութիւնները, հասարակութեան ընդդիմանալը, 1869ի եպիսկոպոսական ժողովը, Վատիկանի ժողովին բացուիլը, հայ կաթոլիկներուն յուզումները, հակահասունեան գործունէութիւնը, որոնց մէջ գտնուած եմ շարունակ, գործիչի և գրիչի դերերը միանգամայն վարելով։ Ասոնց հետեւանքն էր Հռոմի Անտոնեան վանքը պարպելնիս, եւ Գազանճեան Սուքիաս արքեպիսկոպոսի և Զրաճեան Դաւիթ վարդապետի հետ գիշերախառն գաղտագողի Հռոմէ փախչելնիս 1870 ապրիլ 19|1 մայիսին, պապական հալածանքէ և սպառնալիքէ ազատելու համար։ Երբոր Կ. Պոլիս դառնալով պայքարին գլուխն անցնողներէն մէկն ալ ես եղայ, քանիներ ինծի խրատ կուտային, թէ կաթոլիկութեան մէջ պապութեան դէմ մաքառիլ հնար չէ, և պարտութիւնը ակներեւ է, և ապագային չխայտառակուելու միջոցը, կանուխէն ետ քաշուիլն է։ Այն թուականէն ես կը պատասխանէի, որ ետ դառնալու պարագան մտածողը թո՛ղ ըստ այնմ գործէ, իսկ ես աւելի առաջ երթալու համար ճանպայ ելած եմ։

Տարի մը Կ. Պոլիս մնացի, 1870 մայիս 17|29էն մինչև 1871 ապրիլ 24|5 մայիս, և այդ միջոցին միշտ պայքարին գլուխը գտնուեցայ, և բոլոր թղթակցութեանց և յայտարարութեանց գիրերը ես պատրաստեցի։ Հինգ օրով նորէն Հռոմ հասայ, ուր հինգ տարի մնացի, մինչև 1876 ապրիլ 30|12 մայիս, Անտոնեան միաբանութեան ելեւմտական շահերը պաշտպանելու և կարգադրելու պաշտօնով, բայց անկէ աւելի պապութեան դէմ հակահասունեան պայքարը մղելու աշխատեցայ։ Կոստանդնուպոլսոյ հետ անընդհատ նամակագրութիւն կատարեցի, Հռոմի լրագիրներուն շարունակեալ թղթակցութիւններ տուի, անջատ հրատարակութիւններ և բացատրական յօդուածներ գրեցի, մինչև իսկ 307 երեսով Le Vatican et les Arméniens հատոր մը հանեցի։ Մահամերձ ուղեղային հիւանդութիւն մըն ալ անցուցի 1875ին, և չպակսեցան յետին վայրկեանի մէջ զիս դարձի բե-

բելու փորձողներ, զորս իբր դիակի շուրջ հաւաքող ագռաւներ որակեցի և մերժեցի։ Հասուն ինքն ալ, 1875 օգոստոս 27|8 սեպտեմբերին, Վիէննայի մէջ, փորձեց զիս իրեն ձգել, մահացու հիւանդութենէ ապաստիս իբր ապաշխարութեան աստուածային հրաւէր մեկնելով, որուն պատասխանեցի, թէ հանդարտ խիղճով նայեցայ մահուան երեսը, և Աստուծոյ կեանքս պահելը կը նկատեմ իբր սկսած ճանապաս ծայրը հասցնելու ընծայուած շընորհք։

Այդ ոստոստուն յիշատակները կը քաղեմ ցուցնելու համար թէ հռոմէադաւանութենէ հեռանալու միտքը իմ վրայ, ո՛չ կիրքի մը վայրկենական որոշում և ո՛չ չահադիտութեան կեղծիք էր, այլ երկար ատեն խորհուած և կշռուած, և խոհական քայլերով յառաջացած գործ մը եղած է։ Հռոմէ դառնալով Կ. Պոլիս հասած էի 1876 մայիս 7|19ին, և Անտոնեանց և Հակահասունեանց պաշտօնական գործերուն մէջ մտած էի, բայց որոշ խորհուրդն էր իմ դիտումը, և 1877 փետրուար 11|23ին, ճիշդ ծննդեանս 37րդ տարեդարձին օրը, Վարժապետեան Ներսէս պատրիարքին ներկայացայ, Յովհաննէս Մկրեան աւագ քահանային առաջնորդութեամբ, և Հայոց պատրիարքարանի իրաւասութեան ներքև ընդունուիլս խնդրեցի։ Սիրալիր եւ պատուադիր ընդունելութեան հանդիպեցայ անձիս նկատմամբ, բայց խնդիրքիս վերապահութեամբ։ Յովհաննէս Կիւմշեան և Յարութիւն Նորատունկեան տեսարց ալ ներկայութեամբ պատրիարքը յայտարարեց, թէ մինչ Մխիթարեանք Հայերը իբր կաթոլիկ կ'ուզեն ձեւացնել, Օրմանեան կաթոլիկները հայ ձեւացնել կ'աշխատի. այս կ'ըսէր, վանդի կարդացած էր Le Vatican et Les Arméniens հատորս, զոր Հռոմէ իրեն ղրկած էի։ Ներկաներէն Յարութիւն Նորատունկեան վրայ կը բերէր, թէ ինքն Օրմանեանը ա՛յնպէս ճանչցած էր 1863ին, նոյն իսկ Վատիկանին սուներից ներքև։ Ներսէս պատրիարք չուզեց որ անմիջապէս դիտումս գործադրեմ, այլ Հակահասունեանց տագնապի օրեր անցընելը գիտնալով՝ պատասխանեց. «Տեղդ կեցի՛ր ու խմորէ՛, մենք քեզ արդէն կը ճանչնանք»։

Այդ օրէն մինչև վերադարձիս գործադրութիւնը երկու տարի և ութնուկէս ամիսներ անցան, և բոլոր այդ միջոցին միեւնոյն նպատակին հետեւեցայ, պաշտօնական պահանջները յարգելով։ Հակահասունեան պատրիարքարանի մէջ ատենադպիրի և

ժողովական քարտուղարի և հաշուակալի պաշտօնները կը վարէի, Անտոնեան միաբանութեան մէջ տնօրէն ժողովոյ անդամակիցի և ելեւմտից տեսուչի պաշտօնները կը կատարէի, բայց և միանգամայն Հայոց պատրիարքարանի մէջ Վիճակագրական Յանձնաժողովոյ անդամակիցի, և Ազգ. Մատենադարանի տեսուչի, եւ Հայկական Ինդրին գործակիցի պաշտօններուն կոչուած էի։ Պատրիարքին մօտ եւ պատրիարքարանի մէջ կը գտնուէի շարունակ, լրագրական խմբագրութեանց կը յաճախէի, ամէն դասակարգի ազգայնոց հետ մտերմացած էի, թէ ոչ պաշտօնապէս, գործնականապէս Հայոց պատրիարքարանին կը պատկանէի։ Ընդհանուր ժողովոյ գումարումներուն օրերը Ազգ. Մատենադարանի սրահը կը լեցուէր երեսփոխաններով և խմբագիրներով, և յարաբերութիւններս կ'ընդարձակուէին հետզհետէ։ Երջանկայիշատակ ներսէս պատրիարքի անպայման համակրութիւնը կը վայելէի։ Միեւնոյն միջոցին սկսայ ազգային լսարաններու մէջ ալ բանախօսել, միշտ ազգային նիւթերու վրայ ճառելով, և ընդհանուր գնահատումի արժանանալով, և խօսածներս հրատարակելով։

Երբոր Յովնան Ֆիւբէլեան արքեպիսկոպոս, Հակահասունեանց պատրիարքը, 1879 փետրուար 27|11 մարտին, գիշերախառն փախուստով դնաց Հասունեանի յարեցաւ, Հակահասունեանց դիրքը բոլորովին խախտեցաւ, և անկայուն գործին մէջ շարունակելը աննպատակ դարձաւ։ Ես այլեւս պաշտօնական քայլեր առնելու քաջալերուեցայ։ Անտոնեանները ամբողջ միաբանութեամբ Հայոց պատրիարքարանի հպատակեցնելու խորհուրդը առաջարկեցի, բայց հաւանութեան չհանդիպեցայ. ծերեր մէկ տեսակ, երիտասարդներ ուրիշ մտածումներով ետ քաշուեցան։ Միայն Հայր Պօղոս վարդապետ Պօյնուէյրիեան, ազատամիտ ծերունին, զիս քաջալերեց, ցուցնելով որ իր տարիքը չէր ներեր այդպիսի փոփոխութիւն մը կատարել։ Պապութեան ընդդիմադիր Հակահասունեանց դրութիւնը անփոփոխ պահելով, լոկ ազգային տեսակէտէն Հայոց պատրիարքարանի միանալու առաջարկն ալ յղացայ, համամիտներ գտայ, Ներսէս պատրիարքի հաւանութիւնն ալ ստացայ մըտերմաբար, Հակահասունեանց ժողովին առջեւն ալ հանեցի, բայց նորէն ընդունելութեան չհանդիպեցայ։ Անձնաւորութիւններ և պատճառանքներ յիշել այստեղ զանց կ'ընեմ։ Կը մնար համախոհներու խումբ մը կազմել, և պարզապէս ազգութեամբ և դա-

ջանութեամբ Հայոց պատրիարքարանին միանալ. և այս նպատակին համամիտներ բաւական գտնուեցան, նոյն իսկ ծանօթ անուններ, Յովհաննէս Սարգսեան, Միքայէլ Փորթուկալեան, Կոմիտաս Բէքմէզեան. բայց այս անգամ ալ, երբոր վճռական քայլը պիտի առնուէր, ակնածութիւններ և վարանումներ զօրացան, և եօթանասուն անձնաւորութեանց ստորագրութիւնները և հաւանութիւնները առնուեցան և ցուցակագրուեցան, որոնց մէջ կը տեսնուէին՝ Ազնաւորեան, Խուրտաճեան, Եսայեան, Կէօչէեան, Ալիշան, Օրմանեան և ուրիշ ծանօթ գերդաստաններու անուններ։ Եկեղեցականութենէ ես միայն կը գտնուէի, և ես էի պատրիարքին հետ բանակցողը։ Բայց այս բոլոր գործողութիւնները բաւական ատեն գրաւեցին, և վերջապէս սպասեցինք որ Ներսէս պատրիարքն ալ հրաժարականի խնդիրը փակէ, և անկէ ետքը որոշուեցաւ պաշտօնական վերադարձի օրը 1879 հոկտեմբեր 25|9 նոյեմբեր, Գիւտ Խաչի կիրակին։ Նոյն օրը խմբովին էմինէօնիւէ Գումգաբու երթալնիս, և պատրիարքարանի մէջն ու շուրջը եկեղեցական եւ պաշտօնական և ժողովրդական արտասովոր համախմբութիւնը, երկու կողմերէն խօսուած ատենաբանութիւնները, և նոյն երեկոյին Մայր Եկեղեցւոյ մէջ ծայրագոյն վարդապետութեան աստիճան ստանալս, մեծ ու շքեղ հանդէսի մը կերպարանն առին, և կատարուած գործողութիւնը բարձրացուցին։

Պատմական պարագաները բաւական են հաստատել, թէ ինչպէս խորին համոզման, հանդարտ կշռադատութեան, խելահաս հետապնդութեան, և կանոնաւոր յառաջացման գործ մը եղած է իմ կողմէս հռոմէադաւան եկեղեցիէ հրաժարելով, հայադաւան եկեղեցւոյ վերադարձս։

Թերեւս պէտք էր որ նաև վարդապետական տեսակէտէն արդարացնէի իմ համոզումս, և կերպով մը հաւատոյ դաւանութիւն մը աւելցնէի այս տողերուն, բայց այս կէտը լիովին կատարած կ'ըմբռնեմ ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԻ երկասիրութեամբս, զոր գաղղիերէն գրեցի և հայերէնի վերածեցի, և անգղիերէն և ռուսերէն թարգմանութիւններն ալ հրատարակուեցան։ Անոր մէջ կը գտնէ ուզողը Հայ Եկեղեցւոյ մասին ունեցած կարծիքս, անոր կատարեալ ուղղափառութեան մասին համոզումս, և ուրիշ դաւանութեանց հետ բաղդատական տեսութիւններս, ուստի աւելորդ կը

անպետք Խոնարհս եւ Խոսքերս մէջ այդ կէտերուն վերադառնալ։ Քրիստոնէական սկզբունքներու եւ աւետարանական վարդապետութիւններու խորապէս համոզեալ մըն եմ, իսկ անոնց ճշդագոյն եւ հաւատարմագոյն դրութիւնը կը ճանչնամ Հայ Եկեղեցւոյ մէջ, և անոր հետեւած եմ ճշմարտութեան հետեւելու նպատակով։

Ուրախ եմ որ Հայ Եկեղեցւոյ կողմէն ալ անկեղծօրէն գնահատուած եմ; և ներքին գոհունակութեամբ և արդարացի պարծանքով կը յիշեմ, որ վերադարձէս վեց ամիս չլրացած, Կարնոյ կարեւոր վիճակին առաջնորդ հաստատուեցայ, յարակից վիճակներու յաւելմամբ, և հետզհետէ Մայր Աթոռոյ Ճեմարանին աստուածաբանութեան ուսուցիչ նշանակուեցայ, Կոստանդնուպոլսոյ պատրիարքութեան Դպրեվանքին կազմակերպիչ և վարիչ և ուսուցիչ անուանուեցայ, և վերջապէս Կոստանդնուպոլսոյ պատրիարքութեան բարձրացայ. ամէնն ալ փափուկ պաշտօններ, որոնցմէ սովորաբար հեռու կը պահուէին հռոմէադաւանութենէ վերադարձողները։

Այսչափը բաւական ըլլայ կեանքիս ամենէն ցայտուն եւ ամենէն նշանաւոր նկատուած պարագայի մասին։

Դ

Երուսաղէմ, 1915 մայիս 3/16 կիր.

Որպէսզի միտքս ու համոզումներս յստակ կերպով պատկերացնեմ, հարկ է որ կարեւորագոյն կէտերը միառմի նշանակեմ այստեղ, զի տեսակ մը խոստովանութիւն կամ բարոյական կըտակ կը նկատեմ սոյն գրութիւնը։ Կը խոստովանիմ թէ կը սըխալի, եթէ Հաւատքի ու Գիտութեան լուին պայքարը, որ ներկայ դարուս մէջ հրապարակի վրայ ալ կը մղուի, իմ. վրայ ազդած չէ ըսէի։ Որչափ ալ ուսմանց ընթացքս և դաստիարակութիւնս կրօնական ուղղութեամբ եղած են, այսու ամենայնիւ թէ՛ ուսմամբ, թէ՛ ընթերցմամբ, թէ՛ յարաբերութեամբ և թէ՛ մտէն չըփնտրմամբ, արտաքին գիտութեանց և պատմական հետազօտութեանց

և ներկայ դարուս ուղղութեանց օտար մը եղած չեմ։ Իմ միտքս ալ ընկճուած է դաւանական խորհուրդներու ծանր բեռերուն ներքև, իմ տեսութիւններս ալ զգածուած են անիմանալիներու մթութեան առջև։ Բայց մտախոհ զգուշաւորութեամբ և հանդարտ խորհրդածութեամբ կրցած եմ միտքս հանդարտեցնել, եւ ներքին խաղաղ մտայնութիւն և կացութիւն մը կազմել։ Այդ մասին իմ միտքիս վրայ մեծապէս ներգործած են բնական կամ նիւթական աշխարհի գաղտնիքները, որոնցմէ դիւրաւ բարձրացած եմ գերբնական և հոգեկան գաղտնիքներուն իրականութեան։ Երրորդութեան խորհուրդն՝ իսկ անմարսելի և անտանելի չեմ գտած, բայց Մարդեղութեան և Հաղորդութեան խորհուրդները աւելի ճնշած են միտքս, աստուածային բնութեան հետ համաձայնեցնելու դժուարութեանց կողմէն։ Այսու հանդերձ անոր հըպատակիլս ալ դիւրացած է, քրիստոնէութեան վրայ ունեցած բարձր և զօրաւոր, իրական և ճշմարիտ համոզմանս ուժով, զի երբ հիմ մը հաստատուն է, անոր չէնքն ու մասերը խարխուլ չեն կրնար ըլլալ։

Այդ համոզմանս շնորհիւ կրցած եմ ոչ միայն լաւ հաւատացեալ մը, այլեւ աստուածաբանական ճշմարտութեանց լաւ ուսուցիչ մըն ալ ըլլալ, հեռի մնալով միշտ հռոմէադաւան դրութեան չափազանցեալ և մենամոլ տեսութիւններէն, և հիմնուելով հայադաւան լայնախոհ և ներողամիտ դրութեան վրայ, ինչպէս գործերովս ալ ապացուցած եմ։

Հաւատքին անհրաժեշտութեան համոզումը կը քաղեմ մարդկային բնութեան իսկ իր կազմակերպութիւնը լրացնելու համար Հաւատքի պէտք ունենալէն բնական և կենցաղական շրջանակին մէջ։ Հաւատքին պակասութիւնը ահագին դատարկ մը կը ձգէ մասաւորական բնութեան մէջ, և որովհետեւ գիտութիւնն ալ կ'ընդունի թէ բնութիւնը դատարկէ կը խորշի, անկէ կը հետեւցնեմ թէ, Հաւատքը անհրաժեշտ պէտք մըն է միտքին դատարկը լրացնելու։ Այդ է Հաւատքի մասին ունեցած հաւատքս։

Հաւատքի չափ, և թերեւս Հաւատքէ ա՛լ աւելի զօրաւոր եղած է Յոյսի վրայ համոզումս, այն Յոյսը որ աստուածային Նախախնամութեան և Հովանաւորութեան սկզբունքը կ'ազդէ մարդուն։ Այդ ազդեցութեամբ է որ առ Աստուած դիմումը և հայցուածը, կամ սովորական բառով աղօթքը, անկեղծութեամբ և

համոզմամբ կիրարկած եմ ամէն պարագային։ Ամէն գործի ըս-կիզբին կամ ընթացքին, ամէն դժուարութեանց առթիւ, ամէն նեղութեանց մէջ, ամէն չփոթութեանց հանդէպ, առ Աստուած դիմումը հաստատուն սովորութիւն եմ ըրած պատանեկան տա-րիքէս ի վեր։ Նախադասած աղօթքս է Շնորհալիին Պահապան ամենայնին, զոր երիցս կը կրկնեմ որևէ պարագային։ Ես ալ ինծի համար հառաչանքներ շարադրած ունիմ. ինչպէս՝ Տէր իմ, Հայր իմ, ներէ՛, ողորմէ՛, օրհնէ՛, օգնէ՛, փրկէ՛ ազատէ՛, պարգևէ՛ շնորհէ՛. կամ թէ՝ Տէր իմ Յիսուս, դու ես իմ յոյս, հայեա՛ց յիմ կոյս, մի՛ յինեն խոյս, յիշեր ընդ քոյս, զերթ մանուկ կոյս, անզօր սի-քոյս, ծագեա՛ յիս լոյս, մտացս ի յոյզ։ Աղօթքի մէջ սիրած եմ հե-տեւիլ Եկեղեցւոյ այն գեղեցիկ սկզբունքին, որ վեհ է և վսեմ, թէ՝ Դու Տէր, գիտես զպէտս մեր եւ զկարիս առաւել քան զոր գիտեմք եւ իմանամք. որով աղօթքիս ելքին վրայ անխառով միտքով մը կը նայիմ։ Զեմ ցաւիր եթէ վիշտի և նեղութեան, հակառակութեան և հալածանքի հանդիպիմ, բաւական է որ վերջէն վերջ յաջող ելք մը ունենամ, զի մի՛ երբեք ապականեցայց։ Փորձառութիւնն ալ շատ օգտած է այդ համոզումս զօրացնելու, զի շատ փոթորկալից եւ վտանգաւոր, դժուարին ու չփոթ վիճակներէ անցած եմ, բայց Աստուծոյ փառք, ամէնն ալ վերջ ի վերջոյ յաջող երեւոյթ առած են, և ընկճուած ու անպատուուած վիճակ ունեցած չեմ։ Աւազակի և դաւաճանի, զրպարտողի և բանսարկուի, հալածիչի և թշնամիի ամբաստանութեան արկածներ ալ անցուցած եմ, բայց մինչև այս օրս ամենուն մէջ ալ աստուածային հովանաւորու-թեան արդիւնքը տեսած եմ, և առ Աստուած յոյսս և վստահու-թիւնս աճած է, և ապահով աչքով մը նայած եմ և կը նայիմ ամէն ձախող պատահարի վրայ։

Յոյսը զօրացուցած է յիս Աստուածսիրութիւնը, ուսկից կը բղխի Ընկերսիրութիւնը։ Աստուածասիրութիւնը՝ իմ համոզմամբ՝ Պատուիրանապահութիւնն է, իսկ գլուխ պատուիրանին Սէրն է։ Ջանացած եմ հաւատարիմ մնալ աստուածային պատուիրաննե-րուն, որոնք Սինայի բարձունքէն հռչակուեցան, և Կափառնա-ումայ լեռնէն իրենց լրումը ստացան։ Կատարեալ գիտակցութեան և ուղիղ խիղճի և անաչառ տեսութեան կանոններով գործելու հետեւած եմ միշտ, և այժմ ալ ներքին խայթ մը չեմ զգար ը-րածներուս և ըսածներուս մասին։ Զեմ համարձակիր զիս չսխա-

յած կարծել, բայց կրնամ չսխալելու աշխատած ըսել. ուրիշ է գործին արդիւնքը և ուրիշ է գործողին դիտումը։ Ազատ գաղափար ունեցած եմ մարդկային կամայականութենէ բղխած օրէնքներուն, կամ պատահական սովորութենէ յառաջ եկած պարտաւորութեանց մասին, ի՛նչ և ո՛վ ալ ըլլայ անոնց նիւթն ու հեղինակը։ Միայն թէ յարգած եմ երկու կարեւոր պայմանները, որք են չգայթակղեցնել և չվնասել։ Այս եղած է իմ բարոյական կեանքիս ամփոփումը. և ի՛նչ որ ըրած եմ թէ՛ անհատական և թէ՛ պաշտօնական, թէ՛ անձնական և թէ՛ հանրային տեսակէտէն, այդ սկզբունքներուս մէջ կը գտնեն իրենց մեկնութիւնը, ըսեմ նաև, իրենց արդարացումը։

Ե

Երուսաղէմ, 1916 փետրուար 12/15 Ուր.

Տարի մը լրացաւ այն օրէն որ Խոհիս ու Խօսիս գլուխ առնել ձեռնարկեցի, և դեռ շատ քիչ բան եմ գրած, կարծես թէ առողջ օրեր անցընելս վստահութիւն կը ներշնչէր զայն յետաձգելու, բայց աւելի միտքս պատմական խնդիրներով զբաղեցնելս էր պատճառը, զի ԱԶԳԱՊԱՏՈՒՄս շարունակելու և լրացնելու եռանդը բորբոքեցաւ սրտիս մէջ, որով կրցայ ցարդ վերջին ԺԹ. դարուն առաջին կէսին անցքերը պատմագրել։ Այսօր կեանքիս 75րդ տարւոյն լրման հանգրուանին, քանի մը տողեր միայն կ'աւելցընեմ այստեղ, յետաձգումը բացատրելու, և ոչ գործին շարունակութեան ձեռնարկելու միտքով։ Առողջ եմ տակաւին Աստուծոյ շնորհիւ, ընդհանուր թերահաւատութիւն մը ազդելու չափ, թէ իրօք եօթանասունևհինգամեայ ծերունի մը չըլլամ։ Աշխատութեան տոկունութիւնս, խօսելու և քարոզելու աշխոյժս, շարժումի և քալքի ձեւերս, և ամէն սովորական զբաղումներու ճըշդապահութիւնս, նկատողութեան կ'առնուին, և 10-15 տարի նուազ տարիք մը կը ցուցնեն կ'ըսեն։ Եթէ Աստուած պարգեւէ,

պիտի աշխատիմ օրերս արդիւնաւորել, աւելի գրական երկասիրութիւններով քան պաշտօնական գործերով։

Զ

Դամասկոս, 1917 նոյեմբեր 22/5 դեկտեմբեր Դշ.

Ծանօթ առածը կ'ըսէ թէ մարդ կը մտադրէ, իսկ Աստուած կը տրամադրէ (L'homme propose, Dieu dispose), և այդ ճշմարտութիւնը իրականացած կը տեսնեմ սոյն գրութեանս վրայ։ Ի՛նչ էր իմ դիտումս և ի՛նչ եղած է արդիւնքը։ Սկսելէս երկու տարի և ինն ամիս անցած է, և տակաւին հազիւ քանի մը տողեր գրած եմ։ Պատճառը յայտնի է. առաջ դասատուութեանց և ԱԶԳԱՊԱՏՈՒՄի և վերջէն միայն ԱԶԳԱՊԱՏՈՒՄի աշխատիլս, զի երբ միտքը մէկ նիւթով զբաղուած է, ուրիշ նիւթերով խըճողել օգտակար չէ. իսկ այս աշխատութիւնն ալ երկրորդական կարեւորութիւն ունենալուն, բնական էր որ յետաձգուէր, եւ անգամ մը յետաձգուելէ ետքը գրեթէ մոռացութեան տրուէր։ Այս օրեր որ և է կանոնաւոր զբաղումի դրութիւն չունիմ, եւ սկսուած գրութիւնները շարունակելու միջոցներէ զրկուած ըլլալով, տեսրս ձեռք կ'առնեմ քանի մը տողեր աւելցնելու, որչափ որ պարագաները ներեն։

Կը գտնուիմ Դամասկոս, ուր հասած եմ նոյեմբեր 13/26ին, երկուշաբթի օր, ընկերակցութեամբ Խապայեան Սահակ կաթողիկոսի և Ոսկերչեան Մովսէս վարդապետի, կէսօրէն ետքը։ Տիրող համաշխարհական պատերազմին մէկ ճիւղն ալ Պաղեստինի կողմը տարածուեցաւ, Անգղիական բանակը Եգիպտոսէ յառաջացաւ, և հետզհետէ Պաղեստին մտաւ, և երբ Ֆեբրոն և Յոպպէ գրաւեց, Երուսաղէմի գրաւումն ալ հաւանական նկատուեցաւ, և հոկտեմբեր 28/10 նոյեմբերին լատին և յոյն և հայ պատրիարքներու ազդարարուեցաւ, որ իրենց ժողովականներուն հետ պէտք է Երուսաղէմէն մեկնին և Նազարէթ բնակին, որպէսզի հոգեւոր

պետել թշնամւոյն իշխանութեան ներքև մտած չըլլան։ Իմ խօսքըս չկար և միայն հոկտեմբեր 31|13 նոյեմբերին ինձի ալ գրաւոր ազդարարութիւն եղաւ մեկնելու։ Անհրաժեշտ էր համակերպիլ և պատրաստութեանց ձեռնարկեցի, բայց հազիւ նոյեմբեր 6|19ին, երկուշաբթի օր, վանքէ և քաղաքէ մեկնեցանք, միւս օր Սամարունւոյ յունական վանքը հասանք, և 11|24ին անտի մեկնելով, փոխանակ Նազարէթի ուղղակի Դամասկոս առաջնորդուեցանք և 11|24է 12|25 կէս գիշերին Աֆուլէ կայարանը կառքերը թողլով երկաթուղիով չարունակեցինք։ Սինոդի ժողովականներ մեզի հետ չէին կրցած մեկնիլ, փոխադրութեան միջոց չգտնուելուն, և հազիւ 11|24ին մեկնելով 16|29ին Դամասկոս հասան Եղիշէ Զիլինկիրեան, Կարապետ Մակլըմեան ու Պետրոս Սարաճեան եպիսկոպոսներ, և Գրիգորիս Պօյաճեան ու Գարեգին Խաչատուրեան վարդապետներ, և անոնց հետ կաթողիկոսին սպասաւորող Վարդան Գէորգեան սարկաւագը ու Մկրտիչ Կէնճալեան խոհարարը։ Ժողովականներէն ետև մնացած են Ստեփանոս Ցովակիմեան արքեպիսկոպոս հիւանդ, Գիւտ Մխիթարեան եպիսկոպոս փոխանորդ, և Դաւիթ Տէրտէրեան Ծ. վարդապետ լուսարարապետ, և վերջին երկուքին համար կառավարիչի հաւանութիւնը ստացուած է։ Այստեղ Դամասկոսի մէջ տակաւին երբեալ տատանեալ վիճակ մը կայ, մեր վանատունը անբաւական է ամենուն բնակութեան, կառավարութիւնը տեղեր կը հոգայ, իսկ ես վանատան մէջ կէս լքուած բայց դիրքը լաւ սենեակ մը կը բնակիմ։ Մի քանի օրերը պաշտօնական այցելութիւններով և տեղաւորուելու զբաղումներով անցան, և հազիւ այս առտու կ'սկսիմ Խոհիմ ու Խօսքս գրել։

Է

Դամասկոս, 1917 նոյեմբեր 23|6 դեկտեմբեր Եշ.

Կեանքս երկու մեծ միջոցներու կը բաժնուի. մին հռոմէական դաւանութեան մէջ 1841 փետրուարէ մինչև հոկտեմբեր 1879 և

միւսը 1879 նոյեմբերէն մինչև այսօր հայադաւանութեան մէջ։ Առաջին միջոցին վրայօք խօսիլ զանց կ'ընեմ առայժմ, զի ժամանակագրական և կանոնաւոր կենսագրութիւն գրել չէ նպատակս, այլ միայն իմ անձիս ու համոզումներուս և գործերուս մասին գաղափար մը տալ, յետիններու ի յիշատակ և եղելութեանց ի լուսաբանութիւն։ Այս երկրորդ միջոցի կեանքս շատ մը հանգրուաններու կը բաժնուի, իրարմէ տարբեր գաղումներով, Ղալաթիոյ քարոզչութիւն, Կարնոյ առաջնորդութիւն, Բերայի քարոզչութիւն՝ առաջնորդութիւնը պահելով, և նորէն Կարին դառնալով, Էջմիածնի ուսուցչութիւն, Դպրեվանքի պատրաստութիւն, Արմաշի վանահայրութիւն՝ վերատեսչութեան եւ ուսուցչութեան հետ, Կոստանդնուպոլսոյ պատրիարքութիւն, առանձնացեալ աշխատութիւն, Երուսաղէմի պատուիրակութիւն և վարչութիւն, և ամենէն վերջ դարձեալ առանձնացեալ աշխատութիւն Երուսաղէմի մէջ. այդ տարբեր դիրքերուն մէջ աշխատած եմ ինքզինքս զսպել և տարբեր ուղղութեանց չծառայել, և անհատական սկզբունքներէս չխախտուիլ։

Բնական բերմամբ վարչական գործերու սիրահար չեմ եղած, և ուսումնական ու գրական աշխատութիւնները նախադասած եմ, նոյն իսկ անհատական առաւելութեանց տեսակէտէն, զի գրական արդիւնքները մշտնջենական յիշատակ կը թողուն, մինչ վարչականներ ապաշնորհ հետեւանքներ կ'արտադրեն։ Սոսվ մէկ տեղ մտադիր յանձն առի վարչական պաշտօններ երբեր օրինաւոր և պարտաւորիչ կերպով ինծի առաջարկուեցան։ Իբրև հաստատուն կանոն ըրի ինծի ոչ մի պաշտօնի հետամուտ ըլլալ և ոչ մի պաշտօնէ խուսափիլ, համոզուած ըլլալով թէ անհնար է մարդուն ապագայն գուշակել նախապէս և յաջողութիւնները իւրովի նախակարգել, ուստի լաւագոյն սեպեցի գործոց և զբաղմանց ուրոշումը իրենց հոսանքին թողուլ, որով գոնէ սիրտի տագնապէ և խիղճի խայթէ և պատասխանատուութենէ ազատ կը մնայի։ Վարչական շրջանակին մէջ երկու գլխաւոր պաշտօններս եղան Կարնոյ առաջնորդութիւնը և Կոստանդնուպոլսոյ պատրիարքութիւնը։

Կարնոյ առաջնորդութեան կոչուեցայ հայադաւան եկեղեցին ընդգրկելէս վեց ամիս ետքը միայն, և պատուոյ խնդիր ըրի ըսել չտալ թէ Վոսփորի ափանց վայելմամբ գաւառներ երթալէ

կը փախչի. 1879 հոկտեմբեր 28ին էր վերադարձս, 1880 մայիս 29ին Կարին կը մտնէի։ Անգամ մը գործի ձեռնարկելէս ետքը ձեռնթափ ըլլալ ալ չուզեցի, 1882ին յուզուած խնդիրն ալ զիս չկասեցուց, 1883 մարտ 24ին Կարինէ մեկնած օրս հրապարակաւ յայտարարեցի թէ խնդիրը կարգադրելու և դառնալու համար կ'երթամ, և ոչ թէ Կոստանդնուպոլիս մնալու համար։ Իրօք ալ յաջողեցայ ինքզինքս արդարացնել, բանտարկեալները ազատել, առաջնորդութիւնը ձեռքէ չթողուլ, և հրաժարելով՝ պատրիարքական փոխանորդութեան ընտրուելու առաջարկն ալ մերժեցի, և վերջապէս տարիուկէս բացակայութենէ ետքը 1884 հոկտեմբեր 9ին դարձեալ Կարին մտայ, և առաջնորդութեան պաշտօնը շարունակեցի։

Կարնոյ առաջնորդութենէ հրաժարիլս ալ անձնական նախաձեռնութեամբ չկատարուեցաւ, այլ Մակար կաթողիկոսի 1887 յունիս 10ի կոնդակով տրուած հրամանին զօրութեամբ, որ յունիս 24ին ձեռքս հասաւ, 28ին հրաժարականս Գաւառ. ժողովէ ընդունուեցաւ, յուլիս 6ին մեկնեցայ, և Կ. Պոլիս հանդիպելով սեպտեմբեր 3ին Էջմիածին հասայ, և 17ին աստուածաբանական ուսուցչութեան պաշտօնը ստանձնեցի, որուն կոչուած էի կաթողիկոսական հրամանով։ Ըստ այսմ եթէ գաւառական առաջնորդութենէ հրաժարեցայ եօթը տարի զայն վարելէ ետքը, ոչ անձնական նախաձեռնութեամբ և ոչ պատրուակեալ պատճառով ըրի զայն, այլ բարձրագոյն բացարձակ հրամանով, և առաջնորդութիւնը ուսուցչութեամբ փոխանակելով, որչափ ալ այդ վերջին պաշտօնը ինծի աւելի հաճելի ըլլար։

Ը

Դամասկոս, 1917 նոյեմբեր 24/7 դեկտեմբեր. Ուր.

Նմանօրինակ պարագաներու ներքև կատարուեցաւ պատրիարքութեան ընտրութիւն։ Երբոր Մատթէոս Իզմիրլեան պատրիարք պաշտօնը թողուց, և կոտորածներու շփոթներու մէջ պատ-

քիարքական ընտրութեան ձեռնարկը սկսաւ, ես Սրմաշ էի, եւ երբ 1896 հոկտեմբեր 14ին Կ. Պոլիս դարձայ, ոչ մի մասնակցութիւն չունեցայ ընտրողական ձեռնարկին մէջ, և ուրիշ անուններ կը խօսուէին իբրև հաւանական պատրիարքցուներ, և տեղապահ Բարթողիմէոս արքեպիսկոպոս Զամիչեան ամէն ճիգ կը թափէր իր ընտրութիւնը յաջողցնելու։ Երբ այս ու այն անցողաբար զիս ալ իբր պատրիարքցու կը յիշէր, սովոր էի պատասխանել թէ այդ պաշտօնը վերադարձողներու տալ սովորութիւն չէ։ Այսու հանդերձ դնելով վերցնելով իմ անունիս շուրջը կը միանան, Տատեան Յարութիւն բաշայի և իր կազմած խորհրդակցութեանց նախաձեռնութեամբ, և նոյեմբեր 6ին, Կ. Պոլիս դառնալէս երեք շաբաթ ետքը, պատրիարք կ'ընտրուիմ։ Ընտրութեան լուրը իբրև հարուած մը ազդեց վրաս, և գրեթէ հիւանդացայ, բայց խուսափիլ չխորհեցայ, մինչ հաւատարիմ իմ սկզբունքիս, պաշտօնի հետամուտ չլինել և պաշտօնէ չխուսափիլ։ Երբոր նոյեմբեր 7ի առտուն ընդհանուր ժողովոյ ատենապետն ու ատենադպիրը ընտրութիւնը կը հաղորդէին և ընդունիլս կը յանձնարարէին, իմ պատասխանս եղաւ, թէ պատիժէ հրաժարելու սովորութիւն չի կայ, որ ես ալ այդ պատիժէն հրաժարէի։ Իրօք ալ պատրիարքութիւնը այն դժնդակ պարագայից մէջ պատիւ չէր, պատիժ էր։ Հոգիս թէ ազգն ալ ընտրութիւն մը ընելու արտօնուած և զայն կատարել յաջողած էր, հրաժարիլը ազգը նորէն տագնապի մատնել պիտի ըլլար։ Պաշտօնն ալ այնպէս ծանրացած էր, որ շատեր անկէ կը փախչէին, և յաջող պարագաներու մէջ չեմ կարծեր որ նեղէին և հաւանէին իմ ընտրուելուն։ Դարձեալ պարտաճանաչութեան սկզբունքն էր որ զիս յանձնառութեան կը յորդորէր։ Պետական հաստատութիւնը մինչև նոյեմբեր 17 յապաղեցաւ, և այդ միջոցին Բարթողիմէոս տեղապահ կը հաղորդէր, թէ հաստատութեան դէմ դժուարութիւն հանողներ կան, որուն ես պատասխանեցի, որ եթէ գիտնայի թէ ո՛վ է, ձեռքը պագնելու կը փութայի որ զիս փորձանքէ ազատելու կ'աշխատի։ և կարծեմ թէ դժուարութիւն հանողներուն գլխաւորը ինքն էր, իւր հետապնդութեանց մէջ ձախողելէն վշտացած։ Բայց վերջապէս հաստատութիւնը տրուեցաւ 17ին, և 20ին պատրիարքական ուխտը կատարելով գործի ձեռնարկեցի, 23ին կայսեր ներկայացայ և 26ին Բարձրագոյն Դուռ այցելեցի։

Ինչ համոզմամբ և սկզբունքով պատրիարքութիւնը ստանձնեցի, նոյն կերպով ալ զայն պահեցի տասներկու տարիներ, ինծի նուիրական պարտք համարելով ազգը ընարողական տապնապի չմատնել, և կամ անտէրունչ մնալու վիճակին չենթարկել։ Կայսեր անձին և կառավարութեան կողմէ զիս հեռացնելու միտք չունայ, մայրաքաղաքի և գաւառաց հայութեան կողմէ միշտ համակրութիւն վայելեցի, նոյնպէս արտասահման գտնուող եւ իրենց սեփական ծրագիրները մշակող կուսակցական մարմիններէ, որոնցմէ շարունակ ստիպում կրեցի, կամ իրենց գաղափարներուն համակերպիլ ու ձեռնարկները քաջալերել և կամ պատրիարքութենէ հրաժարիլ։ Զիս բռնադատելու համար երեսունի չափ ըսպառնական նամակներ տեղացուցած են վրաս, անգամ մը մահափորձ ալ ըրած են հրազէնով և ուսէս վիրաւորած, բայց ես հարկ չեմ տեսած ընթացքս փոփոխել, որչափ ալ կանուխէն աւելի համարձակ գաղափարներու ծառայած ըլլամ։ Ուրիշ է անհատական անձ մը ըլլալ, և ուրիշ է հանրութեան օգուտին պատասխանատուութիւնը կրել։

Դեսպանատուններուն հետ յարաբերութիւնս կատարեալ եւ լաւ էր, եւրոպական լրատու գործակալութեանց հետ ալ շարունակ հաղորդակցութեան մէջ էի, պետական պաշտօնատոնց ընթացքին ներքնապէս տեղեակ էի, չէի կրնար ինկինքս խաբել, և ազգին մէջ չփոթ և տէրութեան կողմէ բռնութիւն յարուցանելով կարծել թէ Եւրոպա անմիջապէս միջամտութիւն պիտի գործէ Հայոց պաշտպանութեան, ինչ որ կուսակցական մարմիններու երազն էր, և անոր վրայ կը հիմնուէր իրենց ծրագիրը։ Այդ նպատակին կը գիտէին բոլոր իրենց շարժումները, ոչ միայն ատ և անդ խլրտումներ յուզելու կ'աշխատէին, ոչ միայն Պապը-Ալին և Եըլտըզը ռումբեր պայթեցնելով գրգռել կը ջանային, այլ և տուտ լուրեր կը հասցնէին կայսեր, որպէսզի խիստ միջոցներ և բռնութիւններ և կոտորածներ ձեռք առնէ, և եւրոպական տէրութիւնք պաշտպանութեան հասնին, և Հայոց կացութեան բարւոքումը իրագործուի։ Այդ յեղակարծ տեսութիւնը իրականութենէն շատ հեռու էր, ո՛չ կրնայի համակերպիլ, և ո՛չ ալ կըրնայի գործակցիլ, ինծի նուիրական պարտաւորութիւն կը սեպէի անցեալ վտանգներուն հետևանքները դարմանել, նորանոր վըտանգներու առիթ չտալ, շատ արիւն կորսնցնող հիւանդը խիստ

փորձերու չենթարկել, ինչպէս կուսակցականաց յայտնապէս ըսած էի, և ժամանակին պահանջած ձևերը գործածել, պետական բռնութիւնները մեղմել, թէ ոչ ամբողջական՝ գոնէ մասնակի դիւրութիւններ պատրաստել, ներքին վարչութիւնը կազմակերպել, նպաստներու ուժ տալ, նոր սերունդը պատրաստել, և հնարաւորով գոհանալ։

Այդ ուղղութեամբ վարեցի պաշտօնս վարչական ժողովներու համամտութեամբ, և ուրախ եմ յայտարարել, որ եթէ մեծ յառաջդիմութիւն չգոյացաւ, գոնէ վտանգներու առջևն առնուեցաւ, քիչ ու շատ կանոնաւոր ընթացք գոյացաւ, ներքին վարչութիւն կազմակերպուեցաւ, կարօտութիւն և կրթութիւն և խեղճութիւն խնամուեցան, դպրոցներ և որբանոցներ կազմուեցան, և բաւական գոհացուցիչ կացութիւն մը իրականացաւ, զոր կարօտով կը յիշեն ազատութեան օրերուն մէջ չարաչար տառապանքներու և տապնապներու մատնուողները։

Թ

Դաւասկոս, 1917 նոյեմբեր 25/7 դեկտեմբեր Շբ.

Պաշտօնի հետամուտ չըլլալու և պաշտօնէ չխուսափելու սկզբունքը պաշտօնէ չհրաժարելու ալ կը տարածուի, և չեմ յիշեր երբեք անձնական տեսութեամբ հրաժարիլս, այլ միշտ պարտուց կամ պատշաճից պահանջմամբ պաշտօն փոխած եմ։ Ասոր հետևանքն էր, հակառակ բազմատեսակ դժուարութեանց, պատրիարքութենէ ալ վճռաբար չհրաժարիլս, թէպէտ պայմանական հրաժարականի ձևը քանի մը անգամ գործածեցի կառավարութեան հանդէպ մասնաւոր յաջողութիւններ ձեռք ձգելու համար։ Երբոր 1908 յուլիս 11 ին մայրաքաղաքի մէջ ալ հռչակուեցաւ նախընթաց յուլիս 10 ի օրը Մակեդոնիոյ մէջ հռչակուած ազատութիւնը, ակներև էր որ պէտք էր տեղի տային նախընթաց կացութեան մէջ պաշտօն վարողները, որոց մէկն ալ ես էի։

Այդ պարագային մէջ երկու կէտերու վրայ յատուկ մտա-

գրութիւն դարձուցի։ Մէկը իրրեւ ուճապարանօք փախչող չերեւալ, և միւսը՝ պատրիարքական իշխանութիւնը օրինաւոր մարմինի մը յանձնել, որ պէտք էր ըլլար օրինաւորապէս ընտրուած Ընդհանուր Ժողովը։ Յուլիս 11 էն 16 այդ նպատակին նախապատրաստութեանց զբաղեցայ, Համագումար հաւաքելու և Եբեսփոխանութիւն կազմելու հետեւեցայ, սակայն ժողովրդական շարժումը կանխեց, պատրիարքութիւնը Օրմանեանի ձեռքէն ազատելու շտապեցան, ցոյցեր կազմելու ձեռնարկեցին, և մտերիմ բարեկամներ յորդորեցին հրաժարականը կանխել, ինչ որ սակայն իմ սկզբունքիս համաձայն չէր, զի անձնական տեսութեամբ գործել եւ դժուարութեանց երեսէն փախչիլ պիտի ըլլար։ Այս համոզմամբ նոյնիսկ յուլիս 16 ի առտուն ժողովի իջայ, հակառակ կրկնուած ազդարարութեանց. պէտք էր շարժումը տեսնէի և ըստ այնմ ընելիքս կարգադրէի, թէպէտ ստոյգ կ'երեւար հրաժարելու հարկը։ Ժողովրդական շարժումը ոչ թիւով և ոչ կազմակերպութեամբ կարեւորութիւն չէր ներկայեր, բայց հրաժարականը տուի, երբ տեսայ որ Խաւն ժողովը ահուդողի մատնուած, իմ հրաժարելովս զինքն ազատած կը կարծէր և զիս հրաժարելու կը յորդորէր։ Ես յօժարակամ տուի հրաժարականը, դժուար չէր նախատեսել յառաջ գալիք անտեղութիւններ, որոց պատասխանատու կրնայի սեպուիլ եթէ կանխէի, բայց այս դատողութենէ կ'ազատէի, երբոր արտաքին պարագայից պատշաճը, չըսեմ հարկը, զիս կ'ստիպէր հրաժարիլ, որով այլեւս ես անտեղութեանց պատճառ չէի կրնար սեպուիլ։ Յուլիս 16 ին ժողովին մէջ հրաժարականս գրեցի և քաշուեցայ, և կատարեալ ձեռնթափութեան վիճակն առի, ուրախանալով որ ազատ եմ, և ցաւելով որ գործը կարողագոյն ձեռքերու չյանձնուեցաւ, և ազգային աղէտներ չպակսեցան, այլ աւելցան իսկ։

Աւելորդ կը դատեմ որոնել թէ ո՛ր կողմէ ծագած էր ինծի դէմ շարժումը։ Կուսակցականաց և յատկապէս Դաշնակցականաց միտքն ու դրդումը յայտնի էին, բայց իրենց գլխաւորները տակաւին խմբուած չէին, թէպէտ հետեւողներ ունէին։ Միւս կողմէ դրսի իւրացուցած ըլլալու գրոյցը, շարժումին գլուխը գտնուողներուն անձնաւորութիւնները, հետեւողներուն նախընթացը, յայտնի կը ցուցնէին Երուսաղէմի զեռնդական խնդիրին հետ կապակցութիւնը, իբր թէ Օրմանեանը զեղծարար ցուցնե-

լով, Մագուտեան Ղևոնդ վարդապետ զեղծարարութեան ամբաստանութենէն պիտի արդարանար։

Ժ

Դամասկոս, 1917 նոյեմբեր 30|13 դեկտեմբեր Եշ.

Գործունեայ կեանքիս ընդհանուր նկարագիրը վարչական պաշտօնավարութիւնն է եղած, զանազան աստիճաններու մէջ, պարզ քարոզչութենէն մինչև պատրիարքութիւն, ի բաց թողլով առայժմ ուսուցչական պաշտօնները զոր վարած եմ Կ. Պոլսոյ կեդրոնականին, Արմաշու Դպրեվանքին և Էջմիածնայ Ճեմարանին մէջ։ Վարչական պաշտօնները ապերախտ ասպարէզ մը կը կազմեն, մանաւանդ մեր ազգին մէջ, որովհետև պէտքերը և պահանջները շատ ու շատ են, իսկ միջոցներու դիւրութիւնները քիչ և անբաւական, որ է ըսել, կատարեալ յաջողութիւնը անհնարին։ Այդ խոր համոզումը ունենալով մէկտեղ, վարչական պաշտօններ վարելս իրաւ անտրամաբան պիտի ըսուէր, եթէ պարտաճանաչութեան սկզբունքը առաջնորդած չըլլար։ Մարդ ո՛ր կացութեան մէջ ալ գտնուի, անոր պահանջները լրացնելու պարտաւոր է. և իմ կոչման էական մաս կը կազմէին վարչական պաշտօնները։ Կը մնայ ուրեմն քանի մը բացատրութիւններ տալ թէ ի՛նչ հոգւով և ի՛նչ սկզբունքներով վարուեցայ ստանձնած պաշտօններուս մէջ։ Իրաւ պաշտոններ բնութեամբ և ընդարձակութեամբ կը տարբերին և տարբեր կերպեր կը պահանջեն, բայց կան այնպիսի սկզբունքներ որ ընդհանուր բնոյթ ունին, և անոնցմէ կ'սկսին։

Առաջին պայմանը ինքն իր գործին տէր ըլլալն է։ Գիտեմ որ սահմանադրական և խորհրդակցական դրութիւնը պաշտօնի գլուխ գտնուողները կը պարտաւորէ իւրովի և աղիկամի չգործել, այլ ո՛չ թէ իր ինքնութիւնը ուրանալ։ Ընդհանուր կարծիքը գլուխ գտնուողը պատասխանատու կը ճանչնայ և ձախողուածի առթիւ կը մեղադրէ, ուստի դիմաքաժանեալ իրաւուն-

քով, գլուխ գտնուողը պէտք չէ առաջնութիւնը և առաջնորդութիւնը ձեռքէ թողու, և ստրկաբար ծառայէ այնպիսիներու, որոնք կ'ընեն ու կ'ըլլան և առանց պատասխանատուութեան դուրս կ'ելլան։ Այս կէտին մէջ աշխատած եմ, որչափ հնար է, իմ գործերուս տէրը ես ըլլալ, օրէնքին և կանոնին ապահոված չափը ձեռքէ չհանել, խնդիրները ներկայելու մէջ պատշաճ զգուշաւորութիւնը գործածել, ժողովականներու միտքերը կանուխէն պատրաստել, գործին կամ խնդիրին թեր ու դէմ պարագաները յստակօրէն հաղորդել, և այս կերպերով որոշումը իր նախապատրաստած կողմը հակեցնել։ Դիւրին և յայտնի խնդիրներու մէջ չեմ քաշուած կանուխէն կարծիք պարզել և որոշումը փութացնել, իսկ դժուարին ու ծանր խնդիրներու մէջ թողած եմ, որ ժողովականներ նախապէս իրենց բաժանեալ կարծիքը եւ գաղափարները յայտնեն, վիճին ու վիճաբանին, և երբոր կը դադրին, այն ատեն միայն խօսք առած, խօսքերը ամփոփած և որոշումը փութացուցած եմ։ Ժողովական որոշումները յաճախ իմ տեսութեանց համաձայն տրուած են, և այս ոմանց առիթ տուած է ըսել թէ միշտ իր կամքը առջև կը տանի; սակայն օրէնքի հակառակ պարտպայ մը ցոյց տալ չեն կրցած, իսկ ճարտար կերպերու կիրառութիւնը ոչ մի օրէնք չէ արգիլած, և ես ալ օձիքս ուրիշի ձեռք տալ չեմ ուզած, ինչպէս ռամկօրէն բացատրութեամբ կը զրուցուի։

Երկրորդ պայման անձնական օգուտ չփնտռելն է, կրկին տեսակէտի ներքև, այսինքն՝ նիւթապէս շահ և օգուտ, և բարոյապէս փառք ու պատիւ։ Նիւթական շահի իղձերէն հեռու մնացած եմ թէ՛ բնական բերմամբ և թէ՛ նախնական դաստիարակութեամբ, և առ այս առաջնորդած է զիս Անտոնեան միաբանութեան մէջ կամաւոր ազքատութեան ուխտադրութիւնը, այսինքն ոչինչ կրնալ սեփականելը։ Այնպէս որ այսօր բացարձակապէս ոչինչ ունիմ բացի գիրերէս ու գիրքերէս, և երեսնամեայ միջոցին մէջ կազմած մօտ 1500 ռսկւոյ խնայողութիւնս, 1907ին Տէր-Ներսէսեան քեռայրիս և իր զաւակներուն փոխանցած եմ ամուրի քոյրս Եւգինէն պահելու պայմանով։ Կաշառք ըսուած բանէն դանգ մը անգամ չեմ ստացած, և ստանալէ իսկ վախցած եմ, այդ ճիւղին ճարտարութիւնը չունենալով, և պատիւս վտանգելու կասկածով։ Պատուոյ նուէրներ այնչափ քիչ

ու հազուադէպ եղած են, որ յիշելու իսկ պէտք չեմ զգար։ Իրաւունքներս պանձելու իսկ հեռապնդութիւն չեմ ունեցած, և Կարնոյ առաջնորդութիւնը 200, Արմաշու վերատեսչութիւնը իբր 100, և Կ. Պոլսոյ պատրիարքութիւնը 700 օսմ. ոսկի լիրայի պահանջով թողած եմ։ Բայց խեղճ ալ չեմ ապրած, ձեռքս բաց է եղած, տնական ծախուց բեռն եմ ունեցած, և պարտք ունենալէ զգուշացած եմ։ Ուստի կրնամ համարձակ ըսել, թէ պաշտօններս նիւթական շահի չեմ ծառայեցուցած և անոնցմէ նիւթական շահ չեմ քաղած։

Գալով բարոյական օգուտին, այսինքն փառքին և պատիւին, համարձակ ըսեմ թէ անոր առջև անզգայ չեմ եղած, և մինչև իսկ հրատարակութեամբ ալ միտքս յայտնած եմ՝ թէ փառասիրութիւնը վատ իղձ մը չէ, և թէ փառամոլութենէ տիրապէս տարբեր է։ Փառքը ստուեր է կոչուած, և համամիտ եմ. բայց ստուեր չի գոյանար եթէ իր մը չգտնուի. փառքը գոյացնողը իրը արդիւնքն է, արդիւնքին ստուերը փառքն է. ուղիղ է արդիւնքին հետևիլ, ուսկից փառքը ինքնին կը գոյանայ. սխալ է փառքին հետևիլ առանց արդիւնքին հետևելու լոկ երևոյթէն հետապնդելով։ Ուղիղը փառասիրութիւնն է, սխալը փառամոլութիւնն է. այս է իմ բարոյական և իմաստասիրական տեսակէտը, և այդ սկզբունքով առաջնորդուած եմ պաշտօնավարութեանցս մէջ. արդիւնքն եմ ըրած ինձի նպատակակէտ, փառքն ու պատիւը զոր վայելած եմ, անոր անքաժին հետևանքն է եղած, որուն համար առանձին փոյթ կամ ճիգ չեմ ունեցած։

Արդիւնաւորութիւնը զանազան աստիճաններու կրնայ բաժնուիլ, զոր օրինակ, պարտադիր չափէն աւելի բան մը ընել, պարտադիր չափը լիովին լրացնել, պարտադիր չափին համեմատաբար մօտենալ, դժուարութիւններու և արգելքներու նկատառութեամբ գործերը չափել։ Ցաւակնութիւն չունիմ յայտարարելու թէ պարտադիր չափը լրացուցած եմ, կամ թէ չափէն աւելի բան մը ըրած եմ։ Համեմատաբար մօտենալու մէջ ալ վերապահութեամբ միայն կրնամ խօսիլ, իսկ համարձակ կրնամ խօսիլ՝ եթէ դժուարութիւններու և արգելքներու նկատառութիւնը յարգուի։ Այս է պատճառը որ յարգանք ու պատիւ վայելած եմ լուրջ դասակարգէն, որ գիտէ պարտքները կշռել, որուն հակառակ եղած է յախուռն և անկշռադատ դասակարգին ըմբռնումը։

Բախտ ըսեմ թէ դիպուած, ոչ դիւրին գործի ձեռնարկած եմ և ոչ դիւրութեամբ պաշտօն վարած եմ։ Ղալաթիոյ քարոզչութեան մասայ Ղալաթիոյ Օճախ կուսակցութեան ընդախնդրութեանց զայրացած միջոցին եւ Օճախին հետ պայքարիլ պարտաւորուեցայ։ Կարնոյ առաջնորդութեան անցայ ռուս ու թուրք պատերազմին վազորդայնին, երբ ամենայն ինչ խառնակ և չփոթ էր, և երևակայեալ հայկական չարժումի տագնապին բռնուեցայ։ Ճեմարանի ուսուցչութիւնը ստանձնեցի, երբ նախընթաց մը չկար և ամենայն ինչ նոր ի նորոյ կազմել հարկ էր, նոյն իսկ ծրագիրը և ձեռնարկ տետրը։ Արմաչու Դպրեվանքը ի հիմանց նոր հաստատութիւն էր և վանքն ալ լքեալ և այրեցաւեր վիճակ ունէր։ Կ. Պոլսոյ պատրիարքութիւնս սկսաւ 1895 և 1896 տարիներու կոտորածներու միջոցին և շարունակեց համիտական հալածանաց և բռնութեանց ներքև։ Բայց օրհնեա՛լ է Աստուած, ո՛չ մէկուն մէջէն ամօթով ելայ, թէպէտ ամենուն հաճոյ չերևցաւ իմ ընթացքս։ Քարոզչութիւնս, առաջնորդութիւնս, ուսուցչութիւնս, երբեք չքննադատուեցան. Արմաշ արդարացած է հոնկէ ելլող ընտիր աշակերտներով, իսկ քննադատեալ պատրիարքութիւնս ալ այսօր համարձակ կը փառաբանուի, ինծի յաջորդող դրութեան և վարչութեան յառաջ բերած ահռելի բաղդատութեամբ, գաղթականութիւններով և կոտորածներով. բայց ցաւ է ինձ այդ փառաբանութիւնը, թո՛ղ ազգը չկրէր, և ես ալ արդարացած չըլլայի։ Վկայեալ արդիւնքները բաւական են. ուրիշին ձախողուածէն յառաջ եկող փառքը ինծի պէտք չէ։

Պաշտօնավարութեանցս արդիւնքները յիշել պատմութիւն է, և ես պատմութիւն գրել չեմ ձեռնարկած, ըմբռնումներուս և զգացումներուս բացատրութիւնը տալն է նպատակս, և այդ մասին գրուածը թո՛ղ բաւական համարուի։

ԺԱ.

Դասասկոս, 1917 դեկտեմբեր 4/17 Բշ.

Վարչական ընթացքին սիրահար չըլլալով մէկտեղ կեանքիս ընթացքը զիս վարչական փորձառութեան վարժեցուց, և ահա թէ ի՛նչ եղան այդ փորձառութենէն քաղած ըմբռնումներս։

Որեւէ գործ մը ներկայացած կամ որեւէ ձեռնարկ մը ըսկսելու ատեն, ուշի ուշով քննել նախընթացն ու պարագաները, նպաստաւոր ու աննպաստ հանգամանքները, յաջողութեան ու ձախողութեան կշիռը, և այնպէս գործին ձեռք զարնել, եւքը անհաւանական և յաջողութիւնը անստոյգ ձեռնարկներէ զգուշանալ, ինքզինքը ձախողուածի վտանգէն հնարաւոր չափով հեռու պահել։ Այս եղած է փորձառութենէն քաղած մէկ կանոնս։ Հետևաբար հետամուտ եղած եմ որեւէ գործին պարագաները առաջուընէ լաւ սերտել, և եթէ հաւանական յաջողութեան նշանները չտեսնեմ, ձեռնարկելէ զգուշանալ։ Ոմանց տեսակէտով այդ ընթացքը վախկոտութիւն, թուլութիւն, ապիկարութիւն կը կարծուի, և ետևը առջևը չկշռելով գործի ձեռնարկողներ աշխոյժ, արի և գործունեայ կը դատուին։ Իմ փորձառութիւնս հակառակը կը հաստատէ։ Յախուռն և անկշռադատ ձեռնարկներ պարզապէս անիմաստ ընթացք են, որոնց հետևանքները ձեռնարկողին վրայ կը ծանրանան։ Իր գործունէութեան մէջ ձախողիլը պզտիկութիւն կը բերէ գործողին վրայ, յաղթանակի առաւելութիւն կուտայ դիմացինին, դիւրաւ մերժուելու դուռ կը բանայ, պատիւը կը նուազեցնէ, յարգն ու վարկը կը վտանգէ, որ է ըսել՝ բարոյական առաւելութիւններէ կը կապտէ գործողը, որ նիւթական առաւելութիւններէ գերագոյն կշիռ ունի գործիչներու համար։ Երրոր հաւանական յաջողուածի և դժուարութեանց դէմ յարմար միջոցներու նախատեսութիւնը կը ստանայի, որեւէ ձեռնարկէ չէի խուսափեր, և յաջողիլս շատերը կը զրգռէր նորանոր խնդիրներով ներկայանալ, և երբ անոնց մէջ հա-

ւանականութենէ զուրկ գործեր տեսնելով ձեռնարկելէ կը զգուշանայի, սովոր էին գանգատիլ՝ թէ ուզեսնի կ'ընես, իբր թէ իրենց նպաստաւոր կամք չունենայի, որուն ես կը պատասխանէի՝ թէ կրնամնի կ'ուզեմ։ Այդ ըմբռնումիս զօրութեամբ դիւրաւ կը մեկնուին պատրիարքական գործունէութեանս մասին խօսուած շատ մը խծբծանքները։

Ուրիշ գործնական սկզբունք մըն ալ ըրած եմ ինծի, մասնաւոր և անհատական գործերով ինքզինքս շատ չծանրաբեռնել, երբ ընդհանուր և հանրային գործեր կան կատարուելիք։ Անհատական գործեր աւելի նպաստաւոր են անձնական շահերու, գովաբաններ պատրաստելու, երևոյթներով փայլելու. և գործի գլուխ գտնուողներ դիւրաւ կը սահին այդ կողմը։ Ես աշխատեցայ, որչափ հնար է, այդ սայթաքումէն զգուշանալ։ Ազգային վիճակը, ընդհանուր տագնապը, հանրային տառապանքը, իշխանական բռնութիւնը, այնչափ և այնպիսի կենսական գործերով պաչարած էին պատրիարքական գործունէութիւնը, և գրաւած էին պատասխանատու գործողին ուշնուրուշը, որ մեծեղեռնէ վերջու

ներու ներքև տասուներկու տարիներ պաշտօնիս վրայ անյողդողդ մնալս բաւական է զիս արդարացնել, նիւթական ո՛չ մի առաւելութիւն չվայելելով մէկտեղ։ Իսկ երկրորդ իմաստին գալով, մարդ զգացումի հետ միտք ալ ունի, և իւր գերագոյն ձիրքը միտքն է, իսկ զգացումը անբաններու ալ հասարակ է։ Արդ՝ պահանջել որ մարդը զգացումով առաջնորդուի, զայն ստորնացնել է և ոչ թէ բարձրացնել, և իմ համոզմամբ կատարելագոյն է մարդը՝ որ միտքով, խորհրդածութեամբ և կշռադատութեամբ կ'առաջնորդուի, և պատահական զգացումը իրեն ուղեցոյց և կանոն չ'ընդունիր, երևոյթով չի խաբուիր, ամէն ցոյցի դիւրաւ ականջ չի կախեր։ Կ'ընդունիմ որ եղեր են պարագաներ, որոնց մէջ ողջախնքներ, պաղատանքներ, թախանձանքներ, արտասուքներ ինծի իբրև փաստ երևցած չեն խնդրանք մը կատարելու, երբոր գործին պարագաները և մասնաւոր տեղեկութիւններ, և հետապնդեալ զննութիւններ անոնց արդարացի ելլալը չեն հաստատած, և հետևաբար անոնց ընթացք ալ չեմ տուած։ Բայց չեմ ընդունիր որ անարգած և մերժած ելլամ դիմումներ, որոց իսկութեանը միտքով ալ վերահասու եղած եմ, բայց եթէ վերև բացատրուած առաջին կէտին համաձայն անոնց ելքը հաւանական չեմ տեսած, այս առթիւ ալ պարտ ու պատշաճ բացատրութիւնը տալ զանց չեմ ըրած։ Այս պարագաներու ներքև աւելի արդար էր ինծի համար ըսել, թէ զգացումներով կառավարուող մը չէ, թէ միտքի կշռադատութեանց յամառ հետեւող մըն է, և ոչ թէ ըսել թէ սիրտ չունի։ Հանրային խեղճութեան հանդէպ կարեկից և նպաստող և հոգացող ելլալուս լուսաւոր փաստ մըն է Նպաստից գործը, որ տասուներկու տարիներու մէջ ութսուն և երեք հազար օսմ. ոսկւոյ գումարի յանգեցաւ, և որով կարօտներ և որբեր, դպրոցներ և վիճակներ լիապէս օգտուեցան, գրեթէ բովանդակ իմ անձնական նախաձեռնութեամբ։

Այդ քանի մը տողերը բաւական ելլան վարչական ընթացքիս մէջ հետևած ուղղութիւնս պարզելու։

ԺԲ

Դամասկոս, 1917 դեկտեմբեր 6/19 Դշ.

Վարչական կեանքին գլխաւոր պայմաններէն մէկն ալ իւրաքանչիւր անձի և իւրաքանչիւր դասակարգի հետ պահուելիք յարաբերութեանց եղանակն է, զոր վարուելակերպ պիտի կոչէի, եթէ այդ նորահնար բարդութեանց հետևող ըլլայի։ Կարի իրաւունքով կ'ըսէր մեր ազգային փորձառուներէն մէկը, թէ գործի և խօսքի մը իսկութենէն աւելի զօրաւոր է կերպը։ Քանի մը տող ալ աւելցնեմ ուրեմն պատրիարքութեանս մէջ զանազաններու հետ գործածած յարաբերութեանցս կերպին մասին։

Վերէն սկսելով առաջին կը ներկայանայ Ապտիւլ Համիտ կայսեր անձը, որուն հետ ուղղակի յարաբերութիւն պահել ըստիպուած էի, վասնզի բոլոր պետական գործեր, մինչև իսկ մանր և մասնաւոր դիպուածներ, պալատին մէջ ամփոփուած էին և իր բացարձակ կամքէն կախում ունէին։ Երես առ երես տեսակցութեան առիթներ ունեցած եմ, բայց նա սովորաբար միջնորդներով կը գործէր, որոնք իրեն ձեռքին ներքև պարզ գործիքներ էին, և Հայոց խնդիրներուն համար որոշուած միջնորդը առաջին քարտուղար Թահսին բաշան էր, և անոր հետ էր իմ սովորական յարաբերութիւնը, իբրև պարզ միջնորդի և խողովակի դերին մէջ, և ոչ թէ որոշում տուող կամ գործ կարգադրող պաշտօնէի դերին մէջ։

Զիս խծբծել ուզողներ իրենց բերնին ծամոց ըրին իբր թէ Համիտի կամակատար հետևող և հաճոյակատար ծառայ եղած ըլլամ, ինչ որ ճշմարտութենէ հեռու է։ Զօրաւոր և բռնաւոր ինքնակալը խոնարհեցնել և հնազանդեցնել միտքէ անցընելն ալ յիմարութիւն էր, և զիս այս վիճակի մէջ տեսնել ուզել՝ եղջերուաքաղ էր։ Ինծի կը մնար յարմար կերպերով, ճարտար դարձուածներով, հնարաւոր միջոցներով Համիտի Հայերու դէմ ունեցած ատելութիւնը մեղմացնել, հալածանքները թեթևցնել, որ-

գելքները նուազեցնել, ազգին կացութիւնը բարւոքել, ներքին կազմակերպութիւնը պահպանել, մէկ խօսքով՝ քիչ ու շատ տա-նելի վիճակ մը պատրաստել։ Այդ ծրագիրը Համիտին ուզածը չէր. և երբ ես անոր կը հետևէի, Համիտի հետևող եղած չէի ըլլար. և այսչափը բաւական է իմ վրաս յարուցուած զրպար-տութիւնը փարատելու։ Պատմական յիշատակներով չերկարաբա-նելու համար բաւական կը սեպեմ մատդրութիւն հրաւիրել, թէ ի՛նչ աղետալի կացութեան և քայքայեալ վիճակի մէջ էր ազգը 1896 նոյեմբերին, երբ պատրիարքութեան կոչուեցայ, և ի՛նչ կարգադրութիւններ հետզհետէ իրականացան իմ պաշտօնավա-րութեան միջոցին։ Արտաքուստ կոտրածներ դադարեցան, ներքուստ վարչական և կրթական և բարւոքման առաւելու-թիւններ իրականացան։ Իրաւ չէ նաև կարծել, թէ Համիտի սի-րելի և վստահելի անձ մը եղած ըլլամ։ Երկու տեսութեամբ Հա-միտ զիս գործածել կը սիրէր. գիտեմ, կ'ըսէր, որ գիտնական էք, գիտնական անձը առաքինի կ'ըլլայ (ալիմ էշէք ֆաղէլ օլուր), և այս ըսելով կ'իմանար թէ խոհական ընթացք կը պահեմ, և յախուռն ու անխորհուրդ ձեռնարկներէ կը զգուշանամ։ Միւս կողմէն զիս ալ կուսակցականաց մտերիմ և մասնակից եղած գիտնալով, կը կարծէր թէ իմ խօսքս անոնց մօտ ազդեցութիւն կ'ունենայ և իմ խորհուրդներուս կ'անսան։ Այդ միտքով էր որ սակայն ինծի կը կրկնուէր որ եթէ ուզէի կրնայի կուսակցականութիւնը ջնջել, որուն ես կը պատասխանէի, թէ երկու միջոց միայն ունիմ տրամադրելի, խրատ և աղօթք, խրատը լսող չի կայ, աղօթքը ուզող չի կայ, և եթէ կ'ուզեն կրնան զիս զօրացնել իմ առաջարկներս գործադրելով, և այս ալ կայսեր և կառավարութեան ձեռքն էր։ Իսկ իմ ընթացքս եղած է բռնական ընթացքը մեղմացնել գրգռութիւնները արգիլելով, մեղմօրինակ տրամադրութիւններ հրաւիրել պատիւի և օգուտի թելադրութիւններով, նպաստաւոր տրամադրութիւններ զարթուցանել անուղղակի տեղեկատուութիւններով, պարագաները յօգուտ գործածել ներքին ծանօթութիւններով, տեսակ տեսակ միջնորդութիւններ ստեղծել պատահարները ուսումնասիրելով, որոնց հետևանքը եղած է Համիտի բռնութեանց նուազումը և ազգային կացութեան բարւոքումը։ Ասով ո՛չ թէ ես Համիտի հետևած և ծառայած, այլ Համիտը իմ նպատակիս մօտեցուցած կ'ըլլամ։

Կոտորածներուն դադարիլը, նպաստի գործին ընդարձակուիլը, կեդրոնական և գաւառական վարչութեանց կազմակերպուիլը, ազգայնոց կենցաղին և զբաղմանց կանոնաւորուիլը, Ազգ. Սահմանադրութեան ջնջուելու վտանգէն ազատուիլը գոհունակութեամբ վկայուած արդիւնքներ են, և իմ ընթացքը լիովին կ'արդարացնեն: Երկու կէսերու վրայ պարտաւոր եմ վերապահութիւն ընել: Գաւառացւոց մայրաքաղաք գալու արգելքին դէմ մասնաւոր պաշտպանութիւններ ըրած եմ, բայց ընդհանուր ազատութեան չեմ աշխատած, վասնզի ուզած եմ որ ազգային գաւառներ ազգայիններով բազմամարդանան, և հայաբնակ նահանգները անհայացնելու վտանգը հեռանայ: Ամէն զեղծումի և բռնութեան և անտեղութեան դէմ բողոքած եմ համարձակ եւ առանց բացառութեան, միայն կուսակցականաց նախաձեռնութեամբ կատարուած սպանութեանց հանդէպ լռած եմ, մերայնոց ամբաստանող չըլլալու համար: Նոյն իսկ իմ վրաս վէնք պարպողներուն դէմ դատախազ չեմ կանգնած, և մահափորձի գործադիրին մահապարտութեան վճիռը դադրեցնելու միջնորդած և յաջողած եմ:

Որչափ ալ Համիտ ամէն բան իր ձեռքը ամփոփած էր, սակայն կ'ուզէր որ նախարարութեանց յարաբերութիւններն ալ պահուէին, ուստի հարկ կ'ըլլար որ նախարարներուն մօտ դիմումներ ալ զանց չընէի, գիտնալով մէկտեղ թէ ո՛չ որոշում և ո՛չ գործադրութիւն պիտի քաղէի դիմումներէս: Արդէն նախարարութիւն ինքն ալ գիտէր, թէ ոչ գործիչի, այլ առերևոյթ միջնորդի դեր վարելու կոչուած էր, առ առաւելն յանձնակատարի դերը կրնար վարել, երբոր այս կամ այն գործը ասոր կամ անոր ուսումնասիրելու կամ բանակցելու կը յանձնուէր: Մեծ եպարգոս Խալիլ Ռիֆաթ բաշա, փոխանորդն ալ փոխանորդուողն ալ վերը վնտռէ, կ'ըսէր, երբոր զինքն որոշման կը սպիպէի: Արդարութեան և Կրօնից նախարար Սպտիւրրահման բաշա, ինչո՞ւ գիս կը նեղես, կը պատասխանէր, քանի որ գործոց ընթացքը գիտես: Ներքին Գործոց նախարար Մէհմուտ բաշա, յարմար առթիւ կը հաղորդեմ ըսելով կը գոհանար, գործը վրայէն թօթափելով: Այս անցուդարձերու մէջ միայն արթուն և ճարտար վարմունքն էր որ կրնար կերպով մը շփոթ կացութենէ ազատել: Սաստիկ փոթորիկի ատեն ալէկոծեալ ծովի վրայ գտնուող նաւապետի դե-

ըն էր ինձի վիճակածը, և ամէն ատեն և նոյնիսկ եկեղեցական բեմէն յայտնապէս ըսած եմ, թէ նաւապետին պարտքը ո՛չ հողմը դադրեցնել է և ո՛չ ալիքները իջեցնել, այլ միայն նաւը ընկղմելէ ազատել, և թէ իմ պարտքս ասա և այժմ ազգին գոյութեանը աշխատիլն է, անոր զարգացման աշխատանքը ետև կը մնայ։

Արտաքին յարաբերութեանց շրջանակին մէջ կը մտնայ նաև դեսպանատուններու հետ պահուելիքը, և հետևաբար զանց չէի կրնար ընել այդ կէտն ալ, քանի որ անոնց տրամադրութիւններէն կախում ունէին պետական գործերը։ Վեց մեծ տէրութեանց դեսպաններուն հետ ալ մօտէն յարաբերութիւն պահած եմ, օտ. կառավարութեան հանդէպ անոնց պահած դիրքին մօտէն տեղեկացած եմ, դաշնագիրներու գործադրութեան և քրիստոնէից պաշտպանութեան համար ունեցած տրամադրութիւններուն և հրահանգներուն ներքին ծանօթութիւն ունեցած եմ, և ըստ այնմ առաջնորդուած եմ իմ պաշտօնական քայլերուս մէջ։ Առանց մանրամասնութեանց մտնելու բաւական ըլլայ աւելցնել, թէ գործունեայ դեր մը գտած չեմ անոնց մօտ, իսկ ազգային շարժումներով անոնք ստիպելու միտքն ալ երբեմն տեսած եմ։

ԺԳ

Դարձեալ, 1917 դեկտեմբեր 7/20 Եշ.

Ազգայիններու հետ յարաբերութիւններս սովորականէն տարբեր եղած չեն։ Ժողովականներու հետ կանոնական ճշդութիւնները յարգած եմ, այնպէս որ տասներկու տարիներու մէջ երբեք գժտութեան և հակառակութեան տեղի տրուած չէ. իսկ հրաժարելէս ետքը խօսուած կամ գրուած զրոյցները՝ խնբծողներու ձայնակից ըլլալու մարմաջով յղացուած մտացածին բաներ են։ Բոլոր պաշտօնավարութեանս միջոցին անգամ մը միայն անհամաձայնութիւն տեղի ունեցաւ իմ և Տնտեսականին միջև, որուն

չնելեցի Տնտեսականի և Ելեմտականի պաշտօնները միանգամայն կատարել, և ինքն իրեն հակող ու քննիչ ըլլալու թող չըտուի, զի ինքնագլուխ գործելով Շիրինեան և Տանձիկեան ազգային գումար մը վտանգեցին, և գուցէ կորսուէր ալ՝ եթէ վերան հանելով չդարմանէի։ Սակայն կանոնական ճշդութիւնները պահելով մէկտեղ, ո՛չ նախագահական առաւելութիւնս նուազեցուցի, ո՛չ ինքնութիւնս ուրացայ, և ո՛չ ալ իմ տեսութեանցս ներհակ գործունէութեան ասպարէզ տուի։

Ժողովուրդին հետ յարաբերութիւններս դիւրամատոյց և ընդհանուր եղան, մինչև իսկ պատրիարքական պատիւը նուազեցուցած ըսուելու չափ։ Ուստի, եթէ երբեք կարեւոր գործելու միջոցին եկողներ չընդունեցայ, կամ թէ ծանօթ և քննուած գործերու համար կրկին և կրկին թախանձողները մերժեցի, կամ թէ ոմանք փոխանորդի նախաքննութեան յղեցի, կամ թէ ընդունելութեանց ժամանակ և չափ սահմանեցի, չեմ կարծեր թէ զիս ժողովրդականութենէ օտար դատելու փաստ ընձեռած ըլլամ։ Մայրաքաղաքի բոլոր թաղերը այցելած եմ, օգտուելով իւրաքանչիւրին տօնական օրերու առիթներէն, որպէսզի թաղին և թաղեցւոց և թաղականաց որպիսութեանց և գործերուն անձամբ և մօտէն գիտակ ըլլալով, յարմարական կարգադրութիւններ կարենամ ընել խնդիրներ ծագած ատեն։

Գաւառներու և վիճակներու հետ տեւական և հաստատուն յարաբերութիւն եմ պահած, ամէն գիրերու պատասխանած եմ դիւանները ձանձրացնելու չափ, փորձով գիտնալով, որ խնդրանքնին գոհացնել անհնարին եղած պարագային իսկ, գաւառացւոց մեծ մխիթարութիւն է գոնէ երկտող պատասխան մը առնել, որով կը յուսադրուին թէ լքուած և երեսէ թողուած չեն։

Գաւառական վիճակներու առաջնորդները և տեղապահները մեծաւ մասամբ դպրեվանքցիներով հոգացուած ըլլալով, կանուխ ազդարարութեամբ և կարեւոր հրահանգներով զօրացուցած եմ։ Մէկուն կամ մէկալին դէմ կառավարութեան կամ կառավարիչներու կողմէն կասկածի կամ գանգատի նշաններ տեսած ատենս, իսկոյն ջանացած եմ հեռացնել, որպէսզի պաշտօնապէս չաղտեղուին և ուրիշ տեղ կարենան գործածուիլ, մինչ հակառակութեանց հանդիպած ատեննին, եթէ մէկ զրպարտութիւն ջրես՝ երկու կ'ըստեղծեն, և եթէ երկուքն ալ ջրես՝ չորս ևս կ'ստեղծեն, և վեր-

ջապէս անձը կը նշաւակուի, կամ ինչպէս կ'ըսուէր՝ ԴԷՆԴԷՇ կ'ըլլայ, և նորէն գործածուիլը անհնարին կը դառնայ։ Այս ոճը իմ անձիս համար ալ գործածած եմ, զի երբ 1883ին իմացայ որ զիս իբրև կասկածաւոր կարինէ հեռացնել կ'ուզուի, թող չտուի որ հրաման արձակուի, այլ ես կանխեցի հեռանալ, որով պաշտօնական գրութիւն և գործողութիւն արգիլուեցաւ, և երբ 1884 սեպտեմբերին յաջողութեամբ պիտի դառնայի, կրօնից նախարարը կը վարանէր թէ ի՛նչ հիմամբ յանձնարարագիր պիտի տայ, զի պաշտօնական գրութեանց մէջ յիշատակութիւն չէր գտնար։ Այսպէս Մուշեղ Սերոբեան վարդապետը Արաբկիրէ հանելով Աւտանա յղեցի, և Թոթոլ Դուրեան վարդապետը Զարսանճագէ հանելով Պիլէճիք յղեցի, իսկ Բաբգէն Կիւլէսէրեան վարդապետի Մուշի մէջ յանկարծական հակառակութեան հանդիպիլը արգիլեց որ ուրիշ տեղ պաշտօնի կոչուի։

Ներքիններու կարգէն պիտի յիշուին կուսակցականներն ալ, որոնք Հայիսէ ոչ նուազ դժուարութիւն պատճառեցին իմ պաշտօնավարութեան։ Անոնք զիս իրենց կամակից գիտնալով 1882ի Կարնոյ դէպքերուն հետեւանօք, իմ պատրիարքական ընտրութեան չէին ընդդիմացած, մինչև իսկ ընտրութիւնս չնորհաւորեցին իբր իրենց տեսութեանց համակիր և գործադիր, բայց երբ տեսան որ դերերը փոխուելով՝ Մաղաքիա պատրիարքը իրենց սպասած Օրմանեանը չէ, և ազգային պաշտպանութիւնն ու խնամքը զինքն նոր պատասխանատուութեան կ'ենթարկէ, սկսան գիրերով եւ այցելութիւններով իրենց տեսութեանց համակերպելու ստիպել, և երբ այս ճանպուն մէջ ալ չյաջողեցան՝ սպառնալից գիրերով, և մինչև իսկ օտարազգի միջնորդներով հրաժարելու բռնադատել ձեռնարկեցին։ Իսկ ես ինքզինքս պահնորդ զինուորի պահպանութեան դիրքին վրայ նկատելով, ինծի պարտք համարեցի ո՛չ տեղս լքանել և ո՛չ սիալ ուղղութեան ծառայել։ Այդ լռին պայքարը շարունակեց ամբողջ պատրիարքութեանս միջոցին, մինչև որ Ազատութեան հռչակմամբ, 1908 յուլիսին, դերերը փոխուեցան, և ես՝ յորդորեալ բայց ոչ ակամայ՝ հրաժարեցայ և քաշուեցայ։ Երեսունի մօտ ըսպառնալից նամակներ հաւաքուած ունիմ, կերպ կերպ ճանպաներով ինծի հասած, մինչև իսկ գերմանական թղթատարութեան ձեռքով յղուածներ, տունին դուռնէն դրուած կամ պատուհանէն նետուածներէն սկսելով։ Խիստ լռութիւն պահած եմ անոնց մա-

ին, որպէսզի արքունիքին և ոստիկանութեան անտեղի հալածանքներու առիթ ընծայած չըլլամ, և երբ անուղղակի զրոյցներ ալ հասած են ոստիկանութեան ականջը, հերքելու և ցրելու համարձակած եմ միշտ նոյն նպատակով։ Սպառնալեաց նամակներու յաջորդեց 1903 յունուար 6ի մահափորձը Գումգաբուի Մայր Եկեղեցին Ծնունդի պատարագի միջոցին։ Բայց այն ալ չբաւեց զիս դատալքութեան համոզել։ Վերջին ատեններ ոճը փոխելով, կուսակցութեանց զէնք և դրամ հայթայթած լինելու գիրերն ալ հասուցին, դիրքս վտանգելու դիտումով, և ասոնք միայն իբրև ծիծաղի առարկայ արքունիքին հաղորդեցի՝ թիւրիմացութեանց առջևն առնելու համար։ Զանց կ'ընեմ յիշել և մանրամասնել յատուկ միջնորդներու ձեռքով յիշատակագիրներուս պատճէնները ուզելնին, բանակցութեանց տեղեկութիւնները պահանջելնին, զիս մատնելու ճոռոմաբան խրոխտանքներնին, և ուրիշ նմանօրինակ միջադէպերը, որոնք զիս չխոտորեցուցին իմ համոզման և խղճիս ուղղութենէն չեղելու, և այլընդայլոյ կերպերով ազգային կացութիւնը վտանգելու կամ մասնաւորներու վնասելու, ի՛նչ ալ ըլլար խնդիրի պարագան, կամ ո՛վ ոք ըլլար նկատեալ անձը։

Այս քանի մը տողերը բաւական կը սեպեմ կուսակցութեանց հանդէպ բռնած դիրքիս իսկութիւնը բացատրելու։

ԺԴ

Դամասկոս, 1917 դեկտեմբեր 8/21 Ուր.

Համոզումներուս և ուղղութեանս բացատրութիւնները տալու առթիւ, յատկապէս ընդարձակուած եղայ պատրիարքական գործունէութեանս վրայ, ինչ որ բնական հետեւանքն էր գործին կարեւորութեան և շատ խօսուած ու խծբծուած ըլլալուն։ Ի դէպ էր գլխաւոր խնդիրներու վրայ ալ խօսիլ և իւրաքանչիւրին մասին բացատրութիւններ տալ, բայց այս կէտերուն պիտի չմտնեմ այս տեղ. անոնց մասին այլուր խօսած եմ։ Իմ մասին յարուց-

ուած զրպարտութեանց առաջին արարուածը դրամական զեղծարարութիւնն էր, իբրև թէ Նպաստից գումարէն ահագին իւրացումներ ըրած ըլլամ։ Ասոր պատասխան իսկոյն Նպաստից գործին կամ Յանձնաժողովին հաշուական Տեղեկագիրը մանրամասնօրէն պատրաստեցի, տպագրեցի, և պաշտօնական անձանց և նուիրող ու վայելող շրջանակներու ցրուեցի, և դրամական զեղծարարութեան զրպարտութիւնները լռեցին։ Միեւնոյն ատեն կուսակցական մարմիններ հրապարակ եկան, և վարչական զեղծումներու զրպարտութիւնները մէջտեղ հանեցին։ Միեւնոյն կերպը որոշեցի պահել, և ՅԻՇԱՏԱԿԱԳԻՐՔ ԵՐԿՈՏԱՍԱՆԱՄԵԱՅ ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹԵԱՆ գրութիւն մը պատրաստել սկսայ, վարչական գործունէութեանս ընդհանուր գիծերը և մասնաւոր խնդիրներու մէջ հետևած ընթացքս բացատրող, վստահ ըլլալով թէ այս կերպով վարչական զեղծումներու զրպարտութիւններն ալ կը լռեցնեմ։ Բայց մինչեւ որ այդ միտքս լրացնեմ ու գործադրեմ, երեսփոխանութեան առջև պաշտօնական ամբաստանութեան ձեռնարկը սկսաւ, ոչ առանց վերընտրեալ պատրիարքին գիտակցութեան և կամակցութեան։ Այլեւս տարաժամ պիտի ըլլար իմ հրատարակութիւնս, և գուցէ խծբծողներու և զրպարտողներու նիւթ ալ պիտի ընծայէր ըստ կամս քաշկրտելու։ Ուստի գրութիւնը ի կախ թողուցի, հրատարակութիւնը յետաձգեցի, և թող տուի որ պաշտօնական գործողութիւններին շարունակեն և ինչ որ պիտի ըսեն եւ պիտի ընեն, խօսին ու գործեն։ Բայց գրութիւնը ձեռքէ չթողուցի, և որեւէ առթիւ պատրաստ ունենալու համար տպագրեցի, սակայն հրապարակ չհանեցի. և երբ որ տարուէ տարի յետաձգումներէ ետքը երեսփոխանութիւնը անպարտութեան վճիռ արձակեց 1912 դեկտեմբեր 21ին, հրատարակութիւնն այլեւս աւելորդ եղաւ, և այսօր տպագրեալ օրինակները պահուած կը մնան, և մահուանէս առաջ մէջտեղ հանելու միտք չունիմ։ Այդ Յիշատակագիրքին մէջ բաւական ընդարձակօրէն բացատրուած են պատրիարքական գործունէութեանս ընդհանուր կէտերը և մասնաւոր խնդիրները. զորօրինակ Նպաստից գործը, Կիլիկիոյ խնդիրը, Լահէյի հեռագիրը, հրաժարականի կէտը, պետական յարաբերութիւնը, վարչութեան համերաշխութիւնը, և ուրիշ մասնաւոր գործեր, և այս է պատճառը որ անոնց մասին այստեղ գրել զանց կ'ընեմ. անոնք ալ օր մը ԽՈՀՔ ԵՒ ԽՕՍՔԻՆ հետ մէջ-

տեղ կ'ելլան և հետաքրքիրները կը գոնացնեն։ Միայն Երուսաղէմի խնդիրը կը պակսի բացատրութեանց կարգին, թէպէտ գործին ընթացքը և վարած դերս յայտնի են. ես այդ կէտը լուսաբանելն ալ յարմար պատեհին կը թողում, և ուրիշ կէտեր բացատրելու կ'անցնիմ։

ԺԵ

Դամասկոս, 1917 դեկտեմբեր 9/22 Շբ.

Ընդհանուր տեսութիւններ, գործնական սկզբունքներ, ընթացքի ուղղութիւններ կ'ուզեմ յառաջ բերել, զի ասոնք են որ մարդը կը կերպարանեն իրեն իսկութեան մէջ, և անոր գործերը կշռելու և գնահատելու կամ քննադատելու կը ծառայեն։ Բայց ծրագիր թո՛ղ չփնտռէ այդ տողերուս հանդիպողը, ինչպէս սկիզբէն ըսած եմ, պատահաբար յիշած կէտերն են զորս պիտի բացատրեմ ուրոյն և իրարմէ անկախ և անկապ հատուածներով։

Շատ խօսուած խնդիրներէն մին Պարտֆի և Իրաւունքի խնդիրն է։ Այդ մասին իմ տեսութեամբ Իրաւունքը Պարտքի ծընունդ է, և Պարտքը Իրաւունքէն առաջ է. Իրաւունքը ո՛չ այլ ինչ է՝ եթէ ոչ Պարտքը կատարելու պայման կամ իշխանութիւն։ Ամենէն ընդարձակ իրաւունքի տէր եղող աստիճանը կամ պաշտօնը, ամենէն ընդարձակ և բազմատեսակ պարտքերու ներքև գտնուողն է։ Հետեւաբար պէտք է Պարտքը բացատրել քան թէ Իրաւունքի վրայ խօսիլ. և անկէ կ'սկսիմ ես ալ։

Պարտֆի ծագումը յառաջ կուգայ իւրաքանչիւր անձի կենցաղական յարաբերութիւններէն. եթէ մարդ որևէ յարաբերութիւն չունենար, պարտք ալ պիտի չունենար, և պարտք չունենալով իրաւունք ալ պիտի չունենար, թէպէտեւ առանց յարաբերութեան բանական արարած մը ենթադրել տրամաբանական չէ։ Յարաբերութեանց և անոնցմէ ծագած պարտքերուն գալով՝ յարմար կը տեսնամ անոնք երեք տեսակի վերածել. Պարտֆի, Պահանջֆ, և Պաշտաֆ։ Պարտֆի կ'անուանեմ առաջին տեսակը

Պարտք ընդհանուր առումէն զանազանելու համար. և այս բաժանման ներքև կ'իմանամ պաշտօնի, աստիճանի, գբաղման, կացութեան, հրամանի, պատուէրի զօրութեամբ կատարուելիք գործերը, որոնք օրէնքէ կամ կանոնէ մը կը բղխին և պարտադիր ուժ ունին։ Հասարակ խօսակցութեանց և ճշդաբան գրութեանց մէջ ասոնք են որ Պարտաւորութիւն անունի ներքև կ'իմացուին, և այս մասին երկարաբանել աւելորդ կը դատեմ։ Անոնց զօրութիւնը բացարձակ է, և զանցառութիւնը՝ յանցանք, մեղք, ոճիր, եղեռն անուններով կ'որակուի, և օրինազանցութեան պատասխանատուութիւն կը հրաւիրէ, դատի և դատաստանի նիւթ կը կազմէ, և դատապարտութեան ու պատիժի հիմ ու փաստ կը դառնայ։ Տեսութիւնս իւր վերացական և ընդհանրական պարունակին մէջ պահելու համար, աստուածայինի և մարդկայինի, եկեղեցականի և քաղաքականի, ընկերականի և անհատականի տարբերութեանց միջամուխ չեմ ըլլար. խոսիքեր ու խօսքեր են գբրածներս, և ոչ գիտական ճշդաբանութիւններ։

Պահանջք անունի ներքև կ'իմանամ այն պարտաւորութիւնները, որոնք օրէնքէ կամ կանոնէ մը չեն բղխիր, այլ պարագայից և հանգամանաց և դիպուածոց հետեւանօք գործելու և գործադրելու ստիպողականութիւն կը ստեղծեն։ Պահանջից զօրութիւնը կը ծագի երբեմն անձնապաշտպանութենէ ու անձնդիւրութենէ, երբեմն շահէ ու օգուտէ, և երբեմն սէրէ ու գթութենէ, և ամէնքն ալ երբեմն հանրային և երբեմն անհատական բնոյթ ունին։ Պահանջից հակառակ գործողը յանցաւոր և յանցապարտ չ'ըսուիր, բայց թերութիւն և պակասութիւն ըրած կ'ըլլայ, եւ մարդկային զգացումէ, սիրոյ թելադրութենէ, և միտքի ուղղութենէ զուրկ կամ օտարացեալ կը սեպուի։ Թէպէտ դատաստան և դատապարտութիւն չ'արտասանուիր այսպիսիներու դէմ, բայց հանրային կարծիքի և խոհական տեսութեանց մեղադրանքը կը հրաւիրէ, բարոյական ստորնութիւն և լրին անարգութիւն կը ծանրանայ Պահանջից դէմ գործողներու վրայ, որ չատ աւելի կը ճնշէ ու կը նեղէ, քան թէ պաշտօնական դատաստանով տրտասանուած պատիժ մը։

Երրորդ տեսակը Պաշտաճ կոչեցի, և անով կ'իմանամ պարտաւորութիւն մը, որ պարզապէս կը ծագի սիրտի ազնուութենէ, միտքի փափկանկատութենէ, կենցաղական քաղաքավարութենէ

և ընկերական զարգացումէ։ Պարտաւորութեան ծանրութիւնը առաջին տեսութեամբ շատ թեթեւ կ'երեւի, որովհետև օրէնք կամ կանոն, պահանջք կամ ստիպում չկան, և պարտադիր հարկ չեն դներ. յարմարութիւնն ու վայելչութիւնն է միայն որ Պաշտաճից գործադրութեան կը յորդորէ։ Սակայն եթէ լաւ զննենք, Պաշտաճից զանցառութեան պատճառած ստորնութիւնը շատ աւելի մեծ է, քան թէ Պարտեաց և Պահանջից զանցառութեան յառաջ բերածը։ Պաշտաճից զանցառուն նովին իսկ անկիրթ եւ կոպիտ, ազնուութենէ և զարգացումէ զուրկ, գիտակցութենէ և ճաշակէ անմասն մէկ մը եղած ըլլալ կը յայտնէ, գռեհիկ և սինլլքոր անձի պատկերը կը ներկայացնէ, և բանգէտներու ու զարգացեալներու արհամարհանքին կ'ենթարկուի։ Մանաւանդ թէ նոյնիսկ իրեն նմաններն ալ զինքն կ'անարգեն, որոնք եթէ իրենց աչքին դերանը չեն տեսնար, ուրիշին շիւղը մեղադրելու փութաջան են։

Տրուած բացատրութիւնները վերացականէն գործնականի վերածելու համար, պէտք է դիտել տալ որ ուղիղ չէ Պարտաւորութեան զօրութիւնը լոկ օրինակաւն տեսակէտէն չափել, եւ Պարտիքի Պահանջքի ու Պահանջքի Պաշտաճքի անցնելով աստիճանաբար նուազեցնել պարտադիր ստիպողականութիւնը։ Այդ տեսութիւնը կ'արդարանար եթէ մարդը լոկ բնական վիճակի մէջ ըմբռնէինք, և բանական առաւելութեան և մարդկային զարգացման տեսակէտները անտեսէինք։ Ուր ընդհակառակն եթէ մարդը կատարելագործեալի և կատարելագործեալ աստիճանի մէջ նկատենք, պէտք է ընդունիլ թէ մեծագոյն ջանքը պէտք է թափել կատարելագոյն կացութեան վրայ, և առաւելութիւն տալ այս տեսակէ յառաջ եկող հետեւանքներուն. այս տեսութեամբ պէտք է որ Պաշտաճից պարտաւորութիւնները աւելի մտադրութիւն հրաւիրեն, մինչ Պարտեաց պարտաւորութիւնները, և մինչև աստիճան մը Պահանջից պարտաւորութիւնները իրենց բնութեամբը յառաջ կ'անցնին և գործադրութեան կը մղեն։

Այդ կէտերը հնար էր օրինակներով լուսաբանել, եթէ դասախօսական ոճին հետեւէինք. իսկ աւելորդ կը դառնան պարզ տեսութիւններ յայտնուած ատեն։

ԺԶ

Դարնասկոս, 1917 դեկտեմբեր 12/25 Գշ.

Պարտաւորութեան գաղափարին դիմաքաժանեալն է Ազատութեան գաղափարը, իւր բազմատեսակ առումներուն ներքև, և ներկայ ժամանակը այդ գաղափարով տոգորուած է, և ամէն դասակարգ իր հաճոյից համաձայն բացատրութիւն կուտայ և իրականացման կը ձգտի, և այդ գաղափարներու իրարու անհամաձայնութենէն կը ծագին թիւրիմացութիւններ, հակառակութիւններ, մրցումներ, կռիւներ, և մինչև իսկ պատերազմներ և աղէտաբեր հետեւանքներ։ Անուրանալի է թէ Ազատութեան գաղափարը բնածին է մարդկութեան համար, և բանաստեղծը իւր ազատութեան սկզբնաւորութիւն մեկնեց խանձարրապատ մանկիկին թեւերը պարզելու ճիգը։ Բայց մենք փիլիսոփայական տեսութիւնները եւ վերացական բացատրութիւնները թողունք, և գործնական ու մերկացութեան պատշաճեալ տեսակէտէն նկատենք ձեռք առած խնդիրնիս։

Խնդիրը այսպէս սեղմ և որոշ շրջանակի մէջ ամփոփուած ատեն՝ իբրև հիմնական սկզբունք կը նկատեմ, Ազատութեան լրումը հաստատեալ պայմաններու և կանոններու և օրէնքներու ներքև գործածելու մէջ, զի անպայման գործունէութիւնը, ըստ հաճոյս գործելը, ըստ քմաց ապրիլը Ազատութեան գեղծում կը դառնայ։ Ինչ որ անհատի մը համար իրաւացի կը սեպուի, պէտք կ'ըլլայ ամէն անհատի համար ալ իրաւացի ընդունիլ, և այս անգամ ըստ հաճոյս գործող անհատը իրեն դէմ կ'ունենայ բիւրաւոր ըստ հաճոյս գործող անհատներ, որոնք կրնան իր վրայ բլուռնանալ, զինքն զրկել, և անհաճոյ կացութեան ենթարկել։ Արդ, որպէսզի մարդ ապահովութիւն ստանայ, պէտք է որ պայմաններ ու կանոններ ու օրէնքներ զսպեն և արգիլեն ուրիշներուն ըստ հաճոյս և ըստ քմաց գործելը, և որպէսզի հաւասարակշռութիւնը պահուի և գործադրութիւնը ապահովուի, պէտք է որ ինքն ալ այն կապերուն ենթարկուի։ Ահա՛ թէ ինչպէս անհա-

տական ազատութեան հիմնակէտը պայմաններու ենթարկուելուն մէջն է, որով կանոնին լուծը կ'ըլլայ քաղցր, և օրէնքին բեռը կ'ըլլայ փոքրագի։

Որովհետեւ իմ անձնական Խոնֆu ու Խoսfu լուսաբանել է գըրութեանս նպատակը, նիւթերնիս աւելի մասնաւորելով կը փութամ յայտարարել, թէ վերոյիշեալ սկզբունքներու խորին համոզմամբ երբեք դժուարութիւն չեմ զգացած Կանոնին հնազանդիլ եւ Օրէնքին հպատակիլ. բուսական է միայն որ Կանոնի եւ Օրէնքի գոյութեան մասին կասկած չյարուցուի, զի գիտական սկզբունքով ալ անստոյգ օրէնքը օրէնք չէ և պարտաւորութիւն չ'արտադրեր։ Ազատութեան պայման սեպած եմ նաև ուրիշի իրաւունքը խղճմտօրէն յարգել, որպէսզի փոխադարձաբար իմս ալ յարգուի, զի եթէ ես ուրիշին իրաւունքը բռնադատեմ, ուրիշին ալ իմս բռնադատելու իրաւունք տուած ըլլալ կը կարծեմ։

Ազատութեան լրումն սեպած եմ ես ինծի կանոններ սահմանելը, և չափուած ու կշռուած ու կանոնաւորուած գործունէութիւն պահելը։ Այդ ոճը կը դիւրացնէ գործունէութիւնը, կ'ապահովէ արդիւնքը, և կ'ազատէ ինչ ընելու անորոշութենէ, եւ անօգուտ ժամավաճառութենէ։ Ինչ ընելիքնին կանխաւ որոշած չեղողներ յաճախ օգտակար ժամերը պարապի կը վատնեն, մինչև որ մտածեն, փնտռեն ու որոշեն թէ ի՛նչ ընելու են. իբր թէ ինքզինքնին կանոնէ ազատ կը կարծեն, բայց իրօք անստուգութեան կը ծառայեն։ Ազատութեան գաղափարը կապէ և կանոնէ զերծ ըլլալը չէ. կարգ ու կանոն, չափ ու կշիռ, կերպ ու պայման Ազատութեան դաստիարակն ու պահապանն են։

Խoսքերնիս անհատական շրջանակէ հանրայինին փոխագրած ատեննիս ալ միևնոյն եզրակացութեան կը յանգինք, և առաւելագոյն զօրութեամբ։ Ցորչափ մարդ ինքն իր մէջ կը պարունակուի և ինքն իր հանդէպ կը գտնուի, շահ ու վնաս իր անհատականութեան կը պատկանին, պատասխանատուութիւնն ալ իրմէ դուրս չի տարածուիր և իրեն դէմ պահանջող ու դատախազ չ'ունենար։ Բայց գործը կը ծաւալի խնդիրը կը ճապաղի, դատախազը կը բազմանայ և պատասխանատուութիւնը կը ծանրանայ հանրային շրջանակի մէջ, և խոհեմութիւն ու զգաստութիւն կը պահանջեն այդ կացութիւնը չհրաւիրել։

Այդ տեսութիւններ իմ միտքիս վրայ ազդած են ամէն առ-
տեն, և կարգ ու կանոնէ չեմ խորշած, զայն իբր Սգաստրեան
պայման նկատելով։

ԺԷ

Դամասկոս, 1917 դեկտեմբեր 12/25 Գշ.

Յառաջաբանին մէջ ակնարկեցի, որ Խոհիս ու Խօսքս եթէ տե-
սակ մը խոստովանութիւն է, կրնայ միանգամայն իբրև թելադրու-
թիւն ծառայել զայն գնահատողներուն, և այս նպատակով յիշեմ
ուրիշ կէտ մըն ալ որ մեծապէս նպաստած է իմ գործունէու-
թեան։

Ամէն գործողի գլխաւոր փորձաքարներէն մին անակնկալի և
յանկարծականի դիմաց գտնուիլն է, իսկ միւս կողմէն գործողին
հնար չէ առաջիկայն ու ապագայն ստուգութեամբ գիտնալ կամ
գուշակել։

Այս երկայրի կացութեան հանդէպ իմ գործածած միջոցս
եղած է՝ անմիջապէս որ գործ մը, խնդիր մը, դիպուած մը առ-
ջև կուգայ, զայն խորհրդածութեան նիւթ ընել, պարագաները
գննել, և հաւանական ու անհաւանական կերպերը ու վերջաւո-
րութեան տեսակները նկատողութեան առնել, և միտքին մէջ ո-
րոճալ։ Այս նախահոգ միջոցը բնական կերպով կը մատնանշէ լաւ
ու վատ, օգտակար ու վնասակար կողմերը, և միտքը կը նախա-
պատրաստէ անակնկալի դիմաց չգտնուիլ, և ինչ ալ ըլլայ ելքը,
ընելիքը գիտնալ և պատրաստութիւնները կատարած ըլլալ թէ՛
մտաւորապէս և թէ՛ գործնականապէս։ Միևնոյն պատճառով նա-
խահոգ զգուշաւորութեան ալ դուռ կը բացուի, որ եթէ մտաւոր
հետազօտութեանց մէջ վտանգաւոր կամ վնասակար պարագայ
մը կը նախատեսուի, զայն խափանելու կամ դարմանելու միտ-
քը ալ միանգամայն կը զարթնու, և միտքիդ մէջ ծագած եղա-
նակը իրագործելու պատրաստուած կ'ըլլաս, և արտաստվոր աշ-
խատութեան վտանգը հեռացուցած և վնասը դարմանած կ'ըլլաս։

Այդ արդիւնքը յաջողութեան երաշխաւորութիւններուն առաջինն է, և ես մեծապէս օգտուած եմ իմ գործունէութեանս մէջ։

Միևնոյն կերպը գործածած եմ պաշտօնագիր մը, ծանուցագիր մը, նամակ մը պատրաստելու համար։ Օր առաջ սկսած եմ խնդիրը միտքիս մէջ շրջելել, բացատրութիւններ և դարձուածներ բանաձեւել, չփոթն ու անբաւականը մէկդի թողուլ, լաւագոյնը որոնել և որոշել, այնպէս որ երբ գրիչը ձեռքս կ'առնեմ երկար զննութեանց տեղի մնացած չ'ըլլար, և գրութիւնս թէ՛ արագ և թէ՛ լաւագոյն կերպով կը լրանայ։

Ես մեծապէս օգտուած եմ այդ եղանակէն, և կը կարծեմ թէ ուրիշներուն ալ օգտակար կրնայ ըլլալ։ Հարկաւ բացառիկ պարագաներ կը հանդիպին, որոնց մէջ գործին կամ խնդիրին ծագումն ու լրումը այնպէս իրարու մօտ ըլլան որ այդ նախահոգ խորհրդածութեան ատեն մնացած չ'ըլլար։ Սակայն այդ առիթին մէջ ալ սովորական գործերէ ստացուած ունակութիւնը միտքը զօրացուցած կ'ըլլայ, և նմանօրինակ պարագաներէ ստացուած գործունէութիւնը բացառիկ պարագաներու մէջ օգտակար կ'ըլլայ, և նախահոգութիւնը անուղղակի կերպով իւր ազդեցութիւնը կը տարածէ բովանդակ գործունէութեան վրայ։

ԺԸ

Դամասկոս, 1917 դեկտեմբեր 14/27 Եշ.

Ընդհանուր տեսութիւններէ ինչ ինչ բացատրեցի արդէն, պահ մը ալ կեանքիս հանգրուաններէն գլխաւորներուն վրայ կ'անդրադառնամ, ոչ այնչափ պատմական ճշդութեան և ամբողջութեան հետեւելով, որչափ անոնց մէջ տեսութեանց և զգացմանց մասը նկատի ունենալով, վասնզի օրագրական յիշատակներս ալ տրամադրելի չունիմ, և միայն յիշողութեանց զօրութեամբ պիտի գրեմ։

Մանկութեան տարիներ կատարեալ գիտակցութենէ և մանաւանդ խորհրդածութենէ զուրկ են, և հետաքրքրական պարա-

գաներ չեն ներկայեր։ Ծնունդս տեղի ունեցած է 1841 փետրուար 11|23ի արեւին մարը մանելէն երեք ժամ ետքը, Լէքէճեան Անտոնի տունը, Բերա, Եօղուրթհանէ փողոց, որուն մէկ մասին մէջ վարձքով կը բնակէին ծնողքս՝ Անտոն Օրմանեան դեղագործ և Եղիսաբեթ Միսաէրեան, տնաչէն և ձեռագործի ճարտար կին, հայ հռոմէադաւան հասարակութենէն երկուքն ալ։ Ծննդեանս օրը հանդիպած է բուն բարեկենդանի երեքշաբթիին, և բարեկենդանեան զուարճութիւնները մինչև այն երեկոյ կը տեւեն արեւմտեայց և հռոմէադաւանաց սովորութեամբ. որով այս կողմ մօրս երկանց ժամուն միւս կողմ բարեկենդանի փակման զուարճութիւնք կը կատարուին եղեր։ Ծնողաց անդրանիկը՝ 1840 փետրուար 11|23ին ծնած՝ Պետրոս կոչուած էր, մօրենական մեծ հօրը անունով, որով զիս ալ Պօղոս կը կոչեն 1841 փետրուար 18|2 մարտին մկրտութեանս ատեն, բայց Պետրոս մանկիկ քիչ ետքը կը վախճանի օգոստոս 4|16ին, և անդրանկութեան կարգը ինծի կ'անցնի։ Նոյն միջոցին հայրս սեփական տուն չինելու կը հետեւէր Ֆէրիտիյէ փողոցին մէջ, ուր քիչ ետքը կը փոխադրուին, և այնտեղ կ'անցնին մանկութեանս տարիները։

Նշանաւոր պարագայ մը, զոր անտիսկան հասակիս մասին ծնողքներէս լսած եմ, կանուխ և ինքնաբերաբար արթնցած դըպրոցի փափաքն է եղած։ Չեմ իմանար թէ ի՛նչպէս ծագած է այդ իղձը, որովհետև երիցագոյն եղբայր և օրինակ ունեցած չեմ, գուցէ հօրս խօսակցութիւններէն, որ դպրոցասէր և ուսումնատենչ անձ մը եղած է, մինչ մայրս դպրոց տեսած չէր։ Դպրոց ուզելու փափաքով մինչև իսկ տունին սեմին վրայ կուլամ եղեր, երբ դըրացի տունէն Սիսեանց օրիորդը իբրև վարպետ զիս ներս կ'առնէ, և միջոց մը անոր մօտ երթեւեկելէն ետքը Շահինեան քոյրերու մօտ կը դնեն զիս, որոնք պզտիկ տղաներ կը կարդացնէին մեր տունէն քանի մը դուռ անդին։ Ուսումնական և գրական կեանքին փափաքը, որ մինչև այսօր վառ կը մնայ սիրտիս մէջ, շատ կանուխէն սկսած կ'ըլլայ իմ ներսս։

Քանի մը տարիներ տնական վարպետ տուտուներու մօտ անցընելէն ետքը, եօթը տարեկան եղած ատենս, զիս կանոնաւոր դըպրոց մը յանձնելու միտքով, կը դնեն Վենետկոյ Մխիթարեանց Սաղբզաղաճը փողոցին մէջ եղող դպրոցը, որ սովորաբար Հ. Անանիայի դպրոց անունով կը յիշուէր։ Այդ ընտրութեան կը միտիր

հայրս իբր զի Համազգեաց Ընկերութեան առաջին անդամակից-ներէն մէկն էր, և Մխիթարեանց մասին համակիր գաղափար ունէր, որոնք յիշեալ Ընկերութեան հիմնադիր եղած էին։ Անոնց դպրոցը կ'սկսիմ յաճախել 1848 տարւոյ մեծ արձակուրդին աւարտելէն ետքը դպրոցներուն վերաբացուելուն։

Սակայն տան խոստովանահայրը Հ. Աթանաս Տօղրամաճեանն էր, և հօրս մտերիմներէն էր Հ. Եղիա Նահապետեան, հօրս պաշտպան և իմ կնքահայր դեղապործ Մաղաքիա Փափազեանի ազգականը, երկուքն ալ Անտոնեան միաբանութենէն, որոնք նոյնպէս դպրոց բացած էին Զէօբլիւքչէշմէ փողոցին վրայ, որ Հ. Աթանասի դպրոց անունով կը յիշուէր։ Ասոնք դիւրաւ կը համոզեն հայրս իրենց յանձնել իրենց զաւակը, որով իբր երկու ամիս ետքը՝ 1848 նոյեմբեր 15|27ին՝ կը փոխադրուիմ այդ դպրոցը, ուր շուտով կը յառաջանամ ընթերցանութեան, գրութեան, քերականութեան և Աւետարանի թարգմանութեան դասերուն մէջ, և 1850 տարւոյ վերաբացումին կ'անցնիմ դպրոցին բարձրագոյն կարգը ինէ տարիքով բաւական մեծ աշակերտակիցներու հետ։

Ժամանակը հասած էր բարձրագոյն վարժարանի աշակերտելու, և հօրս միտքը կ'ըլլայ դարձեալ Մխիթարեանց յանձնել, և Ռափայէլեան կամ Մուրատեան վարժարաններէն մէկը յղել։ Նորէն վրայ կը հասնի Նահապետեան վարդապետը, և կ'առաջարկէ Անտոնեանց Հռոմայ վանքը յղել զաւակը, ուր կատարեալ ուսման ընթացք կրնար կատարել և դառնալ, կամ եթէ յօժարէր՝ եկեղեցականութեան հետեւիլ, որ անյարմար ալ չէր, զի երեք եւս մանչ զաւակ ունեցած էր հայրս, Վիչէն 1844 փետրուար 21|5 մարտին, Կոմիտաս 1845 հոկտեմբեր 11|23ին, և Սերովբէ 1849 մարտ 24|5 ապրիլին ծնած, առանց համբերու 1843 յունուար 18|30 ին ծնած և միւս օրը արկածով մեռած Մարտիրոսը։ Այսպէս կ'որոշուի Հռոմ Անտոնեանց Ս. Գրիգոր Լուսաւորիչի վանքն երթալս, և պատրաստութիւնները լրացուելով կ'ուղեւորիմ 1851 մայիս 13|25ին ընկերակցութեամբ ինծի հասակակից Անտոն Նարլեանի, և մեզմէ երեք տարի մեծ Հերոնիմոս Պաղտասարեանի, և Զմիւռնիա, Մալթա, Մեսինա, ու Զիվիթա-Վէքքիա հանդիպելով, մայիս 25|6 յունիսին կը մտնենք Անտոնեանց վանքը, Վատիկան թաղամասին մէջ, Ս. Պետրոսի սիւնազարդ հրապարակին աջակողմը Սանթ Ուֆֆիչիօ (Sant Ufficio) փողոց թիւ 1, Քավալլէճճիէրի

գրան (Porta de Cavalleggieri) յարակից։ Շաբաթ մը ետքը, յունիս 2|14ին չաբաթ երեկոյ, աշխարհիկ տարազը հանելով եկեղեցական սքեմ կը հագնինք երեքնիս, երբ ես տակաւին տասը տարեկան և երեք ամսուան էի։

Անտոնեան միաբանութեան կանոնով ուխտաւորը կրօնաւորութեան կ'ընդունուին 18 տարեկաններ, նախընթացաբար փորձի երկու տարիներ անցունելէ ետքը, որ նորընծայութեան միջոց կը կոչուի։ Տասնեվեց տարեկանէ պզտիկ աշակերտներ ալ կ'ընդունուին պարզապէս ուսումնական զարգացման համար, որոնց ուսանողանունը կուտան, և կ'սպասեն որ տարիքնին հասնելուն նորընծայ օրհնուին և պաշտօնապէս ի փորձ ընդունուին։ Ըստ այսմ իմ դիրքս պիտի ըլլար ուսանողներու վիճակը, որոնք նորընծաներու հետ հաւասար կեանք և զբաղանք ունէին, միեւնոյն կարգադրութեանց և սովորութեանց կը հետեւէին, և միեւնոյն դասարան կը կազմէին, յատուկ տեսուչի և օգնականի մը հսկողութեան ներքև։ Տեսուչն էր Հ. Սուքիաս Գազանճեան, և օգնականը Հ. Յովհաննէս Ծաղիկեան, որուն քիչ ետքը յաջորդեց Հ. Սերովբէ Հանըմեան։ Դասատուները միաբաններէն էին, որոց գլխաւորն էր Հ. Միքայէլ Միասէրեան ծերունին, հայերէն լեզուի ուսուցիչ. միայն իտալերէն և գաղղիերէն լեզուներու համար կը պաշտօնավարէր Լիպորիո Ռուպինօ (Liborio Rubino) Սիկիլիացի ուսուցիչը։ Իսկ ուսումնական ծրագիրը կը պարունակէր նախակրթական ուսմանց բոլոր ճիւղերը, հաշարողութիւնը մինչև գրահաշիւ, և լեզուներու կարգին լատիներէնի ալ յաւելմամբ։

Եկեղեցական և կրօնական զբաղմանց մասին վանական կարգը անթերի էր. առաւօտ և երեկոյ ժամերգութիւն, օրական երկու թիւ պատարագի ներկայութիւն, օրը երկիցս իբր կէս կէս ժամ մտածական աղօթք, որ է հոգևորական և խրատական գիրքի մը ընթերցանութիւնը, իւր կեանքին և վարքին հետ բաղդատական խորհրդածութիւններով ընդհատուած, թերութիւնները ուղղելու առաջադրութեամբ և միջոցներու որոշմամբ, և ուղղութեան մէջ յառաջանալու իղձերով և կամքով։ Ասոնց հետ նաև գիշերային Եկեցի ժամերգութիւն, շաբաթը երեք անգամ Վարդարան, երկու անգամ բազկատարած Ողորմեա աղմոս հընգիցս, և օրուան մէջ մերթ ընդ մերթ աղօթքներ։ Հոգևոր կեանքի մէջ զարգանալու համար շաբաթը մէկ անգամ Հոգևոր հայր

նշանակուած փորձառու վարպապետին իր կեանքն ու սիրտն ու միտքը յայտնել, և անոր տուած խրատները և ցուցած միջոցները գործադրել։ Ընդհանրապէս բոլոր կրթութիւններ նպատակ ունէին կամապաշտութենէ հեռանալ, անձնահաճութիւն ուրանալ, և համակերպութեան և հպատակութեան հետևիլ։

Ուսումնական վարժութեանց մէջ միշտ փութաջան ու յառաջադէմ գտնուած ըլլալս համարձակ կրնամ յայտարարել. վանական կեանքի յարմարիլս անկեղծ եղած է, և իմ ընթացքս գանգատի և դիտողութեան ընդհանրապէս տեղի տուած չէ։ Եկեղեցական պաշտամանց սիրող եղած եմ, միայն երգեցողութեանց ոնյարմար և անկար դասուած եմ, և այդ մասին եղած վարժութիւններէն հեռի պահուած եմ, և մինչև վերջն ալ այնպէս մնացած եմ։ Այս պայմաններով կրօնաւորութեան փափաքող և ընդունելի գտնուած եմ, որով 1855 դեկտեմբեր 25|6 յունուար 1856 ին նորընծայ օրհնուած եմ վանահայր Հ. Կղեմէս Միքայէլեանի ձեռամբ, սասնուհինգերորդ տարիս դեռ չլրացուցած, զի ոչ միայն տասնուվեց տարիքը լրացածի տեղ սկսուածի փոխանակուած է, այլև երեսունուվեց օր ալ կանխած եմ բացառիկ արտօնութեամբ։ Վանք մտած ատենս դասարանը մինչև տասներկուք բարձրացաւ, իսկ նորընծայ օրհնուելէն ետքը մինչև երկու ալ իջաւ, ոմանց յառաջելովը և ոմանց ետ դառնալովը։ Նախակրթական ընթացքը յառաջացած ըլլալով ճարտասանութեան և իմաստասիրութեան դասեր առնել սկսայ Հ. Ռափայէլ Միասէրեանի ուսուցչութեամբ, որ յաջորդած էր ծերունի Հ. Միքայէլ Միասէրեանի, և լատիներէնի ալ արտաքին դասատու նշանակուած էր։ Նորընծաներու արժանաւորութիւնը հաւաստելու համար երեք անգամ քուէարկութիւն կը կատարուէր վանական ժողովէն, 12 եւ 18 եւ 24 ամիսներու լրանալուն, եւ այդ փորձերէն ալ կատարեալ յաջողութեամբ անցնելով, վերջապէս կրօնաւորական կոչման մտնելու արժանաւոր դատուեցայ, և Անտոնեան միաբանութեան անդամակից գրուեցայ հանդիսական արարողութեամբ և ուխտադիր օրհնութեամբ։

ԺԹ

Դարեւասկս, 1917 դեկտեմբեր 15/28 Ուր.

Կրօնաւորական օրհնութիւնը տեղի ունեցաւ 1858 յունուար 12/24ին, տասնըութը տարիքը սկսուած առնելով, եւ ամիս մըն ալ բացառիկ արտօնութեամբ կանխելով։ Օրհնութիւնը կատարողը դարձեալ Հ. Կղեմէս Միքայէլեան վանահայրն էր, Ս. Անտոնի տօնին առթիւ հանդիսաւոր ձայնաւոր պատարագի կիրակին էր, Եւ Իրօքականտայի նախագահ Աղեքսանդր Պարնապօ կարտինալն ալ ներկայ էր։ Այս առթիւ վեղար եւ փիլոն կը տրուի ընծայելոյն, եւ խաչ մը ու լուցեալ մոմ մը կը տրուի ձեռքը իբր իւր կոչման խորհրդանշանակ։ Պօղոս անունս արդէն Մաղաքիայի փոխուած էր նորընծայ օրհնուելուս առթիւ, համաձայն հօր բաղձանքին, ի յիշատակ իւր պաշտպան եւ իմ կնքահայր Մաղաքիա Փափազեանի, ինչպէս որ ինծի յատկապէս յանձնարարած էր, իսկ ես լուած էի, սակայն ինքն ուղղակի վանահօր ալ գրած է եղեր, ինչպէս որ դիւանը ձեռքս անցնելուն պահուած նամակներու կարգին տեսայ։ Կրօնաւորաց պաշտօնական կոչումը Միանձն (Monachus, Moine) է Անտոնեան միաբանութեան մէջ, իբրեւ հին միաբանութիւն, եւ իրարու հետ եղբայր անունով կը կոչուին. որով ես ալ եղայ Եղբայր Մաղաքիա Օրմանեան Միանձն Անտոնեան։

Արեւմտեան հռոմէական եկեղեցւոյ մէջ կրօնաւորական ուխտերը միանձնական միաբանութեանց համար երեք են. մեծաւորին հնազանդութիւն, մշտնջենաւոր կուսակրօնութիւն, եւ կամաւոր աղքատութիւն։ Իսկ Անտոնեան միաբանութեան մէջ չորրորդ մըն ալ աւելցած է. աւագութեանց չցանկալ եւ չհետապնդել։ Ես ալ այդ ուխտերը կատարեցի ամենայն անկեղծութեամբ։

Այստեղ ի դէպ կը համարիմ զարտուղութիւն մը ընել կուսակրօնութեան ուխտին մասին, որուն ես ալ հրաւիրուեցայ եւ կատարեցի, երբ տակաւին տասնուվեց տարեկան և տասնումէկ

ամուսնան պատանի մըն էի, երիտասարդութեան և անձնատիրութեան սարիքէն ալ բաւական առաջ։ Շատ խօսուած է անփորձ պատանիներու և նորահաս երիտասարդներու մշտնջենաւոր ուխտերու, և յատկապէս կուսակրօնութեան ուխտին հրաւիրուելուն դէմ, իբր թէ բնութեան բռնաբարութիւն մը, և անմեղ ու անպատասխանատու անձեր անտանելի զրկումի և կեանքի թունաւորման ենթարկելու ձեռնարկ մը ըլլար։ Այս տեսութեամբ համարձակ կը դատապարտեն կուսակրօն կրօնաւորութիւնը, և առաւելն աշխարհի փորձերէն և փորձանքներէն անցնողներու միայն կը ներեն այդ ուխտով կապուիլ, իբր ըրածնուն գիտակ անձեր։

Այդ մասին բնական և բանական տեսութեանց փորձառական տեղեկութիւններն ալ խառնելով՝ հետեւեալ բացատրութիւնները կրնամ աւելցնել։

Նախ և առաջ բնութեան հակառակ չեմ կարծեր՝ բնութեան բերմունքները կանոնաւորել և զսպել, ընդհակառակն անբանական կը կարծեմ մարմնոյ հաճոյքներու և հեշտանքներու և բերմունքներու անպայման հետեւիլ, և կերպով մը մարմինին պերիլլալ, հոգւոյ գերազանցութիւնը անարգել, միտքի կանոններուն չհպատակիլ, և լաւն ու օգտակարը պարզապէս նիւթայնակոնութեամբ չափել։ Ամէն կրօնք, ամէն օրէնք իրենց համար զրկումի դրութիւն մը ունին, և այդ դրութեան վրայ կը հաստատեն իրենց վսեմութիւնը։ Մանրամասնութիւնք ընդհանրապէս ծանօթ են և պարզելու պէտք չեմ տեսնար։ Այս սկզբունքով բնաւ անտեղի և անբնական չկրնար ըսուիլ որ ոմանք ինքզինքին մարմնական հեշտանքներէ զրկել ուզեն, և կուսակրօն կենցաղի հետևին։

Սակայն դիտել կը տրուի, թէ զրկումի յանձնառուն պէտք է որ ինչէ զրկուիլը լաւ գիտնայ, ինչ որ չ'արդարանար նորահաս պատանիներու և երիտասարդներու ուխտադրութեան մէջ։ Այդ մասին փորձառութենէ քաղած պատասխանս է, թէ շատ աւելի դիւրին է կիսովի տեղեկութեամբ կատարուած որոշումը, քան թէ ամէն պարագաներու ծանօթութեամբ և գործադրական հմտութեամբ տրուածը։ Յայտնի և վկայուած իրողութիւն մըն է թէ աւելի անժոյժ են այրիներ և ապօրէն կենակցութեանց հետևողներ, քան թէ սկիզբէն մարմնական գործերէ հեռու մնա-

ցածներ։ Մարդը ունակական կենդանի ըսուած է, և ամէն ճիւղի մէջ ունակութիւն ունեցողներ ունակութենէ հեռանալու կը դժուարանան, և մինչև որ ծանր վախ մը կամ վերահաս վտանգ մը գիրենք չստիպէ՝ ունակութենէն չեն հրաժարիր։ Այդ կէտը կը ճշմարտուի նոյնիսկ աւելորդ և պատահական ունակութեանց հետեւողներու վրայ, ինչպէս են ծխողներ ու խմողներ. հարկաւ աւելի պիտի ծանրանայ բնական ունակութեանց վրայ։ Հետեւապէս ո՛չ միայն անտեղի չեմ նկատեր նորահանելու ուխտադրութիւնը, այլև իրենց դիւրութիւն մը ընծայուած կը կարծեմ, երբ որ պաշտօնական և օրինական դարձած կենցաղի մը պայմաններուն թեթեւութեան կը պատրաստուի։ Սմուրի եկեղեցականութիւնը, ինչ ալ ըլլայ անոր ծագումն ու զարգացումը, այլեւս օրինական պահանջի կարգ անցած է, և կրօնական ընկերակցութեան մէջ այդ ընթացքին հետեւողներու պէտք կայ. լաւագոյն է այսպիսիներուն յանձնառութիւնը դիւրացնել, քան թէ դժուարացնել։

Ինդիրը ամփոփենք ուխտին մշտնջենաւորութեան վրայ։ Ինչ ալ ըլլայ ոմանց տեսութիւնն ու նախապաշարեալ կարծիքը, և խստակրօններու սկզբունքը, ես իմ մասին երբեք անդարմանելի մարդկային գործ մը չեմ ընդունիր, միշտ կարգ ու կանոնի մը և օրինական պահանջներու պատկառ մնալով։ Ըստ այսմ ուխտի մշանջենաւորութիւնն ալ կ'իմանամ իբր ցնոր տնօրէնութիւն, այսինքն ցորչափ իրաց վիճակը, ուխտադիրին դիրքը, էական պայմաններու ձեւը փոխուած չէ։ Մարդ չի կրնար բովանդակ ապագայն նախատեսել, և իւր կեանքին բոլոր փոփոխութիւնները գուշակել, ուստի անհրաժեշտ է որ քաց դուռ մը ունենայ իւր դիրքը և կացութիւնը փոփոխելու և նոր դիրքին յարմարելու։ Ըստ այսմ բնաւ դժուարութիւն չեմ զգար և դիտողութիւն չեմ ըներ, եթէ կուսակրօնութեան նուիրեալ եկեղեցական մը իւր կոչումէն հրաժարի, բաւական է որ օրինական պայմանները յարգէ և ընդհանուր բարոյականութեան դէմ չմեղանչէ։ Կարծեմ թէ այս բացայայտ վերապահութիւնս բաւական է իմ համոզումս ուղղապէս դատելու, և զիս մոլեռանդ և անխորհուրդ աւանդապահ մը չսեպելու։ Իմ ծանօթներէն և սիրելիներէն եղած են կուսակրօն եկեղեցականութենէ հրաժարողներ, որոնց մասին այս պատճառով սէրս ու յարգանքս չեմ պակսեցուցած, մինչև իսկ ազ-

գականութեան կապերու ընդունած եմ, միայն դիտողութիւն ըրած եմ անոնց որ ընդհանուր թարգմանութեան ճշգրտահ եղած չեն, կամ թէ քաշքշուքներ և այլընդայլոյ պատճառանքներ ուզած են յուզել իրենց արդարացման համար։ Աւելի պատուաւոր դատած եմ որ համարձակ խոստովանին և յայտնեն իրենց փոփոխուած պայմանները։

Կրնայի կուսակրօն եկեղեցականութեան պէտքին վրայ ալ խօսիլ, սակայն կը վախնամ որ նպատակէս դուրս խնդիրներու մէջ դեգերած կ'ըլլամ։ Բայց գոնէ համառօտիւ միտքս յայտնած ըլլալու համար ուզեցնեմ, որ նախնական եկեղեցւոյ մէջ կուսակրօնութիւնը եկեղեցականութեան պայման չէ եղած, թէպէտ կամաւոր յանձնառուն չէ մերժուած, ինչպէս Յովհաննէս և Պօղոս՝ առաքելոց մէջ և Արիստակէս՝ մեր սուրբ հարց մէջ։ Եկեղեցականութիւնը իբրև ժողովուրդի հովուութիւն ամուսնացելոց սեփական եղած է, նոյնիսկ եպիսկոպոսութեան և հայրապետութեան աստիճաններուն մէջ։ Իսկ կուսակրօններ իրենց կոչումը անաղարտ պահելուն համար աշխարհէ հեռու և աշխարհիկ յարաբերութիւններէ վերծ վանքերու մէջ փակուած են, իրենց նուիրական կենցաղը չվատնգելու համար։ Այժմեան կուսակրօններու սովորական դարձած աշխարհի և աշխարհիկ յարաբերութեանց հետ համարձակ չփումը նախնական օրինաց և սկզբնական սովորութեանց համաձայն չէ, բայց այդ մասին յետադարձը գործադրելն ալ դիւրին չէ։ Եթէ արեւելեան եկեղեցիներու մէջ պահուած ամուսնացեալ եկեղեցականութեան զարգացումը բարձրանայ, և եթէ իւր առջև աստիճաններու բարձրացման դուռերը բացուին, կուսակրօն եկեղեցականութիւնը կրնայ հետզհետէ նըւազիլ, և իւր նախնական բացառիկ և պատուական չափին վերածուիլ։ Բայց այս եկեղեցւոյ բարեկարգութեան կէտ մըն է, որ ատա և այժմ մեր նպատակէն դուրս է, զուցէ առաջիկային այն ալ չօշափեմ։

Հ

Դամասկոս, 1917 դեկտեմբեր 15/28 Ուր.

Զարտուղութիւնը փակելով կը դառնամ իմ կրօնաւորական կեանքիս՝ մինչև քահանայական ձեռնադրութիւնը, որ 1858 յունուարէն մինչև 1863 օգոստոս հինգուկէս տարուան միջոց մը կը պարունակէ։ Ընդհանուր կերպով համալսարանական աշակերտութեան միջոց մը եղած է այն, վանական շրջանակին մէջ պաշտօնավարութեանց հետ խառն։

Կրօնաւորական ուխտադրութենէն վերջ սկսայ վանքին մօտ եղող Վատիկանեան դպրանոցը յաճախել, լատիներէնի ուսումը զօրացնելու ճարտասանութեան դասարանին մէջ, մինչև դպրոցական տարւոյն լրումը։ Իսկ 1858 նոյեմբերէն անցայ հռոմէական դպրանոցին Ս. Ապոլինարի եկեղեցւոյն յարակից հաստատութիւնը, որ եկեղեցական ուսմանց կատարեալ ընթացք և ծրագիր ունէր համալսարանական արտօնութիւններով։ Այդ հաստատութիւնը ընիկ հռոմէական կղերին օրրանն ու կեդրոնն է, և անկէ կ'ելլեն պապական պաշտօնատանց անդամները և հետզհետէ եպիսկոպոսութեան և կարտինալութեան կը բարձրանան, եւ շատ առաւելութիւններ ունի զանազան ազգերէ եղող աշակերտութեանց սահմանուած վարժարաններուն վրայ, որոց գլխաւորն է Փրոփականտայի դպրանոցը առաւելապէս արեւելցի աշակերտներով կազմուած։ Ս. Ապոլինարի հաստատութեան բարձր ընթացքը կը պարունակէ երկու տարի փիլիսոփայութիւն, չորս տարի աստուածաբանութիւն, և երեք տարի իրաւագիտութիւն։ Իմաստասիրութեան դասերուն հետեւեցայ 1858-59 և 1859-60 դպրոցական տարիներու մէջ, երկու տարիներուն վերջն ալ մրցման քննութեանց մասնակցելով մրցանակներ ստացայ, պատկաւորի և արտօնաւորի և մագիստրոսի աստիճաններն ալ քննութեամբ շահեցայ, և 1860 օգոստոս 31/12 սեպտեմբերին մագիստրոսի արարողական օրհնութիւնն ալ ստացայ։

Աստուածաբանութեան ճիւղին սկսայ հետեւիլ 1860 նոյեմբերի սկիզբէն, և երրորդ տարին լրացուցած էի երբ քահանայական ձեռնադրութիւն ստացայ։ Առաջին տարւոյն վերջը և երկրորդ տարւոյն առաջին ամիսները պարբերական և երկարատև տենդով հիւանդացած ըլլալով, այդ երկու տարիներու մրցման քննութեանց չկրցայ մասնակցիլ, բայց երրորդ տարին չորս դասերուն ալ առաջին մրցանակները ստացայ 1863 օգոստոս 30|11 սեպտեմբերին հանդիսաւոր մրցանակաբաշխութեան պահուն։

Ցիշեցի թէ վանական պաշտօններ ալ կը վարէի համալսարանական ուսմանց հետեւած ժամանակս։ Ըստ այսմ 1859 հոկտեմբեր 5|17ին նորընծայից դասարանին կառավարչութեան անուանուեցայ, իբր վերակացուին կամ տեսուչին օգնական։ Միւս տարին 1860 հոկտեմբեր 28|9 նոյեմբերին նոյն դասարանի աշակերտաց դասախօսել սկսայ, կառավարչութիւնն ալ շարունակելով։ Տարի մը եւս անցնելէն ետքը մատենադարանապետ անուանուեցայ, տպագիրները և գրչագիրները և դիւանական գրութիւնները պահելու և կարգադրելու յատուկ յանձնարարութեամբ, և երեք ճիւղերուն ալ հիմնական կարգ ու սարք մտցուցի, և նոր ի նորոյ ցուցակներ կազմեցի։ Վանական քարտուղարութեան աշխատութիւններն ալ միանգամայն կը կատարէի. և այդ բոլոր զբաղմունքներով մէկտեղ աշակերտական ընթացքը անթերի կը լրացնէի, օրը երկու անգամ վանքէն իբր կէս ժամ հեռու եղող Ս. Ապողինարի հաստատութիւնը երթալով և գալով, և դասախօսութեանց ատեն ուսուցիչներուն խօսածները գիրի առնելով։

Վանական կեանքի եկեղեցական և կարգապահական պարտաւորութիւններէն ալ երբեք պակաս չէի մնար, ոլով կատարեալ աշխատողի և բազմազբաղ կեանք մը վարած ըլլալս կը տեսնուի, զոր իբր եղելութեանց պատմութիւն կը յիշատակեմ, և ոչ թէ անձիս գովաբան ըլլալ կը դիտեմ, բաւ համարելով աշխատութեանց մէջ տոկուն երիտասարդութիւն ունեցած ըլլալս, որ կեանքիս ապագային և հասունացեալ տարիքիս գործունէութեան համար մեծ և օգտակար նշանակութիւն ունեցած է։ Իբրև կենսագրական տեղեկութեանց մաս պիտի աւելցնեմ 1863 յունուար 8|20ին վիրաբուժական գործողութեան մը ենթարկուիլս, մէջքիս վրայ հատեւի կողմը գտնուող և հետզհետէ աճելու վրայ եղող կունտ օտար միսը (Lipoma) հանել տալու համար, առանց նուազման

կամ անզգայական մլիջոց մը գործածելու։ Երբեւ լրման խօսք կը յայտարարեմ թէ կրօնաւորական կեանքիս պարագաներէն բնաւ երբեք ծանրութիւն զգացած չեմ։

ԻԱ

Դամասկոս, 1917 դեկտեմբեր 16/29 Շբ.

Անտոնեան միաբանութեան մէջ մտադրութիւն չէր դարձուեր եկեղեցական աստիճաններէ պարբերաբար բարձրանալու, այլ ամէնքը միահաղոյն կը տրուէին քահանայական ձեռնադրութեան ատեն։ Գրեթէ բացառութիւն եղաւ Նաուլեան ընկերակցիս եւ իմ 1860 ապրիլ 17/29ին դպրութեան չորս աստիճանները, եւ 1863 յունիս 16/28ին կիսասարկաւագութեան եւ սարկաւագութեան աստիճանները ընդունելիս, մինչ քահանայական ձեռնադրութիւնը ստացանք 1863 օգոստոս 12/24ին։ Ձեռնադրողն եղաւ միշտ Եդուարդ Հիւրմիւզեան, Շիրակայ անուանական արքեպիսկոպոսը, Վենետկոյ Մխիթարեան միաբանութենէն, հանրածանօթ հայկաբան եւ բանասէր, եւ Հռոմայ աթոռին մօտ հայածէս ձեռնադրութեանց պաշտօնեայ։ Իբրեւ հետաքրքրական պարագայ մը յիշեմ, որ Հռոմայ աթոռին կանոնով քահանայական ձեռնադրութեան համար քսանեւչորս լրացեալ տարիներ կը պահանջուին, եւ մինչեւ տասնեւութը ամիսներու արտօնութիւն կրնայ ստացուիլ պապէն, մանաւանդ վանականաց համար։ Այդ արտօնութիւնը ինծի համար ալ ստացուած էր, եւ օգոստոս 11/23ին ձեռնադրութիւն ընել որոշուած եւ Հիւրմիւզեան հրաւիրուած էր, եւ օրն ալ կիրակի եւ նոր տոմարով Վերափոխման ութերորդ օրն էր։ Սակայն ոչեւէ կերպով վանական արձանագրութեանց մէջ ծնունդս փետրուար 12/24 նշանակուած ըլլալուն, Հիւրմիւզեան խիղճ ըրաւ քանի մը ժամ կանխել, պապական որոշումէն չզեղչելու համար, եւ ձեռնադրութիւնը յաջորդ երկուշաբթի օրուան յետաձգեց, որ էր Վերափոխման իններորդը։ Ըստ այսմ սոլորած եմ օգոստոս 12/24ը, եւ այժմ օգոստոս 12/25ը ձեռնադրութեանս տարելիցի օր համարել։

Յիշելու արժանի կը սեպեմ յաւելուլ թէ հռոմէադաւանները ձեռնադրութեան քառասունքի սովորութիւն չունին, բոլոր պատրաստութիւններ կանխաւ կը կատարուին, և ձեռնադրութենէն առաջ շաբաթ մը ընծայեալներ հոգեւոր առանձնութեան կը մըտնեն։ Այսպէս եղաւ ինծի համար ալ, և ձեռնադրութեան յաջորդ օրը, օգոստոս 13|25ին առաջին պատարագը մատուցի վանքին եկեղեցւոյն աւագ սեղանը, Յովակիմայ և Աննայի երեքշաբթի օրը։

Ձեռնադրութեանս օրէն մինչև առաջին անգամ վանքէն մեկնիլս, 1863 օգոստոսէն մինչև 1866 յունուար, կեանքիս համար նոր ժամանակամիջոց կամ նոր հանգրուան մը կը կազմէ, որ է երկուքուկէս տարւոյ տեւողութիւն։ Ամբողջ այդ միջոցին մէջ համալսարանական աշակերտութիւնը շարունակեցի, վանական պաշտօնները աւելի ընդարձակուելով։ Դպրոցական տարւոյ վերսկսման առթիւ 1863 նոյեմբերէն աստուածաբանութեան չորրորդ տարւոյ ընթացքը սկսայ և շարունակեցի մինչև 1864 օգոստոս, բայց վերջնական քննութիւնը և մագիստրոսութեան աստիճանի բարձրացումը յաջորդ 1865 տարւոյ թողուեցաւ, թէպէտ 1864 նոյեմբերէն լրաւագիտութեան ընթացքը սկսայ։

Հռոմի դպրոցներուն յատուկ սովորութիւն է՝ շատ յաջող աշակերտներու մագիստրոսութեան (Doctorat) քննութիւնը փոխանակ դպրոցական շրջանակի մէջ ուսուցչաց համախմբութեան առջև կատարելու, եկեղեցւոյ մէջ հրապարակաւ և հանդիսական պայմաններով կատարել՝ կարտինալի մը և երբեմն նոյնիսկ պապի ներկայութեամբ և հովանաւորութեամբ։ Աստուածաբանական ուսուցչաց խումբը յարմար դատեց զիս այդ բացառիկ ձեւին հրաւիրել, և վանական վարչութիւնն ալ սիրով հաճեցաւ, թէպէտ բացառիկ ծախքերու դուռ կը բացուէր հանդիսական պահանջներու պատճառով։ Իբր 150-200 նախադասութիւններ կ'որոշուին և կը տպագրուին, որոց դէմ հմուտ եպիսկոպոսներ առարկութիւններ պիտի ընեն, և քննելին նոյնհետայն հերքումներու բացատրութիւնը պիտի տայ լատիներէն լեզուով; ուսուցչաց խումբը արժանիքը պիտի դատէ, և հրապարակային ունկնդրութիւնը իւր մտայնութիւնը պիտի յայտնէ։ Իմ կատարելիք հրապարակային քննութիւնը (Atto Pubblico) Պիոս Թ. պապ հաճեցաւ իւր հովանաւորութեան ներքև ընդունիլ և իւր ներկայութիւնը

խոստանալ. օրը 1865 ամառուան թողուեցաւ, և ըստ այնմ պատրաստութիւնները սկսան, թէ ուսումնական մասին և թէ Ս. Սապողինարի եկեղեցւոյն զարդարանքին համար։

Հանդիսական քննութիւնը տեղի ունեցաւ 1865 մայիս 27|8 յունիսին, հինգշաբթի օր, իսկ Պիոս պապ Թ. ինքզինքը տկար զգալով, իւր կողմէն Յակոբոս Անթոնէլլի (Antonelli) կարդինալը, իւր արտաքին գործոց նախարարը, իբր յատուկ նուիրակ (Legatus a latere) նշանակած էր, թէպէտ պապական գահը աւագ սեղանին կողմը կը բարձրանար Ս. Սապողինարի եկեղեցւոյն մէջ։ Ունկնդրութիւնը խառն էր, զի ոչ միայն պարագայն բացառիկ էր, այլեւ արեւելցիի մը այդ դերին մէջ գտնուած ըլլալը նախընթաց չունէր։ Ներկայից մէջ աչքառու էր օսմանեան սպարապետ (սերտարը հիրսիզ) Էօմէր բաշայի ներկայութիւնը, որ օգափոխութեան համար Հռոմ գտնուելով, ուզած էր իւր հետեւորդներով և մեծ համազգեստով օսմանեան հպատակի մը յաջողութիւնը պատուել։ Մագիստրոսութեան աստիճանին ուրիշ պահանջներն ալ լրացուած ըլլալով և լրացուելով 1865 օգոստոս 22|3 սեպտեմբերին պաշտօնական և ծիսական օրհնութիւնն ալ ստացայ ըստ սովորութեան։ Միեւնոյն միջոցին իրաւագիտութեան շրջանին առաջին տարին լրացուցած էի, և 1865 նոյեմբերին երկրորդ ընթացքին ձեռնարկեցի։ Միեւնոյն ատեն Հռոմի Աստուածաբանական Կաճառին (Academia Theologica) անդամակցութեան արձանագրուեցայ 1865 յունիս 23|4 յուլիսին, որուն մէջ միջոց մը կանոնական պայմանները լրացնելէն և յաջողելէն ետքը կաճառորդ անցնելու իրաւունք կը ստացուի։

Պաշտօնական զբաղումներուն անցնելով՝ նախընթաց միջոցին մէջ ունեցած պաշտօններս այդ միջոցին մէջ ալ շարունակեցի. 1864 փետրուար 21|4 մարտին նորընծայից դասարանին կառավարչութենէն վերակացութեան կամ տեսչութեան բարձրացայ, և 1865 հոկտեմբեր 28|9 նոյեմբերի Փրոփականտայի դըպրանոցին մէջ հայերէն լեզուի ուսուցիչ նշանակուեցայ, վանական վարժարանին մէջ դասատուութեանց ժամերը հետզհետէ շատցան, միջոց մը մատակարարութեան պաշտօնն ալ վարեցի, շարունակելով մատենադարանապետութեան և քարտուղարութեան և հաշուակալութեան պաշտօնները։

Արտաքին զբաղումներուս յիշատակները քիչ մը ընդարձակ-

ուեցան, հնարաքրքրական պարագաներու պատճառով և կամայ ակամայ կենսագրական տպարէզը սահելով։ Ներքին զգացումներուս մասին նորութիւններ չունիմ աւելցնելու. այն անկեղծ տենչն ու փոյթը որով կրօնաւորութեան փարեցայ, քահանայութենէս ետքն ալ ինչ անբաժին մնաց. հանապազօրեայ թիւ պատարագի մատուցումը, և ժամերգութեանց օրական պատշաճին մասամբ միաբանութեամբ և մասամբ առանձնակի լրացումը անթերի և սիրով կատարած ըլլալս համարձակ կրնամ յայտարարել։ Մէկ կողմէն անխարդախ կանոնապահութեան խղճմտօրէն հետեւած եմ, և միւս կողմէն կառավարչութեան և վերակացութեան պաշտօններուս մէջ աշակերտաց թելադրել աշխատած եմ, և կարծեմ թէ վանական շրջանակին մէջ վարած պաշտօններս և ընկերակիցներուս վրայ նախադասուիլս իրաւունք ունիմ իբրև իմ մասին բարի վկայութիւն համարել։ Եւ այսչափ բաւական ըլլայ քահանայական և կրօնաւորական կոչումներուս մասին։

ԻԲ

Դամասկոս, 1917 դեկտեմբեր 17/30 Կիր.

Հոմայ վանքը մնած օրէս սանուհինգ տարին լրանալու մօտ էր, և ես վանքէն բնաւ հեռացած չէի, եթէ հաշիւի չառնենք ամառուան մեծ արձակուրդներուն բոլոր միաբանութեամբ մերձակայ գիւղերը օդափոխութեան երթալնիս։ Վերջին տարիներուն մէջ նշանաւոր փոփոխութիւններ տեղի ունեցած էին Անտոնեան միաբանութեան մէջ, եռամեայ պայմանաժամով ընտրուած աբբահայրութիւնը ցկեանս պաշտօնավարութեան փոխուած էր, և վերջին ընտրուած աբբահայրը Սուքիաս Գազանճեան Անտիոքայ թեմակալութեամբ եպիսկոպոս ձեռնադրուած, և Լիբանանէ Կ. Պոլիս եկած էր։ Հռոմէադաւան հայ հասարակութեան երկու հոգեւոր իշխանութեանց, Լիբանանի կաթողիկոսութեան եւ Կ. Պոլսոյ նախագահ արքեպիսկոպոսութեան միջեւ հաշտութեան և միացման գաղափարը ծագած, և Գազանճեան ալ բա-

նակցելու պաշտօն ստացած էր։ Այդ պարագաներէն ազդուած և հօրս ալ իր զաւակը տեսնելու թախանձանքներէն յորդորուած, աբբահայրը զիս իր մօտ ունենալ կ'որոշէ եւ ըստ այնմ հրաման կ'արձակէ։ Վանահայրը վանական պաշտօններու պէտքը, եւ ես իրաւագիտութեան ընթացքը լրացնելու պատճառը յառաջ բերելով, հրամանին փոփոխութիւնը կը խնդրենք, սակայն հարկ կ'ըլլայ մեծաւորին կրկին հրամանին հպատակիլ, եւ 1866 յունուար 19|31ին վանքէն և Հռոմէ կը մեկնիմ Կ. Պոլիս դառնալու համար։

Իբրև հոգեւորական պաշտօնով ճամբորդող մը ձրի շոգենաւի դրութիւնը վայելելու համար, հարկ կ'ըլլայ Անքոնայի ճանապան նախադասել, սակայն օրերու անյարմարութեան պատճառով կը պարտաւորուիմ Թրիէսթ անցնիլ, եւ մնալ Վիէննայի Մխիթարեան վարժարանը, և սպասելու օրերէն օգտուելով Վենետիկի Ս. Ղազար վանքն ալ կ'այցելեմ յունուար 26|7 փետրուարին, և Թրիէստ դառնալով եւ անտի նաւելով Կ. Պոլիս կը հասնիմ փետրուար 5|17ին, եւ ուղիղ կուգամ մեր տունը, Գատըքէօյ, Գուշտիլի փողոց, Հ. Անտոն Զօհրապեանի առաջնորդութեամբ։ Հետաքրքրական պարագայ մըն էր երեք քոյրեր գտնել տունին մէջ, որոնք իմ մեկնելէն ետքը աշխարհ եկած էին, Եւգինէ 1852 յուլիս 31ին, Լուսիկ 1858 փետրուար 12ին, և Սպասի 1861 յուլիս 11ին ծնած, իսկ թոռած եղբայրներէս Սերովբէ վախճանած էր 1859 յուլիս 15ին, Բերայի տուներնիս ալ այրած էր 1855 յուլիս 20ին, եւ հայրս 1857 մարտ 6ին Գատըքէօյի նոր տունին շինութեան ձեռնարկած էր։

Նոր ասպարէզ կը բացուէր առջեւս Կ. Պոլիս գալովս, զի Անտոնեանց միաբանական ընդհանուր գործառնութեանց հետ հայ կաթոլիկ հասարակութեան հանրային գործերուն ալ կը սկսէի միջամտել աբբահօր քարտուղարութեան պաշտօնով, որուն կը կոչուէի հասնելէս երեք օր ետքը՝ փետրուար 8ին։ Միաբանութեան գործերը ընդհանուր վարչութեան հետ Փրոփականտայի հետ վէճի ասպարէզ բացած էին, իբր զի ոչ միայն անվաւեր կը համարէր աբբահայրական պաշտօնին տեւողութեան փոփոխութիւնը և թեմական եպիսկոպոսութեան հետ կցուիլը, այլև միաբանութիւնը իբրև ըմբոստ կը համարէր և կը յանդիմանէր։ Հասարակութեան գործերն ալ նոր երեւոյթ առած էին Լիբանանի կաթողիկոս Գրիգոր Պետրոս Ը. Ասատուրեանի նոյն օրեր

հանդիպած մահուամբը, նախագահ արքեպիսկոպոս Անտոն Հասունեանի կաթողիկոսութիւնը ձեռք անցունելու ճիգերովը, եւ Հռոմի պապութեան կողմէն կաթողիկոսութեան վայելած ազատութիւնները եւ իրաւասութիւնները ջնջելու կամ սեղմելու մըտադրութեամբը։ Այս պարագաներուն պիտի աւելցուին կաթողիկոսական տեղապահութեան եւ նոր ընտրութեան շուրջը դարձուած խաղերը, որոնք սոյն գրուածիս նպատակէն դուրս կը մնան։

Ինչ որ ինծի անձնապէս կը պատկանի, այն չարաչար եւ բազմակողմանի աշխատութիւնն է, զոր այս խնդիրներուն մէջ ունեցայ իբրեւ գրիչ եւ գործիչ, եւ իբրեւ պատգամաւոր եւ բանակցող, արքեպիսկոպոս Գազանճեանի ձեռաց ներքեւ, որ նշանաւոր դեր ստանձնած էր միաբանութեան գործը պաշտպանելու, եւ Փրոփականտայի ու Հասունի ձգտումներուն դիմադրելու եւ հասարակութեան դիրքը պահպանելու։ Գազանճեան չէր դադարեր նամակներով, տեղեկագիրներով եւ ծանուցագիրներով իւր դիտումները պաշտպանել, բանակցութիւններով եւ թելադրութիւններով համակիրներ աւելցնել, եւ այս ձեռնարկներուն գրոյն ու գործիքը ես էի, ուսկից կը խոստովանիմ գործունէութեան օգուտներ չահած ըլլալս, անդուլ անդադար աշխատութեանս փոխարէն։ Երբոր Փրոփականտայի ոյժը եւ Հասունեանի ջանքը սկսան գերակշիռ դառնալ, Գազանճեան զգուշացաւ պաշտօնական միջամտութիւն եւ մասնակցութիւն ունենալէ, ուստի ո՛չ Լիբանան 1866ին գումարուած ընտրողական ժողովին գնաց, ուր կաթողիկոսարանի եպիսկոպոսներ ստիպման ներքեւ Հասունեանը կաթողիկոս ընտրեցին եւ Կ. Պոլսոյ աթոռին հետ միացումը որոշեցին, եւ ո՛չ ալ պապական հաստատութեան յապաղմամբ 1869ի Հռոմի մէջ կատարուած Պետրոսի եւ Պօղոսի նահատակութեան հարիւրամեակի հանդէսներուն մասնակցելու համար եպիսկոպոսներու ուղղուած հրաւէրին անսալով Հռոմ գնաց, նախատեսելով Փրոփականտայի եւ Հասունեանի նպատակներուն այս առիթով պաշտօնական ձեւ տրուիլը, ինչպէս որ տեղի ունեցաւ Ռեկերտուրուս-կոնդակին հրատարակութեամբ եւ պապին ներկայութեամբ խլրուած լռելեայն համակերպութեամբ։ Գրութեանս առաջին յօդուածներուն մէջ յիշեցի այս անցուդարձերուն իմ վրայ ըրած տխուր ազդեցութիւնը եւ հռոմէադաւան եկեղեցւոյն հանդէպ զգացած ցըր-

տութիւնս, չլսեմ գայթակղութիւնս, և հարկ չեմ տեսներ կըրկին անգամ բացատրութեանց մտնել։

Հասունեան Հռոմայ մէջ կաթողիկոս հռչակուած և յաղթանակով Կ. Պոլիս դարձած, իւր դահակալութեան հանդէսին մասնակցութենէն զրկեց Գազանճեանը, Վերափոխման տօնի օրը հակառակ իմ Գազանճեանի կողմէն դիմումիս, որուն մօտէն յաջորդեց Գազանճեանի Հռոմ դատաստանի կոչուիլը, և հարկ եղաւ հպատակիլ և մեկնումը տեղի ունեցաւ 1867 սեպտեմբեր 20|2 հոկտեմբերին, ես ալ միասին։ Ըստ այսմ իմ առաջին անգամ Կ. Պոլիս գտնուիլս իբրեւ քսան ամիս տեւեց։ Այդ միջոցին անձնական յիշատակներէս մէկն է 1867 մարտ 12ին, Անառակի կիրակին օրը, առաջին անգամ քարոզելս Բերայի Ս. Յովհան Ոսկեբերան եկեղեցին, նիւթ առնելով Շնորհաց յարգը ճանչնալը, որ Անառակին սայթաքելուն և վերականգնելուն պատճառ եղած էր փոխադարձաբար։ Գազանճեան աշխատած էր Անտոնեան վարժարան մը բանալ Թապսիմ թաղամասինը, Տիւզեանց սեփականութիւն Շիչլի փողոցի լքեալ չէնքին մէջ, որ և բացուեցաւ 1867 յունիս 5ին, և ես անոր մէջ փոխ տեսչութեան և ուսուցչութեան պաշտօնները ստանձնեցի։

Եղելութիւնները յառաջ բերի իրենց ցամաք մերկութեան մէջ, սակայն զգացումներն են որ դիպուածները կը հոգեւորեն։ Իմ զգացումները այդ ժամանակամիջոցին մէջ մեծ փոփոխութիւններ ստացան, վանական անձուկ շրջանակէն և ուսումնական վերացեալ պարունակէն դուրս ելլելով հանրային և իրաւական միտքեր զարթուցին, դրական և գործնական ասպարէզ դտան, և թէպէտ հայկաթոլիկութեան սեղմ սահմաններով փակուած, սակայն սկզբունքներու սերմերը ընձեռեցին, և տակաւ աճելու ճանպան դիւրացուցին։ Կրնամ համարձակ յայտարարել թէ ապագայ գործունէութեան հիմերը այդ ժամանակամիջոցին մէջ դրուեցան, և հռոմէադաւանութեան հանդէպ զգացած տեսական երկմտութիւնը գործնականի և իրականի սկսաւ վերածուիլ։ Իսկ անհատական բարոյականս այդ փոփոխութեամբ քանի մը չտուժեց. վարուց կանոնաւորութեան, կրօնաւորական կարգապահութեան, եկեղեցադիտական կենցաղագիտութեան, և օրինական հնազանդութեան կէտերը կարծես աւելի ամրացան, իբրև պաշտպանողական զէնքեր անիրաւ պայքարներու և խարդ

դախ անցուդարձերու դէմ, որոնց առաջին փորձառութիւնը կը ստանայի աշակերտական և վանական հանդարտ և երկիւղած կեանքէն ելնելով։

ԻԳ

Դամասկոս, 1917 դեկտեմբեր 18/31 Բշ.

Հռոմի կոչը և յուզուելիք խնդիրը մեծ կարեւորութիւն ունէր, ուստի գործը միայն Պաղանճեան աբբահօր ձեռք չթողու և միաբանական համաձայնութեամբ վարելու համար յատուկ յանձնաժողով մը կազմուեցաւ, Կ. Պոլիս գտնուող միաբաններէն որոշուեցան Հ. Եղիշէ Թէոդոսեան և Հ. Ստեփանոս Սարեան. Լիբանանէ պիտի գար Հ. Ռափայէլ Միասէրեան և Հռոմէ պիտի ընկերանար Հ. Սերովբէ Հանըմեան վանահայր. Պաղանճեան պիտի նախագահէր և ես ատենադպիրի պաշտօնը պիտի վարէի։ Աբբահայր և երկու վարդապետներ և ես Կ. Պոլիսէ մեկնեցանք 1867 սեպտեմբեր 20/2 հոկտեմբերին, և այն միջոցին ճարակող գոլէրա ախտին և Հռոմի մէջ ծագած քաղաքական շփոթութեանց պատճառով չկրնալ Մարսիլիա (Marseille) ուղղուեցանք, ահապին ալէկոծութիւն մըն ալ կրելով Պոնիֆաչիո (Bonifacio) նեղուցին առջև։ Մարսիլիա սպասելու պարտաւորուած ըլլալով Փարիզ (Paris) ալ անցանք հոկտեմբեր 2/14ին, և քանի մը օր մեծ արուեստահանդէսը այցելելով, դարձեալ Մարսիլիայէ նաւեցինք, Լիվոռնոյի (Livorno) մէջ Միասէրեանն ալ գտնելով հոկտեմբեր 15/27ին Հռոմ հասանք, և տիրող չփոթութեանց պատճառով պանդոկ մը դիշերելով, միւս օր վանք մտանք։ Պաղդիական բանակին հասնելովը խաղաղութիւնը վերահաստատուեցաւ, և մենք գործի ձեռնարկեցինք։

Փրոփականտայի վարչութիւնը ամբաստանութեանց և պահանջից երկար ցուցակ մը հաղորդեց, որոնք ցրելու և պատշաճ բացատրութիւններ տալու և ներկայելու համար բազմաթիւ և ընդարձակ գրութեանց պէտք եղաւ, որոց խմբագրութիւնը ինծի կը պատկանէր

Հ. Դաւիթ Զրաճեանի ընկերակցութեամբ։ Միանգամայն պէտք էր Փրոփականտայի խորհրդականները և պաշտօնեաները լուսաբանել, կարեւոր անձերը չահիլ, պաշտպանութեան միջնորդներ ճարել, և այդ աշխատութիւններն ալ դարձեալ Զրաճեանի և իմ վրայ կը ծանրանային, միաբանութեան դատը վարող յանձնաժողովին թելադրութեանց և որոշմանց համաձայն։

Այդ պաշտօնական գործունէութեան հետ, անձնական աշխատութեանց ալ ձեռնարկեցի, իրաւապետութեան ընթացքին երբորդ տարւոյ դասերուն կը հետեւէի, Աստուածաբանական Կաճառին կաճառորդութեան պէտք եղած քննութիւնները կը շարունակէի, Փրոփականտայի դպրանոցին հայերէնի ուսուցչութիւնը վերստանձնած էի, վանական վարժարանին մէջ դասընթացութիւններու դասատուութիւնը կը կատարէի, աբբահօր և վանքին քարտուղարութիւնն ալ կը վարէի։

Մինչ այս մինչ այն ընդհանուր չփոթ մը կը ծագէր Կ. Պոլսոյ հայկաթոլիկ հասարակութեան մէջ, երբոր Հասունեան Հռոմի պապութենէն արձակուած Ռեսկրուրուս կոնդակը, և օսմ. կառավարութենէն դաղտնի միջոցներով խլուած ազգապետ-պատրիարքութեան հրովարտակը կը հրատարակէր։ Հասարակութիւնը կը բողոքէր, կառավարութիւնը կը միջամտէր, քննութիւններ կը բացուէին, պապութիւնն ալ ազգապետութեան խնդիրը վրայէն կը թօթափէր, պապութեան և կայսերութեան մէջ բանակցութիւններ կը սկսէին, Աղեքսանդր Ֆրանգի արքեպիսկոպոս եւ Յովսէփ Վալէրկա պատրիարք Կ. Պոլիս կը յղուէին իբրեւ բանագնաց, հասարակութիւնը քաջալերուած իւր բողոքները կը սաստկացնէր թէ՛ Բարձրդրան և թէ՛ Հռոմի առջև, և Հասունեան ալ մէջէն ելլելու վարանմանց կը մատնուէր։ Պարագայն նպաստաւոր էր Անտոնեանց, ուստի գործունէութեան նոր ճիւղ մը կը բացուէր Հռոմի մէջ գործող յանձնաժողովին, և Հասունեանի դէմ ամբաստանութիւններու, վերջին դէպքերու մասին տեղեկագիրներու, և հին ու նոր գործերու մասին ծանուցագիրներու տարափ մը կը տեղացնէին Փրոփականտայի վարչութեան վրայ, հատորաւոր գրութեանց աշխատութիւն մը, որուն դարձեալ ես եւ Զրաճեան էինք խմբագրողները և թարգմանողները։ Ահա՛ ամբողջ տարուան մը կացութեան և աշխատութեանց ստուերագիծը, առանց մանրամասնութիւններով զբուաձս ծանրաբեռնել ուզելու։

Այդ զբաղումներ չարգիլեցին անձնական ձեռնարկներս ալ, իրաւագիտական ընթացքին քննութիւններն ալ տուի, պապական յատուկ արտօնութեամբ երկրորդ տարւոյ եռամսեայ թերի դասաւորութիւնը իբր ամբողջ տարեկան ընդունուելու չնորհիւ, որով 1868 օգոստոս 20|1 սեպտեմբերին եկեղեցական իրաւագիտութեան մագիստրոսի աստիճանն ու օրհնութիւնը ստացայ, և երեք ճիւղերու՝ իմաստասիրութեան և աստուածաբանութեան և եկեղեցական իրաւագիտութեան միանգամայն մագիստրոս (Philosophiae, theologiae et Juris Canonici Doctor) հռչակուեցայ։ Միևնոյն 1868 տարւոյ օգոստոս 23|4 սեպտեմբերին Կաճառին վերջնական քննութիւնը կատարեցի եւ քննիչ կաճառորդներու միաձայն քուէով կաճառորդ (Academicus) ընդունուեցայ։

Իսկ Անտոնեանց խնդիրներուն վերջնական որոշման մասին, Փրոփականտայի մեծ ժողովը հերքումներու. եւ բացատրութիւններու յստակութենէն ապդուած, և Կ. Պոլսոյ մէջ ծագած չփոթներէն չուարած, և Հասունեանի իրեն տրուած հրահանգներէն անդին անցնելով թիւրիմացութեանց և խառնակութեանց տեղի տալէն գայթակղած, վճռական որոշումը ի կախ թողուց, և Անտոնեանները արտօնեց կատարուած փոփոխութեանց համաձայն չարունակել մինչև միաբանական կանոնագիրքին լիուլի վերաքննութիւնը, ինչ որ Անտոնեանները արդարացնել և փոփոխութիւններուն հաւանիլ ըսել կ'ըլլար։ Հասարակութեան մէջ ծագած խնդիրներն ալ ուսումնասիրելու և կանոնաւոր տեսութիւններ ներկայելու համար հրամայեց բոլոր հայ կաթոլիկ եպիսկոպոսաց ժողով մը գումարել Կ. Պոլսոյ մէջ, և ծրագիրը իրեն ներկայել ի քննութիւն և ի հաստատութիւն։ Պազանճեան և ընկերներն ալ արտօնուեցան պատուով Կ. Պոլիս դառնալ, նոր կանոնագիրքի ծրագիրը կազմել, և հաւաքուելիք եպիսկոպոսական ժողովին մասնակցիլ և աշխատակցիլ։ Ըստ այսմ միաբանական դասը վարող յանձնաժողովը 1868 հոկտեմբեր 17|29ին Հռոմէ ուղեւորեցաւ Նէապոլսոյ (Napoli) ճանպով Կ. Պոլիս դառնալու, և 1867 հոկտեմբեր 16|28 էն օրը օրին տարի մը Հռոմ մնալէ և աշխատելէ ետքը։

Այս տեղ ներուի ինձի հետաքրքրական զարտուղութիւն մը աւելցնել։ Եղբայրս Վիչէն 1863 սեպտեմբեր 19|1 հոկտեմբերին Կ. Պոլիսէ մեկնած և Հռոմ եկած էր բժշկական ուսմանց հետեւելու համար, իսկ վերջին 1868 տարւոյ մեծ արձակուրդին առթիւ Կ.

Պոլիս դարձած էր, և նոյեմբերին դասերը շարունակելու համար Հռոմ գալու կը պատրաստուէր երբ մենք Հռոմէ կը մեկնէինք։ Իրար տեսնելու ժամադրութիւն մը չկրնալով որոշել, բախտին թողուցեր էինք այդ փափաքը։ Գազանճեան Հռոմի մէջ շատ մը ծանրաբեռն հկեղեցական գործեր պատրաստել տուած էր, Բերայի Անտոնեան վարժարանին մէջ շնորհքով մատուռ մը կազմելու համար, որոնք միասին պիտի տանէինք։ Նէապոլիսէ Մեսինա (Messina) մեկնող շոգենաւին օրը կարասին հասած չէր, հարկ եղաւ որ ես Նէապոլիս մնամ երբ ուրիշներ դէպի Մեսինա կը մեկնէին։ Անոնց հասնելուն միւս օրը Վիշէն ալ Կ. Պոլիսէ կը հասնի, և Անտոնեանց հոն ըլլալը իմանալով կը կարծէ եղբայրը տեսնել, բայց յուսախաբ կը մնայ։ Ես գործերը լրացուցած և Նէապոլիսէ մեկնելս հեռագրած էի, բայց կիս բերող շոգենաւը Վիշէն տանող շոգենաւէն երկու ժամ ետքը պիտի հասնէր, ուստի յուսահատ իւր շոգենաւը կը դառնայ։ Բախտը այնպէս կը բերէ, որ զիս բերող շոգենաւը կը կանխէ, Վիշէն տեսածին պէս նաւապետի հաւանութեամբ ինձի կուգայ, և գրեթէ մագլցելով վեր կ'ելլէ, բայց իւր շոգենաւը կը սուլէր, ուստի հազիւ ողջագուրուելով և քանի մը խօսք փոխանակելով կը դառնայ և շոգենաւը կը մեկնի։ Երկուքներնուս ալ առաջին նամակները Երազ էր թէ իրաւ էր խօսքերով կը սկսէին։

Պատահարը վիպական բնութիւն ունենալուն վրայ ապաւորութիւն գործած էր, և իբրև հետաքրքրական դիպուած այս տեղ ալ յիշելու յորդորուեցայ։

ԻԴ

Դամասկոս, 1917 դեկտ. 19/1 յունուար 1918 Գշ.

Հռոմէ գործող խումբին հետ Կ. Պոլիս հասայ 1868 հոկտ. 25/6 նոյ.ին և Կ. Պոլսոյ մէջ վարած առաջին կեանքիս շարունակութիւնը ձեռք առի, այնինքն է՝ աբրահօր քարտուղարութիւն և Անտոնեան վարժարանի մէջ պաշտօնավարութիւն։ Մեր յաջողութեամբ Հռոմէ դարձը և Հասունեանին Հռոմի կողմէ դի-

տողութեանց ենթարկուիլը դէպ առ մեզ նպաստաւոր ազդեցութիւն գործած էր Հասունեանի անձին և իրեն շրջանակին վրայ։ Հռոմէ հրամայուած եպիսկոպոսական ժողովին նախապատրաստութեանց ձեռնարկուած էր, և յատուկ յանձնաժողովներ կազմուած էին՝ դաւանական, կանոնական, ծիսական և ժողովին կազմակերպական կէտերը ուսումնասիրելու և ծրագիրներ պատրաստելու, որոնց մէջ ընդարձակ մասնակցութիւն տրուած էր Անտոնեան և Մխիթարեան վարդապետներու, և զիս ալ անմիջապէս նոյ. 13ին չորս յանձնաժողովներու միանգամայն անդամակցութեան կոչեցին։ Աշխատութենէ չփախչելու իմ սովորական ընթացքս, և նախապատրաստութեանց մէջ մեր տեսութեանց գերակշռութիւն տալու համար մերայնոց յորդորները, մղեցին զիս կարևոր աշխատութեանց մէջ ընդարձակ բաժին ընտանձնելու, թէ՛ գումարմանց անպակաս ներկայութեամբ և թէ՛ գրաւոր աշխատութեանց, ուսումնասիրութեանց և հետազօտութեանց յօժարակամ յանձնառութեամբ, յաճախ քունի հանգիստն ալ զոհելով։ Այդ կեանքը շարունակեցի մինչև ժողովին բացումը, 1869 յուլիս 5/17, Գիւտի Նշխարաց տօնին շաբաթ օրը։ Ժողովին ներկայ էին բոլոր հայկաթոլիկ եպիսկոպոսները, Վենետիկի և Վիէննայի աբբահայրերն ալ մէջը ըլլալով, ամէնքը անձամբ եւ միայն երկուքը փոխանորդով։ Հասունեան կը նախագահէր, Ստեփանոս Ազարեան վարդապետ, որ յանձնաժողովներու ատենապետած էր, ժողովին մէջ ալ վիճաբանութեանց վարիչի եւ խնդիրներու առաջարկողի (Conente) պաշտօնը ունէր. ութը հատ խորհրդական աստուածաբաններ և վեց հատ խմբագիր քարտուղարներ անուանուած էին, և ես թէ՛ խորհրդականներուն և թէ՛ քարտուղարներուն մէջ կը գտնուէի։ Նոյն նպատակով, որով յանձնաժողովներու աշխատած էի, ժողովական ատենագրութեանց մեծագոյն մասը խմբագրելէ չէի քաշուեր, ծրագիրներու վրայ փոփոխութեանց յատուկ արձանագրութիւն կը պահէի, և մասնաւոր խորհրդակցութեանց անպակաս կը գտնուէի։

Փրոփականտայի դիտումն էր նոյնիսկ հայկաթոլիկ եպիսկոպոսներու ձեռքով իւր նպատակին հասնիլ, բայց գործը տարբեր ուղղութիւն առաւ։ Անտոնեան և Մխիթարեան հինգ եպիսկոպոսներ, և Լիբանանի կաթողիկոսարանին ութը եպիսկոպոսներ մեծամասնութիւն կազմեցին, և կաթողիկոսութեան վա-

յելած իրաւասութեանց և հասարակութեան ազգապետական իրաւանց ջատագով և պաշտպան կանգնեցան, որոց չէին կրնար դիմադրել Հասունեանի հետևող վեց եպիսկոպոսները. ուրեք խորհրդական աստուածաբաններուն մեծամասնութիւնն ալ եպիսկոպոսաց մեծամասնութեան կողմն էր։ Հասարակութեան կողմէ իւր իրաւանց պաշտպանութեան բողոքագիր մատուցուեցաւ, և նախաքննիչ յանձնաժողովը մեծամասնութեան եպիսկոպոսներէն առնուեցաւ, որուն ես ալ ատենադպիր նշանակուեցայ։ Միաբանութեանց և կաթողիկոսութեան յարաբերութիւնները ճշդելու խնդիր ալ յուզուեցաւ, եւ յատուկ յանձնաժողով կազմուեցաւ դարձեալ մեծամասնութեան անդամներով։ Հասունեան նախապահ տեսնելով որ չի կրնար իւր նպատակը յաջողցնել, Փրոփիսկանտան ալ տեսնելով որ Հասունեան անբաւական կը գտնուի, Կ. Պոլսոյ պապական նուիրակ Յովսէփ Բլուիմ արքեպիսկոպոսը, իբրև յատուկ պատուիրակ, նախագահելու նշանակեց, սակայն հայերէնի անգիտակ ըլլալուն մեծ ազդեցութիւն չկրցաւ գործածել, և ժողովին առած ընդդիմադիր ուղղութիւնը շարունակեց։ Դաւանական ծրագիրը խնդիրներ յուզելու ընոյթ չունէր և շուտով անցաւ. ծիսականն ալ ծանր խնդիրներու տեղի չտուաւ եւ քիչ փոփոխութեամբ քալեց. իսկ կանոնականը, որ վարչական և իրաւասական և յարաբերական կէտեր կը պարունակէր, ծանր խնդիրներու և բուռն վիճաբանութեանց դուռ բացաւ և ժողովական որոշումները յապաղեց և արգիլեց։

Միւս կողմէն պապութիւնը որոշած էր Վատիկանեան ժողովը բանալ նոյ. 26|8 դեկտ.ին, և պէտք էր որ հայկաթոլիկ եպիսկոպոսներն ալ ժամանակին Հռոմ գանուէին, ուստի առանց իրենց ժողովը վերջացնելու և առանց վճռական որոշմանց յանգելու նիստերը դադրեցուցին. արդէն նախագահութիւնն ալ որոշմանց հասնելէ կը զգուշանար՝ աննպաստ ելքը նախատեսելով։ Ուստի հոկտ.ի վերջերը գումարումները դադրեցան, ուղևորութեան պատրաստութիւնները կատարուեցան, և նոյեմ. 1|13ին բոլոր եպիսկոպոսներ խմբովին իրենց քարտուղար վարդապետներով Կ. Պոլիսէ մեկնեցան։ Գաղանճեան և ես խումբէն զատուելով և արագընթաց ճանապով նոյեմ. 6|18ին Հռոմ հասանք և մեր վանքը իջանք, իսկ խումբն ալ ետևէն հասնելով իրեն համար որոշուած օթևանին՝ մէջ զետեղուեցաւ։

Երբոր բոլոր եպիսկոպոսներ Կ. Պոլիսէ կը մեկնէին, հարկ էր գոնէ մէկը այնտեղ թողուլ իբր կաթողիկոսական փոխանորդ, և այս պաշտօնին կոչուեցաւ Լիբանանի եպիսկոպոսներէն Բարսեղ Փասպարեան, մեծամտանութեան խումբէն, որ հապիւ թէ պաշտօնը ստանձնեց, սկսաւ այնպիսի կարգադրութիւններ ընել, որոնք տարբեր էին Հասունեանի ուղղութենէն և հրահանգներէն, ինչ որ հաճոյ չէր կրնար ըլլալ Հասունեանին և Փրոփականտային։ Ուստի հապիւ ամիս մը անցած որոշուեցաւ փոխանորդը փոխել. Փասպարեան բարձր հրամանով Հռոմ կոչուեցաւ, եւ Հասունեանի արբանեակներէն և Փրոփականտայի կամակատարներէն Յովսէփ Սուաքելեան եպիսկոպոս հապճեպ շտապով Կ. Պոլիս յղուեցաւ կաթողիկոսական փոխանորդութիւնը վարելու։ Կ. Պոլսոյ հայկաթոլիկ հասարակութիւնը արդէն կոնդակի եւ հրովարտակի խնդիրներէն զայրացած, եւ եպիսկոպոսական ժողովին մեծամտանութեան ընթացքէն քաջալերուած, սրտմտութեան բորբոքի հասաւ փոխանորդի փոփոխութեամբ, եւ բացարձակ կերպով որոշեց փոխանորդը չճանչնալ եւ Հասունեանն ալ մերժել, և պատշաճ խորհրդակցութիւնները լրացնելով՝ 1870 յունուար 25ի յայտարարութիւնը հրատարակեց, որով կաթոլիկ դաւանութենէ չբաժնուելով՝ Հասունեանի իշխանութենէն կը բաժնուէր և անոր փոխանորդը չէր ճանչնար։ Շարժումին մէջ կը գտնուէր ամէն դասակարգերէ կազմուած եկեղեցականաց խումբ մը, որոնք իրենց գլուխ նշանակեցին Յովսէփ Քիւբէլեան ծերունի վարդապետը, Հասունեանի նախկին փոխանորդը, որուն առագներեց տիտղոսը տուին, իսկ հանրային գործերու համար վարիչ ժողով մը ընտրուեցաւ Սկիքանեան Տիրան պէյի նախագահութեամբ և մեծամեծներու անդամակցութեամբ։ Քիչ օր ետքը փետր. 2/14ին Ս. Յովհան Ոսկեբերան եկեղեցւոյ նաւակատեաց տարեդարձն էր, և հասարակութիւնը մտադիր էր Սուաքելեանը հանդիսադիր ըլլալէ արգիլել, որով սա սուինաւոր զինուորաց Չոկատի մը պաշտպանութեամբ եկեղեցի կուգար ու կը պատարագէր, ինչ որ ժողովուրդը առաւել ևս կը գայթակղեցնէր և կ'ուծացնէր, և դիմադրութիւնը կը զօրանար և գաւառական վիճակներու մէջ ալ կը տարածուէր։ Անցողակի աւելցնենք որ հասարակութիւն և ժողովուրդ յիշած տեսնիս ամբողջութիւնը չենք իմանար, զի Հասունեանի կուսակից մաս մըն ալ կար, որ թէ-

պէտ մեծամասնութիւն չէր, բայց Առաքելեանի գլխաւորութեամբ պաշտօնապէս ճանչցուածի դիրք կը ստանար։

Հռոմի մէջ 1869 նոյ. 26|8 դեկտ.ին մեծահանդէս արարողութեամբ Վատիկանեան ժողովը կը բացուէր, Տիեզերական ժողովի կոչմամբ, թէպէտ միայն կաթոլիկ եպիսկոպոսներու մասնակցութեամբ, որոց մի լաւ մասն ալ պապական ծառայութեան յատկացուած անուանական եպիսկոպոսներ էին։ Ժողովին պաշտօնական լեզուն լատիներէնն էր, մինչ միւս կողմէն եպիսկոպոսներ բացարձակ գաղտնութեան երդումին ենթարկուած էին. ուստի արտօնուեցան իւրաքանչիւրը մի մի խորհրդական թարգման աստուածաբան ունենալ և գաղտնեաց մասնակից ընել, ըստ այսմ ես ալ Գազանճեանի և ուրիշ քանի մը եպիսկոպոսներու պաշտօնապէս աստուածաբան նշանակուեցայ. նիստերը հանապազօրեայ էին վիճաբանութեանց կամ լաւ ևս բանախօսութեանց յատկացուած, և երբեմն հանդիսական էին վճռական հրատարակութեանց համար, որոց անձնական աստուածաբաններն ալ ներկայ կ'ըլլային, ինչպէս ես ալ եղայ 1869 դեկտ. 25|6 յունուար 1870 օրուան գումարման։ Նորէն պիտի յիշեմ որ այս անգամ ալ Փրոփականտայի դպրանոցին ուսուցչութիւնը և վանական դասատուութիւններն ու պաշտօնները դարձեալ վերստանձնած էի, եպիսկոպոսաց աջակցութեան զբաղումներուն հետ, որոց կարդին էր Գազանճեանի համար լատիներէն ատենաբանութեան մը պատրաստութիւնը։

Իե

Դանասկոս, 1917 դեկտ. 20|2 յունուար 1918 Դշ.

Կոստանդնուպոլսոյ մէջ սկսած բուռն շարժումը իւր արձագանգը պիտի ունենար Հռոմի մէջ, և Գազանճեան չէր կրնար անտարբեր և հանգարտ մնալ, և շուտով փոխադարձ յարաբերութիւն հաստատուեցաւ Կ. Պոլսոյ հետ, տեղեկութիւններ և հրահանգներ կանոնաւորապէս կը փոխանակուէին ոչ միայն նա-

մակներով, այլև պայմանագրական լեզուով խմբագրուած հեռագիրներով։ Սակայն գաղտնիքը երկար չէր կրնար տևել, հետապնին աչքեր կը հսկէին Անտոնեանց վանքին և վանականներուն վրայ, և վերջապէս յարաբերութեանց կերպին և նպատակին վրայ համոզում կը գոյանար պապական իշխանութեանց միտքը, թէպէտև անպաշտօն հասցէներ կը գործածուէին, և մինչև իսկ յարաբերութիւններ Լիվոռնոյի վրայօք կը կատարուէին, ուր Անտոնեան մը՝ Հ. Աստուածատուր Սարգսեանն էր հայ եկեղեցւոյ ժողովրդապետը։ Պապութիւնը իւր արքունական իշխանութեամբ ալ հրապարակ կ'ինջնէր, վանքը լրտեսներով կը շրջապատուէր, և զանազան տարազներով ծպտեալ ոստիկաններ հսկողութիւն կը կատարէին։

Երբոր այդ միջոցներով ալ արդիւնք մը ձեռք չէր ձգեր պապութիւնը, իմա՛ Փրոփականտան և Հասուենանը, յայտնի եւ բռնական միջոցներ ձեռք կ'առնուէին, վանական ներքին վարչութիւնը ջնջել, Գազանճեան աբբահայրը և Հանըմեան վանահայրը երկու տարբեր լատինական վանքերու մէջ փակել, և լատին կրօնաւոր մը Անտոնեանց վանքին կառավարիչ նշանակել։ Այդ հրամաններուն պաշտօնագիրները ձեռքը, Հ. Իգնատիոս Յիսուսմանուկեան (Padre Ignazio des Bambin Gesu) Զարչարանաց լատին միաբանութենէն (Cassionista) 1870 մարտ 12|24 առաւն Անտոնեանց Ս. Գրիգոր Լուսաւորչի վանքը կը ներկայանար, վանական կառավարութեան ձեռնարկելու համար։ Գազանճեան և Հանըմեան անձնապէս հարուածուած ըլլալնուն պատշաճ կը դատուէր գործը անոնց վրայ չթողուլ, ուստի ես և Զրահեան գործի գլուխ կ'անցնէինք, եւ ներկայացող կրօնաւորին կը հասկցնէինք թէ օսմանեան հպատակ հասարակութիւն մը օտարազգիի չի կրնար յանձնուիլ, և թէ իր պաշտօնը չենք կրնար ճանչնալ և ձեռնարկել չենք ներեր։ Մարդը երկար սպասելով և տեսնալով որ իրեն մօտեցող չկայ, կը թողու ու կ'երթայ։ Պապական իշխանութիւնը իւր ձեռնարկը կը կրկնէ, և վանքին ծանօթներէն Վալէնցիանի (Valenziani) եպիսկոպոսին կը փոխանցէ պաշտօնը, բայց անոր ալ կը հասկցնենք թէ իբրև բարեկամ կրնանք տեսակցիլ, ուրիշ կերպով զինքն ալ չենք ընդունիր, և նա ալ ձեռնունայն կը մեկնի։ Վանքին ճակատէն Սպտիւլմէճիտ և Սպտիւլազիզ կայսրներէն պարգևուած դրօշները կը պարզենք, ըլ-

ման պահպանութիւնը Հ. Օպսենտիոս Լեմուտեան երիտասարդ և ժիր միաբանին կը յանձնենք, և բացարձակ դիմադրութեան կը ձեռնարկենք։ Պապին կողմէն եկեղեցինիս հոգևոր պաշտամանց ուրգելքի ներքև կը դրուի, թէպէտ չենք անար. ոստիկանական հսկողութիւնը կը բարդուի, թէպէտ ձեռնգրութենէ կը զգուշանան. վերջապէս բացառիկ դրութիւն մը կը ստեղծուի, զոր դժուար էր պաշտպանել, և բռնադատական ձևերու վախը ժամ ժամէ կը շատնար։

Այդ օրեր պապական անսխալութեան խնդիրը արդէն ձեռք առնուած էր, և գաղղիացի ու գերմանացի եպիսկոպոսներ բուռն պայքար կը մղէին զայն խափանելու համար. գաղղիական դեսպանատունն ալ անոնք կը հովանաւորէր, և արևելածէս եպիսկոպոսներէն լաւ մաս մը անոնց համամիտ էր։ Պապութեան անտեղի ձգտումներուն դիմադրող եպիսկոպոսներուն հետ արդէն մենք ալ յարաբերութեան մէջ էինք, ուստի խորհրդակցելու եւ մեզի օգնականներ ճարելու համար Զրաճեան և ես փոփոխակի բացակայութեամբ տեսակցութեանց կը յաճախէինք, տեղեկութիւններ կը քաղէինք, բռնուելիք ուղղութեան վրայ հրահանգներ կը փնտռէինք։ Բարեբախտաբար պապական իշխանութիւնը դեռ կը յապաղէր արտաքին բուռն միջոցներու ձեռնարկել, թէպէտ կասկածն ու վախը օրըստօրէ կ'աճէին, և մեր խորհրդաւունները հեռանալէ վաստ ուրիշ ապահով միջոց չէին թելադրեր։ Այդ հիմամբ Գաղղիոյ դեսպանատունը, զոր կը վարէր Լը Ֆէվր տը Պէհէն (Le Fèvre de Péhaine) գործակատարը, բոլոր վանականներու համար զատ զատ անցագիրներ կը պատրաստէր և պապական ոստիկանութեան վաւերացնել տալով մեզի կը յանձնէր։ Այդ գործին միջնորդ կ'ըլլար Իտալիոյ պետութեան մօտ օսմանեան դեսպան Ռիւսթէմ պէյ, որ օսմանեան հպատակաց պաշտպանութեան համար Բարձրդրան հրամանով Փլորենցիայէ (Firenze) Հռոմ եկած էր։

Այդ անցագիրներու զօրութեամբ սկսանք բոլոր միաբաններն ու աշակերտները երկուքով երեքով, կերպ կերպ եղանակներով ու այլևայլ ճանպաներով Հռոմէ հանել, որոց գործադրութիւնը յատկապէս ինծի յանձնարարուեցաւ։ Ոմանք Գաղղիա յղուեցան եպիսկոպոսական դպրանոցներու աշակերտութեան, եւ ուրիշներ Կ. Պոլիս վերադառնալու որոշուեցան Հանըմեան վանահօր ա-

ռաջնորդութեամբ. վանքին մէջ մնացինք Գազանճեան, Զրաճեան ու ես, և Հ. Բարթողիմէոս Իքէքճեան. Գազանճեան մնաց ժողովէն խոյս տուած չերևնալու համար, Զրաճեան եւ ես Գազանճեանի նեցուկ ըլլալու եւ գործին հսկելու համար, իսկ Իքէքճեանը՝ վանքին մէջ մատդրութիւն չհրաւիրող մէկ մը թողած ըլլալու համար։ Քիչ օր ետքը լուր առինք թէ վանքին պարպուիլը նկատի առնուած է, եւ մեր երեքին դէմ պատրաստութիւններ կ'ըլլան հաւատաքննութեան (Sant' Uffisio) բանտը փակելու։ Ուստի մենք ալ փութացինք 1870 ապրիլ 19|1 մայիս երեկոյին Հռոմէ մեկնիլ, ոստիկանական հսկողութենէն չնշմարուելու համար պէտք եղած զգուշութիւնները ձեռք առնելով, մինչև որ Քորրէզէ (Correse) կայարանն ալ անցնելով պապական սամհաններէն ելանք եւ Իտալիոյ թագաւորութեան մէջ մտանք։ Գիշերը Թէրնի (Terni) քաղաքը անցունելով, միւս վաղուին Լիվօրնօ եկանք, և միջոց մը հոն մնացինք Հռոմի անցուդարձերուն տեղեկանալու համար, և վերջապէս հիւսիսային Իտալիոյ և Վիէննայի և Դանուբի ճանպով մայիս 17|29ին Կ. Պոլիս հասանք։ Կ. Պոլիսէ մեկնելէս, ուղեւորութիւնները մէջը, վեց ամիս անցած էր։

Եղելութեանց ցամաք պատմութիւնն ալ կը բաւէ հետևցընելու, թէ ի՛նչ տխուր և հակակիր զգացումներ պէտք էր զարթնուին իմ ներսս Հռոմի և հռոմէադաւանութեան հանդէպ, եւ ի՛նչպէս պիտի զօրանար անոր հանդէպ կանուխէն սկսած վարանոտ և անվստահ գաղափարը։ Պապութեան հալածանքին ներքև անցուցած օրերնիս, ծակամուտ տեղեր ննջել կը պարտաւորուէի, անակնկալ յարձակումներու եւ բռնութիւններու չենթարկուելու համար։ Գազանճեանի գիշերախառն Փրոփականտայէ կոչուելուն առթիւ, փոխանորդաբար ես երթալու ստիպուած, վերադառնալուս անստուգութեամբ կը մեկնէի, և իրօք ալ թաքստոցի կեցած ոստիկանները աչքովս կը տեսնէի։ Ներհակ կիրքերը ուժգնու կ'ուճէին, բայց պարագաներ վերջնական որոշման նպաստաւոր չէին՝ միաբանութեան գործերու և հասարակութեան օգուտին տեսակէտով, գործելէ ինքզինքս ազատ չէի սեպեր, և չէի կրնար ալ սեպել։

Դամասկոս, 1917 դեկտ. 20/2 յունուար 1918 Դշ.

Երբոր մենք Կ. Պոլիս հասանք, հայկոթոլիկ հասարակութեան շարժումը բաւական ուժ և ձեւակերպութիւն ստացած էր։ Այդ բանին նպաստած էր օսմանեան կառավարութեան որոշումը, որ տեսնալով թէ Ռիվիերուրուս կոնդակը իւր պետական իրաւունքներուն ալ գամագիւտ ըլլալու բնոյթն ունի, և թէ Հասունեանի տրուած հրովարտակը առանց պահանջուած օրինաւորութեանց խլուած է, Հասունեանը ճանչնալ չուզող բաժինը իրաւանց տէր ճանչցած, և ուղղակի կառավարութեան հետ յարաբերութիւն պահելու և իւր ներքին գործերը իւրովի վարելու միջոցները ընձեռած, և Ալիքսանեան Տիրան պէյը այդ բաժինին պետ ճանչցած էր։ Շարժումը կազմող բաժինը իրեն Արեւելեան Հայկաթոլիկ պաշտօնական անունը յատկացուցած էր, բայց հասարակ խօսակցութեան մէջ Հայրահասունեան անունով կը կոչուէր, որ եթէ Հասունեանի անձին կարեւորութիւն տալու նշանակութիւնն ունէր, սակայն իսկապէս շատ տխուր պատուասիրութիւն մըն էր։ Շարժումը արդէն բաւական թուով եկեղեցականներ ունէր իւր կողմը, և Վատիկանի ժողովէն վերադարձող եպիսկոպոսներէն Իգնատիոս Ղալլագճեան, Յակոբոս Պահխարեան և Բարսեղ Գապպարեան արքեպիսկոպոսներն ալ շարժումին յարեցան, որով Գազանճեանի հետ չորս եպիսկոպոսներ ունեցաւ իրեն առաջնորդ, և նուիրապետական կազմակերպութեան ձեռնարկելու խորհուրդները լրացաւ։

Հռոմի Վատիկանեան ժողովը իւր նիստերը շարունակեց մինչեւ 1870 յուլիս ամիսը, եւ ճարտար դարձուածներով եւ բռնադատիչ ստիպումներով պապին անձնական անսխալականութիւնը իբր հռոմէադաւան եկեղեցւոյ հաւատոյ վարդապետութիւն հրաչակեց։ Թէպէտ գտնուեցան ձեռնպահ եպիսկոպոսներ, սակայն աննշանակ փոքրամասնութիւն ըլլալով եւ կաթոլիկ եկեղեցւոյ

չրջանակէն դուրս մնալէ խուսափելով, անոնք ալ կատարուած եղելութեան համակերպիլ պարտաւորուեցան։ Հռոմի պապութիւնը իւր բուն նպատակին հասած ըլլալով՝ ժողովը փակեց առժամեայ ընդհատումի ձևին ներքև, մանաւանդ որ Իտալիոյ թագաւորութեան կողմէն Հռոմը գրաւելու եւ պապին քաղաքական տիրապետութեան վերջ տալու ձեռնարկները սկսած էին. պատերազմական ձեռնարկն ալ շուտով սկսաւ, և 1870 սեպտ. 8/20ին Պետրոսեան Դրան (Porta Pia) ռմբակոծութեամբ իտալական բանակը յաղթական Հռոմ մտաւ և իտալական միաւորումը լրացուց։ Թէպէտ պապական հոգևոր իշխանութեան վնասելէ խնամօք զգուշացաւ։

Անտոնեանց գալով, Գազանճեանի և ընկերներուն Կ. Պոլիս հասնելէն քիչ օր ետքը Բերայի ահարկու և ընդարձակ հրդեհը տեղի ունեցաւ, որուն մէջ Բերայի Անտոնեան վարժարանին Շիշլի փողոցին շէնքն ալ այրեցաւ, վարժարանը ցրուեցաւ, միաբանութեան յարմար կեդրոնավայր պակսեցաւ, և ստիպեալ Օրթաքէօյ արուարձանի մէջ իրենց սեփական կիսաշէն վանատան մէջ կեդրոնական հարկադրուեցան։ Հոն հաւաքեցին զանազան ճանպաններով հասնող աշակերտները, եւ վանական ու վարժարանական կեանքը վերանորոգեցին, և պահ մը ուրիշ միաբաններ ձեռնարկին գլուխը փորձելէ ետքը, 1870 սեպտ. 16/28ին ինձի յանձնեցին տեսչութեան և ուսուցչութեան պաշտօնները, ուրիշ միաբանական պաշտօններն ու առօրեայ յանձնարարութիւնները չդադրեցնելով։

Գալով հասարակութեան գործերուն, վերև ըսինք թէ անոնք սակաւ կը զօրանային, և Հասունեանի անհնար կ'ըլլար արտաքին միջոցներով յաջողութիւն գտնալ, ուստի հոգևորական գէնքերու դիմել հարկ եղաւ, և յանուն պապութեան Կ. Պոլսոյ նուիրակ Բլուիմ արքեպիսկոպոսը գործի գլուխ անցաւ, և չարժումին մասնակցող իւրաքանչիւր եկեղեցականի դաւանական ուխտի պատճէն մը հասուց, խոստովանելու և ստորագրելու համար, նախապէս արձակուած հոգևորական պաշտօններէ արգելման վճիռը բանադրանքի բարձրացնելու սպառնալիքով։ Եկեղեցականներ ժողովի գումարուեցան, պատշաճ խորհրդակցութիւններ կատարեցին, և ինձ յանձնուեցաւ տեղնիտեղօք և պատճառաբանեալ հերքումը պատրաստել, զոր և կատարեցի իտալե-

րէն բնագիրով և հայերէն ու գաղղիերէն թարգմանութիւններով, և նոր գումարման մէջ կարդացուելով առանց դիտողութեան ընդունուեցաւ և իւրաքանչիւրէն ստորագրուելով Բլուիմի յըղուեցաւ 1870 հոկտ.ին։ Չորս եպիսկոպոսներ չուզեցին պատասխանելու զինչանիլ, բայց Բլուիմ անոնց անունն ալ խառնեց իւր արձակած բանադրանքի վճռագիրին մէջ, զոր փութաց հրատարակել Թուղթ Քահանայից հերքմնագիրն ստանալուն վրայ։ Բայց իւր վճիռը բնաւ ազդեցութիւն չունեցաւ, և ոչ իւիք փոփոխեց կամ տկարացուց հակահասունեան շարժումին ընթացքը, մանաւանդ թէ զայն աւելի ևս ամրացնելու գրգռեց։

Որպէսզի Հասունեանը մերժած ըլլալու գրութիւնը չօշափելի կերպով հաստատուի, որոշուեցաւ նոր կաթողիկոս ընտրել, և այս նպատակով չորս եպիսկոպոսներ կաթողիկոսական աթոռոյն պարապութեան, կամ որ նոյն է Հասունեանի կաթողիկոսութեան անվաւերութեան մասին շրջաբերական կոնդակ մը հրատարակեցին, որուն խմբագրութիւնն ալ հայերէն բնագիրով և իտալերէն թարգմանութեամբ ինծի յանձնուեցաւ։ Ազգային երեսփոխանութիւն կազմուեցաւ, որուն անդամներէն մին ալ ես ընտրուեցայ, եկեղեցական ժողով գումարուեցաւ, եպիսկոպոսաց խորհրդակցութիւն տեղի ունեցաւ, և ընտրողական պայմաններ լիուլի կատարուեցան, և Յակոբոս Պահտիարեան արքեպիսկոպոս Տիգրանակերտի՝ կաթողիկոս ընտրուեցաւ 1871 փետր. 13|25ին, եւ միւս օր գահակալութեան հանդէսը կատարուեցաւ ընդհանուր ոգևորութեան մէջ։ Այդ ամէն գործողութեանց մէջ կարգադիրի և արարողապետի պաշտօնները վարողն ես եղայ։ Հասունեանը Անտոն Պետրոս Թ. անունը առած էր իբր Գրիգոր Պետրոս Ը.ին յաջորդ, և որպէսզի Հասունեանի անվաւերութիւնը շեշտուի, Պահտիարեան ալ Յակոբոս Պետրոս Թ. կոչումը առաւ։ Կաթողիկոսի ընտրութենէն ետքը եպիսկոպոսական դասակարգը գօրացնելու համար մարտ 7|19ին եպիսկոպոսական ձեռնադրութիւն ալ կատարուեցաւ, և եպիսկոպոս ձեռնադրուեցան Յովսէփ Քիւբէլեան աւագերէցը, Եղիշէ Թէոդոսեան Անտոնեաններէն, Մովսէս Ամպէրպոյեան Վենետկոյ Մխիթարեաններէն, և Սերովբէ Դաւիթեան Զմմառի աշակերտութենէն։ Այդ արարողութեանց մէջ ալ ես էի կարգադիրը։

Որովհետև կամայ ակամայ կենսագրական ասպարէզի մըղ-

*) տես. Belgy, Historia Doctrinae catholicae inter Armenos, էջ 365.

ուեցայ, իմ աշխատութեանցս և մասնակցութեանցս պարապանները յիշատակելը պարտք դարձաւ, լոկ իբրև գրութեանս լրում, և ոչ իբրև անձնագովութեան փաստ։ Ուստի աւելորդ չդատուիր եթէ բազմապիսի աշխատութեանցս կարգին նոյն միջոցին կատարած գրականներս ալ յիշատակեմ։ Գուզանճեանի և Անտոնեաններու փափաքն եղաւ Հռոմի և Կ. Պոլսոյ անցուդարձերուն յիշատակագիրն ունենալ, թէ՛ թիւրիմացութեանց առիթ չտալու և թէ՛ ապագայից յիշատակ թողլու համար, այդ նպատակով խմբագրեցի Հայ Արեւելեան Կաթողիկեայք (Gli Armeni Cattolici Orientali) իտալերէն ստուար տետրակը, որ և տպագրութեամբ ի լոյս ընծայուեցաւ 1870 օգոստոս 18/30ին։ Ազգային մեծամեծներ ուզեցին Ռեվերտուրուս կոնդակին և յարակից պապական պաշտօնագիրներուն թարգմանութիւններն ունենալ, ուստի ուղղակի լատիներէն բնագիրէն պաղղիերէնի թարգմանեցի, և տպագրութեան արուեցաւ, և 1870 սեպտ. 11/23ին լրացաւ ու հրատարակուեցաւ։ Կէօչէեան գերդաստանի բարեպաշտներ փափաքեցան Աւագշաբաթի վերջին օրերուն ժամերգութեանց պատշաճները միահետ և ամփոփ հրատարակուած ունենալ, առանց յետ և յառաջ թարթափելու, և Հ. Պօղոս Պոյնուէյրիեանի միջոցաւ այդ գործն ալ ինծի յանձնուեցաւ, և երեք փոքրիկ հատորներով տպագրուեցան Աւագ Հինգշաբթիի, և Աւագ Ուրբաթի և Ճրագալոյցով Զատիկի պատշաճները, և 1871 տարւոյ մեծ պահքին կէսէն ետքը իրենց օրերուն հասցնելու ըշտապով։ Անոնց հետ լրագրական յօդուածներու համար ալ բաւական աշխատութիւն ունեցայ թէ՛ եղելութիւնները ճշդելու եւ թէ՛ խնդիրներ լուսաբանելու նպատակով, և հայերէն ու գաղղիերէն օրագիրներու մէջ հաւասարապէս։ Այսպէս անցաւ 1870 մայիսէ 1871 ապրիլ տարին Կ. Պոլսոյ մէջ, մինչև որ կրկին Հռոմ դառնալու և հոն աշխատելու նշանակուեցայ։

Դանդակոս, 1917 դեկտ. 21/3 յունուար 1918 Եշ.

Երբոր հապճեպ փախուստով Հռոմէ հեռացանք և վանքը թողուցինք, ամէն բան անկարգ և խառնափնդոր մնաց, պարտք ու պահանջք ալ չկարգադրեցինք, և Իբէքճեան ալ, որ իբր պահապան թողուած էր, անբաւական գտնուելովն ետ կոչուեցաւ, եւ վանքին պահպանութիւնը յանձնուեցաւ Լուիճի Չեչելլի (Luigi Cecelli) մաերիմ տեղացիին, որ սակայն արտաքին պահպանութենէն աւելի բան մը չէր կրնար ընել, և լոկ պահանջատէրներուն դիմումները կը հաղորդէր։ Իտալական տիրապետութեամբ քաղաքական կացութիւնն ալ փոխուած էր, և մանաւանդ եկեղեցական սահմանութեանց և կալուածոց գրաւման օրէնքը նորանոր խնդիրներու և դժուարութիւններու առաջարկ կը պատրաստէր, և անհրաժեշտ եղաւ որ բոլոր այդ գործերը կարգադրելու, պահանջները գանձելու, պարտքերը վճարելու, ստացութիւնները ապահովելու, կահկարասին ամփոփելու, շէնքը խնամելու, իրաւունքները պաշտպանելու, և միանգամայն Հռոմի հետ բացուած պայքարի մասին ալ կարևորը գործելու համար յարմար անձ մը Հռոմ գտնուէր։ Այս անգամ ալ ընտրութիւնը իմ վրայ յանդեցաւ, և իմ Հռոմ երթալս որոշուեցաւ։ Բայց միւս կողմէ Հռոմէ բանադրուած էինք և հոն եկեղեցականութիւն վարել անհնար էր. յատուկ հասարակութիւն չկար որուն հոգևոր ծառայութիւնները կատարուէին, Իտալիոյ կառավարութեան առջև իբրև եկեղեցական ներկայանալու դիւրութիւնը չէր ընծայեր, ամէն տեսակ վերին և ստորին, ներքին և արտաքին յարաբերութիւնք կարգադրուած ըլլալով՝ եկեղեցական տարազը դժուարութիւններ կը պատճառէր, ուստի պաշտօնապէս արտօնուեցայ եկեղեցական տարազը թողուլ և աշխարհիկ վայելուչ տարազով ապրիլ, և Օրմանեան էֆէնտի կամ Օրմանեան ուսուցչապետ (Professor Ormanian) անունով ներկայանալ, և Հպ-

յոց ազգի գործակատար (Procuratore della Nazione Armena) պաշտօնական տիտղոսը գործածել։ Ըստ այմ թէ՛ Անտոնեան միաբանութեան կողմէ և թէ՛ Արեւելեան հայ կաթոլիկ ազգապետութեան կողմէ վաւերական պաշտօնագիրներն ալ պատրաստուեցան, և անոնք ստանալէ ետքը 1871 ապրիլ 24|6 մայիսին Գասըքէօյէ մեկնեցայ, և նաւակով շոգենաւ երթալու պահուն աշխարհիկ տարազին վրայէն առած եկեղեցական վերարկուն հանեցի, և այնպէս Կ. Պոլիսէ մեկնեցայ և Փօրֆուի ու Պրինտիզիի (Brindisi) ճանպով ապրիլ 29|11 մայիսին Հռոմ հասայ եւ չիտակ ամայի վանքը գացի։

Հինգ ամբողջ տարիներ տեւեց այդ կեանքս որուն քիչ մը տարօրինակ եղած ըլլալը ինքնին կը տեսնուի, և հարկաւ այս տողերուս հանդիպողին հետաքրքրութիւնը կը շարժէ, կենցաղիս և զբաղումներուս բազմաթիւ և բազմապիսի եղած ըլլալուն հետեւանօք, ուստի քիչ մը աւելի մանրամասնեալ տեղեկութիւններ տալ հարկ կը սեպեմ։ Սակայն ո՛չ օրագրական ճշդութիւն և ո՛չ ալ ժամանակագրական կարգ պահել կը խոստանամ, այլ տեսակ տեսակ զբաղումներուս և աշխատութիւններուս, և իմ վարած կեանքիս ճաշակը տալ բաւական կը սեպեմ, հակիրճ ոճով էական մանրամասնութիւններն ամփոփելով, և ընդհանուր գաղափար մը կազմելու բաւարար չափով։ Միջոցն ալ երկարատեւ ըլլալուն, 1875 տարւոյ մահացու հիւանդութենէս երկուքի կը բաժնեմ։

Հռոմ հասնելուս օրէն մինչև 1872 յունուար 8|20 վանքին մէջ բնակեցայ և առանձին ապրեցայ, մէկ կողմէն Զեչելլիէն պէտք եղած փոխանցումները ստանալով և անցածին տեղեկութիւնները քաղելով, և միւս կողմէն վանքին կահկարասին և շարժական գոյքերը ամփոփելով, աւելորդները վաճառելով և կարեւորները, ինչպէս են եկեղեցական սպասներ եւ զարդեր, մեծ ու պզտիկ պատկերներ, տպագիրներ ու գրչագիրներ, դիւանական գրութիւններ, դիւրատար և արժէքաւոր գոյքեր, հետզհետէ ամուր և ապահով կերպով հակերու վերածելով, և ետեւէ ետեւ Կ. Պոլիս փոխադրելով, ուր միաբանութիւնը պիտի կազմակերպուէր Հռոմ վերադառնալու միտքէն վերջնականապէս հրաժարելով։ Երբոր վանքը տրամադրելի վիճակի մէջ դրուեցաւ, զայն վարձեցի Մոլինա (Molina) անուն անձին արքունական տպարան (Stamperia Reale) հայատառելու համար, պայմանով որ եկեղեցին պատուաւոր կի-

բառութեան յատկացուի։ Վանքը այդ ձևին մէջ մնաց մինչև 1876 տարին։

Աւելի ծանր եղաւ պարտք ու պահանջք կարգադրելու գործը։ քանի որ տեղական հաստոյթներով պիտի լրանար ամէն բան, մինչ վանքը վարձելէ առաջ ստացուած գումարները հաղիւ ապրուստիս և պաշտօնական ծախքերու և գոյքերու ամփոփման կը բաւէին։ Վանքը բնաւ կոլուած չունէր, և միայն ութը տասը տեղ շահի յանձնուած համեստ գումարներ կային, իրր տոկոսաբեր դրամագլուխ (Censo), և վճարողներէն մէկ մասը յապաղումներ կը պատճառէր, և քանիներ ալ Անտոնեանները հռոմէական եկեղեցիէ զատուած և վայելման իրաւունքէ զրկուած ըսելով վճարումները կը զլանային, և հարկ եղաւ անոնց գլխաւորը՝ Գալչէտոնիո Սօֆրէտինի (Calcedonio Soffredini) փաստաբանը դատաստանով վճարման պարտաւորել, որով ուրիշներն ալ դիմադրութիւններին դադրեցուցին։ Քանի որ Հռոմէ վերջնականապէս կը հեռանային՝ հարկ էր դրամագլուխներն ալ ազատել և փոխադրել, սակայն օրէնքը դրամագլուխը ստացողին կամքին կը թողուր դարձնելու որոշումը, և քիչերը միայն հնար եղաւ համոզկեր ձևերով հաւանեցնել, իսկ շատեր իրենց վիճակին մէջ մնացին, և կը կարծեմ որ տակաւին ալ կը մնան։ Իսկ վանքին ունեցած պարտքերը հետզհետէ վճարուեցան և բնաւ առկախ հաշիւ չմնաց։

Ծանրագոյն եւս էր վանքն ու վանական ստացութիւնները գրաւման օրէնքէն ազատելու խնդիրը։ Իտալիոյ թագաւորութիւնը արդէն հոչակած էր եկեղեցական պարզ ստացութեանց յարքունիս գրաւման օրէնքը, միայն հոգ հոգւոց ունեցող եկեղեցականութեան, ինչպէս են եպիսկոպոսութիւն և ժողովրդապետութիւն, բաւական հաստոյթ յատկացնելով, և արդէն եկեղեցական գտնուող անձերու ցմահ կենսաթոշակ վճարելով։ Այդ օրէնքին հետևանքը աւելի վանքերու վրայ ծանրացաւ, և Հռոմի տիրապետութեամբ անոր վրայ ալ տարածուեցաւ, որ նշանաւոր էր իւր բազմաթիւ և ընդարձակ վանքերով, որոց գլխաւորները նախարարութեանց պաշտօնատուններ եղան։ Անտոնեանց սեփականութիւնն ալ վանական էր և գրաւման օրէնքին կրնար ենթարկուիլ, և արդէն ցուցակին ալ անցած էր։ Զայն ընդհանուր օրէնքէն զատուղութիւն ցուցնելու փաստը իտալական հաստատութիւն և իտալական ստացութիւն չըլլալն էր, զի օտարազգի գը-

լամով գնուած և հաստատուած, օտարներու ծառայութեան սահմանուած և օտարահպատակ ապրած ու մնացած հաստատութիւն մըն էր։ Իրօք ալ Անտոնեանց վանքը Չէզի գերդաստանին (Cesi) ապարանքն էր եղած, Արևելքէ հայթայթուած գումարներով 1761ին գնուած, պապական հրամանագրով վանքի փոխարկուած, միշտ օսմանեան հպատակութիւն պահած, ինչպէս որ վերջին հալածանքին առթիւ ալ շեշտուած էր։ Սակայն այդ ամէնը պէտք էր անջրելի վաւերագիրներով հաստատել, փաստաբանական տեղեկագիրներով ներկայել, օրինական ճանապարհներով առաջացնել, և պարտ ու պատշաճ բացատրութիւններով նախարարութեանց և յատուկ յանձնաժողովոց առջև պաշտպանել։ Ահա՛ իմ առջև բացուած աշխատութեանց նոր ասպարէզ մըն ալ. նոտարական գրութեանց հին պահեստները քրքրել, զօրաւորագոյն վաւերագիրները գտել, փաստաբանական գրուածոց նախագիծերը պատրաստել, առջև նետուած դժուարութեանց լուծումները բանաձևել, պաշտօնական տեսակցութեամբ պաշտօնատուները լուսաբանել, և գրուածները լրացնելով ու ընդօրինակելով ժամանակին հասցնել, և մինչև իսկ թղթատար ապասաւորի գործը կատարել, քանի որ ինծի հետ ոչ ընկեր ունէի և ոչ ծառայող, և ամէն գործ, մեծ ու պզտիկ, ներքին ու արտաքին, միայնակ կատարել պարտաւոր էի։ Հասած օրերս տակաւին արքունիք և նախարարութիւնք պաշտօնապէս Փլորենտիայէ Հռոմ փոխադրուած չէին, ինչ որ տեղի ունեցաւ 1871 յուլիսին յատուկ հանդիսականութեամբ, և անոր վրայ աւելի կերպաւորուեցան այդ մասին ըլլալիք աշխատութիւնները։ Ոչ միայն եկեղեցական ատացութեանց յանձնաժողովին, այլև ներքին և արտաքին գործոց, կրօնից և ելևմտից նախարարներուն, Լանցա նախարարապետին, եւ Վիսքոնթի-Վէնոսթա, Կատտա եւ Սէլլա (Lanza, Visconti-Venosta, Gadda, Sella) նախարարներուն հետ անձնական յարաբերութեանց մտնել պարտաւորուեցայ, Սալինի (Salini) փաստաբանին մասնագիտական խորհրդակցութիւններէն օգտուեցայ, տեղեկագիրները տպագրութեամբ ցրուեցի, և վերջապէս նպաստաւոր վճիռը ձեռք ձգել յաջողեցայ, որով Անտոնեանց վանքը իբր օտարազգի և օտարահպատակ հաստատութիւն, իւր շէնքով ու ատացութիւններով, գրաւման օրէնքէն զերծ և անձեռնմխելի սեփականութիւն հռչակուեցաւ։ Սակայն մերձաւո-

բապէս երեք տարի տևեց այդ աշխատութիւնը իւր բազմաճղի պահանջներովը, և ամէն պաշտօնատուններու հասարակ ձեռակերպութիւններովը։

Վանական գործակատարութեան կարգին պէտք է յիշեմ՝ թէ՛ աբբահօր և թէ՛ զանազան միաբանակիցներու կողմէն հասած յանձնարարութիւնները, և Եւրոպայէ ճարուելիք իրերու առաքումը մասնաւոր աշխատութեանց և յատուկ հաշիւներու բաւականաչափ գրաղում պատճառեցին։

Սոյն կարգին յիշեմ նաև որ Լիբանանի կաթողիկոսարանն ալ Հռոմի մէջ զետեղուած տոկոսաբեր դրամագլուխներ ունէր, և անոնց ազատութեան և մատակարարութեան հոգն ալ Պահպտիարեանի կողմէն ինծի յանձնարարուեցաւ, և Անտոնեանց դրամագլուխներու մասին յիշուած աշխատութիւնները անոնց մասին ալ հարկ եղաւ կրկնել։

ԻԸ

Դամասկոս, 1917 դեկտեմբեր 22|4 յունուար 1918 Ուր.

Ինծի յանձնուած գործառնութեանց մէջ, թէ ոչ կարգով՝ գոնէ կարեւորութեամբ, գլխաւոր տեղ կը գրաւէր Հռոմի հետ բացուած պայքարին մասին պէտք եղածը կատարել, Փրոփականտայի ձեռնարկները իմանալ և ժամանակին Կ. Պոլիս հաղորդել, մեր ընթացքին դէմ հրատարակութիւնները հերքել, լրագրական և բացատրական յօդուածներ և տետրակներ պատրաստել և տըպագրել, և հնարաւոր միջոցներ գործածել մեր ընթացքին արդարացումը Եւրոպայի հանրութեան ներկայելու համար։ Այս արդիւնքները իրականացնելու համար պէտք էր բաւական ընդարձակ յարաբերութիւններ հաստատել, լրագիրներու խմբագրութեանց և տնօրէնութեանց հետ բարեկամութիւններ ճարել, պրոթեանց համար ատեն աւելցնել, և մանաւանդ հրատարակութեանց համար միջոցներ գտնալ։ Ներքին եղելութեանց տեղեկանալու համար չպակսեցան քիչ ու շատ ազատախոհ կամ թէ այս

կամ այն պատճառով պաշտօնական շրջանակներէ դուրս հին մտերիմ եկեղեցականներ. մեր ընթացքին դէմ հրատարակուած անուղիղ տեղեկութեանց ծանօթանալու համար հարկ էր ընդարձակ կերպով ընթերցանութեանց հետեւիլ. աւելի դժուար էր մեր պաշտպանութեան համար ըլլալիք հրատարակութեանց ծախքերը հոգալ։ Լրագրական խմբագրութեանց համար անտարբեր էր և անկարեւոր կը դառնար Արեւելքի մէջ փոքրիկ հասարակութեան մը մէջ ծագած խնդիրը, բայց կարեւորութիւն ունէր պոլսական թղթակցութիւններով և քաղաքական լուրերով հարստացնել իրենց էջերը, և այս միջոցով կրնայի մեզի յատուկ լուրերն ու պաշտպանութիւններն ալ անցունել, առանց նոր ծախքով բեռնաւորուելու, միայն ձրի թղթակիցի դերը ստանձնելով։ Այդ պայմանը հաստատեցի Հռոմի լրագիրներէն երեքին չորսին հետ, և Կ. Պոլսոյ օրագիրներէն և մասնաւոր նամակներէ քաղուած լուրերով, և Թիւրքիոյ գործերուն մասին ունեցած տեղեկութիւններով պարբերական թղթակցութիւններ տալ պայմանաւորեալ լրագիրներուն, մինչև իսկ մերթընդմերթ անծանօթ մնացած լուր մը հեռագիրի ձեւով հաղորդել։ Այդ ճիւղերով զբաղողներուն յայտնի է թէ ո՛րչափ ծանր աշխատութեանց և երկայնամիտ հետեւողութեանց դուռ կը բանայ այն գործունէութիւնը։ Անոնց յաւրակից էր Կ. Պոլսոյ հետ թղթակցութեանց նոր ճիւղ մը պահել, բոլոր անցուդարձը և ձեռք առնուած միջոցները և կատարուած հրատարակութիւնները հաղորդելու համար, որ շատ օգտակար եղած է Կ. Պոլսոյ մէջ գործողներուն՝ իրենց ձեռնարկները կարգադրելու և իրենց զգացումները ոգեւորելու։

Ձեռնարկած նպատակիս օգտակարագոյն կերպով հետեւելու համար հարկ էր Իտալիոյ քաղաքական գործերուն ալ մօտէն հետեւիլ և տեղեկանալ, ուստի պէտք եղաւ բարեկամութիւններ և մտերմութիւններ հաստատել ոչ միայն լրագրական ասպարէզին ծառայող անձերու, այլեւ պետական շրջանակի մէջ գտնուողներուն հետ, նախարարութեանց պաշտօնեաներու և խորհրդարանի երեսփոխաններու հետ, որ դարձեալ յատուկ զբաղմանց եւ ժամավաճառութեանց պատճառ կը դառնար։ Միեւնոյն նպատակով ինքզինքիս Կ. Պոլսոյ Մեմնոնայի Հայատիս լրագրի յատուկ թղթակիցի դերը սեփականելով, Իտալական խորհրդարանի մէջ խմբագիրներու յատուկ բաժինին ազատ մուտքի արտօնութիւնը

ճարեցի, և ստէպ, մանաւանդ կարեւոր վիճաբանութեանց օրերը, ունկնդրութեան կը գտնուէի, և երեսփոխաններու և խըմբագիրներու ցրուած բաղմաթիւ և ստուար տեղեկագիրները ըստանալու միջոց կ'ունենայի։

Հռոմի հետ բացուած պայքարի մասին ընդարձակագոյն տեղեկագիրներ հրատարակելու համար ալ ամսօրեայ հանդէսներու հետ յարաբերութեանց մտայ, և բաւական բան հրապարակ հանեցի։ Մանաւոր տետրներ ալ հրատարակեցի, որոնցմէ կը յիշեմ Ռիվիսուրուս կամ Հայեր եւ Պապութիւն (Il Reversurus, ovvero gli Armeni ed il Papato) իտալերէն տետրը, որ 1872 յունիս 6/18ին աւարտեցաւ, և Արեւելեան Կաթողիկաց Կրօնական Ազատութիւնը եւ Քաղաքական Իրաւունքները (La Liberté Religieuse et les Droits Civiles des Catholiques d'Orient) գաղղիերէն տետրը, որ 1872 սեպտեմբեր 8/20ին հրատարակուեցաւ։

Գազանճեան արքեպիսկոպոսն ալ ուզեց հրապարակ իջնել այս միջոցին՝ երբ Հակահաստատնեանց կողմէն շատեր մանաւոր հրատարակութիւններով իրենց դատը պաշտպանել կը ջանային։ Գազանճեանի հրատարակածը Արեւելեան Հայ Կաթողիկեայք վերաբերութեամբ փոքրիկ տետրակ մըն էր վկայութիւններով և պատմական յիշատակներով, որ իտալերէն ու գաղղիերէն թարգմանութիւններ ալ ունեցաւ։ Գազանճեանի հրատարակութեան հերքում մը երեւցաւ շուտով Հաստատնեանց կողմէն, թէպէտ անանուն բայց Ազարեան Ստեփանոս վարդապետի վերագրուած, եւ քիչ մը ծանր և խայթիչ ոճով։ Գազանճեան ներքնապէս վիրաւորուած՝ ինծի դիմեց իւր հրատարակութեան ջատագովութիւնը պատրաստել և հրատարակել, և անանունին դիմադրութիւնները հերքել, ինչ որ քննական և քննադատական ուսումնասիրութիւններ կը պահանջէր, անանունին յառաջ բերած վկայութիւններն ու պատմութիւնները բնագրական ճշդութեանց դարձնելու համար։ Թէ՛ խնդիրին պահանջը և թէ՛ մեծաւորին հրամանը յանձնառութիւն կը պահանջէին, ուստի 1873 մարտ 21/2 ապրիլին գործի ձեռնարկեցի, և չորս հինգ ամսուան մէջ հետազօտութիւնները, ուսումնասիրութիւնները, գրութիւնները և տպագրութիւնը աւարտելով՝ նոյն տարւոյ օգոստոս 11/23ին երեք հարիւր երեսով ութածալ հատոր մը ի լոյս ընծայեցի Վատիկան եւ Հայեր (Le Vatican et les Arméniens) վերատառութեամբ և

գաղղիերէն լեզուով։ Հրատարակութեանս դէմ հերքում չդրուեցաւ, զի բաւական ջախջախիչ էին նենգամիտ այլայլութեանց եւ քնագրական ճշդութեանց մասին յառաջ բերուած յայտնութիւնները, և պապական ատեանը բաւականացաւ զայն արգիլեալ գիրքերու ցանկին (Index) անցունել 1874 յունիս 28|10 յուլիսին, վերև յիշուած երկու տետրերուն հետ միասին։ Բայց մերժումը հերքում չէր։

Կրնայի աւելի մանրամասնութիւններ տալ այս ճիւղին մէջ ունեցած գործունէութեանս մասին, սակայն թէ՛ ձանձրացուցիչ ըլլալէ կը վախնամ, և թէ՛ գրուածը բաւական կը սեպեմ իմ ընթացքիս եւ զգացումներուս մասին ճիշդ գաղափար մը կազմելու համար։ Ինչպէս կը տեսնուի՝ երթալով կը յառաջէր և կը զօրանար իմ ներս հակահռոմէական զգացումը, զի յայտնի սատրագրութեամբ և բացարձակ կերպով Հռոմի դէմ պայքարելէ, և հռոմէական սկզբունքներու և փաստերու անտեղի և անուղիղ ըլլալը նշաւակելէ ետքը, մտային կորովի և համոզման տէր եղող անձի մը դիւրին չէր այլեւս յետս նահանջել, և այս միտքով էր իմ յաճախ կրկնած յայտարարութիւնս, թէ ես աստիճանաբար առջեւ երթալու մտադրութեամբ ճանպայ ելած եմ, և ինէ օտար է ետ դառնալու գաղափարը, որ ընթացակիցներուս մատչելի կրնար երեւնալ։

ԻԹ

Դամասկոս, 1917 դեկտ. 23|5 յունուար 1918 Շբ.

Հռոմի մէջ անցուցած կեանքիս վրայ տուած տեղեկութիւններս լրացնելու համար, վարած կենցաղիս մասին ալ քանի մը խօսք աւելցնեմ։ Տարազս աշխարհիկ և եկեղեցականութիւնս ծածկեալ ըլլալուն, եկեղեցականի կեանք չէի կրնար վարել, բայց միանգամայն առժամեայ վիճակ մը ըլլալով կացութիւնս և գարձեալ եկեղեցականի կեանք վարելու սահմանուած ըլլալով, հիմնական կանոնս եղաւ այնպէս ապրիլ որ վերջէն ալ ոչ խիղ-

ճիս վրայ խայթ ունենամ և ոչ ուրիշի առջև ամչնալ ստիպուիմ։ Ուստի ինձի ներեցի աշխարհիկ կեանք ունենալ մինչև ուր որ անմեղաբար և անմեղանչաբար կրնար ընդարձակուիլ, և իբնամով և խստութեամբ զգուշանալ այդ սահմանագիծը անցնելէ։

Վանքը վարձելուս հետևանօք պարտաւորուեցայ վանքէ դուրս բնակութիւն հաստատել, և առաջ բարեկամի մը մօտ սենեակ և սնունդ ունենալ պայմանաւորուեցայ, սակայն յառաջ եկած անյարմարութեանց պատճառով, առանձինն կահաւորեալ սենեակ վարձեցի և սնունդը ճաշարանի մէջ առնել սկսայ, թէպէտ երկուքն ալ քանիցս փոփոխելով պատահական պատճառներու ստիպմամբ։

Յերեկի ժամերս այնպէս բռնուած էին, որ հանգիստի ու ժամանցի միջոց մը փնտռելու բնաւ պէտք չունէի, իսկ երեկոյեան անգործ ժամերու համար հին ծանօթներու և պարկեշտ անձերու շրջանակ մը ունեցայ տեսակցութեանց սահմանուած, խոհական անձերու յաճախած ժամադրավայրերու մէջ։ Արտաքին զուարճութիւններէ օրինաւոր սեպեցի թատերական ներկայացումներու ունկնդրութիւնը, առաւելապէս արձակ արտասանութեանց ճիւղին մէջ, որոնք գրական և մտաւորական զարգացման ալ կը ծառայեն և բարոյական սկզբունքներ կը թելադրեն։

Յարաբերութիւններս ընդարձակ եղան զանազան դասակարգերու մէջ, բայց ընտանեկաններէն զգուշացայ։ Օսմանեան դեսպանատան հետ շատ սերտ մտերմութիւն պահեցի, իրարու յաջորդող Ֆոթիատիս պէյ, Սարգիս էֆէնտի Համամճեան և Աղեքսանդր Գարաթէոտորի էֆէնտի դեսպաններուն հետ հաւասարապէս, մանաւանդ վերջինին հետ՝ թէ՛ իրենց ընտանեկան շրջանակին մէջ և թէ՛ պաշտօնական հանդիսութեանց պարագաներու մէջ։ Դեսպանատունին անպաշտօն պաշտօնեայ մըն էի գրեթէ, Իտալիոյ պետական և խորհրդարանական շրջանակներէն լուրեր քաղելով և հաղորդելով, թարգմանութիւններ ընելով և յանձնարարութիւններ կատարելով։ Սուլթան Ապդիւլազիզի կողմէ Իտալիոյ Վիքտոր Էմմանուէլ թագաւորին նուիրուած երիվարները ներկայացուած օրը 1872 սեպտ. 24|6 հոկտ.ին թարգմանութեան պաշտօնն իսկ ինձի յանձնուեցաւ։ Նմանապէս 1874 յունիս 13|25ին կայսերական տօնին առթիւ օսմանեան գաղթական-

նութեան դեսպանին ներկայանալու ատեն՝ պատուիրակութեան գլուխը ես գտնուեցայ և շնորհաւորական ուղերձը կարդացի։ Դեսպանատան համար ըրած ծառայութիւններս պաշտօնական վկայագիրով գնահատուեցան Կ. Պոլիս դառնալուս առթիւ, եւ արտաքին գործոց նախարարէ վարձատրութեան խոստումներ ստացայ, այլ Սպիւլզիզի գահակրկութեան միջադէպին շուտով վրայ հասնելովը արդիւնաւորումն ու իրականացումը խափանուեցաւ։

Անձնական կենցաղիս պարագաներէն ամչնալու կէտ մը չունենալով՝ համարձակօրէն և անկեղծօրէն զայն յառաջ բերել չեմ քաշուիր, և ուրախ եմ աւելցնել որ երբեք այս մասին քննադատող կամ մեղադրող կամ դատապարտող չունեցայ։ Պատոյանեալու ալ շատ հետամուտ չեղայ, միայն Պոպանճեանի ջատագովութեան հատորին հրատարակութեան վրայ, իբրև վարձ հանդիսատի մը արտօնուեցայ, և 1873 հոկտեմբեր 14|26ին Հռոմէ մեկնեցայ խնայողական շրջագայութիւն մը կատարելու հիւսիսային Իտալիոյ գլխաւոր քաղաքները։ Միտիոլանի (Milano) մէջ կնքահօր զաւակներուն Յակոբ և օրիորդ Էլպիս Փափազեաններու հետ միացայ, որոնք Լոնտրայէ (London) օդափոխութեան կուգային, և միասին կատարեցինք շրջանին շարունակութիւնը։ Նոյեմբեր 10|22ին երկրորդ անգամ ըլլալով Վենետիկ. և Ս. Ղազար այցելեցի, նոյ. 17|29ին միասին Հռոմ դարձանք, և տասն օր ևս միասին մնալէ ետքը նոյ. 27|9 դեկտ.ին անոնք Լոնտրա դարձան, և ես գործերուս ձեռնարկեցի։ Անկէ զատ համառօտ պատոյտ մըն ալ Նէապոլսոյ կողմը կատարեցի Վէսիւվի (Vesuvio) հրաբուխին բորբոքելուն առթիւ, և 1874 օգոստոս 11|23ին Քաբրի կղզեկին (Capri) Կապոյտ քարայրն (Grotia Azurrox) ալ մտայ։

Ամէն դասակարգի հետ ունեցած յարաբերութիւններուս իբրև կնիք յիշեմ ևս 1875 յունուար 24|5 փեար.ին հռչակաւոր Կարիպալտի (Giuseppe Garibaldi) զօրավարին հետ ունեցած տեսակցութիւնս։ Անկէ առաջ ու ետքն ալ Իտալիոյ միաւորութեան երախտաւորներէն շատերուն հետ հետաքրքրական տեսակցութիւններ ունեցած եմ։

Հռոմ եկած ատենս եղբայրս Վիչէն հոն կը գտնուէր իւր բժշկական ուսանողութեան ընթացքը լրացնելու, զոր փակեց 1872 յուլիս 28|9 օգոստոսին վերջնական յաջող քննութեամբ։ Ասոր

վրայ ուզելով պահ մը ազատ փորձառութիւն կատարել Արչեւիա (Arcevia) գիւղաքաղաքի բժշկութիւնը ստանձնեց։ Նոյն տարին Կոմիտաս եղբայրս ալ բժշկական ընթացքը Կ. Պոլսոյ մէջ աւարտելով, կատարելագործութեան համար Հռոմ հասաւ սեպտ. 29|11 հոկտ.ին, յաջորդ առտուն Վիշէն ալ Արչեւիայէ դարձաւ և 1872 սեպտ. 30|12 հոկտ.ին երեք եղբայր միասին Հռոմ գըտնուեցանք, և երեք ամիս միասին ապրեցանք։ Վիշէն Գաղղիա մեկնեցաւ 1873 յունուար 8|20ին Բարիզի հիւանդանոցները տեսնելու, ուսկից պահ մը Լոնտրա ալ անցաւ միւնոյն նպատակով։ Երբ ամենայն ինչ յաջող կ'ընթանար, անակնկալ պատահար մը ընտանեկան կացութիւնիս խանգարեց։ Դեղագործ հայրս պարզ անզգուշութեամբ մահացու գեղ մը ուրիշ դեղի փոխարէն տուած ըլլալուն՝ 1873 ապրիլ 30|12 մայիսին կը ձերբակալուի, որուն գոյժը լրագիրէ կ'առնենք մայիս 14|26ին, և իսկոյն Կոմիտաս միւս օր, մայիս 15|27ին, Հռոմէ կը մեկնի պէտք եղածը հոգալու, Վիշէն ալ հոկտ. 1|13ին Գաղղիայէ Հռոմ կուգայ և տասն օրէն, հոկտ. 10|22ին, նա ալ Կ. Պոլիս երթալու կը մեկնի։ Անոնց ճիգերը և պաշտօնական անձանց միջնորդութիւնը կը յաջողին պարզ անզգուշութեան պարագայն հաստատել, և հայրս քանի մի ամսուան բանտարկութեան կը դատապարտուի. նախ ազատ կը թողուի և դատաստանի վճիռէն ետքը 1874 դեկտ. 21|2 յունուար 1875ին վերջնապէս ազատ կ'արձակուի։ Սակայն ինքն իրմէ վատահութիւնը վերցնելով, յօժարակամ նախաձեռնութեամբ իւր դեղարանը կը փակէ, հանգստեան կեանքի կը մտնէ տակաւին 58 տարեկան եղած ատեն, և ընտանեաց հոգը երկու բժիշկ եղբայրներուս կը փոխանցուի։ Արկածին պարզուելուն և հօրս վտանգին հեռանալուն աւետիսովը ես հանդարտած էի, որով կրցայ հիւսիսային Իտալիոյ շրջագայութիւնս խաղաղ սիրտով կատարել։

Սոյն ժամանակամիջոցի անձնական յիշատակներս փակելու համար յիշեմ ևս Աւագ-Վարդան-Անճարակեան Արսէն արքեպիսկոպոսի մահը 1874 մարտ 25|6 ապրիլին։ Անտոնեան միաբան և նախկին վանահայր, վերջէն Եւդոկիոյ թեմական արքեպիսկոպոս ձեռնադրուած էր, և թեմէն հրաժարելէն և Անտոնեանց Հռոմէ մեկնելէն ետքը առանձին կ'ապրէր Ս. Վլասայ հիւրանոցը։ Ստէպ կ'այցելէի իրեն, հիւանդութեան ատեն ալ խնամեցի, մահուանէ ետքը յուղարկաւորութեան և թաղման ալ տէր կանգնեցայ։

Ս. Լավրենտիոսի Վարանեան գերեզմանատան մէջ (Campo Varano) յատուկ տեղ ամփոփել տուի և նոյն տարւոյ նոյ. 17|29ին հայերէն և իտալերէն արձանագրութեամբ համեստ չիրիմ մըն ալ կանգնեցի։ Որչափ ալ հոգևորական պաշտամանց չմասնակցեցայ խնբծանաց տեղի չտալու համար, նորէն հանդիսաւոր Հիւրմիւզեան Եդուարդ արքեպիսկոպոսի դիտողութիւններ պակաս չեղան Փրոփականտայի կողմէ։

L

Դամասկոս, 1917 դեկտ. 26|8 յունուար 1918 Փշ.

Հռոմի մէջ վարած կեանքիս մասին համառօտած տեղեկութիւններս ալ կը բաւեն հաւաստել թէ անդուլ անդադար և գըրեթէ չարաչար աշխատութեանց չարք մըն էին անցուցած օրերս, որոնք հարկաւ ձախող հլքի մը պիտի յանգէին, մանաւանդ որ պարտաւոր էի թեթև անհանգստութիւններն ու տկարութիւններն ալ անխնամ թողուլ, գործերու ընթացքը չխափանելու համար։ Ինչ որ կը վախցուէր վերջապէս չորս տարի ետքը երևան եկաւ, եւ 1875 մարտ 20|1 ապրիլին ծանր տենդով մահիճ ինկայ, որ շուտով ուղեղի և ողնաշարի թաղանթատապ յայտնուեցաւ (Méningite Cérebro-Spinale), եւ վտանգաւոր կելպարան ստացաւ, զի ուշս ալ կորուսած էի և կը քանդագուշէի։ Լուրը տարածուեցաւ. օսմանեան դեսպանատունը հարկ սեպեց դարան և գզրոյ կնքել, և Կ. Պոլիսէ անմիջապէս Հ. Սերովբէ Հանըմեանը ճանպայ հանեցին գոյից և գործոց տիրանալու, որ ապրիլ 10|22ին Հռոմ հասաւ և հետզհետէ հիւանդութեան ծանրանալը տեսնելով 17|29ին սենեակիս մէջ պատարագելով վերջին թոշակ ալ մատակարարեց, և կը կարծեմ թէ վերջին օծում ալ տուած է, թէպէտ յիշել ուզած չէ։ Հիւանդութիւնը տակաւ կը սաստկանար, այնպէս որ բժշկապետ Պաչչելլի (Baccelli) եղբայրներուս հեռագիր կուտայ թէ Հռոմ պիտի թաղեն՝ թէ ոչ մարմինը Կ. Պոլիս պիտի յղեն։ Ապրիլ 19|1 մայիս

օրը իբր ամենավտանգաւոր օր նկատուած է բժշկական տեղեկագիրով, և այն օրուան անվտանգ անցնիլը մեծապէս յուսադրած է բժիշկները։ Հիւանդութեան մեծ տոպնապին անցնիլը եթէ կազմիս զօրաւորութեան և կանոնաւոր կեանքիս պիտի վերագրուի, պէտք է խոստովանիլ թէ բժիշկներու անձնուէր ճիգերուն ալ արդիւնքն եղած է։ Պաչչելլի աշխարհահռչակ բժշկապետը, Կալասսի (Galassi) դեպանատան բժիշկը, և Մուրրի (Murri) հմուտ ուսուցիչը իբրեւ գլխաւոր բժիշկներ խնամած են, և Վիչէնի դասընկերներէն Մարքիաֆավա (Marchiafava) եղբայրները և Բիչչիրիլլի (Piccirilli) նորահաս բժիշկներ իբրև հիւանդապահ իրարու փոխանակելով անընդհատ հսկած են, վայրկեանէ վայրկեան պահանջուած դարմանը հասցնելով, թէպէտ Սուրբ Հոգւոյ հիւանդանոցին (Ospedale di Santo Spirito) կրօնաւոր հիւանդապահներէն հերթակալներն ալ պակաս չեն ըրած ամէն ծառայութեանց համար։ Սակայն մարդկային խնամքներուն վրայ ասառուածային շնորհաց բարիքն ալ պէտք չէ մոռնամ յիշատակել։

Հիւանդութեան տոպնապին երկար ժամանակամիջոցը շարունակ ուշաթափութեամբ անցուցած եմ, հազիւ մերթընդմերթ գիտակցութեան վայրկեաններ ունենալով։ Լաւ կը յիշեմ գիշեր մը քնակած տունիս մէջ գտնուողներուն ձեռնտուութեամբ, նոյն թաղին Ս. Հռոդոս եկեղեցւոյ ժողովրդապետին սենեակս մտնելով զիս դարձի բերելու փորձը, որուն ելեան ի վեր պռաց թէ դիակի հոտին վազող ագռաւներ են, և մարդը հապճեպով յուսակտուր մեկնեցաւ։ Հանրմեանի հատնելէն առաջ տեղի ունեցած էր այդ միջադէպը։

Ապրիլ 21|3 մայիսին բժիշկներ վտանգը անցուցած ըլլալ վճռեցին, և ապաքինութեան խնամքներու ձեռնարկեցին, և տրկարութիւնս զօրացնելու և կազդուրելու միջոցները կարգադրեցին, որ բարեբախտաբար արագ և լաւ ընթացք ունեցաւ, այնպէս որ երեք շաբաթէն մայիս 13|25ին կրցայ առաջին անգամ տունէ ելլալ, և կառքով համառօտ պտոյտ մը ընել։ Հանրմեան ալ, որ Հռոմի գործերը ստանձնելէ կը խորշէր, կրցաւ վստահորէն մայիս 18|30ին Հռոմէ մեկնիլ Կ. Պոլիս դառնալու համար։ Իմ առաջին այցելութիւնս դեսպանատուն ըրի Գարութէոտորի էֆ.ի շնորհակալութեան, որ բոլոր հիւանդութեանս միջոցին

պաշտօնականէ և բարեկամականէ շատ վեր՝ եղբայրական հըսկողութիւն և հոգացողութիւն ունեցած էր իմ վրայ։ Զմոռնամ յիշել Երուանդ Ասկան երիտասարդը, Յակոբ Ասկան ուսուցիչի որդին և անդրիապործութեան ուսանողը, զոր հայրը իմ խնամոց յանձնած էր և ինձի հետ բնակակից էր, և մտադիր կատարեց տնեցիի պարտքը անձնուէր եւ սիրայորդոր զգացումով։

Իբրև բժշկական առած կը զրուցուի, թէ ուղեղային թաղանթատապէ հազարէ մէկը հապիւ կ'ազատի, և ազատուողն ալ առանց մէկ թերութեան չ'ըլլար։ Այդ նպատակով բժիշկներ խըստիւ ապսպրեցին գոնէ երեք ամիս որևէ մտաւոր աշխատութենէ հեռու մնալ և Հռոմի ամառնային տօթէն հեռանալ։ Վտանգաւոր հիւանդութիւնս մտահոգութիւն պատճառած էր կնքահօրս որդւոյն Յակոբ Փափազեանի, որ Լոնտրայի մէջ սեղանաւորական դրամատուն կը վարէր. ուստի հապիւ ապաքինութիւնս լըսած՝ գիս իրեն մօտ հրաւիրեց, և ես ալ սիրով ընդունեցայ, և ըստ այնմ յունիս 24/6 յուլիսին Հռոմէ մեկնեցայ հանդարտ եւ դանդաղ ուղևորութեամբ Իտալիոյ և Գաղղիոյ վրայէն Լոնտրա երթալու, բժիշկ Սանդինի (Santini) մտերիմ բարեկամի մօտ Սբէցիա (Spezia) քաղաքը հանգիստ առնելով, յունիս 24/6 յուլիսին Փարիզ հասայ, ուր ուրիշ գործ մըն ալ ունէի կատարելիք։ Զիս խնամոցներէն Հէկտոր Մարքիսֆալա Հռոմի մէջ խօսք կապած էր Գաղղիացի օրիորդի մը հետ, որ այն ատեն Գաղղիա կը գտնուէր, և պաշտօնական գործողութեանց համար օգնականի և առաջնորդի պէտքն ունէր։ Ես եղայ իրեն օգնականը. Եւտոքսիա օրիորդին ծնողաց հետ համաձայնելու համար մինչև Նորմանտիա Սէն Լօ (Saint Lo) քաղաքն ալ գացի, Փարիզի մէջ պաշտօնական ձեւակերպութիւնները կատարեցի, և ծանուցմանց պայմանաժամը անցուցնելու համար յուլիս 18/30ին Լոնտրա անցայ, ուսկից յուլիս 24/5 օգոստոսին դարձեալ Փարիզ դարձայ և քաղաքական ու եկեղեցական պսակադրութեանց արարողութիւնները լրացուցի, իբրեւ վկայ և իբրեւ կնքահայր կենալով։ Ես նորէն Լոնտրա անցայ, Մարքիսֆալա փուեթաց Հռոմ դառնալ պաշտօնին բերմամբ, իսկ նորապսակ հարսը պարտաւորուեցաւ Գաղղիա մնալ ընտանեկան կարգադրութեանց համար։ Ընդամէնն ամիսի մը չափ Լոնտրա մնացի Յակոբ Փափազեանի հիւր, և բարեբախտաբար շարունակ պայծառ օդ ու-

նենալով, քաղաքն ու շրջականները շրջեցայ մինչև Պրայթըն (Brighton), բայց Մանչեսթըր (Manchester) այցելելու առիթ չունեցայ։

Փարիզ եղած ատենս հանդիպեցայ Կէօչէեան դրամատան վարիչ Գէորգ Սամանճեանի, որ եւրոպական շրջագայութեան ելած էր, և իբր իրեն բարեկամի առաջարկեց միասին կատարել մնացեալ շրջանը և գլխաւորապէս Իտալիոյ պտոյտը, և օր և ժամ որոշեցինք Գերմանիոյ Գոլոնիա (Koln) քաղաքը իրար գտնել։ Համաձայն այդ ժամադրութեան Լոնտրայէ մեկնելով Օսթանտի (Ostende) ճանպով Պրիւքսէլ (Bruxelles) հասայ օգոստոս 11|23ին, անկէ ալ Գոլոնիա եկայ, ուր բարեբախտաբար երկրագործական և արհեստական արուեստահանդէսի մը բացման հանդիպեցանք, և գահաժառանգ Փրէդէրիկոս իշխանին նախագահութեամբ կատարուած հանդէսին ալ ներկայ ըլլալու կերպը գտանք։

Հոսմ եղած ատենէս յարաբերութեան մտած էի Գերմանիոյ Հին Կաթոլիկաց (Altkatolicaen) հետ, որ Հակահատունեանց նման պապութեան հնարած նորութիւններուն և Վատիկանեան ժողովով վճռուած անսխալականութեան դէմ եղած էին, և եթէ Կ. Պոլսոյ մէջ վարանմանց մատնուած չըլլային, անոնց եպիսկոպոսին ձեռնադրութիւնն ալ մեր կողմէ կատարուած պիտի ըլլար։ Օգոստոս 14|26ին յատկապէս Պոն (Bonn) քաղաք երթալով տեսակցութիւն ունեցայ Ռայնքէնս (Reinkens) եպիսկոպոսին հետ, որ Հոլանտիոյ Յանսենեաններէն (Jansenistes) առած էր իւր ձեռնադրութիւնը։ Նոյն տեղ հանդիպեցան Հին Կաթոլիկաց գլխաւորներէն ուրիշներ ալ։

Իսկ Սամանճեանի հետ ուղեւորութիւններս շարունակելով Հռենոսի ընթացքը կատարեցինք նաւակութեամբ մինչև Շթրազպուրկ (Strassburg), և Պալ (Passel) քաղաքէն Հելուետիա մըտնելով Զիւրիխ և Պերն (Zurich, Bern) քաղաքները այցելեցինք, օգոստոս 20|1 սեպտեմբերին Ռիկի (Rigi) գեղահայեաց լեռան գագաթը բարձրացանք, և միւս կողմէն իջնելով մինչև Ժընէվ (Genève) եկանք, գիծին վրայ գտնուող քաղաքները հանգիստ առնելով։ Երբ կը պատրաստուէինք Իտալիա մտնել, ստիպողական հեռագիրներով Սամանճեան Կ. Պոլիս կոչուեցաւ, հանրային պարտքին տակոսին վճարման դադարումը հրամայող կայսերական

որոշմամբ դրամական հրապարակին վրայ ծագած չփոթութեան երեսէն։ Սամանճեան հարկադրուեցաւ համակերպիլ. ուստի ա-բաց ընթացքով որոշեց ժընէվէ Վիէննա անցնիլ, և ուզեց որ ես ալ մինչև հոն ընկերանամ, ուր հասանք օգոստոս 25|6 սեպտեմ-բերին. ինքն Կ. Պոլսոյ ճանապան չարունակեց, իսկ ես քանի մի օր եւս Վիէննա անցուցի։

Այն օրեր Վիէննա կը գտնուէր Հասունեան, որ 1872 յուլիս 9|21ին օսմանեան կառավարութեան հրամանով Կ. Պոլիսէ հեռաց-ուած էր։ Իմ Վիէննա հասնիլս լսելով և զիս իրեն չահելու դիտումով յատուկ հրաւէր կը ղրկէ, որուն մերժողական պատասխան կուտամ իրեն հետ գործ մը չունենալով։ Բայց երբ Վիէննայի Մխիթար-եանց աբբահայր Պօղոսեան Յակոբոս արքեպիսկոպոսը անձամբ կուգայ հրաւէրը կրկնել և վախնալու պատճառ չունենալս վըս-տահացնել, կը հաւանիմ երթալ թէ՛ թախանձանքին զիջանելով և թէ՛ վախցող չերեւնալու համար։ Տեսակցութիւնիս տեղի ու-նեցաւ օգոստոս 27|8 սեպտեմբերին Մխիթարեանց վանքը, ուր Հասունեան իջեւանած էր։ Խօսակցութիւնիս բաւական երկար եղաւ։ Հասունեան երկու կէտերու վրայ աւելի կը պնդէր. մէկը թէ կրած հիւանդութենէս ետքը այեւս աշխատողի կեանք ունե-նալ չկրնալուս համար, ինքն կը խոստանար զիս անաշխատ եւ հանգիստ ապրեցնել, և միւսը՝ թէ Աստուած ինծի խնայած և զիս մահուանէ ազատած էր որպէսզի դարձի և զղջումի ատեն ունե-նամ։ Իմ պատասխաններս կտրուկ եղան. առաջինին մասին՝ թէ կը նախընտրեմ աշխատողի և արդիւնաւոր համառօտ կեանք ու-նենալ, քան թէ անգործ և ապարդիւն երկար ապրիլ։ Երկրորդ կէտի մասին ալ պատասխանեցի, թէ մահը մօտէն տեսայ անվըր-դով խիղճով, և Աստուծոյ կեանքս պահելուն շնորհը կ'ընդունիմ իբրև միջոց, որպէսզի ձեռնարկած գործս և սկսած ուղղութիւնս կարենամ ի գլուխ հանել։ Այս պատասխաններս Հասունեանը յու-սախաբ թողուցին, և խօսակցութիւնը անուշ տեղը կապելով վեր-ջացուց, և մեկնեցայ։

Մէկ քանի օր Վիէննա մնալով ուղեւորեցայ Պավարիոյ Միւ-նիխ (Munich) մայրաքաղաքը, ուր կ'ուզէի տեսակցութիւն ու-նենալ Հին Կաթոլիկաց պետերուն, Տէօլլինկէրի և Ֆրիտրիխի հետ (Dollinger, Friedrich), ուստի յատկապէս այցելեցի Կմոնտըն և Թէժըրնսէէ գիւղերը (Gmunden, Tegernsee), ուր օդափո-

խութեան կը գտնուէին, և հետաքրքրական տեսակցութիւններ ունեցայ օգոստոս 30|11 սեպտեմբերին։

Ցիշեցի թէ նորապատակ հարսը Գաղղիա մնացած էր. անոր ալ առաջնորդել խոստացած էի, ուստի ժամադրութեամբ և պատշաճ ընկերակցութեամբ նա ալ եկաւ Գաղղիոյ սահմանագլուխը, ուսկից միասին Իտալիա մտանք. Մարքիսֆավա ալ դիմաւորելու եկաւ մինչև Թէրնի (Terni) քաղաքը, և այնպէս Հռոմ հասանք սեպտեմբեր 4|16ին։

Յունիս 20|2 յուլիսին Հռոմէ մեկնած ըլլալով երկուքուկէս ամսուան հաճելի և առողջարար ուղեւորութիւն մը կատարած եղայ, Փափազեան և Սամանճեան բարեկամաց շնորհիւ դիւրութիւններ ալ վայելելով։ Ամէն զբաղում դադրեցուցած էի այդ միջոցին, մինչև իսկ լրագիր կարդալէ զգուշանալով, և միայն Պէտէքէր (Baedeker) ուղեցոյցներու ընթերցմամբ բաւականանալով, գացած տեղերս ճանչնալու և երթալիք տեղերս առաջնորդուելու համար։ Դառնալէս ետքը օրինաւոր բժշկական քննութենէ անցնելով ըստ ամենայնի ապաքինած և կազդուրուած ըլլալուս վրայ տոհութիւնը ստացայ, և որեւիցէ թերութեան նշոյլը վրաս չը գտնուելուն ապահովութիւնը ունեցայ։ Իրօք ալ 1875էն ցայսօր անցուցած քառասունեակու տարուան պաշտօնական և անպաշտօն կեանքս չչափելի հաստատութիւնն է այդ համոզման։

ԼԱ

Դամասկոս, 1917 դեկտ. 26|8 յունուար 1918 Գշ.

Հռոմ դառնալով և առողջութեանս վատահութեամբ դարձեալ ձեռնարկեցի հիւանդութենէս առաջ կատարած աշխատութիւններուս, յետամնաց գործերը լրացնելով, և նոր յանձնարարութիւն մըն ալ հետապնդելով։ Միսքանութեան աբբահայրն ու ժողովը նկատելով որ այլևս Հռոմայ վանքը վերահաստատելը նպատակէ զուրկ և միջոցներէ թերի մտածմունք մըն է, միւս

կողմէն ալ վերջին պատահարներուն պատճառով միաբանութիւնը ծանրածանր պարտքերու ներքև ինկած է, կ'որոշէ վանքը վաճառել շահաւոր պայմաններով, պարտքերէ ազատիլ և Կ. Պոլսոյ մէջ հաստատուիլը դիւրացնել։ Այդ էր նոր աշխատութիւնը որ ինծի կը յանձնարարուէր. օրինաւոր վաճառման պայմանները ճշդել և պատրաստել, և շահաւոր վաճառման հետապնդումները կատարել։ Համաձայն հրահանգին կամ հրամանին սկսայ այդ նոր ձեռնարկին, որ, ինչպէս յայտնի է, մէկ օրէ միւս օր լրանալու գործ մը չէր, և պաշտօնական և մանաւանդ անպաշտօն կերպեր ձեռք առնելու էր, հաւանական ելքը Կ. Պոլիս հաղորդել և վերջնական որոշութիւնը ստանալ, պատասխանատուութենէ զերծ մնալու համար։

Անցողաբար յիշեմ այս միջոցին պատահած երկու մահեր, որ իմ վրաս մեծ տպաւորութիւն գործած են։ Մէկն է Լիպորիոյ Ռուպինօ ուսուցչին մահը, առաջին աշակերտութեանս դասատուին, որ ծերացեալ տարիքին մէջ ստամոքսի քաղցկեղով երկար տառապեցաւ, և ինծի պարտք սեպեցի խնամ տանիլ անոր իւր անօգնական վիճակին մէջ։ Մահը տեղի ունեցաւ 1875 հոկտ. 14|26ին։ Միւսն է Տիկին Ատէլէ Թիթթոնիի (Tittoni) մահը, Յովհաննէս Թիթթոնիի ամուսին և Փիլիքս Սանթինի բժիշկին քոյր։ Երկար տարիներ իրարու սիրահարուած մնալէն ետքը, պատկէն տարիէ մը կը մեռնէր կինը, և ամուսինը շուարեալ և խելայեղեալ՝ Հռոմի մօտ ունեցած ագարակին մէջ կը փակուէր, և ոչ ոքի կը ներէր իրեն մօտենալ, կրօնքի և անդրշիրիմեան կեանքի վրայ ալ թերահաւատութեամբ տոգնապուած։ Ատէլէի մահը տեղի ունեցած էր 1876 փետր. 5|17ին։ Սանթինի և ազգակիցք ու մերձաւորք ինծի կը դիմեն Թիթթոնիին երթալ, յուսալով որ գոնէ պատկառելով՝ ընդունի և հնար ըլլայ զայն իւր առանձնութենէն հանել։ Բարեկամութիւնը զիս կը ստիպէր եւ կ'երթամ. իրօք ալ նա չի կրնար մերժել. հետը կը գիշերեմ, եւ ճարտար ու իմաստասիրական խօսակցութիւններով կը յաջողիմ զինքը մեղմացնել, յաջորդ օրը միասին կը տանիմ գերեզմանատուն, գետնադամբանին մէջ պետեղուած դագաղին այցելութեան, և անկէ տունը կը բերեմ և կը յանձնեմ, բոլոր իրեններուն ուրախութեամբ։

Միւս կողմէն վանքին վաճառման գործին կը հետևէի, զա-

նոզան առաջարկներ կը քննէի, առաւելագոյն գին գանալու կ'աշխատէի, նօտարական պահանջները կը լրացնէի, և արդիւնքը Կ. Պոլիս կը հաղորդէի, ուսկից վերջնական արտօնութիւնը հասաւ, գործը փութացնելու համար գանուածով գոհանալու հիմամբ։ Ըստ այսմ 1876 ապրիլ 6|18ին վաճառման մուրհակը պաշտօնապէս ստորագրեցի։ Օրինաւորութեան մեծ մասը կանուխէն լրացած էր վանքին գրաւումէ ազատուելովը և ազատ սեփականութիւն հռչակուելովը. վաճառուածն էր վանքին ամբողջ շէնքը յարակից բանջարանոցով և այգիով, երկու պարտէզներով և վազուկ ջրով. գինն էր հարիւր հազար իտալական լիրա որ է ֆրանք, ամէն ծախքէ ազատ, և գնողն էր գրամատէր Բասքուչչի (Pascucci), որ Մոլինայի ծանօթ և բարեկամ ըլլալով՝ հաստատուած ապարանը թողուց որ չարունակէ։ Տարիներ ետքը գնողը կրկին վաճառած է Ճգնողական Օգոստինեանց (Agostiniani Romitani) միաբանութեան անհատական անունով, որոնք իրենց Ս. Օգոստինոսի վանքը գրաւուելէն ետքը հոն հաստատած են իրենց կեդրոնը, և այնպէս ալ կը մնան մինչև այսօր։

Վանքին վաճառման իմ պաշտօնս ալ լրացած ըլլալով, Կ. Պոլիս դառնալու պատրաստութեանց սկսայ, և ապրիլ 30|12 մայիսին Հռոմէ մեկնեցայ, միւս օր մայիս 1|13ին Մոնթէգասինոյի (Montw-cassino) Բենեդիկտեանց մայրավանքը այցելեցի, եւ Նէապոլիսէ նաւելով մայիս 7|19ին Կ. Պոլիս հասայ։ Հռոմ հասած էի 1871 ապրիլ 29|11 մայիսին, և 1876 ապրիլ 30|12 մայիսին մեկնելով ճիշդ հինգ տարի Հռոմ մնացած կ'ըլլայի այս անգամ։ Իտալիայէն վերջին մեկնելս եղաւ այս որ՝ 1851էն հաչուելով՝ քսանըհինգ տարի ըսել կ'ըլլայ. սակայն 1866էն 1867, և 1868էն 1869, եւ 1870էն 1871 Կ. Պոլիս անցուցած միջոցներս զեղչելով, քսաներկու տարի Իտալիա անցուցած կ'ըլլամ, որ կը բաւէր իտալացի գրուելու՝ եթէ հպատակութիւն փոխել միտքէս անցած ըլլար։ Բայց Իտալիոյ հետ յարաբերութիւնս չպակսեցաւ և էթթորէ Մարքիաֆաւա և Ճէնիչէ Սանթինի բժիշկներու, եւ այժմ ծերակուտականներու հետ թղթակցութիւնս մինչև վերջին տարիներ չարունակուած է, և միայն պատերազմի պատճառով յարաբերութեանց դադրելովը ընդհատուած։

Մայիս 7|19 ուրբաթ օր Կ. Պոլիս հասնելով, յաջորդ շաբաթ օր 8|20ին նորէն եկեղեցական սքեմը զգեցայ, և 9|21ին

կիրակի օր պատարագեցի, հինգ տարիներ դադարելէն ետքը։ Իսկ ամէնօրեայ պատարագի մատուցման սովորութիւնը կանուխէն ալ թողած էի։

LP

Դամասկոս, 1917 դեկտ. 27/9 յունուար 1918 Դշ.

Երբոր Հռոմի վանքին վաճառման որոշումը կը տրուի, Գազանճեան աբբահայր իւր պահանջներուն վրայ կը սկսի խօսիլ, իւր անունով կնքած փոխառութիւնները կը յիշէ, զանազան առիթներով եղած բացառիկ ծախքերը առաջ կը բերէ, և երեք չորս հազար օսմանեան ոսկւոյ գումար մը պահանջք կը ցուցնէ միաբանական անտուկէն։ Միաբաններու մէջ դիտողութիւններ կը սկսին, յիշուած կէտերէն քանիներ չփոթ կ'երևին, գումարներ բարդուած կը կարծուին, և մանաւանդ աչքի կը զարնեն տնական կեանքին մէջ տեսնուած անխորհուրդ ծախքերը։ Այս տեսութեանց հետևանքով, Հայր Պօղոս Պօյնուէյրիեան Խորհրդականաց ժողովին կողմէ ազդարարած էր ինծի Հռոմ եղած ատենս, վանքին վաճառումէն գոյացած գումարը աբբահօր անունին չփոխանցել, այլ իմ անունով միասին բերել։ Ես ալ ըստ այսմ բոլորը ինծի վճարելի փոխգիրներու վերածած էի։ Կ. Պոլիս հասնելէս ետքը երկկողմանի ատիպումներ սկսան վրաս, աբբահօր կողմէն՝ գումարը յանձնելու, և միաբանութեան կողմէն՝ չյանձնելու համար, որով պարտաւորուեցայ ճարտար փաստաբաններու դիմել, նոյն իսկ աբբահօր բացարձակ հրամաններուն հանդէպ։ Գործը վերջապէս սկսաւ պաշտօնապէս խօսուիլ, խորհրդակցութեանց նիւթ ըլլալ, և կանոնաւոր համարատուութեան պէտքը շեշտուեցաւ։ Այս միջադէպներ ամիս մը տևեցին, նոյն օրեր տեղի ունեցած քաղաքական դէպքերուն ալ պատճառով, զի մայիս 18/30ին էր որ Ապտիւլազիզ կայսր գահազուրկ եղաւ և Մուրատ Ե. կայսր անոր տեղ բարձրացաւ։

Բանակցութիւններով տեսնուեցաւ որ Գազանճեան կանո-

նաւոր հաշիւ չկրնար ներկայել, ուստի յունիս 12|24ին Միաբանական ժողովով որոշուեցաւ վերջին ժամանակամիջոցին մայր հաշիւը կազմել, աբբահօր և Կ. Պոլսոյ և Հռոմի և Լիբանանի հաշիւները միացնել, և կացութիւնը ճշդել, և ըստ այնմ գործածել պատրաստ գումարը, որ միշտ իմ անունով կը մնար։ Երկու կողմերու առաջարկութեամբ և համաձայնութեամբ հաշուեքննիչի պաշտօնն ալ ինծի յանձնուեցաւ, Խորհրդականաց ժողովին քարտուղարի անունի ներքև, և Հ. Մեսրոպ Սարգեարեանն ու Հ. Եղիա Փիլճեան օգնական և ընկերակից տալով։ Երկար և տաժանելի աշխատութիւն մըն էր յանձնուածը. Գազանճեան հատուկտոր տետրեր և թերթեր միայն ունէր, վանքերու հաշիւներ իրարմէ անկախ էին, և հարկ եղաւ նորէն մայր տոմար մը բանալ, վանական հաշիւները իրարու միացնել, զրկուած գումարները ընդունուածներով բաղդատել, ծախքերու որակն ու քանակը զննութեան ենթարկել, և ընդհանուր ելմտական կացութիւնը երևան հանել։ Շատ անգամ բերանացի բացատրութիւններ քաղելու պէտքն ալ զգալի եղաւ։ Իբր երկու ամիս տևեց այս աշխատութիւնը, որուն հետևանքը Գազանճեանի ձախող եղաւ, վի մինչ նա երեք հազար ոսկիէ աւելի պահանջ ունենալը կը կարծէր, երկու հազարի մօտ գումարի պարտապան տեսնուեցաւ, իւր անձնական և տնական ծախքերը միաբանական հաշիւին խառնել ներեալ չըլլալով։

Գործին պաշտօնական ձև տալու և պատրաստուած հաշիւը զննելու և հաստատելու համար Միաբանական Ընդհ. ժողով գումարուեցաւ սեպտ. 1|13ին, որուն ատենապետ ընտրուեցայ, եւ պատրաստուած հաշիւը նոյնութեամբ հաստատուեցաւ, և Գազանճեան ստիպուեցաւ աբբահայրութենէն հրաժարիլ, որ անհակառակ ընդունուեցաւ, և Հ. Ռափայէլ Միասէրեան յաջորդ ընտրուեցաւ։ Խորհրդականաց կամ Խնամատարաց Տնօրէն ժողովը ալ վերակազմուեցաւ և չորս անդամներէն մին ես ընտրուեցայ սեպտ. 10|23ի նիստին մէջ, և պաշտօններու բաշխման ատեն միաբանութեան ընդհանուր համարակալ կամ ելևմտից տեսուչ նշանակուեցայ, և պարտքերու վճարման և պատրաստ գումարին կիրառութեան գործունները վրաս մնացին։

Գործոց ընթացքը կը ցուցնէ թէ կատարեալ վստահութեան առարկայ եղած էի ամենուն կողմէ, հակառակ որ ինքնօրէն մա-

BnF
L&A

տակարարութիւն մը վարած էի Հռոմի մէջ։ Գազանճեան ալ այդ վստահութեան հետ զիս իրեն անձնապէս հաւատարիմ կ'ընդունէր՝ երբոր իր հաշիւներուն քննութիւնը ինծի յանձնելու կը համաձայնէր. սակայն ես չէի կրնար ընդհանուրին շահը մասնաւորին բարեկամութեան զոհել, և կազմուած հաշիւին օրինաւորութեան ինքն ալ չկրնալով դիմադրութիւն յայտնել, թէպէտ վշտացաւ, բայց սիրալիր յարաբերութիւնը ինծի հետ չխզեց։ Միաբանութիւնը բաւականացաւ Գազանճեանի եկեղեցական զարդերէն և արժէքաւոր գոյքերէն ինչ ինչ պահել, և պարտքին վճարումը չպնդեց, զի ծախսուած գումար էր և պատրաստ դրամ չունէր։

Անցաւոր միջադէպ մը կը ցուցնէ թէ ինձ հանդէպ վստահութիւնը միաբանութենէ դուրս հասարակութեան կողմէն ալ կը վկայուէր։ Պոլսոյ Գրիգորեան կաթողիկոս չորս եպիսկոպոսներու ձեռնադրութենէ ետքը՝ հինգերորդ մըն ալ ձեռնադրած էր իբր Տիարպէքիրի թեմակալութեամբ իրեն յաջորդ, Քիւրէղեան Յովհան եպիսկոպոսը։ Օսմանեան կառավարութիւնը երբոր Հասունեանի պատրիարքական հրովարտակը ջնջեց, հասարակութիւնը նոր ընտրութեան հրաւիրեց, և Գազանճեան կը յուսար ինքն ընտրուիլ, սակայն հասարակութեան մէջ կողմնակցութիւններ սկսած էին, և էնֆիյէճեան Գրիգոր վարդապետի գլխաւորութեամբ Գազանճեանի և Անտոնեանց դէմ հոսանք մը սկսած էր, որ և յաջողած էր 1872 մայիս 9/21ի ընդհանուր քուէարկութեան մէջ Յովհան Քիւրէղեանը ընտրել տալ, որուն մեծ արդիւնքը էնֆիյէճեանի գործիք ըլլալը պիտի ըլլար, որուն Տիարպէքիրցի հայրենակիցն ու Զմմառեան միաբանակիցը ու յայտնի բարեկամն էր։ Սակայն Քիւրէղեան տկարութիւն ալ ունէր, և ստանձնած պաշտօնին ո՛չ հոգն և ո՛չ հոգին ունէր, և թոյլ ու անգոյն ընթացքով կասկածելի դարձած էր։ Այդ ձախող զգացումը օրըստօրէ ուճած և տարածուած էր երբոր ես 1876ին Կ. Պոլիս կը դառնայի։ Հասարակութեան Ընդհ. Ժողովը յայտնապէս ալ այդ տեսութիւնները իւրացուցած էր, և դառնալէս քիչ ետքը յունիս 24/6 յուլիսի նիստին մէջ անակնկալ որոշմամբ մը Քիւրէղեան պաշտօնէն կը հրաժարեցնէ, և զիս պատրիարքական տեղապահ կը նշանակէ։ Սակայն հազիւ ժողովի արտէն դուրս կ'ելլան, կը լսեն Հասունեանի նոյն օր Կ. Պոլիս հասնիլը կառավարական արտօ-

նութեամբ, և տրուած որոշումը անգործ և ապարդիւն կը մնայ, զի պատրիարքական աթոռին պարապութեան պարագայն վնասակար կը դառնար։

Ասոր հետ մէկտեղ հասարակութեան պաշտօնական գործերու մէջ դեր ունենալէ ետև չմնացի։ Երբոր Հակահասունեանց գործերը հետզհետէ կը տկարանային, եկեղեցականներ խորհրդակցական ժողովի իմբուեցան 1876 դեկտեմբեր 22|3 յունուար 1877ին, Գործադիր Յանձնաժողով մը ընտրեցին, որուն անդամներէն մին և տեղեկաբերը ես նշանակուեցայ։ Երբոր Ընդհ. Ժողովը վերակազմուեցաւ 1877 յունուար 25|6 փետրուարին, դարձեալ եկեղեցական երեսփոխան ընտրուեցայ։ Նորընտիր վարչութիւնը պատրիարքական գործունէութեան կարգուսարք տալու համար, մարտ 17|29ին զիս պաշտօնի կոչեց իբրև վարչութեան ատենադպիր, պատրիարքարանի դիւանապետ և ընդհ. համարակալ, իսկ ապրիլ 19|1 մայիսին Ուսումնական Խորհրդոյ անդամ անուանեց, Միքայէլ Փորթուգալեան եւ Թոմաս Թերզեան եւ Գրիգոր Կէօչէեան ծանօթ բանասէրներու հետ։

Միեւնոյն ատեն միաբանական չրջանակին մէջ ալ վերև յիշուած պաշտօններէն զատ, զանազան յանձնարարութիւններ ընտանձնեցի։ Հռոմէ յղուած տպագիր և գրչագիր մատեանները ուդիւանական գրութիւնները տակաւին օրինաւոր կեանքեղում եւ ցուցակագրութիւն ստացած չէին, եւ 1876 յուլիս 27|8 օգոստոսին ինձ յանձնուեցաւ մատենադարանը կազմել երիտասարդ միաբաններէն աշխատակիցներ առնելով։ Գազանճեան աբբահայր կանուխէն սկսած էր Հնդկաստանի ամտէրունչ ժառանգութիւններէն Հօճա Ղազարի դրամագլուխին վայելումը հայկաթոլիկ ընտանիքի մը սեփականելու աշխատիլ, Անտոնեանց դիւանի հին գրութիւններէն փաստեր քաղելով։ Այդ գործին աշխատակցութեան ալ հրաւիրուեցայ, դիւանական փաստերը խուզարկելու, թարգմանելու և շարակարգելու, և անոնց համեմատ տեղեկագիրներ պատրաստելու, և Նիսիմ Գասթրո (De Castro) փաստաբանին հետ խորհրդակցելու և բանակցելու. այդ գործին ալ ձեռնարկեցի 1876 օգոստոս 10|22ին։ Անտոնեան վարժարանի հրկիզումէն ետքը նոր մը բանալու գաղափարը շարունակած էր Անտոնեանց միտքին մէջ, և զանազան փորձերէ ետքը որոշուեցաւ օրիորդաց վարժարան մը բանալ Բերա, Լալէ փողոցի Համազ-

գեաց Ընկերութեան շէնքին մէջ, և գործադրութիւնը յանձնուեցաւ Հ. Յովհաննէս Ծաղիկեանի և ինծի 1878 մայիս 8/20ին, եւ պէտք եղած պատրաստութիւնները լրացնելով վարժարանը բացինք սեպտեմբեր 1/13ին, և վարեցինք իբրև տեսչակից ընկերներ և ես դասատուութիւններ ալ ստանձնեցի։

Այդ միջոցին պատահած նշանաւոր դէպքերէն իբր յիշատակ աւելցնեմ 1876 օգոստոս 19/31 Ապտիւլհամիտ կայսեր գահակալելը իւր եղբօրը Մուրատ Ե.ի տեղ, որ մտային հիւանդութեան ենթարկեալ վճռուեցաւ։ Յիշեմ նաև 1876 հոկտեմբեր 3/15 Խուրտաճեան Գրիգորի որդին՝ յունիս 4/16ին ծնած Արամը մկրտելս, որ առաջին կատարած մկրտութիւնս էր, իբր զի միշտ հեռու մընացած եմ ժողովրդապետական կամ ծխատիրական պաշտօններ կատարելէ։ Նոյն 1876 տարւոյ հոկտեմբեր 14/26ին վախճանեցաւ Եդուարդ Հիւրմիւզեան արքեպիսկոպոսը ի Հռոմ, որ զիս ձեռնադրողն էր եղած, և նշանաւոր տեղ մը կը գրաւէ հայկաբան գրագէտներու շարքին մէջ։ Իսկ 1878 յունուար 26/7 փետրուարին վախճանեցաւ Պիոս Թ. պապը, որ բոլոր Հռոմ գտնուած միջոցիս աթոռին վրայ եղած էր, և այս պատճառով յատուկ մտադրութիւն դարձուցած էր վրաս, և պզտիկ աստուածաբան (Teologhetto) անունով սովոր էր ողջունել։

ԼԳ

Դամասկոս, 1917 դեկտ. 29/11 յունուար 1918 Ուր.

Գրութեանս հանդիպողներուն յայտնի եղած է այլևս որ իմ հակահաստնեան խնդրիրին մասնակցիլս նախաշաւիղ մըն էր աւելի առաջ երթալու, սակայն առանց գործը գահավիժելու, այլ աստիճանաբար յառաջելու պայմանով։ Այդ էր նպատակս երբոր Հռոմ եղած ատենէս իմ հրատարակութեանցս գլխաւորները փութացած էի յղել Ներսէս Վարժապետեան պատրիարքին, որ իւր պաշտօնավարութեան առջի օրերէն հռչակ հանած էր, և Հայ Եկեղեցւոյ և Հայ Ազգի պայծառութեան անձնանուէր աշխատող

մը ճանչցուած էր։ Կ. Պոլիս դառնալէս ետքը աւելի եւս զօրացաւ այդ միտքս, տեսնելով հակահասունեան հասարակութեան անկումը. պատրիարքը ապիկար և իւր կոչման անգիտակ, կաթողիկոսը խոր և անգործ ծերութեան հասած, եկեղեցականները եսականութեամբ կուսակցութեանց բաժնուած, Գազանճեան ու Էնֆիյէճեան իրարու ընդդիմամարտ կանգնած, մեծամեծներէն ոմանք ասոր կամ անոր կոյր կողմնակից եղած, եւ ոմանք զըզուանօք հրապարակէ քաշուած, ժողովուրդը թուլցած կամ անտարբեր դարձած, և ընդհանուր հասարակութիւնը Հասունեանի դառնալովը եւ կառավարական պաշտպանութեան նուազելովը վարանման մատնուած։ Աշխատեցայ մեծամեծներէն խոհականագոյններուն՝ Յովհաննէս Զամիչեանի, Յովհաննէս Սագըզեանի, Միքայէլ Փորթուգալեանի, Կոմիտաս Բէքմէզեանի, եւ ուրիշներու իմ տեսութիւններս հաղորդել եւ գործունէութեան յորդորել, բայց մեծ ոգեւորութիւն չտեսայ. Անտոնեաններն ալ ներքին խնդիրներով զբաղած հասարակութեան գործերէն ցրտացած գտայ։ Ահա՛ թէ ինչ տեսութիւններով նպատակիս աւելի գործնական ձեւ տալ որոշեցի. Հայ Եկեղեցւոյ պատկանող ծանօթներու հետ յարաբերութիւնները չատցուցի, նորեր ունենալու հետեւեցայ, և Ներսէս պատրիարքի մօտենալու համար Յովհաննէս Մկրեան աւագերէցին միջնորդութիւնը պատրաստեցի։

Այս կէտէն կը սկսի իմ վերադարձին սկզբնաւորութիւնը, զոր արդէն գրութեանս առաջին յօդուածներուն մէջ բացատրած եմ, և աւելորդ կը սեպուէր թերևս անոր վրայ անդրադառնալս։ Սակայն այնտեղ լոկ զգացումներու տեսակէտէն խօսած ըլլալով, իսկ հիմայ կենսագրականին մտնելով, հարկ կ'ըլլայ պատմական պարագաները լրացնել. բայց եթէ ինչ ինչ կէտեր կրկնուած տեսնուին, թող անմեղադիր ըլլայ հանդիպողը. ես կանուխէն յիշեցուցի թէ կանոնաւոր գրութիւն մը չէ ներկայս այլ սիրտի գեղուած մը ինքնաբերաբար արտայայտուած, Խոհիեր ու Խօսքեր, ինչպէս որ միտքիս կը ներկայանան։ Միանգամ ընդ միշտ այդ դիտողութիւնը յայտնելէ ետքը, անցնիմ եղելութիւններ յիշատակելու։

Ներսէս պատրիարքի առաջին անգամ ներկայացայ 1877 փետրուար 11|23ին, ուրբաթ օր մը, որ ըսել է Կ. Պոլիս հասնելէս իբր ութ ամիս ետքը, և Ներսէս չուզեց որ նպատակս ան-

միջապէս գործադրեմ. հակահատուածեան հասարակութիւնը քակտելու ճանպուն մտած էր, և յոյս կար որ լաւ մտս մը Հայ Եկեղեցւոյ ծոցը դառնար, և իմ մէջերնին մնալս կրնար այդ նպատակին օգտակար ըլլալ։ Այս տեսութեամբ եւ այս հրահանգով շարունակեցի դիրքս պահել, եւ Անտոնեան միաբանութեան եւ հակահատուածեան հասարակութեան պաշտօնները վարել, ինչպէս վերև բացատրեցի, սակայն Հայոց պատրիարքարանէ ալ բոլորովին հեռու չմնացի։ Յակոբ Արշակ ձեռնարկած էր Ազգային Մատենադարան մը հիմնել Ղալաթիոյ Ս. Լուսաւորիչ եկեղեցւոյ բակին մէջ. սկսայ անոր օգնել, և այս միջոցով յարաբերութիւնները ընդարձակել։ Խորէն Նարպէյ արքեպիսկոպոս, որ Մատենադարանի Ընկերութեան կը նախագահէր, Հայկական կառուցի մը կազմութեան ձեռնարկեց եւ զիս ալ կառուցողդ նշանակեց, եւ 1877 օգոստոս 8|20ին բացման նիստին ներկայ եղայ, թէպէտ ձեռնարկը ոչ արդիւնք ունեցաւ եւ ոչ շարունակութիւն, բայց անունս սկսաւ խօսուիլ ու տարածուիլ հայկական շրջանակներու մէջ, եւ լրագիրներու ալ, գլխաւորապէս Մասիսի, խմբագրատուները կը յաճախէի, եւ յօդուած ալ կուտայի։ Այն օրերը 1878 մայիս 11|23ին Սեբերկի մէջ վախճանեցաւ Հ. Կղեմէս Սիպիլեան՝ Վիէննայի Մխիթարեաններէն, նշանաւոր հնագէտ, որ Հ. Ղուկաս Տէրտէրեանի հետ՝ Վիէննայի Մխիթարեաններէն, Հայկահատուածեանց հետ էին։ Հատուածեանք սկսան տարածել թէ Սիպիլեան վերջին պահուն զղջում յայտնած էր, ուստի միւս կողմէն որոշուեցաւ յատուկ հոգեհանգիստ կատարել, որ եւ տեղի ունեցաւ Օրթաքէօյի եկեղեցին 1878 յուլիս 18|30ին, եւ ինձ վիճակուեցաւ դամբանականը խօսիլ ազգասիրական եռանդով ոգեւորուած։ Ունկնդրութիւնը Հայերէն մեծ թիւ մը կը պարունակէր, զի Սիպիլեանի արժանիքը ընդհանուր հայութենէ գնահատուած էր։ Դամբանականը լաւ տպաւորութիւն թողուց, և այն օրէն անունս աւելի ընտանի եւ ծանօթ դարձաւ հայ շրջանակներու մէջ։ Դամբանականը Մասիսի մէջ ալ հրատարակուեցաւ, եւ արտատպութիւն ալ ունեցաւ։ Սակէ ետքն էր որ Հայոց պատրիարքարանի մէջ Ազգահամարի Յանձնաժողով մը կազմուեցաւ, նոյն օրեր սկզբնաւորած Հայկական Խնդիրին իբրեւ հիմ ծառայելու համար, եւ Ներսէս պատրիարքէ ես ալ նոյն Յանձնաժողովին անդամ անուանուեցայ։ Արդէն ալ ուղղակի եւ

անուղղակի, բանակցութեամբ եւ խորհրդակցութեամբ, ստէպ ծանօթ խնդիրին մասնակցութեան կը հրաւիրուէի Ներսէս պատրիարքէ, որուն համակրութիւնը օրըստօրէ կ'աճէր իմ վրայ։

Հայ ազգութեան հետ յարաբերութիւններու աճելուն նպաստաւոր պարագայ մը եղաւ Ազգ. Մատենադարանին վերատեսուչ անուանուիլս 1878 օգոստոս 17|29ին։ Ազգ. երեսփոխանութիւնը Ղալաթիա կը գումարուէր, եւ Մատենադարանին սրահը իբրեւ սպասելու կամ հանդստանալու սենեակ կը ծառայէր երեսփոխաններուն, ուր ես ալ ներկայ գտնուիլ կը պարտաւորուէի, և ազգային նշանաւոր դէմքերու հետ չփուելու առիթ կ'ունենայի։ Նոյն օրեր Կ. Պոլիս կը հասնէր Կարապետ Եզեանց, ռուսահայ պետական պաշտօնեայ և ծանօթ գրագէտ, որ սեպտ. 19|1 հոկտ.ին յատկապէս զիս ճանչնալու եկաւ, եւ ճարտար դարձուածներով կը հրաւիրէր Հայ Եկեղեցւոյ ծոցը լիակոյն դառնալ, և էջմիածնի Ճեմարանին տեսչութեան անուանել տալու հրապոյրն ալ կ'առաջարկէր, որով ինծի հարկ կ'ըլլար բացատրել մտադրութիւնս եւ պատրիարքի հրահանգը։

Ազգութեան եւ հայութեան շեշտուած շարժում մը կը տիրեր այն օրեր մայրաքաղաքին մէջ, որուն առիթ տուած էր ռուսութուրք պատերազմը եւ անկէ ծագում առած հայութեան ապագային ակնկալութիւնը։ Այդ կացութեան հետեւանքներէն մին ալ թաղերու մէջ լսարաններ կազմակերպելն եղաւ, ուր ծանօթ անձեր գրաւոր բանախօսութիւններ կ'արտասանէին և հայութեան մասին համարձակ կը խօսէին պատշաճից պահանջը յարգելով։ Այդ կարգին ես ալ հրաւէրներ սկսայ ունենալ, և առաջին բանախօսութիւնը ընթերցայ 1879 յունուար 8|20ին Օրթաքէօյի լսարանը, նիւթ առնելով Հայուն անցեալն ու ներկայն ու ապագայն, որ լաւ ընդունելութիւն գտաւ և Մասիսի մէջ ալ հրատարակուեցաւ։ Հետզհետէ ուրիշ բանախօսութիւններ ալ կատարեցի Հայութեան հոգին՝ Իւսկիւտար, Հայ երիտասարդութիւն՝ Սամաթիա, Հայ ազգութիւն՝ Փատրքէօյ, և Կարոս եմ՝ դարձեալ Օրթաքէօյ, միշտ շեշտեալ յաջողութեամբ, եւ խօսուածները յատուկ տեսերով հրատարակուեցան։ Հետզհետէ կ'ընդարձակուէին հայութեան հետ յարաբերութիւններս, Հակահասունեանց մի մասին կողմէ ալ մօտաւորութիւնը կը շատնար, այնպէս որ 1879 ապրիլ 2|14ին, Զատիկի պաշտօնական շնորհաւորութեանց

կարգին, կրցայ բաւական խումբի մը գլուխ Գումգաբուի պատրիարքարանը ներկայանալ, և պատրիարքին տկարութեան պատճառով ազգային ներկայացուցչութեանց հետ թափօրով Վանկայի մէջ բնակած տունը երթալ, և մեր յարգական բարեմաղթութիւնները մատուցանել Ներսէս պատրիարքին, և մեծ համակրութեամբ ընդունուիլ։ Այլեւս իմ անձնական տեսակցութիւններս Ներսէսի հետ սովորական դարձած էին, որ հաւասարապէս շարունակեցին հրաժարականի միջոցին ալ՝ Զըգսալլի իւր սեփական տունը և Պէյդօղ Աբրահամ բաշայի տրամադրած օդափոխութեան տունը։

Պատրիարքին տուած հրահանգը անձնական յարաբերութիւններով չէր վերջանար. պէտք էր հակահաւատներն քայքայել չէնքին բեկորներէն գոնէ մաս մը հայ պատրիարքարանին անցունել։ Այդ մասին հետևելէ չկասեցայ, եւ թէ՛ միաբանութեան եւ թէ՛ հասարակութեան վրայ փորձեր փորձելու ջանացի։ Միաբանութեան մասին առաջարկեցի խմբովին Հայ Եկեղեցւոյ ծոցը մտնել, եւ Ներսէս պատրիարքէ Արմաշի վանքը Անտոնեանց յանձնելու խոստումն ալ ստացայ, բայց անհնար եղաւ միաբանութիւնը համոզել։ Ոմանք հռոմէադաւանութենէ բաժնուելէ դժկամակութիւն կ'զգային, ուրիշներ տարիքներու բերմամբ փոփոխութենէ կը զգուշանային, և երիտասարդներ ծխատէր քահանայի ընթացքին սովորած հայ վարդապետի դերը վարելու համարձակութիւն չունէին, որով միաբանութեան մասին փորձերս ապարդիւն մնացին։ Գործը աւելի ընդարձակելով սկսայ մտերիմներու խորհրդակցութեամբ առաջարկել որ հակահաւատներն կամ արևելեան կաթոլիկութեան պայմանները պահելով հանդերձ հայ պատրիարքարանի իրաւասութեան ներքեւ անցնինք, այնպէս որ Բերայի Ս. Յովհան Ոսկեբերան եկեղեցւոյ թաղը բացառիկ սովորութեանց դիրք մը ունենայ։ Այդ գաղափարը կը զօրանար Հակահաւատներուն անգլուխ մնալովը, զի Յովհան Ֆիւբէլեան պատրիարքը հետզհետէ Հաւատներէ շահուելով 1879 փետր. 27|11 մարտին գիշերը գաղտնի կերպով խոյս տուած եւ Հաւատներուն մօտ ապաւինած էր, և անկէ ալ Հռոմ ուղևորած էր իւր զղջումը յայտնելու և խոստացուած պարգևը ստանալու։ Ներսէս պատրիարք եպիսկոպոսներու խորհրդակցութիւն կազմելով առաջարկը գործադրելի գտած էր, և հասարակութենէն լաւ

մաս մըն ալ պատրաստակամութիւն կը յայտնէր։ Սակայն բուռն ընդդիմութիւն սկսաւ Էնֆիյէճեանի գլխաւորութեամբ, եւ իւր հովանաւոր Յակոբ Կէօչէեանի պաշտպանութեամբ, որ գրեթէ կացութեան տէր դարձած էր միւս մեծամեծներուն հրապարակէ քաշուելովը։ Առաջարկը բաւական կարեւորութիւն ստացաւ, Երեսփոխանութեան Ընդհ. Ժողովի մէջ վիճաբանութեան նիւթ ալ եղաւ, այլ մեծամասնութիւն չստացաւ Էնֆիյէճեան-Կէօչէեան ուղղութեան բուռն ճիգերով։ Էնֆիյէճեան որ Ֆիւբէլեանի դասալքութեամբ փոխանորդի կամ տեղապահի դիրքը առած էր, հակահասունեան տկարացած հասարակութեան պատրիարք ընտրուելու գաղափարով կ'օրօրուէր, թէպէտ զայն ի գլուխ հանել չէր յաջողեր։

Այդ միջադէպերը մարաէ հոկտեմբեր ութը ամիսներ Հակահասունեանները զբաղեցուցին, թէպէտ անոնց կացութիւնը գօրացնելու տեղ հեռզնետէ աւելի տկարացուցին։

ԼԴ

Իսմանակոս, 1917 դեկտ. 29/11 յունուար 1918 Ուր-

Երբոր միջասահման առաջարկներ արդիւնք չունեցան, կը մնար բացարձակ կերպով հայ պատրիարքարանի իրաւասութեան անցնիլ, և արդիւնաւորապէս անցնելու համար հետեւող խումբ մը ունենալ։ Էնֆիյէճեանի կողմէն մինչև իսկ երեսս ի վեր զրուցուեցաւ, որ եթէ պիտի անցնիմ՝ ճանպաս բաց է, ուրիշի չը խառնուիմ։ Ասով մէկտեղ ես չդադարեցայ հետեւողներու խումբը կազմելու ջանքերէ, բայց միշտ անհաստատ կերպով, զի գաղափարին համակիրներ տեսակ տեսակ ակնածութիւններով համարձակութեան մէջ կը թերանային, և մէկ օր խոստացողներ միւս օր կը փոխուէին. հրապոյրներ, յորդորներ, վախեր, մինչև իսկ պետական զգուշաւորութիւններ շատերը կասկածներու կը մատնէին։ Յապաղման պատճառ մըն ալ Ներսէս պատրիարքի հրաժարականն էր, զի ես կը դժուարանայի իմ յայտարարութիւնս

անկէ զատ ուրիշի մը առջև կատարել, զի անոր բացակայութեան Իզմիրլեան Մատթէոս եպիսկոպոս կը նախագահէր Ազգային Վարչութեան խորհրդականի անունով։

Վերջապէս բոլոր առկախ պարագաներ կարգի մտան, Ներսէս պաշտօնի գլուխ դարձաւ, հաստատամիտ հետևողներու ստորագրութիւնները հաւաքուեցան, իբր 45 ծանօթ տեարք և իբր 30 տիկնայք. վերագարձի պաշտօնականութիւնը Գիւտիսաչի օրուան նշանակուեցաւ, և 1879 հոկտ. 28/9 նոյ.ին մեծահանդէս ժողովոյ մը կերպարանը ստացաւ, և նոյն օր ծայրագոյն վարդապետութեան աստիճանին օրհնուեցայ Ներսէս պատրիարքէ, որուն հետ ուրիշ եպիսկոպոսներ ալ գտնուեցան, և արարողութիւնը համառօտելու մասնակցեցան։

Այդ որոշման և կատարած այս վերադարձիս մասին աւելորդ չըլլայ քանի մը բացատրութեան խօսքեր աւելցնել, դաւանութեան և հաստատակութեան և միաբանութեան տեսակէտներէն։ Դաւանութեան տեսակէտէն արդէն յայտնած եմ, թէ որչափ կաթոլիկ աստուածաբանութեան խորերը մտայ, իմ վրայ ձախող տպաւորութիւն գործեցին իրենց սեփական փաստերուն տկարութիւնները, մինչև իսկ Աւետարանի վկայութեանց կամայական մեկնութիւններ տալ, և սուրբ հարց խօսքերը ստումներով և զեղչումներով և այլաբանութիւններով իրենց միտքին բռնագրօսելը։ Հետևաբար ո՛չ մի խայթ և ո՛չ մի խիղճի նեղութիւն չէի կրնար զգալ, և չզգացի անկէ բաժնուելով. ընդհակառակն գրաւիչ կը գտնէի հայ դաւանութիւնը իւր հնօրեայ եւ պահպանողական լայնամիտ և ազատախոհ սկզբունքներով։ Գալով հաստատակութենէն բաժնուելուս՝ այն հպլիւ թէ կարևորութիւն կրնար ազդել իւր հատուածական և փոքրամասն և անկեալ վիճակովը, զոր ոչ իբր նպատակ, այլ առաւել իբր ճանապարհ ըմբռնած էի։ Արդէն ալ առանց պապի պապականութիւն և առանց կաթոլիկութեան կաթոլիկութիւն պահել անհիմն կացութիւն մըն էր, որ կրնար իսկ անտեղի սեպուիլ եթէ նպատակակէտ ընդունուէր։ Իսկ իմ մեկնելով կացութիւնը աւելի տկարացուցած ըլլալ պիտի չըսեմ, զի անձնապով չըսուիմ, այլ անկայուն վիճակին պիտի վերագրեմ իւր անվրէպ քայքայումը։ Աւելի մտադրութեան արժանի էր ձեռնարկս միաբանութեան տեսակէտէն նկատուած ատեն, իբր զի ուխտադիր՝ կապ մը կար

իմ և միաբանութեան միջև։ Այդ մասին իմ սկզբունքս եղած է անդարմանելի ոչինչ ընդունիլ մարդկային գործերու և ձեռնարկներու մէջ, և հետևաբար նպատակը դադարելէն և իրականութիւնը վատնգուելէն ետքը, պարտաւորութիւնն ալ դադարած ճանչնալ։ Այս կէտերը ես նախապէս միաբանութեան և միաբանակից ընկերներուն հաղորդեցի երեք ընդարձակ նամակներով, որոնք ամբողջ պատկերացումը կը պարունակեն իմ մտայնութեան և ժամանակին իրականութեան։ Միաբանութիւնը վատնգուած, կամ իսպառ ջնջուելու և կամ պապութեան ստրուկ մարմին մը դառնալու վտանգին ենթարկուած, նիւթական միջոցներէ զրկուած, և անկարող վերանորոգելու այն դիրքը որուն մէջ ես միաբանութեան անդամակցած էի, ուստի ո՛չ մի փաստ և ո՛չ մի հարկ չէր կրնար զիս ստիպել որ իրեն աւերածին հետ աւերիմ, ո՛չ ջնջուելուն հետ ջնջուիմ և ո՛չ ստրկանալուն հետ ստրկանամ։ Միայն ինծի պարտք սեպեցի այս կէտէն դուրս եղող յանձնառութիւններուս հաւատարիմ մնալ, կուսակրօն կեանքը անտխեղծ պահել, հարստանալու չհետևիլ, և աւագութիւններ չհետապնդել։ Իմ համարձակ գրութիւններս միաբանակից ընկերներուս վրայ ազդեցին, և ո՛չ մի գժտութիւն ու ո՛չ մի ցրտութիւն ցուցին ինծի հանդէպ, և չափազանց վստահութեամբ իմ ձեռքս թողուցին իրենց հաշիւներն ու տոմարները, իրենցմէ բաժուելէս ետքն ալ, մինչև Կ. Պոլիսէ մեկնիլս։

Ուրախ եմ աւելցնել թէ բոլոր հակահաստուններն ազգայնոց հետ ալ համակրական եւ բարեկամական յարաբերութիւններս չխզուեցան։ Միայն Էնֆիյէճեան եղաւ որ քարոզի մէջ յայտարարել համարձակեցաւ, թէ ինքը իրաւանց պաշտպանութեան սկզբունքը կը յարգէ, բայց ուղիղ հաւատքէ չեղիալ չ'արդարացներ։ Այս խօսքերը Ներսէս պատրիարքն ալ գայթակղեցուցեր, և Էնֆիյէճեանի մասին կանուխէն կազմած նպաստաւոր պաղատիրը եղծանելու առիթ տուեր էին։

Վերադարձիս ուրիշ մանրամասնութեանց մասին կանուխէն գրածներս բաւական սեպելով, այդ կէտը կը փակեմ։

ԼԵ

Դաւնասկոս, 1917 դեկտ. 30/12 յունուար 1918 Թ.

Վերադարձէն երեք օր ետքը, հոկտ. 31/12 նոյ.ին Ղալաթիոյ Ս. Լուսաւորիչ եկեղեցւոյ քարոզիչ նշանակուեցայ, նոյ. 4/16ին առաջին քարոզը տուի և նոյ. 25/7 դեկտ.ին առաջին պատարագը մատուցի Ղալաթիոյ եկեղեցւոյն բոլոր բարեբարաց յիշատակին, իսկ 1880 մարտ 3/15ին ուսգերէց Յարութիւն Սերոբեանի յուղարկաւորութեան նախագահեցի, առաջին անգամ հանգուցեալ քահանայի օծումը կատարելով։ Զանազան եկեղեցիներէ քարոզի և պատարագի հրաւէրներ ունեցայ, և յատուկ ցոյցերով և հացկերոյթներով ալ պատուսիրուեցայ։ Պատրիարքարանի պաշտօն ըլլալով 1880 մարտի մէջ Վանօրէից Խորհուրդի անդամ անուանուեցայ, և ամսոյն 28/9 ապրիլին առաջին անգամ նիստին ներկայ եղայ, թէպէտ պաշտօնը չարունակելու ատեն չունեցայ։

Քարոզչական պաշտօնին գալով՝ յայտնի են անոր գործունէութիւնը և պարտաւորութիւնները, և բացատրութեանց մըտնել հարկ չեմ տեսներ։ Յայտնի են ևս Ղալաթիոյ եկեղեցւոյն Կ. Պոլսոյ մեծ ուխտատեղին ըլլալը, և հինգշաբթի օրերը ամէն թաղերէ բարեպաշտներու խռնուիլը, և կրնամ ըսել թէ աւելի ընդարձակութիւն ալ առաւ իմ պաշտօնավարութեան օրերը։ Ինչ որ իբրև նոր պարագայ մը իդէպ կը համարիմ յիշատակել, Ղալաթիոյ թաղականութեան առած նոր կազմակերպութիւնն է։ Ղալաթիոյ հայաբնակչութիւնը աննշանակ թիւ մը կազմելուն՝ առաջամեայ թաղականութիւն մը կը վարէր եկեղեցւոյն մատակարարութիւնը, որուն տիրացած էր Ղալաթիոյ Օճախ կոչուած ընդդիմադիր խմբակը Ստեփան Փափազեանի գլխաւորութեամբ, որ իբրև վարժարանի տեսուչ լաւ թոշակ կ'ստանար նուազ գործունէութեամբ, և Ղալաթիոյ թաղական խորհրդարանը իբրև պաշտօնատուն կը ծառայէր խմբակին։ Փափազեան փափաքելով

հաստատուն ձև մը տալ այդ կացութեան, Ընդհ. ժողովին առաջարկ տարած և որոշում ստացած էր Ղալաթիոյ պանդուխտներուն թաղեցիի իրաւունք տալ և ընտրութեամբ խորհուրդ կազմել, վստահելով իր և իր ընկերին Քրիստոստուրի պանդուխտներուն մէջ վայելած ժողովրդականութեան։ Այդ որոշման գործադրութիւնը ինծի վիճակեցաւ իբրև քարոզիչի. ուստի 1880 յունուարի մէջ ընտրողներու ցուցակները կազմեցի և ուրիշ նախապատրաստութիւններն ալ աւարտելով, փետրուար 3|15ին քուէարկութիւնը կատարել տուի անձամբ հսկելով։ Պանդուխտներու երկու ստուարագոյն խումբերէն Սեբաստացիք համաձայնելով՝ իրենցմէ երեքը ընտրել տալ յաջողեցան, իսկ Մշեցիք, որոնց վրայ աւելի կը վստահէր Փափազեան, իրենց մէջ պառակտելով՝ ընտրեալ չունեցան։ Ասկէ բուռն հակառակութիւն մը ընտրութիւնը եղծանել տալու, մինչ ամենայն օրինաւորութեամբ կատարուած էր, և զանազան խումբերէ ներկայացուցիչ առնել պայման չէր։ Ուստի հետապնդեցի չուտով վարչական հաստատութիւնը և պատրիարքական կոնդակը ստանալ, և լսուեցաւ ալ որ փետրուար 14|26ին, ուխտի օր և Տեառնընդառաջի տօն, կոնդակը պիտի հրատարակուի։ Ուստի Մշեցիք կ'որոշեն հրատարակուելուն դէմ դնել, և Փափազեան ալ Վոսփորէ իջնել և ցոյցին առաջնորդել կը խոստանայ։

Անոնք կը կարծէին որ պատարագի ընթերցուածին սովորական պահուն կը կատարուի հրատարակութիւնը, իսկ ես շարժումին գլուխ՝ Քառասնորդին կոնդակը կարդացի, և երբոր Մշեցիք եւ Փափազեան խմբուեցան, կատարուած իրողութեան դիմաց գտնուեցան, և զայրանալով Սեբաստացւոց դէմ՝ բռնութեան դիմեցին, և եկեղեցւոյ բակը կռիւի ասպարէզ դարձաւ, գաւազաններ և խարազաններ ալ մէջտեղ ելան։ Ցանկարծ մէջերնին նետուեցայ, սաստելով և յանդիմանելով զինաթափ ընել սկսայ, եկեղեցւոյ մէջ հաւաքուած խուռն բազմութեան վայնասունը լռեցուցի, և հետզհետէ բակին կռուարարները ցրուելու և հանդարտութիւն հաստատելու յաջողեցայ, այնպէս որ Փափազեանի ազդարարութեամբ հասնող ոստիկաններու ջոկատը անկարգութիւն չգտաւ, և հրաւէրիս վրայ իւր տեղը դարձաւ՝ Վոյվոտայի պահականոցը։ Յաջողութիւնը լրացած էր, նորընտիրին դիւանի կազմութիւնն ալ կատարել տուի, և հիմնա-

կան կարգադրութեանց ձեռնարկեցի։ Մշեցիները շուտով շահուեցան վարժարանի հոգաբարձութեամբ և եկեղեցական յանձնաժողովին անդամակցութեամբ, խորհրդարանը Օճախի խմբակին գումարմանց առջև փակուեցաւ, թաղական գործառնութեանց ձեռակերպութիւններ հաստատուեցան, վարժարանին բարեկարգութեան ձեռնարկուեցաւ, Փափազեան տեսչութենէ հանուեցաւ նոյնիսկ Մշեցի հոգաբարձուներու ձեռքով, եկեղեցին ալ նորոգութիւններ ստացաւ, և վերնատուն իսկ աւելցաւ, և որ աւելին է, Օճախի խմբակին ազդեցութիւնն ալ զգալապէս նըուազեցաւ։

ԼԶ

Դանասկոս, 1918 յունուար 2/15 Գշ.

Երբոր առաջին անգամ Ներսէս պատրիարքի հետ խօսք եղաւ ապագայի պաշտօնավարութեանցս մասին, յայտնեցի թէ վարչական գործերու բերմունք չունիմ և պատրաստ եմ ամէն գրական և ուսումնական պաշտօններու։ Կարծես հակառակը բաղձացած ըլլայի. վերադարձէս քիչ օր ետքը սկսան զանազան կողմերէ՝ Կարինէ, Սեբաստիայէ, Վանէ, և ուրիշ վիճակներէ զիս առաջնորդ ուզելու ձայները։ Բայց աւելի ճարտար գըտնուեցան Կարնեցիք։ Գաւառական ժողովի անդամներուն մեծամասնութիւնը, Պալլարեանի և Փաստրմաճեանի և Տէր Սգարեանի գլխաւորութեամբ, առաջնորդ Յարութիւն եպիսկոպոս Վեհապետեանի հրաժարականը ուղելու խնդրագիր կը մատուցանէ ուղղակի իրեն, և մատուցուած հրաժարականը ընդունելով զիս տեղապահ կ'ընտրէ 1880 մարտ 20/1 ապրիլին։ Ներսէս պատրիարքէ կը կոչուիմ մարտ 23/4 ապրիլին որ ընտրութիւնը կը կը հաղորդէ, սակայն եթէ միջոց մը առժամեայ առաջնորդութիւն չէր տեղապահութիւնը, լոկ նոր ընտրութեան նախագահելու համար չէր արժեր Կ. Պոլիսէ Կարին երթալ, ուստի պատրիարքին ազդարարութեան վրայ Գաւառական ժողովը ապ-

ին 2|14ին վիս առաջնորդ կ'ընտրէ, և կը պարտաւորուիմ համակերպիլ, ըսել չտալու համար թէ Վոսփորի ափերէն հեռանալ չի փափաքիր։ Ընտրութիւնը Կեդրոնական Վարչութենէն հաստատուեցաւ ապրիլ 11|23ին և հրովարտակն առնուելով, մայիս 7|19ին կոնդակը գրուեցաւ, մայիս 12|24ին ուղևորեցայ, քանի մը օր Տրապիզոն մնացի և պատարագեցի, և մայիս 29|10 յունիսին Համբարձման օրը մեծահանդէս ընդունելութեամբ Կարին մտայ։ Վերադարձի օրէն եօթն ամիս միայն անցեր էր, և ես արդէն կարևորագոյն վիճակի մը առաջնորդ կը գտնուէի։

Կարին նոր ազատած էր ռուսութուրք պատերազմին հետևանքներէն, իսկ հայութեան մէջ զարգացման եւ կազմակերպութեան տենչ մը սկսած էր, որուն հետեւանքն էր եղած հընտրեալ ոճով առաջնորդը փոխել, եւ նոր օրերու անձ մը պաշտօնի կոչել. հետեւաբար շատ բան կը սպասուէր նոր եկողէն եւ մեծ պարտաւորութիւն կը ծանրանար անոր վրայ։ Գիտակ էի այդ կացութեան եւ կ'զգայի թէ շատ բան կար դարմանելիք, եւ շատ եւս պատրաստուելիք։ Ասով մէկտեղ իբր երկու ամիս զգուշացայ հրամաններ արձակելէ, ուզելով տեղն ու դերը լաւ ուսումնասիրել, պէտքերը ճշդել եւ հնարաւորը չափել։ Ուսումնասիրութեան միջոց եղան յունիս եւ յուլիս ամիսները, եւ միայն օգոստոս 1|13ին Գաւառական ժողովին նախագահեցի, ծրագիրս պարզեցի եւ անոր պաշտօնական ընդունելութիւնը ապահովեցի։ Առաջնորդարանին փոխանորդ և դիւանադպիր հաստատեցի որ գոյութիւն չունէին, Լուսաւորչի եւ Կարմիրվանքի եւ Խաչավանքի մատակարարութեանց հոգաբարձութիւն մը կազմեցի, գործառնութեանց ձեւակերպութիւններ մտցուցի, եկեղեցւոյ ծիսակատարութեանց հսկեցի և քարոզութիւնը ժողովրդական ու գործնական ձեւի վերածեցի։ Քաղաքական ժողովը գլխաւորներէ եւ կարողագոյններէ կազմուած էր և ձեռնտու կը գտնուէր, և ատենապետը, որ հին առաջնորդին կուսակիցն ըլլալով հրաժարած էր, դարձեալ իր տեղը բերի, նախորդին պատիւը պահպանելով և ընդդիմադիրները լռեցնելով։ Այս ալ միութիւն և սէր հաստատելու ծառայեց, եւ Վեհապետեան, զոր անձամբ չէի ճանչցած, զի իմ Կ. Պոլիսէ մեկնելուս օրը նա Կ. Պոլիս էր մտած, ինքն ալ չինուելով Երուսաղէմէ շնորհաւորական կը գրէր։

Գլխաւոր գործը վարժարանականը պէտք էր ըլլար, զի եա՛լ կոչմամբ վարժապետ մըն էի։ Ուստի վարժարանաց տեսչութիւնը ուղղակի ստանձնեցի, և նոր կարգադրութիւններ կատարելու ձեռնարկեցի, աշակերտաց մաքրութենէն և ապրուստէն ու կացունիստէն սկսելով։ Վեհապետեանի օրէն նոր վարժարան մը չինուած էր եկեղեցւոյ արևելակողմը, որ դեռ աւարտած եւ գործածուած չէր. զայն լրացնելով աղջկանց վարժարանի յատկացուցի, և տեղացի վարժուհիներէն զատ Տիկին Յովսէփեանը իւր երեք օրիորդներով Կ. Պոլիսէ կոչեցի։ Իսկ Տաճար փողոցի աղջկանց վարժարանը մանկապարտէզի կամ ծաղկոցներուն գործածեցի։ Եկեղեցւոյ արևմտակողմը գտնուող Արծնեան վարժարանը դասարանական դրութեան վերածեցի՝ սերտողութեան և դասաւորութեան կրկին տեղեր ունենալու պէտքը ջնջելու համար։ Աղջկանց վարժարանին համազգեստ հաստատեցի տեղական ապրանքով, որով աշակերտաց բարոյականն ալ օգտուեցաւ. մանչերու կողմն ալ կարօտներու ընդհանուր զգեստը հոգացի, որուն կարողներն ալ հետևեցան։ Ուսման ծրագիրը բարձրացնելով հինգ շրջանի վերածեցի, իւրաքանչիւրը երկամեայ տևողութեամբ և ծաղկոց, ընտելարան, նախակրթարան, կրթարան և ուսումնարան անուններով. առաջին երեքը բոլորին համար ձրի, վերջին երկուքը բոլորին համար վճարեալ, 3 և 5 ոսկի տարեկանով։ Կարողները ազատ էին վճարել, իսկ կարօտ և միանգամայն ուշիմ և կարող աշակերտներու համար ունեւորներէն թոշակի նըւիրատուութեան ստորագրութիւններ հաւաքեցի, և իբր 300 ոսկւոյ նպաստ մը գոյացուցի, իսկ աշակերտաց արժանաւորութիւնն ու ընտրութիւնը ինծի պահեցի իբրև տեսուչի։ Իմ համոզումս եղած է որ ուսմանց անխորհուրդ ընդարձակութիւնը վընասակար է արհեստաւոր և գործաւոր դասակարգին, թէ տղան պէտք է ժամանակին արհեստի ընտելանայ, և թէ քանի մի բառերու և ութիւններու անուններով սոնքացող աշակերտներ արհեստի ու գործի, մուրճի և արօրի չեն դառնար, և ընկերութեան անգոյն են, անգործ և անօգուտ անդամներ կը դառնան։ Ուստի ձրի թոշակի վայելման անոնք միայն կ'ընդունէի, որոնք ապագայ մը կը խոստանային և իրենց վարքով և ուսմամբ օգտակար ըլլալ կը վստահացնէին։ Ընտրուածները անձամբ ալ իրենց բարեբարներուն կը ներկայացնէի և կը յանձնարարէի, որով որդե-

գրութեան և երախտագիտութեան փոխադարձ զգացումով կը կապուէին, և իրենց ապագային մէջ ալ կ'օգտուէին։ Տեղացի ուսուցիչներ բաւական կային, որոնք թէեւ թերի էին, բայց գործէ հանել ներելի չէր. ուստի դասատուներ ալ կրթելու համար դասարաններու մէջ փոփոխակի դասեր կուտայի իբրև նըմոյշ, և տօն օրեր հաւաքելով ընդհանուր հրահանգներ կ'աւանդէի։ Թաղական վարժարաններուն անբաւականութիւնը պատճառեղած էր որ ունեւոր և ուսումնասէր դասակարգէ անձեր յատուկ Ընկերական վարժարան մը հաստատեն։ Բայց երբ Թաղական վարժարանները բարեկարգուեցան, յօժարակամ հաւանեցան Ընկերականը փակել, որով Թաղականին ոյժը աւելցաւ, բարձրագոյն շրջանն ալ բացուեցաւ, և ես անոր մէջ կանոնաւոր դասատուութիւն ստանձեցի։ Այդ ձուլումը տեղի ունեցաւ 1880 հոյ. 6/18ին։ Պէտք է յիշեմ թէ վարժարանական ձեռնարկներու մէջ ինձի զօրավիգ գտնուեցան նորընտիր Ուսումնական—Վարժարանական Խորհուրդին անդամները։

Կարնոյ առաջնորդութեան պաշտօնը ծանրացնող պարագայ մը եղաւ շրջակայ առաջնորդութեանց անոր կապուիլը։ Բուն Կարնոյ վիճակը կը պարունակէր կեղրոնական գաւառը ու Թորթումը, և վերջին ատեններ յանձնուած էր նաև Սպերը, իսկ միւս գաւառներ (Գազա) ինքնուրոյն առաջնորդարաններ էին։ Դեռ Կ. Պոլիսէ չմեկնած մայիս 10/22ի պաշտօնագրով ինծի յանձնուեցաւ նաև Քղի կամ Կեղի վիճակը, սեպտ. 5/17ին Դերջանը, սեպտ. 30/12 հոկտ.ին Խնուսը՝ Մուշէն զատելով, և քիչ ետքը նաև Բասենը, որով երկու հարիւրէ աւելի եղան հայաբնակութիւն ունեցող գիւղաքաղաքները և գիւղերը և հինգ ալ փոխառաջնորդութիւնները, որոց իւրաքանչիւրին մի մի վարդապետ նշանակեցի, տեղական բոլոր հասոյթները իրենց թողլով և բնաւ մասնակցութիւն չպահանջելով։ Այդ կարգադրութիւններով մեծապէս օգտուեցան յարակից վիճակները, ոչ միայն վերին հսկողութեան ներքև մտնելով, այլև իրենց գործերուն շուտով աւարտելովը կուսակալութեան մէջ, մինչ առաջ պատրիարքարան հաղորդուելով և անկէ կուսակալութեան դառնալով աւելորդ ժամավաճառութեան կը մատնուէին։

Առաջնորդական պաշտօնավարութեան ընթացքը ծանօթ կէտ մը ըլլալուն անոր վրայ խօսիլն աւելորդ կը սեպեմ։ Միայն յի-

շատակեմ թէ իմ սկզբունքս եղաւ գործերը տեղւոյն վրայ եւ տեղական իշխանութեանց հետ աւարտել առանց կեդրոնին դիմելու, մօտէն գիտակ ըլլալով գաւառական գործոց կեդրոնին մէջ կրած ձգձգումներուն և յապաղումներուն, ոչ միայն մայրաքաղաքի գործերով զբաղուած ըլլալուն, այլև գաւառական գործերուն ներքինը թափանցել չկրնալուն պատճառով։ Հազիւ երկու երեք գործ կը յիշեմ կեդրոնին թողած ըլլալ, այն ալ ո՛չ թէ լուծում ստանալու ակնկալութեամբ, այլ անելանելի գործէ պատուով դուրս ելած ըլլալու համար։

ԼԷ

Դանսակոս, 1918 յունուար 2/15 Գշ.

Բնիկ Վանեցի այլ Կովկասի մէջ ծնած ու ապրած, գործած ու հարստացած Մկրտիչ Սարգիսեան Սանասարեանց ամուրի ազգայինը մտադրած էր իր բոլոր ստացութիւնը ազգային բարերարութեանց յատկացնել, և ասա ու անդ մանաւոր նուիրատուութիւններ ընելէ ետքը, խորհրդով եւ առաջնորդութեամբ Կարապետ Յարութիւնեան Եղեանցի, ամբողջը նուիրած էր հայաբնակ գաւառներու մէջ երկրորդական վարժարան մը հաստատելու։ Այդ նպատակով նաեւ յարմար երիտասարդներ Գերմանիա յղած էր ուսուցչութեան պատրաստուելու, որոնցմէ Սեդրաք Մանտինեանց և Փիլիպպոս Վարդանեանց աւելի յառաջադէմներ արդէն դարձած էին և ռուսահայ վարժարաններու մէջ կը պաշտօնավարէին, իսկ Պօղոս Տելփեան, Սարգիս Սողիկեան և Յովսէփ Մատաթեան տաճկահայեր և Գէորգ Սբուլեանց ռուսահայ, աւարտելու վրայ էին, և բացուելիք վարժարանին համար տրամադրելի։ Տելփեան 1880 տարւոյ մէջ տաճկահայ նահանգներ յղուած էր, քաղաքները զննելու եւ տեղեկագրելու, որպէսզի վարժարանին տեղը որոշուի։ Երբոր Կարնոյ առաջնորդութիւնս հաստատուեցաւ, այս պարագայն բաւեց որ Եղեանցի նախաձեռնութիւնը կարենայ տալ, քանի որ զիս տեսած եւ նը-

պատուաւոր գաղափար կազմած էր։ Պօղոս Տելփեան Կարին կը գտնուէր երբոր ես հասայ և վարժարանին բացման կը սպասէր, ուստի այս մասին թղթակցութիւնք ալ ակսան, և Եկեղեցի որոշումը եղաւ տեսուչի տեղ տեսչութիւն մը անուանել, իւր սահմանէն կազմուած, իմ նախագահութեան ներքև։ Միւսներէն առաջին հանողը Մատաթեան եղաւ 1881 օգոստոս 29|10 սեպտ. ին, տեղւոյ համար Մակարեանց ընդարձակ տունը վարձուեցաւ Կանայ ճանպուն կողմերը և Մատաթեան ուղևորեցաւ հարաւային գաւառները աշակերտներ ընտրելու և բերելու, և հոկտ. 7|19ին վերադարձաւ առաջին աշակերտացուներով. Կարնոյ կողմերէն ընտրուողներն ալ միացան, և վարժարանը բացուեցաւ Մակարեանց տունին մէջ, որուն կահաւորումն ալ լրացած էր։

Երբոր ուրախութեամբ կ'ողջունուէր բարեգուշակ ձեռնարկը, դժբախտ պատահար մը ուրախութիւնը կը խանգարէր, Տելփեան անակնկալ մահուամբ կը վախճանէր նոյ. 18|30ին, եւ ես ալ կը հիւանդանայի պատարագելէ և քարոզելէ ետքը, ձիւներու մէջ դերեզմանի կարգին ալ նախագահելով։ Թէպէտ պահ մը վարժարանական կարգադրութիւնք կը տկարանային, սակայն 1882 փետրուար 18|2 մարտին Սողիկեան և Աբուլեան կը հասնէին, և վարժարանի առաջին 1881 - 82 տարին կը փակուէր գոհացուցիչ չափով։ Աբուլեան ալ մայիս 4|16ին ձիէ իյնալով աչքը կը վիրաւորէր, և առաջին դարմաններէ ետքը յուլիս 10|22ին Կ. Պոլիս կը մեկնէր հիմնական բժշկութեան համար։ Սողիկեան ալ յունիս 15|26ին Խարբերդ մեկնած էր իրեններուն տեսութեան և այն կողմէ աշակերտացուներ ընտրելու համար։

Կարևորագոյն խնդիր մը կը ծագէր այն ատեն, զի մէկ դասարանով միայն բացուած վարժարանին համար վարձուած տունը անբաւական էր երկու դասարանի բարձրացող վարժարանին, և Կարնոյ մէջ այդ նպատակին բաւարարութիւն տուող յարմար տուն չէր գտնուած, և ազգային չէնք մը յատկացնել անհրաժեշտ կը դառնար։ Իմ առաջարկն էր աղջկանց Հռիփսիմեան վարժարանին յատկացուած նորաշէնը պարպել, և յանձնել դրամական փոխարինութեամբ մը. բայց առաջարկս ամենէն ընդունելութիւն չգտաւ. և գործը մինչև Ընդհ. Ժողովի առջևն ելաւ։ Ոմանք կարծելով թէ պարպապէս Սանասարեանի հաճոյ ըլլալու կ'աշխատիմ, առաջարկեցին առաջնորդարանը տրամադրել, հնթա-

դրելով թէ պիտի դժկամակիմ։ Սակայն ես իսկոյն համակերպեցայ. որոշումը տրուեցաւ, եկեղեցւոյ մօտ Տաճար փողոցի մէջ Տ. Բրուտեանի տունը վարձուեցաւ, և յուլիս 30|11 օգոստոսին առաջնորդարանը փոխադրուեցաւ, և նախկինը Սանասարեան վարժարանի յանձնուեցաւ. մանակի նորոգութիւններով ու փոփոխութիւններով վարժարանը զետեղուեցաւ, և երկրորդ տարւոյ համար պէտք եղած կահաւորման յաւելումները լրացան։

Սանասարեան վարժարանը եօթնամեայ ծրագիրով բացուեցաւ. բայց որովհետև անհնար էր օրինաւորապէս պատրաստուած աշակերտացուներ գտնել գաւառներու մէջ, հարկ եղաւ միայն մէկ դասարանով բանալ, և իւր ծրագիրով աշակերտները պատրաստել և զարգացնել, և տարուէ տարի դասարան մը ևս աւելցնել։ Ծրագիրը կազմուեցաւ Գերմանիոյ իրական վարժարաններու (Real schule) դրութեամբ, որուն պատրաստուած էին ուսուցիչները։ Հայերէնի համար նախատեսուեցան Էջմիածնի ճեմարանին շրջանաւարտները, և ըստ պահանջից ուրիշ ուսուցիչներ ալ աւելցան։ Մարմնական և առողջական նպատակին յատկացեալ սովորական մարզանքներուն աւելցաւ սառի վրայ չմշկելու վարժութիւնը, որուն կարին կը նպաստէր իւր երկարատև ու սաստիկ ձմեռովը։ Գիտական գործիքներու, ընտիր նկարներու, կարևոր մատեաններու, կենդանական հաւաքածոյներու, և հնագիտական առարկաներու թանգարաններ կազմուեցան և ճոխացան հետզհետէ, մասամբ բարերարէն նախահոգացուածներով և մասամբ տեղւոյն վրայ պատրաստուածներով։ Մեծ նպատակն էր գաւառներու մէջ օգտակար անձեր հասցնել, որոնք կարենան երկրին զարգացման ծառայել, թէ՛ ուսուցչութեամբ և թէ՛ ներքին վարչութեամբ։

Սանասարեանէ և Եզեանցէ ինծի յանձնարարուածը իրենց անձը ներկայելն էր վարժարանին հիմնարկութեան և վարչութեան և մատակարարութեան մէջ, և երեք սան-տեսուչները առանց ինծի գործ մը պիտի չկարենային կարգադրել։ Վարժարանին անտուկն ու հաշիւն ալ ինծի յանձներ էին, և իրենց հետ թղթակցութիւնը ուղղակի իմ ստորագրութեամբ կը կատարուէր։ Ինծի համար պատիւ և պարծանք սեպած եմ այդ կարևոր հաստատութեան համար հիմնադիրին և կարգադիրին օգնական գըտնուած ըլլալս։

ԼԸ

Դանդաղոս, 1918 յունուար 3/16 Դշ.

Մշոյ Ս. Կարապետի վանքը երկար ժամանակէ ի վեր հակառակութեանց և անտեղութեանց ասպարէզ եղած էր, և Խրիմեանի վանահայրութեան օրով տեղի ունեցած դժպհի պատահարները չէին դադրած Մամիկոնեան Մամբրէ եպիսկոպոսի վանահայրութեան օրով ալ, որ ժամանակով Խրիմեանի դէմ ելլողներէն էր։ Այս կացութիւնը զայրացած վիճակ առած էր 1882 տարւոյ սկիզբները, և քննիչ յղելու պէտքը զգացուելով, ինձի կը յանձնարարուէր այդ պաշտօնը Մեծ Պահոց միջոցին։ Մերձակայ տօներուն, Կարնոյ գործերուն և դժուարին եղանակին պատճառով, հաւանութիւն ըստացայ ուղևորութիւնը յապաղել։ Նոյն միջոցին Մամիկոնեան կը վախճանէր և քննչութեան պէտքը կը դադարէր, սակայն կեդրոնը կ'որոշէր Ս. Կարապետի վանքին հիմնական բարեկարգութիւն մտցնել, և քննչութեան պէտքը դադարած չէր համարեր, և Մուշ երթալու հրամանը կը կրկնէր։ Ուստի հարկ կ'ըլլար համակերպիլ, և օգոստոս 5/17ին, առաջնորդարանի տեղափոխութենէն հինգ օր ետքը, Տէր Մկրտիչեան Գալուստ ժողովականի ընկերակցութեամբ Կարինէ կը մեկնիմ, և Խնուսի գլխաւոր գիւղերը այցելելով օգոստոս 13/25ին կը հասնիմ Գլակայ Ս. Կարապետի վանքը Աբրանի ճանապարհով։ Երկու օր ետքը Վերափոխման տօնը կը կատարեմ 15/27ին, և կը ձեռնարկեմ քննչական գործողութեանց, որոնց գլխաւոր նպատակէտը պիտի ըլլար ապագայ բարեկարգ և օգտակար կացութեան մը ծրագիրը պատրաստել։

Այդ տեսութեամբ արդէն վանք հրաւիրած էի պաշտօնով կամ առանց պաշտօնի վանքէ դուրս գտնուող միաբանները, որոնք արդէն հաւաքուած էին։ Վանքին ամէն կողմերը զննելէ և սովորութեանց տեղեկանալէ ետքը, ձեռք զարկի հին արձանագրութիւնները և հաշուեմատեանները պրպտել, որպէսզի վանքին նիւթական կարողութիւնը իմացուի, և յաջողութեանց միջոցները

ճշդուին։ Իւրաքանչիւր միաբանէ իւր տեսութիւնները գրաւոր պահանջեցի և առի, խորհրդակցութեանց գումարումներ ալ բացի, և ամէն բանի տեղեկանալէ ետքը կանոնագիրի ծրագիր մը պատրաստեցի, միանգամայն ներքին գժտութեանց պատճառները լուսաբանելով միաբանները համաձայնութեան բերի, և պատրաստած ծրագիրս իրենց ալ հաղորդելով համամտութիւնն ստացայ։ Միւս կողմէն ընդարձակ տեղեկագրութեան համար պէտք եղած ատաղձն ալ հաւաքեցի, ըստ այնմ կեդրոնը հաղորդուելու համար։

Վանական ներքին բարեկարգութեան մանրամասնութեանց չմտնելու համար, որոնք ընդհանրապէս ծանօթ կէտեր են, իմ հիմնական համոզումս եղաւ թէ Ս. Կարապետ ինքն իրեն անկարող է կանոնաւոր և կատարեալ վարժարան մը պահել, և եթէ ձեռնարկէ, խեղճ և անօգուտ հաստատութիւն մը պիտի ըլլայ։ Սրդէն ծանօթ էր որ Տարօնոյ միւս վանքերը աւելի տկար էին, եթէ իւրաքանչիւրը ինքն իրեն թողուէր։ Ուստի ծրագրեցի Տարօնոյ չորս վանքերը, Գլակայ Ս. Կարապետը, Եղրդուտի Ս. Յովհաննէսը, Տիրինկատարի Ս. Առաքելը, և Կուրալու Մատնավանքը միակ վանահայրութեան վերածել, և չորսին մէջ բաշխուած միակ վարժարան հաստատել, իւրաքանչիւրին վրայ դասարանները բաժնելով, որով ամէնն ալ չէն կացութիւն կ'ունենային և մէկ կամ երկու դասարանի միայն նիւթական և ուսումնական ծախքերուն պարտաւորուած ըլլալով բեռերնին կը կը թեթևնար, իսկ աշակերտները դպրոցի դասարաններ փոխելու պէս վանքէ վանք կը փոխադրուէին մեծ արձակուրդին։ Յայտնի է որ բարձրագոյն դասարաններ Ս. Կարապետի մէջ պիտի զետեղուէին, իսկ աշակերտաց թիւը առաջիկային կրնար որոշուիլ։

Այդ ծրագիրը աւելի մօտէն ուսումնասիրելու համար օգտակար էր միւս վանքերն ալ տեսնել, ուստի մօտ ամիս մը Ս. Կարապետ մնալէ ետքը՝ սեպտեմբեր 9|21ին անտի մեկնեցայ և եկայ Ս. Յովհաննու վանքը։ Հինգ վեց օր ալ այնտեղ անցընելով կարևոր հետազօտութեանց համար, սեպտ. 15|27ին Մշոյ քաղաքը եկայ։ Պատրիարքարանէ յատուկ յանձնարարութիւն հաղած էր քննել վիճակին վերջին առաջնորդ Սլէաթճեան Գրիգորիս եպիսկոպոսի յարուցած պահանջից խնդիրը, և գաւառական անկերպարան վարչութեան կացութիւնը։ Ամիսի մը չափ ալ

Մուշ մնալ ստիպուեցայ վարչական վիճակը գննելու և ինչ ինչ առժամեայ կարգադրութիւններ ընելու, իսկ Սէֆաթճեանի պահանջներուն դժբաղդաբար չկրցայ ուժ տալ։ Միացեալ Ընկերութեան բացած վարժարաններով ալ զբաղեցայ, անոնց ընթացքն ու արդիւնքը գննելու և կարեւորը հրահանգելու, և վերջապէս հոկտ. 12/24 անցայ Ս. Սառաքելոց վանքը յորդահոս անձրեւի ներքև։ Չորս օր ալ հոն մնացի և 16/28ին մեկնելով, և Սուլուխ գիշերելով, 17/29ին եկայ Մատնավանք, ուսկից Աշտիշատ ալ բարձրացայ։ Հոկտ. 20/1 նոյ.ին Մատնավանքէն մեկնեցայ, Լիչ գիշերեցի, և միւս օր հասայ Կոփայ Ս. Դանիէլի վանքը։ Այս տեղ Արհեստասիրաց Ընկերութիւնը երկրագործական վարժարան մը բացած էր Միացեալի հսկողութեան ներքև, այլ արդէն փակուած էր վանական վարդապետներու յարուցած դժուարութեանց պատճառով։ Անոր քննութիւնն ալ ուզուած էր ինծմէ այն կողմեր գտնուիլս լսուելով։ Քանի մի օրեր ալ հոն անցուցի, հաշիւները քննեցի, գլխաւոր տեղեկութիւնները հաւաքեցի և անցայ Ալաշկերտ՝ Մալազկերտ հանդիպելով և Թութաք գիշերելով։ Ուղևորութեան այդ մասը այլևս նոր ճանապով ետ դառնալու համար էր, և այդ տաթիւ տեսակցութիւն ալ ունեցայ և պատուաւոր հիւրասիրութիւն ալ տեսայ Մալազկերտի Սօֆու և Թութաքի Ուզօ, երկու հպարապոյն քուրդ ցեղապետներու հետ։

Ալաշկերտի վիճակը մասայ Գըլըճկէտիկի ճանապով և Ռլկանի գիւղին կողմէ, և ուղիղ դիմեցի Գարաքիլիսէ աւանը, ուսկից մեկնելով հոկտ. 28/9 նոյ.ին հասայ Բագրեւանդայ Ս. Յովհաննէս վանքը, որ է Ալաշկերտի Իւչքիլիսէն, և ուր կը մնար Յովհաննէս Սատուածատուրեան արդիւնաւոր և շատ նեղութիւն կրած վանահայր-առաջնորդ վարդապետը։ Նպատակս էր մինչև Պայազիտ հասնիլ և Մասիսը տեսնել. բայց երբ 29/10ին Նպատի գագաթը բարձրացայ, և այնտեղէն մեծ ու փոքր Մասիսներու տեսարանը յստակօրէն դիտեցի, այլևս երթալու պէտք չտեսայ, զի և եղանակն ալ յառաջացած էր և ձիւները սկսած էին։ Երկու երեք օր ալ Ալաշկերտ կամ Վաղարշակերտ մնացի, Մոլլասիւլէյման և Զէոկան հանդիպեցայ, նոյեմբեր 8/20ին Հասանգալէի կամ Բասենոյ Ս. Սատուածածին վանքը գիշերեցի, և միւս օր 9/21ին Կարին հասայ Տէվէպոյնուի ճանապով, 29 օրուան բաւական աշխատալի ուղևորութենէ մը դառնալով։

Այս ճանապարհորդութեան արդիւնքներն եղան պատրիարքարանի կարևոր յանձնարարութիւնը կատարած ըլլալս, և ընդարձակ տեղեկագիրներով այդ ներքին կողմերուն կացութիւնը լուսաբանելս. միայն Ս. Կարապետի տեղեկագիրը իբր երեք հարիւր երեսէ բաղկացած ստուար գրուած մը եղաւ, վաւերագիրներու յաւելուածներով։ Միանգամայն վանքերուն և քաղաքին մէջ համերաշխութեան հիմերը հաստատեցի, և սիրով ու պատուով մեկնեցայ։ Ս. Կարապետի միաբաններ մեկնած օրս ամէնքն ալ հեծեալ հեռուած ատեննին, իրարու հետ զարմացմամբ կը կրկնէին թէ Ս. Կարապետ երբեք սիրով ու պատուով քննիչ մը ճանպայ դրած չէ։ Իսկ իմ անձնական օգուտս եղաւ՝ մօտէն տեղեկանալ ներքին կողմերու իսկական կացութեան, երկրին վիճակը իմանալ, և ժողովուրդին պէտքերը զգալ, բա՛ռնէ, շատ տխուր տպաւորութեամբ։ Երբոր Կ. Պոլիսէ Կարին եկայ, շատ խեղճ և ստորին երևցաւ ինծի քաղաքը, բայց երբ Մուշէ վերադարձայ՝ եւրոպական քաղաքի մը տպաւորութիւնն ունեցայ։ Այսչափը բաւական ըլլայ միտքս արտայայտելու։

ԼԹ

Դամասկոս, 1918 յունուար 3/16 Դշ.

Հայկական կոչուած խնդիրը ծանօթ է և նոր բացատրութեանց չի կարօտիր, միայն պէտք է նկատի առնել անոր հետզհետէ առած ձևերը և կրած տարբերութիւնները։ Ներսէս պատրիարքի սկսած ձեռնարկը կրնանք անոր երկրորդ կերպարանը սեպել, առաջին համարելով Խրիմեան պատրիարքի օրով սկսած հարբատահարութեանց խնդիրը, օսմանեան կառավարութեան ձեռքով ներքին գաւառներու հայաբնակութեանց վիճակը բարւոքելու համար։ Նոյն փորձը Ներսէսի առաջին տարիներու մէջ ալ կրկնուած էր, և արդիւնք ունեցած չէր։ Այս առաջին կերպարանին յաջորդեց երկրորդը, այսինքն է ռուսութուրք պատերազմէն և անոր հետևող խաղաղութեան դաշնագիրներէն օգուտ քաղելով, օսմանե-

եան կառավարութիւնը պարտաւորել և ստիպել, եւրոպական տէրութեանց միջամտութեամբ, որպէսզի ցանկացուած և խոստացուած բարեւոքումը իրականանայ։ Այս եղաւ բուն Հայկական Խնդիրին նպատակը, և Սանսթէֆանոյի 16րդ և Պերլինի 61րդ յօդուածներուն իսկական իմաստը։ Ասոնց մէջ ոչինչ չկար որ օսմանեան կառավարութիւնը վիրաւորէր, և ինքն ալ յօժարակամ ստորագրած էր այդ յօդուածները։ Երբոր գործադրութիւնը կը յապաղէր և հարստահարիչ ցեղին կը ներուէր զինուած մնալ, և հարստահարեալ ցեղին զինուիլը խստութեամբ կ'արգիլուէր, իրողութեանց բնական ընթացքով հարստահարեալները յորդորուեցան գաղտնապէս զինուելու, զինեալ հարստահարիչներուն ընդդիմանալու և անձնապաշտպանութեան իրաւունքը գործադրելու դիտմամբ, առանց որևէ կառավարութեան դէմ դառնալու կամ անջատողական գաղափարի հետևելու մտայնութեան, ինչ որ կեղծ կամ թիւր մեկնութիւններ ուզեցին Հայերու վերագրել։ Այս կերպարանը կը բնանք երրորդ համարել Հայկական Խնդիրին առած ձևերուն մէջ, և ինչպէս յայտնի կ'երևի, ո՛չ մի ապօրինի միտք կամ ձեռնարկ հնար է անոր վերագրել, զի կառավարութիւնն իսկ չի կրնար յանձն առնուլ որ հարստահարիչը զինելու և հարստահարեալը զինաթափ ընելու կամեցողութիւն կամ բաղձացողութիւն վերագրուի իրեն։

Այս երրորդ կերպարանը, որ հայաբնակ գաւառներու մէջ սկսած էր փայփայուիլ, առաջին անգամ ձևակերպութիւն ստացաւ Կարնոյ մէջ, Խաչատուր Կէրէկցեան երիզնագործ արհեստաւորի մը նախաձեռնութեամբ և գաղտնի ընկերակցութեան դրբութեամբ, և ընդունելութիւն գտաւ արհեստաւոր և գործաւոր դասակարգին մէջ։ Ընկերակցութեան Երկրագործական անուն էր տրուած իբրև գաղտնութեան պահանջ, միայն ընկերակիցներու արձանագրութեան տոմսեր բաշխելու ձևը գաղտնութեան պահանջին չէր յարմարեր, և ձախող հետևանք ալ ունեցաւ։ Ձեռնարկին սկզբնաւորութիւնը կրնայ նշանակուիլ 1882 տարուոյ առաջին կէսին մէջ։

Կարնոյ քահանաներուն մէջ կը գտնուէր Մելքիսեդեկ Տէր Մելքիսեդեան, Կարինէ գուրս ձեռնադրուած և վերջէն ընդունուած և ժողովուրդին մէջ շատ խօսուած իրեն անտեղի ընթացքին համար։ Տարոնոյ քննչութենէն դատելէս ետքը, նոր ապօ-

քինի գործողութեան մէջ գտնուելուն պատճառով Կարմիր վանք յղած էի ապաշխարութեան համար։ Սակայն այնտեղ կը հիւանդանայ, և որդին Յովհաննէս Տէր Մելքիսեդեան, որ Կարնոյ պատուաւոր անձերէն և ազգային ժողովականներէն մէկն էր, կը խնդրէ որ տուն դառնայ խնամուելու համար, ապաշխարութեան պայմանները պահելով։ Կարմիր վանքի մէջ պատշաճ կերպով խնամուիլը անհնար ըլլալուն, որդւոյն խնդրանքին կը հաւանիմ, սակայն քահանային հակակիր խումբէն քանի մը երիտասարդներ դլուխնին տաքցնելով նոյեմբեր 26|8 դեկտեմբերին երեկոյին կ'երթան անոր տանը առջև ցոյց մը ընելու, Տաճար փողոցին մէջ, ոստիկանական պահականոցին մօտերը։ Զայներ եւ չփոթներ առիթ կ'ըլլան որ ոստիկաններ շուտով վրայ հասնին և քանի մը անձ ձերբակալեն, և վրանին խուզարկած ատեն երեւան գան ընկերակցութեան տոմսեր, հարցուփորձեր ընդարձակուին, ընկերներ փնտռուին, և նորանոր ձերբակալութիւններ կատարուին։ Այսպէս սկսաւ Կարնոյ տագնապը, բոլորովին պատահական առիթով մը ծագած։ Դատաստանական ատեանը զայն ձեռք առաւ, և Հայոց ապստամբութեան լուրը կեդրոնն ալ գըրաւեց, և քաղաքը անուղղի մատնուեցաւ։ Հարկաւ չէի կրնար անտարբեր մնալ։ պարտաւորեալ ձեռք զարկի զգուշութեան միջոցներու, իսկութիւնը բացատրելու, պատրիարքարանը ատոյգ լուրերով լուսաբանելու, և ամէն պարագաներու արթնութեամբ հսկելու, ծանօթ և մտերիմ պաշտօնէից աջակցութեան ալ դիմելու։ Ձերբակալութիւններ 72 հոգիէ անդին չանցան, զի տասնապետական դրութեան հետեւողութեամբ ընկերակիցներու ծանօթութիւնը անձուկ շրջանակի մէջ կը պարփակուէր, և ձերբակալուածներն ալ բոլոր յետին դատակարգէ էին, արհեստաւորներ, արհեստի աշակերտներ, երիտասարդ հողագործներ, և նմաններ։

Միւս կողմէն կը դիտէի որ կուսակալին, Ֆօսֆօր մականուանեալ Մուսթաֆա բաշային, դէպ առ իս վերաբերումը տակաւ կը ցրտանար, պաշտօնական յարաբերութիւններ դժուարութիւն կը կրէին, և գրեթէ գործելը անհնար կը դառնար, որովհետև իմ վրայ ալ լռելեայն տարածուած էր ամբաստանութիւնը։ Ներսէս պատրիարք իմ տուած տեղեկութիւններով զօրացած, կեդրոնական կառավարութեան առջև պաշտպանութեան ապացոյց-

ներ տալուն վրայ, կեդրոնը կուսակալին զիտողութիւններ կը յայտնէ, և սա զինքն արդարացնելու համար իմ կամակցութիւնս ու գործակցութիւնս առջև կը նետէ, թէպէտ առաջնորդարանի փոքրաւորը բանտարկելով և Բրուսեան տունը լրտեսներով շրջապատելով ալ նշան մը չէր կրցած ձեռք անցունել։ Ասոր վրայ կեդրոնի կառավարութիւնը զիս հեռացնելու դաղափարը կը յղանայ, որուն հազիւ լուրն առած ես ինքնակամ մեկնելու որոշումը կուտամ՝ պաշտօնական գործողութեանց առիթ չտալու համար, զի Մշոյ առաջնորդ Սէրթճեան Գրիգորիս եպիսկոպոս բացարձակ հրամանով, և Արապկիրի առաջնորդ Ապահունի Եզնիկ եպիսկոպոս զինուորական հսկողութեամբ հեռացուած էին արդէն։ Միւս կողմէն Կարնոյ դատարանը ձերբակալեալներէն քանի չափ անպարտ արձակելով մնացեալները քաղաքական յանցապարտ վճռած էր, և ամբաստանիչ ատեանին որոշման դէմ վճռաբեկին դիմում եղած էր։ Եւ պէտք էր Կ. Պոլսոյ մէջ գործել։ Զորս ամիս էր որ Կարնոյ մէջ այս խնդիրներով կը զբաղէի, բայց այլևս այնտեղ գործել անպէտ էր, ուստի Մեծ Պահոց մէջ ըլլալով մէկտեղ, անմիջապէս 1883 մարտ 24|5 ապրիլին ճանապարհ ելայ, և արագ ուղևորութեամբ, Տրապիզոն և Սամսոն ալ հանդիպելով, տասներկու օրէն ապրիլ 5|17ին Կ. Պոլիս հասայ։

Մերձաւորաբար տարիուկէս Կ. Պոլիս մնացի, և Կարնոյ գործերուն լուծման զբաղելով մէկտեղ, տեղական գործերու ալ մասնակցելու առիթ ունեցայ, և իբր թէ կրկնակ կեանքով ապրեցայ, բայց որպէսզի գործոց կապակցութիւնը լաւ տեսնուի, երկու կերպարանները զատ զատ պիտի ներկայեմ, ժամանակագրական կարգը մէկ կողմ թողլով։ Հասնելէս ետքը առաջին փոյթս եղաւ Բարձրդուռ ներկայանալ անմիջապէս, եպարքոսին իմացնելու համար թէ խուսափող մը չեմ և իմ գործերուս մասին պարզերես համարձակութիւն ունիմ, և թէպէտ առաջին անգամ ընդունելութեանց օրը չըլլալուն համար չկրցայ տեսակցիլ, բայց Ներքին գործոց և Արտաքին ու Կրօնից նախարարներուն հետ տեսակցելէս ետքը, յատուկ հրաւէրով մայիս 5|17ին կարևոր տեսակցութիւն ունեցայ մեծ եպարքոս Գիւչիւք մականուանեալ Սայիտ բաշայի հետ։ Համարձակ յայտարարեցի թէ քանի մը անձերու ամբաստանուիլն ու դատապարտուիլը Հայոց ազգին չի վնասեր, այլ կը վնասէ պետութեան վարկին, իւր հը-

պատակներուն դժգոհ ցուցուիլը։ Աւելցուցի թէ Հայոց ապըստամբութիւն վերագրելը ծիծաղելի կը դառնայ յիսուն անձանց ամբաստանուելովը, որոց մէջ ո՛չ խելք ու կարողութիւն, և ո՛չ միջոց ու ազդեցութիւն ունեցող անհատ մը կը գտնուի։ Ցիշեցուցի թէ այդ կէտերը կուսակալին ալ խօսած եմ, բայց չեմ կրցած համոզել, զի օտարազգի խորհրդականի ազդեցութեանները քիչ ինկած է, և թէ ինձի պարտք չեմ սեպած անոր յետսամիտ գաղափարներուն ծառայել։ Տեսակցութեան մէջ յիշատակեցի նաև կառավարական թերի կէտերը, և պէտք եղած միջոցները, որոց կարգին փոխկառավարիչներու (գայմագամ) նուազութիւնն ու ապիկարութիւնը, մինչ անոնք են գործադիր իշխանութեան իրապէս դերակատարները, և կուսակալներու մեծ ծախքով շատ պզտիկ արդիւնաւորութիւն ունենալը։ Այլիտ բաշագոհունակութեամբ և գոլութեամբ լսեց ըսածներս. վարչական դիտողութիւններս դրաւոր ուզեց, և Բարեկարգական Յանձնաժողովոյ նախագահին հրահանգ տուաւ զիս ալ լսելու։ Մեծ եպարքոսին այդ տպաւորութիւնները մեծապէս նպաստեցին Կարնոյ տապնապին վերջնական յարդարման։

Ազգային վարչութեան հետ ալ սկզբնական խնդիր ունեցայ Կարնոյ առաջնորդարանի մասին, զոր նա չէր ուզեր անգլուխ թողուլ, և մտադիր էր տեղապահ կամ փոխանորդ մը յղել, եւ Հմայեակ եպիսկոպոս Դիմաքսեան, Երզնկայէ հրաժարած, պատրաստակամ էր Կարին երթալ։ Ես դիմադրեցի թէ Կարնոյ առաջնորդութիւնը չեմ թողած և թողու միտք չունիմ, և թէ Կարնեցւոց կողմէ խուսափելուս մասին կոսկածը փարատելու համար Մխաբան Ս. Աստուածածնի Ուխտի տաճարին առջև յայտարարած եմ թէ դառնալու համար կը մեկնիմ, ուստի պէտք է որ նախապէս պաշտօնանկութիւնս վճռուի։ Վարչութիւնը իսպառ մերժելով այդ որոշումը, հաւանեցաւ որ ես ի հեռուստ ալ իմ նշանակած փոխանորդիս՝ Արծնեան Գրիգոր քահանայի ձեռքով վարեմ վիճակին առաջնորդութիւնը, և ամէն յարաբերութիւնք ու թղթակցութիւնք ուղղակի ինձի հետ կատարուին. և այսպէս ալ շարունակուեցաւ Կ. Պոլիս գտնուած միջոցիս մինչև վերջը։ Ներսէս պատրիարքն ալ արտօնեց որ ես ինքնին վարեմ Կարնոյ տապնապին դիմումներն ու բռնակցութիւնները. միայն ըսածիս եւ ըրածիս տեղեկութիւնները իրեն ալ հաղորդեմ, որպէսզի

թիւրիմացութիւններու տեղի չտրուի։ Այդ բացատրութիւնները բացորոշ կերպով կը ցուցնեն թէ ի՛նչպէս հեռաւեցայ Կարնոյ տագնապին նպաստաւոր վերջացում մը պատրաստել։

Առաջին ջանքս եղաւ Կարնոյ ամբաստանիչ ատեանին վճիռը բեկանել տալ, բայց որովհետև դարձեալ նոյն ատեանին յղուեցաւ, առաջին վճիռը նորէն կրկնուեցաւ։ Թէպէտ մեր կողմէն վճռաբեկի դիմումը կրկնուեցաւ, այլ խոհականներու խորհրդով չհետապնդուեցաւ, զի անվերջանալի խաղ մը յառաջ պիտի գար, ուստի Կարնոյ պատժական ատեանը վերջնական դատաստանը կատարեց, և տասնի չափ անձեր ևս արդարացնելով՝ մնացեալը ընդհանրապէս հնգամեայ բանտարկութեան դատապարտեց, միայն քիչեր 15, 12, 10 և 7 տարուց։ Վճիռներուն թեթևութիւնը արդէն գործին ալ կարևորութիւն կորուսած ըլլալը կը յայտնէր, ուստի փոխանակ բողոքի, ներման չնորհի դիմել յարմարագոյն դատուեցաւ, խոհականներու և պաշտօնականներու ալ խորհուրդով։ Իբր տարի մը անցած էր մինչև որ այդ ամէն գործողութիւնները լրանային, և քանի մի ներման դիմումի փորձեր ժամանակին դեռ հասունցած չըլլալը կը ցուցնէին։

Վերջապէս 1884 մայիսի մէջ, նոյն իսկ մեծեպարքոսին ազդարարութեամբ, ներման չնորհի վերջնական աղերսագիրը մատուցուեցաւ, և քիչ ետքը յունիս 5/17ին կայսերական կամքով պատիժներուն երկու երրորդին ներման չնորհը հրատարակուեցաւ։ Արդէն 1882 նոյեմբերի վերջէն 20 ամիսներ անցած էին, իսկ արաբական տոմարով 22 օր ալ պակաս, բայց րամազանի օրեր էին և պաշտօնատուններ ալ շատ քիչ կը գործէին, և տեւողութեանց հաշիւներն ալ վաւերագիրներ կը պահանջէին, սակայն ուժգին հետապնդութեամբ պէտք եղած պայմանները լրացան, հեռագրական հրամանը տրուեցաւ, և 1884 յունիս 22/4 յուլիսին, Լուսաւորչի Նշխարաց Գիւտի նախատօնակին, իբր 35 բանտարկեալք ազատ կ'արձակուին ի Կարին, ժողովուրդին ընդհանուր ուրախութեան և մխիթարութեան արտայայտութիւններով։

Այսպէս կը վերջանար Կարնոյ տագնապը, և կը մնար իմ վերադարձս, զի իմ մասին եղած ամբաստանութիւնը ընթացք իսկ չէր ունեցած իմ կանխելովս, և երբոր պաշտօնական յանձնարարագիրը պիտի պատրաստուէր, նախարարը նախընթաց յիշատակութիւնն իսկ չէր գտեր իւր դիւանին մէջ, և պարզ պաշ-

տոնագիր մը կը յանձնուէր ինձի օգոստոս 16|28ին։ Բայց ես վաբանեցայ անմիջապէս մեկնիլ, զի Ներսէս վարդապետը վիճակի մէջ անկողին ինկած էր, և սիրտս չէր երթար այնպէս թողուլ եւ հեռանալ, բայց սակայն մեկնիլ իւր իսկ հրամանով։ Այլ նախապէս պէտք է ետ դառնամ Կ. Պոլսոյ մէջ կատարած ուրիշ գործերս և վարած պաշտօններս բացատրելու համար։

Խ

Դամասկոս, 1918 յունուար 4|17 Եշ.

Կ. Պոլիս դառնալէս քիչ օր ետքը Վանօրէից Խորհրդոյ անդամ ընտրուեցայ, կարծես լիբեւ շարունակութիւն կարին մեկնելէս քիչ առաջ կատարուած ընտրութեան։ Մխանգամայն անդամակից նշանակուեցայ նոր կազմուող յանձնաժողովին, որ պաշտօն պիտի ունենար վիճակաց վերակազմութեան ծրագիր մը պատրաստել, զի կային վիճակներ որոնք անուանական դարձեր էին և ուրիշներ որ կարեւորութիւնին կորուսեր էին։ Այդ անուանումներ տեղի ունեցան 1883 ապրիլ 13|24ին։ Վանօրէից Խորհուրդը զբաղեցաւ սովորական գործերով առանց հիմնական արդիւնք մը պատրաստելու. իսկ Վիճակաց Յանձնաժողովը անուանական մնաց, զի կաթողիկոսական ընտրութեան մէջ վիճակներու թիւով ապահովուած քուէի իրաւունքը չկորսնցնելու միտքը վերակազմութիւնը արգիլեց։ Կիլիկիոյ կաթողիկոս Մկրտիչ Քէֆսիզեանի նոր եպիսկոպոսներ ձեռնադրելը, և անոնցմէ Յովհաննէս Գապանճեանի Կ. Պոլիս գալը, առիթ տուին Կիլիկիոյ Աթոռին յարաբերութիւնները ճշդելու համար նոր յանձնաժողով մը կազմել, և հինգ անդամներէն մէկն ալ ես նշանակուեցայ՝ Իզմիրլեան, Ալէաթճեան, Ապահունի և Դիմաքսեան եպիսկոպոսներու հետ։ Այդ անուանումն ալ տեղի ունեցաւ 1883 սեպտեմբեր 26|8 հոկտեմբերին, իսկ Յանձնաժողովը անդստին սկիզբէն գործը ձեռք առնելով գործնական վերջաւորութեան չկրցաւ հասնիլ, և միայն Գապանճեանի ժամարարութեան ատեն եպիսկոպոսական խոյր և զարդ գործածելը արգիլեց։

Իմ հասնելէս առաջ Բերայի քարոզիչ Ներսէս վարդապետ

Արսլանեան Եւդոկիոյ առաջնորդ ընտրուած և հաստատուած էր, և Զատիկը տօնելով պաշտօնատեղին մեկնեցաւ, և թաղական խորհրդոյ առաջարկութեամբ անոր տեղ Բերայի եկեղեցեաց քարոզիչ նշանակուեցաւ մայիս 5/17ին առժամեայ անունով, զի Կարնոյ առաջնորդութիւնը թողուլ չէի ուզած, և մայիս 7/19ի կիրակնամուտին պաշտօնին ձեռնարկեցի: Բերայի թաղականութիւնը ընդարձակ ձև մը առած էր այն ատեն՝ եկեղեցեաց, վարժարանաց, կալուածոց և գերեզմաններոյ ճիւղերով, և կեդրոնական դիւանով մը Յովհաննէս Նուբեան պետական խորհրդոյ անդամակցին առեւնապետութեամբ: Միանգամայն Խորհուրդը կարեւոր գործերու ձեռնարկած էր, հրկիզուած թատրոնին տեղ մեծ սրճարան ու ճաշարան մը կը շինուէր, զոր կանխիկ վարձած էր Մկրտիչ Թոգատլեան ծանօթ ճաշարանապետը: Վարժարաններու ծրագիրին բացման և լրացուցիչ դասարաններու բացման կ'աշխատուէր, գերեզմաններոյին օգտակար յարդարումներ կը կատարուէին, աղջկանց արհեստանոց մը կը բացուէր, և կալուածներ արդիւնաւորելու նոր կերպեր կը խորհուէին: Թաղական խորհուրդներ ընդհանրապէս կը խորշին քարոզիչներու միջամտութենէն, բայց ինծի հակառակը հանդիպեցաւ, զի նիստերուն նախագահելս սկսան պահանջել ինծմէ, ոչ միայն իբրև օգտակար օգնական և տարաձայնութիւնները լուծելու խորհրդական, այլև ամէն ճիւղերու մէջ աջակցելու և գործակցելու յարմար անձ մը, վարժարաններ այցելելով, ծրագիրներ գործադրելով, կանոնագիրներ պատրաստելով, մինչև իսկ շինութեանց հսկելով: Ուստի այս կողմէն քարոզչական պաշտօնին սովորական գործերէն, ծխական բարեկարգութեան և քահանայից պաշտօնակատարութեան հսկելէ եւ քարոզութիւններէ չթերանալէ զատ, շատ մը անսովոր աշխատութիւններ ալ ուելցան իմ վրայ: Յատուկ և նոր գործ եղաւ Շիլլիի գերեզմաննոյին յարդարումը, որ 1865է ի վեր փոխանակած էր Թաքսիմի կամ Բանկալթիի գերեզմաննոցը, և իբրև բացավայր ոտնակոխ կ'ըլլար: Որոշուեցաւ զայն որմապակել, մէջը ուղիներ և թաղեր զատել, և վճարմամբ յատուկ թաղեր ունենալու իրաւունքը հաստատել: Այդ վերջին կէտը Կրօնական ժողովոյ ընդդիմութեան հանդիպեցաւ, և հարկ եղաւ յատենի ժողովին զայն պաշտպանել, և կանոնագիրն ու յատակագիծը Վարչութեան հաստատել տալ, որոնք ուղղակի ես հետապնդեցի, և

ուր ուրեմն 1884 օգոստոս 13|25ին, Աստուածածնայ մեռելոցին օրը, որմափակին հիմնարկէքը օրհնեցի։ Օգտակար հաստատութիւն մը եղաւ նաև աղջկանց արհեստանոցը, որուն վրայ յատուկ մտադրութիւն դարձուց Նուբեան տէնապետ, և արքունեաց յանձնարարութիւններ ալ ստացաւ։ Սրճարան-ճաշարանը Թոգատլեանի ձեռքով Բերայի առաջնակարգ ժամադրավայրն եղաւ, և լաւ հասութաբեր կալուած դարձաւ։ Մէկ խօսքով Բերայի թաղականութեան փայլուն ու ցայտուն ժամանակամիջոցն եղան 1883-4 տարիները, և առաջիկային ալ շարունակեցին։

Կ. Պոլիս գտնուած միջոցիս կատարած գործերէս հետեւեալներն ալ յիշեմ։ Միացեալ Ընկերութեան անդամներէն մին էի նախապէս, և երեք ընկերութեանց միացման աշխատողներէն ալ մին եղած էի. Կարին գտնուած միջոցիս գրեթէ պաշտօնական գործակատարն ալ եղայ, զի այն ատեն Կարինէ անդին օրինաւոր թղթատարութիւն իսկ չկար։ Դառնալէս ետքը 1883 նոյեմբեր 6|18ին դարձեալ Ընկերութեան ժողովոյ երեսփոխան ընտրուեցայ, և գործունէութիւնս շարունակեցի։ Կարին եղած ատենս Սովելոց Յանձնաժողովոյ գործակատարութիւնն ալ ես կը վարէի. ուստի իբր պարագայից մօտէն տեղեակ, Յանձնաժողովը ուզեց որ ես պատրաստեմ ընդհանուր տեղեկագիրը, զոր յանձնուի 1884 ապրիլ 22|4 մայիսին պատրիարքի հրամանով, և քանի մի ամիսներ փակուելով Ֆատըքէօյի թաղական խորհրդարանը, և դէզադէզ նամակագրութիւններ և հաշուետոմարներ պրպտելով, սեպտեմբեր 9|21ին աւարտեցի ստուար տեղեկագիրը, որ յատուկ հատորով տպագրուեցաւ իմ Կարին դառնալէս ետքը։

Նոյն միջոցին ուրիշ պաշտօններու ալ հրաւէրներ ստացայ։ Գլակայ Ս. Կարապետի մխիթարեանութիւնը զիս վանահայր ընտրեց 1884 յունիս 7|19ին, քննչութեանս ծրագիրին գործադրութիւնը լրացնելու դիտմամբ։ Նմանապէս 1884 յուլիս 14|26ին Էջմիածնի Սինոդէն Գէորգեան Ճեմարանի տեսչութեան հրաւիրուեցայ։ Կեդրոնական Վարչութենէ ալ կրկին և կրկին առաջարկութիւն ստացայ առաջնորդութենէ հրաժարելով պատրիարքական փոխանորդութիւն ստանձնելու, և ատենապետ Սիմոն Մագուտէ քանիցս այդ մասին ստիպումներ կրեցի, իբր զի Ներսէսի հիւանդութիւնը ծանրանալուն իրեն վստահութիւնը վայելող փոխանորդի մը պէտքը անհրաժեշտ կը դառնար, զի կայսրը անոր հը-

բաժարականը բացարձակապէս կը մերժէր։ Այդ ամէն ընտրութիւններու և հրաւէրներու և ստիպումներու բացարձակ և վերջնական հրաժարմամբ պատասխանեցի, միշտ ինծի անփոփոխելի նպատակ դրած ըլլալով Կարնոյ պաշտօնին վերադառնալ, ինչպէս որ գործոց ընթացքը կը պահանջէր և ուխտադիր խոստումս կը պարտադրէր։

Անցողակի յիշատակեմ մօտէն շփումներ ունեցած անձերէս ոմանց մահերը, որ այս միջոցին տեղի ունեցան։ Առաջին՝ Ամենայն Հայոց հայրապետ Գէորգ Դ. կաթողիկոսի մահը, որ տեղի ունեցաւ 1882 դեկտեմբեր 6|18ին, և պատճառ եղաւ եպիսկոպոսական ձեռնադրութեանս յապաղելուն, զի նախ Կարնոյ տապնապը արգիլեց հեռանալ, և մահէն ետքը երեք տարի տեւեց աթոռոյ պարապութիւնը։ Յաջորդ 1883 տարւոյ յուլիս 1|13ին վախճանեցաւ Սուքիաս արքեպիսկոպոս Գազանճեան, որ Անտոնեանց տբբահայրութենէն հրաժարելէն և Հակահաւատնեանց կացութիւնը վատթարանալէն ետքը, Հաւատնեանի կողմը դառնալով առանձնական կեանք կը վարէր։ Տիկին Նազլը Վահան, որ իգական սեռին ազգային գործունէութեան դրդիչն եղած էր, և Դըպրոցասէր Տիկնանց Ընկերութեան կը նախագահէր, և Համազգեաց շէնքին մէջ բացուած օրիորդաց վարժարանին խնամակալուհի էր, և իւր թոռներուն Արաքսի և Ադինէ Վահաններու հայերէնի դասատուութիւնը ինծի յանձնած էր, վախճանեցաւ 1884 յուլիս 17|29ին, իրեն արժանաւոր յաջորդ թողլով Սրբուհի Տիւսաբ գրագիտուհի դուստրը։ Նոյն տարւոյ հոկտեմբեր 18|30ին վախճանեցաւ Յովհաննէս Զամիչեան նախարարը, զոր իրաւամբ կրնանք հակահաւատնեան հաստատութեան խոհականագոյն անձը նկատել. վերջին ատեններ նա ալ ձեռնթափ եղած էր ներքին պառակտումներէ զզուած։

Հատուածիս իբրև կնիք թողուցի Ներսէս Վարժապետեան պատրիարքի կաթողիկոսական ընտրութիւնը, և տարաժամ մահը։ Ռուսական կառավարութեան վաւերացմամբ հաստատուած էջմիածնի Կանոնագիրը, Պալաժէնիա կամ Պոլոժէնիէ անունով ծանօթ, տարի մը միջոց սահմանած է Աթոռոյ պարապութեան, և Գէորգ Դ.ի տարելիցը խոր ձմեռուան հանդիպելուն ընտրութիւնը յաջորդ մայիսին թողուած էր։ Զանց կ'ընեմ մտնել Պոլոժէնիէի մասին Տաճկահայոց ընդդիմութեան, և իւրովի կազմած

ձեւերուն վրայ խօսիլ, և լոկ եղելութիւններով կը գոհանամ։ Ըստ այսմ 1884 մարտ 12|24ին հուսաքուեցաւ Եկեղեցական Համագումար Ժողովը, որ ընտրելեաց ցանկ մը պիտի պատրաստէր։ Թէպէտ ամենուն դիտումը Ներսէսը կաթողիկոս տեսնալն էր, սակայն ընտրութեան շեշտուած նշանակութիւն տուած ըլլալու համար, ես թելադրեցի շտաբերուն, և Վահան Տէր Մինասեան վարդապետի ձեռքով թելադրութիւնը տարածեցի, թէ հարկաւ հինգ անուն գրել պէտք չէ, և լաւագոյն է երկուքով երեքով գոհանալ, որով Ներսէս և Մակար բարձրագոյն քուէներ չահեցան, և մնացեալները քիչով մնացին, և Համագումարին ընտրութիւնը նշանակալից եղաւ։ Ապրիլ 2|14ին Ազգային Ընդհանուր Ժողովը գումարուեցաւ, և գրեթէ միաձայնութեամբ Ներսէսը միակ ընտրելի կամ ընտրեալ կաթողիկոսցու հռչակեց։ Էջմիածնի Ընտրողական Ժողովն ալ նոյն ուղղութեամբ առաջին ընտրելի կամ ընտրեալ հռչակեց Ներսէսը, երկրորդ նշանակելով Մելքիսեդեկ Մուրատեան եպիսկոպոսը։ Ներսէս որ կանուխէն ալ ամէն ընտրողական ժողովներու իւր հրաժարականը կրկնած էր, ընտրութենէն ետքն ալ անյողդողդ մնաց իւր միտքին վրայ, ներքնապէս զգալով իւր վատնգեալ կեանքը, և մեռնելու համար էջմիածին երթալ չարժելը։ Ես ալ իմ կողմէ ամէն ջանք և համոզկեր խօսք չխնայեցի որ յանձնառու ըլլայ. միշտ իր մօտէն անպակաս էի իւր հիւանդութեանը պատճառով, և Կարին դառնալու ուղեւորութիւնս ալ կը յապաղէի, ինչպէս յիշեցի։ Անանուն սարսափելի գրութեամբ թաց նամակ մըն ալ հրատարակեցի Արեւելք լրագիրի մէջ, որ 1884 յունուար 1էն սկսած էր հրատարակուիլ, և որուն իբրև աշխատակից կը գործակցէի, մտերիմներէ կազմուած հիմնադիր յանձնաժողովի խնդրանօք։ Ներսէս իւր հրաժարականը Ռուսաց կայսեր ալ հեռագրեց, և տարհամոզելու եկող դեսպանին ալ կրկնեց, որով ռուսական կառավարութիւնը ստիպուեցաւ հրաժարականը ընդունիլ, և երկու ընտրելիներու պայմանը պակսելուն նոր ընտրութիւն հրամայեց։ Սակայն Ներսէս իւր անկողինին մէջէն պատուիրեց որ Կարին դառնալս փութացնեմ, մի՛ դուցէ աչքը գոցելէն ետքը նոր արգելք մը յարուցուի. և այդ հրամանին համաձայն Կ. Պոլիսէ մեկնեցայ 1884 սեպտեմբեր 24|6 հոկտեմբերին։ Ներսէսը մեղադրողներ պակաս չեղան իւր յամառ հրաժարման համար, սակայն լռեցին երբոր քիչ օր ետքը հոկտեմբեր

26|7 նոյեմբերին իւր մահկանացուն կնքեց, զինքն սկիզբէն տանջող չաքարախտի հետեւանօք, տակաւին 48 տարեկան հասակին մէջ։ Արեւելքի խմբագրութիւնը չմեկնած Ներսէսի կենսագրութիւնը պահանջեց ինէ մահուանէ անմիջապէս ետքը հրատարակելու համար, զոր դժկամակեցայ կատարել, բայց հասնելէս 17 օր ետքը խմբագրութենէն առի առաջին բօթաբեր գուժը, և իսկոյն բաւական ընդարձակ գրուած մը պատրաստելով յղեցի, իբր երախտապարտութեան նուէր Ներսէսի անմահ յիշատակին, որ կեանքիս մեծ ազդակներէն մին եղած է, և համարձակ կը խոստովանիմ թէ կարեւոր տեղ մըն ալ գրաւած է վերադարձիս խնդիրին մէջ։

ԽԱ

Դամասկոս, 1918 յունուար 8|21 Բշ.

Կարին դառնալս որոշուելէն ետքը երբոր վերջին անգամ մեծեպարքոս Սայիտ բաշայի հրաժեշտի գացի, յիշեցուցի թէ մի՛ գուցէ հակառակութիւն գտնամ կուսակալին կողմէ, և սա զիս վստահացուց թէ դժուարութեան չեմ հանդիպիր։ Ասով մէկտեղ ես զգուշացայ հանդիսական մուտք գործել Կարին, իբրև թէ կուսակալին վրայ յաղթանակ տարած ըլլամ, զի գիտէի ալ Կարնեցւոց զգացած ոգեւորեալ համակրութիւնը դէպ առ իս, և միւս կողմէն չափազանցութեանց կողմը հակամիտութիւններին։ Ուստի Տրապիզոնէ հեռագրեցի թէ Կիւմիւշխանէ և Բաբերդ յանձնարարութիւններ ունենալով կատարելիք, չէի կրնար հասնելուս ժամադրութիւնը որոշել, մինչ միւս կողմէն կը շտապէի օր առաջ յանկարծօրէն հասնիլ։ Սակայն անոնք ալ գլխաւոր օթեւաններ հրահանգ տուած էին, որ անցնիլս հեռագրեն։ Ամենէն վերջը Բաբերդի մէջ հարկ եղաւ խիստ հրամանով լրատուն արգիլել, որպէսզի իմ մտադրութիւնը չխանգարուի։ Ասով մէկտեղ երբ հոկտեմբեր 9|21ին Իլիճա հասայ, այնտեղ գտայ Կարնոյ թաղականութիւնը իբրև հրաւիրակ եկած ուրիշ ընկերներով, զիս անպէտն գիշերելու և հասնելուս յաջորդը օրը հանդիսական մուտքի

ատիպելու մատդրութեամբ։ Սատիկ և վճռական հրամաններու դիմել հարկ եղաւ, որպէսզի եկողները Իլիճա մնան, և ես ալ մտնելէն ետքը դէպի Կարին կարենամ ուղեւորիլ։ Կէզ գիւղին մէջ ալ եկեղեցականներուն հոն գտնուիլն իմացայ, և անոնց լուր տալը արգիլեցի, և յառաջ անցնելով գիշերային մթութեան մէջ Կարին մտայ, և առաջնորդարանը դատարկ և փակ գտնելով, Սանասարեան վարժարանի կողմէն կրցայ առաջնորդարան մտնել։ Արդէն իմ բացակայութեան միջոցին առաջնորդարանը իւր կիւրարկութեան դարձած էր, Սանասարեանը Օրիորդաց վարժարանին մէջ կեանեղուած էր, և Օրիորդացը իւր նախկին Տաճար փողոցի վարժարանը դարձած էր, ինչպէս որ կանուխէն ես առաջարկած էի և Գաւառական Վարչութիւնն ու թաղականութիւնն ալ ուր ուրեմն առաջնորդարանը տեղափոխելու ծրագիրին անտեղութիւնը զգացած, և ետ դառնալու նախաձեռնութիւնն ունեցած և ինծի ալ գրած էին։

Յաջորդ առաւօտուն ժողովուրդին յանկարծական մը եղաւ գիշերով հասնիլս, և այցելութիւններ շարունակեցին. իսկ կուսակալը, որուն կանխաւ լուր ղրկեցի, շատ գոհ երևցաւ իմ ըզգուշաւոր ընթացքէս և սիրալիր ընդունելութիւն ըրաւ։ Կարծես թէ սրտի տագնապէ մը ազատած ըլլար, որովհետև ցոյցի մը կասկածով վաշտ մը զինուոր զէնքի տակ պահած էր, և ռուսիկաններու ջոկատ մը ճանպուն վրայ յղել հրամայած էր։ Ստոյգ ալ կուսակալին հետ յարաբերութիւններս առաջինէն աւելի մտերմական դարձաւ։ Կարին դառնալէս մինչև եպիսկոպոսական ձեռնադրութիւնս նոր հանգրուան մը կը կազմեմ, իբրև քսան ամիսներու ժամանակամիջոց մը, առաջնորդական պաշտօնը մօտէն վարելուս երկրորդ մասը, որ իւր ընութեան և մեծ գիծերուն մէջ առաջին մասէն տարբերութիւն չունի, և կրկին մանրամասնելու պէտք չի մնար։ Ըստ այսմ բաւական կը սեպեմ միայն գլխաւոր և յատուկ դիպուածները քաղել։

Առաջին գործերէս մին եղաւ եօթը տարի քանտարկութեան դատապարտուած անձերուն ալ ազատութիւնը ձեռք բերել, նաև շուտով յաջողեցայ կուսակալին ալ ձեռնտուութեամբ, և հասնելէս ամիս մը ետքը, 1884 նոյեմբեր 14|26ին, անոնք ալ արձակուեցան։ Այդ միջոցին 1885 յունուար 25|6 փետրուարին Գարնոյ նախորդ առաջնորդ Յարութիւն Վեհապետեան եպիսկո-

պոս Կ. Պոլսոյ պատրիարք ընտրուեցաւ, որուն միշտ և յամենայնի սիրալիր յարաբերութիւնները վայելեցի, և որուն նշաններէն մին եղաւ ինքնաբերաբար մէճիտիյէ շքանշանի երրորդ աստիճանը ինծի շնորհել տալը 1885 դեկտեմբեր 2|14ին։ Վարժարանաց հոգածութիւնն ալ դարձեալ իմ գլխաւոր զբաղումներէս մին եղաւ, մինչև որ, աւելի ազդուապէս գործելու համար, 1885 օգոստոս 11|23ին դարձեալ տեսչութիւնը ուղղակի ստանձնեցի։ Գաւառներու մէջ բարեկարգութեան կարօտ կէտերէն մին նշանագրութեանց և պատկագրութեանց խնդիրն է, նկատելով ընտրութեանց մէջ տեղի ունեցած սպօրինի ձևերը, պաշտօնի կամ հեղինակի գրութեամբ հարսնացուները գրեթէ վաճառելը, փոխադարձ նուէրներու և հրաւէրներու պահանջները, հարսանեաց հանդէսներու շռայլութիւնները, հարսերու վրայ դրուած ծանրութիւնները, և այլ նմանօրինակ կէտեր, զորս երկարօրէն ուսումնասիրած էի, հարկ սեպեցի նիւթ ընել ընդարձակ կոնդակի մը, 1885 փետրուար 23|7 մարտ թուականով, Կ. Պոլսոյ մէջ տպագրել տալ, և Կարնոյ, Բասենի, Կեղւոյ, Դերջանու, Խնուսոյ, և Սպերի վիճակներուն երկու հարիւրէ աւելի հայաբնակութիւն պարունակող գիւղերը յղել, իբր կանոն գործոց և հրահանգ գործադրութեան։ Առաջնորդական պաշտօնին պահանջներէն մին ալ հովուական այցելութիւնն է, կացութիւնը քննելու, խնդիրները ուսումնասիրելու, քարոզելու և հրահանգելու նպատակով. և կրնամ յայտարարել, որ շատ քիչ բացառութեամբ Կարնոյ և յարակից վիճակներուն ամէն կողմերը այցելած եմ, ձմեռուան միջոցին Կարնոյ դաշտը, և ցանքի ու հունձքի միջոց ժամանակին շրջակայ թեմերը։ Ըստ այսմ 1885 յունիս 10|22ին Կարինէ մեկնեցայ և Դերջանի բոլոր գիւղերը այցելեցի։ Վերջին անգամ Սըրբոյը Ս. Թորոս վանքէն անցայ Ղուզլիչան, Երզնկայի դաշտին վրայէն, բայց Երզնկա չմտայ, նոյն օրեր բորբոքուած առաջնորդական խնդիրը արծարծած չըսուելու համար։ Ղուզլիչանի Հիւսէյին և որդւոյն Հայտար պէյերու հիւրասիրութիւնն ալ ընդունելով անցայ Կեղի, նախապէս շրջակայ գիւղերը այցելելով և այնպէս կեդրոնական աւանը գալով։ Այցելութեան գործունէութիւնը բացատրել հարկ չեմ տեսներ, զի բոլոր վիճակային գործերը նկատի առնել է, և գործերն ալ ծանօթ են։ Վերջին անգամ Անդրէս գաւառակի գիւղերը կը մնային, երբ

Կարինէ Սանասարեան բարերարին մօտ օրէ հասնելուն լուրն եկաւ, և ստիպուեցայ շուտով դառնալ, և յուլիս 10|22ին՝ որ է ըսել մեկնելէս ամիսէ մը Կարին հասայ։

Սանասարեան վարժարան իւր չորրորդ տարին փակելու մօտ և գոհացուցիչ չափով կազմակերպուած էր, աշակերտաց թիւն ալ ուճած էր. Մկրտիչ Սանասարեան բարերարը փափաքեցաւ անձամբ ալ տեսնել իւր հիմնարկութեան կացութիւնը, և ուսումնական վիճակն ալ քննելու համար, իրեն ընկեր առնելով էջմիածնի ճեմարանին տեսուչ Արշակ Նահապետեան ուսուցչապետը, Կարին հասաւ 1885 յուլիս 12|24ին, իմ Քղիէ դառնալէս երկու օր ետքը։ Փառաւոր ընդունելութիւն կատարեցինք իրեն, և հետզհետէ Սանասարեան վարժարանի, և ազգային հաստատութեանց, և Կարնոյ քաղաքին հեռաքրքրական պարագաները ցուցուցինք և բացատրեցինք, և ազգային երախտապիտութեան արտայայտութիւնները մատուցինք. կուսակալութեան կողմանէ ալ պատուասիրուեցաւ։ Յուլիս 22|3 օգոստոսին մեծահանդէս քննութիւն և հանդէս սարքեցինք կուսակալի և գլխաւոր պաշտօնակալաց և օտարազգեաց ներկայութեամբ, և վերջէն առաջնորդարանի մէջ բոլորին մեծ հացկերոյթ մը տուինք։ Սանասարեան շատ գոհ և մխիթարուած, ուրախ և իւր գործին մասին ապահովուած, յուլիս 29|10 օգոստոսին մեկնեցաւ Տփղիս եռանդուն ցոյցերով։

Առաջնորդական պաշտօնավարութեան սովորական գործունէութեանց մասին խօսիլ աւելորդ սեպելով, այս քանի մի տեղեկութիւններով կը փակեմ սոյն հատուածը։

ԽԲ

Դամասկոս, 1918 յունուար 9|22 Գշ.

Կոստանդնուպոլսոյ պատրիարքութեան վիճակներուն մէջ առաջնորդներու եպիսկոպոսական ձեռնադրութիւնը սովորաբար պաշտօնավարութեան առաջին տարիներուն մէջ տեղի կ'ունե-

նայ, իսկ իմը մինչև հինգերրորդ տարուայ վերջանալը ուշացեր էր գլխաւորաբար կաթողիկոսական աթոռին երկարատև պարապութեան համար, որով թեմականներուն առաջին դիմումն ալ անհետևանք անցած էր։ Ուստի հազիւ թէ նոր կաթողիկոսի ընտրութիւնը կատարուեցաւ, Կարնոյ Գաւառական Ժողովը 1885 յունիս 28|10 յուլիսին, իմ բացակայութեան միջոցին, որոշեց դիմել Կեդրոնական Վարչութեան ընծայագիրը ստանալու համար։ Սակայն հարկ եղաւ սպասել Մակար կաթողիկոսի օծման, որ տեղի ունեցաւ նոյեմբեր 10|22ին, և անոր կաթողիկոսութեան պաշտօնապէս ճանչցուելուն, զի երկրորդ ընտրելոյն նախադասուելէն յառաջ եկած խնդիրներ կային և պէտք էր անոնց ալ վերջանալուն սպասել։ Այս պատճառով հազիւ 1886 յունուար 10|22ին Խառն Ժողովը իւր որոշումը կրցաւ տալ, և ժողովականներէն մէտ ին Նարպէյ Խորէն եպիսկոպոսը գիտողութիւն յարուցած էր, իբր թէ Վեհապետեան պատրիարքը Կարնոյ վրայ ձեռնադրուած ըլլալուն, ուրիշ մը նոյն թեմի անունով չէր կըրնար ձեռնադրուիլ։ Ժողովականներ մէկէ աւելէ անուններ կը յիշեն, մէկուն հրաժարելէն ետքը ուրիշին նոյն վիճակի անունով ձեռնադրուած ըլլալը հաստատող, և նոյնինքն Վեհապետեան կը յիշեցնէ այժմ Կ. Պոլսոյ պատրիարք գտնուիլը և առաջիկային Երուսաղէմի պատրիարք ընտրուած ըլլալը։ Նարպէյի ծածուկ դիտում ունենալն ալ կը խօսուի, որով զիմադրողը կը յուզուի. իրօք ալ Նարպէյ իւր հետապնդած պատրիարքութեան արգելք կը կարծէր իմ եպիսկոպոսանալը, չնայելով որ իրարու ոչ-հեռաւոր ազգականութիւն ալ ունէինք, երկու քոյրերու թոռներ ըլլալով։ Զմեռնային եղանակը յարմար չէր ուղևորութեան, և Մակար կաթողիկոս գարնան յետաձգած էր իւր առաջին հանդիսական ձեռնադրութիւնը, որչափ ալ պաշտօնական ընծայագիրը 1886 մարտ 1|13 թուականով պատրաստուած և ինծի յղուած էր։

Տաճկահայ վիճակներէն որոշուեցաւ նաև Տրապիզոնի առաջնորդ Գարեգին Սրուանձտեանց վարդապետի ձեռնադրութիւնը, և ես հարկ սեպեցի Պայազիտի առաջնորդ Սատուածատուրեան Յովհաննէս վարդապետի ձեռնադրութեան համար ալ միջնորդել, զի բազմաչխատ և բազմաչարչար խնամակալ եղած էր իւր վիճակին, վերջին պատերազմին եւ սովին միջոցներուն գերութեան և մահուան երկիւղ ալ կրելով, և սովեալ-

ները կերակրելու համար մինչև ժամացույցը վաճառելու հասնելով։ Յայտնապէս գրեցի պատրիարքին, թէ եպիսկոպոսութիւնը աւելի վայել է հոլովական պաշտօնով առաքինացող քան հրապարակի վրայ փայլուն անուններով երևցող վարդապետներուն։ Վերհապետեան պատրիարք, որ մօտէն ալ դիտակ էր անոր արդիւնքներուն, ձեռնադրութիւնը որոշել տուաւ, թէպէտ Պայազիտի խեղճ ժողովուրդը դիմում ընելու իսկ համարձակած չէր։ Զորրորդ ընծայագիրը տրուեցաւ Նիկոմիդիոյ առաջնորդ Յովակիմեան Ստեփանոս վարդապետի, բայց ոչ վիճակի անունով, ինչպէս սովորութիւն էր Կ. Պոլսոյ պատրիարքարանին, այլ պարզապէս իբր Արմաշու միաբան, որ նոր դաղափար մը եղաւ վարչութեան կողմէն, իբրև առաջնորդներու դիւրաւ հրաժարելուն դարման, թէպէտ միւս կողմէն Արմաշի միաբանութիւնը բողոքեց, և մինչև էջմիածին իւր ձայնը հասուց, թէ Յովակիմեանը ո՛չ միաբան կը ճանչնայ, և ո՛չ եպիսկոպոսութեանը կը հաւանի։

Սրուանձտեանցի հետ անկեղծ մտերիմներ էինք, ուստի իրեն առաջարկեցի միասին ճանապարհորդել, և որոշեցինք որ ես Տրապիզոն իջնամ և Պաթումի ու Տփղիսի ճանապով երթանք, և յետոյ Աղեքսանդրապոլի և Կարսի ճանապով միասին Կարին դառնանք։ Ուստի 1886 մայիս 4|16ին Կարինէ մեկնեցայ հետեւորդներով, և Տրապիզոն ու Պաթում հանդիպելով 19|31ին հասանք Տփղիս։ Այն տեղ պարտաւորուեցանք քանի մի օր մնալ։ քաղաքացւոց խնդրանքին վրայ քարոզեցի, և մայիս 25|6 յունիսին փառաւոր հացկերոյթով պատուասիրուեցանք Հայկական Ակումբին կողմէ բազմաթիւ անդամոց սեղանակցութեամբ, որուն միջոցին երկուքնիս ալ տասը անգամէ աւելի բաժակաճառ խօսելու կամ բաժակաճառերու պատասխանել պարտաւորուեցանք։ Միւս օր Տփղիսէ մեկնելով, և Աղստաֆայէ երկաթուղին կառքով փոխանակելով, և Սեւանայ անապատն ալ այցելելով, մայիս 28|9 յունիսին հասանք էջմիածին, և 30|11ին պաշտօնապէս կաթողիկոսին ներկայացանք։

Ձեռնադրութեանց նախապատրաստութեանց կարգին հարկ եղաւ կաթողիկոսին միտքը հանդարտեցնել Աստուածատուրեանի վատառողջ և դողդոջուն վիճակին մասին, և Յովակիմեանի դէմ Արմաշի միաբանութեան յայտնած ընդդիմութեան վրայ։ Էջմի-

ածնի միաբաններէն ձեռնադրուելիք որոշուեցան Սարգիս Տէր-Գասպարեան, Կարապետ Տէր-Գալստեան, Արիստակէս Դաւթեան, Մամբրէ Սանասարեան և Կարապետ Այվազեան վարդապետները, իսկ երիցութեան կարգով, Աստուածատուրեան եղբ. եղբորդ, ես հինգերորդ, Սրուանձտեանց եօթներորդ և Յովսկիմեան իններորդ։ Յունիս 7ին իններնուս եպիսկոպոսական ուխտադրութիւնը տեղի ունեցաւ Իջման Սեղանին առջև, և 8ին, Եղիայի վերացման կիրակին, ձեռնադրութիւնը կատարուեցաւ, Ներսէս Մուղալէրդեան եպիսկոպոսի խարտավիլակութեամբ, և Մկրտիչ Բաբամեան և Մեսրոպ Սմբատեան եպիսկոպոսներու ընթերակայութեամբ, Մակար Ա. կաթողիկոսի հանդիսադրութեամբ, և կատարեալ չքեղութեամբ։

Ձեռնադրութենէն անմիջապէս ետքը ուխտաւորական ուղեւորութիւն մը կատարեցինք Սրուանձտեանցի հետ, և Աղեքսանդր Մատուրեանի ծախքով Գեղարդայ Տերիվանքը, Գառնիի աւերակները, Գուինի կողմերը, և Արտաշատայ Խորվիրապը, ուր տենդով հասայ 11|23ին, և հապիւ միւս առտուն կրցայ Վիրապին խորը իջնել։ Էջմիածին դառնալուս կրցայ 15|27ին միւռոնի օրհնութեան հանդիսակից ըլլալ, Ս. Թովմաս առաքելոյ աջը կրելով, և Նարեկացւոյն մեծ աղօթքն ալ կարդացի կաթողիկոսին հրամանով։ Ձեռնադրութեանս վկայական կոնդակը ստացայ 16|28 թուականով, և 17|29ին մատուցի կանոնական առաջին պատարագը Մայր Տաճարին մէջ, և նոյն օր սովորութիւն եղած միաբանական սեղանն ալ տուի, և բաւական ընդարձակ խօսեցայ, Եկայք շինեցուք սուրբ զխորանն ղուսոյ բնաբանով, և եկեղեցւոյ շինութեան և պայծառութեան համար եկեղեցականութեան և աշխարհականութեան գործակցութիւնը օրինակելով ի Գրիգոր և ի Տրդատ։ Այդ միջոցին ուսուցչութեան պաշտօնով Էջմիածին մնալուս ինդիրն ալ յուզուեցաւ, բայց Վանայ քննչութեան երթալուս հրամանը վրայ հասաւ, ուստի նախապէս պէտք վրայ խօսելու կ'անցնիմ։

Դամասկոս, 1918 յունուար 10/23 Դշ.

Ձեռնադրութիւնը կատարուած, ուխտաւորներ այցելած, սովորական պատշաճները լրացուցած, և ուսուցչութեան առաջարկն ալ, ինչպէս պիտի պատմեմ, պայմանի մի կապած, կը պատրաստուէի Սրուանձտեանցի հետ Աղեքսանդրապոլով և Կարսով Կարին դառնալ, և ահա Կ. Պոլիսէ հեռագրական հրաման մը Վան ուղևորիլ կը պատուիրէր քննչական պաշտօնով, առանց պարագաները բացատրելու։ Կանուխէն ուղեգիծնիս կազմած եւ պատրաստութիւնները կատարած էինք, և ուրախ սիրտով պիտի մեկնէինք, Անի այցելել, ես իմ վիճակս դառնալ, և Սրուանձտեանց իւր քահանայական ձեռնադրութեան եկեղեցին կրկին պատարագել, երբ անակնկալ հրամանը բոլոր ծրագիրնիս կը խանգարէր. ուստի բաւական սեպեցի պատասխանել, որ պաշտօնագիրները Կարին ղրկեն, ուսկից կը խոստանայի անմիջապէս Վան ուղևորիլ, և միւս կողմէն կ'որոշէինք շուտափոյթ էջմիածին մեկնիլ։ Վերջին գիշերն էր, ամէն բան կապմ ու պատրաստ էր, և ահա՛ կէս գիշերին նոր հեռագիր մը կը ստանամ, թէ գործը ստիպողական է և թէ պէտք է առանց Կարին հանդիպելու ուղղակի Վան երթալ։ Պահ մը կը մտածեմ հեռագիրը ծածկել և որոշուած ուղեգիծնիս գործադրել, իբր թէ հեռագիրը ուշ հասած ըլլար, բայց սիրտս չեմ կրնար հանդարտեցնել, Սրուանձտեանցը կ'արթնցնեմ և միտքս կը հաղորդեմ, որպէսզի կամակից մը ճարեմ, բայց նա ալ կը սկսի վարանիլ. Վանին վնաս մը հասնելուն հաւանականութիւնը միտքը կը վրդովէ, և բաւական խորհրդակցելէ ետքը վերջապէս կ'որոշենք մեր ծրագիրէն հրաժարիլ և պատուէրին համակերպիլ։ Նա առաւօտուն կը մեկնի Տըփղիս, և ես ալ Իկտիր երթալու պատրաստութեանց կը ձեռնարկեմ, և յունիս 19/1 յուլիսին կ'ուղևորիմ։ Զորս եպիսկոպոսներ մինչև Մեծամօրի եզերքը յուղարկ կուգան, և ուսուց-

չութեամբ վերադառնալուս ողջոյններով կը բաժնուինք։ Բաւական ծանր ուղևորութիւն մը, և անծանօթ պաշտօն մը յանձն կ'առնէի, երբ պարբերական տենդի խօթութիւնն ալ վրաս կը տիրէր։

Իկտիր կը դիշերեմ, ուղևորութեան պէտքերը կը լրացնեմ, և լեռնային ճանապով կ'իջնեմ Պայազիտ։ Տենդը կը կրկնուի, բայց տենդի մէջ ալ քարոզելու կը ստիպուիմ, երբ ոտքի վրայ ալ կանգուն չէի կրնար կենալ, և առաջին անգամն էր որ նստած քարոզեցի։ Կառավարիչին տրամադրած չորս ոստիկաններու և յիսնապետի մը պաշտպանութեամբ Ապաղայի անկոխ ճանապարհով կ'ուղևորիմ, և երբ կը կարծէի կարճ ճանապով շուտով հասնիլ, խեղճ ճամբորդներու բազմութիւն մը կը պտնեմ շուրջս և կը պարտաւորուիմ անոնք անօգնական չթողուլ։ Ճելալիներու հզօր ցեղապետ Մէհմէտէ կը հիւրասիրուիմ առաջին գիշեր, միւս երեկոյ Բերկրիի Տէրյուսկանորդուոյ վանքը կ'օթեւանիմ, Արգելանի կուտարն ալ կը բարձրանամ, բայց ճանիկ գիւղին մէջ սաստիկ տենդով կը տառապիմ, նորընծայ Մակար քահանայէն խնամուելով։ Այս պատճառով Էիմ ու Կառց այցելել կ'արգիլուիմ, բայց ճանապս չեմ ընդհատեր, և յունիս 26/8 յուլիսին Վան կը մտնեմ, Աւանցէ սկսելով դիմաւորողներու ուղեկցութեամբ, և ուղիղ Ս. Նշանի առաջնորդարանը կ'երթամ օթեւանելու։

Կ. Պոլիսէ հասած գիրերէն և տեղւոյն վրայ քաղուած լուրերէն կը տեղեկանամ, որ խնդիրը ժողովուրդին և տեղապահ Պօղոս եպիսկոպոս Մելիքեանի միջև ծագած գժտութեան շուրջը կը դառնայ։ Պօղոս առաջնորդ ընտրուելու փափաքով պաշտօնական գործողութեանց կը դիմէ, բայց հակառակութեան հանդիպելով, գլխաւորները կ'ամբաստանէ և բանտարկել կուտայ, և ժողովուրդէն մաս մը ղայրանալով հռոմէականութեան դիմելու կը ձեռնարկէ։ Ժողովուրդին գայթակղութեան պատճառ կ'ըլլայ նաև գողութեան մը հեղինակները գտնելու համար Պօղոսի կողմէ տաճկակարդացողի մը հաց կարդալ տալով սպասաւորաց բռնի կերցնելը, իբր թէ անով գողը իսկոյն պիտի պայթէր ու յայտնուէր։ Պաշտօնը փափուկ էր, բայց աւելի դժուար կը դառնար երբ ո՛չ կոնդակ կար ժողովուրդին հաղորդելու և ո՛չ պաշտօնագիր կուսակալութեան ներկայելու, իբր թէ հնար

ըլլար անպաշտօն կերպով կացութիւնը ստուգել և դարմանել։ Պօղոս ալ միւս կողմէն զայրացած իւր պաշտպանութեան ձեռնարկած էր, և հրապարակաւ ալ կը խօսուէր թէ նա ընդունակ էր մինչև իսկ կեանքեր դաւաճանել իւր մտերիմ քուրդերու ձեռքով։ Իսկ իմ տենդս, ճանապարհի նեղութիւններէն ալ զայրացած, զիս առաջնորդարանի մէջ անկողինի ծառայելու պարտաւորած էր, և Պօղոսի զայրոյթին մատնուած ըլլալու գաղափարը միաքս կը պղտորէր։ Բարեբախտաբար ճանապարհին ծանօթացած էի Վանայ մեծամեծներէն Պետրոս Գաբամաճեանի հետ, որ բարեկամաբար առաջարկեց զիս իրենց Այգեստանի օդաւէտ տունը փոխադրել, ուր յատուկ մտադրութեամբ և տնեցիներու խնամքով կրցայ տենդէն բժշկուիլ, և կազդուրուելու համար պահմըն ալ Վարագայ վանքը օդափոխութեան երթալ։

Սակայն առողջական հոգերը չէին կրնար ներել որ պաշտօնական գործը յետաձգուէր, զի ծանր վիճակ առած էր և ժողովուրդն ալ անհամբերութեամբ ելքը սեսնալ կը սպասէր։ Ուստի թէ՛ հիւանդութեան անկողինէն, թէ՛ Փանոս և Պետրոս Գաբամաճեան հիւրընկալ եղբարց տունէն, և թէ՛ Վարագայ վանքէն ստիպուած էի գործերու հետևիլ, լուծումը փութացնել, և կոնդակի ու պաշտօնագիրի թերին ճարտար դարձուածներով լրացընել։ Մէկ կողմէն աշխատեցայ զայրացկոտ դաւանափոխները կասեցնել, և միւս կողմէն Պօղոսի կուսակիցները լռեցնել, քաղաքականութիւններով ժողովուրդը հանդարտեցնել, և պատշաճ կերպերով կուսակալը Պօղոսի պաշտպանութենէն ետ կեցնել, ըլլալիք կարգադրութեանց ծրագիր մը պատրաստել, և անոր գործադրութիւնը կեդրոնէն պահանջել։ Պէտք է յայտարարեմ թէ պատրիարք և կեդր. Վարչութիւն անպայման վստահութեամբ առաջարկները հաստատեցին. Պօղոս տեղապահութենէ հանուեցաւ և Լիմ երթալ ստիպուեցաւ, Կոտցի վանահայր Մաժակեան Յովհաննէս վարդապետ տեղապահ նշանակուեցաւ, յարմար անձերով նոր վարչութիւն կազմուեցաւ, և բանտարկեալներէն մաս մը արձակուեցաւ, և մնացեալներուն ազատուիլը դիւրացաւ։ Աւելի մանրամասնութեանց մտնել հարկ չեմ տեսներ. վարչական և քննչական գործառնութեանց ձևերը և միջոցները յայտնի են, իսկ իմ պաշտօնիս յատուկ պարագայն վաւերական գրութեանց թերին էր, զոր ստիպուեցայ մասնաւոր կերպերով լրացնել։

Բայց երբ Վանայ կացութիւնը փոքրիշատէ կը հանգարտէր ու կը կարգադրուէր, Պօղոսի գայրոյթը կը սաստկանար, և զանազան կողմերէ վրէժխնդիր բարկութեան պատրաստութիւններ կը լսուէին, զորս մինչև աստիճան մը կրնայի անտեսել, բայց երբ սկսան ապառնական գաղտնի նամակներ հասնիլ, այլևս խոհականութիւն չսեպեցի վտանգին առջև մնալ, և լռելեայն նախապատրաստութիւններս ընելով օգոստոս 4|16ին գիշերախառն Վանէ մեկնեցայ Արտամետի ճանպով։ Ճիշդ 40 օր մնացի Վանայ մէջ, և բաւական ծանր խնդիր մը կարելի եղած յաջողութեամբ փակեցի, և Պօղոսեանց ու Ապօղոսեանց հնօրեայ մրցումը զբրեթէ բնաջինջ եղաւ Վանայ մէջէն, զի Պօղոս Մելիքեան եպիսկոպոսը այդ վերջին անցքէն ետքը այլևս չկրցաւ հրապարակ իջնել, և Վանայ Գաւառական Վարչութեան վրայ տիրապետելու մարմաջը վերանորոգել։

Արտամետի ճանպով մեկնիլս ոչ թէ հետքս կորսնցնելու դիտմամբ էր, այլ Աղթամար հանդիպելու և անոր խնդիրն ալ քննելու յանձնարարութիւն ստացած էի Կեդրոնէն։ Խաչատուր կաթողիկոս զոհ գացած էր գողութեան մը, որ ընդհանրապէս կուսակցական գործիչներու և յատկապէս Արմենեան ընկերներու կը վերագրուէր, իսկ Խաչատուր չկրնալով անոնց հետքը գտնել, իւր միաբաններէն Խորէն և Պօղոս վարդապետները ամբաստանած և բանտարկել տուած էր, իբրև գործակից ենթադրելով կամ յաւ ևս խոստովանութիւններ քաղելու յոյսով։ Վանս գտնուած ատենս Խաչատուր ալ հոն էր և վարդապետներուն դէմ դատախազութիւնը կը վարէր։ Աշխատեցայ իւր ձեռնարկին տգեղութիւնը հասկցնելով կասեցնել, բայց անհնար եղաւ համոզել. առաջարկեցի միասին Աղթամար երթալ, բայց չկրնալով հաճեցնել, սխրպուեցայ առանձինն երթալ և տեղւոյն վրայ տեղեկութիւններ քաղել ու զննութիւններ կատարել։ Առաջին օրը Անգղ գիշերելով, և միւս օր Ոստանի մէջ Ս. Եղիշէ պատմաբանին գերեզմանը այցելելով, որև մտնելէն ետքը Աղթամարի կղզին մտայ։ Երկու օր անցուցի այնտեղ, Նարեկի վանքը այցելեցի, Սուրբ Փրկչի վանքը գիշերեցի, Կապուտկողայ վանքը հանդիպեցայ, Կարճկանի Քինթրանց գիւղը ելայ, և յառաջելով 9|21ին Բաղէշ հասայ, ուսկից մեկնելու վրայ էր առաջնորդ Կէօմրիւքճեան Մովսէս վարդապետը։ Վանքերն ու եկեղեցիները պտտեցայ, եւ

որովհետև Մուշ եղած էի, Ախլաթի կամ Խլաթայ ճանապան նախադասեցի, Թեղուտայ վանքը գացի, իբր հարիւրամեայ Ղազար Ղևոնդեան վարդապետը տեսայ և գիշերեցի, Շիրվանշէխի վրայէն Խնուս մտայ, և Գարաչոպանէն մինչև Խնուսայ Սևանը եկայ, և վերջապէս օգոստոս 23/4 սեպտեմբերին Կարին հասայ, ձեռնադրութենէն երկուքուկէս ամիս ետքը։

ԽԴ

Դամասկոս, 1918 յունուար 12/25 Ուր.

Կարին հասնելս ոգջունուեցաւ Կարնոյ տագնապին բանտարկեալներէն վերջին մնացած երեքներուն ներմամբ արձակուելովը սեպտեմբեր 3/15ին, իսկ չորրորդը որ ի բացակայութեան դատապարտուած էր և արտասահման կը գտնուէր, բնական էր որ չկարենար շնորհէն օգտուիլ։ Մկրտիչ Սանասարեան բարերարին այցելութենէն ետքը, իւր խորհրդական ու գործադիրը Կարապետ Եղեանց ալ ուզեր էր մօտէն տեսնել իւր ծրագրած հաստատութեան կացութիւնն ու պարագաները, և այդ նպատակով Կարին եկաւ սեպտեմբեր 5/17ին, և ամէն բան զննեց ու տեսաւ նախկին ուսուցչի աչքերով, և երեք շաբաթ բոլոր մանրամասնութեանց գլուտակցաբար տեղեկանալով և համաբար ուսումնասիրելով, սեպտեմբեր 25/7 հոկտեմբերին մեկնեցաւ Կ. Պոլիս, Կեդր. Վարչութեան հետ Սանասարեան վարժարանի յարաբերութիւնները ճշդելու և կանոնագիրը վաւերացնել տալու, որոնք լրացընելով դարձաւ Բէթէրապուրկ։ Թէպէտ ձեռնադրութենէս բաւական ատեն անցեր էր, և գլխաւոր քաղաքներ այցելեր էի, սակայն ամէն տեղ պատարագի հրաւէրները մերժեր էի, առաջին եպիսկոպոսական հանդիսաւոր պատարագը վիճակիս մէջ մատուցանելու համար, ինչպէս որ ալ մատուցի սեպտեմբեր 14/26ին Խաչվերացի կիրակի օրը։ Իսկ առաջին ձեռնադրութիւնը կատարեցի հոկտեմբեր 19/31ին քաղաքի երկու նորընծաներու վրայ, զորս կոչեցի Ներսէս և Մակար, վարդապետութեան և եպիսկոպոսութեան ձեռնադրողներուս պատուոյն։

Կարնոյ առաջնորդական պաշտօնավարութիւնս երկրորդ անգամ ընդհատուած էր Էջմիածնի ուղևորութեամբ և Վանայ քննչութեամբ, զի մայիս 4|16էն մինչև օգոստոս 23|4 սեպտեմբեր մօտ չորս ամիս բացակայ գտնուած էի։ Նորէն գործերը ձեռք առնելս երկար պիտի չըլլար Էջմիածին ուսուցչութեան կոչուելուս նախատեսութեամբ, բայց որովհետև ստոյգ և վճռական որոշում չկար, չուզեցի ո՛չ խօսք ընել և ո՛չ պաշտօնավարութեան փոփոխութիւն մտցնել, և գործերը շարունակեցի ըստ առաջնոյն իրենց սովորական ընթացքին համեմատ։ Մեծ և նշանաւոր պատրուակ մը չունիմ այդ միջոցին մէջ պատմելու, որ առաջնորդութեանս վերջին եղաւ և հազիւ տարի մը տևեց մինչև 1887 յուլիս 6|18։ Գլխաւոր յիշուելու պարագայն Թորդումի, և Նորման, և Կիսկիմ և Սպեր թեմերու հովուական այցելութիւնս է, որով կը լրանար բոլոր յարակից վիճակները մօտէն տեսնելու փափաքս, զի Խնուսն ու Բասենը այցելած էի 1882ին Տարօնոյ քննչութեան առթիւ, Դերէնն ու Քղին ալ 1885ին յատկապէս ուղևորելով։ Իսկ մնացեալ գործունէութիւններ շարունակութիւնն էին առաջնորդական պաշտօնավարութեան որ մասամբ ինքնին յայտնի է, և մասամբ ալ կանուխէն բացատրած եմ։ Աւելցնեմ որ Կիսկիմէ Խոտորջուր ալ գացի, հռոմէականաց կեդրոնը եւ պատուով ընդունուեցայ ու գիշերեցի։

Առաջնորդական պաշտօնավարութիւնս տևած է եօթը ամբողջ տարիներ, 1880 յունիսէն 1887 յուլիս, որոց հինգուկէս տարին տեղւոյն վրայ և իբր մէկուկէս տարին ի բացուստ Կ. Պոլիս գտնուած միջոցին, սակայն կատարեալ պատասխանատուութեան և իսկական գործունէութեան պայմանով։ Կրնամ սիրտի հանգստութեամբ յայտարարել թէ անօգուտ չեղայ Կարնոյ, գլխաւորապէս յարակից վիճակներուն ընդարձակուելովը, վարժարանաց դարձուած յատուկ հոգածութեամբ, ներքին վարչական ձևերու կարգադրութեամբ, և ազգային զարգացման տրուած քաջալերութեամբ։ Օգտակար եղան նաև անձամբ այցելութիւններս, Սանասարեան վարժարանի Կարնոյ մէջ հաստատուիլը, և մանաւանդ ազգային տագնապին յաջող վերջաւորութեան համար թափուած ճիգերը։ Իբրև բարեյաջող պաշտօնավարութեան վկայութիւն պէտք է ընդունուի մինչև այսօր Կարնոյ մէջ իմ անձիս գովութեամբ յիշուիլը և իմ օրերուս օրհնութեամբ

փնտռուիլը։ Երբոր եղելութիւններ են յիշատակուած կէտերը, չեմ կարծեր որ սին պարծենկոտութիւն համարուին գրածներս։ Պաշտօնը թողուլս ալ իմ նախաձեռնութեամբ կամ մուրացածոյ պատճառներով կամ շարունակելու դժկամակութեամբ յերիւրուած խաղ մը չէր, այլ հայրապետական բացարձակ հրամանով պարտադիր դարձած գործ մը, ինչպէս մանրամասնօրէն պիտի պատմեմ, և այն ալ ոչ առաւելագոյն փառքի հրապուրանօք փընտրուած, զի ընդհանուր ըմբռնմամբ ուսուցչութիւնը առաջնորդութենէ բարձր չէ։

ԽԵ

Դամասկոս, 1918 յունուար 14/27 կիր.

Գէորգ Կաթողիկոս իւր հիմնած և փայփայած և օժտած վարժարանական հաստատութեան Հոգևոր Ճեմարանի անուն և աստիճան էր տուած, բայց իւր օրով ո՛չ ճեմարանական բարձրութեան էր հասած և ո՛չ հոգևորականութեան էր ծառայած։ Իսկ իրմէ ետքը Աթոռին եռամեայ պարապութեան ատեն աւելի բան մը չէր գործուած։ Մակար կաթողիկոսի առաջին հոգերէն մին եղաւ յիշուած կրկին նպատակները իրագործել, և այս գիտմամբ Էջմիածին հաւաքեց ռուսահայ լաւագոյն ուսուցիչները, ինչպէս են՝ Արշակ Նահապետեան, Սեդրաք Մանտինեան, Փիլիպպոս Վարդանեան, Ստեփան Պալասանեան, Մկրտիչ Պալեան, Սարգիս Գաբրիէլեան, որոնք եթէ կրնային արտաքին ուսմանց բարձրանալուն օժանդակել, բայց հոգևորական ուսմանց ճիւղը միշտակար կը մնար։ Ուստի նոյն իսկ ուսուցիչներ խմբովին կաթողիկոսին կը դիմեն և համալսարանական կրօնուսոյցի մը պէտքը կը զգացնեն, Հոգևոր Ճեմարանի ուսուցչական մարմինը լրացընելու համար։ Կաթողիկոսը իրենց կը թողու ընտրելին ցուցնել, որ ինքն ալ կոչելու հոգ տանի. սակայն մօտերէն տրամադրելի մէկը չեն գտներ։ Նահապետեան իմ անունս կուտայ, Սանասարեանի հետ Կարին եկած ատեն ծանօթացած ըլլալով. ընդ-

հանուր համաձայնութիւն կը գոյանայ և կաթողիկոսին կ'առաջարկեն։ Երբոր Մակար կը պատրաստուէր առաջարկը գործադրել, Վեհապետեան պատրիարքին նամակը կը ստանայ, որ եպիսկոպոսցուներու անունները կը հաղորդէր, որոնց մէկն ալ ես էի, և պատշաճ կը դատուի իմ գալուս սպասել, և այն ատեն գործադրութեան անցնիլ։ Էջմիածին հասնելուս Ճեմարանի ուսուցիչներուն յաճախ այցելութիւնները դիտեցի, բայց ո՛չ ակնարկ մը լսեցի, և ո՛չ բան մը կռահեցի, մինչև որ ձեռնադրութիւնը լրացաւ և ուխտերու այցելութենէն դարձայ։ Այն ատեն միայն Արշակ Նահապետեան, որ միանգամայն Ճեմարանի տեսուչ էր, և Պետրոս Սիմէոնեան որ Էջմիածնի ամսագիրին խմբագրապետն էր, եկան յայտնել թէ կաթողիկոսը առաջարկ մը պիտի ընէ, բայց նախապէս կ'ուզեն իմ արամադրութիւնը իմանալ, թէ կը յօժարի՞մ արդեօք առաջնորդութենէ հրաժարիլ և ուսուցիչ մնալ։ Իմ պատասխանս եղաւ թէ ուսուցչութիւնը սիրով առաջնորդութեան կը նախադասեմ, բայց օր առաջ կարնոյ թեմակալութեան ուխտը ընելէ և Կարնեցւոց ծախքով եպիսկոպոս ձեռնադրուելէ ետքը իմ նախաձեռնութեամբ հրաժարիլ չեմ կրնար, մանաւանդ որ հրաժարականը պէտք է որ Փաւառական Ժողովէն ալ ընդունուի և Կ. Պոլսոյ Կեդր. Վարչութենէն վաւերացուի։ Տարբեր կ'ըլլայ խնդիրը եթէ կաթողիկոսը բացարձակ հրամանով և բարձրագոյն իշխանութեամբ հրաման մը արձակէ։ Մեր բանակցութիւնք կրկնուեցան, կաթողիկոսէն ալ դնահատուեցան, թէպէտ առաջնորդներ պատրաստելը թեմ մը կառավարելէ գերագոյն կը դասէր, և զիս պահելու հաստատ որոշումը տուած էր, Արտաքին Հայաստանեայց ձեռագիրս ալ կարդալով, զոր իբրև գրական նուէր իրեն ներկայեր էի։ Վրայ հասաւ Վանայ քննչութեան պաշտօնն ալ, և որոշուեցաւ որ ես առայժմ Վան մնամ և կաթողիկոսը Կ. Պոլսոյ պատրիարքին հետ բանակցի. իսկ ես խոստացայ այդ պարագաները կարգադրուելէն ետքը յօժարակամ առաջնորդութենէ հրաժարիլ և ուսուցչութեան գալ, և այս պայմանով 1886 յունիս 19|31ին Էջմիածինէ մեկնեցայ, և անոր կ'ակնարկէին Մեծամօրի մօտ եպիսկոպոսներու կրկնած ցտեսութեան հրաժեշտի ողջոյնները։

Վանայ քննչութիւնը կատարած միջոցիս Մակար կաթողիկոս Կ. Պոլսոյ պատրիարքին հետ կը բանակցի, և 1887 յունիս

10|22 թուականով կոնդակ մը կ'ուղղէ, հրամայելով իսկոյն, առանց յապաղման և առանց վարանման առաջնորդութենէ հրաժարիլ և Էջմիածին երթալ աստուածաբանական ճիւղին ուսուցչութիւնը ստանձնելու։ Կոնդակը ստացայ և կարդացի յունիս 24|6 յուլիսին Թորգումի և Սպերի այցելութենէ դառնալուս, և իսկոյն հրամայեալ հրաժարագիրը պատրաստեցի, և յունիս 28|10 յուլիսին Գուսառական ժողովին ներկայեցի, որ պահ մը կ'ուզէր կաթողիկոսին դիմել և հրամանը ետ առնել տալ, բայց անյարմարութիւնն ու անհնարութիւնը բացատրելուս վրայ, փղձկեալ սիրտով որոշեց հաւանիլ, և ես իսկ յուզուելով ժողովարարին թողուլ ստիպուեցայ։ Ուղևորութեան պատրաստութիւններն ու վիճակային գործոց առժամեայ կարգադրութիւնն ալ լրացնելով կարինէ մեկնեցայ յուլիս 6|18ին։ Մտադրած ըլլալով նախապէս Կ. Պոլիս հանդիպիլ, թէ՛ հրաժեշտի ողջոյն մը տալու Կեդրոնին և մերայնոց, և թէ՛ իրաց կացութիւնը մօտէն իմանալով ըստ այնմ վարուելու համար Էջմիածնի մէջ։ Յուլիս 22|3 օգոստոսին Կ. Պոլիս հասայ և օգոստոս 19|31ին մեկնեցայ, ամիսի մը չափ հոն մնալէ և կարևորը լրացնելէ ետքը։ Օգոստոս 23|4 սեպտեմբերին Պաթում հասայ, և Տփղիսի ճանապով սեպտեմբեր 3|15ին Էջմիածին մտայ ուր Մոմատուն կոչուած բաժնին մէջ ինձի բնակավայր որոշուեցաւ։

Աստուածաբանական ուսմանց ընթացքը ծանօթ չէր ուսուցչակից ընկերներուս, և առաջին ուսուցչական ժողովին մէջ ինձի յանձնեցին զայն կազմել և ներկայել ընդհանուր ժամանակացոյցին յարմարցնելու համար։ Շաբաթական 24 ժամ դասախօսութիւն յանձնուեցաւ, երեք լսարաններու վրայ համեմատաբար բաշխելի, իբր զի երրորդ լսարանը միայն մէկ տարի ունէր շրջանաւարտ ելլալու և պէտք էր անոր աւելի ժամեր նուիրել, քան յաջորդներուն, որոնք երկու և երեք տարիներ ունէին, եւ համեմատաբար նուազ ժամեր կրնային ունենալ. ուստի կազմուելիք ծրագիրը միայն առաջիկայ տարուոյն պիտի ծառայէր։ Հարկ եղաւ բնական աստուածաբանութիւնը սկսիլ հոգեբանութիւնն ալ խառնելով, ջատագովական ճիւղը լրացնել, և տեսական ու բարոյական աստուածաբանութեանց անցնիլ. շաբաթական դաս մըն ալ Աւետարաններու ներածութեան յատկացուեցաւ երեք լսարանները համախմբելով, որոց շաբաթ երեկոյներ

բարոյախօսութիւն ալ կը կատարէի եկեղեցական և աշակերտական կեանքէ նիւթերով։ Ուսանողներու թիւը 27 էր որոնցմէ 15ը առաջին լսարանին ու մնացեալները երկրորդին ու երրորդին մէջ։ Դասախօսութեան գիրք կամ ձեռնարկ չկար, և պէտք էր զայն նորէն պատրաստել, որուն համար գրաբար լեզուն յարմարագոյն տեսնուեցաւ, թոյլ տալով որ ես արևմտեան և ուսանողները արևելեան աշխարհաբար գործածենք դասերը աւանդելու և դրձնելու համար։ Գործէն հասկցողներ դիւրաւ կ'իմանան թէ շաբաթական 24 ժամ դասաւանդութիւնք և միանգամայն ձեռնարկ տետրերու պատրաստութիւն բաւական ծանր աշխատանք կը պահանջէր։ Ուսուցչական ձևին համար բնական էր որ գործածէի Հռոմի համալսարանին հեղինակական և տրամաբանական ոճը, որով ես ալ ուսած էի, որ եթէ հնաւանդ ալ կ'ըսուի, սակայն մաուորական և տրամաբանական զարգացումը կը դիւրացնէ։ Իրօք ալ զգալապէս օգտակար եղաւ ուսանողներուն մտայնութիւնը կազմելու, և ուսուցչակիցներու հաւանութեան արժանացաւ, և կաթողիկոսէն ալ գնահատուեցաւ, մասնաւոր ունկնդրութեանց և եռամեայ ու տարեկան քննութեանց առթիւ։ Առաջին դասախօսութիւնը կատարեցի 1887 սեպտեմբեր 21|3 հոկտեմբերին, և ամավերջի քննութիւնները սկսան 1888 ապրիլ 30|12 մայիսին։

Ներքին կեանքս առջի բերան կատարեալ վանականութեան յարմարցնել ուզեցի, հասարակաց սեղանի ալ ինչնելով, բայց երբ լսեցի որ իմ ինչնելս կաթողիկոսին իբր փասա կը ծառայէ միւս եպիսկոպոսներն ալ ստիպելու, հարկ սեպեցի ես քաշուիլ որպէսզի խօսքի առիթ տուած չըլլամ։ Այն ատեն Արշակ Նահապետեանի և Պետրոս Սիմէոնեանի հետ, որ միևնոյն Մոմատունի բաժինին մէջ կը բնակէին, ընկերովի սեղանակցութիւնք կազմակերպեցինք, և գիշերները մտերիմ եպիսկոպոսներ կը յաճախէին մեզի հետ ատեն անցունելու, զի Նահապետեան աշակերտները ննջելու չհանած ընթրելու չէր գար, որով ես ալ ատենկ'ունենայի գիշերուան առաջին ժամերուն հանդարտօրէն աշխատելու։ Եկեղեցական պաշտամանց ալ ներկայ կը գտնուէի, ցուրչափ ուսումնական աշխատութեանց և դասախօսութեանց արգելք չէին ըլլար։ Մեծ Պահոց մէջ սաղմոս քաղելու սովորութիւն կար, և կարգը եպիսկոպոսներէն կը սկսէր. իմ կարգիս օրը ճա-

շու սաղմոսին ալ ուզեցի լսնել, դասախօսութիւնը զանց ընելով, երբ տեսայ որ ծերունի Յարութիւն եպիսկոպոսը փիլոնը առած կուգար, որ ինծի մօտենալով իմ տեղս գալը յայտնեց, և ճեմարանը ցուցնելով յարեց. «Քու սաղմոսդ այնտեղ է, հոն գնա քաղէ՛, այստեղ մենք ալ կրնանք քաղել»։ Ուսումնական չեղող եպիսկոպոսին այս ուսումնասէր զգացումը այնպիսի քաղցր տրպաւորութիւն մը թողած է վրաս, որ այստեղ ալ չուզեցի անյիշատակ անցունել։ Բոլոր եպիսկոպոսաց և վարդապետաց հետ սիրալիր յարաբերութիւններ պահեցի և ազնուասիրտ փոխարինութիւն տեսայ, հարկաւ ոմանց հետ աւելի մտերմական և ներքին կերպով, ինչպէս էին Խուդավէրդեան, Սանասարեան, Դաւթեան և Տէր-Գասպարեան եպիսկոպոսները։ Ուսուցչական խումբին հետ ո՛չ լոկ պաշտօնակիցի՝ այլև սրտակիցի կապեր կազմեցի, և ինծի ներուեցաւ գիշերներն ալ դուռերուն գոցուելէն ետքը անոնց այցելել, զի իբրև եպիսկոպոս և իբրև ուսուցիչ երկկողմանի յարաբերութիւններ պահել անհրաժեշտ էր։ Անձնական զբաղմութեան համար ալ իմ սեփական ձին Կարինէ բերել տուած էի, և հեծեալ պտոյտներ կը կատարէի Ներսիսեան անտառին և շրջակայ դաշտերուն մէջ։ Սառոյցական վիճակս ալ միշտ գոհացուցիչ մնաց ու հիւանդութիւն չկրեցի. հեռաւոր պտոյտներ ալ կատարել մտադիր էի, եթէ ամառուան սկիզբը ետ դառնալ պարտաւորուած չըլլայի։

Իսկ կաթողիկոսին դէպ առ իս վերաբերումը ամէն ենթադրութենէ վեր եղաւ, ոչ միայն ուսումնական, այլև անձնական և յարաբերական տեսակէտէն բարձր գնահատում ցուցնելով, և կարևոր գործերու մասին կարծիքներ հարցնելով, և միջնորդութիւններս յարգելով։ Հասնելուս քիչ ետքը նոյեմբեր 10|22ին իւր օծման տարեդարձը պիտի տօնուէր, երբ միւս կողմէն հայերը զինուորագրելու գործողութիւնը կը սկսէր, և ժողովուրդին մէջ տխրութիւն ու վիշտ կը տիրէր, որուն համար կաթողիկոսը տօնական հանդէսներ արգիլած էր։ Սինոդականներ չփոթած հրամանին անպատեհութիւնը կը զգային, բայց կաթողիկոսին զգացնել տալու համարձակութիւնը չունէին։ Խմբովին ինծի կը դիմեն այդ պաշտօնը կատարել, և պնդելնուն վրայ կը պարտաւորուիմ համակերպիլ, և պատշաճ կերպերով անպատեհութիւնը բացատրել։ Կաթողիկոսը շնորհակալութիւն կը յայտնէ

որ իր միտքը կը լուսաւորեմ. հրամանը կը փոխէ, հանդէսները տեղի կ'ունենան, բայց այս պարագան պատճառ կ'ըլլայ որ ուրիշ անգամներ ալ այդպիսի միջնորդութեանց պարտաւորուիմ։ Ես ալ փոխադարձաբար Մակարի անձին հանդէպ խորին յարգանք և անկեղծ պատկառանք զգացած էի. նա իրաւ զուրկ օտար լեզուաց և օտարազգի գիտութեանց հմտութենէն, բայց Հայ Եկեղեցւոյ և Հայ Ազգի պատկանող ծանօթութիւնները լիապէս ունէր, այնպէս որ իր հեղինակութիւն կ'ընդունէի անոր հմտութիւնը եկեղեցական և հայագիտութեան ամէն ճիւղերու մասին, և ստէպ կը գիմէի Հայ Եկեղեցւոյ տեսութեանց մասին ապահով տեղեկութիւն քաղելու համար։ Անձամբ ալ վեհ էր և միանգամայն մարդասէր, ուշիմ և հետաքրքիր, և ինամով կը հարցունէր և հաճութեամբ կը լսէր օտար եկեղեցիներու վերաբերող տեղեկութիւնները։

Պարագայ մը ևս ուրիշ եղաւ կաթողիկոսին դէպ առ իս բարեսրտութիւնը աւելցնելու։ Իւր բաղձանքներէն մին ալ ճեմարանաւարտ եկեղեցականներ ունենալն էր, բայց Գէորգին ժամանակ ո՛չ մէկ ճեմարանցի եկեղեցականութեան մասած չէր եւ այդ մասին Մակարէ յանձնարարութիւն ստացողներն ալ դեռ յաջողած չէին։ Վերջին անգամ ինծի յանձնեց իւր փափաքին կատարումը, և ես դասախօսութեանց և բարոյախօսութեանց մէջ հեռաւոր թելադրութիւններէ ետքը, երբորդ լսարանցւոց հետ ուղղակի յորդորականներու անցայ, և յօժարութիւնն արթնցուցի, և նոյնիսկ տեսուչ Նահապետեան իւր հեռաւոր փափաքին ժամանակը հասած զգաց, և գործադրել որոշեց, որով կը բացայայտեցի 1888 յունիս 15|27ին Նահապետեանը չորս ճեմարանականներով կաթողիկոսին ներկայացնել իբրև եկեղեցականութեան յանձնառուներ և հայրապետական օրհնութիւնը խնդրել։ Զորս յանձնառուներն էին Կարապետ Տէր-Մկրտչեան, Սէթ Յարութիւնեան, Աստուածատուր Տալլաքեան և Յովհաննէս Մուսաբէկեան։ Վեց աւարտողներէն Արշակ Տէր-Միքայէլեան մտադիր ըլլալով եւրոպական համալսարան երթալ՝ իւր վերջնական որոշումը յետաձգեց, իսկ Յովհաննէս Գալէմքեարեան տոճկահայ և տկարը ըլլալուն ետև թողուեցաւ։ Նահապետեան չուտով ձեռնադրուեցաւ և եպիսկոպոսացաւ և երկար չապրեցաւ, Տէր-Մկրտչեան այսօր եպիսկոպոս է, Տալլաքեան վաղամեռիկ եղաւ, իսկ Յա-

բութիւնեան և Մուսաբէկեան իմ հեռանալուս վրայ միտքերնին փոխեցին։ Սակայն ճեմարանականներէն կուսակցօն և ամուսնացեալ եկեղեցականութեան յանձնառուներ հետզհետէ ուժգնան և Հոգևոր ճեմարանը իւր նպատակը արդիւնաւորել սկսաւ։

Սակայն կաթողիկոսին ցուցած մեծ գնահատումը և անկաշկանդ յայտարարութիւնը տարբեր հետևանք ունեցան։ Մակար որչափ և կառավարութեան հետ հաշտ ապրելու հակամէտ, նոյնչափ ալ եկեղեցական կանոնաց պահպանութեան և պաշտպանութեան համար հաստատամիտ և ամուր էր, ուստի սկսաւ համարձակ դիմադրել կառավարութեան զանազան քմահաճ պահանջներուն, որով Մակար ալ տէրութեան ընդդիմադիր կարծուիլ սկսաւ։ Պրոկուրոր Նիկողայոս Տէր-Յովսէփեան, լուսաբարոպետ Երեմիա Գալատեան եպիսկոպոսի օժանդակութեամբ, զիս իբրև Մակարի զգացմանց փոփոխութեան պատճառ կը ցուցնեն, և հեռացնելու պէտքը կը մատնանշեն։ Առաջին քայլը առնուեցաւ ինէ հպատակութեան փոփոխութիւն պահանջելով, որ կարենան իմ մասին ազատ տրամադրութիւններ ընել, որուն ես յանձնառու չեղայ։ Յետոյ սկսաւ կաթողիկոսէն պահանջուիլ որ զիս արձակէ, և ասոր ալ Մակար յանձնառու չեղաւ, և պատճառաբանեալ պատասխան տուաւ։ Վերջապէս յատուկ պաշտօնեայ մը յղուեցաւ Բեթլպուրկէ կաթողիկոսը սատիպելու, և այս նպատակով յունիս 27|9 յուլիսին Էջմիածին եկաւ Արտաքին Գործոց Նախարար Պարոն Կիրսի Եղբայրը, որ մէկ քանի օրուան մէջ կաթողիկոսը խոնարհեցնել յաջողեցաւ խիստ միջոցներու սպառնալիքով։ Յուլիս 2|14ին կաթողիկոսէն հրաւիրուեցայ լսելու թէ իւր ամէն միջոցները սպառած են, և եղէգի քաղաքականութեան գլուխ ծռելու պարտաւորուած է, մայրի ծառին քաղաքականութեան արմատախիլ ըլլալու վտանգէն ազատելու համար։ Հեռացումիս պատուաւոր ձև մը տալու համար իմ կողմանէ հրաժարիլ առաջարկուեցաւ, զոր յանձն չառի՝ մուրացածոյ պատճառներու դիմող և գործին կարևորութիւնը չգացող չերևնալու համար, մինչև որ կաթողիկոսը իմ աշակերտներուն ինձի յաջողելու կարող ըլլալը պատճառելով, յատուկ կոնդակով զիս ուսուցչութենէ կ'արձակէր։ Յուլիս 17|29ին կաթողիկոսին հրաժեշտի ներկայացայ Բիւրականի ամառանոցը Մինաս Չերազ գլուխին հետ, որ նոյն օրեր Մայր Աթոռոյ ուխտի էր եկած, և

19|31ին յուզուած և գրեթէ արտասուագին էջմիածինէ մեկնեցայ Ապարանի ճանապով և յուլիս 23|4 օգոստոսին Զերազի հետ այցելեցինք և զիշերեցինք Անիի աւերակները, և Ալիքսանդրոպոլ, Ախլցխա ու Ախալքէլէք հանդիպելով և օթևանելով, Մելիխայէլովքայէ իջանք Պոթում, և անտի նաւելով օգոստոս 11|23ին հասանք Կ. Պոլիս:

Այսպէս վերջացաւ էջմիածնի ուսուցչութեանս շրջանը, որ թէպէտ դպրոցական տարիէ մը աւելի չտևեց, 1887 սեպտեմբերէն մինչև 1888 յուլիս, սակայն հիմնական փոփոխութիւն յառաջ բերաւ ճեմարանի ընթացքին վրայ, և եկեղեցականութեան ծառայող Հոգևոր ճեմարանի կերպարանը իրապէս տուաւ՝ իրաւապէս այդ նպատակին սահմանուած Գէորգեան հաստատութեան: Միւս կողմէն զիս մօտէն և լիապէս տեղեակ ըրաւ Մայր Աթոռոյ ներքինին և ընթացքին, որ ապագայ պաշտօններուս մէջ մեծապէս օգտակար եղաւ եղելութիւնները կշռադատելու և յարաբերութիւնները գնահատելու, և ընթացքիս ուղեցոյց ըլլալու: Իբր անձնական զգացում կրնամ հաւատել թէ կեանքիս երջանկագոյն օրերն եղան՝ վարչականէ ապատ գրականի նուիրեալ պատուաւոր և հանգիստ կերպով էջմիածին անցուցածներս:

ԻԶ

Դամասկոս, 1918 յունուար 15|28 Բշ.

Ցաւով բաժանուեր էի էջմիածինէ, ոչ միայն անհատական կեանքիս, այլև հայ եկեղեցականութեան զարգացման համար աշխատութենէ զրկուելուս տեսակէտէն. փափաք ունէի, և կաթողիկոսին հաւանութիւնն ալ ստացած էի, ճեմարանի աշակերտութեան կէսը Տաճկահայերէն առնել, և ազգին երկու մեծ բաժիններուն մէջ աշխատող եկեղեցականներու միջև եղբայրակցութիւնը քաջալերել և համերաշխութիւնը արծարծել: Այդ զգացումը սևեռեալ գաղափար մը եղած էր միտքիս մէջ. ուստի Կ. Պոլիս մտած օրէս ամէն տեղ և ամենուն հետ այդ նիւթը կը

բացատրէի, յարելով որ եթէ հնար չեղաւ միակ հաստատուն թեամբ այդ միտքը իրագործել, գոնէ նմանօրինակ հաստատուն թիւն մըն ալ Տաճկահայոց համար կազմուի։ Արդէն եկեղեցական վարժարանի մը գաղափարը շատ հին էր տաճկահայ վարչութեան և ժողովուրդին մէջ, և իմ բացատրութիւններս լրիւ ընկալեալ գաղափար սկսան տարածուիլ։

Դիպուածակոն պարագայ մը աւելի ոյժ տուաւ այդ գաղափարին։ Յարութիւն Վեհապետեան պատրիարքին հրաժարելուն օրերն էին, և նոր պատրիարքի ընտրութեան գործողութիւնները կը սկսէին, իսկ Կրօնական ժողովը իմ անունը եպիսկոպոսաց ցանկին մէջ չէր անցուցած արտասահման գտնուելու պատճառանքով, թէպէտ ես արտասահմանէ եկած Կ. Պոլիս դառնալու վրայ էի։ Առաջին քուէարկութեան մէջ Բարթողիմէոս Զամիչեան և Խորէն Նարպէյ համեմատականի մնացին, և Նարպէյէ խլուած հրաժարականին վրայ երկրորդ քուէարկութեան մէջ Խորէն Աշըգեան ընտրուեցաւ 1888 սեպտեմբեր 29|11 հոկտեմբերին, որ եկաւ և պաշտօնը ստանձնեց։ Եկեղեցական բարեկարգութեան ոգւով տոգորեալ մի անձ, իբր եկեղեցականաց գաւառական պաշտօններէ խուսափելուն դարման եպիսկոպոսական ժողով գումարելով՝ առաջարկեց վիճակային ընտրութիւնը խափանել և առաջնորդները կեդրոնէ անուանել և անոնց պետական ոճիկ կապել տալ։ Ժողովին մէջ ես ընդդիմախօս կանգնեցայ, ազգային իրաւունք մը խափանել և առաջնորդները կառավարական պաշտօնեաներ դարձնելու անպատեհութիւնը բացատրելով, ինչ որ Աշըգեանի հաճելի չեղաւ, և ետեւէս խօսածներն ալ ականջս հասան. ուստի բացատրութեան համար առանձին տեսակցութեան դարձայ, և երկարօրէն բացատրեցի, թէ եկեղեցականներ յատուկ դասակարգութեամբ պատրաստելու և ոգեւորելու պէտք է աշխատիլ, որ եկեղեցական բարձրագոյն վարժարանի մը հաստատութեամբ միայն կրնայ ձեռք բերուիլ, և ո՛չ ազգային կանոնները խախտելով կամ կառավարութեան դրամով։ Աշըգեան, որ Սրմաչի վանքին և վարժարանին աշխատաւորներէն էր, շուտով համակերպեցաւ. միջոցներու վրայ սկսանք խօսիլ, և յարմարագոյն տեսնուեցաւ որ, ինչպէս Ղալաթիոյ ուխտատեղւոյն հասոյթով Կեդրոնական Վարժարանը կազմուեցաւ, Փարակէօմրիւկի ուխտատեղւոյն հասոյթով ալ եկեղեցական վար-

ժարան մը բացուի։ Այսպէս կազմուեցաւ Գարակէօմրիւկի մատակարարութեան և եկեղեցական վարժարանի պատրաստութեան Յանձնաժողովը, 1888 նոյեմբեր 30|12 դեկտեմբերին, Աշըգեանի պաշտօնավարութեան սկսելէն հազիւ ամիս մը ետքը։ Յանձնաժողովին նախագահութիւնը և Գարակէօմրիւկի քարոզչութիւնը ինծի յանձնուեցաւ, իսկ անդամներն առնուեցան նշանաւոր ազգայիններէն, ինչպէս են՝ Աբիկ Ունճեան, Տիգրան Եուսուֆեան, Յովհաննէս Էսայեան, Պատրիկ Կիւլպէնկեան, Գաբրիէլ Գաբրիէլեան։ Փափաքս իրականանալու ճանպուն մտած էր։ Իսկ իբրև առաժամեայ պաշտօն հոկտեմբեր 21|2 նոյեմբերին յանձնառու եղած էի կեդրոնական Վարժարանի կրօնական դասերը աւանդել։

Յանձնաժողովին առաջին գործը եղաւ Գարակէօմրիւկի հասոյթը ապահովել, զեղծումները վերջացնել, և եկեղեցին բարեկարգել, որուն գործադրութիւնը ուղղակի իմ վրս մնաց, զի Յանձնաժողովին անդամներուն դիւրին չէր հեռաւոր Գարակէօմրիւկի թաղը երթալ և գործերուն անձամբ հսկել։ Երկրորդ գործն էր եկեղեցական վարժարանին տեղը որոշել, զի Գարակէօմրիւկի թաղը յարմար չտեսնուեցաւ, և հետզհետէ քննութեան ենթարկուեցան Խասքէօյի մէջ Շահնազարեան վարժարանի լքեալ շէնքը, Զէյթինպուրնուի Ս. Յակոբայ հիւանդանոցը, Իւսկիւտարի մէջ հրկիզեալ Ճեմարանին տեղը, Գընալը կզլին մէջ եկեղեցապատկան գեռինը, բայց ամէնն ալ գոնացուցիչ չտեսնուեցան, թէ՛ դիրքերուն կողմէն, և թէ՛ մեծածախս պատրաստութեանց և շինութեանց կարօտ ըլլալնուն համար։ Քննութիւնները կատարողն ալ ես էի, մանրամասնեալ տեղեկութիւններ հաղորդելով Յանձնաժողովին։ Պարտուրքի առաջարկութեամբ Արմաշի վանքն ալ նկատի առնուեցաւ, և անոր քննութեան գացի 1889 փետրուար 13|25ին, և 18|2 մարտին դարձայ. բերած տեղեկութիւններս համոզիչ գտնուեցան այնտեղ հաստատելու եկեղեցական վարժարանը։ Եկեղեցին ու եկեղեցական դիրքը և ուխտատեղին կը նպաստէին եկեղեցական հոգւոյն, մայրաքաղաքէ հեռու ըլլալը կ'ազատէր միտքի ցրուումներէ, թէպէտ շէնքը մասամբ հրկիզուած, բայց տակաւին բաւականաչափ տրամադրելի մասեր ունէր, և տեղւոյն ուխտաւորական և կոլուածական հասոյթները մատակարարութեան կը նպաստէին. կը մնար միայն ինչ ինչ նորոգութիւններ. և փոփոխութիւններ լրացնել, և ըստ պատշաճին կահաւորել։

Այս զբաղումները կը գրաւէին Կ. Պոլիս անցուցած օրերս։ Քարոզչութիւնս առաւելապէս ուխտի հինգշաբթի օրերը կը վարէի, զի Փիլիպպոս Նահապետեան եպիսկոպոս այնտեղ կը մնար տակաւին, ուստի Ծնունդը Եէնիքէօյի Ս. Աստուածածին եկեղեցին անցուցի, իսկ Մեծ Պահքի մէջ մարտ 25|6 ապրիլին Քասըքէօյի Ս. Թադեւոս եկեղեցւոյն առժամեայ քարոզչութիւնն ալ ստանձնեցի, քարոզիչ եղիչէ Այվազեան վարդապետին Եւդոկիոյ առաջնորդութեան երթալուն առթիւ։ Բայց միշտ եկեղեցական վարժարանի փափաքով տոգորուած, Աւագ Շաբթուան օրերը ընդարձակ յօդուածներ հրատարակեցի Արեւելք լրագրի մէջ, անոր պէտքն ու պայմանները ցուցնելու համար։ Մինչեւ իսկ Զմիւռնիոյ առաջնորդութեան ընտրելիութենէ հրաժարեցայ եկեղեցական վարժարանի գործին հետեւելու համար, հակառակ Զմիւռնիոյ վիճակայիններու թախանձանքին։ Վերջապէս յունիս 7|19ին հիմնուելիք վարժարանին տեսուչ նշանակուեցայ, պատրաստութեանց և չինութեանց հսկելու, կանոնագիր և ծրագիր կազմելու, և ընդունելի աշակերտաց պայմանները որոշելու և քննելու պաշտօնով։ Թէպէտ նոյն օրեր Նիկոմիդիոյ վիճակին Ատաբազար քաղաքին մէջ յուզուած խնդիրը հանդարտելու և հոմէադաւանութեան զիմումը արգիլելու համար յուլիս 13|25ին հոն երթալու ստիպուեցայ, սակայն անկէ ալ Արմաշ այցելելով հլսկողութիւնը շարունակեցի, մինչեւ որ օգոստոս 23|4 սեպտեմբերին գործը վերջացնելով Կ. Պոլիս դարձայ քառասնօրեայ բացակայութենէ ետքը։ Ատաբազարի խնդիրը կեդրոնական վարժարանի մը հիմնարկութեան շուրջը կը դառնար, որուն մասին առաջնորդ Ստեփանոս Յովակիմեան եպիսկոպոսի և տեսուչ Նազարէթեան Սահակ վարդապետի միջեւ անհամաձայնութիւն էր ծագած, և ժողովուրդը Նազարէթեանի կողմը անցած էր, Յովակիմեան քաղաքէն հեռացած էր, և հոմէադաւանութիւնը իբրեւ իրեն դէմ զէնք կը գործածուէր, զի Նազարէթեան ալ Վենետկոյ Մխիթարեաններէն վերադարձող մըն էր։ Այս պաշտօնը երկրորդ անգամ էր որ Վանայ քննչութենէն ետքը ինծի կը յանձնուէր հոմէադաւանութիւնը արգիլելու համար, զոր, իբր վստահութեան նշանակ, պատուաբեր ցոյց մը կը նկատեմ իմ անկեղծ զգայմանցս հանդէպ։

Օգոստոս 23|4 սեպտեմբերին Կ. Պոլիս դառնալուս այլեւս

Արմաշ երթալու և հաստատուելու ժամանակը հասած էր, զի որոշուած էր առաջիկայ դպրոցական տարեմուտով վարժարանը բանալ, և Խաչվերացին տեղւոյն վրայ գտնուիլ, որ է Արմաշի ուխտաւորութեան մեծ օրը, որչափ ալ ուխտը յանուն Զարխափան Ս. Աստուածածնի հաստատուած և բուն յիշատակը Ս. Աստուածածնի Ծննդեան օրուան հետ կապուած է։ Անձնական պատրաստութիւններն ալ հապճեպ լրացնելով, սեպտեմբեր 9|21ին Արմաշ հասայ Եկեղեցական Վարժարանի տեսչութեան պաշտօնով, որուն յարակցեցաւ Արմաշի փոխ-վանահայրութեան պաշտօնն ալ, բաժանեալ իշխանութիւններ չստեղծելու համար։ Որչափ ալ վանահայրական պաշտօնը կատարելու լրաւորութեամբ յանձնուեցաւ, բայց Փոխ-վանահայրութիւն տնուանը տրուեցաւ, որպէսզի գերագոյն վանահայրութիւնը Կ. Պոլսոյ Պատրիարքին վերապահուի, և Եկեղեցական Վարժարան Պատրիարքական Կ. Պոլսոյ կոչումը արդարանայ։ Եկեղեցական հանդէսները տեւեցին մինչև սեպտեմբեր 17|29 Խաչվերացի օրը, շաբթուն մէջ առաջին ընտրուած աշակերտներն ալ հասան, և սեպտեմբեր 18|30 երկուշաբթի օրը, ուխտաւորները չցրուած, Եկեղեցական Վարժարանի բացման հանդէսը կատարուեցաւ. իսկ կանոնաւոր դասախօսութիւններ Վարագայ Խաչի երկուշաբթիէն սկսան, 1889 հոկտեմբեր 2|14ին։

ԽԷ

Դամասկոս, 1918 յունուար 17|30 Դշ.

Դպրեվանքի հիմնարկութեան պարագաները քաղեցինք առանց անունը տալու, որովհետև սկզբնաւորութիւնը եկեղեցական վարժարանի անունի ներքև կատարուեցաւ, իսկ Դպրեվանքի անունը յետոյ ուրեմն նախադասուեցաւ դպրոցական և վանական կացութիւնները միացնելով, նման Շիրակայ դպրեվանքին, որուն անունն ալ ընդունիլ յարմար դատուեցաւ, և առաջարկութեանս վրայ 1890 յունուար 10|23ի գումարման մէջ հաստատ-

ուեցաւ Խնամակալութենէն, որուն փոխարկուած էր պատրուստակսն Յանձնաժողովը, երկու եկեղեցական անդամներու և տեսչին անդամակցութեան յաւելմամբ։ Առաջին եկեղեցական անդամակիցներն եղան Գարեգին եպիսկոպոս Սրուանձտեանց և Գաբրիէլին վարդապետ Թաթարեան։ Այս նոր կարգադրութիւն կատարուած էր 1889 յունիս 7|19ին, երբ ես ալ տեսչութեան կոչուեցայ, և Դպրեվանքի կազմակերպող նշանակուեցայ. ուստի այս մասին ինչ ինչ տեղեկութիւններ տալ աւելորդ չեմ կարծեր։

Դպրեվանքի վարչութեան կեդրոնը և վերին իշխանութիւնը Կ. Պոլիս նստող Խնամակալութեան յանձնուած էր պատրիարքի նախագահութեամբ, իսկ ներքինը՝ տեսուչին, ինչ որ առիթ կ'ընծայէր ինձի յաճախ Կ. Պոլիս իջնելուս, մանաւանդ առաջին տարուոյն մէջ, որ պէտք եղած պայմաններ համերաշխութեամբ որոշուին, և ծագած խնդիրներ համաձայնութեամբ լուծուին։ Դպրեվանքին մէջ Վանական ու Տնօրէն ժողովներ տեղի չունեցան, որպէսզի ընդհարումներ չծագին. արդէն միաբանական մարմին կազմելու չափ անձեր ալ չկային, նորեր չէին հասած, իսկ Սրմաշի հին միաբաններէն երեք վարդապետներ և երկու նորընծայ աբեղաներ միայն կային. Ներսէս Տէր-Բարթողիմէոսեան ելեմտից տեսուչ անուանուեցաւ, Մամբրէ Նալպանտեան և Յուսիկ Էսմէրեան դասատու նշանակուեցան, Եղնիկ Գալբաղճեան կառավարիչ, և Սրսէն Եղոյեան ժամօրհնող. սակայն քանիներ զանազան պատճառներով կամ պատճառանքներով հետզհետէ ցրուիլ սկսան։ Երկուք ալ պարզ միաբաններ կային, Մինաս Շահպազեան լուսարար, և Միհրան Փափազեան բանկալապետ, իսկ ապասուորներ տեղացիներէն առնուեցան ըստ պիտոյից, և անցողակի միայն դուրսէն մատակարարներ նշանակուեցան։

Խնամակալութեան ատենապետը Տիգրան Եուսուֆեան էր, բայց ժողովական գործերը կառավարելու հոգ կը տանէր, իսկ Խնամակալութեան հոգին կամ բուն խնամակալը Սրբիկ Ունճեանն էր, որ հոգւով ու եռանդով, հակողութեամբ ու օգնութեամբ ամէն գործառնութեանց վարիչն էր, պէտք եղած գումարները փոխատուութեան անունով կուտար, նպաստողներ և ձեռնտուներ գտնելու կ'աշխատէր, իւր գրասենեակին մէջ յատուկ Սրմաշի հաշուակալութիւն կը պահէր, և բոլոր կարգադրութեանց ու եղելութեանց համար իւր գիտակցութիւնը կը պահանջէր և իւր

մատդրութիւնը կը նուիրէր։ Սովորական հասոյթներն էին Սրմաշի վանքին և Գարակէօմրիւկի եկեղեցւոյն ուխտաւորական արդիւնքները, և Սրմաշի հողային կալուածներէն, արտերէն, այգիէն; բանջարանոցէն, և ջրաղացէն քաղուածները, որոնք չէին կրնար բաւել, և նոյնիսկ առօրեայ կեանքին պակասը Ունճեան կը լրացնէր։ Հողային արդիւնքները ընդարձակուեցան նոր թթատոներ տնկելով և չերամաբուծական ճիւղը բանալով, առաւելապէս չերամի հունտ պատրաստելով քան թէ խոզակ վաճառելով, և հունտերը մինչև Կովկաս յղելով։ Ծախքերը գլխաւորապէս ուսումնականներն էին, թէ՛ դպրոցական գոյից և թէ՛ դպրոցականաց պիտոյից տեսակէտէն։ Ինչ որ գիրի ու գրչի կը վերաբերէր առատապէս կը մատակարարուէր, ուտեստը կը պարունակէր նոխուածաշ և ճաշ և ընթրիք, նախաճաշը բաւականաչափ և ձմեռները թէյ ալ. ճաշին և ընթրիքին երկերկու կերակուր մաքուր և անդարար ըլլալու պայմանաւ, և պարագաներու համեմատ մրգեղէն կամ անուշեղէն ալ։ Առանին հագուածնին տափատ և գօտեկինդ կարճ զգեստ էր, եկեղեցւոյն համար վերարկու, ձմեռուան համար վերազգեստ, թեթև կօշիկներ ներքը և ամուր կօշիկ դուրսը, իսկ գլուխնին կերպասէ գլխանոց։ Հագուստը երկու ձեռք էր, մին մաքուր պահելու համար։ Եկեղեցական սքեմի կիրառութիւնը սարկաւագներուն վերապահուեցաւ։

Ուսումնական ծրագիրը եօթը տարուոյ վրայ բաշխուեցաւ. առաջին եռամեայն երկրորդական ընդհանուր ընթացք, կրօնական ճիւղերու յատուկ մատդրութեամբ, ինչպէս են՝ Նոր Կտակարանի ներածութիւն, տօնից և ծխից բացատրութիւն, ընդարձակ քրիստոնէական, բոլորը այնպէս կազմուած, որ այս առաջին ընթացքը աւարտողներ կարենան վարժապետութիւնը կամ քահանայութիւնը արժանապէս վարել, և այս առաջին ընթացքը ազատ էր իւր նպատակին կողմէն։ Երկրորդ եռամեայն անցնողներ կուսակրօն եկեղեցականութեան յանձնառուներն էին և ապրկուսակ կը ձեռնադրուէին, և փիլիսոփայութեան և աստուածաբանութեան մասնագիտական ընթացք պիտի վարէին, կատարելագործելով առաջին եռամեայի հայկազեան և լեզուագիտական ճիւղերը։ Վեցերորդ տարին լրացնողներ քահանայական ձեռնադրութիւն կ'ընդունէին, և տարի մը ևս կը շարունակէին ազատ վարժութեամբ և աւարտական ճառի պատրաստութեամբ,

և վարդապետական գաւազանի օրհնութեամբ ընթացքին լրացնելով գործնական ասպարէզի կը մանային Կ. Պոլսոյ պատրիարքարանին տրամադրութեան ներքև։ Աշակերտութեան կ'ընդունուէին 18է 21 տարեկաններ, որոնք նախակրթարանի շրջանը լրացուցած ըլլան, յատուկ քննութենէ կ'անցուէին, եկեղեցականութեան փափաք պիտի ունենային, և բարի վարքով ու առողջ կազմով վկայուած պիտի ըլլային։ Երկու դասարաններ միայն պիտի պահուէին, իւրաքանչիւր երեք տարին վերանորոգուելով, առաջինը 20-25 աշակերտներէ, և երկրորդը կուսակրօն եկեղեցականութեան մանողներէ բաղկացած։ Բացառաբար միայն երրորդ տարին երեք դասարան պահուեցաւ, իսկ կատարեալ ծրագրական ընթացք վարողը միայն առաջին շրջանն եղաւ 1889է 1896, ուսկից ետքը չփոթ պարագաներ բացառութեանց դուռ բացին։ Որչափ ալ սկիզբէն խիստ քննութիւն կը կատարուէր, դարձեալ առաջին տարուոյն վերջը նոր զննութեամբ յուսալից ապագայ չխոստացողներ չէին պահուեր, և երկրորդ տարին անցընողներ դպրութեան ասպիճան կ'ընդունէին։ Ըստ այսմ Դպրեվանքը վարդապետներու հետ քահանայացուներ և վարժապետներ ալ կը պատրաստէր։

Ուսուցչական մարմինին կազմութեան համար առաջին օրէն որոշեր էի ինձի ընկերակից առնել Դուրեան Եպիշէ վարդապետը, որ Պարտիզակի վարժարանին ուսուցչութիւնն ու տեսչութիւնը կը վարէր, և միակ յարմարագոյն գործակիցը կրնար ըլլալ։ Բայց որովհետև մէկ դասարան պիտի ունենայինք, և աշխատութիւնը նուազ էր, և նոր հիմնարկութեան յարատևութիւնն ալ կրնար կասկածի ենթարկուիլ, իրեն թողուցի տակաւին իւր տեղը մնալ, իսկ երկրորդ տարին Սրմաշ անցնելու պատրաստ գտնուիլ, եթէ հակառակ պարագայ չծագէր։ Այդ առաջին տարուոյն համար էր միայն Նալպանտեան եւ Էմէրեան վարդապետներուն դասեր յանձնուիլը, թէպէտ մինչև ամաւերջը չշարունակեցին, և երկրորդ տարիէն Դուրեան եղաւ ուսուցչական օգնականը, որուն հետ բաշխեցինք դասաւանդութիւնները, հայկաբանական ու գրագիտական ու պատմական ճիւղերը իրեն թողլով, և փիլիսոփայական ու աստուածաբանական ու եկեղեցապատմական ճիւղերը ես ստանձնելով։ Արտաքին դասատուներ ունեցանք միշտ գիտութեանց ու տաճկերէնի ու գաղղիերէնի

համար, թէպէտ փոփոխութիւններով շարունակուած, և այսպէս պաշտօնավարեցինք երկրորդէն եօթներորդը, վեց լրացեալ տարեշրջաններ, որ է ըսել մինչև 1896 յուլիս։ Իմ պաշտօնավարութիւնը Արմաշի Դպրեվանքին մէջ տևեց եօթը ամբողջ տարիներ 1889էն սկսելով։

Դպրեվանքին կազմակերպութեան մասին ընդհանուր տեղեկութիւնները տրուելէն ետքը, աւելորդ և ձանձրացուցիչ կը դառնայ օրըստօրէ եղելութեանց մասին խօսիլ, ուստի միայն գլխաւոր և նշանաւոր դիպուածներու մասին համառօտ տեղեկութիւններ աւելցնել բաւական կը համարինք։

Առաջին յիշենք կատարուած նոր շինութիւնները։ Պատահական հրդեհ մը, Արմաշ գիւղի մէջէն ծագած, ոչնչացուցած էր վանքին հարաւային թևը, որուն մէջ կը գտնուէին հին ուսումնարանը և ընդարձակ հիւրանոց մը, և որ տեղի ունեցած էր Աշըգեան վանահօր պատրիարք ընտրուելուն նախընթաց գիշերը։ Այդ մասին մէջ հիմնուեցաւ և լրացաւ երեքյարկանի քարաշէն հիւրանոց մը, և նոյնչափի մըն ալ հիմերը դրուեցան, բայց շինութիւնը չլրացաւ։ Վանքին արևմտեան թևը, որ փայտաշէն հիւրանոց մըն էր, փակուեցաւ, և տեղը քարուկիր ուսումնարան շինուեցաւ, 40 աշակերտի բաւական, Կիւտիւքեան Գրիգոր բարերարին ծախքով։ Եկեղեցին ներսով դուրսով նորոգուեցաւ եւ զանգակատուն աւելցաւ։ Միաբանական և Պոլսոյ կոչուած թաղերուն հիմերը նորոգուեցան։ Շրջափակէն դուրս շերամատուն մը շինուեցաւ՝ ուխտաւորաց ալ հիւրանոց ըլլալու յարմարութեամբ. նոր աղբիւր մը շինուեցաւ Խաչիկ Խորասանճեանի ծախքով, փուռն ալ վերանորոգուեցաւ. Ջրաղացը նոր ոճով կատարելագործուեցաւ մեքենագէտ Յովսէփ Գալաֆեանի ձեռքով ու ծախքով. այգիին ոլթատունկերը փոխուեցան. ձորամէջի ագարակին մէջ նոր ընդարձակ թթատաններ աւելցան։ Հիւրանոցը աւարտեցաւ և օրհնուեցաւ 1891 սեպտեմբեր 11/23ին, իսկ ուսումնարանը 1892 սեպտեմբեր 27/9 հոկտեմբերին, և 10/22 հոկտեմբերին աշակերտները վեհարանի առժամեայ ուսումնարանէն նորակերտը փոխադրուեցան։ Ջրաղացին բացումն ալ կատարուեցաւ 1893 նոյեմբեր 21/3 դեկտեմբերին։ Այդ ամէն շինութիւնները բաւական են հաւատել թէ Արմաշու վանքը Դպրեվանքի փոխուելով ոչ միայն ընդարձակուեցաւ ու պայծառացաւ։

Ներքին օգտակարութիւնն ալ նոյնպէս կը զարգանար, երբոր միջադէպ մը միտքերը չփոթեց, թէպէտ վաղանցուկ եղաւ։ Արմաշու հին միաբաններ, և յատկապէս Տէր-Բարթողիմէոսեան և Նալպանտեան, գոնունակ աչքով չէին տեսներ Արմաշի հասոյթներուն վայելքին իրենց ձեռքէն առնուիլը, և միշտ վերապահութեամբ և դժգոհութեամբ կը վարուէին, և Աշըգեանն ալ կը մեղադրէին որ ինքն պատրիարքութեամբ բախտաւորուած՝ իրեն հին ընկերները զրկած էր հանգիստ և անուշխատ վայելքէն։ Երբոր այդ միտքերով կ'օրօրուէին հիները, Դուրեան ալ սկսաւ նեղ զգալ իրեն փոխ-տեսչութեան պարունակը, և աւելի ձեռներէցութիւն ունենալու ձգտիլ, և կերպով մը հին դժգոհները զօրացնել, և իմ դիրքը խախտելու միտիլ, թէպէտ ոչ միևնոյն նպատակով։ Այս միտքը աշակերտաց մէջ ալ մուտ գտաւ և կերպով մը քաջալերուեցաւ և զօրացաւ բացակայութեանս առեն, և իբրև ցոյց բարձր դասարանէն եօթը աշակերտներ 1892 յունիս 15|27ին անհրաման վանքէն մեկնեցան Նիկոմիդիա, իբր թէ ինծի դէմ խնամակալութեան գանգատելու դիտմամբ։ Հիները կարծեցին Դպրեվանքը փակուած տեսնել, իսկ Դուրեան ցաւեցաւ հետևանքը իր դիտումէն աւելի յառաջացած տեսնելով, զի չէր ալ կըրնար Դպրեվանքին քայքայումին համակիրպիլ։ Խնամակալութեան առենապետ Եուսուֆեան քննութեան յղուեցաւ, և եօթները յունիս 19|1 յուլիսին Արմաշ դարձան։ Եուսուֆեան քննութիւն բացաւ, զոր ես փութացի դիւրացնել Փոխ-Տեսչ և Տեսչ կոչումները Տեսչի և Վերատեսչի փոխարկելով, և ներքին տեսչի ձեռնհասութիւնները ընդարձակել առաջարկելով. զի գլխաւոր նպատակս Դպրեվանքի յարատեւութիւնը ու արդիւնաւորութիւնն էր։ Վերջնական որոշումը տրուեցաւ յունիս 25|7 յուլիսին և Խնամակալութենէն ալ հաստատուելով, կանոնագիրին փոփոխութիւնը յուլիս 29|10 օգոստոսին կեդր. Վարչութենէ ալ վաւերացուեցաւ։ Դուրեան գոհ մնաց և Դպրեվանքին ընթացքը բան մը չտուժեց և շարունակեց։ Մի այն հին միաբաններու նպատակը չիրականացաւ, որով Նալպանտեան հիւանդութիւնը պատճառելով առանձին տուն քաշուեցաւ և Տէր-Բարթողիմէոսեան վանքը թողուց, զի ելևմտից տեսչութիւնն ալ աղիկամի չահագործելու դիւրութենէն զրկուեցաւ, և Ալիքսան ու Խաչիկ Խորասանճեանց սեպհականութիւնը եղող ագարակը առանձնացաւ, և սկսաւ

զայն արդիւնաւորել, մինչև իսկ Խաչգիւղ անունով հայ գաղթականաց փոքրիկ գիւղակ մըն ալ կազմեց Մէճիտիյէ գիւղի սահմանին մէջ, և հոն մնաց մինչև վերջ, մերթընդմերթ վանք այցելելով։ Դուրեանի երկայնամտութիւնը զօրաւոր չէր դժուարութեանց հանդէպ, և անգամ մըն ալ աշակերտներէն ցաւելով յանկարծական որոշմամբ ուսումնարանն ու տեսչութիւնը լքելով միաբանական թաղը փոխադրուեցաւ 1893 մայիս 18|30ին, բայց երկար չմնաց, զի երկու շաբաթէն յաջողեցաւ համոզել և տեղն ու պաշտօնին դարձնել յունիս 2|14ին։ Այդ միջոցէրին ուզեցի յիշել, թէ եղելութեանց մասին ճիշդ տեղեկութիւն տուած ըլլալու համար, և թէ հաւաստելու թէ այդ թերթև և վարանցուկ պարագաներ նշանակութենէ զուրկ մնացին, և Դպրեվանքը կանոնաւորապէս յառաջեց իւր ընթացքին մէջ։

Դպրեվանքի արդիւնաւորութեան ապացոյցները իւր հաստատած աշակերտներն են, հետզհետէ եկեղեցական աստիճանաց մէջ յառաջանալով։ Այդ նպատակով յիշատակութեան արժանի կը սեպեմ հետևեալ տեղեկութիւնները տալ։ Առաջին դասարանի աշակերտներէն ինին դպրութեան աստիճան տուի 1890 սեպտեմբեր 28|10 հոկտեմբերին, արդէն ատացողներէն պատ. ատանցմէ եօթնեը կուսակրօն եկեղեցականութեան ուխտագիր տրուին 1892 սեպտեմբեր 17|29ին, և 27|9 հոկտեմբերին սարկաւագ ձեռնադրուեցան, 1895 յունիս 18|30ին քահանայական ձեռնադրութիւն և աբեղայական օրհնութիւն ատացան, 1895 մայիս 26|7 յունիսին մասնաւոր գուսանի իշխանութիւն տուի՝ իրենց աւարտական ճառերնին լրացնելէն ետքը, և վեցերուն ծայրագոյն վարդապետութեան աստիճան ալ տուի 1897 սեպտեմբեր 21|3 հոկտեմբերին գուսաններ երթալնուն առթիւ։ Երկրորդ տարուանէն 31 աշակերտաց դպրութեան աստիճան տուի 1891 սեպտեմբեր 25|10 հոկտեմբերին, հինգերը սարկաւագ ձեռնադրեցի 1893 սեպտեմբեր 26|3 հոկտեմբերին, և չորսերը քահանայ և աբեղայ 1896 սեպտեմբեր 15|27ին, իսկ հինգերորդը 1897 յունուար 19|31ին։ Երրորդ տարուանէն ութը աշակերտաց դպրութեան աստիճան տուի 1892 սեպտեմբեր 26|8 հոկտեմբերին, բայց մէկը միայն սարկաւագի ձեռնադրութիւն ատացաւ 1895 յունիս 17|29ին և քահանայութեան ու աբեղայութեան բարձրացաւ 1897 սեպտեմբեր 28|10 հոկտեմբերին։ Չորրորդ շրջանէն տասներ դպրու-

թիւն ստացան 1893 սեպտեմբեր 24/6 հոկտեմբերին, բայց ամէնքն ալ ցրուեցան չիոթութեան միջոցին։ Հինգերորդ շրջանէն տասուիրեք աշակերտներ դպրութիւն ստացան 1896 սեպտեմբեր 13/25ին և անոնցմէ մնացողներ Դպրեվանքի երկրորդ միջոցին կը պատկանին։ Յիշուած ձեռնադրութիւններէն ոմանք ալ պատրիարքութեանս ատենին եղած են։

Տրուած տեղեկութիւններ բաւականաչափ կը պատկերացնեն Դպրեվանքի մէջ եօթնամեայ կեանքս, իւր պաշտօնական պայմաններուն մէջ։ Անձնականիս գալով՝ այս ալ աշխատալի միջոց մը եղաւ, զի Դպրեվանքի համար ամենայն ինչ նորինորոյ ծրագրելիք և կազմուելիք էր, և նոյն իսկ Ուենճեան, որուն բարերար առատաձեռնութիւնը անուրանալի է և Դպրեվանքին նիւթական հիմնադիրը կոչուելու արժանի, նա ևս ոչ սակաւ գժուարութեանց պատճառ եղած է իւր սեպհական և տարօրինակ պաղատարներովը, և նոյն իսկ բարերարութիւնները բազմապիսի պայմաններու ենթարկելովը։ Միւս կողմէն պարտաւորեալ էի ո՛չ միայն ուսուցչութիւն և տեսչութիւն ընել, այլև քարտուղարութիւն, հաշուակալութիւն, վերին մատակարարութիւն, շինութեանց հսկողութիւն, և հողային հոգածութիւն կատարելապէս իմ վրայ կը ծանրանային։ Ուսուցչութեան մէջ ուսուածաբանական ճիւղին համար էջմիածին պատրաստած ձեռնարկներէս օգտուեցայ, բայց Ս. Գրոց ներածութեան և տօնից ու ծիսից բացատրութեան համար նոր ձեռնարկներ պատրաստել պարտաւորուեցայ, և ուրիշ դասերու համար յատուկ ուսումնասիրութեանց պէտք ունեցայ, որով ընդարձակ և պէսպիսուն աշխատութիւններ աւելցան։ Վերջին ատեններ կրօնաթերթ մըն ալ հրատարակելու ձեռնարկեցի Դպրեվանքցւոց աշխատակցութեամբ, և 1896 յունիս 1/13ին հնօրեայ Մասիսը իբրև կրօնական հանդէս երեւցաւ հրապարակի վրայ։ Ասոնցմով մէկտեղ խիստ վանական և հասարակութեան հետ սեղանակցութեան կեանք վարեցի։ Բայց ուրախ եմ որ Դպրեվանքը գովելի և պայծառ յիշատակ մը թողուց իւր ետևէն, աշխատասէր ու զարգացած ու ոգևորեալ պաշտօնեաներ նուիրեց ազգին, քարոզչական ճիւղին մէջ հմտալից և ազգօգուտ ուղղութիւն մը սկզբնաւորեց, և մինչև այսօր Դպրեվանքը և Դպրեվանքցիներ գովեստով կը յիշուին ամենուն կողմէ։ Աշխատութիւնը քաղցր է երբոր արդիւնաւորութեամբ կը

պատկուի. ա՛յս է իմ ալ միխիթարութիւնը, և մինչև ատենն մը նաև իմ պարծանքը։

ԽԸ

Դամասկոս, 1918 յունուար 18/31 Եշ.

Յատուկ հատուածի նիւթ ընել պահեցի կաթողիկոսական ընտրութեան առթիւ իբր պատրիարքական պատգամաւոր Էջմիածին երթալս։ Մինչև վերջին ատենները Կ. Պոլսոյ վարչութիւնը և տաճկահայ երեսփոխանութիւնը կը պնդէր ռուսահայ Պոլոժէնիէ կանոնագիրին չհամակերպիլ և իր ուզած կերպով կաթողիկոսական ընտրութեանց մասնակցիլ, և թէպէտ իւր միտքը իւր ծրագիրով չէր կրնար քալցնել, սակայն Էջմիածնի Ընտրողական Ժողովը Տաճկահայոց ընտրելին կը համակերպէր և զայն կ'իւրացնէր։ Մակար կաթողիկոսի յաջորդին ընտրութեան առթիւ Աշըգեան պատրիարք երեսփոխանութեան խափանուելէն օգտուեցաւ, և Պոլոժէնիէի տրամադրութեան համեմատ իւրաքանչիւր վիճակէ ուղղակի պատգամաւորներ յղելու ձևը գործադրութեան մտցուց։ Կ. Պոլսոյ պատրիարքական վիճակէն Տիգրան Կիւմիւշկէրտան աշխարհական պատգամաւոր նշանակուեցաւ, իսկ եկեղեցական պատգամաւորը ուղղակի Աշըգեան պիտի ընտրէր, և նա ալ իմ վրաս դարձուց իւր մտադրութիւնը, զի իրեն համակիր ուրիշ եպիսկոպոս չէր տեսներ, երբ բոլոր ջանքը կաթողիկոս ընտրուիլն էր։ Միանգամ և երկկոյս հրաժարեցայ առաջարկուած պաշտօնէն, չուզելով այս ընտրութեան մէջ մաս ունենալ, և պատճառելով Դպրեվանքի ուսուցչական և մատակարարական պէտքերը։ Երրորդ անգամին հիւանդութիւն ալ պատճառելով անկողին մտայ, պայմանաժամը անցունելու համար, բայց վերջիվերջոյ պարտաւորուեցայ զինջանիլ, երբ Ունճեանի և Եուսուֆեանի կողմէն ստիպողական գիրեր հասան յատուկ թղթակներով յղուած։ Աշըգեան մինչև իսկ Կիւմիւշկէրտանի և ինծի համար օսմանիէ շքանշանի շնորհը ստացած էր, թէ՛ մեզ տրա-

մաղթելու և թէ՛ իրեն մասին պետական հովանաւորութիւն ապացուցանելու համար։ Ընտրողական ժողովը 1892 մայիս 3|15ին պիտի բացուէր և ես հազիւ ապրիլ 17|29ին Արմաշէ Կ. Պոլիս եկայ՝ հապճեպ չուելու համար։

Ամէն պատրաստութիւններ եղած եւ ռուսական դեսպանատունէն անցագիրի վաւերացումն ալ առնուած էր, երբ յանկարծ Տփղիսի փոխարքայէն հեռագիր մը կը հասնի դեսպանատուն, թէ Օրմանեան և Մանկունի եպիսկոպոսներու արգիլուած է Կովկաս դառնալ։ Մանկունի երթալուն երբեք խօսք չէր եղած, և իմ մասին ալ Գալատեան Երեմիա և Սեդրաքեան Արիստակէս եպիսկոպոսներ լուած էին ցորչափ ես կը հրաժարէի, այլ իմ ուղևորելուս լուրին վրայ փոխարքային ձեռքով ուղած էին երթալս արգիլել, ուստուցչութենէ դառնալուս պարագաներուն հիմնուելով, իսկ իրենք իմ ներկայութիւնս իրենց կաթողիկոսանալու մարմաջին արգելք նկատելով։ Դեսպանը ապդարարեց մինչև ուշացնել, իր վրայ առնելով նախարարութեան հետ գործը կարգադրել և զիս յղել, մինչև իսկ շոգենաւերու կանուխ մեկնիլը արգիլելով։ Իրօք ալ արգելքը խափանող հրաման բերել տուաւ Բեթրպուրգի նախարարութենէն, որով կրցայ ապրիլ 25|7 մայիսին ուղևորիլ, ժողովին բացումէն միայն շաբաթ մը առաջ, և ոչ Պաթում ու ոչ Տփղիս կեցայ և հեւիհև մայիս 1|13 արև մտնելէն ետքը Երևան հասայ և վանքին դուռերուն կանուխ փակուելուն պատճառով հոն գիշերեցի, և միւս առտուն մայիս 2|14ին մտայ Էջմիածին։ Պաթում և Տփղիս կանուխէն հեռագրած էի ուղևորութեան պէտքերը հոգալ, և Տփղիսի կայարանին մէջ օսմանեան ընդհանուր հիւպատոս Հասիպ պէյի հետ տեսնուեցայ, որուն Կ. Պոլիսէ ծանօթ էի, և եկած էր համառօտ տեսակցութեամբ մը Խրիմեանի ընտրութիւնը արգիլել թելադրելու համար։

Էջմիածին հասնելուս Գալատեանի և Սեդրաքեանի կողմէն ոչ մի մտաղրութիւն դարձուեցաւ, և յատուկ սենեակ իսկ չցուցուցին, և պարտաւորուած Արիստակէս Դաւթեան եպիսկոպոսի սենեակը պատսպարուեցայ։ Անոնք բաւական աշխատած էին նոյն իսկ տաճկահայ պատգամաւորներէն իրենց կուսակիցներ ճարելու, որ իրենց երկուքին անունները ընտրելի ցուցուին, թէպէտ երկուքն ալ ինքզինքին նախադասել տալու համար իրարու դէմ

ալ ծածուկ մրցում կը վարէին։ Այնպէս կը կարծուէր թէ ես Աշըգեանի ընտրութեան պաշտպան ըլլամ, ինչպէս որ Աշըգեան շատերու և ինծի իսկ յանձնարարած էր. համակերպողներ կամ համակերպիլ ցուցնողներ ալ եղած էին։ Իսկ ես անուղղակի ըզգացուցած էի իւր ընտրուելուն դժուարութիւնը։ Ասով մէկտեղ դիս Աշըգեանի ներկայացուցիչ տեսնելով, հարկաւ անոր կուսակիցը կրնային կարծել, և Գալստեան ու Սեդրաքեան չէին հանդուրժեր իմ ներկայութեան, որ իրենց նպաստաւոր չէր։

Շաբաթ օր, մայիս 2[14, ցերեկին պաշտօնական նիստ կազմուեցաւ վեհարանի մէջ, պատգամաւորներուն վաւերագիրները քննելու և ձայները որոշելու, եւ բաւական դեր ունեցայ Տաճկահայոց պաշտօնագիրները հաստատելու և ընդունել տալու իբր պատրիարքական պատգամաւոր։ Իմ անունիս երեք պատգամաւորութիւն կար, Կ. Պոլսէ ու Շապինգարահիսարէ ու Դերջանէ, բայց երկուքէ աւելի ձայն ունենալ ներուած չըլլալուն, վերջինը խափանուեցաւ, իսկ բովանդակ ընկալեալ ձայներ 72 եղան։ Նոյն երեկոյ Տաճկահայոց պատգամաւորներու յատուկ գումարում տեղի ունեցաւ ընտրելիներու մասին համաձայնութիւն գոյացնելու համար։ Գալստեանի և Սեդրաքեանի և Աշըգեանի պաշտպաններ ու հակառակորդներ պակաս չեղան, միշտ Խրիմեանի անունն ալ կցելով։ Ես սկիզբէն լռութիւն պահեցի, մինչև որ զանազան կողմերէ բողոքներ ալ եղան թէ ինչո՞ւ պատրիարքական պատգամաւորը չի խօսիր։ Ես պատասխանեցի թէ քանի որ Աշըգեանի մասին թեր ու դէմ խօսքեր կ'ըլլան, Աշըգեանի իմ իր ներկայացուցչին վայել չէր անձին պաշտպանութեան մտնել։ Այլ երբ իբր պարզ Մաղաքիա եպիսկոպոս կարծիքս լսել առաջարկեցին, ես համարձակ յայտարարեցի, թէ մեր Ընտրողական ժողովը պէտք չէ քաղաքական խորհրդարաններու պէս քուէից մրցումի մտնէ, այլ մէկ կողմ թողու հակառակ կարծիքներու առիթ տուող անունները, և նախադասէ այնպիսի անուններ, որոնց շուրջը տարակարծիք տեսութիւններ չեն ըլլար, եւ առաջարկեցի հրաժարիլ Գալստեանի ու Սեդրաքեանի ու Աշըգեանի անուններէն, որոնց մասին կարծիքներ ընդհանուր համաձայնութիւն չեն կազմեր։ Այդ տեսութիւնս պարտուպատշաճ կերպով պատճառաբանեցի, և հետզհետէ ընդհանուր ընդունելութիւն գտայ, աւելի չուզուած անուններուն դուրս թողուելէն

քան թէ ուզածնուն նախադասուելէն յորդորուած։ Վերջապէս երեք անուններն ալ դուրս թողուեցան, և Խրիմեանի ու Իզմիրլեանի անուններն ընդունուեցան, իսկ այդ տեսութիւնը ուսահայ պատգամաւորներուն հաղորդելու և քառանունը լրացնելու համար քանի մը պատգամաւորներէ յատուկ պատուիրակութիւն մը ընտրուեցաւ և գումարումը փակուեցաւ։

Կիրակի առտու, մայիս 3|15ին, հանդիսաւոր պատարագով և հոգեհանգիստով և աշխարհականներու ուխտադիր երդումով արարողական բացումը տեղի ունեցաւ, ուսկից ետքը Ռուսահայոց հետ բանակցութիւններ եղան և Տաճկահայոց որոշումը յարգուեցաւ և քառանունը ամբողջացնելու համար Խորէն Մխիթարեան և Ստեփանոս Յովսէփեան եպիսկոպոսներու անունները առաջարկուեցան։ Երբոր այս արդիւնքը եկան ինծի հաղորդել իբրև պարիարքական պատգամաւորի, վերջին անունին մասին դիտողութիւն ըրի, և իմ առաջարկութեամբ անոր տեղ առնուեցաւ Երուսաղէմի միաբան Երեմիա Տէր-Սահակեան եպիսկոպոսի անունը։ Երկուշաբթի մայիս 4|16ին քառանունի համար գումարումը տեղի ունեցաւ, և ես իբր Կ. Պոլսոյ պատրիարքին ներկայացուցիչ տեղապահ Երեմիա Գալատեանի ձախ կողմը բազմեցայ, աջակողմը Երուսաղէմի պատրիարքին ներկայացուցիչ Սահակ Խապայեան եպիսկոպոսին պատկանելուն. բայց գումարումներէ դուրս երկուքնիս ալ մեր եպիսկոպոսական կարգը կը պահէինք։ Համբարձում Առաքելեան կրասերագոյն պատգամաւորի պաշտօնին թեկնածութեամբ և համաձայնութեամբ չորս համաձայնուած անունները առաջարկեց, Խրիմեան, Իզմիրլեան, Տէր-Սահակեան և Մխիթարեան, և բոլոր ժողովականք պարզ համաձայնութեամբ նոյնը հաստատեցին, որոց աւելցան գրաւոր քուէներ, որոց մէջ երկու երեք տեղէ իմ անունս ալ նշանակած էին։

Երեքշաբթի մայիս 5|17ին վերջնական ընտրութեան գումարումը տեղի պիտի ունենար։ Ես ոմանց խօսեր էի որ ինչպէս քառանունը համաձայնութեամբ և հաւասարութեամբ քուէարկած էինք, երկանունն ալ նոյն կերպով քուէարկէինք, որով առաջինի և երկրորդի տարբերութիւն մը տեղի չտրուէր, որ բաւական յուզումներու պատճառ եղած էր Մակարի ընտրութեան ատեն։ Այդ խօսքս բերնէ բերան այլայլուելով պատ-

ճառ եղաւ որ հինգ վեց երիտասարդներ ինձի դիտողութիւն ըներն, իբր թէ Խրիմեանի ընտրուելուն հակառակորդ ըլլամ, որոց յիշեցուցի նախապատրաստական գումարման մէջ վարած դերս և պաշտօնական նիստին մէջ տուած քուէներս, և լռեցին ու հանդարտեցան։ Քուէարկութիւնը տեղի ունեցաւ և 72 տարեկան Խրիմեանը 72 միաձայն քուէով առաջին ընտրելի կամ ընտրեալն եղաւ, իսկ 16 քուէարկուներ քուէնին Իզմիրլեանի ղլացան և այդ տարբերութեամբ երկրորդ ընտրելի եղաւ, իսկ միւս երկուքը արդէն ետև թողուելու պայմանով քառանուն ցանկին անցած էին։ Խրիմեանի ընտրութիւնը մեծ ցոյցերով ողջունուեցաւ, մինչև իսկ նոյն միջոցին ամպամած երկինքին ճեղքուածքէն արևի ճառագայթ մը ցոլանալը իբր երկնային նշան և վերնային վկայութիւն նկատուեցաւ։ Ատենագրութեանց ստորագրութեամբ նիստը փակուեցաւ և ընտրութիւնը լրացաւ պաշտօնական հայկերոյթով։ Ինչ որ անկէ ետքը Խրիմեանի ընտրութեան շուրջը դարձաւ, կայսերական հաստատութեան յապաղիլը, Կ. Պոլիսէ անցնելու արգելքը, Թրիէսթէի և Վիեննայի և Օտեսայի ճանպով ուղևորիլը, և 1893 սեպտեմբեր 26ին օծուիլը, գրութեանս նպատակէն դուրս և օտար են, և կ'անցնիմ ինձի վերաբերած կէտերը քաղել։

Պատգամաւորութեան պաշտօնը լրացնելով անմիջապէս դառնալու կը պատրաստուէի, երբ Երևանի մէջ մայիս 7|19ին տրուելիք հայկերոյթին ներկայ ըլլալու հրաւէր ստացայ, որուն մէջ երկկոյս բաժակառաւ խօսեցայ, երկրորդին մէջ դիտել տալով, թէ էջմիածնի մէջ միաձայնութեամբ կատարուած ընտրութիւնը պէտք է այլևս լռեցնէ Հայերը անմիաբան են ըսողները, որոնք քաջալերուած էին պատգամաւորներուն անհամաձայն կարծիքները լսելով։ Ուրբաթ մայիս 8|20ին Երևանէ մեկնեցայ, Տփղիսի մէջ հիւպատոս Հասիպ պէյին միտքը հանդարտեցուցի եղած ընտրութեան մասին, և նպաստաւոր տեղեկագրութեան կողմերը թելադրեցի, և մայիս 15|27ին ուշ ատեն Կ. Պոլիս հասայ, մեկնելէս ճիշդ 20 օր ետքը։

Միւս առտու մայիս 16|28ին պատրիարքարան գացի. լսելէի որ Աշըգեան կաթողիկոս չընտրուելուն ցաւած և ինձմէ ալ վշտացած էր, և պաշտօնեաներ կ'ըսէին թէ շատ ցուրտ ընդունելութեան պիտի հանդիպիմ։ Ես համարձակ խօսքը բացի, թէ

իւր ընտրութեան համար շատ քիչեր կային, և հակառակորդներ բուռական էին, ուստի ես չուզեցի որ իւր անունը քառանունի մէջ անցնէր, որ յետոյ բացի թողուէր, ինչ որ անպատուութիւն պիտի ըլլար, և իւր դիրքին կրնար վնասել, այլ ընդհակառակն ըսեր էի որ պատրիարքը հեռացնել միտքերնէս չ'անցնիր և պահել կ'ուզենք։ Այդ պատճառաբանութիւնը Աշըգեանին միտքը հանդարտեցուց և գոհացուց, այնպէս որ շատերուն ըսկըսած էր կրկնել թէ Օրմանեան իր պատիւը լաւ պաշտպանած է։ Կ. Պոլիս ալ երկար չմնացի, և մայիս 20|1 յունիսին Արմաշ դարձայ։ Այս բացակայութեանս միջոցին էր, որ Արմաշի ցոյցը պատրաստուած էր, և հասնելէս քանի մի օր ետքը, յունիս 15|27ին, տեղի ունեցաւ, և առանց անտեղի հետևանքի յաջողեցայ վերջացնել, ինչպէս վերև պատմեցի։ Իբրև պատգամաւորութեան լրուժ, Ընտրողական ժողովին կարգադրութեանց և գործունէութեանց վրայօք մանրամասնեալ տեղեկագիր ներկայեցի պատրիարքարանի, որուն մէջ յառաջ բերած եմ ընտրութեան օրը տրուած պաշտօնական հայկերոյթին մէջ խօսած բաժակաճառս, ի վեր հանելով օսմանեան և ռուսական կայսերութեանց կողմէն ազատ ընտրութեան համար ընձեռուած դիւրութիւնները։

ԽԹ

Դամասկոս, 1918 յունուար 19|1 փետր. Ուր. Ընդհանուր տագնապի օրեր եղան 1894է 1896 տարիները. կոտորածներ կրկնուեցան ամէն կողմեր, զրպարտութիւններ շատցան և կոտորածէ ազատուողներ բանտերու մէջ լեցուեցան։ Դաւառներու մէջ հանդիպածները հեռու էին ինձմէ և Դպրեվանքէն, որով անոնց մասին խօսելու պէտք չունիմ։ Մինչև 1895 սեպտեմբեր 18|30ին Կ. Պոլսոյ մէջ ծագած շփոթութեան արձագանգը ունեցանք Դպրեվանքին մէջ փախստականներու խումբի մը ներկայութեամբ, և յաջողեցանք անփորձ անցունել։ Սակայն

նոյնպէս չեղաւ յաջորդ 1896 տարւոյ չփոթը։ Մեծ արձակուրդին մէջ Կ. Պոլիս եկած էի, յուլիս 18|30ին, օդափոխութեան և կազդուրման ալ պէտքը զգալով, երբ չորս օր ետքը յուլիս 22|3 օգոստոսին Իզմիրլեան Մատթէոս պատրիարք հրաժարեցաւ, Կեդրոնական Վարչութիւնը քաշուեցաւ, պետական հրամանով Խառն ժողով մը հաստատուեցաւ, և յուլիս 27|8 օգոստոսին Բարթողիմէոս Զամիչեան եպիսկոպոս տեղապահ ընտրուեցաւ, կամ լաւ ևս անուանուեցաւ, և մայրաքաղաքի մէջ պատրաստուած կոտորածի մը լրոյցները սկսան շատնալ, որոնց ոմանք կարեւորութիւն չէին տար, ուրիշներ տհուդողի մատնուած էին, իսկ ես անորոշ կերպով կ'անցունէի օրերը, մինչև որ որոշ բան մը իմացուի։

Օգոստոս 14|26 չորեքշաբթի առտուն Ղալաթիա կը գտնուէի Արեւելքի խմբագրատունը, Մասիս կրօնաթերթի տպագրութեամբ զբաղած, ինձի հետ էին Դպրեվանքի անդրանիկներէն Մուշեղ և Սղան վարդապետներ։ Յանկարծ կէս օրին տագնապ մը սկսաւ մօտակայ Օսմանեան Դրամատան մէջ պայթած ռումբերուն պատճառով, զոր ներս տարած էին խումբ մը երիտասարդներ, Արմէն Կարոլի կամ Գարեգին Փասըմաճեանի առաջնորդութեամբ։ Պատուհաններէն դիտուեցան բիրերով զինուած հալածող խուժանի և կոտրածէ փախչող հայերու խուճապները, իսկոյն դուռն ու պատուհանի փեղկերը փակեցինք, սակայն լրագիր ծախողներու խնռնակ խումբ մըն ալ ներս մնաց։ Ժամերով դիտեցինք ժխորն ու տագնապը. Նորատունկեան խանը սկսաւ դիտողութեան և հսկողութեան առարկայ ըլլալ ոստիկանաց և զինուորականաց կողմէ։ Կասկած ծագեցաւ միտքս թէ կրնան բռնութեամբ բանալ և իմ ներկայութիւնս զիս կրնայ վտանգել, ուստի որոշեցի որևէ կերպով խանէն հեռանալ, տեսնելով որ խուճապն ալ Վոյվոտայի կողմերը կը նուազի, և դէպի Գարաքէօյ կ'ինջնէ։ Մուշեղ և Սղան չուզեցին զիս մինակ թողուլ, բայց երբ խաչակնքելով դուռը բացի, դիակ մը տեսայ դրան առջև և դուռը փակեցի։ Սակայն մտածեցի թէ շատ ևս դիակներու պէտք է հանդիպէինք և մէկէն խրտչելնիս օգուտ չունէր. ուստի կրկին դուռը բանալ տալով և դիակին վրայէն ցատկելով, չիտակ Եիւքսէր Գալտրըմ վերելքը ուղղուեցայ նոյն երկու ընկերներով։ Խանութներ ու պատուհաններ բոլոր գոց էին, սոսկիէն անդիէն հալածողի եւ փախչողի ձայներ կը լսուէին, երբ դիմացէն երկու բիրով զին-

ուած երեք հոգիներ եւեցան. փոխչելու անհնարութեան առջև դէպ իրենց քալեցի, ընկերներս ետևէն, մարդիկը համարձակութիւնս տեսնելով զիս զինուած կարծեցին հարկաւ, որ ճանպայ տուին և մէջերնէն անվտանգ անցայ, և մինչև վերելքի գլուխը Թէքքէի հրապարակը եկայ։ Ծանօթ Սլպանիացի գրավաճառի մը խանութը միայն բաց գտնելով կառք մը ճարել խնդրեցի, այլ չկտնուեցաւ և քալել սկսայ։ Կառքի մը հանդիպելով առատ խոստումով վարձեցի. մեծ փողոցը փակուած ըլլալուն քովընտի ճանպաներով Ըթըր փողոցի մեր տունը անվտանգ հասայ, միշտ Մուշեղի և Աղանի ընկերակցութեամբ։ Կոտորածը յաջորդ հինգշաբթի օրն ալ շարունակեց, և միայն 16/28ի ուրբաթ օր դադրեցաւ բարձրագոյն հրամանով։ Իսկ ես մինչև 19/31 տունէն չելայ միշտ վտանգէ խուսափելով, և նոյն օրն ալ կայսեր գահակալութեան մաղթանքին համար ստիպուեցայ Գումգաբու երթալ, Մկրեան Յովհաննէս քահանայի ընկերակցութեամբ, յատուկ կառքով, և ոստիկանի պաշտպանութեամբ։ Մեւս օրերն ալ զգուշութեամբ անցուցի, բայց Խաչվերացի ուրբաթը և Արմաշի ուխտաւորութեան օրերը մօտ էին, պէտք չէր որ բացակայ ըլլայի, մանաւանդ որ ձերբակալութեանս շրջան մը սկսած էր և Դպրեվանքի հոգածութիւնը անհրաժեշտ կ'ըլլար։ Ամէն կասկած և անստուգութիւն չսնպելով, տեղս դառնալ որոշեցի, և սեպտեմբեր 10/22ին Արմաշ հասայ։

Կացութիւնը եւքանգեւս ծանրացած էր, յատկապէս Դպրեվանքի համար, զի նաև Սբիկ Ունճեան ձերբակալուած ու բանտարկուած էր, Դպրեվանք ո՛չ ներսէն և ո՛չ դուրսէն ապրուստի միջոցներ ունէր, ուխտաւորութեան բնաւ եկող չկար։ Առաջին հոգերէս մին եղաւ սարկաւագները աբեղայութեան բարձրացնել, որպէսզի գոնէ ինքզինքնին հոգալու միջոց ունենան, ինչ որ հնար չէր սարկաւագութեան մէջ, ուստի սեպտեմբեր 15/27ին Խաչվերացին օրը, երկրորդ շրջանի չորսերը ձեռնադրեցի։ Հինգերորդը Կ. Պոլիս մնացած էր։ Այս առթիւ հինգերորդ շրջանի 13 աշակերտաց ալ դպրութեան ատիճան տուի, և 18/30ին սկսայ առաջին շրջանի վարդապետներէն ոմանք Կ. Պոլիս յղել։ Անոք և անօգնական մնացած, ամէն միջոցներէ զրկուած, ահագին տագնապի մատնուած էինք, դաւառներէ Կ. Պոլիս երթալու արգելքն ալ վրայ հասաւ, որով օգնութեան դի-

մելու յոյսն ալ պակսեցաւ։ Յետին նեղութեան մէջ ագարակին ինձորին հետ հացը միայն մնացին իբրեւ պարէն, և մահոգութեան երեսէն երեք չորս անգամ կեցած տեղս նուաղելու և մահելու տկարութիւնն ունեցայ։ Հազիւ թէ քոյրերուս թախանձանօք և Մկրեան քահանայի միջնորդութեամբ Բարթողիմէոս գիս Կ. Պոլիս բերել տալու զիջաւ, և հոկտեմբեր 14|26ին Սրմաշէ մեկնելով, 15|27ին Կ. Պոլիս հասայ չաստ մը դժուարութիւններէ անցնելով։ Ինձի հետ եկաւ Դուրեան Եղիշէ վարդապետ ալ, իսկ Դպրեվանքը յանձնեցինք անդրանիկ սանելէն Զաւէն վարդապետի, Կ. Պոլիսէ պէտք եղած օգնութիւնը հասցնելու խոստումով։

Զամիչեան տեղապահ և Նուբեան ատենապետ առաջին այցելութեանս առթիւ միաբերան առաջարկեցին Դպրեվանքի հոգաւորն ըսել, ուելցնելով թէ վարդապետութեան համար վարժարանի պէտք չկայ, և եպիսկոպոսաց մօտ փոքրաւոր մնալով աւելի լաւ կը հանին։ Պարտաւորուեցայ պատասխանել՝ թէ իշխանութիւնը իրենց է և ուզածնին կրնան կարգադրել, իսկ ես վերատեսչութեան պատճառո՛վ միայն վանահայութիւնն ալ կը վարէի, և երբ Դպրեվանքը դադրի, Սրմաշի հետ այլեւս կապ չեմ ունենար, և հրաժարած կ'ըլլամ։ Հրաժարականը գրաւոր ուզեցին, և ես միևնոյն իմաստով հրաժարագիրը մէկ երկու օրէն ներկայեցի, խնդրելով որ թէ՛ տկարութիւնս դարմանելու և թէ՛ Կ. Պոլիս չմնալու համար Եգիպտոսի համար անցագիրս հանեն որ երթամ քրոջս մօտ կսպգուրուիմ։ Ըստ այսմ պէտք եղաւ Սրմաշ ալ հաղորդել, և աշակերտներէն որոնք որ դիւրութիւն ունէին հետզհետէ մեկնեցան, և քանի մը հատեր միայն մնացին։ Եօթը տարուան հաստատութիւնը գոյութենէ դադրած, եկեղեցական վերակենդանութեան օթարանը քայքայուած, եւ Դպրեվանքի հակառակորդներուն փոփոքը լրացած կրնար ըսուիլ։ Ցաւալի էր հեռանքը, բայց դարմանը իմ ձեռքս չէր. որևէ կողմէ պաշտպանութեան և օգնութեան յոյս չկար. Կ. Պոլիսէ հեռանալ մտածեցի, նոր կեանքի և նոր ասպարէզի մը անցնելու համար, թէպէտ այն ալ անտոյգ, զի միտքէս հեռու չէր Եգիպտոսէ ալ Եւրոպա անցնիլ, այլև ազգային խնդիրներով ըզբաղողներուն օգնական, գուցէ ուղեցոյց իսկ ըլլալ։ Արդէն քեռայրս Միհրան Տէր-Ներսէսեան Եգիպտոս ուղևորած էր, ընտա-

նիքը ամբողջ այնտեղ փոխադրելու դիտմամբ, և ես ալ սկսայ մեկնելու հեռաւոր պատրաստութիւններով զբաղուիլ, և գոյքերէս ու գիրքերէս պահուելիքն ու տարուելիքը, մնալիքն ու ջնջուելիքը զատել։ Երբոր այսպէս ամենայն ինչ յուսահատական էր թէ իմ անձիս և թէ Դպրեվանքին համար, անակնկալ պատգամ մը, ինչպէս էր պատրիարք ընտրուիլս, ամենայն ինչ հիմնապէս այլափոխեց և վերանորոգման նշաններ ցոլացուց։

Ծ

Դանիսվոս, 1918 յունուար 20|2 փետր. Շբ. Եկեր մէկ կողմէ տեղ տագնապ կը տիրէր, միւս կողմէն պատրիարքական ընտրութեան գործառնութիւնը ձեռք առնուած էր, և երկու հակառակ ուղղութիւններ իրարու դէմ կը մրցէին։ Զամիչեան տեղապահ իւր բոլոր միջոցներով պատրիարք ընտրուելու կ'աշխատէր. մէկուն կը խոստանար, միւսը կ'ահաբեկէր, կառավարական շրջանակին մէջ վայելած համակրութեան վստահելով, և գրեթէ իւր յաջողութիւնը ապահոված կը կարծէր։ Մինչև իսկ Եգիպտոսի համար անցագիր խնդրելուս պատասխանած էր, թէ պատրիարքական ընտրութենէն ետքը կը կատարէ իրնդիրքս։ Միւս կողմէն Տատեան Յարութիւն բաշա, արքունեաց մէջ ունեցած համարձակութենէն օգտուելով, Զամիչեանի տեղապահութիւնը վերջացնել և պատրիարք ընտրուիլը խափանել կ'աշխատէր, չկրնալով հանդուրժել որ ազգին գլուխը այնպիսի մէկու մը ձեռքը մնայ։ Իսկ ընտրելիի մասին համաձայնելու համար եկեղեցական և աշխարհական մեծամեծներու ժողովներ կը գումարուէին, և զանազան եպիսկոպոսներու անուններ հրապարակի վրայ կը խօսուէին։ Զամիչեան իւր նպատակը փութացընելու համար 1896 հոկտեմբեր 28|9 նոյեմբերին Համագումար հրաւիրած էր, և քուէ շտացնելու համար չատ մը քահանաներու փոխ-աւագերէցի և աթոռակալի անուններով հրաւէրներ զրկած էր։ Ցուցմունքման օրը քուէի քննիչ մասնախումբին նախագահե-

լու հրաւիրուող եպիսկոպոսներ կը փոխէին, ինքզինքին ա-
պահով ընտրելի նկատելով, մինչ եա՝ այս տեսակ ակնկալութենէ
հեռու՝ սիրով յանձն առի Սլէաթճեան ատենապետի առաջարկը
և երկու վարդապետներու և երկու քահանաներու հետ քուէ-
համարը կատարեցի։ Իմ համոզումս հաստատուն էր՝ թէ վերա-
դարձողի մը չեն յանձներ պատրիարքութիւնը, ինչպէս որ ան-
ցեալին մէջ ալ երբեք յանձնուած չէր։ Տատեան իսկ զիս իր գու-
մարումներուն չէր հրաւիրած, ես ալ տեսակցելէ ու այցելելէ
զգուշացած էի։ Քուէհամարին մէջ կրօնական ժողովականու-
թեան համար 24, և պատրիարքութեան համար 13 քուէ ստա-
ցած էի, որով պատրիարքական ընտրելեաց մէջ եօթներորդ և
վերջին կը դասուէի, և 13 թիւէ ալ յաջողութիւն չի բղխիր կ'ը-
սէի։ Հոկտեմբեր 31|12 նոյեմբերին Ընդհանուր ժողով դումար-
ուեցաւ և 57 քուէարկուներու 47 քուէով Կրօնական ժողովոյ
անդամ ընտրուեցայ իբրև Սրմաշէ հրաժարած։ Նոյեմբերը 3|15ին
վարչական ժողովները վաւերացան և 5|17ին Քաղաքական ժո-
ղովը հնգանուն ցանկը կազմեց, որուն գլուխը անցուցեր էր իմ
անունս 12 ներկայից 11 քուէով։ Տատեանի ատենապետութեամբ
գործող ժողովին այդ որոշումէն երեկոյին լուր առի, և այլևս
կասկած չէր մնար որ պատրիարքական ընտրութիւնս ճանպայ
տուած էր, ուրիշ ընտրելիներու եաև թողուելովը։ Մելքիսեդեկ
Մուրատեանի օտարահպատակ ծնունդը, Գրիգորիս Յովհաննէս-
եանի նուազ կարողութիւնը, Հմայեակ Գիմաքսեանի կենցաղին
խօսուած ըլլալը, Պետրոս Թահմիզեանի անկեալ վիճակը, ու-
րիշներու կասկածելի նկատուիլը հեռզհետէ իրենց ընտրելիու-
թիւնը զանց ընել տուած էր, և իմ վրաս գոյացած համամտու-
թեան ուահահրդներ եղած էին Գաբրիէլ Նորատունկեան և Տիգ-
րան Եուսուֆեան, և նոյն իսկ Սրիկ Ունճեան իր բանտին մէջէն։
Տատեան դժուարութիւն չէր ցուցուցած արդէն զիս ճանչցած
ըլլալով, և Ապտիւլհամիտ կայսրէն ալ հաւանութիւն ստացած
ըլլալով որևէ ուզածնին ընտրելու, որ թո՛ղ իւր ազգը սիրէ,
բայց իրեն դէմ սուր չքաշէ. բացատրութիւն մը որով Իզմիրլեա-
նի մասին կազմած ըմբռնումը կը յայտնէր, և որուն հրաժարիլը
պահանջած և Տատեանի ձեռքով գլուխ հանած էր։ Պատրիար-
քական ընտրութիւնը տեղի ունեցաւ 1896 նոյեմբեր 6|18ին 62
ներկայից 48 քուէով, հակառակ իմ ակնկալութեան, այնպէս որ

Զամիչեան իսկ կը վկայէր վերջէն թէ ես բնաւ ընտրուելու չարժուած ըրած չեմ։ Ես ալ համարձակ կը կրկնէի, որ եթէ պատրիարքութիւնը այդչափ դժուարացած չըլլար եպիսկոպոսները զայն պոչը կտրածին չէին թողուր։

Զամիչեան, որ յետոյ վերոյիշեալ վկայութիւնը կուտար, այնպէս վստահ էր իւր ընտրութեան, որ երեսփոխաններէն շատեր քուէից ելքէն խիթալով իւր անունով քուէտոմս մը կը ցուցնէին և իմ անունով քուէտոմս մը տուփին մէջ կը թողուին։ Իմ անունիս քուէներուն սկիզբէն յառաջելուն վրայ, Զամիչեան այնչափ զայրացած էր, որ նախագահական աթոռէն ձայն կ'արձակէր, թէ միտքերը յայտնուեցան և այլևս քուէները բանալ աւելորդ էր։ Ունկնդիրներէն երկու անձեր մինչև վերջը չէին ըսպասած, և իմ անունին քուէներուն 32ի լրանալուն ճանապայ եղած էին կանուխ աւետաբեր ըլլալու, զորս ես գրեթէ ցաւամբ ընդունեցայ, և բոլորովին յուզուած վիճակի մէջ ինկայ, թէպէտ երեկոյին ժողովէ դարձողներուն ու դրացիներուն այցելութիւնը ընդունիլ ստիպուեցայ։

Կատարուած ընտրութեան վաւերացումը տասնումէկ օր յապաղեցաւ, վասն Զամիչեանի և իրենց կուսակիցներուն հակառակ ջանքերը, և 1882ի Կարնոյ տագնապին վերանորոգուած յիշատակները, կայսեր միտքն ալ պղտորած էին, և Տատեանի փութաջան պնդումներուն և գաղղիական դեսպանատան միջամտութեան, և վիս Կարինէ ճանչցող Պետական Խորհրդոյ նախագահ Սայիտ բաշայի վկայութեան պէտք եղած էր կայսեր միտքը անդորրելու։ Նոյեմբեր 17|29ին վաւերացման հրամանը արձակուեցաւ։ Այդ միջոցին էր որ Զամիչեան ալ յատկապէս այցելելով յուզուած դժուարութեանց ակնարկած էր, և որուն պատասխանած էի, որ եթէ դժուարութիւն հանողը ճանչնայի՝ վիս փորձանքէ ազատ պահելու ջանքերուն համար երախտագիտութեամբ ձեռքը կը համբուրէի։ Արդէն նոյեմբեր 7|19ի առտուն ներկայացող Ընդհանուր ժողովոյ Դիւանին յորդորներուն ալ պատասխանած էի, թէ դատապարտութենէ հրաժարելու սովորութիւն չկար որ ես ալ կարենայի կատարուած ընտրութենէն հրաժարիլ։ Այս համոզմամբ յանձնառութեան ստիպուեցայ։

Ինդրոյ նիւթ կազմող պարագայ մըն ալ Սահմանադրութեան փոփոխութիւնն էր, որ կառավարութեան և արքունեաց կողմէն

իբրև պայման առաջարկուած էր ընարութեան արտօնութիւնը տալու համար, և Տատեան ալ այդ պայմանը պաշտօնապէս առաջարկած և երեսփոխանութեան ընդունիլ տուած էր, թէպէտ ոչ ոք փոփոխութեան համամիտ էր, և կը մնար զոյն հաշտեցընել Սահմանադրութեան վրայ կատարուելիք պատրիարքական ուխտին հետ։ Տատեան յատկապէս այցելած էր այդ կէտին վերայօք խորհրդակցելու համար, և նա ալ զինքն ապահոված էր միջամտման բացատրութեամբ մը մէջէն ելնել, և հաւանութիւն ալ ստացած էր, ինչպէս որ ուխտի օրն ալ հրապարակաւ յայտարարեցի, Սահմանադրութեան որոշած ձևը արտասանելէն ետքը, թէ ուխտիս առարկայն այն Սահմանադրութիւնն է, որ այսօր տակաւին կը տիրէ, և կը փոխուի միայն, երբ ամէն օրինականութիւններ լրանալով և վաւերացումն ալ ստացուելով նոր մը անոր յաջորդէ։

Այդ բացատրութիւնը և նոյեմբեր 20|2 դեկտեմբերին արտասանած ժողովական ատենաբանութեանս իմաստը այնչափ հաճոյ եղած էր կայսեր, Տատեանի մատուցած թարգմանութեան վրայ, որ անմիջապէս նոյեմբեր 22|4 դեկտեմբերին հրաման արձակած էր յաջորդ օրը պաշտօնական ընդունելութիւնը կատարելու։ Սակայն օրը ուրբաթ էր, և հրամանը Բարձրդուռ և արքունական տխուռ ժամանակին չէր հաղորդուած, և իզուր կը սպասէինք նոյեմբեր 23|5 դեկտեմբեր շաբաթ օր արարողապետին և պալատական կառքերուն գալուն։ Թէպէտ յապաղման պատճառը կայսեր հաղորդուած և յետաձգել առաջարկուած էր, սակայն նա պնդած էր ընդունելութեան նոյն օր կատարուելուն հրամանը, և հազիւ հապճեպ պատրաստութեամբ կրցայ կայսեր ներկայանալ արև մտնելու մօտ, և սիրալիր և պատուաղիր ընդունելութիւն ունեցայ, և Սայիտ բաշայի իմ մասին տուած նը-պատաւոր վկայութիւնն ալ յատկապէս յիշուեցաւ կայսեր կողմէ։ Օրը տարժամած և Բարձրդուռ նախարարութեանց այցելելու ատեն մնացած չէր, ուստի յատկապէս նոր հրաման ելաւ որ արարողապետն ու կառքերը երեքշաբթի նոյեմբեր 26|8 դեկտեմբերին կրկին պատրիարքարան դառնալով այցելութիւնները լրանան, պարագայ մը որ արարողապետին վկայութեամբ երբեք տեղի ունեցած չէր պատրիարքի կամ դեսպանի մը համար երկու անգամ պալատական կառքեր հանուիլը։

Երրոր նոյեմբեր 23/5 դեկտեմբերին պատրիարքարան դարձանք արդէն մութ էր, ժողովուրդը խռնուած, և եկեղեցին ամբողջ լուսաւորուած, արարողապետը զիս մինչև բեմ ալ առաջնորդեց, ուր կայսերական բարեները և խոստումները հաղորդելով հանդիսաւոր օրը փակեցի, և մինչև շաբաթ երեկոյ պատրիարքարան դիշերեցի, և միայն կիրակի երեկոյ Ըթըր փողոցի մերտունը դարձայ, վի եկեղեցական պաշտամանց պահանջած օրերը միայն պատրիարքարան մնալու, և միւս օրեր տունը հանգստանալու մտադիր էի, և այնպէս ալ սովորութիւն ըրի։

Պատրիարքական գործունէութիւններէն առաջին անգամ Վարչութեան Յառն ժողովին նախագահեցի Նոյեմբեր 27/9 դեկտեմբերին, առաջին պատարագը մատուցի դեկտեմբեր 1/13ին Եէնիգաբուի Ս. Առաքելոց եկեղեցին, առաջին աստիճանի մէճիտիյէ շքանշանը ստացայ դեկտեմբեր 29/10 յունուարին, և անդրանիկ կոնդակս հրատարակուեցաւ և կարդացուեցաւ 1897 յունուար 6/18ին Ծնունդին օրը, թէպէտ 1896 նոյեմբեր 30/12 դեկտեմբեր թուական կը կրէր։

Իսկ առաջին նշանաւոր գործունէութիւնս եղաւ նոյեմբեր 28/10 դեկտեմբերին fաղաfական անունով բանտարկուածներու և դատապարտուածներու ընդհանուր ներում խնդրելս, և դեկտեմբեր 10/22ին ներումին շնորհուիլը, ազատ արձակմամբ 1200է աւելի բանտարկեալոց, և իբր 30 մահուան դատապարտուածներուն պատիժին բանտարկութեան փոխուելով։

ԾԱ

Դամասկոս, 1918 յունուար 22/4 փետրուար Բշ.

Պատրիարքութեանս մասին շատ բան խօսուած և շատ ալ գրուած է թերուզէմ ուղղութեամբ, մանաւանդ հրաժարելէս ետքը. ես ալ բաւական բան գրած եմ իմ իբր ամբաստանութեանց պատասխան պատրաստած Ցիշատակագիրքիս մէջ, հրատարակութեան սահմանուած Ազգապատումիս Երրորդ Հատորին

մէջ, և նոյն իսկ սոյն Խոհիֆ եւ Խուֆ գրութեանս առաջին յօդուածներուն մէջ, այնպէս որ նիւթը ընդհանրապէս ծանօթ դարձած է։ Թերևս աւելորդ սեպուէր նոյնին վրայ անդրադառնալ։ սակայն Յիշատակագիրքը միայն ամբաստանութեանց կէտեր կը չորշափէ, Ազգապատումը ընդհանուր գործերով զբաղած է, և ներկայ գրութեանս առաջին յօդուածները հոգեբանական տեսակէտէն խմբագրուած են, իսկ պատրիարքութեանս միջոցին հանդիպած եղելութեանց և խնդիրներու պատմական բացատրութիւնները կը պակսին, և կը մնայ այս կէտերը լրացնել, և այս է որ առաջիկայ յօդուածներուն նիւթ պիտի ընեմ։ Բայց ուզելով չուշացնելով շատ մը ակնարկներ կրկնելու պիտի պարտաւորուիմ, ուստի հանդիպողը թող ներողամիտ ըլլայ այդ մասին. արդէն առաջին յօդուածէս ըսած եմ, որ չափուած ու ձևուած, և ժամանակագրապէս և կարգադրապէս ծրագրուած գրութիւն մը չէ ներկայս, այլ միտք ինկած նիւթերու անկարգ շարայարութիւն մը։ Այստեղ ալ կանոնաւոր բաշխումը պիտի չկրնամ ընել, այլ մերթ ժամանակին և մերթ նիւթին կապակցութեամբ անցած դարձած գլխաւոր խնդիրներ պարզաբանել։

Առաջին հատուած մը կը կազմեն 1896 նոյեմբեր 20|2 դեկտեմբեր՝ գործի սկսելուս օրէն մինչև 1897 օգոստոս 6|18ին Բարձրգուռը արձակուած ռումբին օրը։ Այդ միջոցին կատարուած գործերը և եղած ջանքերը նպատակ ունէին երկկողմանի հանդարտութիւն մը ստեղծել փոխադարձ վստահութիւն ազդելով, և կայսրը համոզելով թէ իւր բարեհաճութեան հանդէպ կուսակցականներ թշնամական շարժումներ և ցոյցեր պիտի չփորձեն, և կուսակցականներու թելադրելով որ իրենց հանդարտութեան փաստով կայսերական խոստումներուն գործադրութիւնը պիտի ստանան։ Այդ նպատակով Տաճեանի եղբօրորդին Տրդատ Տաճեան ժընէվ ալ յղուեցաւ իբրև պատգամաւոր, և ես գիրով ալ բացատրեցի թէ ազգը տկարացած և շատ արիւն կորսնցուցած է, և այս տեսակ հիւանդի վրայ սաստիկ դեղեր և բուռն ցնցումներ փորձելէ զգուշանալու է։ Այդ բացատրութեան պատասխան էր անանուն գրութիւնը, որով կուսակցականներ զիս իրենց համամիտ գիտնալով, իրենց ոճին հետևողութիւն կը պահանջէին։ Ապտիւլհամիտ ալ բոլորովին վստահօրէն չէր նայեր իմ վրաս, միայն իմ կողմէն խոհական ընթացք տեսնելով կը ըս-

պասէր որ կուսակցականներ դիւրաւ անսան իմ թելադրութեանց և թշնամական ցոյցեր դադրին։ Պէտք չէ նաև միտքէ հեռացընել, թէ Ապտիւլհամիտ կուսակցականներու կողմէն իր կեանքին դէմ իսկ վտանգի երկիւղն ունէր, և իր անձն ալ նկատի կ'առնէր իր գործածած և գործադրել տուած բռնական միջոցներուն մէջ։ Կատարուած կոտորածները խաժամուժ ամբոխին կատաղութեան կամ վրէժխնդրութեան հետևանք չէին երբէք, այլ պարզապէս բարձրէն արձակուած հրամաններու գործադրութիւն էին, և նոյնիսկ մայրաքաղաքի մէջ կատարուած 1896 օգոստոս 14/26ի կոտորածին գործադիրները՝ նոյն օրեր Կ. Պոլիս բերուած Համիտիյէ գունդին քուրդերն էին, որոնց նոյն օր համազգեստով չերևնալը, և գործածուած բիրերուն յարևնման ըլլալը, և գունդին քիչ օր առաջ հասած և քիչ օր ետքը մեկնած ըլլալը այս բանին յայտնի ապացոյցներն էին։

Փոխադարձ վստահութիւն արծարծելու ջանքերուն նպաստաւոր արդիւնքներէն մին կոտորածներուն դադարումն եղաւ։ Ատ և անդ արկածներ պակաս չէին երբ պատրիարք ընտրուեցաւ, և վերջին փորձը տեղի ունեցաւ 1897 մարտ 7/19ին Եւդոկիոյ մէջ, ուր հարիւրէ աւելի հայեր մահացան։ Վարչութեան համախոհութեամբ իսկոյն բուռն և աղտու բողոքներ մատուցին թէ՛ կառավարութեան և թէ՛ արքունեաց, և յաջողեցաւ մեզի նպաստաւոր հոսանք մը կազմել տալ, որով երեք անգամով յատուկ քննիչ յանձնաժողով մը Հասան Ցէհմի բաշայի նախագահութեամբ և հայ անդամակիցի մը մասնակցութեամբ Եւդոկիայ ղրկուեցաւ, և մինչ առաջ կոտորածներէ աղատող բաղմաթիւ Հայեր իբրև դրդռիչ կը ձերբակալուէին և կը դատապարտուէին, այս անգամ թուրքեր ամբաստանուեցան և 72 հոգիներ զանազան ատիճանէ պատիժներու դատապարտուեցան, և որչափ ալ Սիրիկէ աքսորուեցան և փախչելու դիւրութիւններ ունեցան, սակայն դատապարտութեան ձայնը գործնականապէս համոզեց, թէ այլևս կոտորածը ներեալ չէ, և իրօք ալ Եւդոկիոյ կոտորածը վերջինն եղաւ, և 1894ին Տրապիզոնէ սկսած կոտորածներուն շարքը փակեց։ Խօսուն փաստ մը եղած էր նաև բանտարկուածներուն և դատապարտուածներուն ընդհանուր ներումը, որով նախընթաց դեկտեմբերի մէջ 1200է աւելի անձեր ազատ արձակուած էին, և մահուան դատապարտուածներուն

կեանքը շնորհուած էր։ Ասոնցմէ չորս հատ ալ եկեղեցականներ կային, Եղնիկ եպիսկոպոս Ապահունի Կ. Պոլիսէն, Յակոբոս վարդապետ Շահպաղեան Բաղէշէն, Յուսիկ քահանայ Բաջունի Արաբկիրէն և Վահան քահանայ Խոյեան Տրապիզոնէն, որոց կատարեալ ազատութիւնն ալ ստացած էի, պատրիարքարանի հրամայողութեան ներքև պահելու պայմանաւ, ուստի Գումգապուի դուրսի, Նաղլըգապուի, Գարթալի եւ Գլնալըի եկեղեցիներ պաշտօն վարելու կոչած էի. կեանքերնին շնորհուածներէն մը-նացեալներն ալ բանտարկութենէ ազատուելով Ափրիկեան Տրիպոլիս փոխադրուեցան, ուր ազատօրէն կրնային շրջիլ և գործել, և քանիներ խոյս տալու դիւրութիւններ ալ գտան։ Այդ միջոցին երեք հարիւր Քղեցիներու աշխատելու համար Կ. Պոլիս դառնալուն արտօնութիւնն ալ ստացայ, սակայն եկողներուն մեծամասնութիւնը անմիջապէս արտասահման երթալու և գլխաւորապէս Ամերիկա մեկնելու հետևեցան։

Հայերու վրայ գործածուած բացառիկ դրութեան հետևանքն էր անոնց Կ. Պոլիս գալուն դրուած արգելքը, մինչ հայաբնակ գաւառներուն համար պանդխտութիւնը կենսական պէտք մը եղած էր։ Տեղապահութեան օրով յատուկ շրջաններով պանդուխտ Հայեր մայրաքաղաքէ վտարուած էին, եւ դառնալնին ալ արգիլուած էր, եւ արտասահման խոյս տուողներուն առջեւ օսմանեան երկիրները փակուած էին։ Թէպէտ աշխատեցայ կայսրը համոզել թէ արտասահման մնալով անտեղի ուղղութեանց կը վարժուին, իսկ Թուրքիա դառնալով հանդարտ ապրելու և շահելու կը հետեւին, և մինչեւ իսկ երաշխաւոր ըլլալ իսկ համարձակեցայ, սակայն անհնար եղաւ անոր երկիւղը փարատել, և արտասահմանէն դարձը դիւրացնել։ Իսկ գաւառներէն մայրաքաղաք գալու խնդիրին մասին, համարձակօրէն պիտի ըսեմ, թէ շատ չափաւոր կերպով հետեւեցայ, մանաւանդ Քղեցւոց համար ըստացած արտօնութեանս արդիւնքը տեսնելէ ետքը։ Հայաբնակ գաւառներու մէջ պաշտօն վարած և բաւական շրջած ըլլալով, խորունկ համոզում գոյացուցած էի, թէ պանդխտութեանց յաճախելը երկրին մեծագոյն չարիքն է, և թէ Հայկական խնդիրն ալ կը տկարանայ հայաբնակ կոչուած գաւառներուն հայաբնակութեան հետզհետէ նուազելովը։ Ուստի յատուկ գործ ունեցողներու կամ առժամապէս տուրիստի համար եկողներու մասնաւոր

հրամաններ հանել տալու զանց չէի ըներ, իսկ ընդհանուր արտօնութեան համար շատ չէի հետապնդեր։

Այս էր վիճակը 1897 ամրան մէջ. յարաբերութիւնները մեղմացած էին, յոյզեր և ցոյցեր չէին հանդիպեր, և հետզհետէ աւելի բարւոքման յոյսեր կ'ածէին. սակայն այդ հանդարտութիւնը հաճելի չէր ազմկայոյզ կուսակցականներուն։ Անոնց պահանջն էր որ Հայերու հանդէպ որևէ բացառիկ կարգադրութիւն բացարձակապէս և իսկոյն դադարի, իրենց յոյսն ալ որևէ շփոթ մը ծագեցնել և կայսրը քառնական միջոցներու մղելն էր, որպէսզի եւրոպական տէրութիւններ առիթ ունենան միջամտելու և Հայկական խնդիրը լուծելու և վերջացնելու։ Բայց չէին իսկ մտածեր որ 1894-1896 տարիներու մէջ զոհուած երեք հարիւր հազար կեանքերը չէին կրցած եւրոպացիները շարժել և գործի մղել, և անհիմն խոսուումներով օրօրուելու վիճած էին։

Զորեքշաբթի օր մըն էր, 1897 օգոստոս 6|18ին, Գալաթիոյ խորհրդարանը Վարչութեան նիստին կը նախագահէի, երբ յանկարծ ռումբի ձայներ լսուեցան, և լուր առնելով իմացանք թէ Բարձրդուռը նախարարութեան ժողովարանին ներքև արձակուած էր, և չէնքէն մաս մըն ալ քանդուած։ Կ'երեւի թէ նախարարական ժողովի օր ըլլալուն՝ նոյնիսկ ժողովարանն ու ժողովականները վնասել ուզած են, սակայն չեն կրցած տեղը ճշդել։ Ժողովը թողով իսկոյն տրքունիք փութացի երթալ, և խնդրել որ յանցապարտնե՛րը միայն փնտռուին և ժողովրդական ընդհանուր ձերբակալումներ և բռնութիւններ տեղի չունենան։ Խընդրանքս ընդունուեցաւ, եւ ես չմեկնած բոլոր գործունեայ նախարարութեանց հեռագրական հրամաններ ղրկուեցան, և իրօք ալ 8-10 հոգիէ աւելի չձերբակալուեցան և ասոնցմէ ոմանք ալ շուտով արձակուեցան։ Սակայն այդ յանկարծական դիպուածը այլայլեց իմ և Վարչութեան հետևած կացութիւնը, ցոյցի մը պատճառը մեր տուած ազնուութեան և ութն ամիսներէ ի վեր զօրացուցած դրութեան հիմերը քանդեց, կայսեր կողմէ մեր գործունէութեան և յաջողութեան մասին կազմուած վստահութիւնը տկարացուց, և մինք ալ մեր համարձակութենէն շատ բան կորսնցուցինք։ Բայց կայսրը ամէն ակնկալութիւն և վստահութիւն չուզեց դադրեցընել, և մէկ դիպուածով կացութիւնը այլայլած կարծել, որուն նշանակ կրնայ սեպուիլ քանի մը օր ետքը, իւր պահակալութեան

տարեդարձին առթիւ, օգոստոս 19|31ին, օսմանիյէ չքանչանի առաջին աստիճանը շնորհելը, իբրեւ քաջալերելու միջոց։ Սակայն ամէն առթի մէջ ես պարտաւոր եղայ աւելի զգուշաւոր ճանպու հետեւիլ, երաշխաւոր ըլլալու չափ չհեռանալ, որով եւ ակնկալեալ յաջողութիւններ նուաճեցան, և կոյսեր կողմէն զգուշութեան միջոցները շատնալու և աստկանալու առիթ առին։ Այս փոփոխութեան պատճառը անոնք եղան, տիրապէս, որոնք շտապողական ձեւերու և անօգուտ ձեռնարկներու աւելի սիրեցին հետեւիլ, քան թէ պարագաները կործածելով օգտուիլ։

ԾԲ

Դամասկոս, 1918 յունուար 22|4 փետրուար Բշ.

Պատրիարքարանի ներքին կարգադրութիւնները յատուկ մը-ատգրութիւնս գրաւեցին առջի օրէն, ամէն ճիւղերու մէջ տեսնուած պակասներէն մղուելով։ Պատրիարքական փոխանորդը Գաբրիէլ վարդապետ Ճէվահիրճեանն էր, Աշըգեանի օրէն պաշտօնի կոչուած, որ Դիմաքսեան և Զամիչեան տեղապահներու և Իզմիրլեան պատրիարքի օրով պաշտօնը պահած էր, և ես ալ զայն անփոփոխ պահեցի 12 տարիներ, մանաւանդ թէ եպիսկոպոսութեան ալ բարձրացնելու նախաձեռնարկ եղայ։ Ճէվահիրճեան համեստ ու չափաւոր կարողութեան տէր, եւ մեծ գործեր իւրովի ստանձնելու և վարելու չձգտող, իսկ շատերէ անբաւական անձ նկատուած էր, ուստի ոմանք այնպէս կարծեցին թէ լոկ իւր քեռորդւոյն, Նորատունկեան Գաբրիէլի, հաճելի ըլլալու համար զայն պաշտօնի վրայ պահել ուզած ըլլամ, մինչ ես շատ հեռու եմ եղած ուրիշին հաճելի ըլլալու համար անյարմար անձի գործակցութեամբ նեղուելէ։ Իմ տեսութեամբս փոխանորդ եղող անձը պէտք է որ նախաձեռնարկ գործունէութիւնը չունենայ, գլխաւորին յանձնարարութեանց և թելադրութեանց ճշդապահ գործադիր ըլլայ, համեստ կեանքով ու անշահասէր ուղղութեամբ գործէ, իւր և իւր գլխաւորին պատիւը պահել գիտնայ, և յղուած

տեղեր յարգանք կարենայ վայելել։ Ճէվահիրճեան ճշդիւ այդ անձն էր. նախաձեռնարկ գործունէութենէ զգուշանալը առաւելութիւն մըն էր, որով կրցած եւ ուզած եմ զայն փոխանորդ պահել իմ կամքիս հետեւելով, եւ ո՛չ եբբեք ուրիշի հաճելի ըլլալու միտքով։ Իսկ եպիսկոպոսութեան բարձրացնելու մէջ նպատակս եղած է փոխանորդարանին տիրապէս Կ. Պոլսոյ առաջնորդարանին ձեւը տալ եւ առօրեայ գործերը այնտեղ ամփոփել։

Երկրորդ կարեւոր անձը պատրիարքարանի գործակատարն է, եւ պաշտօնի վրայ գտնուող Աբրահամ Ֆրէնկեան էր, հինաւուրց պաշտօնեայ, արդէն ծերացած, եւ իւր գործին ժրութեամբ հետեւելու անբաւական գործած, սակայն անհնար էր զայն փոխել, մինչեւ որ պատուաւոր կերպով հանգստեան կոչուելու միջոցը գտնուէր։ Այս պատճառով Քաղ. Ժողովոյ անդամներէն Տիգրան Տէր-Ներսէսեան բաւական ժամանակ իբրեւ օգնական գործեց, եւ երբ Ֆրէնկեան պետական թոշակով հանգստեան կոչուեցաւ, Տէր-Ներսէսեան իբր յաջորդ սկսաւ շարունակել, Յարութիւն Տատեան ատենապետի պաշտպանութիւնն ալ վայելելով։ Տէր-Ներսէսեանի գործունէութիւնը բաւարար էր, սակայն անձնական շահեր մշակելու զրոյցները հետզհետէ կը շատնային, եւ միշտ ինծի կը մղուէին, զի քեռայրիս՝ Մինասեանի եղբայրն էր։ Ուստի ես իսկ նախաձեռնարկ եղայ, որ պաշտօնէութեան եւ ժողովականութեան իրարու հետ անյարմարութիւնը զգուշացնել տալով՝ նոր գործակատարի ընտրութիւն կատարուի, եւ ուր ուրեմն 1903 մարտ 5/18ին պաշտօնի կոչուեցաւ Արիս Ֆէսճեան, որ Արտաքին Գործոց պաշտօնէութենէ յառաջ եկած Կոլոցի փոխհիւպատոս կը գտնուէր։ Ֆէսճեան թէ՛ կարողութեամբ եւ թէ՛ ուղղութեամբ արժանաւոր գործակատար եւ ներկայացուցիչ եղաւ ազգային պատրիարքարանին։

Շատ խօսքեր դարձած են պատրիարքարանի դիւանական պաշտօնեաներու մասին, իբր թէ ապիկար եւ ծոյլ անձեր ըլլան, ուստի ստէպ կը կրկնուէր վաֆրագործում ըսուածը, որ է հիմնովին փոփոխել ամէնն ալ, եւ նորեր բերել անոնց տեղը։ Ես այդ համոզումը չունեցայ, զի ընդհանրապէս փորձառու անձեր էին, անհատական շահասիրութեան հետեւողներ չէին, իսկ ծուլութիւն ըսուածը հետեւանք էր գլուխը գտնուողներուն կարգով ու կանոնով գործածել չգիտնալնուն։ Պաշտօնեաներուն բոլորն ալ

կանուխէն ինծի մօտէն ծանօթ անձեր էին, որով երբեք փոփոխելու գաղափարը չունեցայ, թէպէտ գիտէի թէ գործեր ըստ արժանւոյն չեն յառաջեր պարզապէս գործածուած ձեւերուն անյարմարութենէն։ Ուստի այդ կէտին դարձուցի մտադրութիւնս դիւանական գործառնութեանց մասին ունեցած վարժութեամբս։ Պատասխանատուութիւնները ճշդելու համար գործառնութեանց ճիւղերը բաժնեցի, դիւանի ընդհանուր վարչութիւնը ինծի վերապահելով։ Երկու գլխաւոր դիւանները եղան վարչականը և յարաբերականը, առաջինը ժողովներով եւ ընդհանուր գործերով, և երկրորդը կառավարական գործերով և պետական լեզուով զբաղող, առաջինը Բարթող Թելեանի և երկրորդը Կարապետ Խաչատուրեանի գլխաւորութեամբ, որոնց գիւանապետ անունը տուի։ Միւս ճիւղերը եղան կրօնականը, արձանագրութեանը, հաշուականը և անցագրատանը, որոց գլխաւորները տեսուչ կոչուեցան։ Իսկ միւս պաշտօնեաներէն ոմանք գիւանադպիր եւ ոմանք գրագիր նշանակուեցան, ըստ որում կրնային խմբագրել կամ ոչ։ Փոխանորդարանին և Դատաստանական Խորհուրդին յատուկ գիւանադպիրներ տրուեցան։ Ամէն հատնող թուղթ իմ ձեռքէս անցնելով կը մակագրուէր, եւ արձանագրութեան դիւանի մէջ կը նշանակուէր, և հաւեն ալ կնքուելու ձեւով պատրաստուած տարբերը կոխուելով կը լեցուէր, եւ նշանակեալ տեղը կը յղուէր։ Խառն և Կրօնական և Քաղաքական ժողովներու ղրկուածներուն օրակարգի ցուցակը ես ալ կը պահէի, որպէսզի Վարչութեան ընթացին ու ընելիքին տեղեկութիւնն ունենամ, և ըստ այնմ կարգադրեմ, եւ առնապետութեան ես օժանդակեմ։ Թուղթերը երբեմն ի պատասխանի և երբեմն ի քաղաստրութիւն կը մակագրուէին, եւ պէտք էր որ գործադրութիւնը երրորդ օրէն անդին չանցնէր, եթէ այլապէս մակագրուած չէր։ Անհնարակ գիրեր ի պահ կը մակագրուէին. թէպէտ քիչ անգամ կը գործածէի այդ մակագրութիւնը՝ դիմումները անպատասխանի չթողու նպատակով։

Նախորդ պատրիարքները սովորութիւն ունէին պատրիարքարանի հաշուոյն իրենց անձնական սպասաւոր մը ալ պահելու ես այդ պաշտօնը ջնջեցի, պատրիարքարանի մէջ սենեկապանը և պատրիարքարանէ դուրս բարապանը բաւական էին ամէն ըստ պասաւորութեանց։ Անոր տեղ անձնական դիւան մը կազմեցի երկու նորահաս դպրեվանքցիներով եւ ի հարկին ուրիշ նորահաս

ներով, որոնք մէկ կողմէ ձեռքէ գրուելիք պատասխանները, չըՆորհուրդութիւններն ու չնորհակալութիւնները կը պատրաստէին եւ կրօնական դիւանին կ'օգնէին, եւ միւս կողմէ գաւառական պաշտօններու չելած՝ պաշտօնական գործոց ընթացքը կը սովորէին։ Երկու յատուկ հրահանգներ պատրաստած եւ տպագրութեամբ ցրուած էի, մին պատրիարքարանի դիւանին գործունէութեան կերպերը ցուցնող, և միւսը գաւառներէ կեղրոնին յղուելիք գրութեանց ձեւերը բացատրող։ Վերջինին մէջ յատկապէս հրամայած էի գովաբանութեանց և աւելորդաբանութեանց և սիրտ շարժելու համար դիզաբանութեանց և եղելութեանց մասին գրնահատութեանց չմտնել, այլ իրողութիւնները լոկ պատմաբանորէն գրել, անձի, տեղւոյ, ունգամի, չափի եւ այլ պարագայից մասին ստոյգ և յստակ տեղեկութիւններ տալ, և այդ չափաւորութեանց ներքև որևէ ձախող դիպուածներ ալ գրելէ չվախնալ։

Տեսուչ խորհուրդներու օրինական ձեռնհասութիւնը գործադրական տեսակէտէն խիստ չափաւոր ըլլալուն, իրենց կը թողուի քննութեանց և զննութեանց և մասնաւոր պարագայից մէջ ազատարար գործել, իսկ ընդհանուր որոշումներ և տեւական կարգադրութիւններ Վարչութենէ չանցուցած և վաւերացում չստացած գործադրութեան չդնել և որոշումնին իբր առաջարկ Վարչութեան ներկայել։ Այդ կերպով վարչական տեսակէտէն կատարեալ համաձայնութիւն գոյացած էր, և փոխադարձ ընդհարումներու առջևը կ'առնուէր։

Ներքին կարգադրութեանց մէջ գլխաւոր տեղը կը բռնէր չինուածն ալ։ Գումգարուի պատրիարքարանը Պէզճեան Յարութիւն ամիրայի ժամանակէն չինուած մըն էր, որ հոյակապ կամ վայելուչ ըսուելու արժանիքը չունէր այլևս, այլ հնութեան պատկառելի կերպարանը բաւական էր զայն յարգելի ընել, եւ ես բացէ ի բաց հեռացուցի նոր պատրիարքարան չինելու գաղափարը։ բաւական էր որ մաքրութեան և ընդարձակութեան խնամ տարուէր։ Վերջին պահանջին համար յօգուտ գործածեցի վերջերը գնուած Փափազեան Ճանիկ ամիրայի յարակից տունը, զոր անհրաժեշտ նորոգութիւններով ամբողջապէս դիւանատան վերածեցի, եւ երկու սենեակներու մէջ փակուած ճիւղերը յատուկ սենեակներ փոխադրեցի, և յարմար անցքերով հին շէնքին միացուցի, և դիւաններու պահանջը առաւելօքը լրացաւ։ Իսկ հին շէն-

քը ամբողջապէս մնաց պատրիարքին և փոխանորդին և ժողովներուն, և նոր որմաթղթերով, նորոգեալ կարասիներով, վայելուչ գորգերով, և վարագոյրներով և ինչ ինչ փոփոխութիւններով գոնացուցիչ վիճակի վերածուեցաւ։ Գլխաւորապէս հոգ տարուեցաւ մեծ սենեակին սկզբնաւորութիւնը փոխելու, միջոցին սենեակը վերցնելու, ապակեփեղկ աւելցնելու, և մուտքի բակն ալ նորէն սալարկելու. իսկ ծախքն ալ յատուկ հանգանակութեամբ հոգացուեցաւ։ Մեծ սրահին մէջ ալ վերջին պատրիարքներու պատկերները պատրաստուեցան եւ շարուեցան՝ Զաքարիա Կաղզուանցիէ սկսելով, եւ եղած նորութիւնները յարատեւ պահելու համար պէտք եղած միջոցները ձեռք առնուեցան։ Պատրիարքին շարունակ երթեւեկներուն համար ամսական վարձքով յատուկ կուռք ունենալու սովորութիւնը պահուեցաւ։ Շէնքին արտաքինն ալ վայելուչ ցուցնելու չափ նորոգութիւն ունեցաւ, իսկ պատրիարքարանի եւ Երուսաղէմատան մէջտեղ գտնուող անակը բոլորովին քակուեցաւ։ Այս անակն ու ճանիկի տունը աղքատներու բնակարան դարձած էր, որոնցմէ իրօք կարօտներուն այլուր բնակարան հայթայթուեցաւ, իսկ առանց կարօտ ըլլալու նստողները դուրս հանուեցան։

Ներքին կարգադրութեան մասին հատուածը պիտի փակեմ Ռոպէր Եաղլճեանի մասին տեղեկութեամբ, զոր ես մօտէն կը պահէի, թէպէտ շատերու աչքին կասկածաւոր անձ մը երեւցած էր։ Իրաւ է որ Եաղլճեան ամէն կողմին մուտ և ել գործող, եւ տարբեր անձերու մտերիմ եղող անձ մըն էր, որ կրնար իւր գործունէութեան մասին կասկած հրաւիրել. սակայն կանուխէն տրնական բարեկամ եւ ինձի անկեղծ բարեացակամ մը եղած ըլլալով, օգտակար ըլլալու լրջ ու կամք ունէր, որով իւր տեղեկութիւններէն և փափաքուած տեղեկաբերութիւններէն մեծապէս կ'օգտուէի ես՝ իմ ձեռնարկներու ատենն ու կապը ճշդելու, և կամ կարեւոր տեղեր թելադրութիւնները հասցնելու համար։ Վարչութեան մէջ գտնուողներ գիտեն, թէ իրենց յաջողութեանց զօրագոյն ազդակը շուրջը գտնուողներու մտայնութեանց և պատրաստուած իրողութեանց, և դեռ չեղած եղելութեանց գիտակցութիւնն էր, զի հրապարակ չելած խնդիրներու ծանօթութեան հիմնուելով՝ կրնայ իւր նախազգուշաւորութիւնները կարգադրել, արգելքները խափանել, դիւրացուցիչ միջոցներու

ձեռնարկել, և որևէ դիպուածի առթիւ յանկարծականի չմատնուիլ։ Այդ մեծ օժանդակութիւնը ես Եպրճեանով գտած եմ. կը վկայեմ թէ ազգին վնասակար ձեռնարկ մը իրմէ եղած չէ, ինչ ալ ըլլայ կամ կարենայ եղած ըլլալ իւր վերաբերումը օտարներու հանդէպ կամ օտարներու մասին։ Նա ինձի համար, իմ պաշտօնիս համար, իմ գործերուս համար, հաւատարիմ եւ անկեղծ օգնական մը եղած է, և զայդ համարձակ կը յայտարարեմ, պայթակղեալ միտքեր, եթէ կան, բուժելու և հանգարտելու նպատակով։

ԾԳ

Դամասկոս, 1918 փետրուար 10/23 Շբ.

Ինչպէս կանխաւ յայտարարեցի, պատրիարքութեան մասին այլուր ալ բաւական գրած եմ, և այստեղ գրելիքներս յաւելուածական և լրացուցիչ յօդուածներ միայն պիտի ըլլան, և ինչ ինչ նիւթեր ընդհանուր կերպով չօշափել պիտի պարտաւորուիմ։ Եւ նախ հետաքրքրական կը դատեմ երկու խօսք ընել Ապտիւլ-Համիտ կայսեր Հայոց նկատմամբ ունեցած տեսութիւնը պարզելու։ Համիտի վարչական կարողութիւնը անվիճելի էր. ուշիմ հեռատեսութիւն, խորաթափանց տեսութիւն, անմոռաց յիշողութիւն, անխոնջ աշխատութիւն, դիպուածոց ուսումնասիրութիւն, պարագայից հետազօտութիւն իւր առաւելութիւններն էին, որով տիրապէս տիրապետող իշխանութիւն կը վարէր։ Ես սովոր էի կրկնել թէ կայսերական գահին երեք ոտքերը ամուր և հաստատուն էին. վեհապետին անհատական կարողութիւնը, արտաքին քաղաքականութեան մէջ ճարտարութիւնը, նիւթական միջոցներու վարպետ կիրառութիւնը, իսկ ուր որ Համիտ կը թերանար, իւր հպատակներուն հանդէպ բռնած ոճն էր։ Ապտիւլազիզի եղերական վախճանէն եւ Մուրատ Ե.ի դժբախտ պարագայէն ետքը գահակալելը, կամ, ինչպէս նախարարներէն մին կ'ըսէր, երկու գիակներու վրայ կոխելով գահ բարձրանալը զինքն տարտապայ-

ման կասկածում, իւր կեանքին համար երկչոտ, անձնականին համար վարանոտ դարձուցած էր, և ծայրայեղութեան հասուցած էր իւր ըստինքեան խիստ բնաւորութիւնը։ Զսպել և միայն զլսպել եղած էր իւր ներքին կառավարութեան ոճը, շահիլ և սիրուիլ բոլորովին օտար էր իր միտքէն, և այս էր կայսերական գահուն կաղացող չորրորդ ոտքը։ Եթէ Համիտ փոխանակ ժողովուրդը զսպելու և սահմանելու՝ զայն շահելու ոճը ընդդրկած ըլլար, եւ ինչ որ օտարներու կը շռայլէր գրուելու համար, իւրեններուն հանդէպ ալ գործածած ըլլար սիրուելու համար, իւր բազմաքեղուն միտքին արդիւնաւորութեամբ սիրելի և պաշտելի վեհապետ մը կրնար եղած ըլլալ։

Այդ ընդհանուր մտայնութեան մի ճիւղաւորումն էր Հայերու հանդէպ գործածած խստութիւնը։ Համիտ խորապէս համոզուած էր թէ Հայեր օսմանեան իշխանութենէն ապատամբիլ կ'աշխատին, և թէ Հայեր կրնան իւր կեանքը դուռաճանել։ Ապատամբութեան գաղափարը եղջերուաքաղ մըն էր, զի Վարժապետեանի օրէն սկսելով բարձրացած աղաղակը և բանաձևուած նպատակը բարեկարգութիւնն էր, որպէսզի հայաբնակ գաւառներն ալ վայելեն կեանքի և ինչքի և պատիւի ապահովութիւնը։ Երբեք օտար տիրապետութեան անցնելու փափաք չյայտնուեցաւ, և ինքնուրոյն կառավարութեան խօսքն իսկ չեղաւ։ Եթէ Հայերը լոկ հայաբնակ նահանգներու խօսքը կ'ընէին, և ոչ բովանդակ օսմանեան նահանգներու, բնական էր որ հայ տարրը ուրիշ տարրերուն ալ հոգը չստանձնէր, միանգամայն յայտնի էր որ հայաբնակ անուանով կոչուած Հայաստանի նահանգներուն հետ բաղդատմամբ, ուրիշ նահանգներու վիճակը տանելի կրնար ըլլալ։ Եթէ Հայերու մէջ զինուելու շարժում մըն ալ առաջ եկած էր, ամէն պարագաներ ակնյայտնի կը ցուցնէին թէ նպատակը ազգային տարրերու դէմ անձնապաշտպանութենէ անդին չէր անցներ, և քանի մի հարիւր հրացանով ապատամբութիւն փորձել հնար չէր, նոյնիսկ եթէ հազարի ալ հասնէր։ Իսկ Համիտի կեանքին դաւաճանելու գաղափարը երբեք Հայուն միտքէն անցած չէր, և փորձն ալ եղած չէր, որ կասկած ստեղծէր։ Բարձրդռան մէջ պայթած 1897 օգոստոս 6/18ին ռումբը կայսեր անձին հետ բնաւ կապակցութիւն չունէր։ Իսկ Եըլտըզի բացավայրին մէջ պայթած ռումբը, ոչ միայն ժամանակով շատ յետնորդ

էր, որ նախորդ գործողութեանց պատճառ չէր կրնար ըլլալ, այլև իմ հետազօտութիւններս ու տեղական զննութիւններս զիս հաստատուն համոզման հասուցած են, թէ ան ո՛չ միայն Հայոց նախաձեռնութեամբ Համիտի կեանքին դէմ պատրաստուած մահափորձ մը չէր, այլ պարզապէս Նէճիպ Մէլհամէի ձեռքով կազմակերպուած թատերախաղ մըն էր, որ Պելճիացի Ժորիսի միջնորդութեամբ կրցած էր հրապուրել եւրոպական անուններով ծպտեալ քանի մը արկածոյզ Հայեր, այդ անգոյն խաղը խաղալու, որ Համիտի անձին շուրջը համակրական ցոյցեր պիտի պատճառէր։ Շատ արտայայտիչ նշաններ են գլխաւորապէս ռումբին պայթած տեղն մինչև Համիտիյէ մզկիթին դուռը եղող 200 մէտրի մօտ հեռաւորութիւնը, եւ բարձրութեանց 20 մէտրէ աւելի տարբերութիւնը, կայսերական հետևորդներէն ոչ ոքի վնասուիլը, ռումբը պարունակող կառքին շուրջը գտնուող կառապաններէն և ձիերէն քանիներուն միայն սպաննուիլը և վիրաւորուիլը, տեղ մը կանգ չառնող և սրարշաւ կառքով ճամբայ կտրող Համիտի՝ այն օր առաջին ու միակ անգամ ըլլալով մզկիթին դրան առջև խօսակցելու կենալը, և պայթիւնի վայրկեանին առանց տարբերելու առտուածային պաշտպանութեան վստահութիւն յայտնելը, և ոմբասատանուած ու դատապարտուած Ժորիսին Նէճիպ Մէլհամէի կողմէ սիրելի քարեկամս (Mon cher ami) կոչմամբ գրկախառն ողջունուիլը. թո՛ղ ուրիշ պարագաներն ու պատահարները։ Հետևաբար Հայոց կողմէ Համիտի կեանքին դէմ դաւաճանութեան գաղափարը պարզապէս ճարտար կեղծիք մըն էր, եթէ միամիտ խաբկանք չէր, և այդ անգոյ ենթադրութենէն յառաջ եկած կարգադրութիւնները ստուերին դէմ մաքառելու կերպարանն ունէին։ Գիտեմ որ հայ կուսակցականաց կողմէ, մերթընդմերթ չինծու ահաբեկիչ լուրեր Համիտի հասած են, սակայն այն ալ խաղ մըն էր, կասկածոտ կայսրը յուզելու եւ բուռն միջոցներու յորդորելու, որով կը կարծէին թէ եւրոպական մեծ տէրութիւններ պիտի շարժուին եւ պերլինեան 61րդ յօդուածին գործադրութիւնը բռնի պիտի իրականացնեն։

Հայոց դէմ գործածուած քմահաճ կարգադրութեանց նշանակութիւնն իսկ կը հաւաստէ, թէ անոնց ամէնքը կասկածի ու վախի հետևանքներ էին։ Տեղապահութեան օրէն Կ. Պոլիս գլուխ հանող գաւառացի պանդուխտները խմբովին իրենց եկեղեցիները

դարձուած էին, գաւառացիներու Կ. Պոլիս գալը բացարձակ արգելքի ենթարկուած էր, օտարներու հետ յարաբերութիւն ունենալ կամ երթևեկով յարաբերութիւններ պոյծնող զբաղումներ Հայոց առջև փակուած էին, արտասահման ապաստանող Հայերուն օսմանեան երկիրներ վերադարձը անհնար դարձած էր, մէկ խօսքով՝ դուրսինները հեռու եւ ներսինները ճնշուած պահելու մտայնութիւնն էր որ Հայերու վիճակը կը ծանրացնէր. նոյնիսկ հրամայական կոտորածները, որոնք 1894-1896 իբր երեսուն քիւր Հայերու արեան կարճեցին, Հայերը ահաբեկելու, Հայերը նուաստելու, Հայերը տկարացնելու նպատակը ունէին։ Հայը Համիտի աչքին ահարկու զօրութիւն մըն էր, որ զինքը կը սարսափեցնէր, եւ որուն ազդեցութենէն եւ ձեռնհասութենէն պաշտպանուիլ կը ջանար։ Լսուած է թէ կը վախնար որ Հայեր օդապարիկով Եըլտըզի ապառնան, եւ անոր համար շարունակ իւր ննջասենեակը կը փոփոխէր. կամ թէ ականներէ սողոսկելով Եըլտըզի արքունիքը մտնեն, եւ անոր համար ականները երկաթեայ հաստ վանդակներով ամրացուցած էր։ Հայը բան ինքեան տկար եւ միջոցներէ զուրկ եւ յեղափոխական շարժումներու անզօր տարր մը եղած առեն, զարմանալի է որ Համիտի վրայ այսքան ուժգին տպաւորութիւն մը գործած ըլլայ, սակայն նախապաշարեալ գաղափարներ եւ նախապրուսեալ տեսութիւններ ո՛չ արամաբանութիւն կը ճանչնան եւ ո՛չ իրականութիւն կը զննեն, այլ պարտաւորիչ՝ գոգքունապատիչ՝ երեւակայութեան հետեւանքներ են, որոց մասին ո՛չ պատճառաբանելը ներեալ է եւ ո՛չ փոփոխելը հնարաւոր է։

Իմ այս տեսութիւնները թերեւս ոմանց յեղակարծ եւ ուրիշներու յերիւրուած երեւնան. սակայն ես այն գաղափարը կազմեցի տասներկու տարի մօտէն շփումներով, եւ ոչ լոկ վարչական՝ այլև հոգեբանական երեւոյթները ուսումնասիրելով։ Իրրեւ ինծի յանձնուած ազգային պաշտպանութեան պաշտօնին պարտաւորութիւն՝ ջանացի Համիտի միտքէն այդ ըմբռնումները հեռացնել, եւ իբրև դարման՝ կրկին եւ կրկին թելադրեցի մէկ կողմէ Հայերու տեղափոխութեան արգելքը վերցնել, եւ արտասահման գտնուողները իրենց տեղերը դառնալու դիւրութիւն ընձեռել, իբրզի արտասահման մնալով թէ՛ կոտորածներէն զգացած զայրոյթնին կը սաստկանար, եւ թէ՛ եւրոպական ազատ կեանքին հետ շփուելով՝ համարձակութիւնին կը շատնար, ուր ընդհակառակն

իրենց ծննդավայրը դառնալով եւ քիչուշատ ընտանեկան դիրութիւններ տեսնելով՝ զղացումին կը քաղցրանար, եւ իրենց աւանդական կեանքը շարունակելով և աշխատութեանց նուիրուելով՝ ակրտի ու միտքի հանդարտութիւն կը ստանային։ Մինչեւ իսկ ատտիճան մը երաշխաւորութեան յանձնառութիւն ներկայելու համարձակեցայ։ Սակայն անհնար եղաւ Համիտը այդ որոշման յանկուցանել. այնչափ մեծ էր անոր միտքին մէջ Հայերէ զգացած երկիւղը, որ կը կարծէր թէ ամէն արտասահմանէ դարձող հայ իր կեանքին դէմ ուխտեալ դաւաճան մը եղած ըլլար, որուն ներկայութիւնը յարտաւ վտանգ կրնար սպառնալ։

Աւելի առաջ ալ երթալով պէտք է յայտարարեմ, թէ Համիտ նոյնիսկ իմ վրայ անկասկած վստահութիւն չունէր. 1882ի Կարնոյ տագնապին յիշատակը և իմ վրաս խօսուած կասկածը իւր միտքէն հեռացած չէր, որչափ ալ խնդիրը պաշտօնապէս փակուած ըլլար։ Եւրոպական կրթութիւն առած, եւրոպական կեանք վարած, և եւրոպական ազատ յարաբերութիւններ ունեցած ըլլալս իր միտքին վրայ կը ներգործէին, կուսակցական խումբերուն եւ պետերուն հետ չփումներ ունենալս ալ գիտէր, և եթէ այս գիտակցութիւններով մէկտեղ վրս մօտէն բռնել կ'աշխատէր, պատճառը պարզապէս իմ վրայ խոհական և կշռադատ ընթացք մը տեսնալն էր, որով անխորհուրդ և աննպատակ ձեռնարկներէ հեռու կը մնայի, եւ միւս կողմէն կը կարծէր թէ իմ խօսքս կրնար ընդունելութիւն գտնել զինքն ահաբեկող շարքերուն վրայ։ Զիս մօտէն բռնելու միջոցներէն մէկը շքանշաններով վրս շփացնել աշխատիլն էր, զի 1896 դեկտեմբեր 29|10 յունուար 1897ին առաջին ատտիճանի մէճիտիյէ շնորհելէն ետքը, 1897 օգոստոս 19|31ին առաջին ատտիճանի օսմանիյէ, 1901 դեկտեմբեր 8|21ին իմթիյազի արծաթ եւ ոսկի մետալներ, եւ 1902 ապրիլ 2|15ին ականակուռ օսմանիյէ շքանշանները շնորհուեցան, թէպէտ ես անոնցմով երբեք ազգային շրջանակի մէջ չզարդարուեցայ։ Վերջերը ականակուռ մէճիտիյէի խոստումն ալ պաշտօնապէս հաղորդել տուած էր եւ 1900 յունուար 10|22ին Պարսից շահին կողմէ շնորհուած առաջին ատտիճանի շիրուխուրշիտ շքանշանին կիրառութեան արտօնութիւնը ինքնաբերաբար հաղորդեց։ Ուրիշներուն համար ալ խնդրուած ատտիճանի և շքանշանի տուչութիւնները անմիջապէս եւ առանց նախաքննու-

թեան կը հրամայէր, որոց թիւը 200ի մօտեցաւ կը կարծեմ, և անգամ մը, 1903 օգոստոս 18|31ին 47 անձանց միանգամայն։ Վարչական ժողովականներէն և գլխաւոր պաշտօնեաներէն զատ, յատուկ մատդրութիւն դարձուցած եմ գաւառներու մէջ պաշտօնավարող առաջնորդներու եւ տեղապահներու եւ կառավարական ժողովներու անդամակիցներու դիրքը բարձրացնելու և ազգեցութիւնն ին աւելցնելու համար պետական պաշտօնով մը ճոխացնել։ Դուրեան Ղևոնդ եւ Պալաքեան Գրիգորիս նորահաս վարդապետներն ալ, պատրիարքարանի քարտուղարութեան մէջ գտնուած տեսնելն, նոյն առաւելութիւնը ունենալ փափաքելնուն եւ ինչ ընդունելութիւն չգտնելնուն վրայ ցաւելով, հրաժարելիս եաքը իմ մասին վատաբանելու և մինչև իսկ՝ վրէժխնդրական դիտմամբ՝ պաշտօնապէս ամբաստանող կանգնելու համարձակեցան, սակայն իմ նպատակս եղած էր ընդհանուրին օգուտին տեսակէտէն առաջնորդուիլ իմ ձեռնարկներուս մէջ։

Ապտիւլհամիտ կայսեր ինձի հանդէպ գործածած միջոցներէն մէկն ալ, նիւթական խնդրանքներու մասին դիւրամատոյց ըլլալն էր. բաւական էր որ իր քաղաքագիտական տեսակէտին հակառակ առաջարկ մը չներկայուէր։ Ըստ այսմ կատարածներու պատճառած կարօտելոց եւ այրեաց եւ որբոց նպաստին համար հանգանակուած 83,000 օսմ. ոսկւոյ գումարէն իբր 5000ը պետական մտուկէն և արքունիքէն հայթայթուեցան, թէպէտ միւս կողմէն առանց կառավարական արտօնութեան հանգանակութիւն կատարելուս համար դիտողութիւններ պակաս չէին, որոց կը պատասխանէի թէ ողորմութիւն բաշխել և բաշխելու համար հաւաքել եկեղեցական կոչումէս անբաժան է, և միայն պաշտօնական ձեւակերպութիւններէ կը զգուշանայի։ Կարօտ և ուսումնատենչ տղաքներէն 25 հատ զանազան պետական վարժարաններ զետեղելու հրաման ըրաւ 1898 ապրիլ 15|27ին, և 10 տղայ ալ Սուլթանիյէ բարձրագոյն վարժարանը ընդունուեցան 1900 սեպտեմբեր 10|23ին։ Հիւանդանոցի շնորհուած պարէնը օրական 600 քաշ հացի և 150 քաշ միսի բարձրացաւ 1898 օգոստոս 20|1 սեպտեմբերին նախապէս ստացուածը եռապատկուելով։ Գալֆայեան որբանոցը ընդարձակելու համար պատակից եղող ճէզայիրլեան ապարանքը շնորհուեցաւ իւր ընդարձակ պարտէզներով 1908 մայիս 6|19ին, որ ժամանակով յարքունիս գրաւուած էր

ձէզայիլեան ամիրայի պարտքին փոխարէն։ Մասնաւոր նուէրներ ալ պակաս չեղան, զորօրինակ 200 ոսկի պատրիարքարանի անտուկին՝ 1902 յուլիս 2/15ին, 100 ոսկի ալ հիւանդանոցին՝ 1904 նոյեմբեր 11/24ին, և 100 ոսկի Գալֆայեան ողբանոցին՝ 1905 նոյեմբեր 28/11 դեկտեմբերին։

Համիտ կը կարծէր թերևս այս նիւթական չնորհներով բողոքները դադրեցնել, սակայն տուչութիւնները ստանալով ալ երբեք գանգատ ու բողոք չդադրեցուցի, և հրաժարելու ու քաշուելու թէական յայտարարութիւններն ալ պակաս չըրի, և համարձակ կրնամ վկայել թէ աւելի ևս զինքը սակեցի չափաւորութեան և բռնական միջոցներու ընդհատման, քան թէ ինքն զիս իւր կամաց համակերպութեան։ Յայտնի իրողութիւն մըն է թէ պատրիարքութեանս միջոցին չնորոգուեցան կոտորածի, թալանի, խմբովին աքսորի, և նմանօրինակ արկածներ, որոնք առաջ տեղի ունեցած էին և ետքէն ալ կրկնուեցան։

ԾԴ

Դամասկոս, 1918 փետրուար 11/24 Կիր.

Աւուրս յիշատակը կ'արդարացնէ զիս անշուշտ Խոհիֆ ու Խոսֆիա ընթացքը ընդհատել, և միջանկեալ յօդուած մը նուիրել կենացս տարելիցին։ Այսօր, 1918 փետրուար 11/24, երեկոյեան արև մտնելէն երեք ժամ ետքը, 77րդ տարելիցս կը լրանայ և 78րդ տարւոյն կը մտնեմ։ Երեք ամիսէ ի վեր Դամասկոս կը գտնուիմ, և վանատան մէկ փոքր սենեակին մէջ առանձնական կեանք կը վարեմ, անձիս և սենեակիս մօտ ծառայութիւններն ալ իւրովի կատարելու պայմանին ներքև։ Սոհակ վարդապետ Աստուածատուրեան որ Երուսաղէմի մէջ զիս կը յանձանձէր և միասին գալու յանձնառու եղած էր, վերջին վայրեանին միտքը փոխած և տեղէն չէ շարժած, թէպէտ բացակայութեան վնասը շատ չէ, զի արտաքին հոգածութեանց համար շատ ընդունակութիւն չունէր, իսկ ներքին հոգածութեանցը համար իմ ընե-

լիք ծախքերս եւ զինքն պահելու պարտքս շատ աւելի պիտի նստէին սա նեղ պարագաներուն մէջ։ Յատուկ զբաղման համար միջոցներ պակսելուն, իբրեւ ժամանցի միջոց, սոյն Խոհին ու Խօսքն ձեռք առի, զոր երեք տարի առաջ Երուսաղէմի մէջ սկսած էի, եւ յետոյ աւելի լուրջ գրութեանց զբաղելով բարձի թոզի ըրած էի, իսկ ներկայիս կարեւորագոյնը պակսելուն կարեւորութեան երեւոյթ ստացաւ։

Առողջական վիճակս Դամասկոսի խոնաւ օդէն և այս տարուան ձմեռնային բացառիկ ցրտութենէն աննպաստ կերպով ազդուեցաւ. առաջները իբր ամիս ու կէս փորհարութեամբ նեղուեցայ, եւ վերջերս յունուար 23|5 փետրուարին պարբերական տենդ ալ ունեցայ, եւ տակաւին ապաքինման վիճակի զգուշաւորութեանց ներքեւ կ'ապրիմ։ Թէպէտ քիչ ու շատ կապդուրուած՝ Այնթապցի Մովսէս Պապիկեան բժշկապետի խնամոց և Դպրեվանքցի Խաչատուրեան Գարեգին վարդապետի հոգածութեանց շնորհիւ։ Այս տկարութիւնները անցաւոր են, իսկ կազմական առողջութիւնս տակաւին նպաստաւոր նշաններ կը ներկայէ։ Բժիշկ Պապիկեան յունուար 19|1 փետրուարին ներքին կազմս մանրազնին քննութեան ենթարկելով, կենսական գործարանները, սիրտը և թոքը և երիկամունքը կատարեալ և կանոնաւոր վիճակի մէջ և տարիքիս համեմատութեամբ բացառիկ լաւ ատիճանի մէջ գտաւ, այնպէս որ զգուշաւոր կեանքով մը եւ պատահական արկածներու բացառութեամբ՝ քանի տարի մը եւս առողջ վիճակով ապրելու հաւանականութիւնը հաստատեց։ Ստամոքսի և աղեաց կազմական կանոնաւոր վիճակն ալ հաստատեց, թէպէտ մարսողական ոյժը նուազած, ինչ որ սնունդի առարկաներուն չափաւորութեան և թեթեւութեան պէտքը կը ծնուցանէ։ Սատաքարցի Անդրանիկ Կէնճեան բանասէրն ալ, որ ձեռաց ոտի գիծերը հմայելու մարմաջով կը զուարճանայ, ութսունի մօտ նոր մեծութիւն և նոր փառաւորութիւն ունենալիքս կը գուշակէ եւ կը պնդէ, որ եթէ միտքի համոզիչ ալ չըլլայ, ականջի ախորժ կը հնչէ։ Ասոնց հետ մտաւորական վիճակս ալ բնաւ թերի կողմ մը չներկայեր, այնպէս որ ամենուն բերանն է՝ թէ շատ ապրած ես, բայց ծեր չես, և տարէց երիտասարդ մըն ես։

Ինչ որ իմ վրայ տկարացած են՝ արտաքին զգայարաններն են, և յատկապէս տեսողութիւնն ու լսելութիւնը, որ եթէ աշ-

խստութեանց և տեսակցութեանց համար կարեւոր թերութիւններ են, սակայն գրական աշխատութեանց հետեւելու վճռական արգելք չեն դներ։ Երուսաղէմ եղած միջոցիս Ազգապատումիս երկհատոր հրատարակութեանը երրորդ հատորն ալ պատրաստեցի, եւ պատմութիւնը մինչեւ Խրիմեան Մկրտիչ կաթողիկոսի մահը հասցուցի։ Իսկ անկէց ասդին շարունակելու համար պէտք է միրոյ պատահարաց և յատկապէս համաշխարհական պատերազմներուն վերջանալուն սպասել, որպէսզի հնար լինի եղելութիւնները ճշդութեամբ և ստուգութեամբ ներկայացնել։ Եթէ յաջողի ինձի մօտ ժամանակի մէջ Դամասկոսէ Կ. Պոլիս փոխադրուիլ, ինչպէս շատ կողմերէ կը յուսադրուի, մտադրութիւնս է Հանապատումիս երկրորդ մասին ձեռնարկել, Գործք Առաքելոցը եւ Առաքելական Թուղթերը և Յայտնութիւնը պատմական շարունակութեան մէջ ամփոփելով, և եղելութեանց բուց մասերը ընկալեալ աւանդութիւններէ լրացնելով։

Շատ կը փափաքէի այսօր, կիրակի, եկեղեցի իջնալ և պաշտամանց ներկայ գտնուիլ, ուստից այս 19 օր է որ կը պակսիմ, նոյնիսկ վերջին երեքշաբթի, ամսոյս 6|19ին, Երիտասարդ Մարդարէից յիշատակին և անուն ոտնին ալ չկրցայ իջնալ։ Այսօր ալ դեռ զիս լաւ կազդուրուած չեմ զգար. օդը ցուրտ և խառնակ է, գիշերն ալ մեծաւ մասամբ անքուն անցուցի, եւ խոհեմութիւն չեմ կարծեր զիս նորէն մեղու վտանգին մէջ դնել, ինչպէս որ յունուար 23|5 փետրուարին Ս. Եւգինէի յիշատակին և քրոջս անունի տօնին տեղի ունեցաւ, եւ տենդով հիւանդանալուս պատճառ եղաւ։ Կը զգամ որ այլեւս զգուշաւորութեան լուծը վրաս կը ծանրանայ, և մանր մունր չարքաշութեանց տակելու ոյժը կը նուազի։ Անցեր են այն օրերը, յորս այս տեսակ բաներու ակնջ չէի կախեր. 78 տարեկանը ութսունամեանների դատակարգին կը պատկանի այլեւս, ու ցաւօք եւ հեծութեամբ օրերու օրէնքին կ'ենթարկուի։

Ահա՛ այս աւուր զգացումներուս ստուերագիծը եւ վիճակիս մասին համառօտ ակնարկ մը, որով կը փակեմ այս միջանկեալ հատուածը, և կը դառնամ կենսագրական Խոհիք ու Խօսքերուս, շարունակելով պատրիարքութեան մասին լրացուցիչ տեղեկութիւնները։

ԾԵ

Դարեւոյս, փետրուար 12/25 Բշ.

Վերջընթեր հատուածիս մէջ կ'ըսէի, թէ հակառակ Ապտիւլ-համիտ կայսեր զիս չահելու համար գործածած միջոցներուն, ես երբեք չէի դադրեր գանգատի և բողոքի ձայնը բարձրացնել կեղեքիչ և բռնական կարգադրութեանց դէմ, և մինչև իսկ հրաժարականով քաշուելու յայտարարութեան դիմել, եթէ պահանջուած դիւրութիւնները չհրամայուէին։ Եթէ ըսի, որովհետև երբեք անձնական պատճառով կամ յերիւրուած պատճառանքով գործէ եւ պաշտօնէ քաշուելու կամ որ նոյն է՝ դժուարութիւններէ խուսափելու միտքը չեմ ունեցած։ Կարեւոր կէտ մը պահպանելու կանգնած պահակ զինուորի կգայումով տոգորուած էի, որ չի կրնար ո՛չ խուսափիլ և ո՛չ հրաժարիլ, և կենաք չափ իւր պահնորդութիւնը շարունակելու նուիրական պարտքն ունի։ Իմ հրաժարականներս միշտ թէական կամ պայմանական եղած են, այսինքն որ եթէ այս կամ այն արգելքը չվերցուի՝ ինծի անհնար պիտի ըլլայ պաշտօնս շարունակել և քաշուելու պիտի ստիպուիմ։ Եւ որովհետև վճռական միջոցները յաճախ գործածուելով իրենց ոյժը կը կորսնցնեն, ես ալ աշխատած եմ չափով ու կշիռով ձեռք առնել քաշուելու առաջարկը, երբոր կենսական խնդիր մը կայն պահանջէր, և յաջողելու յոյսն ալ հաւանականութիւն ներշնչէր։

Կրնամ պարզերես յայտարարել թէ չէ եղած ձախող եղելութիւն մը կամ անհաճոյ պատահար մը կամ դժգոհի կարգադրութիւն մը, որուն մասին լռութիւն պահած ըլլամ, և նիւթին բնութեան համաձայն կամ պաշտօնական ծանուցագիր կամ անպաշտօն տեղեկագիր կամ բերանցի դիտողութիւն ներկայած չըլլամ։ Պատրիարքարանի Յարաբերական Դիւանին մէջ ստուար հատոր մը կազմած են այս տեսակ զրուցեանց պատճէնները, որոնց ոճն ալ երբեք ստորաքարշ կամ ստրկային եղած չէ, այլ միշտ վայելուչ կերպով իրողութիւնները, իրենց իսկութեան մէջ

պարզուած են, և պահանջները յստակօրէն բացատրուած են, և թերեւս աւելի որոշ ոճով քան ինչ որ յառաջագոյն գործածուած էր։ Գրութեանց նիւթեր Խառն կամ Քաղաքական ժողովէ կ'անցնէին նախապէս, և եթէ ատեն ըլլար՝ պատճէնները առաջուընէ կը կարդացուէին, իսկ եթէ ատեն չանցունելու և ժողովին օրը մօտ չըլլալուն համար հարկ կ'ըլլար կամ նախապէս որոշուած ծանուցագիր մը հասցնել կամ չզեկուցուած խնդիր մը փութացընել, յղուելէն ետքը անպատճառ ժողովին կը հաղորդուէր, որով նախագահին եւ ժողովին միջև համերաշխութիւնը երբեք չխանգարուեցաւ։ Կարծեմ թէ Աղթամարայ տեղապահ Արսէն վարդապետի սպասնութիւնը միակ դիպուածն է որուն համար լուած եմ, վասնզի ազգայիններու կողմէ ըլլալը սառուգապէս իմացուած էր։

Վերեւ բացատրեցի թէ ի՛նչ ուղղութիւն բռնած էինք ես ու ժողովներ մինչեւ 1897 օգոստոսի Բարձրդրան ռումբը, որ մեր Ջանքերը խանգարեց, մեր ազդեցութիւնը տկարացուց, եւ Համիտի ձեռք իբրև փաստ ծառայեց սկսած մեղմութիւնները կասեցնել և խստութիւնները չաւելցնել։ Երկու տարիի չափ սովորական միջոցներու ամէն տեսակները փորձեցինք, մանր մունր արդիւնքներ ալ ունեցանք, բայց ընդհանուր կացութեան կերպարանը չյաջողեցանք այլայլել, և վերջապէս 1899 օգոստոս 4/16ին ընդարձակ եւ խիստ գանգատագիր մը ներկայացուեցաւ, որուն մէջ գատ գատ յօդուածներով բացատրուած էին գլխաւոր դժուարութիւնները, զորօրինակ՝ երթեւեկի խափանումը, տուրեւառէ գրկումը, օգտակար եւ շահաւոր գործառնութեանց արգելքը, տառապեալ ժողովուրդին վրայ ծանրացած հարկապահանջութիւնը, պաշտօնեաներու ագիկամի կեղեքումները, ընդամէնն տասնեակ մը յօդուածներ, որոց եզրակացութիւնն էր թէ Հայերը բոլոր օրինական իրաւունքներէ և վայելումներէ զրկուած են, եւ արտաքոյ օրինաց կացութեան ենթարկուած են։ Քսան օրի չափ սպասելէն ետք արդիւնք մը չը տեսնելուս վրայ՝ օգոստոս 25/6 սեպտեմբերին հրաժարելու միտքս Խառն ժողովին հաղորդեցի, սեպտեմբեր 1/13ին իբրև լրելեայն հրաժարական՝ սկսայ պատրաստուիլ և ժողովներէ բացակայիլ, և վերջապէս սեպտեմբեր 27/9 հոկտեմբերին գրաւոր հրաժարականս Արդարութեան և Կրօնից նախարարութեան յղեցի։ Յաջորդ

օրը յատուկ պաշտօնէի ձեռքով հրաժարակիրս ինձի դարձուեցաւ, բայց ես կրկին յղեցի։ Տատեան ատենապետ արքունիք հրաւիրուեցաւ և բերանացի իրեն հաղորդուեցան մեր գանգատներէն գլխաւորներուն մասին կայսեր հրամայած թոյլատրութիւնները, որոնք հոկտեմբեր 6|18ին Խառն ժողովին ալ ծանուցուեցան, միշտ բերանացի, և ժողովը գոհ մնալով կ'որոշէ զիս նորէն պաշտօնի գլուխ հրաւիրել, որուն հարկ կը զգամ համակերպիլ, և հոկտեմբեր 8|20ին պատատ երթալով հրամաններուն գործադրութեան ակնկալութեամբ հաւանիս կը յայտնեմ, 9|21ին պատրիարքարան կուգամ, բայց միայն հոկտեմբեր 22|3 նոյեմբերին առաջին անգամ Վարչական ժողովին կը նախագահեմ։ Նոյեմբեր 12|24ին Վարչութեան կողմէն ուղերձ մը կը ստորագրուի, զոր յաջորդ օրը արքունիք կը տանիմ, և նոյեմբեր 22|4 դեկտեմբերին կայսերական հրամանները գործադրելու պաշտօնապէս կը կրկնուին, բայց միշտ բերանացի, և Վարչութիւնը առայժմ բաւականանալ հարկ կը դատէ։

Ժամանակին ժամանակ տալ գործնական առած մըն է (Dar tempo al tempo), և պէտք էր որ մենք ալ ժողովրդական իմաստութիւնը յարգէինք, գոնէ մինչև ատենի մը։ Կայսերական հրամաններուն արդիւնքը քանի մը առերեսյթ պարագաներէն անգին չանցաւ, և մեր բերանացի հետապնդումներն ու գրաւոր գանգատներն ալ օգուտ մը չարտադրեցին, և հարկ եղաւ որ ակնկալութեամբ ետ առնուած հրաժարականը ակնկալութեանց դիմաց ելլալուն վրայ վերանորոգուէր։ Եւ հինգ ամիս սպասելէն ետքը 1900 մարտ 8|21ին զայն կրկնեցի և հրաժարագիրը նախարարութեան յղեցի, արքունեաց ալ հաղորդեցի։ Յաջորդ օրը առաջին քարտուղարէն կոչուեցայ, և հրամաններուն գործադրութեան խստումով գործերը վերատանձնելու հրաւիրուեցայ։ Սակայն ակնկալութեանց պարապի ելնելը յիշելով գործադրութեանց սպասելս պնդեցի։ Խառն ժողովն ալ մարտ 10|23ին իմ ընթացքիս համերաշխ և համաձայն գտնուելը յայտարարեց, ես ալ իմ քաշուած դիրքս պահեցի, եւ նոյնիսկ մարտ 28|10 ապրիլին Գուրպան Պայրամի շնորհաւորութեան չգացի, և պատրիարքական փոխանորդը յղեցի։ Փոխադարձ փորձեր ու երրորդ անձերու ձեռքով անուղղակի յորդորներ միջոց մը ևս չարտունակեցին, որոնցմէ օգուտ կը քաղէի մերկ ճշմարտութիւններ պատատ լսել

տալու, որ եթէ Հայերը ապագային յանցապարտ են, զիս անոնց գլուխ ըլլալու չատիպեն, իսկ եթէ չեն՝ բացառիկ կարգադրութիւններ դադարին։ Ապրիլ 20|3 մայիսին Արդարութեան և Կրօնից նախարար Ապտիւրրահման բաշայէ կոչուեցայ, և հանդարտաբարոյ յորդորներ լսեցի, բայց անդրդուելի մնացի. մայիս 2|15ին ալ Ներքին Գործոց նախարար Մէմտուհ բաշայէ կոչուեցայ, բայց անոր ճարտար դարձուածներուն ալ դիմադրեցի։ Վերջապէս մայիս 11|24ին առաջին քարտուղար Թահսին բաշայի հրաւէրին գացի, ուր ատենապետ Տատեան բաշան ալ ներկայ գտայ։ արքունական պաշտօնեայն իւր պաշտօնական դիրքն լիովին ատանձնելով և յանուն կայսեր խօսելով կը վստահացնէր հրամաններուն գործադրութիւնը և գրաւորապէս ալ հաղորդուիլը, և իրեն համոզիա կը գտնուէր Տատեանը, որ իւր կրկնակի՝ պետական և ազգային դիրքովը զիս այլևս զիջանելու կը յորդորէր, և ինձի այլևս անհնար կը դառնար խստանալ, և խստութիւնները գործադրութեան ակնկալութեամբ ուժամեայ համակերպութիւնս յայտարարել կը ստիպուէի, և երկու օր ետքը, մայիս 13|26ին, պատրիարքարան կուգայի, այլ ժողովներու և եկեղեցական ապարդարութեանց նախագահելը կը վերապահէի, մինչև որ գործադրութեան և գրաւոր հաղորդակցութեան պայմանները լրանային։ Մայիս 22|4 յունիսին զինուորական տուրքերու մասին լայն շնորհումներ կը հաղորդուէին, և մայիս 28|10 յունիսին միւս պահանջներուս մասին բաւական դիւրութիւններ պաշտօնագիրով կը ծանուցուէին, բայց ես տակաւին անոնց իրականանալուն կը սպասէի, մինչև որ Հայերուն մասին բացառիկ նկատում չընելը եւ բոլոր հպատակաց համահաւասար օրինական իրաւունքներ վայելելը յայտարարուեցաւ, թէպէտև վերապահում զեղչէր միշտ պակաս չեղան։ Իսկ ես հազիւ յուլիս 27|9 օգոստոսին սկսայ եկեղեցական արարողութեանց նախագահել։ Այսպէս վարուեցաւ երկու մասով լրացած հրաժարականի ինդիրը, որ եթէ անթերի ամբողջութեամբ պահանջումներս չիրականացուց, զգալի փոփոխութիւններ յառաջ բերաւ նպաստաւոր ուղղութեամբ, պատրիարքարանի գործունէութիւնը համարձակ աղատութիւն ստացաւ, իւր մինչնորդութիւնները եւ յայտարարութիւնները անպայման յորդուեցան, երթևեկի մասին իւր տուած երաշխաւորութիւնները առանց նախաքննութեան ընդունուեցան, գաւառացի ազգայնոց

կացութիւնը տանելի ըլլալու չափ բարւոքեցաւ, և թերևս աւելին ալ իրականանար, եթէ կուսակցականաց հետևած յուզելու և յուզուելու մտայնութիւնը հակառակ ազդակ մը չըլլար։

ԾԶ

Դամասկոս, 1918 փետրուար 13/26 Գշ.

Հրաժարականի նոր ատիթ ներկայեց Կիլիկիոյ խնդիրը, զոր քիչ մը վերէն ձեռք պիտի առնեմ խնդիրն ալ բացատրած ըլլալու համար։ Կիլիկիոյ կաթողիկոս Մկրտիչ Քէֆսիզեանի մահուամբ պահ մը աթոռը պարապ մնալէ ետքը՝ յաջորդի ընտրութիւն կատարուած էր Իզմիրլեանի պատրիարքութեան օրով, և ընտրեալը եղած էր Գրիգորիս Ալէքսիանեան եպիսկոպոսը։ Բարձրդուռը կամ լաւ և ա արքունիքը բացէբաց մերժած էր այդ ընտրութիւնը վաւերացնել, Ալէքսիանեանի անձը Մշոյ առաջնորդութեան օրէն կասկածաւոր դարձած, եւ բարձր հրամանով Մուշէ հանուած, եւ Կրօնական ժողովոյ անդամակցութիւնն ալ վաւերացուած չըլլալով։ Այդ վերջին պարագային Իզմիրլեանի անդամակցութիւնն ալ վաւերացուած չէր, եւ Աշըգեան պատրիարք փոխանակ պաշտպանութեան՝ աւելի ծանրացուցած էր երկուքին ալ կացութիւնը, եւ թէպէտ Իզմիրլեանի պատրիարքութիւնը ուր ուրեմն հաստատուած էր, սակայն Ապտիւլհամիտի անոր դէմ հակառակութիւնը որդէն սաստիկ զայրացած էր, Ալէքսիանեանի նախընթացն ալ Իզմիրլեանէն ծանրագոյն էր, որով անոր կաթողիկոսական ընտրութիւնը չէր վաւերանար։ Իզմիրլեան պատրիարքի անհնար եղած էր զայն յաջողցնել, Զամիչեան տեղապահ եւ ոչ իսկ փորձելու ձեռնարկած էր, եւ Կիլիկիոյ Աթոռը կը շարունակէր պարապ մնալ, երբոր ես եւ ինձի հետ նոր Վարչութիւնը գործի գլուխ կ'անցնէինք։ Մեր խորին համոզումն էր վերջ տալ այդ պարապութեան, զոր վընասակար կը դատէինք ո՛չ միայն Կիլիկիոյ Աթոռին եւ ժողովուրդին, այլև Հայ Եկեղեցւոյ ընդհանուր կազմակերպութեան,

իբր զի ազգային ըմբռնումն էր թէ Կիլիկիոյ Աթոռը անհրաժեշտ է Էջմիածնի Մայր Աթոռը ռուսական կառավարութեան քմահաճոյքէն ազատ պահելու համար։ Այդ համոզումով նորէն ձեռք առին Ալէքսիանի ընտրութեան վաւերացումը, եւ ծանուցագիրներով ու բանակցութիւններով ու համոզիչ յայտարարութիւններով աշխատեցան զայն ձեռք բերել, մինչեւ որ բացարձակ կերպով կայսեր կողմէ ազգարարութիւն ստացան այդ խնդիրը չհետապնդել։ Կամ Կիլիկիոյ Աթոռը անպայման դատարկ թողլու եւ կամ Ալէքսիանի ընտրութենէն հրաժարելու երկայրի կացութեան հանդէպ, վարչական Խառն Ժողովոյ միաձայնութեան հետ համախորհուրդ, ևս ալ նախագասեցի Կիլիկիոյ Աթոռին պարապութեան վերջացումը, թէպէտեւ շատ ալ չուշացաւ Ալէքսիանի վախճանը, 1899 օգոստոս 15|27ին Գուզկունճուկի մէջ կատարած քահանայական ձեռնադրութեան պահուն կրած յուզմունքէն ստացած հիւանդութեան հետեւանօք։

Նոր ընտրութեան անցնելու առթիւ նոր խնդիր մը կրգռեց ընտրողական գործողութենց ձեւը, զոր կառավարութիւնը կը պահանջէր ընտրելեաց ցանկին նախապէս սրբագրութեան պայմանով կատարել տալ, ինչպէս որ Կ. Պոլսոյ Յունաց պատրիարքութեան համար օրէնքով սահմանուած է։ Այդ մասին ալ մեր կողմէն ընդդիմութիւններ և կառավարութեան կողմէն պնդումներ տարիէ աւելի շարունակեցին, մինչեւ որ Վարչութիւնը իւր դիմադրութիւնը յաջողցնելէ յուսաբեկ, և Աթոռը իսպառ պարապ թողլու ենթադրութեան ներհակամիտ՝ ստիպուեցաւ զիջանիլ, և 1900 դեկտեմբեր 1|14ի նիստին մէջ որոշեց ընտրելեաց ցանկին նախապէս սրբագրութեան հպատակիլ, դիտելով ալ թէ Ազգ. Սահմանադրութիւնը Կիլիկիոյ ընտրութեան մասին կանոն ու պայման չունի, և թէ կատարուած ընտրութեան մերժումէն թեթեւագոյն է հաւանական կամ անհաւանական ընտրելիի մը մերժումը։ Այդ յանձնառութեան վրայ Երուսաղէմի լուսաբարապետ Խապայեան Սահակ պատրիարքական պատգամաւոր նշանակուեցաւ, նախապատրաստական գործողութիւններ կատարուեցան, եւ 1901 հոկտեմբեր 20|2 նոյեմբերին վեց ընտրելեաց ցուցակը քուէարկուեցաւ Կիլիկիոյ Ընտրողական ժողովէն, եւ նոյեմբեր 23|6 դեկտեմբերին սրբագրեալ ցանկը դարձաւ կառավարութենէն, որուն մէջէն իմ պնդումս ալ վերցուած էր,

որ վեցերորդն էր քուէից կարգով, իսկ պատճառ ցուցուած էր՝ թէ նա արդէն պաշտօնի վրայ է։ Վերջապէս նոյեմբեր 29|12 դեկտեմբերին կաթողիկոս ընտրուեցաւ Երուսաղէմի փոխանորդ Երէցեան Գէորգ եպիսկոպոսը։ Երէցեան առջի օրէն զոհունակութեամբ շնորհաւորութիւններ ընդունելէն ետքը, ընտրութենէն հրաժարեցաւ արտաքին եւ կցկտուր պատճառներով, իմ ծանր նամակս ալ ազդեցութիւն չունեցաւ, եւ վերջապէս Վարչութիւնը ստիպուեցաւ 1902 փետրուար 1|14ի նիստին մէջ հրաժարականը ընդունիլ եւ նոր ընտրութեան ձեռնարկել։

Այդ միջոցին էր որ, չենք գիտեր ի՛նչ դիտմամբ եւ որո՛ւն գրգռութեամբ, կառավարութեան կողմէն Կիլիկիոյ Սբոռը Կ. Պոլսոյ պատրիարքութենէն անջատելու եւ նոր ու ինքնուրոյն հասարակութեան վերածելու գաղափարը ծագեցաւ, եւ առանց Կ. Պոլսոյ պատրիարքարանին հաղորդելու ուղղակի Կիլիկիոյ առաջնորդ Բեքմեզճեան Կիրակոս եպիսկոպոսի հրահանգ տրուեցաւ նոր ընտրութիւն կատարել, եւ Սատանայի կուսակալ Պահրի բաշա ստացած հրամանը գործադրել ձեռնարկեց, որչափ ալ դէպ առ իր համակիր եւ զգացումով նպաստաւոր էր, մանաւանդ թէ իւր պաշտօնի անցնելուն համար երախտաճանաչ ալ էր։ Որչափ ալ Բեքմեզճեանի եւ Կիլիկեցւոց եւ յատկապէս Սատանացւոց հրահանգներ հասուցինք իւրովի ընտրութեան չձեռնարկել, բայց նեղ ժամուն ուժգին միջոց մը գործածելու համար 1902 յուլիս 20|2 օգոստոսին հրաժարագիրս հասուցի նախարարութեան եւ գործէ քաշուելու գիրքը ստանձնեցի։ Թէպէտ բանակցութեանց կոչուեցայ բայց միշտ պնդեցի, թէ բովանդակ օսմանեան հայութեան պատրիարք ընտրուած ըլլալով՝ ինքզինքս ոպատ կ'զգամ երբոր անոր մէկ մասը ինէ կը խլուի, եւ միայն մնացեալ մասին պատրիարք մնալու կը պարտաւորուիմ։ Այդ կէտին վրայ ամուր պնդելս իւր արդիւնքն ունեցաւ, եւ կայսրն ալ կառավարական ձեռնարկին ձախող ըլլալը զգաց, եւ օգոստոս 18|31ին յատկապէս պալատ հրաւիրել տալով՝ պաշտօնապէս հաղորդել տուաւ, թէ սթոռներու յարաբերութիւնները ըստ առաջնոյն չարունակել հրամայած է, որով ես այլեւս հրաժարականս պնդելու պատճառ չունէի, եւ յաջորդ օրը օգոստոս 19|1 սեպտեմբերին կայսերական մաղթանքին նախապահեցի, եւ գահակալութեան տարեդարձին սրթիւ շնորհաւորութեան ներկայացայ։ Այսպէս այս

անգամ ալ հրաժարականի փորձը իւր նպատակին հասաւ և յաջողութեամբ փակուեցաւ։ Պէտք է ասելցնեմ թէ Բեքմեզճեան տեղապահին և Ատանայի մեծամեծներուն առանց Կ. Պոլսոյ պատրիարքութեան հրահանգին և մասնակցութեան ընտրութիւն կատարել չուզելը և գործնականապէս պնդելը մեծապէս նպաստեց իմ հրաժարականին յաջողութեամբ պատկուելուն։

Կիլիկիոյ ընտրութեան վերաբերեալ տեղեկութիւնները լրացնելու համար յիշեմ եւ՝ թէ Կ. Պոլսոյ պատրիարքութեան իրաւունքին ճանչցուելուն վրայ, Կէօմրիւքճան Մովսէս եպիսկոպոս պատրիարքական պատգամաւոր ընտրուեցաւ և յղուեցաւ, և նախապատրաստական գործողութիւնները նախընթաց ընտրութեան համաձայն լրանալէն ետքը, 1902 հոկտ. 12|25ին Երուսաղէմի լուսարարապետ Խապայեան Սահակ եպիսկոպոս կաթողիկոս ընտրուեցաւ, և ընտրութիւնը Կ. Պոլսոյ պատրիարքութեան կողմէ Բարձրդրան ներկայուելով՝ դեկտ. 9|22ին կայսերական հաստատութիւն ստացաւ։ Նոյնպէս Կ. Պոլսոյ պատրիարքին առաջարկութեամբ 1903 յունուար 4|17ին նորընտիր կաթողիկոսին առաջին աստիճանի մէճիտիյէ շքանշան եւ Կիլիկեցի գլխաւորաց յարմար շքանշաններ և աստիճաններ շնորհուեցան, յատուկ պատգամաւորութեամբ Սահակ կաթողիկոս Երուսաղէմէ Սիս առաջնորդուեցաւ, և 1903 Աշխարհամատեան Կիւրակէին, ապրիլ 20|3 մայիսին, օծուեցաւ և պաշտօնի ձեռնարկեց։

Խապայեանի կաթողիկոսական պաշտօնավարութիւնը քընադատութեանց ենթարկուած է, և Կիլիկեցւոց մէջ ընդհանուր և անկեղծ գնահատութեան հանդիպած չէ, և մինչև իսկ այս կողմէն զիս մեղադրողներ պակաս եղած չեն, վասնզի չեմ ծածկեր որ Խապայեանի ընտրութեան նպաստաւոր եղած եմ։ Իմ այս ընթացքս հետևանք էր Կ. Պոլսոյ մէջ շուրջս գտնուող եպիսկոպոսներուն մէջ արժանաւորագոյնը կամ լաւ եւ յարմարագոյնը չտեսնելուս, և Խապայեանի մասին ունեցած համոզումս՝ թէ հեռու է Քէֆսիզեանի մշակած անջատողական և շահադիտական ձգտումներէն, և վանական կեանքով ապրած ըլլալով՝ դժուարութիւն չի կրեր Սսոյ մայրավանքի մէջ համեստ և անպաճոյճ կեանք վարելէ և ժողովուրդին օգտին նուիրուելէ։ Բայց իրեն հետ կենակցած և կինքը խորապէս ուսումնասիրած չէի, և միայն 1892ի կաթողիկոսական ընտրութեան առթիւ անցողակի տեսեր

էի զայն էջմիածնի մէջ և տպաւորութիւնս վատ չէր եղած։ Սակայն իմ գաղափարս ալ սկսաւ փոփոխուիլ, երբոր սկսաւ կաթողիկոսական իրաւունքներու, պատրիարքարանի ձեռնհասութիւններու ու պատուադիր ածականներու մասին խնդիրներ յուզել, և Երուսաղէմի հաշուեպահանջութեան և հաշուեխուսութեան խնդիրէն ալ չհրաժարելով՝ 1904 սեպտեմբեր 14|27ին Կ. Պոլիս գալ, և Կ. Պոլսոյ պատրիարքութեան գործերուն միջամըտելու և անոր վրայ գերիշխանութիւն ցուցնելու ձգտիլ, որպէսզի Մոգսուտեան Ղևոնդ վարդապետը արդարացնել յաջողի։ Ես իրեն պատուոյն վերաբերեալ կէտերը զանց չըրի, բայց ձըգտումներն ալ ապարդիւն թողլու միջոցները գործածեցի, և մինչև իսկ իրեն յայտնապէս յիշեցուցի, թէ պէտք է զատ ի յետագան մոռացեալ է եւ ի յառաջադիմեն ակրտեալ է իմ սկզբունքին հետևի, զի Երուսաղէմ իր եռնը մնացած է և իր առջևը Կիլիկիան է։ Հետևաբար առանց նպատակին մէջ յաջողելու, և կառավարական ազդարարութիւն ալ ստանալով, երկու ամիս Կ. Պոլիս մընալէն ետք՝ նոյ. 20|2 դեկտ.ին դէպի Կիլիկիա ուղևորեցաւ, իրեն համար օսմանիյէ և իրեններէն ոմանց համար շքանշաններ ընդունելով պատրիարքարանիս միջնորդութեամբ։ Հատուածիս բուն նպատակը հրաժարականի փորձն ըլլալով, յաւելուածական տեղեկութիւնները այսչափով կը փակեմ։

ԾԷ

Դամասկոս, 1918 փետրուար 13|26 Գշ.

Հրաժարականի փորձը 1902էն ետքը միջոց մը այլևս չը գործածեցի մինչև 1906, ոչ թէ անոր արդիւնքին վրայ կասկածելով, այլ պարզապէս կուսակցականներու սպառնալիքներէն անաբեկած և խոյս տուած ըլլալու գաղափարը չզարթուցանելու համար։ Կուսակցականաց մտայնութեան և մտադրութեան վրայ խօսիլը ուրիշ հատուածի պահելով, առայժմ ինձի հանդէպ հետևած ընթացքին յիշեցնել բաւական ըլլայ։

Պատրիարքութենէ առաջ ունեցած գործունէութեանս պա-

բոգանները կուսակցականները վստահացուցած էին իմ մէջ իրենց համամիտ մը տեսնել, և թերևս չէին ալ սխալած վերացական տեսակէտով. սակայն ես անհատապէս, և մանաւանդ պատրիարքութեան մէջ պաշտօնապէս, չէի կրնար համաձայնիլ իրենց գործնական տեսակէտին, որ բախտախնդիր և արկածախնդիր, անխորհուրդ և աննպատակ ձեռնարկներով կը կազմուէր, և օգուտի ո՛չ մի ակնկալութիւն պարունակած ատեն՝ յայտնի վտանգներու և վնասներու կ'առաջնորդէր։ Երբոր տեսակէտներու անհամաձայնութիւնը չեշտուեցաւ, կուսակցականութիւնը յայտնի հալածանք բացաւ ինձի դէմ, ո՛չ միայն իրենց հրատարակութեանց մէջ խծբծելով և նախատելով, այլև սպառնական նամակներով տհացնելու ջանալով, որ կա՛մ իրենց տեսակէտին համաձայնիմ եւ կա՛մ պաշտօնը թողում եւ քաշուիմ։ Սակայն եւ երկուքէն ալ կը խորշէի։ Իրենց տեսակէտին չէի կրնար համաձայնիլ ու գործակցիլ, զոր անօգուտ և վնասակար կը դատէի. պատրիարքութիւնը անպլուխ թողուլ կը խղճէի, զի նոր և օրինական ընտրութեան հաւանականութիւնը կը պակսէր, եւ պատրիարքարանը արքունեաց քմահաճոյքին մատնել վտանգաւոր էր, և երկու կողմէն ալ ձախող նախատեսութեան հանդէպ՝ տեղը մնալ և պարտականութիւնը շարունակել, զոհուիլ բայց չզոհել, խիղճի անհրաժեշտ պարտաւորութիւն կը դառնար։

Սակայն կուսակցականներ իրենց մտադրութենէն չէին շեղեր, և վերջիվերջոյ գլուխ ելլելու յոյսով սպառնական նամակները հետզհետէ կը սեղացնէին, որոնցմէ երեսունի չափ հաւաքած ու պահած եմ ամենայն գաղտնութեամբ, խնդալով որ մի՛ գուցէ կառավարութեան կամ ոստիկանութեան ձեռքը զէնք դառնայ անմեղներ հալածելու, բռնութեանց դիմելու և ազգային կայութիւնը վրդովելու։ Այս սպառնական նամակներուն մէջ ամէն կողմէ եկողներ և ամէն տեսակ պարունակութեամբ գրուածներ կան, յայտնի կամ կեղծ ստորագրութեամբ, կուսակցական կարմիր կնիքով կամ բոլորովին անանուն, ատն գուռէն կամ պատուհանէն նետուած, կամ թէ անծանօթի կամ թղթատարի ձեռքով բերուած, և մինչև իսկ արտասահմանէ եւրոպական թղթատարութեանց միջոցով յղուած։ Իսկ պարունակութեանց կողմէն պոռոտախօս սպառնալիքներէ զատ որոշ ձևեր ալ ցուցուած են, տեղեր և առիթներ նշանակուած են, մինչև

իսկ Ըթըր փողոցի ընակութեան ներքև տկան բանալու և ուժանակով օդը հանելու խօսքը գրուած կայ։

Այդ սպառնական նամակները քանի ամիսներէ ի վեր դադրած էին 1902 տարւոյ երկրորդ կէսին մէջ, երբ յանկարծօրէն տեղի ունեցաւ 1903 յունուար 6|19ի մահափորձը, երկուշաբթի օր մը, Ծնունդի պատարագի միջոցին, Գումգաբուի Մայր Եկեղեցւոյն մէջ։ Սատիկ եւ բքաբեր ձիւն կը տեղար յունուար 5|18ին, այնպէս որ կառապանը չէր համարձակեր ճանպայ ելնել Բերայէն Գումգաբու երթալու, բայց Ճրագալոյցին գտնուիլ անհրաժեշտ էր, և պարտաւորուած ճանպայ ելանք, թէպէտ Բերայէ Գումգաբու 12է աւելի կառք չտեսանք ճանպուն վրայ։ Ծնունդի առտուն ձիւնը կը շարունակէր, և անհնար էր թաղական խորհրդարանը զգեստաւորուիլ և աւանդատան մէջ զգեստաւորուելով պատարագի մտայ։ Ինկարկութեան թափորին ատեն, երբ դասին ոչակողմեան դուռնէն դուրս կ'ելլայի, հրազէնի ձայն մը առի, և երբ ձայնին եկած կողմը դարձայ, գլխուս վերև ատլըճանակը բարձրացուցած մէկը տեսայ, իսկոյն ցածցայ և երկրորդ հարուածը գլխուս վրայէն անցաւ։ Մինչ ցածցած նստարաններուն մէջ սողոսկեցայ, և երրորդ հարուածը չկրեցաւ Լուսիկեան կօշկակարին կողմէ ատրճանակին տրուած շարժումէն։ Մինչ այս մինչ այն՝ բարեպան Պօղոս Սրապեան, որ դասին ձախակողմեան դուռը կը հսկէր, վանդակապատէն ցատկելով ատրճանակ պարպողին վրայ կը խոյանայ և կը զգետնէ, և ժողովուրդը վրան կը խուժէ, և թերևս նոյն տեղ մահացնէր, եթէ ոստիկաններ ներս մտնելով դուռաճանին ոնձին չտիրանային։

Ես նստարաններուն մէջէն անցնելով ձախակողմեան Ս. Ծընունդ մատուռը մտայ, և վերաւորուած ըլլալուս տակուին անգիտակ, երգով կամ ճաշուով պատարագի ընդհատումը պարտըկելու հրահանգ տուի, մինչեւ որ պատարագը շարունակելու դառնամ։ Շուրջս եղող քահանաներ և դպիրներ զգեստները վերայէս հանելու կ'աշխատին, ես կ'ընդդիմանամ, մինչև որ պատարագի շապիկը արիւնոտած տեսնելով վերաւորուած ըլլալս կ'իմանամ, և արիւնով սեղան ելլել կանոնական չըլլալուն, կը համաձայնիմ զգեստները հանել և պատրիարքարան դառնալ, և Գէորգ եպիսկոպոս Երէցեան պատարագը կը շարունակէ։ Բժիշկ Պօղոս Ինճէեանի լուր կը տրուի, բժիշկ Մկրտիչ Ճէվահիրճեան

լուր կ'առնէ, և միասին կը փութան առաջին խնամքը կատարել և վէրքը զննել ու դարմանել։ Ատրճանակի առաջին գնդակը ծանր շուրջառն ու հաստ եմիփորոնը ծակելով աջ ուսին մտած, և դիմացէ դիմաց անցնելով դուրս ելած էր, բարեբախտաբար ոչ ոսկրին դպած էր և ոչ թոքը վիրաւորած, բայց այդ զննութեանց ատեն նուաղում զգալով կը մարիմ և լեզուս կոկորդիս մէջ կը դառնայ և ճէվահիրճեան աքցանով ետ քաշելով, և Ինճէեան առատ ջուր սրսկելով կրնան զիս ուշաբերութեան դարձնել, և վէրքը պատելով՝ պատրիարքարանի ննջասենեակը անկողնի մէջ կը հանդչեցնեն։ Այնտեղ ես իմ կատարեալ հանդարտութիւնը կը ստանամ, են մինչեւ իսկ զուարճաբանել կը սկսիմ՝ թէ մնալու համար Խորասանճեան բժշկապետին վճիռը անհրաժեշտ պայման չէ։

Ատրճանակ պարպողը եղած էր Յակոբ Խաչիկեան, Կարնեցի Մկրտիչ Խաչիկեանի՝ Կարինէ սկսելով ծանօթ և բարեացակամ գլուցուած անձին որդին, որ իր չորս ընկերներուն առաջնորդ կուտայ, որոնցմէ երեքը կը ձերբակալուին, իսկ գլխաւորը արդէն մայրաքաղաքէն հեռացած կ'ըլլայ։ Առաջին ոստիկանական հարցափորձերու մէջ անկապակից պատճառաբանութիւններ կարկտել կ'աշխատին, իբր թէ Յակոբ Խաչիկեան զինքը բժշկական վարժարանի չյանձնարարելէս ցաւած ըլլայ, մինչ արդէն ընդունուած էր և դեղագործական ճիւղին կը հետեւէր։ Եւ կամ թէ իմ վրաս փորձուած դաւաճանութեամբ ունեւորները տհացնել ուզած ըլլան, որ իրենցմէ դրամ պահանջուած ատեն անհակառակ վճարեն։ Կը կարծուի եւս թէ իրենց առաջին միտքը թաղական խորհրդարանէ եկեղեցի անցած պահուն գործել եղած ըլլայ, և ձիւնին պատճառով աւանդատան մէջ զգեստաւորուելուս առթիւ եկեղեցւոյ մէջ փորձել ստիպուած ըլլան։ Մահափորձին եկեղեցւոյ մէջ և պատարագի ատեն կատարուած ըլլալը, և այն ալ Ծնունդի նուիրական տօնին օրը, մեծ տպաւորութիւն գործած էր ժողովրդական ըմբռնմանց վրայ։

Հազիւ թէ մահափորձին լուրը կը տարածուի, իսկոյն կը սկսին ոստիկանութենէ, եպարքոսութենէ, նախարարներէ, և արքունական պալատէ պատուիրակներ և բժիշկներ հանիլ, որպէսզի հարցնելու, ստոյգ լուրեր քաղելու, և կարեւոր կարգադրութիւններ հրամայելու։ Դատարանէն ալ յատուկ հարցա-

քննիչ կուգայ իմ յայտարարութիւններս ու ենթադրութիւն-
ներս գիրի առնելու։ Իմ հաստատուն եւ միատեսակ պատաս-
խաններս եղան, թէ ոչ մի կանխաւ գիտցուած նշան չունիմ, թէ
մօտ ՝ատեններ ՝սպառնական ազդարարութիւններ իսկ ստացած
չեմ, եւ գործադիրներու հետ որեւէ շփում ունեցած կամ վրէժ-
խնդրութեան առիթ տուած չեմ, եւ իմ միակ խնդրանքս է որ
գործը անհատական եւ դոպ ազգային ձեռնարկ մը ըլլալուն
ընդարձակ նշանակութիւն չտրուի, ձերբակալութիւններ չքաղ-
մապատկուին, ընդհանուր վրդովում առաջ չգայ եւ, որչափ
հնար է, գործը ամփոփ շրջանակի մէջ պահուի։ Այդ խնդրանքը
յատկապէս կրկնած եմ ոստիկանական և դատական պաշտօնեա-
ներուն, և թախանձագին ազաչանօք յանձնարարած եմ կայսեր
կողմանէ յղուած թիկնապահ գնդապետին։ Եւ ուրախ եմ յայ-
տարարել որ խնդրանքս յարգուեցաւ, և չորս գործադիրներէն
զատ ուրիշներ չմեղադրուեցան, և քանի մի առերևոյթ կասկա-
ծով ձերբակալեալներ շուտով արձակուեցան։ Իսկ գործին իսկու-
թեան մասին, դաշնակցական պաշտօնագիր Դրօշակ լրագիրը,
փորձին անհատական նախաձեռնութեան արդիւնք, և կուսակ-
ցութեան անոր մէջ մասնակցութենէ օտար եղած ըլլալը հրա-
տարակեց, թէպէտ ոչ ոք յայտարարութեան անկեղծութեանը հա-
ւատաց։ Մահափորձի երեկոյին իսկ նոր սպառնական նամակ մը
տունը կը տարուէր, զոր միւս առաւուն կը կարդայի, թէ ինք-
զինքդ ազատած մի՛ կարծեր, կեանքդ ապահով չէ։

Ընտանեկան շրջանակի մէջ ալ անհնար էր որ դոյժը մեծ
յուզում չպատճառէր, եւ Եւգինէ ու Սպասի քոյրերս եւ ազգա-
կիցներէ շատեր, հակառակ բքաբեր ձիւնին և փոխադրութեան
դժուարութեանց, հետզհետէ Գումգաբու սկսան հասնիլ, անձամբ
տեսնելու և ստուգութեամբ տեղեկանալու համար. քեռայրս Մի-
րան Տէր-Ներսէսեան Եգիպտոս կը գտնուէր, իսկ եղբայրս բժիշկ
Կոմիտաս Օրմանեան կը յաճախէր եղբայրական զգացմանց և բը-
ժշկական խնամոց հաւասարապէս յոգուրդ տալու համար։ Ազ-
գային այցելութիւնները անթիւ անհամար էին, ամէն դասա-
կարգէ և ամէն ոստիճանէ, մանաւանդ Ծնունդի երկրորդ օրը,
որ պաշտօնական շնորհաւորութեանց օրն է, եւ ազգայիններ
խուռն եկած էին մահափորձէն ազատութեան խնդակցութիւն ա-
յայտնելու։ Ուրիշ ազգայ պատրիարքներն ալ իրենց խնդակցա-

կան ողջոյնները հասուցին պատուագիր պատուիրակութիւններով։ Գրաքննութիւնը արգիլած էր եղելութիւնը լրագիրներու մէջ պատմել, և խմբագրութիւններ կը դոհանային չարունակ շաբաթ մը պատրիարքարան այցելողներու երկար ցուցակներ հրատարակելով, հանրութեան մտադրութիւնը տրթնցնելու համար։

Երկուշաբթիէ շաբաթ պատրիարքարան մնայի, թէ վէրքին դարմանին և թէ հիւանդութենէ զգուշանալու համար, որ կըրնար առաջ գալ վիրաւորուելէ և այլայլելէ։ Վերև յիշուած երկու բժիշկներ և պոլսոյն նշանակուած վիրաբոյժ մը առտու և երեկոյ կ'այցելէին, թող բարեկամաբար եկող բժիշկները։ Երբոր շաբաթ օր յունուար 11|24ին տուն փոխադրելու կը պատրաստուէի, թաղին ոստիկանութեան գլխաւորը եկաւ հեծեալներու ընկերանալը ծանուցանել, զոր մերժեցի հանրութենէն կասկածիլ եւ վախնալ չցուցադրելու համար, իրեն կամքին թողլով՝ եթէ կ'ուզէր՝ լռին և ծածուկ հսկողութիւն կատարել. միայն Պօղոս Սրապեան բարապանի հետ և բժիշկի մը ընկերակցութեամբ կէս օրէն ետքը տուն եկայ։ Յունուար 17|30ի գիշերը աղեաց սաստիկ տապնապ մը անցուցի, որ գիշերայն բժշկական խորհրդակցութեան պէտքը զգալի ըրաւ Պարոնիկ Մատթէոսեան ու Վահրամ Թորգոմեան ու Կոմիտաս Օրմանեան բժիշկներու կողմէ, և յաջողութեամբ փակուեցաւ։ Տակաւ կարգդրուելով կարող եղայ յունուար 22|4 փետրուարին նախապէս Ղալաթիոյ Ս. Ամենափրկչին ուխտի լինալ, եւ անկէ Եըլտըզի արքունիքը երթալ կայսեր կողմէ ցուցուած մտադրութեանց շնորհակալութիւն յայտնելու։ Յունուար 24|6 փետրուարին մահափորձին օրը աշխատողներուն շքանշաններ շնորհուեցան, 30|12ին առաջին անգամ պատրիարքարան եկայ, 31|13ին կայսրէն յատուկ տեսակցութեան հրաւիրուեցայ եւ սիրալիր ընդունելութիւն գտայ եւ բացառիկ ծախուց համար նուէր ալ ստացայ, փետրուար 3|16ին եպարքոսին և դիւանապետին և նախարարաց այցելեցի, 5|18ին Վարչութեան ժողովին նախագահեցի, և 13|26ին առաջին անգամ քարոզ խօսեցայ։

Մահափորձի հեղինակներուն դատը բարձրագոյն հրամանով արագ աւարտեցաւ, և յունուար 25|7 փետրուարին Խաչիկեանը մահուան եւ երեք ձերբակալեալները եւ խոյս տուած չորրորդը ցկեանս բանտարգելութեան դատապարտուեցան. փետրուար 17|2

մարտին վճիռը վճռաբեկ ատեանէն հաստատուեցաւ, եւ մարտ 8/21ին յատուկ դիմումով Խաչիկեանի մահուան նեղումը ստացայ, որ ցկեանս բանտարկութեան փոխարկուեցաւ։ Արդէն եւ դատախազի դերը չէի ստանձնած, արդարութեան թողով իւր օրինական ընթացքը վարել։

Մահափորձի բուն նպատակը իմ մահուամբս կամ գոնէ ահաբեկեալ հրաժարմամբս պատրիարքական աթոռը թափուր թողուլ, ապագը անտէրնչութեան մատնել, եւ Հայոց նորանոր բնութեանց դրդռել ըլլալուն, ինձի նուիրական պարտք սեպեցի իմ պահնորդութեան դերը չլքանել և պաշտպանողական պատանէշէն դասալիք չփախչիլ. և որպէսզի ձախող մեկնութեամբ վատ դերը ինձի չվերագրուի, ուրիշ պատճառներով ալ հրաժարականի փորձը չգործածեցի 1903էն մինչև 1906, երբ ժամանակի հեռաւորութիւնը այդ միտքը այլևս չէր զարթուցաներ, և պարագային կարևորութիւնը այն փորձին դիմել կը թելադրէր։ Նիւթերու կապակցութեան պատկառ կալով անցնիմ այդ փորձը կատարել։

ԾԸ

Դամասկոս, 1918 փետրուար 14/27 Դշ.

Երբոր 1896ին նոր վարչութեան և պատրիարքի ընտրութեան արտօնութիւնը ստացուեցաւ, Տատեան յանձնառու եղած էր Սահմանադրութիւնը վերաքննել և փոփոխել տալ, և Երեսփոխանական Ընդհանուր ժողովն ալ այդ պայմանը իւրացուցած և պաշտօնապէս հաստատած, եւ նորընտիր պատրիարքին եւ Վարչութեան յանձնած էր գործադրութիւնը, ինչպէս իւր կարգին ալ յիշած եմ։ Սակայն ոչ ոք Ազգ. Սահմանադրութիւնը փոփոխելու նպատակ ունէր, եւ ոչ ալ կ'ուզէր փոփոխուած ծրագիր մը կառավարութեան ներկայել, գիտնալով թէ այդ առաջարկը Սահմանադրութեան ջնջումը ըսել էր։ Այս Երկայրի դժուարութեանց մէջ գործելն ալ պատրիարքին վրայ կը ծանրանար, որուն կառավարութեան կողմէ միշտ կը կրկնուէր յանձնառու-

թիւնը գործադրել և լրացնել, և պէտք կ'ըլլար ճարտար դարձուածներով ատեն շահիլ և միանգամայն կայսեր կամքին, կառավարութեան նպատակին և երեսփոխանութեան որոշումին հակառակ միտք չյայտնել։ Առաջին միջոցն եղաւ Վարչութեան անդամներէ Վերաքննիչ Յանձնաժողով մը կազմել պատրիարքի նախագահութեամբ, նիստեր ընել և փոփոխութիւններ փորձել, բայց գործը չվերջացնել, եւ աշխատելու վրայ ենք ըսելով կառավարութիւնը լռեցնել։ Բայց կառավարութիւնն ալ հակակշիռ ճարտարութեամբ իրեն զէնք ըրաւ՝ Վարչութեան երկամեայ փոփոխութեան համար Ընդհանուր ժողով գումարելու արտօնութիւնը գլանալ, պատճառելով թէ առաջ փոփոխութիւնը պէտք է լրանայ, որ ըստ այնմ նոր ընտրութիւն կատարուի։ Երբոր առաջին անգամ 1899 մարտին այդ գլացումը գիմադրուեցաւ, Վարչութեան Կրօնական եւ Քաղաքական ժողովներ միաձայնութեամբ որոշեցին՝ տեղերնին մնալ և գործերնին շարունակել քան թէ վերաքննութիւնը լրացնել և փոփոխութիւն առաջարկել, բռնադատիչ հարկին (Force majeure) հպատակիլ քան թէ Սահմանադրութիւնը վտանգել։ Այլեւս իմ վրայ մնաց զանազան կերպերով գործը երկարել. երբեմն իրենցմէ պահանջելով որ փոփոխելի կէտերը յայտնեն, որ մենք ալ լուսաբանութիւնք և ընելիքներս գիտնանք, զի հնար չէր ենթադրել որ Սահմանադրութեան 99 յօդուածներն ալ փոփոխուելիք ըլլան։ Երբեմն ալ պատճառանքներ յառաջ բերելով թէ միտքերու վրդովման ատեն օգտակար չէ յուզումներու առիթ տալ, կամ թէ այսպիսի ձեռնարկ մը կրնար կուսակցականներու ձեռքը զէնք ըլլալ անախորժ միջադէպեր կազմակերպելու. վերջապէս հարարութեամբ տեսակ ատոնց նման առարկութիւններով օրերը անցունել, և միւս կողմէն 1896ին ընտրուած ժողովներով Վարչութիւնը շարունակել։ Թէպէտև ամէն երկամեակին երեսփոխանութիւն գումարելու խնդրանք կը մատուցուէր, և մինչև միւնոյն պատճառով արտօնութիւնը կը գլացուէր։ Դժուար չէր գուշակել թէ կառավարութեան գլխաւոր նպատակն էր Քաղաքական ժողովը եւ մնայուն երեսփոխանութիւնը եւ ժողովրդական քուէով ընտրութիւնները ջնջել, սակայն մենք չվատնալու և չը կռանելու դերը կը պահէինք։

Սակայն ամէն խաղ ալ վերջապէս տեղ մը կանգ կ'առնէ, ինչպէս

ամէն հանգոյց սանտրին կը հանդիպի։ Տասը տարիներ լրանալու մօտ էին 1906ին՝ յորմէհետէ 1896ի Վարչութիւնը կը պաշտօնավարէր։ Անգամ մը ժողովականներն ալ գործադուլ ըրած էին, բայց կայսեր կողմէ անհատական շնորհներու հանդէպ անապնիւ չերևալու համար գործելու վերադարձած էին. իսկ 1906ին նիւթական և շօշափելի դժուարութեան առջև կը գտնուէին, զի երկու ժողովներու անդամներու թիւն ալ, մահուամբ կամ տեղափոխութեամբ կամ ձեռնթափութեամբ, մէկ երրորդի վերածուած էր, և օրինապէս գործել անհնար էր։ Հետևապէս մնացած ժողովականներն ալ որոշեցին այլևս պատասխանատուութիւն չստանձնել և սկսան ժողովներու չներկայանալ։ Այս որոշման հանդէպ ինծի ալ հնար չէր և օրինական չէր միայնակ և անհատապէս բովանդակ վարչական պատասխանատուութեան ենթարկուիլ, ուստի թէ՛ արքունիքի եւ թէ՛ նախարարութեան բերանացի խօսելէ ետքը, 1906 յունիս 16|29 թուականով գրաւոր հրաժարական մատուցի, որ եթէ նոր Վարչութիւն կազմելու արտօնութիւն չտրուի, ինծի անհնար պիտի ըլլայ առանց ժողովներու՝ պատասխանատուութեան ներքեւ մնալ եւ պաշտօնս շարունակել։

Նորէն ձեռք առնուեցան սովորական բանակցութիւնները։ Յունիս 18|1 յուլիսին և յուլիս 1|14ին պալատ կոչուեցայ և ամէն կերպ յորդորներ լսեցի, բայց պնդեցի. իմ կողմանէ ժողովականներ առաջարկելու հրաւիրուեցայ, բայց մերժեցի, և իմ անձեռնհաս և գործին անազդեցիկ ըլլալը բացատրեցի։ Ասոր վրայ տեսնելով որ զիս իմ միտքէս խախտելու յոյս չկայ, Ներքին Գործոց նախարար Մէմտուհ բաշայի պաշտօն յանձնուեցաւ տեսակցելով և բանակցելով գործին մէջէն ելնելու ձև մը որոշել։ Ըստ այսմ քանիցս անոր հետ տեսնուեցայ իւր Գուրուչէշմէի ապարանքին մէջ, և զանազան ձևեր և կերպեր խօսուեցան ու բացատրուեցան։ Վերաքննութիւն կատարելու այլևս անհնարութիւնը յայտնեցի, քանի որ վերաքննիչ որոշուած Վարչական ժողովն ալ գոյութիւնը կորսնցուցած էր։ Իմ կողմանէ ժողովականներ առաջարկելը օրէնքի հակառակ և յուզումներու պատճառ եւ իմ կամքիս ալ ներհակ ըլլալը պնդեցի։ Յունաց Սահմանադրութեան կերպը գոված ատեն պատասխանեցի, թէ մերինը անոնցմէ ետքն է, որով Սլի ու Ֆուատ բաշաներու պէս մեծ քաղաքապետներէ Յունաց ձևին նախադասուած կ'ըլլայ։

Վերջապէս ամէն կերպերը դնելով ու վերցնելով, նոր ձեւի մը վրայ կանգ առնել անհնար եղաւ, և դարձեալ ժողովով ընտրութիւն կատարելու հարկը հաստատուեցաւ, միայն թէ նախարարին կողմէ յանձնարարուեցաւ արտաքին ձեւակերպութիւնները գլուխել և հրատարակութիւնները զանց ընել, և լոին կերպով մը ընտրութիւնը կատարել։ Այլեւս ուրիշ պահանջել աւելորդ սեպեցի և յուլիս 10|23ին պայմանաւոր յանձարարութիւնս յայտնեցի, մինչև որ ընտրութիւնը լրանայ և ընտրեալները վաւերացուն։ Ասոր հետ մէկտեղ մինչև յուլիս 17|30 պատրիարքարան ինչնալս յապաղեցի, որպէսզի Մէմտուհի հետ համաձայնած կերպերնիս բարձրագոյն համակերպութեամբ դրանայ, և անկէ ետքը սկսայ ընտրողական նախապատրաստութեանց ձեռնարկել։

Ընտրութեան օր որոշեցի յուլիս 25|7 օգոստոս երեքշաբթին, Երկուսաման Մարգարէից ոօնին օրը, որ օր բնական էր որ անուն շնորհաւորելու համար այցելուներ պատրիարքարան հաւաքուէին, և սեղ որոշեցի պատրիարքարանի ժողովարանը։ Մեծամասնութիւն կազմելու համար պաշտօնի մէջ և Կ. Պոլիս ներկայ գտնուող երեսփոխաններու թիւը բաւական գտնուեցաւ, Կրօնականի ընտրելեաց ցուցակը գլխաւոր եկեղեցականաց մասնաւոր գումարմամբը կազմուեցաւ, արդէն Քաղաքականի համար ցուցակը դիւանէն կը կազմուի։ Իսկ պաշտօնէ ելնողներուն անվերընտրելիութեան պայմանն ալ այս անգամ զանց ընել յարմար գտաւեցաւ, նկատելով որ լրացուցիչ ընտրութեան ձև մը կը տրուէր գործին, և 1899, 1901, 1903, 1905 տարիներուն չորս երկամեաներ լրացած ըլլալով, անմիջական անվերընտրելիութեան պարագայն ալ չէր ճշմարտուեր։ Ժողովի հրաւէրները եւ ընտրելեաց ցուցակները մասնաւոր նամակով և ապահով կերպով իւրաքանչիւր երեսփոխանի յղուեցաւ, առանց լրագիրներու մէջ հրատարակելու, և որոշեալ օրը ժողովը հաւաքուեցաւ, և առժամեայ դիւանով ընտրութեան ձեռնարկեց, համաձայնութեան խորհրդակցութիւն ալ կատարելով, մէկ անգամէ ընտրութիւնը վերջացնելու համար։ Այս ամէն պատրաստութիւններով մէկտեղ ոստիկանութեան կողմէ նոյն օր հարցումներ եղան համախմբութեան նպատակին համար, և անուն շնորհաւորութեան պարագան լսելով գոհացան ու լռեցին։

Ժողովի բացման ատենաբանութեանս մէջ լիուլի բացատրե-

ցի՝ թէ ի՛նչ պարագաներով և ի՛նչ պայմաններով կրցած եմ ժողովական ընտրութիւն կատարելու արտօնութիւնը ստանալ, և ի՛նչ միջոցներ ձեռք առած եմ ներկայ գումարումը հաւաքելու համար. միանգամայն ազգարարեցի թէ պէտք էր զանց ընել այնպիսի անուններ, որոնց արժանաւորութիւնը թէպէտ ամէն դիտողութենէ վեր էր, սակայն կառավարութեան աչքին կասկածաւոր (ֆիշէ) երևցած ըլլալուն վաւերացումին ստանալ անհնար էր։ Ժողովը միաձայնութեամբ հաստատեց ձեռք առած միջոցները և հաւանեցաւ զգուշաւորութեան կէտերուն, և կարծեաց փոխանակութենէ հետը քուէարկութեան անցաւ, քուէհամար կատարուեցաւ, և միայն Կրօնականի մէկ անդամին համար համեմատական քուէ տալ պէտք եղաւ, եւ երկու ժողովներն ալ ամբողջապէս ընտրուեցան, եւ ընդհանուր գոհունակութեամբ և հնարաւորը գործուած ըլլալուն շնորհակալութեամբ ատենագրութիւն կազմուեցաւ և ժողովը ցրուեցաւ։ Արդիւնքը պատրիարքական պաշտօնագիրով Արդարութեան և Կրօնից նախարարութեան հաղորդուեցաւ, ժողովական ընտրութեամբ կազմուած ըլլալն ալ չլռելով, և վաւերացման սպասելով։

Երբ այդ զգուշաւորութեանց վրայ վատահօրէն կ'ակնկալէինք վաւերացումը ստանալով նորէն գործի ձեռնարկել, նախարարական պաշտօնագիրը մեզ յուսախաբ թողուց, որ Բաղաքականի 14 անդամներն ալ հաստատելով, Կրօնականէն 5 անուն զեղչած էր, երկուքը նախկին ժողովականներ և հինաւուրց եպիսկոպոսներ, Գրիգորիս Յովհաննէսեան և Վահրամ Մանկունի, իբրև ոչ դիւրաւ համակերպողներ, երկուքը նորահաս վարդապետներ, Ղեւոնդ Դուրեան և Գրիգորիս Պալաքեան, իբրև տարիքի քերմամբ կասկածաւորներ, և հինգերորդը Տ. Սարգիսեան Սահակ ծերունազարդ քահանայն, իբրև Իզմիրլեանի պատանեկութեան ուսուցիչ եղած։ Հարկ եղաւ որ նորէն բանակցութեանց և գրաւոր բողոքներու ձեռնարկեմ, իբրև մեր նախընթաց պայմանաւորման հակառակ արարքի մը, բացատրենք կասկածներու անգոյութիւնը, պահանջենք կատարուած ընտրութեան լիովին վաւերացումը, և իբրև բողոքոյ նշանակ, վաւերացեալներն ալ գործի չհրաւիրենք կիսատ գործողութեան հաւանած չըլլալու համար։ Մօտ երկու ամիս երկարեցաւ այդ երկրորդ միջոցն ալ, մինչև որ կայսրը ալ տեսնալով իմ յամառ պնդումս եւ զիջանելու եւ նորեր

ընտրելու և առաջարկելու ընդդիմութիւնս, իբր իմ երաշխաւորութեան հիմնուելով՝ մնացած հինգերուն ալ վաւերացումը հրամայեց, և նորընտիր ժողովները առաջին անգամ խառն նիստի գումարեցի սեպտ. 20/3 հոկ.ին։ Այսպէս յաջողութեամբ փակուեցաւ հրաժարականի այդ փորձն ալ։

Ինձի դէմ ամբաստանութեան և մեղադրանքի կէտ ըրին թէ պատրիարքութենէ հրաժարիլ չեմ ուզած։ Չեմ կարծեր որ մէկուն պաշտօն մը յանձնուի որպէսզի հրաժարի. զի պաշտօնը կը տրուի որպէսզի զայն պահէ, դժուարութեանց տակայ, հանրութեան օգտին աշխատի, և ո՛չ թէ իւր հանգիստը փնտռէ։ Ուստի ես ալ կ'ընդունիմ թէ անպայման հրաժարիլ չեմ ուզած, զի զայն անձնդիւրութեան միջոց և դասալքութեան գործ եմ նկատած. այլ հրաժարականները փորձած եմ իբրև կենսական խնդիր մը յաջողցնելու միջոց, եւ երեք փորձերս ալ ապարդիւն չեն եղած։ Պատրիարքութեան վրայ տասներկու տարի տակաւ երբեք ինձի անձնդիւրութիւն չէ բերած, զի պատրիարքութենէ առաջ ունեցած կենցաղս նոյն է պահուած, չեմ հարստացած, չեմ ճոխացած, և արտաքին երևոյթներով, գունագեղ զգեստներով, շքանշաններու կիրառութեամբ և ցուցադրութեան ձևերով չեմ շփացած։ Աշխատութիւնս յառակս անցնելու չափ յայտնի եղած է, ոչ մի տեսակ յոգնութենէ չեմ խուսափած, դիւան, վարժարան, հիւանդանոց, որբանոց, եկեղեցի, պաշտօնատուն, դեսպանատուն, արքունիք եղած են իմ շրջանակս. հազիւ թէ ամառուան եղանակներուն քանի մը օրեր համառօտ շրջագայութեան մը գործածած եմ։ Շնորհակալ եմ որ շուրջս եղողներէն, թաղերու ժողովուրդներէն, գաւառական վիճակներէն համակրական ցոյցեր տեսած եմ, սակայն անոնցմէ աւելի ընդարձակ և զօրաւոր եղած են ամէն կողմերէ հասած ցաւեր և տագնապներ. վիշտս ի ներքուստ, վիշտս յարտաքուստ, վիշտս ի վերուստ, վիշտս ի ստորնէից, վիշտս յօտարաց, վիշտս ի տուտ եղբարց, որոնք երկայնամիտ համբերատարութեան դպրոց մը եղան։ Ուստի ինչ որ այդ գլուխէն իբր մեղադրանք և նախատինք խօսուեցաւ ինձի դէմ, ես չեմ վարանիր զայն իբր արդիւնք և պատիւ համարիլ իմ անձիս, զի զոր պարտ էր ասել՝ արարաք։

ԾԹ

Դամասկոս, 1918 փետրուար 15/28 Եշ.

Այդ նիւթերը չփակած իդէպ կը կարծեմ կուսակցութեանց և կուսակցականաց մասին անկաշկանդ կերպով տեսութիւններս պարզել։ Առաջին դիտողութիւնս նոյնիսկ կուսակցական անուն-նին վրայ է, զոր ես ամօթ պիտի սեպէի իրենց տալ, եթէ իրենք իրենց համար գործածած չըլլային։ Կուսակցականութիւնը կողմնակցութիւն է, և կուսակիցը կողմնակից մըն է, որ ամէն սկզբունքէ եւ օրէնքէ, ամէն խրատունքէ եւ արդարութենէ անկախաբար, մէկու մը կամ բանի մը դեր կ'ելլէ եւ պաշտպան կը կանգնի, ո՛չ հանրային օգուտ կը դիտէ, ո՛չ պատճառաբանեալ ցուցմունքէ կը շարժուի, եւ ո՛չ ազնիւ սկզբունքէ մը կը գըրգռուի, այլ կ'ուզէ՝ որովհետև կ'ուզէ, կամ անհատական շահն է որ զայն կը դրդէ, կամ մոլեկան կիրքն՝ որ զայն կը մղէ։ Այդ տեսակէտով գեղեցիկ կոչում մը չէ կուսակցական բացատրութիւնը, բայց քանի որ իրենք հաւներ են, մեզի ալ գործածել ներեալ կ'ըլլայ։

Գալով այդ կուսակցական մարմիններուն նպատակին, երբոր հիմնուինք Վարժապետեանի օրով կազմուած նախապաշարմանց և Կարնոյ մէջ սկսած առաջին շարժումին, բնաւ դատապարտելի չեմ գտներ, որ օրինական եւ դիւանագիտական միջոցներով տառապեալ և կեղեքեալ նահանգներուն բարեկարգութիւնը հետապնդուի, և զինեալ հարստահարիչներուն երեսէն հարստահարեալ անզէն ժողովուրդին անձնապաշտպանութեանը աշխատուի։ Ոչ ոքի կրնայ զլացուիլ իւր բարօրութեան համար օրինաւոր միջոցներու դիմելու իրաւունքը, և Հայերուն նախնական և հիմնական ճիգերը ասկէ աւելի չէին, ինչպէս պաշտօնագիրներէ և ծանուցագիրներէ, յայտարարութիւններէ եւ հրատարակութիւններէ ալ կը քաղուի։ Մինչդոյն նպատակով ուրիշ տէրութեանց միջնորդութեան դիմելն ալ օրինաւորութենէ օտար գործ մը չէր, Սան-Սթէֆանօ գացող պատրիարքը օսմանեան կառավարութենէն գաղտնի չէր գործեր, և Պերլին գացող պատուիրակները օսմանեան կառավարութեան հաւանութեամբ կ'երթային, և Սան-Սթէ-

Ֆանոյի 16րդ և Պերլինի 61րդ յօդուածները օսմանեան կառավարութեան ալ ստորագրութիւնը կը կրէին։

Ամենայն օրինաւորութեամբ սկսուած գործին կերպարանափոխ ըլլալուն նախապատճառը փնտռած ատեննիս, յայտնի կը տեսնենք որ Հայերը չեղան զայն պատրաստողը։ Կառավարութիւնը կամ կառավարական պաշտօնէութիւններն եղան որ թիւր մեկնաբանութիւններով և ծամածռեալ դարձուածներով Հայերուն վերագրեցին այնպիսի գաղափարներ և նպատակներ, զորս նախ չունէին եւ չունեցան, եւ իրենց սխալ ենթադրութեանց վրայ հիմնուելով՝ սկսան կասկածներ յարուցանել, հալածանքներ սարքել, ամբաստանել եւ ձերբակալել, դատափետել եւ դատապարտել, զրկանքներ կազմակերպել, օրինական իրաւունքներ զլանալ, մէկ խօսքով՝ Հայոց հանդէպ բացառիկ և արտաքոյ օրինաց կացութիւն մը ստեղծել։ Ամէն արարք իրեն հակարարքը կը գրգռէ. Հայեր չէին կրնար չյուզուիլ և չսարսուիլ, ուսաի անհատներու եւ մասնաւոր չրջանակներու մէջ սկսան երևան գալ նորանոր տեսութիւններ կամ ձեռնարկներ, իւրաքանչիւրին բնոյթին կամ բերմունքին համաձայն. տեղ մը ընդդիմութիւն եւ պաշտպանութիւն, ուրիշ տեղ խուսափում եւ ցրուում, օտար երկիրներ ապաւինիլ, օտարոտի չփոփներով վարակուիլ, չափազանցութեանց չափազանցութիւններով պատասխանել, եւրոպական տէրութեանց խօսքերով օրօրուիլ, չարեաց աճելովը միջամտութիւններ յուսալ, չարիք աճեցնելու ձեռնարկներ ընել, մէկ խօսքով կառավարական անհիմն ձեռնարկներուն նմանօրինակ կերպերով համապատասխանել։ Իրաւ որ ազգային խոհական տարրը մասնակից չէր այդ գործունէութեան, բայց խոհական տարրը բնաւ ուրիք մեծամասնութիւն չէ, եւ ամբոխէ ու աղաղակէ հեռու է, որով յաճախ իւր դերը լռութեան մէջ կը թաղուի։

Ես իսկ յաճախ առիթ ունեցած եմ յայտնապէս բացատրելու գաւառական և կառավարական և արքունական պաշտօնէութեանց, թէ մենք պիտի չցաւէինք եթէ մեզ ազգասէր և հայրենասէր եւ եթէ ազգամոլ իսկ սեպէիք, բայց կը ցաւինք երբոր տպէտի և տխմարի տեղ կը դնէք, զի Հայերը քաղաքական ձըգտումներ կամ ինքնօրէնութեան կամ ինքնավարութեան գաղափարներ չեն ունեցած և չեն կրնար ունենալ, քանի որ գիտեն

թէ իրենց հայրենական երկրին մի լաւ մասը ուրիշ տէրութեանց կը պատկանի, որոնք օսմանեանին չեն ներեր որ լաւագոյն կացութիւն մը կազմէ իւր հպատակ Հայերուն։ Հայերը գիտեն եւ թէ իրենց տարրին կարողագոյն մասը հայրենական երկրէն հեռացած է, եւ փորձառու են թէ մեծամեծ ձգտումներու համար պէտք եղող միջոցները իրենց կը պակսին։ Հետեւաբար տգէտ եւ տխմար եղած կ'ըլլային, եթէ հակառակ այդ տեսութեանց՝ ոնհնարութեանց ետեւէ ըլլային։ Այսու հանդերձ կառավարութիւնը այդ ուղիղ տեսութեանց արժէք չառաւ, իւր իստութիւնները մինչեւ բռնութիւններու հասուց, զոհունակութեան աչքով տեսաւ Հայերուն օտար երկիրներ խոյս տալը՝ իւր հայաբնակ նահանգներուն հայաթնակութեան նուազում եւ Հայկական խնդիրին նուազում, ուր ընդհակառակին թեթեւակի չահուելով օգտակար եւ աշխարհաշէն տարր կ'ըլլային, մինչ օտար չփումներով յուզիչ եւ յուզուող տարր մը եղան, եւ կառավարութեան ապգնապները աւելցան իւր իսկ թիւրիմացութեամբ։ Ահա թէ ի՞նչպէս սկսաւ կուսակցական կոչուած չարժումին տոգնապը, որուն առաջին նշանը տուին արտասահման հրատարակուող Սրմենիա եւ Հնչակ պարբերականները, եւ անոնցմէ ծագեցան Սրմենական եւ Հնչակեան կուսակցութիւնները։

Մինչեւ այստեղ համարձակաձայն բարբառով քննադատեցինք կառավարական պաշտօնէութեանց ընթացքը, եւ զլրենք պատասխանատու եւ սկզբնապատճառ ցուցուցինք այն հեռանաց եւ արկածից եւ վնասուց, որոնք յառաջ եկան իրենց առաջին սխալ քայլերէն, եւ որոնցմէ հաւասարապէս տուժեցին թէ՛ հայ տարրը եւ թէ՛ կառավարական շրջանակը, այն տառապելով եւ այս տոգնապելով։ Սակայն անկեղծութիւնն ու ճշմարտութիւնը կը պահանջեն խոստովանիլ, որ եթէ կուսակցականութիւնը կառավարական ընթացքէն գրգռուեցաւ, կուսակցականութիւնն ալ չգիտցաւ իւր դերը իմաստութեամբ վարել եւ իւր ճիգերը խոհականութեամբ արդիւնաւորել։

Առաջին մեղադրանքը, զոր ազատասիրաց պիտի յայտարարենք, իրեն բազմոստեան ճիւղաւորումն է, որ հետզհետէ տասնեակի մը հասաւ, եւ գուցէ անցաւ ալ։ Միակ եւ միապաղաղ եւ համերաշխ գործունէութիւն մը, որչափ ալ տկար եւ անզօր, կրնար վերջապէս զոհացուցիչ վախճանի մը յանգիլ, ուր ընդ-

հակառակն բաժնուած և անջատուած, և ինքն իր մէջ հակառակամարտ զօրութիւն մը աներկբայաբար ներքին ակարութեան և արտաքին անպտղութեան պիտի առաջնորդէր։ Այդ անջատումները այնքան յառաջացան, որ մինչև իսկ իրարու թերութիւնները, նենգութիւնները, խարդաւանանքները ի լուր աշխարհի հրատարակագոյժ ընել չկասեցան, եւ ա՛լ աւելի յառաջելով՝ իրարու դէմ դաւաճանութիւններ ալ պատրաստեցին, եւ փոխադարձաբար իրարու գլխաւորները հրազէնով կամ դաշոյնով մահացընելու հասան, ոչ միայն իրենց ազգին՝ այլև բովանդակ աշխարհի առջեւ գայթակղական վիճակ մը պարգեցին, վարկերնին փճացուցին, եւ փոխանակ իրեւ ազգասէրներու խումբ մը յարգուելու, իբրև սրիկայական ջոկատ մը անարգուեցան։ Նշանակալից կէտը մատնանիշ ընելէ ետքը, պարագայից մէջ երկարօրէն դեգերիլ աւելորդ կը դատեմ։

Կուսակցութեանց երկրորդ թերութիւնը եղաւ գլուխնին փոփաառու եւ խոհական եւ վարչական անձեր չգտնուիլը, այլ յոխորտն երիտասարդներ, անփորձ դպրոցականներ, բոխտախնդիր պանդուխտներ, արկածախնդիր գլուխներ, որոնք ո՛չ հիմնական ծրագիր մը կրցան կազմել, ո՛չ հաստատուն ուղղութիւն մը ունենալ, եւ ո՛չ փորձառութենէ օգտուիլ։ Եթէ գտնուեցան սակաւաթիւ ուսեալ անձեր, անոնք ալ գրագէտներու դասակարգին կը պատկանէին, որոնք վերացական գաղափարներով կ'օրօրուին, և բանաստեղծական թռիչքներով կը սաւառնին, եւ գործնական ու իրական շրջանակներով չեն զբաղիր։ Այստեղ ալ եղելութիւնը ակնարկելով կը բաւականանամ, մանրամասնութիւններ յայտնի բաներ են։

Կուսակցականներ նիւթական միջոցներ ճարելու մէջ ալ շրջահայեաց ճարտարութիւն ցոյց չտուին։ Ազգատին լուման հաւաքելու համար մատցուցին երեւոյթներ, անիրականալի խոստումներ, եւ խաբէական պատրանքներ գործածեցին, իսկ հարուստներէն գումարներ շորթելու համար սպառնալիքներ, դաւաճանութիւններ, մահափորձեր, սպանութիւններ ձեռք առին, որոնք երբեք նպատակը հաճոյական եւ սիրելի ընելու չեն ծառայեր։ Իրենց պարտքն էր գործերնին յօժարակամ ընդունելի եւ սիրելութեամբ փարելի ընել տալ, եւ ո՛չ թէ բռնութեամբ պարտաւորիչ կամ խաբկանօք գործադրելի ընել տալ։ Եթէ կրցան այս

ֆերպով ալ նիւթական միջոցներ հաւաքել, սակայն իրենց յարգը ու վարկը վրայ տուին խոհականներու աչքին, իրենց մասին կասկած արթնցուցին, հասարակ ժողովուրդին կողմէ ապիկարներ կարծուեցան և նոյն իսկ գործին իսկութիւնը այլայլելու առիթ տուին։

Ձեռք ձգած միջոցներուն կիրառութեան մէջ ալ աւելի յաջողակ չեղան։ Կուսակցական պետերուն դիւրակեաց, եւ նոյն իսկ ցոփակեաց, կենցաղը շատ խօսուեցաւ։ Իրենց նպատակը պէտք էր ըլլար օրինաւորութեամբ եւ յարմարութեամբ գործել, և եթէ դրամ և զէնք ալ ամբարէին, պէտք չէր որ ըստ դիպաց և ըստ քմաց վատնէին, կամ թէ անհաւատարիմ ձեռքերու յանձնելով ձեռքերնէն հանէին, և այնպիսի միջադէպներ ստեղծէին, որոց աննշանակ եւ ապարդիւն ըլլալը ակնյայտնի էր։ Խոյի եւ Բանաչէնի գիւղերուն մէջ շարժումներ գրգռել, որ Փիւրատերով շրջապատուած են եւ չորս կողմերնին զինուորական կեդրոններ ունին, գիտնալով ձախողուածի դէմ երթալ էր, որ նախատես եւ նախահոգ գործունէութիւն չ'ապացուցաներ, եւ իր հեղինակներուն կարողութեան փաստ չ'ըլլար, նոյն իսկ իրենց դրութեան համեմատ։

Իրենց նպատակ ըրած էին արկածախնդիր ձեռնարկներով եւ ասուտ համբաւներով Հայութը զայրացնել և չափազանցութեանց գրգռել, որպէսզի նոր կռտրածներ և աւերածներ հրամայէ, և եւրոպական տէրութեանց միջամտութիւնը հրաւիրուի, և Հայկական Խնդիրին, կամ աւելի ճիշդ՝ հայաբնակ նահանգներուն բարեկարգութեան գործին իրականացումը պատրաստուի։ Սակայն առ այս պէտք էր նախապէս Եւրոպիոյ միտքը շօշափել, բանակցութեանց մտնել, ապահովութիւն ստանալ, մինչ դեսպանատուններէ քաղուած տեղեկութեանց համաձայն՝ Եւրոպա շատ հեռու էր այդ պատրաստականութենէ, և մինչև իսկ Եւրոպակողման Թուրքիոյ բարեկարգութեան կը յետադասէր Ասիակողման Թուրքիոյ ներքին նահանգաց բարեկարգութիւնը։ Այդ անխորհուրդ ձեռնարկներու մի դժպհի հետևանքն էր՝ Թուրքիոյ մէջ գտնուող Հայերու վրայ նորանոր ճնշումներ և խստութիւններ հրաւիրելը, և եթէ ոչ բորբոքեալ հալածանքներ և բոցակէզ կռտրածներ, գոնէ մաղմաղ կրակի հիւծիչ տանջանքներ, որոնք տագնապներէ ազատած մնացորդներուն շունչ տուն ալը և տակաւ

կազդուրուիլը կ'արգիլէին։ Այդ մասին յստակ եւ որոշ ապդարարութիւններ յղած եմ այդ ձեռնարկներու հեղինակներուն, թէ խիզճի հակառակ է յախուռն փորձեր կազմակերպել, որոց հետեւանքը կազմակերպողներուն վրայ պիտի չծանրանայ, այլ անմասին եւ անմեղ ժողովուրդը պիտի կրէ անոնց ծանրութիւնն եւ վնասները։

Կուսակցական ձեռնարկներուն ձախող պարագաներէն մէկն ալ ռուսահայ ազգայնոց գործին միջամտելն ու կերպով մը տիրապետելն եղաւ, որով նախապէս տաճկական կառավարութեան հանդէպ մղուած պայքարը, եւ ռուսական կառավարութենէն թոյլատրուած եւ մինչեւ ստիճան մը հովանաւորուած գործը ռուսական կառավարութեան հանդէպ ալ հակապետական կերպարան զգեցաւ, Ոչնչականաց ուղղութեան հետ համաձայնեցաւ, դուռճան խորհրդակցութեանց մասնակցեցաւ, որով ո՛չ միայն հովանաւորող ազդեցութիւն մը կորսնցուց, այլեւ ուղղակի զայն իրեն թշնամին և հակառակորդն ըրաւ, որուն շօշափելի հետեւանքներն եղան ռուսական կառավարութեան կողմէ Դաշնակցականաց դէմ բացուած հալածանքը, մեծադղորդ դատաստանը եւ բազմաթիւ դատապարտութիւնները։ Սմենէն տարրական վարչագիտութիւնն ալ գիտէ, թէ պէտք չէ հակառակորդներու թիւը շատցնել, այլ մէկուն դէմ պայքար մղուած ատեն միւսը իրեն նպաստաւոր, գոնէ կատարեալ չէզոքութեան մէջ պահել։ Կուսակցականներ այդչափ տարրական կէտին մէջ ալ իրենց ցուցադրած կորոզութեան և բարձրութեան փաստը չընծայեցին։

Այդպէս և այդչափ անխորհրդաբար կառավարուած գործը, բախտին անակնկալ մի խաղով յանկարծ յաջողութեան կերպարան առաւ 1908 յուլիսին Իթթիհատ վէ Թերագգի տաճկական կուսակցութեան տարած յաղթանակովը։ Ազատական սահմանադրութիւնը օսմանեան կառավարութեան մէջ հռչակուեցաւ, ազատական սկզբունքներ գործադրութեան մտան, եւ որ աւելին է տաճկական կուսակցութիւնը իրեն ռահահորդ ճանչցաւ հայկական կուսակցութիւնը, և ընկերակցական ցոյցեր ու եղբայրական կապեր առատացան իրարու հանդէպ։ Հայկական կուսակցութեան մը թագնեալ հորիզոնին վրայ նոր արեւ կը ծագէր, և ակնկալու ազդեր յաջողութեան դուռները բացուած կը տեսնէին, եւ սրտագրաւ երազներով կ'օրօրուէին։ Հայկական կուսակցականութիւ-

նը տաճկականէն կը փաղաքշուէր, ազգային ներքին կեանքին կը տիրանար, ժողովներն ու պաշտօնները իր ձեռքը կ'անցընէր, իրեն հլու պատրիարքներ ալ կը նստեցնէր, եւ յուսալի էր որ անցեալին փորձառութիւնը իրեն օգտակար պիտի ըլլար եւ ազգին բարօրութեանը պիտի նպաստէր։ Երանի՜ թէ եղած ըլլար։ Դժբախտաբար այդ լուսապայծառ ակնկալութիւնն ալ յուսախաբութեան փոխարկուեցաւ։ Ազատութեան հռչակումը օսմանեան գետնի վրայ եւ օսմանեան դաղափարի ներքեւ նուիրագործուած էր, և ինչով որ սկսաւ անով պէտք էր վարդնար։ Հայկական նահանգաց բարօրութիւնը նախագրաւեալ խնդիր մըն էր, բայց չէր կրնար ընդհանուր և միրոզ դաղափարէն զատուիլ, և անով եւ անոր մէջ պէտք էր մշակուէր։ Կուսակցականութիւնը նախ ծոլամոյն մտաւ օսմանեանութեան մէջ, կարծես իւր հայկականութիւնը մոռնալու կամ ուրանալու չափ, իր ներքինը ու ինքնութիւնը անվերապահ բացաւ օսմանեանութեան առջեւ, և յետոյ, յանկարծական ոստումով մը, իւր հայկականութիւնը սկսաւ ցուցադրել օսմանեան գետինէն հեռանալու չափ։ Հայութեան ու տաճկութեան փծուն խնդիրներ հրապարակ նետուեցան, անժամանակ պահանջներ յանդէպս բարձրացան, ծերակոյտի կամ երեսփոխանութեան մէջ երկու կամ երեք հայեր աւելի ունենալը կենսական խնդիրի կարեւորութիւն առաւ, իբրեւ թէ 250 անդամոց մէջէն 10ի տեղ 12, կամ 12ի տեղ 15 հայ գտնուիլը հայութեան ապահովութիւնն ու արժանապատուութիւնը աւելցնէր, մինչ բոլոր նպատակը մէկ երկու կուսակցական պետերու քանի մը հարիւր լիրայի վայելք պատրաստելէ անդին չէր անցներ։ Այսպէս խզուեցան 1908 յուլիսի ընկերակցական ցոյցերը եւ եղբայրական կապերը, և երբ հայուն բարօրութեան արշալոյսը կը բացուէր, առանց ցերեկի պայծառութեան վայելքը տեսնելու, երեկնային վերջալոյսը յաջորդեց, և դուռ բացաւ այն աղէտալի կացութեան զոր ողբացինք և կ'ողբանք, և կը ցաւինք որ ձախորդութեան պատճառ տուողներն ալ նոյն աղէտներու անդունդին մէջ սուզուեցան ու անհետացան։

Աղէտներու մանրամասնութեանց մտնել չեմ ուզեր, գոնէ առայժմ լռել կը սիրեմ։ Նպատակս կուսակցական դրութեան վրայ անկաշկանդ տեսութիւն մը ընել էր, եւ այդ նպատակէս անդին չեմ անցնիր։ Թերեւս քիչ մը խիստ եղաւ քննադատու-

թիւնս, սակայն ես իրողութիւններ խօսել տուի, խորհրդածութիւններէ զգուշացայ, անձնական պարագաներ ալ չխառնեցի, որպէսզի անհատական զգացմանց արձագանգ եղած ըլլալու կասկածը չզարթուցանեմ։

Կ

Դամասկոս, 1918 փետրուար 16/1 մարտ Ուր.

Պատրիարքական պաշտօնավարութեանս նկատմամբ վերջին հատուածներս, միանալով Խոհիֆ ու Խոսֆիս սկիզբները պաշտօնիս հոգեբանական ըմբռնմանց մասին գրածներուս հետ, թող բաւական սեպուին սիրտիս ու միտքիս, ոգւոյս եւ ուղղութեանս վերայ գաղափար կազմելու, հետեւելով յայտարարութեանցս անկեղծութեան եւ իրողութեանց անբարբառ վկայութեան։ Արդէն Յիշատակագիրքիս եւ Ազգապատմիս մէջ ալ այդ կէտերը չօշափուած են, եւ աւելի երկարելու պէտք չեմ զգար, եւ կ'անցնիմ պաշտօնավարութեանս միջոցին տեղի ունեցած նշանակալից դէպքերու անցքեր քաղել։

Նշանաւոր եղելութեանց գլխաւորներէն մին եղաւ Սաղիմական Խնդիրը, կամ ուրիշ բացատրութեամբ՝ Երուսաղէմի հաշուեպահանջներուն եւ հաշուեխոյներուն պայքարը։ Գարեգին Մուրատեանի, ապա Մելքիսեդեկ վարդապետի, Ժառանգաւորաց Վարժարանի ուսուցչութեան եւ տեսչութեան օրէն, Երուսաղէմի միաբանութեան մէջ ուսեալներու յաւակնութեան հիմերը դրուեցան, եւ հինգ ընկերակիցներու մեծամասութեան շրջանը սկսաւ, որք էին իրենց վերջին անուններով՝ Գաբրիէլ Սնոյչեան, Վահան Յակոբեան, Սահակ Խապայեան, Ղեւոնդ Մագասեան եւ Գէորգ Երէցեան, որոնց երեքը առաջինէն եւ վերջինէն զատ, Կ. Պոլիս յըղուած և լրացուցիչ ուսում ալ ստացած էին, և հինգն ալ վանական միաբանութեան մէջ առաւելագոյն կարողութեան անունով՝ սարկաւագութեան օրերէն կարևորագոյն պաշտօններու տիրացած էին։ Հինգերուն մէջէն աւելի աչքառու դեր ստացողը Մագ-

սուտեանն էր, որ ելևմտական չրջանակը իրեն ասպարէզ ըրած եւ ընդհանուր մատակարարութիւնը իւր վրայ կեդրոնացուցած էր, առերևոյթ փայլուն արդիւնքներ կը ցոլացնէր, բայց և իւր անձնական քսակն ալ զգալապէս կը պարարէր։ Շատ չանցած հինգերէն առաջին երկուքը միութենէն բաժնուեցան, Անոյշեան Մարգսուտեանի շահագիտութենէն դայթակղած, եւ Յակոբեան Մարգսուտեանի բախտաւորութեան նախանձած։ Երկուքն ալ վանական չրջանակէն հեռացան, եւ հնգեակը երրեակի վերածուեցաւ, եւ ազդեցութեան ու ձեռնհասութեան ու բախտաւորութեան առաւելութիւնները երրեակին ձեռքը մնացին, որ համարձակութիւն սաստաւ ըստ հաճոյս գործելու, զի հիներ անոր ցոլքերէն չլացած, և նորեր ազդեցիկ ձայնէ զրկուած, և պատրիարքներ գործին ներքինին չթափանցած, երրեակին գործունէութեան ազատ և ընդարձակ ասպարէզ էին թողած, մինչև որ հիներ պակսելով և նորեր աճելով՝ գործոց ընթացքին տեղեկանալու հետաքրքրութիւնը ծագեցաւ, և հաշուեպահանջներու ձըգտումը սկսաւ։ Միւս կողմէն Մարգսուտեան հաշուեխուսութեան դրօշն էր պարզած՝ իր երկու ընկերակիցներու աջակցութեամբ և միաբաններէն ոմանց օգուտի կամ յոյսի զօրութեամբ շահուած կողմնակցութեամբ։ Այդ խուլ անհամաձայնութիւնը կը տիրէր Երուսաղէմի մէջ, երբ նոր պատրիարք եւ նոր վարչութիւն պաշտօնի մտանք։

Շատոնց էր որ կեդրոնը Երուսաղէմի հաշիւները ոչ տեսած և ոչ քննած էր, զի առ այս ձեռնհաս եղող Ընդհանուր ժողովին գործունէութիւնն ալ խափանուած էր։ Մենք ալ հաշիւ պահանջելու նախաձեռնութիւնը չունեցանք, զի ոչ միայն Ընդհանուր ժողովի նիստերուն ընդհատումը կը շարունակէր, և կը խիթայինք որ այդ պարագային հիմնուելով մեր պահանջը մերժուէր, այլև շատ աւելի կարևոր և տագնապալի խնդիրներ մեր ուշնուրուշը գրաւած էին, եւ Երուսաղէմի փոխանորդ Երէցեան ալ սաղմոսական գործոց կանոնաւոր ընթացքին, ելևմտական կացութեան փայլուն վիճակին, և տարածուած զրոյցներուն անհիմն և կիրքի հետևանք ըլլալուն լիուլի վստահութիւն կը ներշնչէր։ Այսպէս անցան իրր եօթը տարիներ՝ 1896էն մինչև 1903։ Պատահական պարագայ մը յանկարծ մոխիրի ներքև ծածկուած կրակը բոցավառեց, եւ Երուսաղէմէ բողոքներ սկսան հասնիլ։

Վերջին տարւոյ քուն բարեկենդանի կիրակին և նախընթաց օրուան մէջ եկեղեցւոյ մէջ, դասապետ Տէրտէրեան Դաւիթ և տեսուչ Զիլինկիրեան Եղիշէ վարդապետներուն միջև աշակերտաց նկատմամբ իրաւասութեան խնդիր էր յարուցուած և մինչև իսկ եկեղեցական պաշտամանց խանգարուելուն պատճառ եղած։ Անցողակի և միանգամ ընդ միշտ պիտի յիշեցնեմ, թէ նպատակս Երուսաղէմի անցքերը պատմաբանել չէ, այլ լոկ անոնց մէջ իմ հետեւած ուղղութիւնս եւ վարած դերս լուսաբանել։

Գաղտնիք մը չէր որ հաշուեպահանջութեան հետեւանք էր տեղի ունեցած միջադէպը, զի խնդիրը մինչև աշակերտաց հասած էր և կողմնակցութիւններ զրգռուած, սակայն եկեղեցական անտեղութեանց տոիթ տալը ներելի չէր. ուստի ընդարձակ պաշտօնագիր մը ուղղեցի փոխանորդ Ներսէս եպս. Գէորգեանի հասցէին՝ միութեան հաղորդելու համար, որուն մէջ եկեղեցական անտեղութիւնը պախարակելով մէկտեղ՝ ակնարկած էի, որ եթէ հաշիւ կամ ուրիշ խնդիրներ ունէին, կրնային զայն օրինաւոր ձեւով առաջարկել որ Կեդրոնն ալ նկատի առնէր։ Այս գրութիւնը միջադէպին ձև մըն էր երկու բաղաքող կողմերու ալ կերպով մը գոհունակութիւն տուող, սակայն Մագուտեանի հաշուեխոյս վարչութիւնը չհամարձակեցաւ գրութիւնս միաբանութեան հաղորդել, զի անով հաշուեպահանջութեան դուռ կը բացուէր, և իւր դրութեան օգտակար չէր։ Պաշտօնագիրս գաղտնի պահուելով մէկտեղ հաշուեպահանջութեան խնդիրը հրապարակ ինչու և մեր պատրիարքարանին ներկայացուեցաւ, և մենք ալ պարտաւորուեցանք անցած եւ համարաւորութիւնը չներկայացուած տարիներու հաշիւները պահանջել, և Յարութիւն Վեհապետեան պատրիարքէ խնդրել, որ հաշիւներուն հետ անոնք բացատրող միաբան մըն ալ, և յատկապէս ելեմտից տեսուչ Մագուտեանը Կ. Պոլիս յղէ։ Վեհապետեան, որ տակաւին Մագուտեանի փոյլուն հրապոյրներուն ազդեցութեան ներքև էր, թէպէտ համարատուութեան պատրաստութիւնը հրամայեց, սակայն Մագուտեանի հեռանալուն համամիտ չգտնուեցաւ, անոր ներկայութիւնը աթոռական մատակարարութեան անհրաժեշտ դատելով, անշուշտ նոյնինքն Մագուտեանի դրդմամբ։

Համարատուութեանց հանիլը կը յապաղէր, Մագուտեան գործը քաշքշելու միջոցներ կը ստեղծեր։ Խապայեան թէպէտ

կաթողիկոսութեամբ Կիլիկիա մեկնելով իւր ընկերը մօտաւոր և զօրաւոր աջակիցէ զրկած կ'ըլլար, բայց հնարաւորը ընելու համար Կ. Պոլիս ալ կուգար, ինչպէս Կիլիկիոյ խնդիրին մէջ յիշեցինք։ Երէցեան ալ Կ. Պոլսոյ մէջ ոգի ի բուին Մագաւուտեանի պաշտպանութեան կ'աշխատէր, եւ երբ բողոքագիրներ ու տեղեկագիրներ Երուսաղէմի Սթոռին ծանր պարտքի ներքև գըտնուիլը կը հաստատէին, Երէցեան կը ճգնէր պարտքի գոյութիւնը ստել եւ Սթոռը եկեւմտական նախանձելի վիճակի մէջ ցուցնել։ Այդ ներհակընդդէմ յայտարարութեանց առջև Կեդրոնը կը ստիպուէր քննիչի մը ձեռքով իսկութիւնը տեղւոյն վրայ ստուգել, և այդ փափուկ պաշտօնը կը յանձնուէր դիւանապետ Բարթող Թելեանի, որուն պաշտօնապէս տրուած հրահանգին հետ մտերմաբար հաղորդուած էր՝ իւր բոլոր նպատակը դարձնել պարտքին գոյութիւնը ստուգելու եւ քանակը ճշդելու։ Քննիչին տեղեկագիրը ննջասատ եղաւ Մագաւուտենի և հակառակ Երէցեանի, ուստի Կեդրոնը կը ստիպուէր համարատուութիւնը խստիւ պահանջել եւ Վեհապետեան ալ ընթացք կուտար Կեդրոնին պահանջին, մինչ Մագաւուտեան պատճառանքներով և երկարաձգումներով հաշիւ ներկայելէ կը խուսափէր, և մինչև իսկ Վեհապետեանը անգոնելու և քննադատելու կը համարձակէր՝ հաշուեպահանջներու երես տալուն եւ Կեդրոնին համակերպելուն համար։ Վերջապէս Վեհապետեանի երկայնմտութիւնն ալ կը սպառէր, Մագաւուտեանի վրայ վստահութիւնը կը նուազէր, և իրեն դէմ յայտնուած անսասութենէն կը վշտանար, որով 1905 յունուարին զայն եկեւմտից տեսչութենէն կ'արձակէր ու հաշիւները հաւաքելով Կ. Պոլիս երթալ կը հրամայէր, և տեսչութիւնը կը յանձնէր Գայրգճեան Մատթէոս վարդապետի։ Մագաւուտեանի տակաւին դանդաղելուն և հրամանին չանսալուն վրայ, Վեհապետեան ինձի կը դիմէր, և ես ալ նախարարութեան ձեռքով և պետական հրամանով Մագաւուտեանը Կ. Պոլիս բերել կուտայի, ու այլևս Երուսաղէմի հաշուոց խնդիրը Ղեւոնդեան խնդիրի անուն. և բնութիւն կ'առնէր, Մագաւուտեանի անձին վրայ կեդրոնանալով։

Մագաւուտեանի Կ. Պոլիս հասնելէն ետքը իրեն հանդէպ ունեցած վարմունքս բարեկամական ձեւով եղաւ, վասնզի կ'ուզէի անձը ուսումնասիրել եւ ներքին տեղեկութիւններ քաղել. շաբաթ երեկոյներ Երուսաղէմատան մէջ սեղանակից ալ կ'ըլլայի,

որ մինչև իսկ ժողովականներէն ոմանց կասկածելու պատճառ եղաւ, թէ մի՛ գուցէ զեղծարարութեանց ծածկող դառնամ։ Հաշիւներուն պատասխանատուն հասած ըլլալով պաշտօնական քննութեանց ատենը հասած էր եւ Հաշուեքննիչ Յանձնաժողովը կազմուեցաւ վարչական շրջանակի մէջ, Քաղաքականէն Գրիգոր Խտրեան ու Մինաս Սեթեան ու Սեպուհ Տէմիրճիպաշեան, եւ Տնտեսականէն Գէորգ Սալանեան և Վահան Սուրէնեան անդամներով։ Ինձի ալ առաջարկուեցաւ Յանձնաժողովին նախագահել, զոր յանձն չառի, երբոր ըսուեցաւ թէ Հաշուեքննիչը լիազօր չէ և Վարչութիւնը պիտի վերաքննէ, ինչ որ կրնար Վարչութեան նախագահութիւնս տկարացնել։ Սակայն գուցէ լուսաղոյն պիտի ըլլար եթէ յանձնառու ըլլայի եւ հեղինակօրէն գործելով եզրակացութիւնները Վարչութեան ընդունել տայի եւ գործը կարուէ եւ արագ կերպով վերջանար։ Քննութեան սկսուած ատեն տեսնուեցաւ որ Մագասուտեանի հաշիւները երկու որոշ մասեր կը ներկայացնեն, մին վանական ուտեստի ու զգեստի ու պահեստի սովորական հաշիւը, եւ միւսը շինութեանց եւ նորոգութեանց արտասովոր հաշիւը։ Առաջինին համար կը ներկայացնէր տարեկան ցուցակներ առանց մանրամասնութեանց, իսկ երկրորդին համար ո՛չ տոմար ունէր եւ ո՛չ ցուցակ, եւ միայն գրպանէն հանած հատուկոտոր թերթիկներէ բերանացի պատասխաններ կը քաղէր։ Հաշուեպահանջներուն պնդումները այդ երկրորդ մասին համար էին, եւ մասնաւոր տեղեկութիւններէ եւ գիրերէ քաղուած բազմաթիւ առարկութիւններ կը ներկայէին, որոց համար իրենց կողմէն բացատրող մը պէտք եղաւ, եւ քննութիւնը առկախ մնաց մինչև Գայլգճեանի հասնիլը։ Քննութիւնը չարունակեց չորս անդամներով Տէմիրճիպաշեանի մահուան պատճառով։ Հազիւ տարիէ մը տեղեկագիրը կազմուեցաւ, որուն մէջ ինչ ինչ կէտերուն վրայ չորսերնին համամիտ էին, եւ ինչ ինչ կէտերու վրայ Քաղաքականներ Տնտեսականներէն կը զատուէին։ Երբոր Վարչութիւնը տեղեկագիրը առաւ, տեսաւ որ այն բուն նպատակէն հեռացած է, վանքին ելեւմտական կացութիւնը ճշդուած չէ, պարտքին գոյութիւնը ու քանակը նայուած չէ, շինութեանց եւ նորոգութեանց հաշիւներուն տոմարով եւ փաստերով հաստատուած չըլլալը նկատի առնուած չէ, և երկու Քաղաքականներ այժմէնին առուած են Մագասուտեանի դէմ ամբաստանութիւն-

նելը հերքելու և զեղծումներէ արդարացնելու։ Մէկ խօսքով՝ տեղեկագիրը այն չէր ինչ որ պահանջուած էր. և Մագուստեանի արդարացումն ալ ոչ օրինաւոր առմարներով և վաւերաթուղթերով, այլ բերանացի յայտարարութիւններով և գրպանի թերթիկներով հաստատուած էր։ Հետևապէս գործը թերի, տեղեկագիրը անբաւարար, և խնդիրը անլոյծ դատուեցաւ։ Այդ եզրակացութեան կերպով մը առիթ տուած էր Գայլպճեանի բռնած ոճն ալ, որ փոխանակ հիմնական և ամբողջական հաշիւներու վրայ պընդելու, մասնաւոր անճշդութեանց, յայտնի սխալանաց և նոյնիսկ խարդախեալ արձանագրութեանց ընդարձակ ցուցակ մը առջև դրած էր։ Մագուստեանի արդարացման համար Քաղաքականի անդամներուն թափած ճիգերուն նկատմամբ Սեթեանի անձը չահագիտութենէ և շահասիրութենէ վեր կը վկայեմ, սակայն զայն ալ նոր չինութեանց լուսանկարներէ և մասցածին բաղդատական հաշիւներէ չլացած կը գտնեմ։ Եթէ Յանձնաժողովին նախագահած ըլլայի, հաւանաբար աւելի դրական և որոշ եզրակացութեան յանգող տեղեկագիր մը կազմուած կ'ըլլար։

Երբոր թերի մասերը լրացնող տեղեկագիր մը ուղուեցաւ, ձեռքի տակ եղող գրուածոց անբաւականութիւնը պատասխանուեցաւ, եւ անոնք ստանալու համար նոր քննիչի առաքման հարկը տեսնուեցաւ։ Այդ պաշտօնին ընտրուեցաւ Գէորգ Ասլանեան, որ իւր պետական պաշտօնին բերմամբ Սուրիոյ նահանգներուն խճուղեաց քննութեան համար այն կողմերը կը գտնուէր, և Հանրային Շինութեանց նախարարութենէ խնդրուեցաւ և արտօնուեցաւ Պաղեստինն ալ քննելի սահմաններուն կցել, որ Երուսաղէմ երթալու եւ ազգային քննութիւնն ալ կատարելու դիւրութիւն ունենայ։ Իրեն օգնական տրուեցաւ դիւանապետ Կարապետ Խաչատուրեան, իմ կազմած ընդարձակ հրահանգը տանելով, եւ կալուածագիրերը քննելու եւ շինութեանց մասին վաւերական արձանագրութիւններ քաղելու յանձնարարութեամբ։ Ասլանեան Երուսաղէմ հասնելով՝ նախապէս անպաշտօն կերպով տեղեկութիւններ կը քաղէ, եւ հրահանգն ալ ուսումնասիրելով՝ խնդիրը բաւականաչափ լուսաբանուած կը գտնէ, միւս կողմէ իր նախարարէն դառնալու հրաման կը ստանայ, եւ պաշտօնական քննութեան չձեռնարկելով Կ. Պոլիս կը դառնայ։ Խաչատուրեան քիչ մը ևս կը սպասէ, եւ ուրիշ քննիչ չյղուելուն եւ

իր ալ ինքնուրոյն պաշտօն չունենալուն վրայ, առանց գործ մը կատարելու ետ կը դառնայ։

Տարին ապարդիւն կը սահէր և տակաւին Սաղիմական կամ Ղեւոնդական խնդիրը անորոշ կը մնար, մինչ վերջնական վճիռի մը պէտքը անհրաժեշտ էր։ Երուսաղէմի պատրիարքն ալ կը սպասէր, Մաքսուտեան ալ կը խնդրէր, և Երէցեան ալ վարչութիւնը տկարացած ենթադրելով գանգատներ եւ բողոքներ կը քարձրացնէր։ Արդէն վճռական քննութեամբ խնդիրը վերջացնել իրաւացի և օրինական էր, ուստի գործին աւելի կարեւորութիւն տուած ըլլալու համար, Կրօնականի դեր-ատենապետ Մանկունի Վահրամ եպիսկոպոս քննիչ կ'ընտրուէր 1907ին, և պաշտօնական ու հաշուական ու վարչական պահանջները զօրացնելու համար, դրան գործակատար Արիս Ֆէսճեան իրեն օգնական կը տրուէր, որ 1903 մարտ 31էն ի վեր պաշտօնի վրայ էր, եւ սաղիմական խնդիրին անցուդարձերուն լիովին տեղեակ էր։ Քննիչներ Երուսաղէմ հասնելով քննելի նիւթերուն իւրաքանչիւր ճիւղին համար յատուկ մասնախումբեր կը կազմեն, և ստացուած արդիւնքները համադրումար նիստերու մէջ հաստատել կուտան, և Մաքսուտեանի ընթացքը նշաւակող և զեղծումները հաստատող լիուլի պաշարով ստուար տեղեկագիր մը կը կազմեն, զոր Ֆէսճեան 1907 դեկտ. 30/12 յունուար 1908ին Կ. Պոլիս հասնելով Կեդրոնին կը յանձնէր, ուր իր ներկայութիւնն ալ անհրաժեշտ նկատուելով դառնալ հրաւիրուած էր։ Նոր 1908 տարուոյն առաջին քառորդին վերջերը Մանկունի ալ կը դառնար, եւ բոլոր նոր ու հին տեղեկագիրները և վաւերաթուղթերը, ամբաստանագիրներն ու պաշտպանողականները Քաղաքական եւ Կրօնական ժողովներու ատենապետներէն եւ դեր-ատենապետներէն՝ Գաբրիէլ Նորատունկեանէ ու Տիրան Աշնանէ, եւ Գրիգորիս Յովհաննէսեան ու Վահրամ Մանկունի տեղ Մովսէս Կէօմրիւքճան եպիսկոպոսներէ կազմուած Յանձնաժողովի մը կը յանձնուէին, բաղդատելու եւ քաղելու եւ եզրակացնելու համար։ Ասոնք գործի ձեռնարկած եւ ուսումնասիրելու մօտեցած էին, երբ 1908 յուլիս 11/24ին ապատութիւնը հռչակուեցաւ, և 16/29ին պատրիարքութենէ հրաժարիլս տեղի ունեցաւ, եւ Ղեւոնդական խնդիրին իմ օրով վարած եւ լուծման մօտեցած ընթացքը ընդհատեցաւ։ Ինչ որ անկէ ետքը տեղի ունեցաւ, ինէ անկախ եղելու-

թիւն է, բայց նորէն անդրադառնալու առիթ պիտի ունենանք։

Ղեւոնդական խնդրոյն իմ պատրիարքութեան ժամանակին պատկանող բաժինը փակելու համար, հարկաւոր կը դատեմ իմ տեսութիւններս անսեթեւեթ համառօտել։ Վանական առօրեայ հաշիւներուն կողմէն Մագուտեանի բան մը մեղադրել աւելորդ կը դատեմ. քանի որ սովորական տարիներու հաշիւներէն շատ տարբեր բաներ չեն ներկայներ։ Մագուտեանի վրայ ծանրացող կէտերը չինութեանց, նորոգութեանց, վաճառմանց, գնմանց, և փոխառութեանց արտասովոր և բացառիկ գործողութեանց շուրջը կը դառնան։ Մագուտեան ծանր կասկածանաց եւ պատասխանատուութեան ենթարկուած կը մնայ, երբոր նորոգութեանց եւ չինութեանց եւ յարակից գործողութեանց կանոնաւոր տոմար չի ներկայեր, եթէ իրօք բռնած չէ, կամ եթէ բռնած է եւ մէջտեղ հանելէ կը վախնայ։ Մագուտեան մեծապէս մեղադրելի կը մնայ, երբոր վաճառմանց եւ գնմանց եւ ուրիշ գործողութեանց մասին վանական հաշուետոմարներուն անցուցած յիշատակութիւնները անհարկի տեղափոխութիւններով շփոթութեան մատնել կ'աշխատի։ Մագուտեան ապօրինի կացութեան մէջ կը գըտնուի, երբ՝ հակառակ Կանոնագրին՝ ինքն պաշտօնեայ ըլլալով Տնօրէն Խորհրդոյ անդամակից և ատենապետ կը մնայ, և եկեմբատապետի, գանձապետի, կալուածապետի, չինուածապետի պաշտօնները հաւաքաբար իր վրայ կ'ամփոփէ, և իր գործողութիւնները ինքն կը վաւերացնէ։ Մագուտեան խարդաւանանքի ընդդէմ ինքէն ազատ չի մնար, երբոր ատենապրութեանց տիրանալով, թուականներու կարգին հակառակ յաւելուածներ կը ապրդեցնէ, իր միակ ստորագրութեամբ որոշումները կը հաստատէ, եւ կամ ոչ ժողովականներու իբրև ժողովականներու ստորագրել կուտայ։ Մագուտեան օրինաց հակառակ գործած կ'ըլլայ, երբ առանց կանոնական պայմանները սպառելու, վաճառումներ կը կատարէ, ինչպէս Երիքովի եւ Աղեքսանդրիոյ գեռիններուն, եւ երբ պիտանի կալուածներու վաճառման իբր փոխարէն՝ անկոխ եւ անպէտ և քարուտ տեղերու գնումներ կը նշանակէ։ Մագուտեան կանխամտածուած նենգութեան պարտաւոր կը մնայ, երբ վանական գումարները փոխանակ պատրիարքի անունին փոխանակագրելու, ներկայացնողին անունին փոխանակագրել կուտայ, փոխանակագրերը իր մօտ կը պահէ, և ձեռքէ վաճառելով գումարնե-

ը կ'իւրացնէ։ Մագուտեան խաթերայ միտքերու և նենգամիտ գիտումներու տէր եղած կ'ըլլայ, երբ վանքին պէտք չունեցած ատեն փոխառութիւններ կը կնքէ, եւ անոնք իբրեւ անձնական վարկի հիմ շահագործելու կը գործածէ։ Մագուտեան իբրև զեղծարար կը նշանակուի, երբ իբր կալուածական առուծախերու միջնորդ դիւրագնոյ կարծուած գնումներ կը կատարէ, շահով վաճառուածները կ'իւրացնէ, եւ վաճառել չկրցած անպէտները վանքին վրայ կը բեռցնէ։ Մագուտեան ինքզինքը չ'արդարացներ երբոր իւր ամբաստանողներուն եւ իւր հաշուեքննիչներուն յայտարարութեանց մէջ իրարու անյարիր կէտեր կը պրպտէ, քանի որ օրինաւոր տոմար պակսած ատեն յայտնուած կարծիքներ, մակաբերութեան զօրութեամբ կազմուիլ կը ստիպուին, և աւելի կամ պակաս տեղեկութիւն մը ու ծանր կամ թեթեւ գնահատում մը բնական կերպով մակաբերութեանց վրայ կ'ազդեն, որով տարբերութիւնները կանոնաւոր տոմար չներկայացնողին վերագրելի կը դառնան։ Մագուտեան իւր քարոյական խղճին, իւր քարոյական ուղղամտութեան, իւր քարոյական զգացմանց մասին ազատօրէն կասկածելու իրաւունք տուած կ'ըլլայ, երբոր եկեղեցական ըլլալով եկեղեցիէ կը խորշի, կրօնաւոր ըլլալով կրօնքը չի յարգեր, հոգեւոր պաշտօնեայ ըլլալով հոգեւորութենէ կ'ուծանայ, խորհուրդներ չի կատարեր, պաշտամանց չի մասնակցիր, եկեղեցի ոտք չի կոխեր, ամենէնուիրական օրերն ալ իբր ոչ-քրիստոնեայ կ'անցուներ, մինչև իսկ հասարակաց գայթակղութենէ չ'ազդուիր և չի շարժուիր, և միայն դրամին ու շահը կը պաշտէ, և ամէն օրէնք և արդարութիւն դրամին և շահին զոհելուն աներկբայ փաստը կ'ընձեռէ։ Մագուտեան յայտնի զեղծարարութեան վճիռը իւր վրան կը հրաւիրէ, երբ հօրենական ժառանգութիւն չվայելելով, արհեստ կամ արուեստ չունենալով, և միայն Երուսաղէմի վանքին արկղը և Երուսաղէմի Աթոռին վարկը իրեն արամադրելի ունենալով, նշանաւոր հարստութեան տէր կը դառնայ, և հանգստաւէտ կեանք վարելով, իրենները բարեկեցիկ վիճակի մէջ պահելով, անձնական կալուածներ շատցնելով, փաստաբաններ վարձելով եւ խմբագիրներ կաշառելով, յատուկ լրագիրներ հիմնելով և նոր չինութեանց ձեռնարկելով մէկտեղ՝ իւր դրամագլուխին ՁԵԱՍԱԾ չ'երեւիր և իւր դիրքը կայուն կը պահէ։ Մագուտեանի վերաբերեալ դիտողու-

թիւնները ամփոփելէ ետքը, ի դէպ էր որոնել թէ ի՛նչ պայմաններով իրեն կ'աջակցէին Խապայեան եւ Երէցեան։ Համարձակ կրնամ վկայել, թէ առձեռն բաժիններէ դուրս, որոնք մեզի անծանօթ են, երկուքն ալ նշանաւոր և հաստատուն չահերու տէր չեն եղած։ Մագսուտեան իրեն չահերուն անոնք բաժնեկից չէ ըրած, անոնք ալ այնտեղ չեն եղած։ Խապայեան առերեւոյթ փառքի սիրահար, և Երէցեան հաճոյալիր վայելքը սիրող, տարբեր դետիններ փնտռած են իրենց, և Մագսուտեան անոնցմով գոհացուցած է իր աջակիցները, և քանի որ միեւնոյն գետինի վրայ ընդհարումներ չեն ունեցած, կրցած են համերաշխ ապրիլ իրարու հետ։ Այս տեսակէտով ալ Մագսուտեան իր չահը ապահոված է, և իւր յաջողութիւնը երաշխաւորած, բայց իւր արդարացումը չէ պատրաստած։

Այս տեղ կը փակեմ Երուսաղէմի հաշիւներուն կամ Ղեւոնդեան խնդիրին յատկացուցած հատուածս, որով ոչ թէ կատարեալ պատմութիւն տալու, այլ իմ տեսութիւններս պարզելու նպատակն ունէի։

ԿԱ

Դամասկոս, 1918 փետրուար 17/2 մարտ Շբ.

Բաւական խօսուած և կարեւորութիւն ստացած պարագայ մը եղաւ Ռուսահայոց եկեղեցական կալուածներուն խնդիրը, և իմ ու տաճկահայ նուիրապետութեան անոր միջամտելը։ Ռուսական կառավարութեան կողմէ հայ կուսակցականութեան դէմ բացուած պայքարին հետեւանքն եղաւ, որ Կովկասի կուսակալ Կալիցին (Galitzine, Գալիցին) և Ներքին Գործոց նախարար Բլէվէ (Blevé Պլէպէ) մտածեցին եկեղեցական ստացութեանց մատակարարութիւնը հայ հոգեւորականութեան ձեռքէն հանել, ենթադրելով թէ հակապետական շարժումներու կը ծառայեցնէին, և ուղղակի կառավարական նախարարութեանց և տեսչութեանց յանձնել, և արդիւնքէն՝ սեղմուած չափով՝ եկեղեցական պիտոյից համար տալ։

Այդ ծրագիրը նոյնիսկ ռուսական օրէնքներուն հակառակ էր, և պետութեան խոհական տարրէն անճահ կը դատուէր, բայց վերջապէս երկու համախոհներ յաջողեցան զայն կայսերական հրամանագիրով հրատարակել։ Հազիւ թէ այդ լուրը լսուեցաւ, իսկոյն Խրիմեան կաթողիկոսին դիմեցի ստուգութիւնն ու իսկութիւնը իմանալու, և երբ գոյժը հաստատուեցաւ, որոշեցի Տաճկահայոց կողմէն ալ ձայն բարձրացնել և Ռուսահայոց ու հայրապետական Աթոռին կողմէ յայտնուած ընդդիմութիւնը զօրացնել։ Ռուսական կառավարութեան վրայ մեծ ազդեցութիւն չէր կրնար գործել Ազգ. Վարչութիւնը, որուն կարևորութիւնն իսկ կրնար չտալ, բայց Եպիսկոպոսական ժողովի նշանակութիւնը չէր կրնար անտեսել։

Այս նպատակով 1903 օգոստոս 5|18ին պատրիարքարանի մէջ գումարուեցանք մայրաքաղաքը գտնուող տասներկու եպիսկոպոսներ, տեղեկութիւնները հաղորդեցի, խորհեցանք ու խորհրդակցեցանք, և որոշուեցաւ ամենուն ստորագրութիւններով կաթողիկոսին դիմել որ տեղի չտայ, և ուղղակի Ռուսերէն կայսեր ալ դիմել, պատշաճ կերպով գործին ապօրինութիւնը յայտնել, ու նոր կարգադրութեան դադարումը խնդրել. և ինծի յանձնուեցաւ գրութիւնները պատրաստել, կաթողիկոսինը հայերէն և կայսեր յղուելիքը գաղղիերէն ու հայերէն։ Գրութիւնը պատրաստեցի բաւական ընդարձակ ձևով. մեր միջամտութեան փաստ ցուցուած էր՝ իբր Էջմիածնէ ձեռնադրուած եպիսկոպոսներ՝ Մայր Աթոռոյ միաբանակցութեան իրաւունքնիս, Էջմիածնի եկեղեցական ստացութեանց նշանաւոր մասամբ Տաճկահայոց նուէրներով գոյացած ըլլալը, և նոյն ստացութեանց բովանդակ հայութեան, որով և տաճկահայութեան, սեփականութիւն ճանչցուիլը։ Իսկ հրամանին իրաւանց և օրինաց հակառակ ըլլալը ցուցուած էր Պոլսոյ Էնիէի յօդուածներ յառաջ բերելով, Ռուսերէն տիրող օրէնքներու հետ բաղդատութեամբ, ուրիշ եկեղեցեաց ու կրօնից վայելած ինքնուրոյն մատակարարութեամբ, ռուսական կայսերութեան իր Հայ Եկեղեցւոյ և ազգի պաշտպան ճանչցուած ատեն ինքն իրեն հակառակելովը, և իսլամական պետութեանց անգամ չգործածած խստութեան քրիստոնեայ պետութենէ մը գործադրուելովը։ Ատոնք յարմար դարձուածներով բացատրուած էին, պատշաճից լեզուն յարգելով։ Գրութիւնները

երկրորդ նիստի մը մէջ կարդացուելով ընդունուեցան, և վայելուչ ընդօրինակութենէ ետքը ստորագրուեցան։ Կայսեր դիմումին առաքումը՝ նոյնիսկ Զինովիէվ դեսպանին խորհրդով՝ ուղղակի կայսերական պալատան հաղարապետութեան ձեռքով կատարուեցաւ, որպէսզի դեսպանը ազատ մնայ կարծիք ուղուածատեն իւր տեսութիւնները գրել, որոնք յայտնապէս հակառակ էին Բլէվէ-Կալիցին ծրագիրին։ Կայսեր ուղղուած գրութեան պատճէնը կաթողիկոսին ալ հաղորդուեցաւ, նմանապէս յղուեցաւ Կրիկիոյ Խապայեան կաթողիկոսին ու Երուսաղէմի Վեհապետեան պատրիարքին, և Թուրքիոյ բոլոր եպիսկոպոսներուն և առաջնորդներուն, որ նոյնը կամ նմանը ստորագրելով իրենց համաձայնութիւնը արտայայտեն, և գիրերը հետզհետէ ռուսական կառավարութեան յղուին։

Եպիսկոպոսներ երկրորդ դիմումն ալ գրեցին Ռուսիոյ կայսեր, երբոր բռնի գործադրութեանց լուրերը հասան։ Խապայեանի և Վեհապետեանի գիրերը գաղղիերէնի թարգմանուելով բնագիրին հետ ղրկուեցան, և բոլորին հասնելուն և կայսեր մատուցուելուն և նիստի առնուելուն պատասխանները ստացայ պալատան հաղարապետ կամ որքունեաց նախարար Ֆրիտրիխ (Friedrich) զօրավարէն։ Էջմիածնի հետ ալ թղթակցութիւնը անընդհատ պահեցի, թէ ըրածնիս հաղորդելով և թէ ընդդիմութիւնը քաջալերելով, որով կատարեալ ձեռնարկի մը կերպարանն առաւ թէ իմ առանձինն և թէ եպիսկոպոսական խումբին համերաշխութեամբ այս մասին թափած ճիգերնիս։

Պաշտօնական գրութեանց հետ անպաշտօն հրատարակութեանց միջոցն ալ գործածեցի։ Ինդիրին անցեալն ու ներկայն լուսաբանող, օրինական պահանջները բացատրող, նոր կարգադրութեանց անտեղի և անիրաւ կողմերը ապացուցանող գաղղիերէն լեզուով տետրակ մը խմբագրեցի, և հրատարակութեանը համար Պերլին ղրկեցի, ուր պարսկական դեսպանատան խորհրդական Մասեհեան Խանի ծախքով և ուսուցչապետ Փիլիպպոս Վարդանեանի հսկողութեամբ, և անանուն ձեւով ապագրուեցաւ, և Եւրոպիոյ ու Ամերիկայի ամէն երկիրներու կառավարութեանց, նախարարութեանց դեսպանատանց, կաճառներու և լրագիրներու ցրուեցաւ, և հանրութեան վրայ ազդեց, ռուսական կառավարութեան անտեղի արարքը ծանօթացուց, և քրիստ-

տոնէից պաշտպանութեամբ պանծացող տէրութեան հակաքրիստոնէական ընթացքը երեւան հանեց։ Այսպէսով ծանր մեղադրանքներ հրաւիրուեցաւ ռուսական պետութեան վրայ, որ իւր ըրածէն ամչնալ սկսաւ, և Իլէվէի մահուամբ ու Կալիցինի պաշտօնանկութեամբ ձախող ձեռնարկը իւր պաշտպաններն ալ կորսընցուց, խոհական տեսութիւններ զօրացան, և ճաբոնական պատերազմին անհպատ վախճանէն ծագած ներքին շփոթներն ալ վրայ հասան, և ռուս ու ճաբոն հաշտութիւնը չկնքուած, Ռուսահայոց եկեղեցական ինչքերուն մասին հրատարակուած վերջին կարգադրութիւնները յետս կոչուեցան, ստացութիւններ եւ մատակարարութիւններ ըստ առաջնոյն հայ հոգևորականութեան յանձնուեցան, և յանկարծօրէն յուզուած փոթորիկը դադրեցաւ։ Այդ բարեյաջող վերջաւորութեան մէջ, եթէ Մայր Աթոռոյ և բովանդակ Ռուսահայոց ընդդիմութիւնը իւր գլխաւոր դերն ունեցաւ, եթէ քաղաքական ու զինուորական դէպքերն ալ ազդեցութիւն գործեցին, տաճկահայ պատրիարքութեան և եպիսկոպոսութեան բարձրացուցած ձայնն ալ իրեն նշանակութիւնը ունեցաւ և յաջողութեան ապդուապէս սատարեց։ Եւրոպիոյ և Ամերիկայի հայ գաղթականութիւններն ալ լուռ չէին մնացած, սակայն անոնց գլուխը նուիրապետական կերպարան չէր գտնուեր, եւ ազդեցութիւնին ալ նոյն զօրութիւնը չէր կրնար ունենալ ռուսական կառավարութեան վրայ։

Այդ ժխորին ժամանակ Խրիմեան կաթողիկոս իւր յոռետեսութիւնն անդրադոյն եւս յառաջացնելով, սկսած էր կասկածիլ, որ մի՛ գուցէ ռուսական կառավարութիւնն իւր հակահայական շարժումը մինչև ծայրը մղելով Հայոց կաթողիկոսութիւնը ջնջելու եւ Մայր Աթոռը տապալելու հանի։ Ուստի Հայ Եկեղեցւոյ ապագայն խորհելով ինչ խորհուրդ կը հարցնէր, թէ ի՛նչ նախազգուշութիւն հնար էր ձեռք առնել, որպէսզի օր մը Հայ ուղղափառ Եկեղեցին անգլուխ եւ անտէրունչ ըլլալու վտանգէն ազատ մնայ։ Այդ հարցումին ետ գրաւոր պատասխանեցի յիշեցնելով Կիրակոս Վիրապեցիէն մինչև Մովսէս Տաթևացի էջմիածնի մէջ գործածուած միջոցը։ Խնդիրի նիւթ չեմ ուզեր ընել թէ ո՛րչափ օրինական եւ կանոնական էր լիագոյն իշխանութեամբ եւ օծմամբ ճոխացեալ աթոռակիցներ ունենալ Մայր Աթոռոյ աթոռակալին քովը։ Միայն յայտարարեցի թէ այն ժամանակ դըժ-

ռաբին և գրեթէ անհնարին նկատուած ըլլալով կաթողիկոսին մահուանէն ետքը կանոնական ընտրութիւն կատարել, գործնականապէս օգտակար եղած էր կաթողիկոսին կենդանութեան ատեն աթոռակից ընտրել և օծելը, որով և ոչ վայրկեան մը աթոռը թափուր մնացած չէր ըլլար, և աթոռակիցը անմիջապէս աթոռակալ կը դառնար։ Նոյն միջոցը ի դէպ էր այժմս ալ գործածել, և որպէսզի աթոռակիցը ռուսական ազդեցութեան ներքև չդտնուի, և գործածուելիք միջոցը աչքառու նորութիւն չդառնայ, դիւրագոյն ձև ցուցուցի Կիլիկիոյ կաթողիկոսութեան աթոռակալը Մայր Աթոռոյ աթոռակից հռչակել, որպէսզի եթէ երբեք Էջմիածնի կաթողիկոսը բռնութեան ենթարկուի, կամ մահուանէն ետքը նոր ընտրութեան արգիլմամբ աթոռը թափուր մնայ, Հայ Եկեղեցին իր գլուխն ու կաթողիկոսն ունենայ Ռուսաստանի սահմաններէն դուրս, որ կրնայ իւր իշխանութիւնը Ռուսահայոց վրայ տարածել, ինչպէս այժմ Ռուսաստանէ Տաճկահայոց վրայ կը տարածուի։ Իմ այդ առաջարկը մեռեալ տառ մնաց, զի մեր բանակցութեանց վրայ շատ չանցաւ, և եկեղեցական ատացութեանց միջադէպը յաջող կերպով փակուեցաւ, ինչպէս վերև պատմուեցաւ։ Իսկ այս միջադէպը յիշատակել պէտք չտեսայ, իբրեւ քիչ ծանօթ եղելութեան մը տեղեկութիւն, եւ գործնական կերպով նկատի առնուելու արժանի մի գաղափար։

ԿԲ

Դամասկոս, 1918 փետրուար 18/3 մարտ Կիր.

Մայր Աթոռոյ հետ յարաբերութեան մը միջադէպը պատահ կ'ընծայէ ուրիշ յարաբերութեան մը յիշատակութիւնն ընել։ Ժամանակէ մը իվեր ընդհանուր խօսակցութեանց եւ լրագրական յօդուածոց նիւթ եղած էր այրիացեալ քահանայից վիճակը, զորս իբր անտանելի եւ անելանելի կացութեան մատնուած կը նկարագրէին, եւ իբրեւ միակ դարման կրկնամուսնութեան արգ-

տօնութիւն տալը կը ցուցնէին։ Երբոր խօսքերը ընդարձակուեցան և Մայր Աթոռին դիմումներն ալ սկսան, կարծես թէ Երիմեան կաթողիկոսն ալ պահ մը զինջանելու միտք ունեցաւ, բայց առաջուց գլխաւոր աթոռներու կարծիքն ալ լսել ցանկաց, եւ Կիլիկիա ու Երուսաղէմ ու Կ. Պոլիս իր պաշտօնագիրները հասան։ Խապայեանի եւ Վեհապետեանի կարծիքները արտօնութեան հակառակ յայտնուեցան եւ հնաւանդ ցանկը խրատատել անճահ և անօգուտ համարեցան։ Նոյն եղած էր Կ. Պոլսոյ պատրիարքարանին Կրօնական ժողովով տուած պատասխանը, եւ որովհետև ես ինքս պրի առի ժողովական թուղթը, ներուի ինծի անոր ամփոփումը տալ իբրեւ անձնական յիշատակաց մաս կազմող նիւթ մը։

Նախեւառաջ իբրեւ փաստ առարկեցի Առաքեալին միոյ կնոջ այր ըսելը, ցրելով ոմանց մեկնութիւնը թէ խօսքը բազմակնութեան վրայ եղած ըլլայ, զի բազմակնութիւնը քրիստոնէից համար ենթադրելի իսկ չէ, և բոլոր եկեղեցիներ ի սկզբանէ և այսր յաջորդական կրկնամուսնութեան վրայ իմացած են, եւ երկրորդ ամուսնացողները՝ իբր անկանոն՝ ձեռնադրութիւն չեն ընդունած։ Այդ կողմէն բովանդակ քրիստոնէութեան համիմատ կանոնը ըստ ինքեան ալ յատուկ փաստ կը կազմէ։ Վերջապէս Առաքեալին խօսքը բաղդատութեան դրած եմ այրեաց համար կրկնած միոյ առն կին ղեալ կանոնին հետ, զոր հնար չէ երբեք բազմայրութեան վրայ իմանալ, որ ոչ մի կրօնքի մէջ ընդունուած չէր։

Առանձինն փաստի նիւթ ըրած եմ եկեղեցական պիտակին բայառիկ պատիւին փոխադարձաբար բայառիկ զրկում պահանջելը, որպէսզի եկեղեցականը հասարակ դասակարգէն վեր մնայ, եւ ժողովրդականաց վայելած դիւրութիւններէն զրկուելով իւր բարձրութիւնը պահէ, ինչ որ տեղի կ'ունենայ նաև զբօսարաններ եւ սրճարաններ չյաճախելովը, եւ թատրոններէն զրկուելովը, որոնք ըստ ինքեան արգիլեալ կամ ապօրէն գործեր չեն, բայց եկեղեցականներու թոյլատրուած չեն, միայն դասակարգի պատիւին համար։

Այրի քահանայից վիճակին իբրեւ դարման եւ անժոյժ կուսակրօններու ձգտումներուն իբր յապուրդ՝ բաց թողուած է վերստին կամ նոր ամուսնութիւնը, միակ պայման ունենալով եկեղեցական պաշտօնավարութենէ եւ եկեղեցականութենէ հրա-

ժարիլ։ Իսկ կամովին հրաժարիլը իբր յանցանք կամ իբր անպատուութիւն նկատուած չէ երբեք, միայն թէ տեղի չունենան այնպիսի պարագաներ որոնք պարզ աշխարհականներու վրայ ալ անպատուութիւն կամ յանցապարտութիւն կը հրաւիրեն։ Իսկ եթէ լսուի որ քահանայութենէ դուրս չահուելու եղանակ չենք գտներ, շատ անհիմն պատճառանք մը եղած կ'ըլլայ, վասնզի ենթադրելի իսկ չէ որ քահանայութիւն վարելու կարող անձ մը ուրիշ որևէ գործի կամ պաշտօնի անկարող ըլլայ։

Դիտել տուած էի ես, որ եկեղեցականութիւնը օրինական պարտք մը չէ, այլ կամաւոր յանձնառութիւն է, եւ կամովին յանձնառու եղող անձը պէտք չէ դժուարի յանձնառութեան պայմաններուն ալ ենթարկուելու։

Նկատողութեան արժանի կէտ ըրած էի ես քննել թէ քանի՞ներ պիտի ըլլան այդ արտօնութենէ օգտուողները։ Եկեղեցական կանոնը մերձաւորաբար երեսնամեանները կ'ընդունի քահանայական ձեռնադրութեան, իսկ քառասունէն ետքը կրկնամուսնութեան դիմող աշխարհականներն անգամ իբր անժոյժ կը նկատուին եւ համակիր աչքով չեն նայուիր։ Ուստի բոլոր խնդիրը կ'ամփոփուէր երեսունէ քառասուն տարիքին միջոցները այրիացողներուն, որոնք բազմաթիւ չէին կրնար ըլլալ. և եկեղեցւոյ սկիզբէն եւ ամէն եկեղեցիներէ յարգուած ու պահուած կանոն մը սակաւաթիւ անձերու դիւրութեան համար եղծանել ո՛չ պատչաճէր և ո՛չ իրաւացի։ Թող որ սահմանելու համար եկեղեցականութենէ հրաժարելով պատուաւոր ամուսնութիւն կնքելը օրինապէս թոյլատրեալ և բաւարար դարման է։

Իսկ անոնց որ կ'առարկեն թէ պսակն ալ սուրբ խորհուրդ է քահանայութեան հաւասար, և ինչու անտեղի պէտք չէ համարուի քահանայութենէ ետքը պսակի խորհուրդը ընդունիլ, ինչպէս պսակէ ետքը քահանայութիւնը կ'ընդունուի, պատասխանած էի՝ թէ եկեղեցւոյ ընդհանուր ըմբռնումին մէջ երկրորդ պսակը միշտ նուազ համակիր աչքով նկատուած է, երկրորդ պսակի արարողութիւնն ալ տարբեր և անշուք է, և եկեղեցական կանոնը այրիներու գլուխը պսակ դնել կ'արգիլէ, եւ ուռենուոյ ոստով փոխանակել կը հրամայէ։ Հետևապէս խորհուրդներու հաւասարութեան տեսակէտէն անկախաբար, ինչու դժուարութեան տեղի չի տար ձեռնադրութենէն ետքը պսակադրու-

թեան անցնողներուն համար օրինադրուած եկեղեցականութենէ հրաժարելու պայմանը։ Միւս կողմէն խնդիրի նիւթ կրնայ ըլլալ խորհուրդներուն համահաւասար ըլլալը, զի իւրաքանչիւր խորհուրդին նշանակութիւնն եւ յարգանքը աներկբայաբար իրարմէ կը տարբերին։

Նոյն պաշտօնագրին մէջ մտադրութիւն հրաւիրած էի սա կէտին վրայ ալ, թէ կրկնամուսնութեան հետ անբաժան պիտի ըլլար սիրահարութեան պայմանը, հաճելի եւ յարմար զուգակից մը ընտրելու իրաւունքը, ինչ որ բնաւ չէր յարմարեր խոստովանութեան գաղանիքներուն եւ խիղճի ծածուկներուն հետ ընտանութիւն ունեցող անձերու, եւ կրնար շատ ու շատ կասկածներու եւ գրոյցներու, անտեղութեանց եւ ապօրինութեանց դուռ բանալ, եւ կարի լմաստութեամբ հաստատուած էր այս ամէն անյարմարութեանց հանդէպ դուռերը փակ պահել։ Ոմանք իբրեւ այդ դժուարութեան լուծում ելան առաջարկել, որ այրի քահանաներ այրի երէցկիներու հետ ամուսնանալու արտօնուին, սակայն այդ պարագային մէջ ալ ամուսնութեան իսկութիւնը կը խանգարուէր որ ապատ ընտրութեան վրայ հաստատուած է, եւ պարտաւորեալ ամուսնութիւնը եկեղեցականութենէ հրաժարելու պայմանէն շատ աւելի ծանր գրկում եւ բռնադատութիւն եղած կ'ըլլար։

Կաթողիկոսի յղուած պաշտօնագիրին պատճէնը աչքի առջեւ չունենալով, միայն յիշողութեամբ կազմեցի սոյն ամփոփումը, որ կրնայ մոռցուած կէտեր ալ պարունակել։ Մեր պաշտօնագիրը միւս աթոռներուն գիրերուն եւ զանազան կողմերէ կրկնուած ձայներուն միանալով, Խրիմեան կաթողիկոսը չքաջալերեցին ոմանց բաղձացած արտօնութիւնը հրատարակել։ Կ. Պոլսոյ Կրօնական ժողովն ալ կարգալոյծ հռչակեց Բաղէշի վիճակէն երկու այրի քահանաներ, որոնք շտապեր էին իրարու կրկնամուսնութիւն օրհնել։

Դալով Խրիմեան կաթողիկոսի անձնական միտումներուն, ամենուն յայտնի է, թէ նա առանց եկեղեցական կանոնաց անարգող մը ըլլալու, շատ ազատական աչքով կը նայէր անոնց վրայ, եւ գիւրամատոյց էր սեղմումները ընդլայնելու կամ ջնջելու։ Իրեն տեսութեամբ Շաբաթ վասն մարդոյ եղեւ եւ ոչ մարդ վասն շաբաթու սկզբունքը շատ ընդարձակ եւ գրեթէ բացարձակ նշա-

նակութիւն ունէր։ Ծանօթ է թէ իր ձեռքով ամուսնալուծութիւններ բաւական ընդարձակութիւն ստացան, և երբ այդ մասին իրմէ հիմնական տեսութիւններ խնդրեցի, «Իմ օրինագիրքը իմ սիրտն է» պատասխանը առի, որ Խրիմեանի ըմբռնումին նկարագիրը կրնայ նկատուիլ։ Խրիմեանի նախաձեռնութեամբ ազգակցութեան ու խնամութեան աստիճաններն ալ սեղմուեցան, և հա ալ պատրիարքութեանս միջոցին ուելի ոյժ տուի այդ կրկնակ կէտերուն, զի երկուքին մէջ ալ իմ համոզումս էր, թէ Հայ Եկեղեցւոյ հնաւանդ կանոնը թոյլատու է եղած, եւ սեղմումները լատինական ազդեցութեամբ ներմուծուած են կիլիկեան եւ խաչակրութեան շրջանին մէջ։ Կրօնական ժողովէն Մանկունի եպիսկոպոս, Գէորգ Դ.ի ժամանակին Մայր Աթոռոյ գործիչը, առաջները ամուսնալուծմանց խնդիրները կը պնդէր որ էջմիածնի ներկայացուին, ենթադրելով որ Գէորգ Դ.ի հետեւած խիստ արգելքները տակաւին հոն տիրող կը մնան։ Բայց երբոր տեսաւ որ Խրիմեան շատ թոյլատու է այդ մասին, լաւագոյն սեպեց մեր Կրօնական ժողովով գործել. իսկ իւր առարկութեանց իրր փաստ կը ծառայեցնէր Գէորգ կաթողիկոս չէր ներեր յայտարարութիւնը, մինչեւ որ ստիպուեցաւ Մկրտիչ կաթողիկոս կը ներէ պատասխանը տալ։

Բայց իմ բուն փաստս Մկրտիչի կամքը չէր, այլ Հայ Եկեղեցւոյ հնաւանդ կանոնը։ Ազգակցական արգելքի մասին Շահապիվանի ժողովը երեք ճիւղ միայն կը դիշէ, և խնամութեան խօսքն իսկ չ'ըներ, և ինձի համար վճռական և նուիրական է Հայ Եկեղեցւոյ կանոնները գիրի առնող ժողովին որոշումը, անկէ ետքը եկողներ օտարամուտ բարդութիւններ են։ Ամուսնալուծման կանոններ ալ հին ժողովներու մէջ, և Աւետարանին Զոր Աստուած զուգեաց մարդ մի՛ մեկնեցի պատուիրանը, Հին Օրէնքի մէջ թոյլատրուած այրերուն կնաթողութիւնը կամ ապահարզանը միայն կը ջնջէ, որպէսզի օրէնքով հաստատուած կապը ազատ կամքով չքակուի, այլ չ'արգիլեր օրէնքը օրէնքով քակել. Աստուած օրէնքն է, մարդ ազատ կամք ունի։ Այս սկզբունքով վարուած եմ պատրիարքութեանս մէջ, ամուսնալուծումները ժողովով որոշել տուած, իսկ ազգակցական և խնամիական աստիճանները՝ իրրև արտօնութեան եւ շնորհքի իրաւունք՝ իւրովի կարգադրած եմ, ներելով եւ ոչ օրինադրելով։ Ընդհանուր կերպով շատ հե-

տեւած եմ ազատ կացութիւնները և գայթակղական դիպուածները մաքրել եւ օրինաւորութեան վերածել, զոր միտքերը շինելու եւ հանդարտելու աւելի նպաստաւոր գտած եմ, քան թէ տարապարտ խստութիւններով գայթակղութիւնները տեւական ընել և զօրացնել:

Այդ սկզբունքները իմ միտքիս մէջ շատ կանուխէն հաստատուած են: Կարնոյ առաջնորդութեանս միջոցին ալ Գաւառական Կրօնական ժողովով ամուսնալուծութիւններ որոշած եմ. միայն տիրող սովորութիւններն ալ յարգելու համար, որոշումները կեդրոնին տեղեկագրած և պայմանաժամով գործադրութիւնները յապաղած եմ, և կեդրոնին լռելուն վրայ պայմանաժամին լրանալուն համաձակաբար գործադրած եմ: Իսկ ազգակցական աստիճաններուն ներումը միշտ առաջնորդական իրաւամբ իւրովի արտօնած եմ: Եւ այդ մասին այսչափ:

ԿԳ

Դամասկոս, 1918 փետրուար 19/4 մարտ Բշ.

Պատրիարքութեանս նշանաւորագոյն պարագաներէն մին նըպաստից գործն եղած է, որ բոլոր յառաջագոյն ձեռնարկուած նպաստից գործողութիւնները գերազանցեց, և իրմէ ետքն ալ մրցող և անցնող չունեցաւ, զի իբր 83,000 օսմ. ոսկւոյ գումարը ոչ մի նպաստից ձեռնարկ հաւաքած և բաշխած չէ մեր պատրիարքարանի շրջանակին մէջ: Ես նպատակ չունիմ այդ գործողութեան լիուլի տեղեկագիրը տալ, զայն արդէն տուած եմ Նպաստից Յանձնաժողով ստուար տետրակով, որ կը պարունակէ գործին պատմականը, հանգանակութեանց մանրամասնութիւնները, կիրառութեանց տեղերն ու կերպերը, և բոլոր ելևմուտքին ճիշդ ու ճիշդ գումարները ու ցուցակները, և մէկ անգամ հրատարակուածը միւս անգամ կրկնել աւելորդ կը նկատեմ: Թող որ ուզելով ալ պիտի չկրնայի ընել, քանի որ աչքի առջև չունիմ ո՛չ հաշուետոմարները, ո՛չ տեղեկագիրները և ո՛չ թղթակցու-

թիւնները. հետևապէս պիտի գոհանամ յիշողութեամբ բացատրել թէ ի՛նչ ուղղութեամբ գործուեցաւ և ի՛նչ կերպեր գործածուեցան։

Երբոր պատրիարքական պաշտօնին ձեռնարկեցի, կոտորածներու հետևանօք գաւառներու մէջ տիրած խեղճութիւնը անպատմելի էր. ամէն կողմ որբեր, այրիներ, հաշտակարօտներ, գրեթէ մերկեր, որոց ո՛չ թիւը հնար էր ճշդել և ո՛չ պէտքերը կշռել։ Նոր Վարչութեան և նոր պատրիարքի ներշնչած ակնկալութիւնն ալ դիմումները զօրացուցած էր. և խնդրանքներ, աղերսագիրներ ու տխուր նկարագիրներ տեղատարափ սկսան հասնիլ։ Նպաստի գործողութեան սկզբնաւորութիւնը Իզմիրլեանի պատրիարքութեան օրով հաղիւ ձեռնարկուած էր։ Զամիչեանի տեղապահութեան օրով չարունակած էր նուազ չափով, այնպէս որ խեղճութիւնը ու կարօտութիւնը իւր կատարեալ վիճակին մէջ կը ներկայանար տակաւին։ Նոր պաշտօնէութիւնը չէր կրնար իւր մտադրութիւնը չնուիրել այդ կացութեան։ Իրաւ նպաստի պետական Յանձնաժողով մը ալ կազմուած էր, բայց նա երկիրը իւր ամբողջութեամբ կարօտութեան մատնուած նկատելով, մասնակի օգնութիւն միայն ըրած էր Հայերուն, եւ արդէն իւր գործունէութիւնն ալ դադրեցնելու մօտ էր։

Ընդհանուր և բաւարար ձեռնարկ մը կազմակերպելու համար, Վարչութիւնը Կեդրոնական Յանձնաժողով մը ընտրեց և անդամակցութեան հրաւիրեց գործունէութեամբ և արդիւնքով ծանօթ անձնաւորութիւններ, որոնք իսկոյն պետական արտօնութեան և հաստատութեան պայմանը մէջտեղ դրին, կառավարութեան առջև օրէնքի հակառակ գործած չերևալու համար։ Սակայն պէտքը սոսկալի էր, պետական հաստատութիւնը ժամանակի կարօտ էր, չնորհուիլն ալ կասկածելի էր. արդէն առաջին մէկ դիմումին, պետական Յանձնաժողովին մէջ պատրիարքարանի կողմէ երկու երեք հայ անդամներ ուելցնել պատասխանուած էր։ Խոհական անձեր մինչև իսկ զիս համոզել կը ջանային առանց պետական հաստատութեան հրապարակ չիջնել։ Եթէ այդ խորհուրդին անսայի, խնդիրը թաղել կ'ըլլար, և խնդիրին հետ ազգին կարօտութիւնն ալ և կարօտեալներու բազմութիւնն ալ։

Ո՛չ սիրտ, ո՛չ պարտք չէին ներեր հոգածութիւնը յետաձգել, ուստի 1896 դեկտեմբերէն սկսայ մասնաւոր դիմումներով նպաստ-

ներ ճարել, և անմիջապէս չրջաբերական կոնդակ մըն ալ ցրուեցի մայրաքաղաքին և անփորձ մնացած գաւառներու, և յատուկ գիրեր ալ հացուցի արտասահմանի դաղթականութեանց և հասարակութեանց, և իւրովի գործին գլուխը անցայ։ Սակայն լաւ չէր բոլորովին անհատապէս գործել, ուստի Վարչութեան առաջարկեցի անպատճառ Յանձնաժողով մը կազմել, և յաջողեցանք դրամատէր չրջանակէն երիտասարդ ոյժեր գործակցութեան հրաւիրել, որոնք սակայն պայման դրին ո՛չ պաշտօնական դեր ստանձնել, ո՛չ գիր ստորագրել, և ո՛չ վարչական կազմակերպութիւն ունենալ, այլ լոկ իբրեւ խորհրդականներ հաւաքմանց ու բաշխմանց մասին խորհրդակցիլ եւ կարծիք տալ, մուտքին ու ելքին հակակշիռ ըլլալ, և տեսրակներու ու ցուցակներու, հաշուետոմարներու եւ թղթակցութիւններու հետեւիլ և հսկել։ Այս կերպով թէպէտ պատասխանատուութիւնը ամբողջապէս իմ վրայ կը ծանրանար, սակայն ես ալ հսկողներու ընկերակցութեամբ ծանրութիւնը կը թեթեւցնէի, և վստահութիւն կ՚ուեղցնէի հանրութեան առջեւ, որ անկախաբար անձնաւորութեանց տեսակէտէն՝ սովոր է միշտ կասկածով վերաբերուիլ միոյ միայնոյ կողմէ անհատաբար կատարուած գործողութիւններուն, մանաւանդ դրամականներուն հանդէպ։ Ըստ այսմ իր տեսակին մէջ եզակար և անօրինակ էր Նպատակից Յանձնաժողովին դրութիւնը, ո՛չ պետական հաստատութիւն ունէր, եւ ո՛չ ազգային կատարեալ կազմակերպութիւն, ներքնապէս ամբողջաբար իմ անհատական գործն էր, բայց արտաքնապէս վստահելի մարմինի մը գործն էր. եւ այս ինձի կը բաւէր գործը յառաջացնելու և ուճեցնելու, վի ո՛չ թէ աշխատանքէ կը խուսափէի, այլ միայն հանրութեան աչքին առջեւ կասկածի տեղի չտալ կ՚ուզէի։

Նպատակից գործին կազմակերպութեան նման յատուկ և ինքնատիպ էր գործունէութեան կերպն ալ։ Ես ինքս էի ատենապետը, ատենադպիրը, գանձապետը, համարակալը, գործակատարը, և ամէն պաշտօնագիր ստորագրողը՝ լոկ պատրիարքութեան կերպարանով։ Տպագիր տոմս ու անդորրագիր ու ազդարարագիր բնաւ չգործածուեցան, նուէրներու ստացութիւնն ալ օրհնաձայն ձեռագիր նամակներով կը ծանուցուէր, և Նպատակից թղթակցութիւնը 25է աւելի ընդօրինակութեան տոմարներ կազմած է պատրիարքարանի մէջ, զորս զիւանական պաշտօնեաներ սիրայօժար

ղրած են, իրենք ալ իրենց ուելորդ աշխատութիւնը նուիրելով նպաստից ձեռնարկին։ Հաշուները ես ինքս կը բռնէի կրկնատամարի ձեւով, բայց և միանգամայն հաշուեառմար մը հաստատած էի պատրիարքարանի համարակալութեան մէջ, և վաւերագիրները համարակալին կը հաղորդէի, որ ինքն ալ զատաբար հաշիւ կը բռնէր, և երկու երեք շաբաթը անգամ մը գումարները կը բաղդատէինք ապահովութեան համար։ Հատած գումարները պահելու համար նախ Յովհաննէս եւ Մարթէն Յակոբեան եւ յետոյ Թագուոր և Եղուարդ Փարակէօղեան դրամատուններուն կը յանձնուէին, տոկոսաբեր պայմանով, որոնք սակայն կը զգուշանային իրենց տոմարներուն մէջ Նպաստի կամ Յանձնաժողովի յիշատակութիւն նշանակել, և պարզապէս յանուն Օրմանեան պատրիարքի հաշիւ բացած էին, որեւէցէ առթիւ պատասխանատուութենէ զերծ մնալու համար։

Պետական արտօնութիւն ո՛չ խնդրեցի և ո՛չ ստացայ, և դրածը ծանօթ ըլլալով մէկտեղ կառավարական արգելք չունեցայ, և մինչև իսկ կայսրէն ու Պետական Յանձնաժողովէն գումարներ ձեռք ձգեցի։ Ընդհանուր վստահութիւն մը կար թէ ես անուղիղ նպատակներու գործածող չեմ, որովհետև գլխաւոր երկիւղը նպաստի անունով հաւաքուածը գէնքերու կամ կուսակցական շարժումներու գործածելու կասկածն էր։ Իրօք ալ կուսակցականներէ և ուրիշներէ անուղիղ կիրառութեան փափաքներ յայտնուած են, բայց եւ ո՛չ դանդ մը իւր բուն նպատակէն օտար նպատակի ծախսած եմ։ Կէս պաշտօնական ձեւով արտօնութիւն խնդրելու և շնորհելու իսկ թելադրութիւններ եղան, որոց պատասխանած եմ թէ իմ ըրածս ողորմութիւն տալ է, և ողորմութիւն տալ եկեղեցական կոչումիս բնածին իրաւունքն է, իսկ տալու համար հարկաւ ունեցողէն պիտի առնեմ որ չունեցողին տամ։

Նպաստի գումարներն ամէն կողմերէ հասած են, ուր ուրեք որ հայութիւն գտնուած է։ Օտարազգիներէ ալ եկած են, բայց շատ չափաւոր քանակութեամբ։ Գումարները դասաւորուած են տեղերու տարբերութեամբ, այսինքն՝ մայրաքաղաք, գաւառներ, օսմանեան կայսրութենէ զատուած իշխանութիւններ, Ռուսաստան, Պարսկաստան, Հնդկաստան, և Եւրոպայի տէրութիւններ զատ զատ, եւ Ամերիկա։ Սոնց մէջ ամենէն առատաբար տուողը

եղած է Ռուսաստան և յատկապէս կովկասեան շրջանակը։ Հաստոյթներուն խառնուած են ինչինչ մանուոր գումարներ ալ, որոնք յատուկ նպաստով հաւաքուած են նոյն միջոցին. բայց միշտ նպաստի սկզբունքով։ Ցանձնաժողովի գործառնութեանց հրատարակուած Տեղեկագիրը տեղերու և տնտակներու հիմամբ և յատուկ սիւնակներով կը ցուցնէ բոլոր հաստոյթները՝ տարիներու բաշխմամբ. 1896 դեկտեմբերի գործառնութիւնները 1897 տարեոյն մէջ խառնուած են, իսկ վերջին 1908 տարեոյ հաշիւը կէս տարի միայն կը պարունակէ մինչև յուլիսի մէջ՝ հրաժարականիս օրը։ Հաստոյթներու կարգին անցած է դրամատուններէ գանձուած տոկոսն ալ։ Հաշուեփակին երեք հոգար ոսկիէ աւելի պատրաստ գումար մը կար, զոր ամբողջապէս հրաժարականիս յաջորդող տեղապահութեան փոխանցեցի, չնայելով որ պատրիարքարանի ընտուկին վրայ եօթը հարիւր ոսկիէ աւելի պահանջ ունէի, բայց խնդիրը նպաստի գումարը ուրիշ հաշիւի փոխանցել, նոյնիսկ անձնական զրկումի ենթարկուելով, վի յաջորդող պատրիարքներ և վարչութիւններ զլացան արդար պահանջս ալ վճարել։

Կիրառութեան նպաստակներն ալ զանազան ճիւղերու բաժնուեցան, որոնց մէջ առաջին պէտք էր ըլլար հայակարօտ ժողովուրդին կենսական պէտքը։ Իրաքանչիւր վիճակի համար առաջնորդի կամ տեղապահի նախագահութեամբ յանձնաժողովներ կազմուեցան, որոնց կը յղուէին համեմատական գումարները յատուկ հրահանգներով։ Գլխաւորապէս կը յանձնարարէի ձեռքէ մանր գումարներ չյանձնել, այլ կամ ուտեստի և զգեստի նիւթեր բաշխել, որպէսզի տարբեր նպատակներու չգործածուին, և անկէ աւելի հողագործին և արհեստաւորին աշխատելու և շահելու և մնայուն հաստոյթ հայթայթելու գործիքներ և միջոցներ հոգալ, որով արուած նպաստը դրամագլուխի բնութիւնը կ'ըզգենուր և հաստատուն եկամուտի աղբիւր կը դառնար։ Սառաեւլապէս օգտուողներ եղան Կարնոյ և Վանայ և Բաղէշի կուսակալութեանց և Կիլիկիոյ կաթողիկոսութեան վիճակները. ուրիշներ ալ զուրկ չմնացին, մինչև իսկ երբեմն ալ մայրաքաղաքի մօտաւոր վիճակներու ալ օգնել հարկ եղաւ, երբոր ստիպողական պարագաներ ծագեցան։ Կիրառութեանց ուղղութիւնը քննել կարենալու համար բաշխման ցուցակներ կը պահանջէինք և կը ստանայինք, և գաւառական յանձնաժողովները ծանօթ և վկայ-

եալ անձերէ կը կազմէինք, զի ասկէ աւելի զգուշութիւն ընել չէինք կարող։ Երբեմն խորհուեցաւ քննիչներ հանել, սակայն իմ գաղափարս եղաւ թէ քննիչներու ծախքը պատահական զեղծումներէ աւելի պիտի նստէր Նպաստից սնտուկին, և քննիչներ ալ վերջապէս որեւէ անձեր պիտի ըլլային, ընդհանուր տկարութեանց ենթարկեալ, և բարեկամութեանց և շահեցողական նըկատմանց զգացումներէ ոչ ազատ։

Երկրորդ և աւելի կարեւոր ճիւղը կազմեցինք որբանոցներով, զի որբերու թիւը՝ զանազան տեղեկագիրներով՝ 50,000է շատ աւելի կը ցուցուէր։ Իւր որբ կը նկատէինք երկու ծնողներն ալ, կամ հայրենին կորանցողները, և կամ ինքզինքին իսկ ապրեցնելու անկարողներու զաւակները։ Որբերը ապագայ սերունդին կազմողները պիտի ըլլային, և պակասողներուն տեղը պիտի լեցնէին, և ազգութեան մնացած յոյսերն էին, և կարեւոր տարր մը կը կազմէին յատուկ խնամոց արժանի։ Առաջնները խորհուեցաւ որբերը գաւառներէն բերել և մաս մըն ալ բերուեցաւ, ու Ս. Փրկչեան Որբանոցը, Սրմաչի Դպրեվանքը, Զմիւռնիա և Անդրիանուպոլիս քաղաքները զետեղուեցան. բայց շուտով տեսնուեցաւ որ այս կերպով ընդհանուր պէտքը հոգալ անհնարին է, ուստի որոշուեցաւ նոյնիսկ իւրաքանչիւր վիճակի համար տեղական դպրոցներ բանալ, մինչև 40-50 տղու բաւական։ Ընդհանրապէս նախագուսուեցաւ որբանոցները զետեղել մօտաւոր վանքերու մէջ և անոնց հասոյթներն ալ օգտակար ընել, կարաւին տեղւոյն մէջ հոգալ, չորս չորս տարի պայմանաժամ որոշել, մինչեւ որ տղայք աշխատելու բաւական ըլլան, և նախակրթական կարեւորագոյն ուսմանց հետ արհեստի մը վարժեցնել տեղական յարմարութեանց համեմատ, որպէսզի որբանոցէ ելնելնուն ինքզինքին հոգալու միջոցներ ունենան։ Թէ՛ նախակրթական ուսմանց և թէ՛ արհեստներու վարժութեանց համար յատուկ հրահանգներ ալ խմբագրուեցան և ցրուեցան։ Կեդրոնէ տղոց թիւին հաշուով ամսականներ որոշուեցան, որոնք երկամսեայ պարբերականութեամբ կանոնաւորապէս կը յղուէին։ Ներքին դասակարգութեան համար տեսուչ մը և օգնական մը կը նշանակուէին վիճակին մէջ տրամադրելի վարժապետներէ. իսկ մատակարարութիւնը կը յանձնուէր Կեդրոնէ ընտրուած հոգաբարձութեան մը, խնամածու և խղճամիտ անձերէ կազմուած, որչափ որ հնար էր

տեղւոյն վրայ գտնել։ Հսկողութիւնը կը կատարուէր պարբերական հաշիւներ և տեղեկագիրներ պահանջելով, և եկածները մըտադրութեամբ քննելով, և դիտողութիւններ ընելով։ Որբանոցները սովորաբար չորս տարի պայմանաժամով կը փակուէին, տրամադրելի գումարները ուրիշ վիճակի օգտին գործածելով։ Շատ քիչեր ժամանակէն առաջ փակուեցան անախորժ միջադէպներու պատճառով. իսկ քանիներ ալ չորս տարիէն աւելի պահուեցան, գլխաւորապէս գաւառագլուխ քաղաքներու մէջ հաստատուածները։ Որբանոցներէն շատերը նպաստից անտուկին ընդհանուր հաստոյթներուն հաշուով բացուած էին, բայց կային եւ յատուկ բարերարներու հաշուոյն բացուածներ, ինչպէս Մոսկուացի խմբապրապետ Գրիգոր Զանչեանցի հաշուոյն բացուածները, Խրիմեան կաթողիկոսի յանձնառու եղածները, և Ամերիկայի գաղթականութիւններէ ոմանց իրենց հայրենական երկրին համար հիմնել ուզածները։ Գաւառական որբանոցներու թիւը քառասունի մօտեցաւ, և իւրաքանչիւրէն խմբական լուսանկարներ բերել տալով պատրիարքարանի ննջասենեակիս որմերը զարդարած էի անզգոյշ աչքերէ հեռու պահելու համար։

Որբանոցներէ ետքը կուգային վարժարաններ. առաւելապէս անոք և անօգնական տղոց հոգածութեան նպատակով։ Ուստի նպաստից վարժարանները ջանացինք բանալ յետ ինկած և ամէն միջոցներէ զուրկ գիւղերու մէջ, տեղացին հրաւիրելով տեղը հոգալ, և վարժապետին անունդին օգնել տեղական բերքերով։ Բարձր ուսումը նպաստից նպաստակէն դուրս թողուցինք, նկատելով որ ուր թուխ հացի կարօտութիւն կայ ճերմակ հացի ետեւէն ըլլալու չէ։ Ուրախութեամբ տեսնուեցաւ որ նպաստից օգնութեամբ վարժարան մը ունենալու փափաքը շատ գիւղեր յօժարակամ պատրաստութեանց յորդորեց, և մենք չկասեցանք առաւելապէս այսպիսիները քաջալերել, և լոկ վարժապետի ամսականը և գիրք հայթայթելով գիւղական վարժարաններ բաղմացընել, որոնք վաթսունէ աւելի եղան։ Երբոր Միացեալ Ընկերութեանց և Ազգանուէր Հայուհեաց կազմակերպութիւնները խափանուեցան, նպաստից անտուկը ստանձնեց այդ վարժարաններուն ալ հոգածութիւնը, ընկերութեանց սեպհական գումարներու և նպաստներէ տրամադրուած յաւելումներու արդիւնքով։ Այս վարժարանները պէտք էր որ իրենց աւելի բարձր դիրքը պահէին,

և այդ եղաւ պատճառը որ երկու ծանօթ ուսուցչապետներ նըպաստից Յանձնաժողովին անդամակցութեան հրաւիրուեցան։ Իսկ հասարակ գիւղական վարժարաններու ծրագիրը որբանոցներու վարժարաններուն ատիճանին վրայ պահուեցան։ Վարժարաններու մէջ ալ եղան այնպիսիներ, որոնք իրենց գաղթական տեղացիներուն նուէրներով պահուեցան, գլխաւորապէս Հիւսիսային Ամերիկայի քանի չափ քաղաքներէն այս նպատակով նպաստներ ստացուած են։

Առանձին ճիւղ մըն ալ բացուեցաւ առաջնորդարաններու նպաստելու համար։ Առաջնորդ մը կամ տեղապահ մը անհրաժեշտ պէտք մըն է վիճակի մը համար, թէ՛ գործոց կանոնաւորութեան և թէ՛ շահերու պաշտպանութեան տեսակէտէն։ Սակայն վիճակներ և վիճակայիններ իրենց դիրքը կորուսած էին, և չէին կրնար գացողին հրովարտակին տուրքը վճարել, ոչ ալ ուղեւորութեան ծախքը հոգալ, մինչև իսկ շատ տեղ և ո՛չ իսկ անունդին պիտոյքը ապահովել։ Այդ կացութեան հանդէպ իսկայն հարկ կը դառնար յիշեալ պէտքեր նպաստից մնացուկէն հոգալով առաջնորդներ եւ տեղապահներ յղել վիճակներու կառավարութեան և միխիթարութեան համար, և չվարանեցայ այդ նպաստը ընձեռել քանի քանի վիճակներու համար։

Այդ չորս գլխաւոր ճիւղերէ դուրս եղան ինչինչ մասնաւոր նպաստներու գործեր ալ, զորս նոյն մնացուկը ստանձնեց և կատարեց. այլ այստեղ յիշել պանց կ'ընեմ յատուկ ճիւղեր չկազմելնուն համար։ Յանձնաժողովի Տեղեկագիրին մէջ կը գտնուին անոնց մանրամասն բացատրութիւնները, ինչպէս նաև իւրաքանչիւր որբանոցի և վարժարանի բացման և փակման թուականները, ծախսուած գումարները, և ստացուած արդիւնքները։ Հետաքրքիր եղողը բոլոր այս պարագաներու համար կրնայ իւր բաղձանքին յագուրդը գտնել Նպաստից Յանձնաժողովի ընդարձակ Տեղեկագիրին մէջ, զոր հրատարեցէս քիչ օր ետքը հրատարակութեան տուի, և որով լուեցին նպաստից մնացուկէն 20-30,000 ոսկիներ խորած եւ իւրացուցած ըլլալու քմահաճ և կամակոր զրոյցները։ Միայն աւելցնեմ թէ նպաստից գործառնութեանց ներքին ծախքերը բաղդատաբար դոյզն գումար մը կը կազմեն, և նամակատանց և հեռագրութեանց, փոխանակագրութեանց ու քանի մը տպագրութեանց ծախքերէն անդին չեն անցնիր։

Նպատակից գործին ընդարձակութիւնը թերեւս աւելի ընդարձակ տեղեկութիւններ կը պահանջէր, սակայն հատուածիս համար իմ որոշած նպատակը շատ ամփոփ էր, միայն իմ գործունէութեանս չափն ու ընթացքն ու հոգին բացատրել։

ԿԴ

Դամասկոս, 1918 փետրուար 20/5 մարտ Գշ.

Խեղճութեանց և կարօտութեանց շրջանի մէջ հնար չէր նորոգութեանց և յարդարմանց չինարար ձեռնարկներու ետեւէ ելլալ. սակայն բոլորովին ալ զանց ընել արժան չէր, մանաւանդ որ եւ երբ վայելչութիւն և պէտք անհրաժեշտ հարկ կը դառնային։ Ուստի իմ պատրիարքութեան օրով ալ ինչինչ չինութիւններ տեղի ունեցան մայրաքաղաքին մէջ, զորս յիշատակել աւելորդ չեմ սեպեր։ Հարկաւ չ'ենթադրուիր որ ես այդ ձեռնարկները իմ կողմէ կատարուած կարծեմ, իմ դերս եղած է յորդորել, համոզել, քաջալերել և հսկել։

Առաջին պէտքը որ աչքի կը զարնէր նոյնիսկ պատրիարքարանի անշուք կերպարանն էր. չինուածը քննութեամբ ամուր և տոկուն հաստատուեցաւ, սակայն նեղ էր և ինչինչ մասեր ոձև, շատ մասեր աւեր և կարասին հնոտի։ Հին գաղափարն էր ի հիմանց նոր պատրիարքարան կառուցանել և այս նպատակով գընուած էին պատրիարքարանի պատկից Փափազեան ճանիկ ամիրայի լքեալ ապարանքը և Երուսաղէմատան կողմը գտնուող խեղճ տնակը, որոնք բաւական ժամանակէ իվեր պանդուխտներու աղտոտ օթեւան դարձած էին։ Իմ տեսութեամբ նոր պատրիարքարան կառուցանել աւելորդ ծախք էր. նոր նմանօրինակ չինուած մը առաջինին հնութեան յարգն ալ պիտի չունենար, փառաւոր չինուած մը աւելորդ զոհողութեանց դուռ պիտի բանար։ Ուստի հղածը կոկիլու որոշումը տուի, յատուկ հանգանակութիւն բացի անտուկին չծանրանալու համար, և պէտք եղածը լրացուցի, ինչպէս ներքին կարգադրութեանց հատուածին

մէջ բացատրեցի (§ ԾԲ)։ Նորոգութեանց ձեռնարկուեցաւ 1901 փետրուար 26|11 մարտին, և աւարտեցան մարտ 24|6 ապրիլին, ամսուան մը միջոցին մէջ, զանազան մասերը միանգամայն սկսելով և արհեստաւորաց թիւը աւելցնելով, որով ապրիլ 1|14 Զատիկին օրը չքեղազարդեալ պատրիարքարանը ուշքի գար-կաւ։

Խեղճ վիճակի ենթարկուած էր Գումգապուի Մայր Եկեղեցին ալ. ամէն կողմ աղտոտած, առաստաղը պատառոտած, շատ տեղեր փլփլած։ Ծախքին համար յաջողեցայ համոզել Վանեցի Մանուկ Սմբատեան վաճառականը, որդւոյն Մինասի և տաներէց Դերձակեան Խաչատուր քահանայի ձեռնտուութեամբ, որով հնար եղաւ որմերը և կամարները մարմարծեփով նորոգել, որմասիւներ կազմել, ոսկեզօծները նորել և աւելցնել, յատակը յարդարել, նստարաններ շինել, դորգեր և ջահեր աւելցնել, և բոլորը սիրուն կերպարանի փոխարկել սպիտակ տեսլարանի վրայ։ Այդ ձեռնարկն ալ բաւական արագ լրացաւ Գրիգոր Մելիտոսեան ճարտարապետի գլխաւորութեամբ և իմ մօտէն հսկողութեամբ։ 1902 դեկտեմբեր 28|10 յունուար 1903ին նորոգեալ տաճարի տեառնտպրութիւնը կատարեցի և 29|11ին առաջին պատարագը մատուցի։ Ներսէին Սմբատեան շատ եւս չապրեցաւ և յառաջագոյն խոստման համեմատ մարմինը ամփոփեցինք Ս. Յարութեան մատուռին առջեւը։ Սմբատեանի բարերարութեան արդիւնքով Գասըմբաշայի Ս. Յակոբ եկեղեցին ալ մանաւոր նորոգութիւնը լրացաւ։ Մայր Եկեղեցւոյ կողմնակի Ս. Խաչ և Ս. Որդիք Որոտման եկեղեցիներն ալ լքուած էին. առաջինը իբր պանդուխտներու օթեւան և երկրորդը իբր ապչկանց վարժարան գործածուած էին։ Երկուքն ալ այն միջոցին մաքրուեցան և յարդարուեցան և հոգեւորական պաշտամանց վերադարձան։

Բերայի բարձունքը 1865ին սկսած Շիշլիի գերեզմաններոցը, որուն կարգադրութեան նախաձեռնարկն եղած էի 1884ին քարոզչութեանս միջոցին (§ Խ), առաջ տարուած էր իմ Կարին վերադառնալէս ետքը, բայց պակաս կը մնար մուտքին մասը՝ խղճալի տախտակորմով մը գոցուած։ Այդ պակասը աչքառութերութիւն մըն էր, ուստի Բերայի Կալուածոց Հոգաբարձութեան հետ համաձայնեցայ, վայելուչ շինուածի մը յատակագիծը պատրաստուեցաւ և գործադրուեցաւ, որպէսզի քարեձեւ և նկեր-

քուստ երկյարկանի և բոլոր պէտքերու համար յարմար բաժիններով՝ պահոպանաց, վերակացուի, քահանայի և յուղարկաւորաց հանգստանալու համար սենեակներ, և հանդիսաւոր բացումն ալ կատարեցի 1904 մայիս 16|29ին։ Գերեզմաններուն լիակատար յարդարման համար մատուռի մըն ալ շինութիւնը պէտք էր, որուն տեղն ալ որոշուած և ազատ թողուած էր յատակագիծին մէջ, սակայն այդ փափաքս չկրցաւ լրանալ, շինութեան ծախուց յանձնառու բարերար մը համոզել չկարենալուս համար։

Խասքէօյի մէջ հաստատուած Գալֆայեան Որբանոցի շէնքն ալ նորոգութիւն կը պահանջէր, և ընդարձակուելու պէտք ունէր։ Տիկնանց Խնամակալութեան փութաջան հոգածութեամբ, նեղկ և տանիք նորոգելու պարզ արտօնութեամբ, և Շահպազեան Եղիա գործարանապետի յաջողակ ճարտարութեամբ ո՛չ միայն շէնքը ներքուստ և արտաքուստ նորեցաւ, այլեւ վերին դատիկոն մըն ալ աւելցաւ, և որբուհեաց աճած թիւին բաւականանալու պէտքը լրացաւ։ Հանդիսաւոր նուաւակատիքն ալ անձամբ կատարեցի 1904 նոյեմբեր 21|4 դեկտեմբերին։ Գալֆայեան Որբանոցը եւս քանզեւս ընդարձակելու և իբր Ս. Փրկչեան Որբանոցին լրացուցիչ կազմելու փափաքն ունէի, եւ այս նպատակով աշխատեցայ ձեռք ձգել Ճեզայիրլեանց լքեալ ապարանքը, որ պատկից էր Գալֆայեան Որբանոցին, և յարքունիս պրաւական էր Ճեզայիրլեանի պարտքին փոխարէն։ Կայսերական շնորհը ուր ուրեմն կրցայ ստանալ 1908 մայիս 6|19ին, և երկու շէնքերը բաժնող պատէն անցքը անձամբ բացի յունիս 27|10 յուլիսին, և սաստկութեան մտցուցի, սակայն երեք շաբաթ չը լրացած պատրիարքութենէ հրամարեցայ, և Գալֆայեան Որբանոցը չկրցաւ ընդարձակութիւն վայելել, զի եւեւի նոր վարչութիւններն ալ շատ հետամուտ չեղան։

Սգգային Ս. Փրկչեան Հիւանդանոցի վերաշինութեան ատեն թերի մնացած էր հիւսիսային թեւը, թէպէտ ծախուց յանձնառուներ պատրաստ էին, այլ գործը կը ձգձգուէր հետամուտ եղողի պակսելովը։ Այդ մասին ալ իրականացումը տեսնել փափաքելով՝ յաջողեցայ համոզել Աբիկ Ունճեան, Պատրիկ Կիւլպէնկեան և Յովհաննէս Յակոբեան բարերարները և իրենց պարգեւները՝ գործի ձեռնարկելու, և 1905 մայիս 15|28ին հիմնարկէքը օրհնեցի։ Այս կերպով կառուցուեցան երեք երկյարկանի

անջատ յարկաբաժիններ, միայն անցքերով իրարու հաղորդակցութիւն ունեցող, և հիւանդանոցներու վերջին առաւելութիւններով կատարելագործուած, իբրև դարմանատուն վարձուելու յարմար սենեակներով, և միջին Կիւլպէնկեան յարկաբաժինին մէջ վիրաբուժական գործողութեանց յատկացեալ տեղով մըն ալ։ Միւնոյն ատեն Հիւանդանոցի դեղարանն ալ վերակազմուեցաւ բժշկապետ Միքայէլ Խորասանճեանի ծախքով, և հականեխարան մը աւելցաւ մասնաւոր բարերարութիւնով։ Ջուրի ճանապարհն ալ յարդարուեցան Յարութիւն Սալանեան վաճառականին ջանքով, և Ջրաբաշխ աշտարակ մըն ալ կառուցուեցաւ, և ներքին բակին ալ յարմար ձեւակերպութիւններ տրուեցան, այնպէս որ Ս. Փրկչեան Սպպային Հիւանդանոցը տիպար հաստատութեան մը առաւելութիւններով ճոխացաւ։

Պակաս կը մնար միայն Հիւանդանոցի եկեղեցին, որ Պեզճեան ամիրայի օրէն մնացած փայտաշէն և գծուծ և հնութեամբ խաթարեալ միակ մասն էր։ Նախնական յատակագիծին համեմատ եկեղեցին բակին մէջտեղը պիտի չինուէր, և Միքայէլ Յակոբեան յանձնառու կ՚ըլլար չինել, եթէ այդ վեհերումը չփոխուէր, զոր ես յարմար չէի տեսներ, և ոչ ընդարձակ բակին մէջ ամբարտակ մը բարձրացնելով՝ շրջակայ հիւանդանոցներուն օդը խափանել և առողջական պայմանները անտեսել, և կը նախադասէի նախնական եկեղեցւոյն տեղը չինել բակին հիւսիսակողմը, ուր թաղուած էին Կիւլպէնկեանց ննջեցեալները. իսկ Յակոբեան կը փափաքէր ինքն առանձինն թաղուիլ նորաշէն եկեղեցւոյն քովը։ Երբոր Յակոբեան վերջնական կերպով չկրցաւ ինէ իւր նպատակին հաւանութիւնը ստանալ, Հիւանդանոցի եկեղեցւոյ չինութենէն հրաժարելով, որոշեց Սամաթիոյ Ս. Գէորգ եկեղեցւոյ ժամատունն ու խանութները չինել և հոն թաղուիլ, որուն պատասխանեցի թէ վերջապէս Սամաթիոյ եկեղեցին ալ նոյն պատրիարքութեան ենթարկեալ է և անոր չէնալը ինծի ալ հաճելի։ Նոյն միջոցներուն կը հանդիպէր Դիոգինէս Թահթապրունեանի մահը. նորահաս և ազատակեաց և տակաւին ապարդիւն երիտասարդ մը, որուն յուզարկաւորութեան նախագահելէ միանգամ և երկիցս խուսափելէ ետքը ստիպուեցայ զինչանիլ Կեսարացի մեծամեծներուն թախանձանքին, բայց և առիթ քաղեցի դամբանականին մէջ ակնարկել՝ թէ վաղամեռիկ Դիոգինէս ատեն չէր ունեցած

արդիւնաւոր յիշատակ մը թողուլ, բայց հարկաւ իւր եղբայրները կը լրացնէին անոր պակաս թողածը։ Ակնարկս ազդեցութիւն ունեցաւ Աղաթան և Կարապետ Թահթապրունեան եղբարց վրայ, և յաջողեցաւ անոնց ընդունիլ տալ Հիւանդանոցի եկեղեցւոյն շինութիւնը։ Հինը քակել տուի և 1906 փետր. 10|23ին հիմնարկէքը օրհնեցի. շինութիւնը առաջ տարուեցաւ Մելիտոսեան ճարտարապետի ձեռքով, որ երեք յարկաբաժիններու շինութիւնն ալ կը կառավարէր, և ամէն ատեն ազգային չինութեանց անձնուէր ճարտարապետութիւնը կը կատարէր։ Վերջապէս նոյն տարւոյ դեկտ. 3|16ին նորաշէն եկեղեցւոյն օծումն ալ նուիրագործեցի պարտ ու պատշաճ հանդիսաւորութեամբ։ Եկեղեցին բաւական ընդարձակ և բարձր էր, համակ քարաշէն և վայելուչ յատակագիծով, և Դիոդինէսի յիշատակն ալ ճակատին վրայ արձանագրուեցաւ։

Ցէրիքէօյի Ս. Վարդան եկեղեցին, հապճէպ կառուցուած փայտաշէն մը, քայքայուելու վիճակին հասած եւ նեցուկներով ամրացած էր։ Անոր նորոգութիւնն ալ անհրաժեշտ էր, որուն յանձնառու եղաւ Զենոբ Մերամիթճեան ճարտարապետը, ծախքն ալ և արուեստագիտութիւնն ալ ատանձնելով։ Գործի ձեռնարկուեցաւ ներսէն և տանիքին նորոգութեան պարզ արտօնութեամբ, բայց մինչև իսկ գերաններն նորուեցան, և եկեղեցին վերաշինուեցաւ դարձեալ փայտակերտ, ներքին ընդարձակութիւններ տրուեցան, բայց արտաքին չափերը չփոխուեցան։ Հապճեպ կառուցուած և հնութեամբ խանգարուած եկեղեցի մըն ալ Բանկալթիի գերեզմաններուն Ս. Լուսաւորիչն էր, զոր նորոգելու և բարձրացնելու հոգ տարաւ Բերայի թաղականութիւնը։ Ս. Երրորդութիւն գլխաւոր եկեղեցին ալ ներսէն նոր ներկուեցաւ և մաքրուեցաւ. Մաքրիքէօյի թաղականութիւնն ալ իւր Ս. Աստուածածին եկեղեցիին ներքին վայելչութիւնը լրացուց. Պէշիքթաշի եկեղեցւոյն 1905 մայիս 30|12 յունիսի փոթորիկէն վնասուած մասերը յարդարուեցան Պետիկան Յանձնաժողովէ առնուած նպաստով։ Վերջապէս քիչ ու շատ ամէն եկեղեցիները վայելուչ պահելու յորդորները պակաս չըրի, և արդիւնքներն ալ տեսայ։

Վերջին 1908 տարւոյ սկիզբներն էր, որ Բերայի Կոլուածոց Հոգաբարձութիւնը գնեց Ս. Երրորդութիւն եկեղեցւոյ հիւսիսա-

բեւելեան անկիւնը գտնուող Վէքիլ գերդաստանին պատկանող մեծ տունը, և անոր մօտաւոր ուրիշ մասերը խառնելով Թոգաթ-լիանի ճաշարան-զբօսարանին՝ պանդոկ մըն ալ ուեցուց, շատ արդիւնաւոր պայմաններու ներքև, որոց հաւանութիւնը փութացի շուտով տալ յաջող առիթը ձեռք չհանելու համար, ինչ ալ ըլլային ձեւակերպութեանց մարմաջով զօրացածներու խծբծանքները։ Ժամանակով Երրորդութիւն եկեղեցւոյ չորս փողոցներով պարփակուած կղզին ամբողջ ազգային սեփականութիւն է եղեր, և զայն վերստին ամբողջացնելու պաղափարը ազգօգուտ և շահաւէտ դատուած էր ամէն խոհական և գործի հմուտ անձերէ։

Եթէ գտնուող եկեղեցիներու փայլին ու վայելչութեան ոգեւին հետամուտ էի, միւս կողմէն նոր եկեղեցիներ աւելցնելու փափաքին միշտ դիմադրող եղայ։ Այդ փափաքը ունէին յատկապէս Իւսկիւտարի Իճատիյէ թաղի ժողովուրդը և Բրինքիբօ կամ Մեծկղզի օդափոխութեան գացող ազգայինները։ Իմ ընդդիմութեանս մեծ փաստն այն էր որ արդէն վրանիս ծանրացող եկեղեցիներ ունէինք, զորօրինակ Էյուպսուլթանի, Գանտիլլի, Սթենեայի եկեղեցիները, և չէր արժեր ասոնց պահպանութեան միջոցները աւանդ ապահովելու եկեղեցիներ աւելցընել։ Իւսկիւտար արդէն ունէր Սէլամլիյէի Ս. Խաչ և Եէնիմահալլէի Ս. Կարապետ, և ծովեզերքին վրայ Գուզկունճուքի Ս. Լուսաւորիչ եկեղեցիները, և աւելորդ բեռ շատցնող և միւս եկեղեցիներուն վնասող պիտի ըլլար չորրորդ եկեղեցի մը աւելցնել Իւսկիւտարի մէջ։ Իսկ Մեծկղզիի եկեղեցին հազիւ թէ վարդավառին և Վերափոխման յաճախող պիտի ունենար, և բոլոր տարին անտէրունչ պիտի մնար, զի Մեծկղզին հասատուն հայաբնակութիւն չունէր, և օդափոխութեան գացողները ձմեռուան մէջ իսկ իրենց թաղին եկեղեցւոյն տեւական ժամաւորները չէին։ Թերեւս բացառութիւն ընէի Գարակէօմրիւկի համար, զի Ս. Յովհան Ոսկեբերան եկեղեցին պատահմամբ այրած էր 1900 յուլիս 6|19ին, և սիրուած ուխտատեղի մըն էր։ Միւս կողմէն մեր բոլոր եկեղեցիները Կ. Պոլսոյ պարիսպներուն մօտերն էին, և կեդրոնին մէջ եկեղեցի չունինք, և ես կը կարծեմ թէ Կ. Պոլիս քաղաքին բարձրադիր միջավայրը մեծ ապագայ խոստացող քաղաքաբաժին մըն է, և այնտեղ եկեղեցի ունենալ ապագային օգտակար կ'ըլլայ։

Այսչափ ալ մայրաքաղաքին մէջ կատարուած չինարար ձեռնարկներուն մասին։ Գաւառներուն մէջ կատարուածներուն վրայ խօսիլ զանց կ'ընեմ. զի որչափ ալ Կեդրոնէն յորդորներ և քաջալերութիւններ պակաս չեղան, բայց միշտ տեղական ձեռնարկներ եղան, և առաջնորդներու, տեղապահներու և գաւառական վարչութիւններու արդիւնքն ու արժանիքը սեպհականելու կասկածն իսկ չեմ ուզեր տալ։

ԿԵ

Դամասկոս, 1918 փետրուար 22/7 մարտ Եշ.

Պատրիարքական գործունէութեանս նշանակալից մաս մը կը կազմէ եկեղեցական հանդէսներու ոյժ տալս, դպրաց դասերու շատնալուն հետամուտ ըլլալս, եռաձայն և քառաձայն երգեցողութիւնները քաջալերելս, Կ. Պոլսոյ եկեղեցիներուն տարեկանի օրերուն հանդիսադիր ըլլալս, տօնախմբութիւններ տարբերու առիթներ ստեղծելս։ Ոմանք այնպէս ենթադրեցին թէ այս պարագաներով փառաւորուելու ունայնասիրութենէ շարժուած ըլլամ, սակայն իմ դիտումս այս չէր։ Ազգային հանդէսներ բացարձակապէս արգիլուած էին, մինչ իմ համոզմամբ այս տեսակ հանդէսներ ըզպացումներ բարձրացնելու, դաղափարներ մշակելու, հոգիներ սրբատապնդելու մեծապէս օգտակար են, և հարկաւ ասոնք արգիլելու համար արձակուած էր ընդհանուր արգելքը։ Եկեղեցիները այդ արգելքէն դուրս մնացեր էին, ուստի պէտք էր այդ պարագայէն օգտուիլ ընդհանուր նպատակին հասնելու համար, և որևէ հանդէս կազմակերպելու համար պէտք էր ոստիկանութենէ արտօնութիւն ստանալ, իսկուելիք ճառերը նախաքննութեան ենթարկել, և հրամայեալ փոփոխութեանց հնազանդիլ։ Այս կողմէն ալ բարեբախտաբար պատրիարքին անձը սեղմումներէ ազատ էր և անոր ներկայութեամբ կը չափաւորուէր կամ կը խափանուէր ոստիկանութեան ներկայութիւնը։ Ահա՛ գաղտնիքը որ զիս կը յորդորէր եկեղեցական հանդիսութեանց ոյժ տալ և ամէն հանդիսութեանց անձամբ ներկայ ըլլալ։ Այդ գաղտնի միտքն ալ

հնար չէր միամտօրէն հրապարակ իջեցնել, ուստի ես իմ մտադրութեանս կը ծառայէի և խծբծողներուն թող կուտայի խօսիլ. իսկ բարեմիտներ դիւրաւ կը թափանցէին իմ ներքին դիտումիս և գործադրութիւնը կը դիւրացնէին։ Այդ համարձակութեամբ կրցայ նաև այնպիսի հանդէսներ կատարել, որոնք թերեւս ուրիշ տեսակէտով կրնային կասկածելի դառուիլ։ Այս տեսութեանց լուսաբանութեան համար իբրեւ նմոյշ յառաջ պիտի բերեմ ինչինչ հանդիսութեանց յիշատակները։

Երբոր Եգիպտոսի նախարարապետ Նուպար բաշա վախճանեցաւ 1899 յունուար 2|14ին, անոր յիշատակին հանդիսաւոր պաշտօն պատարագ կատարեցի Մայր Եկեղեցւոյ մէջ, չնայելով որ հանգուցեալը իբրև ազգային գործիչ նկատուած էր, և օսմանեան արքունեաց աչքին հաճելի անձնաւորութիւն մը չէր։

Երբոր Հիւանդանոցի հացի և միսի օրական պարէնները մինչև 600 և 150 քաշ ուելցան, Հիւանդանոցի մէջ պաշտօնական և ժողովրդական հանդերձանօք հանդիսաւոր գոհաբանական մաղթանք կարգադրեցի և կատարեցի 1898 օգոստոս 23|4 սեպտեմբերին։

Ալէաթճեան Գրիգորիս եպիսկոպոսի յուղարկաւորութեան ազգային ցոյցի մը կարեւորութիւնը տուի 1899 օգոստոս 16|28ին, անձամբ նախագահելով և Ս. Խաչ եկեղեցիէն Ս. Կարապետ եկեղեցին գացող թափորին հանդիսապետելով, թէև սովոր չէի եկեղեցիներու շրջանակէն դուրս փողոցներու մէջ հանդիսադրութիւն կատարել։ Ալէաթճեանի անձին կառավարութեան և արքունեաց առջև լաւ աչքով չնկատուիլը յայտնի բան մըն էր, Մուշէն բռնի հանուած էր, կրօնական ժողովականութիւնը և կաթողիկոսական ընարութիւնը մերժուած էին, սակայն այդ նախընթացին մտադրութիւն դարձնել իսկ չուզեցի։

Իսկ Աշըգեան Խորէն նախկին պատրիարքին յիշատակը ազգին մէջ շատ համակրութեամբ չէր ողջունուեր, բայց այդ պատրագոյն ալ պիս չարգիլեց լիուլի հանդիսականութեամբ և համարձակ դամբանականով կատարել անոր յուղարկաւորութիւնը Բերայի եկեղեցւոյն մէջ 1899 հոկտեմբեր 27|8 նոյեմբերին, մահուան երրորդ օրը։

Հռոմէադաւան պատրիարք Ստեփանոս Պետրոս Ժ. Ագարեանի հովանաւորութեամբ և Մկրտիչ Աշճեան վարդապետի ձեռ-

քով, բայց անանուն ձեւով, փոքրիկ տետր մը հրատարակ հանուեցաւ, Մեր Ս. Հարց Դաւանութիւնը մակագիրով, պապական դրութիւնը պաշտպանելու համար հռոմէադաւան Հայերու հաւաքած սովորական քաշքշուկ՝ վկայութիւններով։ Տետրակին պատասխանը պատրաստեցի ուրիշ տետրակով մը, բայց զրաքննութեան կողմէն տպագրելու արտօնութիւնը զլացուեցաւ, պատճառելով թէ խնդիրը երկնցնելու և հասարակութեանց միջեւ գժտութիւն յառաջ բերելու կը ծառայէր։ Զուզելով մեր Եկեղեցւոյ դէմ յարձակումին առջև լռել, անմիջապէս պատրաստուած տետրակին պարունակութիւնը կոնդակի ձեւին վերածեցի, եւ կոնդակներու հրատարակութեան ապատութենէն օգտուելով՝ մեծադիր լրագիրի մը ձեւով չորս երեսներու վրայ տպագրել տալով քաղաքին և գաւառներուն և արտասահմանի մէջ լայնարձակ ցրուեցի և եկեղեցիներու մէջ կարդալ տուի։ Հռոմէադաւանները չհամարձակեցան երկրորդել։

Նախակրթարանի չրջանաւարտներուն վկայականները բաշխելու հանդէսները շատոնց խափանուած էին սովորական արգելքներու հետեւանօք։ Ուզելով հանդէսները վերակսիլ, բայց չուզելով յատուկ արտօնութիւն խնդրելու պայմանը նուիրագործել, առաջին անգամ պատրիարքարանի սրահին մէջ կատարեցի բաշխումը 1899 նոյեմբեր 4|16ին, և անկէ ետքը ակաց եկեղեցիներու կամ վարժարանական սրահներու մէջ կատարել, և հետզհետէ սովորական գործի կարգ անցաւ։ Միայն թէ ուր որ համախմբութիւն մը կը կատարուէր, ոստիկանութիւնը քննութեան կուգար, բայց պատրիարքն ալ ներկայ է տեղեկութեամբ բաւականանալով կը մեկնէր, երբեմն ալ եթէ պատուաւոր ոստիկանապետ մը ըլլար, իր պարզ հանդիսատես ներկայ ըլլալու կը պահէր։

Երբոր Անգղիոյ Վիկտորիա թագուհին մեռաւ, Սպտիլհամիտուզեց որ եկեղեցական պատիւ մըն ալ ընծայուի, բայց կաթոլիկ և օրթոտոքս իշխանութիւններ չմտեցան իրենց անթոյլատու ընթացքով։ Իսկ ես առաջ անցայ Հայ Եկեղեցւոյ ապատական սկզբունքով, մանաւանդ որ Անգղիական Եկեղեցին իւր նուիրապետական և ծիսական դրութեամբ աւելի հին եկեղեցեաց կը մօտենայ քան թէ նորաղանդ բողոքականութեան։ Արդէն 1900 յունուար 10|22ին ցաւակցական հեռագիր մը յղած էի Փէնթըրպրի

(Canterbury) նախագահ արքեպիսկոպոսին։ Իսկ յունուար 20/4 փետրուարին մեծահանդէս պատարագ և հոգեհանգիստ կատարեցի Մայր Եկեղեցւոյ մէջ պաշտօնական պայմաններով և հրաւէրներով և ներկայից խուռն բազմութեամբ։

Գրիգոր Զանչէանց հաշտարար խմբագրապետ և ի նպաստ Թուրքիոյ արկածելոց յատուկ հրատարակութեան հեղինակ, գաւառական օրբանոցներու բարերար, և օսմանեան ձեռնարկներու քննադատող եղած էր, և մահուանէ ետքը անոր յիշատակը փառաբանել շտերուն վտանգաւոր կ'երեւէր։ Իսկ ես չվարանեցայ բարեգործ անձի մը հանդէպ երախտապիտակն զգացումիս ծածկել և համարձակ պաշտօն-պատարագ մատուցի 1900 օգոստոս 27/9 սեպտեմբերին Մայր Եկեղեցւոյ մէջ ի մեծ գոհունակութիւն ամենայն բարեխլրաց։

Պատրիարքութեանս սկիզբները Վարչութեան հետ համախոհութեամբ կատարած որոշումներուս կարգին մէկն ալ Ելեւմտից Տեսչութիւնը խափանելով սահմանադրական Ելեւմտից Հոգաբարձութիւնը վերահաստատելը եղաւ, թէպէտ քանիցս ընտրութիւնները նորոգելինք և նորերը հրաւիրելինք, բայց անհնար եղաւ հաստատուն հոգաբարձութիւն մը ունենալ, հասոյթներու սակաւութեան և անհրաժեշտ ծախուց անբաւականութեան պատճառով։ Ուստի վերջապէս հարկ եղաւ վարչական մատնախումբի մը յանձնել գործը, իմ գլխաւորութեամբ և Ստեփան Սալանեան բժշկապետի և Գրիգոր Խարեան պետական հաշուեքննիչ ժողովականին ընկերակցութեամբ։ Որոշումը տրուեցաւ 1901 մարտ 9/22ին և հիմնական կարգադրութիւնները եղան, սակայն առօրեայ գործառնութիւնները վերջիվերջոյ իմ վրայ մնացին։

Քաղաքական ժողովոյ երկու ատենապետները, Սրսաքին Գործոյ խորհրդական Յարութիւն Տատեան և բժշկապետ Ստեփան Սալանեան բաշանները, քառասուն օրուան տարբերութեամբ իրարու հետեւէ վախճանեցան 1901 հոկտեմբեր 7/20ն և նոյեմբեր 17/30ին, երկուքն ալ պետական և ազգային գործունէութեամբ նշանաւոր անձեր, և ըստ այնմ յուղարկաւորութիւններուն նախագահեցի մեծաշուք հանդիսակատարութեամբ։ Անոնցմէ ետքը ատենապետութիւնը սկսաւ վարել Վճռաբեկ Ատեանի անդամ Տիգրան Եուսուֆեան։ Վերջին տեսներ այնչափ չատցած էր Սալանեանի հետ մտերմութիւնին որ մահուան ատթիւ իւր գործերուն

ու թողնին կարգադրութիւնը, և իւր երկրորդ ամուսնոյն դըստեր Մաթիլտ Ֆէրուհան օրիորդին խնամքը ինձի յանձնարարեց, և ես ալ ամենայն յօժարութեամբ իւր կամքը կատարեցի, եւ համեստ շիրիմ մըն ալ կանգնեցի Շիշլիի գերեզմանատան մէջ։ Իսկ Տատեան Պէշիքթաշի եկեղեցւոյն ետեւը թաղուեցաւ իւր բընակած տունին մօտը։

Ռեթէոս Պէրպէրեան ուսուցչապետի հիմնած և վարած վարժարանին աշակերտներէն յառաջ եկող և պատուաւոր դիրքերու հասնող նախկին աշակերտները փափաքեցան իրենց երախտաւորին զգացումնին վկայել, վարժարանին քսանհինգամեակը տօնախմբելով և դրամոր մըն ալ հանգանակելով։ Սակայն կը կասկածէին մէջտեղ ելլալ և կը խնդային պետական արտօնութեան դիմել։ Այս անգամ ալ ես ինքս յանձնառու եղայ գործին պաշտօնական մասը ստանձնել անձնական նախաձեռնութեան ձեւով, իրենց թողլով գործադրական աշխատութիւնները անպաշտօն կերպով, մինչև իսկ յորդորական շրջաբերական մըն ալ հրատարակելէ չքաշուեցայ։ Պէրպէրեան 1896ի տագնապի տարին Հելուետիա խոյս տուած էր՝ վարժարանը իւր հին աշակերտներէն Պետրոս Կարապետեան ուսուցիչին յանձնելով։ Թէպէտ յաջողեր էր զայն դարձնել իւր գործին գլուխը, սակայն միշտ իբրև կասկածելի նկատուած էր, և քանիցս նախարարութիւններ ազդարարութիւններ ստացած էի զայն գործէ հեռացնելու, և միշտ զրաւոր պաշտպանութեամբ ազատեն առած էի, ինչ որ Պէրպէրեանն ալ ինձ մոռցիմ դարձնելու ծառայած էր։ Քսանհինգամեակի պատրաստութիւնները յաջողութեամբ յառաջեցին, և 1901 հոկտեմբեր 28|10 նոյեմբերին տօնախմբութիւնը կատարուեցաւ, եկեղեցական և վարժարանական հանդէսներուն նախագահեցի եւ հանգանակուած իբր 1500 ոսկւոյ գումարով վարժարանի շինուածին նորոգութիւններ և յաւելուածներ կատարուեցան։

Բացառիկ հանդիսութեանց կարգին 1899 մայիս 16|28ին Կաղզուանցի Փոդուզեան Զաքարիա բազմարդիւն պատրիարքին մահուան հարիւրամեակը կատարած էի Գուրուչէշմէի Ս. Խաչ եկեղեցւոյն մէջ։ Ս. Էջմիածնի հիմնարկէքին հազարվեցհարիւրամեակն ալ կատարեցի 1903 յունիս 8|21ին Մայր Աթոռէ ամէն կողմ տրուած հրամանին համեմատ։ Նոյն տարւոյ յունիս 15|28ին Բանկալթիի դատարեալ դերեզմաններուն մէջ մեծ հոգեհանդիսա-

մը կատարեցի՝ Ս. Լուսաւորիչ եկեղեցւոյն մէջ և բացավայրին չորս կողմերը, և Զուղայեցի Յակոբ Դ. Հոգեւոր տիրոջ գերեզմանին վրայ զատ զատ կարգեր կատարելով վարժարաններու աշակերտաց և աշակերտուհեաց համախումբ գումարմամբ, որպիսի ինչ Կ. Պոլսոյ մէջ կատարուած չէր։ Բերայի Ս. Երրորդութիւն եկեղեցւոյ հիմնարկութեան հարիւրամեակին առթիւ ալ բացառիկ հանդէս կատարեցի 1907 յունիս 10|23ին։ Իմ նախընթացս ալ երբեք ծածկել չեմ աշխատած, մինչև իսկ անզգոյշ ակնարկներու ալ պատասխանած եմ, որ եթէ իրենք անգիտակցաբար Հայ Եկեղեցւոյ հետեւող գտնուած են, ես քննութեամբ և խելահաստութեամբը զայն նախընտրած եմ։ Հետեւաբար մտադիր էի յատուկ կերպով յիշատակել վերադարձիս քսանհինգամեակը 1904 տարւոյ Գիւտ Խաչի տօնին, սակայն Խապայեան Սահակ կաթողիկոսին Կ. Պոլիս գտնուելուն և տիրող դարձուածներուն պատճառով լաւագոյն սեպեցի զանց ընել։

Պատրիարքական փոխանորդարանը սովոր է նշանագրութեանց առթիւ մէկ մէկ օրինակ հարսանեաց կոնդակ յանձնել պսակուելիքներուն. օրէնքներու բացատրութիւններով և խրատական յորդորներով կազմուած կոնդակ մը, որ պատրիարքներու անունին փոփոխութեամբ երկար ժամանակէ ի վեր նոյնութեամբ կը գործածուէր։ Փափաքելով ժամանակին յարմարագոյն և պարունակութեանց յատակագոյն խմբագրութեամբ բան մը յանձնել փեսայուններուն և հարսնցուներուն, նոր կոնդակ մը պատրաստեցի 1903 մայիս 1|14 թուականով, և նախկինը խափանելով զայն կիրառութեան մտցուցի, որուն մէջ եկեղեցական օրէնքները և ամուսնական պարտաւորութիւնները լիագոյն կերպով բացատրուած են։

Կրօնական տեղեկութիւնները ընդարձակելու և ժողովրդականացնելու համար, Դպրեվանքի վերատեսչութեան ատեն Մասիս կրօնաթերթի հրատարակութեան ձեռնարկած էի, այլ 1896թ. տագնապին պատճառով խափանած էր։ Պատրիարքութեան ատեն ձեռնարկը վերսկսելու փափաքը ունէի, բայց պարագայից բերմամբ հազիւ 1905ին կրցայ զայն իրականացնել, և Լոյս կրօնաթերթի հրատարակութեան սկսիլ յունիս 1|14ին խմբագրապետութեամբ Կիւլէսէրեան Բաբգէն վարդապետի, Դպրեվանքի աշակերտութեան անդրանիկին, և վարչութեամբ Կարապետ Խորասանճեան վաճառականին։ Երկու տարի տեւեց հրատարակութիւն

նը, այլ դադարեցաւ նիւթական պատճառներով։ Լոյս կրօնաթերթը իր տեսակին մէջ ընտրելագոյն վկայուեցաւ, որուն գործակցեցան Դպրեվանքցիներէն շատեր և ես ալ անոնց հետ։

Սովորութիւն է որ տարին երկիցս Ծնունդի և Զատիկի երկրորդ օրերը ազգային պաշտօնական մարմիններ և նշանաւոր անձնաւորութիւններ պատրիարքարան խմբուին շնորհաւորութեանց և բարեմաղթութեանց համար։ Ես այս առիթները յօդուտ կը գործածէի կերպով մը Ընդհանուր ժողովներու դադարումը դարմանելու, և ընդարձակ բանախօսութեամբ տեղեկութիւններ կը հաղորդէի ազգային գլխաւոր անցքերու և դէպքերու և ընթացիկ կացութեան վրայ, որ հաճութեամբ կը լսուէր և ներկայութիւնը ընդարձակելու կը յորդորէր։ Վարժարանական ջանքերու իբրեւ քաջալերութիւն, յիշեալ պաշտօնական ընդունելութեանց իբրև յաւելուած Զատկի հինգշաբթի օրերն ալ ուսուցիչներու և իւրաքանչիւր վարժարանի աշակերտութեանց ներկայացուցիչ խումբերու ընդունելութեան սովորութիւնը հաստատեցի, որ առաջին անգամ տեղի ունեցաւ 1904 ապրիլ 1|14ին և յաջորդ տարիներ շարունակեց։

Յայտնի է որ Խրիմեանի անձն ալ լաւ աչքով չէր նկատուած արքունեաց կողմէ, և նոյնիսկ եպիսկոպոսցուներու հրաման չէր տրուեր ձեռնադրութեան երթալու, կասկածելով որ Խրիմեանէ աննպաստ թելադրութիւններ կ'առնեն։ Ի զուր աշխատած եմ արքունիքը համոզելու, թէ կատարեալ տաճկասէր մը դարձած է նա Ռուսիոյ կողմէն տեսած դժուարութեանց և կալուածոց գրաւման երեսէն, սակայն սեւեռեալ գաղափարը չեմ կրցած ջընջել։ Խրիմեան կաթողիկոսի մահէն ետքը մինչև իսկ հոգեհանգիստ կատարելու վախցողներ ալ կային, սակայն ես անօրինակ հանդիսութեամբ և դեսպանատանց պատուիրակներու ներկայութեամբ փառաւոր պաշտօն-պատարագ և հոգեհանգիստ կատարեցի Մայր Եկեղեցւոյ մէջ 1907 հոկտեմբեր 29|11 նոյեմբերին տեղի ունեցած վախճանէն քիչ օր ետքը։ Անկէ առաջ ալ Եզեանց Կարապետի հոգեհանգիստը կատարեր էի, 1905 մայիս 31|13 յունիսին տեղի ունեցած մահուանէ քիչ ետքը, թէպէտ նա ալ հաճոյական անձ մը չէր արքունեաց աչքին։

Կը փափաքէի մեծահանդէս յուղարկաւորութիւն կատարել Աբիկ Ունճեան բազմերախտ և բարերար ազգայինին, չնայելով որ

կուսակցական դաւաճանութեամբ սպանուած էր 1905 օգոստոս 13|26ին, սակայն հանգուցեալը կանուխէն իբրև կտակ յանձնարարած էր աղքատաց կերպով միակ քահանայով յուղարկաւորուիլ, և Մաթուս եղբայրն ալ կը պնդէր անոր կամքը յարգել։ Հազիւ համոզեցի լոկ Բերայի քարոզիչով և քահանաներով կատարել տալ յուղարկաւորութիւնը, իսկ ես իբր սգակիր միայն ներկայացայ, բայց խիղճ ըրի բոլորովին լռել, և հակառակ եղբօրը թախանձանքին դամբանականը խօսեցայ, չծածկելով կառավարութեան կողմէ կրած բանտարկութիւնն ու դատապարտութիւնը և կուսակցականութեան կողմէ կատարուած դաւաճանութիւնը։

Հանդիսական առիթներէն քաղուած այդ համառօտ յիշատակութիւնները կը փակեմ, կրկնելով սկիզբը ըրած յայտարարութիւնս, թէ անոնց մէջ ո՛չ երբեք ունայնասէր զգացումներէ յորդորուած եմ, այլ ժողովրդական զգացումները ոգեւորելու և վշտացեալ սիրտերը մխիթարելու համոզումն ու նպատակը ունեցած եմ։

ԿԶ

Դամասկոս, 1918 փետրուար 23|8 մարտ Ուր.

Արքունեաց հետ մտերմական յարաբերութիւններ պահելս, և ամէն գործի համար Ելլսլզ դիմելս յայտնի իրողութիւն մըն է, և հետեւանք Համիտի ընուած քաղաքականութեան, որ նախարարութիւնները չէզոքացնելով՝ ամենայն ինչ պալատան մէջ ամփոփած էր, ուր զանազան ճիւղերու համար յատուկ յանձնակատարներ որոշած էին իբրև անպաշտօն նախարարութիւններ, եւ Հայերու վերաբերեալ գործերը առաջին քարտուղար Թահսին բաշայի յանձնուած էին, և հա ալ ստիպեալ էի անպատճառ անոր դիմել և անոր հետ բանակցիլ։ Այս մասին պէտք է յայտարարեմ՝ թէ մեր յարաբերութիւնները երբեք ստրկական և դիմումները երբեք ստորնաքարշ չեղան, այլ տեսակ մը ճարտար և կատա-

կաքան ու զուարճաքան ձեւերով համեմեալ, և անուղղակի թելադրութիւններով զօրացեալ, որոնք աւելի արդիւնաւոր են տաճկական պաշտօնակալաց հետ։ Ապտիւլհամիտ կայսր կը սիրէր միշտ իւր նախաձեռնութեամբ գործած երեւնալ, քան թէ աղերսախառն ձեւի ներքեւ ալ ընելիքը ուրիշէ ճշդուած կամ առաջարկուած գիտնալ, որով գիւտի և նախաձեռնութեան առաւելութիւնը իրմէ կապուած կը կարծէր։ Ուստի ստէպ պատմական կամ հաղորդակցական ոճով գաղափարներ կը յայտնէի, որոնք կայսեր հասնելով անկէ իբրեւ իւր սեպհական միտքն ու գիւտը կը դառնային, կամ թէ երրորդներու միջնորդութեամբ գաղափարներ կը հասցնէի, որոնք աւելի օգտակար կը դառնային նը-պատակիս հասնելու։ Իսկ իր կողմէն յանձնարարութեան մը մասին երբ հրամաններ կը հաղորդուէին, կերպ կերպ ձեւերով խընդիրը իրենց վրայ կը դարձնէի։ Այդ ընթացքին իբր բացատրութիւն կ'ուզեմ ինչինչ օրինակներ պատմել, որոնք իրենց պարզութեան մէջ աւելի խօսուն են, քան երկարապատում պատճառաբանութիւններ։

Անգամ մը գրաւոր աղդարարութիւն կ'ընդունիմ, որպէսզի հայ կիներու և օրիորդներու արգիլեմ կարմիր բաճկոնակ (blouse) գործածել, զի կարմիրը իբր յեղափոխութեան նշանակ առնուած է, թէպէտ օսմանեան դրօշն ալ կարմիր է։ Անմիջապէս թահսինի կ'երթամ յայտնելու համար թէ ազդարարութիւն մը ստացած եմ, որ սխալ հասցէի ուղղուած է, զի կանացի նորաձեւութիւնները հայ կիները չեն ստեղծեր. այլ Բարիզի գործարաններն են որ իւրաքանչիւր տարւոյ համար նոր գոյն և նոր ձև կ'որոշեն, և Բարիզէ եկած ապրանքն է որ մեր կիներ և օրիորդներ խանութներու մէջ կը գտնեն, կը գնեն և կը գործածեն, ուստի պէտք էր ինձի եկած ազդարարութիւնը Բարիզի նորաձեւութեանց գործարանատէրերուն յղել։ Այսպէս զուարճաքանութեամբ և ծիծաղով խնդիրը փակուեցաւ։

Ատանայի ազգայնոց մէջ իբր թէ յեղափոխական շարժումներու բոյն մը գտնուած ըլլայ. քաղաքէն և մերձակայ տեղերէն եկեղեցականներէ և աշխարհականներէ կազմուած իբր 15 հոգիներու խումբ մը կը ձերբակալուի, և աւելի ապահովութեան համար դատավարութիւնը և ամբաստանեալները Անդրիանուպոլիս կը փոխադրուին։ Ասոնց հետ ամբաստանուած էր Աբերսինի ալբա-

տրիական թղթատան և չոգենաւներու գործակատար Պրացցաֆոլի (Prazzafogli) Աւստրիացին, որուն ձերբակալման դէմ բողոքեր էր Աւստրիոյ դեսպանը Քալիչէ (Barone Calice) և գործը կը տատանէր։ Ես այդ պարագայն յօգուտ գործածելով Թահսինի յայտնեցի որ եթէ հպատակի և օտարահպատակի վրայ արդարութիւնը հաւասարապէս գործադրուի, լուել կը պարտաւորուիմ, իսկ եթէ օտարազգին կը խնայուի և հայրենեաց զաւակներ կը ճզմուին, ձայն բարձրացնելու իրաւունք կ'ունենամ. իսկ նա համարձակաբերան կը խոստանար արդարութեան ամենուն վրայ հաւասարաբար գործադրուիլը։ Գործը կ'երկարէր կառավարութեան և դեսպանատան մէջ, և ամէն միջոց կը գործածէի դեսպանատունը ընդդիմութեան մղելու և քարտուղարութիւնը իւրն խոստումը կրկնելու։ Դեսպանը տեսնելով որ իւր ընդդիմութիւնը ապարդիւն կը մնայ, օր մը վերջնագիրը կուտայ, և չոգենաւը վառել տալով մեկնիլ և յարաբերութիւնները խզել կը սպառնայ։ Նոյն երեկոյին իմ ալ դեսպանատուն երթալս կը զուգադիպի, ուր ծպտեալ ոստիկաններու շատութիւնը աչքիս կը զարնէ, քաղաքին մէջ շարուած անտուկները կը տեսնեմ, լրոզութիւնը կ'իմանամ, դեսպանը կը տեսնեմ, պարտուպատշաճը կը խօսիմ և տունը կը դառնամ, զի արդէն երեկոյացեալ էր, բայց գիշերը Աւստրիացին ազատութիւնը հրամայուելուն լուրը կ'առնեմ, առաւօտուն կանուխ Եըլտըզ կ'երթամ, և Թահսինի հետ խօսքէ խօսք անցնելով՝ դեսպանատուն երթալու խօսքը կը բացուի, և կը փութամ երեկոյին աւստրիական դեսպանատուն հանդիպիլս յայտնել, միջադէպը պատմել, արդիւնքը իմանալու հարցում ուղղել։ Երբոր քարտուղարը հրամանին տրուիլը կը ծանուցանէ, իւր խոստման համաձայն մերիններուն համար ալ ազատութիւն կը պահանջեմ, և երբ կայսեր մօտ դառնալու առիթ չունենալը կը բացատրէ, սպասելու և մինչև իսկ գիշերելու պատրաստականութիւն կը ցուցնեմ, բայց վերջապէս միւս առաւօտ դառնալու յայտարարութեամբ կը մեկնիմ, մինչ նա ինքն լուր ղրկել կը խոստանար։ Իրօք ալ միւս երեկոյ կը հաղորդէ Անդրիանուպոլիս տարուածներուն ներուելուն աւետիսը, որոնք քիչ օրէն Պոլիս կը դառնան, եկեղեցականները պատրիարքարան կը յանձնուին, և առաջին առթիւ ամէնքն ալ ազատօրէն Ատանա կը դառնան։ Կատարեալ յաջողութիւն մը էր, առանց մեր կողմէն ատրնութեան կամ զղջման յայտարարութեանց ստացուած։

Անգամ մըն ալ կայսերական թիկնապահի ձեռքով պալատ կը հրաւիրուիմ, ուր քարտուղարը կը հաղորդէ, թէ Կիպրոս գտնուող հայոր զինեալ Հայեր Մերսինը պիտի գրաւեն եղեր, եւ կայսրը կը յանձնարարէ որ պատրիարքը այս բանը արգիլէ։ Քմծիծաղով մը կը պատասխանեմ միանգամ և երկիցս, և երբ քարտուղարը կը պնդէ, կը յարեմ թէ Մերսին Կիպրոսէ ծովով զատուած է, իմ տորմիղը կ'ինջեցնեմ և ճանպանին կը կտրեմ։ Երբոր դարձեալ քարտուղարը կատակը զանց ընել կը կրկնէ, յայտնապէս կ'ըսեմ թէ տորմիղը իրենցն է, թո՛ղ մէկ երկու ռազմանաւեր այդ կողմերը ղրկեն և վտանգը խափանի։ Եւ կ'աւելցնեմ թէ իմ տեսութեամբ զրոյցը սուտ լուր մըն է՝ կամաւ յերիւրուած միտքերը պղտորելու համար։ Եւ երբ ինչ հիմ ունենալս կը հարցնէ, կը պատասխանեմ թէ Կիպրոսի մէջ այնչափ հայ և ասանկ պատրաստութիւն չկայ, զի եթէ ըլլար՝ հոսը եկած կ'ըլլար և մենք ալ իմացած կ'ըլլայինք։ Այս պատասխանս կ'երթայ կայսեր հաղորդել, եւ շնորհակալութեամբ բարեւներ կը բերէ յանձնարարութեամբ մէկտեղ, որ պատրիարքը միշտ արթուն մնայ. և այսպէս անհետեւանք կը թողուի ատուգիւ կայսրը գրգռելու համար շինուած լուրը, գուցէ նոյն իսկ կուսակցականներու կողմէ։

Իմ մէկ կոնդակիս մէջ Հայաստանեայց Եկեղեցի բացատրութիւնը գտնուելուն, ազդարարութիւն կը ստանամ այդ բացատրութենէն զգուշանալ, իսկ ես կը պատասխանեմ թէ մեր Եկեղեցւոյն նուիրագործեալ յատուկ անունն է, զոր չեմ կրնար փոփոխել։ Հանրային կրթութեան նախարարութիւնը կը կրկնէ, թէ Հայոց Եկեղեցի ազգային բացատրութիւն է և ներեալ է, իսկ Հայաստանեայց Եկեղեցի աշխարհագրական բացատրութիւն է եւ ներեալ չէ։ Տեսնելով որ խծբծանքի մտնել կը սիրեն, գրաւոր կը պատասխանեմ, թէ հայերէն բառերուն իմաստը նախարարութեան գրագիրներէն սորվելու պէտք չունիմ, և կը լռեն ու միջադէպը կը փակուի։

Օր մը յանկարծ բոլոր գրավաճառներ պատրիարքարան կը լեցուին գանգատելու, թէ գրաքննիչներ եկած, ժամագիրքերը գրուած և դարանները կնքած են, ժամագիրքերուն մէջ Հայաստանեայց բառը գտնուելուն համար։ Կը յանձնարարեմ հանգարտ մնալ, քայլ մը չառնել, և խանութները չփակել։ Իսկոյն Եըլտըզ կը դիմեմ եղելութիւնը քարտուղարին հաղորդելու, և միանգա-

մայն յայտնելու թէ վաղուընէ սկսելով եկեղեցիները պիտի փակեմ, վասնզի նոր իմացայ որ հարիւրաւոր տարիներէ ի վեր օսմանեան կայսերաց պաշտպանութեամբ մեր գործածած աղօթագիրքը ճշմարտակար դիրք է եղեր, և որովհետև մեր քահանաներ և դպիրներ և ժողովուրդներ անոր պարունակութիւնը գոց գիտեն և առանց դիրքի ալ զրուցել, ուստի ապահով եղանակ կը գտնեմ եկեղեցիները փակել որ ճշմարտակար ասացուածները արգիլուին։ Այդ ոճով բացատրութիւններ կ'ընդարձակեմ, որոնք կայսեր կը հաղորդուին, և անմիջապէս կը հրամայուի կնիքները վերցնել ու ժամագիրքերը դարձնել և միւս օր ալ հրամանը կը գործադրուի։

Գինով մը կը ձերբակալուի Պէշիկթաշի մէջ, և ոստիկանատան մէջ խուզարկուած ատեն վրան քանի մը ձեռագիր թերթիկներ կը գտնուին Հայոց Պատմութենէ կտորներով։ Հարցուփորձէն կ'իմացուի թէ իւր տղուն վարժարանէն բերած թերթերն են. գործը դատարանին կը յանձնուի, և կոչնագիր կ'երթայ մանկապարտիզի վարժուհիին, որուն դասարանին մէջ կը գտնուի եղեր գինովին որդին։ Երբ թաղականութիւնը լուր կը բերէ՝ կը հրահանգեմ որ վարժուհին իբրեւ հիւանդ չներկայանայ, և ես ըստ սովորութեան ձեռք կ'առնեմ Եըլտըզի ճանպան։ Եղելութիւնը թահսինի կը պատմեմ, եւ կը վերջացնեմ թէ վարժուհին հրամանատար մըն է, կարգադրութիւնները իմս են, ուստի կոչնագիրն ալ ինծի պէտք է յղուի և ոչ վարժուհիին։ Բայց կոչնագիրը վարժուհիին կը կրկնուի, ես ալ իմ յայտարարութիւնը կը կրկնեմ, գործը կայսեր կը հաղորդուի, և դատը խափանելու հրաման կը տրուի, և միջադէպը կը փակուի։ Բայց վարժապետներ և վարժուհիներ կը սկսին Ազգային Պատմութեան դասը զանց ընել, մինչև որ շրջաբերականով կ'աղդարարուի Ազգային Եկեղեցւոյ պատմութիւնը զանց չընել, և դասերը կը շարունակեն ըստ առաջնոյն։

Եռաձայն և քառաձայն երգեցողութեանց տրուած քաջալերութիւնը և ժողովուրդին ունկնդրութեան համար խուռն դիմելը, առիթ կ'ըլլայ արքունեաց քսութիւն հասցնելու, թէ ժողովուրդը համախմբելու համար թատերական (օպերա) երգեցողութիւններ սկսուած են եկեղեցիներուն մէջ։ Քարտուղարը բերանացի կը հաղորդէ առած լուրը և դարմանել կը յանձնարարէ։ Կը պատասխանեմ թէ չէի սպասեր որ ղիս ընդունակ կարծեն

եկեղեցին թատրոնի փոխարկելու. իսկութիւնը կը բացատրեմ, և եկեղեցիներու պայծառութենէն ժողովուրդին զգացած գոհունակութիւնը կը յայտնեմ, աւելցնելով որ ես ժողովուրդը եկեղեցի հրաւիրելը կառավարութեան հաճելի կը կարծէի, իսկ եթէ հաճելի չէ, դիւրութեամբ կրնամ գինետուններ և սրճարաններ ցրուել։ Այսպէսով կը փակուի այս միջադէպն ալ։

Պէշիքթաշի գերեզմաններուցը Եըլտըզի պալատին կից կը գտնուի, և կայսեր կամքով չատոնց խափանուած էր և գերեզմաննաքարերն ալ հողով ծածկուած էին, բայց բուն նպատակն էր գերեզմաններուցը իսպառ ջնջել և պալատին պարտէզին խառնել։ Վեհապետեան պատրիարքին և Զամիչեան տեղապահին օրէն այդ խնդիրը կը շարունակէր, և Մակար կաթողիկոսէ ալ կայսրը հաճեցնելու հրահանգ եկած էր, և Վեհապետեան ու Զամիչեան գրաւոր պատրաստակամութիւն յայտնած էին, բայց գործադրութիւնը յապաղած էր։ Պալատան կարողագոյն գործիչներէն Իզզէթ բաշա պարագաներէն օգտուելով գործադրութիւնը լրացնել կը ձեռնարկէ, և իբրև փոխարէն հազար ոսկւոյ փոխանակագիր մը կը ներկայէ ինձի, զոր ընդունիլ կը մերժեմ՝ յայտնելով թէ կանոնաց բացառութիւնը կայսեր բարձր կամքին համար յանձն առնել որոշուած էր, և այդ բանին փոխարէն ընդունիլ անհնար էր։ Այդ ձեւը կը գործածէի, որովհետև Վեհապետեանի և Զամիչեանի յայտարարութեանց հակառակ չէի կրնար խօսիլ, իսկ փոխարէն ընդունելով յօժարակամ յանձնառութիւն ցուցուցած կ'ըլլայի։ Ինչպէս այդ բանակցութիւնները կրկնուելէն ետքը՝ Իզզէթ քաղաքապետութեան կը հրամայէ ոսկրները վերցնել տալ, եւ փողոցներու աւելածուներ և աղբակիր կառքեր կը պատրաստուին գործի ձեռնարկել, այն ատեն կը յայտարարեմ և կը պնդեմ թէ ոսկերաց փոխադրութիւնը ճիշդ յուղարկաւորութեանց ձեւով կըրնայ ըլլալ, ուխտաւոր հակումով, քահանայից և դպրաց թափորով և երգեցողութեամբ, հայ գերեզմանափորներով և մեռելակիր կառքերով։ Այդ պայմաններու վրայ ուժգնապէս պնդելս կայսրը կը խրտչեցնէ, գործը կը յետաձգուի, և վերջապէս մոռացութեան մատնուելով կը խափանուի։

Օրթաքէօյի գերեզմանատունն ալ գրաւելու և արքունեաց յարակից Օրխանիէ զօրանոցին կցելու միտքը յղացուեցաւ։ Այդ վտանգին ալ առջև առնելու համար իբրև միջոց գործածեցի ժան-

տախտի տարին չատեր այնտեղ թաղուած ըլլալը, և վարակիչ մանրէներուն հողի մէջ մնալը և ածիլը, և այդ հողը խառնելով Եըլտըզի պալատին իսկ վտանգ սպառնացուիլը, որով գործը քննութեան յանձնուեցաւ և յետաձգուեցաւ և խափանուեցաւ։

Երբոր Մագուտեան Ղեւոդ վարդապետի Կ. Պոլիս գալէն ետքը Երուսաղէմի պատրիարքը Երէցեանն ալ փոխանորդութենէ դադրեցուց 1905ին և տեղը Զիլինկիրեան Եղիշէ վարդապետը յղեց, այդ փոփոխութենէն ցաւողներ Զիլինկիրեանի դէմ ամբաստանագիր մատուցանելով՝ յաջողեր էին օգոստոս 27|9 սեպտեմբերին զայն շոգենաւէ շոգենաւ փոխադրել տալով, նոյնժամայն դէպի Զանագալէ դարձնել տալ։ Լուրը Պէշիքթաշ ատացայ եւ արեւ մտնելէն ետքը Եըլտըզ երթալով կրցայ ետ դարձնելու հրամանը հանել և յղել տալ, և յաջորդ օրը Զիլինկիրեան Կ. Պոլիս հասաւ։ Այդ դիմումիս իբր փաստ գործածեցի Վեհապետեանի դէմ ցուցուած անարգանքը, և ծերունին կսթուածահար ըլլալուն վտանգը, և անոր իբր անուանող և իմ իբրև մօտէն հրակող երաշխաւորութիւնը։

Պատրիարքարանի խուզարկութեան խնդիր մըն ալ յուզեց Նէճիպ Մէլհամէ բաշան, պնդելով թէ պատրիարքարանի գետնափոր նկուղներուն այսինչ տեղը Իպմիրլեանի օրէն պահուած զէնքեր կան. թէպէտ նպատակը մինչև պատրիարքարանի դիւանները մտնել և գաղտնիքներ ու ծածուկ յարաբերութիւններ մէջտեղ հանել էր։ Ես պնդեցի թէ հարուածը ուղղակի իմ անձիս դէմ եղած կ'ըլլայ, ուստի պէտք էր նախապէս զիս պաշտօնանկէին և յետոյ պատրիարքարանը մտնէին։ Օրերով տեւեցին այդ բանակցութիւնները՝ առաջ Նէճիպ Մէլհամէի և յետոյ Թահսինի հետ. պատրիարքարանը ոստիկանական հսկողութեան ներքև ալ առնուեցաւ, բայց ես իմ առաջին յայտարարութենէս չփոխուեցայ, մինչև որ կայսրն ալ ուրիշ ելք չգտնելով, հրամայեց որ ես ինքս կատարեմ խուզարկութիւնը իւր և իմ ապահովութեան համար։ Այլեւս այս ձեւին աւելորդ սեպեցի ընդդիմանալ, միայն պայման դրի նախապէս ոստիկաններուն հեռանալը, և 1905 հոկտեմբեր 3|16ին պատրիարքարանի դուռները փակելով, և դիւանապետներէ և դիւանատեսուչներէ օգնականներ առնելով և ես ալ անձամբ գետնափորները իջնելով պատրիարքարանի ներքնայարկը պարզեկ պարզ սկսայ, որ տակաւին

կը մնային չէնքին հիմնարկութեան օրէն գոյացած աւելորդներ և շարունակ դիզուած աւելածներ, որոնք նախ պարտէզները լեցուեցան և յետոյ բնակիր իշերամակներով ծովը թափուեցան։ Միայն հնագարեան երկաթեայ գունտ մը գտնուեցաւ, զոր փուլթացի պալատ դրկել խրրեւ խուզարկութեանց միակ արդիւնք։

Ցիշատակեմ նաև Ոստիկանութեան Նախարար Շէֆիք բաշայի հանդէպ բռնած ընթացքս։ Գաղտնիք մը չէր որ նա պարզ հրամանակատար մըն էր բարձրէն ստացած պատուէրներուն և հրահանգներուն, սակայն ինծի մեղադրութեանց առարկայ մէկ մը պէտք էր, և այս նպատակին կը գործածէի անոր անունը։ Սակէ մէջերնիս բացուած կը տեսնուէր, թէպէտ անձնապէս և պաշտօնապէս աչքառու պարագայ մը չկար։ Նա կը պնդէր որ եթէ հարուցեմ, կրնամ յեղափոխական կամ կուսակցական շարժումները վերջացնել, իսկ ես կը պնդէի որ եթէ նա փոխանակ նախապաշարեալ գաղափարներով շարժելու, իսկութեանց և ստուգութեանց հետեւէր, շատ անտեղութեանց առջեւը առնուած կ'ըլլար։ Յայտնապէս ալ կը մեղադրէի որ խոհական ոստիկանութեան անդիտակ է, և մտացածին կերպերով դժուարութիւնները կը զբաղեցնէ։ Շէֆիք կը կարծէր որ եթէ կուսակցականաց դէմ բանադրանքի կամ նզովքի կոնդակ մը հրատարակեմ, ամէն բան կը վերջանար, իսկ ես այս տեսակ փծուն միջոցներէ խուսափելու համար կուսակցականներու վրայ կրօնական զգացմանց տկարացած ըլլալը կը պատճառէի, բայց երբ կայսրն ալ ոստիկանապետին խորհուրդով հրատարակութիւն մը պահանջեց, երկդիմի իմաստով հրատարակութեամբ մը մէջէն ելնել յաջողեցայ։

Ասոնց նման միջադէպներ դեռ շատ եւս կրնայի յիշատակել, բայց կարծեմ թէ յիշատակուածներն իսկ աւելի եղան։ Լատին առածը կ'ըսէ, թէ Մէկեն մնացածները կ'իմաստասիրուի (Ab uno disce omuia), որովհետեւ ամէն գործիչ իրեն համար որոշ գիծ մը կ'ունենայ, զոր կը սիրէ և կը նախընտրէ, և անոր ունակութիւնը ստանալով, միշտ նոյն կերպ կը գործէ։ Ես ալ յիշուած միջադէպները իբրև նմոյշ յառաջ բերելով այդ կ'ուզէի ցուցնել՝ թէ քանի որ կարեւորագոյն առիթներու մէջ այս կերպով խօսիլ ու դիմադրել ու գործել սովորած էի, բոլոր ընթացքիս մէջ ալ այլապէս վարուած չէի կրնար ըլլալ, և թէ ատորնաքարշ եւ ատրկական և լոկ հաճելի ըլլալու ուղղուած գործունէութիւն մը

ինձի ընտանի չէր կրցած ըլլալ։ Այդ կէտն է զոր հատուածովս լուսաբանել ուզեցի, ըլլայ իբրև պատմական ատուգութիւն, ըլլայ իբրև անձնական արդարացում։

ԿԷ

Դամասկոս, 1918 փետրուար 23/8 մարտ Ուր.

Մանր դիպուածներ ըստ ինքեան կարեւորութիւն չունին, բայց կը ծառայեն տիրող գաղափարները ցուցնելու և ժամանակին հանգամանքները ապագայից բացատրելու. այդ նպատակով այս տեսակ դիպուածներէն ալ ինչինչ քաղել ու յիշատակել աւելորդ չեմ սեպեր։

Արքունեաց հետ յարաբերութիւնը միշտ առաջին քարտուղար Թահսին բաշայի հետ կը կատարէի։ Կայսեր հետ երես առ երես տեսակցութիւններ ցանցառ էին, զի Սպտիւլհամիտ չատ վերապահութիւններ ունէր այդ մասին, և ամենուն հետ ալ բացառիկ պարագաներու կը պահէր անձնական տեսակցութիւնները։ Ասոնք տեղի ունեցան 1896 նոյեմբեր 23/5 դեկտեմբեր առաջին ներկայացման, 1899 դեկտեմբեր 7/20ին շնորհաւորութեան ուշ հասնելուս, 1903 յունուար 31/13 փետրուարին մահափորձի առթիւ շնորհուած ունկնդրութեան, և 1904 սեպտեմբեր 17/30ին Խապայեան կաթողիկոսը ներկայացնելուս առիթներուն։ Շնորհաւորութեանց համար հոգեւոր պետեր խմբովին կ'երթային, բայց միայն իւր ծննդեան և գահակալութեան տարեդարձներուն անձամբ կ'ունկնդրուէին, իսկ երկու պայրամներուն միայն ուղերձներ կը ներկայացնէին առաջին սենեկապետ Հաճի Ալի բաշայի ձեռքով և շնորհակալութեան բարեւը կը լսէին։ Ինքն միշտ ոտքի վրայ կը դտնուէր և այնպէս կ'ընդունէր, միայն ուշանալուս և մահափորձի առթիւ տուած ունկնդրութեան ատեն նստեցուցած ու խօսակցութեան մղած է, ուրիշ անգամներ պաշտօնական յայտարարութիւններ և խոստումներ խօսած է, գրեթէ միշտ նըմանօրինակ ձեւով։ Կայսերական պատիւ ըլլալով ամէն բանա-

զանին անգամ մը Եֆնաբի ընթրիքին կը գանուէինք, հնաւանդ ձեւով մեծ ափսէի մը շուրջը բոլորուելով, մէկ պնակէ ուտելով և մէկ գաւաթէ խմելով, թէպէտ վերջէն գրամական նուէր մը ստանալով։ Իմ առաջին անգամ գտնուիլս տեղի ունեցաւ 1897 փետրուար 8/20ին։ Հոգեւոր պետերու առանձինն տրուած փառաւոր կոչունքի երկու անգամ հանդիպեցայ, 1898 մարտ 12/24ին Նաիմէ դատելը հարսնութեան, և 1899 մայիս 28/9 յունիսին Ապտիւրրահիմ որդւոյն թլփատութեան առթիւ։ Գահակալութեան համար բացառիկ ընդունելութիւն տեղի ունեցաւ 1900 օգոստոս 19/1 սեպտեմբերին իւր քսանհինգամեակին առթիւ. իսկ նախընթաց օրը ցուցահանդէսին դրուելու համար ընծայ մըն ալ յըղեցի, որ էր Ամմէյտանի կոթողին կանգնաչափ արծաթեայ օրինակը հարուստ տուփի մը մէջ փակուած, և ասեղնագործ մեծ գորգ մը. իսկ 1906 օգոստոս 19/1 սեպտեմբերին կայսեր հիւանդութեան պատճառով միայն հոգեւոր պետերս ընդունուեցանք իւր առանձնասենեակին մէջ։ Իմ ալ 1901ին ծանր պալարով հիւանդանալուս առթիւ սեպտեմբեր 29/12 հոկտեմբերին սենեկապետ Արիֆ Պէյը որպէսզի հարցնելու յղած էր։

Նախարարներու հետ սեղմ պաշտօնականէն դուրս յարաբերութիւն չունեցայ, և ունենալ ալ ներեալ չէր, նոյնիսկ իրենք ալ ժողովներէ և պաշտօնատուններէ դուրս իրարու հետ չէին կրնար տեսակցիլ։ Նախարարներու փոփոխութիւններ շատ քիչ եղան, և մեկի հետ պաշտօնական յարաբերութիւն պահող Արդարութեան ու Կրօնից և Ներքին Գործոց նախարարները, Ապտիւրրահման և Մէմտուհ բաշաներ, միշտ նոյն մնացին, միայն Մեծ եպարքոս Խալիլ Ռիֆաթ բաշայի մեռնելէն ետքը Ֆիւչիւք Սայիտ բաշա յաջորդեց 1901 նոյեմբեր 4/17ին, և ասոր ալ քիչ ետքը հրաժարելուն վրայ Ֆէրիտ բաշա անուանուեցաւ։ Բոլոր նախարարութեանց հետ միշտ լաւ յարաբերութիւններ մշակեցի, և պատահաբար օգուտներ ալ ունեցայ, թէ՛ իրենց ճիւղին, և թէ՛ ժողովական որոշմանց մէջ։

Նահանգներու կուսակալներուն և գաւառներու կառավարիչներուն հետ ուղղակի յարաբերութիւն պահեցի, յատկապէս պայրամներու շնորհաւորութիւններով, որով ճանպայ բացի իրենց սահմանին մէջ հանդիպած անտեղութեանց համար ուղղակի իրենց գիմելու, փոխանակ նախարութեանց գրելու, և իբրեւ զի-

րենք ամբաստանելով պաշտպանութեան և գայրացման գրգռելու։ Այս կերպով աւելի օգտուեցայ բուսական գործեր մտերմաբար կարգադրելու, քան եթէ նախարարութեանց դիմէի։ Մեծ և փոքր պետութեանց դեսպաններու հետ կրկնակի յարաբերութիւններ պահեցի, թէ՛ պաշտօնական և թէ՛ մտերմական գետնի վրայ։ Մտերմականը աւելի մեծ տէրութեանց դեսպաններուն հետ տեղի կ'ունենար, փոխադարձաբար անոնց տրամադրութիւնները իմանալով, և մեր տեղեկութիւնները հաղորդելով, միշտ գաւառներու բարեկարգութեան և գաւառացիներու բարօրութեան շուրջը դառնալով, և միջազգային դաշնագիրներու շրջափակէն դուրս չելլալով։ Սանձին պէտք է յիշատակեմ Պուլկարիոյ և Ռումանիոյ և Յունաստանի դեսպանատանց հետ իրենց հպատակ Հայերուն եկեղեցական և դպրոցական գործերուն մասին բարեացակամ կարգադրութիւնները, քանի որ այդ երկիրները Կ. Պոլսոյ պատրիարքարանին հոգեւոր իրաւասութեան ենթարկեալ վիճակներ կը կազմեն։ Նախապէս Եւրոպա և Ամերիկա ալ Կ. Պոլսոյ վիճակներ էին, սակայն անոնցմէ կամովին հրաժարեցայ, այն տեղեր կատարուած շարժումներուն պատասխանատուութենէն ազատ մնալու համար, և Մայր Աթոռն ալ հաւանեցաւ ուղղակի իւր իրաւասութեան ներքև առնել։ Օտար տէրութեանց Կ. Պոլիս այցելող վեհապետներէն և արքայազուններէն, Ռուսիոյ Նիկողայոս մեծ դուքսին հետ անձամբ տեսակցեցայ 1898 հոկտեմբեր 7|19ին։ Պարսից շահին հետ 1900 սեպտեմբեր 18|1 հոկտեմբերին տեսակցելու համար ամէն կարգադրութիւններ լրացած եւ երթալու վրայ էի, երբ վերջին վայրկեանին արքունեաց միջամտութեամբ խափանուեցաւ։ Իսկ Գերմանիոյ կայսեր հետ տեսակցութիւնը թէպէտ դեսպանին կողմէ ընդունուեցաւ և աշխատուեցաւ, սակայն Վիլհելմ կայսեր կողմէ պէտք եղած մտադրութիւնը չընծայուեցաւ, արքունեաց հաճելի ըլլալու դիտմամբ։

Պատրիարքարաններու հետ յարաբերութիւնը աւելի սերտ և մտերմական ընելու աշխատեցայ, որպէսզի հնար ըլլայ ի հարկին համիմաստ գանգատներով և բողոքներով մեր դիմումները զօրացնել։ Ծնունդի և Զատիկի շնորհաւորութիւնները միշտ փոխանորդներու ձեռքով կը կատարուէին, և միայն նոր ընտրութեանց առթիւ պատրիարքներ անձամբ այցելութիւններ կը փոխանակէին։ Ես նախաձեռնութիւն առի գոնէ տարին մէկ ան-

գամ Զատիկի տոթիւ անձամբ այցելութիւններու սովորութիւնը հաստատելու, և Յունաց և Կաթոլիկաց և Պուլկարաց պատրիարքներու հաւանութիւնը ստանալով, առաջին անգամ 1898 ապրիլ 7|18ին Յունաց պատրիարքարան այցելութեան գացի, եկեղեցի ալ իջնելով ատենաբանեցի, և միւսներուն գալէն ետքը անոնց ալ փոխանակեցի։ Ծնունդի շնորհաւորութեան խօսք չըրի, վասնզի դեկտեմբեր 25|6 յունուարին ես պիտի պարտաւորէի ամենուն կանխել, և անագան յունուար 6|18ին անոնց այցելութեան ապասել։ Իսկ նոր ընտրութեանց այցելութիւնները միշտ անձամբ կատարուեցան առաջին սովորութեանց համաձայն։

Յունաց պատրիարք Կոստանդինի հետ դրեթէ եղբայրական եղաւ յարաբերութիւնս, և անոր 1901 մարտ 21|2 ապրիլին հրաժարելէն ետքը, մայիս 25|7 յունիսին Յովակիմ աթոռ վերադարձաւ, որուն հետ նախածանօթ էինք և միևնոյն լաւ յարաբերութիւնները շարունակեցին։ Հայ Հռոմէականաց հետ ներքին անհամաձայնութիւնը չէր կրնար ջնջուիլ, բայց պաշտօնական պայմանները անեղծ պահուեցան։ Ստեփանոս Պետրոս Ժ. Սգարեան 1899 ապրիլ 10|22ին մեռաւ, և յուլիս 14|26ին յաջորդեց Պօղոս Պետրոս ԺԱ. Էմմանուէլեան, որուն հետ մեր այցելութիւնները փոխանակեցինք նոյեմբեր 17|29ին և նոյեմբեր 27|9 դեկտեմբերին։ Էմմանուէլեանի ալ 1904 ապրիլ 5|18ին մեռնելուն վրայ յուլիս 22|4 օգոստոսին ընտրուեցաւ Պօղոս Պետրոս ԺԲ. Սապպաղեան, և անոր հետ ալ այցելութիւններ փոխանակուեցան։ Իսկ Պուլկարաց Յովսէփ (Եօզէֆ) եկսարքը պաշտօնին վրայ էր և շարունակեց, և 1902 ապրիլ 23|6 մայիսին իւր պաշտօնավարութեան քսանհինգամեակը շնորհաւորեցի։ Բողոքականաց ազգապետ էր Յակոբ Պօյաճեան, որուն հետ ազգային և մտերմական յարաբերութիւնս ամենակատարեալ եղաւ։

Զանց կ'ընեմ ազգայնոց եւ օտարազգեաց հետ պահած յարաբերութիւններս բացատրել։ Ես ընութեամբ մարդամօտ եւ պաշտօնով ամէն պարագայէ օգուտ քաղելու մտադիր՝ ջանացի, որչափ հնար էր, ծանօթութիւնները եւ յարաբերութիւնները ընդարձակել, առանց նկատի առնելու թէ ինծի համակիր են կամ հակակիր, բաւական էր որ հնար ըլլար անոնցմէ օգտուիլ։ Շատ հակակիրներ պաշտօններու կոչած եմ, այս կամ այն գործին ունեցած յարմարութիւններուն համար։ Բերայի մէջ այցելութեանց

ՀԻՆԼԸ բացարձակապէս խափանած եմ, զի լուր օրեր անհնարին էր, գիշերներ գժուարին, կիրակիներ զբաղուած, և թիւով անհամար, ուստի լաւագոյն սեպեցի հաւասարապէս չերթալ, եւ Ծնունդի ու Զատիկի շնորհաւորութիւնները երկու հարիւրէ աւելի յատուկ այցեռոմներով, նոյնպէս անուններու շնորհաւորութիւնները բարեմաղթական տոմսերով կը կատարէի։ Բայց ամառուան մէջ գիւղերը գտնուած օրերս օգտակարութեան եկած գլխաւորներու և արդիւնաւորներու ընտրանօք կ'այցելէի։ Ընտանիքներու հետ տեսակցութիւններէ ալ չէի խուսափեր, եւ այս կողմէ բնաւ գրոյցի ենթարկուած չեմ։ Շաբաթը երեկոյ մըն ալ ընտանեկան այցելութիւն ընդունելու յատկացուցած էի։ Աւելի մանրամասնութեանց մտնել աւելորդ կը դատեմ, գրուածները բաւական են ընթացքիս վրայ գաղափար մը տալ։

ԿԸ

Դանսոլոս, 1918 փետրուար 24/9 մարտ Շբ.

Կենացս մեծագոյն եւ արդիւնաւորագոյն գործը սեպած եմ Դպրեվանքի աշխատութիւնս. լաւ զի կրցած եմ եկեղեցւոյ եւ ազգի համար օգտակար անհատներ պատրաստել, որոնք խօսուն փաստեր են տարուած աշխատութեանց։ Վարչական աշխատութիւններ ամենէն ապաշնորհներն են. հազիւ թէ կրնաս օրական պէտքը լրացնել կամ տագնապ մը արգիլել, որ շուտով մոռացութեան կը տրուի, եւ եթէ գործերէդ տասնէն մինը, գուցէ եւ իններորդէսը յաջողցնես, կէսին անյաջողութեան համար կը բամբասուիս եւ կ'անարգուիս։ Դպրեվանքը գրական աշխատութեանց ճիւղին կը պատկանի, որ ապահովագոյն եւ արդիւնաւորագոյն եւ պատուաւորագոյն ճիւղն է մեր աշխատութեանց, եւ, եթէ անզգամութեամբ խօսելով, փառքի տենչանք ալ ունենաս, գրականն է որ գործդ եւ անունդ կ'անմահացնէ։

Կարեվէր հարուած մըն էր զոր Զամլիչեան տեղապահ ու Նուբեան տոնապետ 1896 հոկտեմբերին ինծի պատճառեցին երբ

յայտարարեցին Դպրեվանքի Հոգւոցը ըսել, սակայն բախտը այնպէս բերաւ որ երեք շաբաթ ետքը ինծի վիճակեցաւ իրենց տարօրինակ յայտարարութեան Հոգւոցն ըսել։ Դպրեվանքը վերակենդանացնելու առիթը կը ստանայի պատրիարքական ընտրութեամբ, և հնար չէր որ նոր պաշտօնիս կարևորագոյն գործը չը համարէի Դպրեվանքի յարատևութեան աշխատիլ, և բարեկարգութեան զարգացման միջոցները պատրաստել։

Եղիշէ Դուրեան վարդապետի հետ Արմաշէ մեկնած առենիս, լքեալ հաստատութեան դպրանոցական հոգը Տէր-Եղիսեան Զաւէն վարդապետի յանձնած էինք, իսկ Տէր-Եղիսեանի Կ. Պոլիս կոչուելուն առթիւ անոր գործը Համամճեան Սղան վարդապետի անցած էր։ Աբիկ Ունճեան բարերարին դատապարտութենէ եւ բանտարկութենէ ազատուելովը նիւթականին հոգածութիւնը կը դիւրիններ, Նպաստից մնաուկէն ալ օգնութիւն հընար էր հայթայթել, վի արկածեալներուն մէկն ալ Դպրեվանքն էր եղած, բայց գործին գլուխը կարող անձ մը պէտք էր, և այս ալ միայն Եղիշէ Դուրեան վարդապետը կրնար ըլլալ, որուն հետ վեց տարի աշխատակից եղած էինք, եւ ուսումնական հաստատութիւն մը վարելու կարող միակ եկեղեցականն էր։ Որչափ ալ նա կը դժուարէր անապահով կացութեան հանդէպ պատասխանատուութիւն ստանձնել, սակայն զգացումները վառ էին Դպրեվանքին հանդէպ, և իմ ստիպումները և շատերու յորդորները յաղթանակը տարին, եւ 1897 տարւոյ առաջին կէսը չլրացած, Դուրեան համոզուեցաւ և Դպրեվանքի վերատեսչութիւնը և Արմաշի փոխ-վանահայրութիւնը ստանձնեց և գործի ձեռնարկեց, կրօնական ժողովականի իրաւունքն ալ պահելով։ Դուրեանի գլխաւոր ասպարէզը պիտի ըլլար Դպրեվանքի ներքինն եւ ուսումնականը, իսկ արտաքինն ու նիւթականը, այսինքն պաշտպանութիւնն ու դրամականը ինծի կը մնար հոգալ, ճարել եւ ժամանակին հասցնել։ Դպրեվանքի նախնական կազմակերպութեան առեն վանահայրութիւնը Կ. Պոլսոյ պատրիարքներուն վերապահուեցաւ, այլ պարզ անուանական էր այդ կոչումը՝ Դպրեվանքի Պատրիարքեան Կ. Պոլսոյ դրութիւնը արդարացնելու համար։ Ես նոյնպէս չէի կրնար ըլլալ, քանի որ կազմիչն ու վարիչը եղած էի, և նոր պաշտօնովս նախնական դիրքս աւելի եւ կ'ընդարձակուէր։ Այս դրութեան համեմատ գործի ձեռնարկուե-

ցաւ, և այսպէս ալ շարունակեց պատրիարքութեան երկոտասանամեայ սեղուութեան ժամանակ։

Դպրեվանքի շուրջը գրուելիք հատուածը երկու զանազան մասեր պիտի ունենայ. մէկը արդէն հասած աշակերտներէն քաղուելիք արդիւնքը, և միւսը՝ նոր աշակերտներ հասցնելու ձեւնարկը։ Կ. Պոլսոյ մէջ բաւական թուով եպիսկոպոսներ և վարդապետներ կային, մինչ գաւառներ անառաջնորդ կը մնային, զի տիրող տագնապին դժուարութիւնները եւ մայրաքաղաքի կեանքին ընծայած դիւրութիւնները կը յորդորէին գաւառական աշխատութիւններէ խուսափիլ, եւ պատճառանքներ ստեղծելով ու միջնորդներ ճարելով տեղերնէն չշարժուիլ։ Դպրեվանքը ունէր իմ հասուցած նորընծաները, մաս մը տարի առաջ եւ մաս մը օր առաջ ձեռնադրուած, սակայն տակաւին երիտասարդ ու անփորձ էին, և իրենները առջև քշող ըսուիլ չէի ուզեր։ Ուստի առաջին գաղափարս եղաւ անոնք իրրեւ օգնականներ յղել հինաւուրց առաջնորդներու մօտ, սակայն նոյնիսկ այս առաջնորդներն եղան որ օգնականներ ունենալ չուզեցին, հաւանաբար Դպրեվանքցիներուն առաւելագոյն հմտութենէն խիթալով։ Եօթն էին 1895ին ձեռնադրուածները, չորս ալ վերջին Խաչվերացին ձեռնադրեցի, եաև մնացողներն ալ պատրիարքութեան սկիզբները ձեռնադրեցի, մէկը 1897 յունուար 17|31ին, ուրիշ մը սեպտեմբեր 28|10 հոկտեմբերին, և վերջինը եղաւ 1898 յուլիս 12|24ին իբր քահանայ ձեռնադրուած Մկրտիչ Զլղատեան, որ շուտով այրիանալով վերադարձաւ։ Ընդամէնն տասնեւչորս եղան իմ ձեռնադրածները։ Անցողակի աւելցնեմ, թէ բոլոր պատրիարքութեան ժամանակ Դպրեվանքցիներէ դուրս մէկը չձեռնադրեցի, և պատահած ձեռնադրութիւնները միշտ ուրիշ եպիսկոպոսներու կը թողուի։

Գաւառական պաշտօնավարութեանց դառնալով, Վարչութիւնը հարկ տեսաւ Դպրեվանքցիները քանի մը ամիսներ վարչական գործերու հմտացնելէ և վարժեցնելէ ետքը գործի հանել, և ըստ այսմ 1897 սեպտեմբեր 26|8 հոկտեմբերին Բարգէն Կիւլէսէրեան ուղեւորեցաւ Ճանիկ, սեպտեմբեր 30|12 հոկտեմբերին Խաչով Պէհրիկեան Տրապիզոն և Մուշեղ Սերոբեան Արաբկիր, 1898 փետրուար 23|7 մարտին Զաւէն Տէր-Եղիայեան Կարին և Թադեւոս Դուրեան Զմշկածագ. ասոնց ետեւէն Սմբատ Սաատէթեան,

Շապինգարահիսար, և 1899 մարտ 10/22ին Վահրիճ Շահլամեան Վան, իբր Սալմանեան Ներսէս եպիսկոպոսի աջակից։ Արդէն Իզմիրլեանի օրէն Երուսաղէմի միաբաններէն ալ Անանիա Հաղարածինեան Եդեսիա և Եզեկիէլ Պետրոսեան Տիարպէքիր յղուած էին։ Եւ իմ առաջարկութեան վրայ Եղիշէ Զիլինկիրեան Բաղէշ և Դանիէլ Յակոբեան Երզնկա յղուեցան։ Պաշտօնով գաւառներ գացողները պէտք էր աստիճանով ալ ճոխացնել, ուստի առաջին շրջանի վեցերուն՝ Կիւլէսէրեանի, Պէհրիկեանի, Տէր-Եղիայեանի, Սերոբեանի, Սասունէթեանի և Համամճեանի ծայրագոյն վարդապետութեան աստիճան տուի 1897 սեպտեմբեր 21/3 հոկտեմբերին յատուկ հանդիսութեամբ, եօթներորդը՝ Մաշթոց Փափազեան՝ կանուխէն Պուլկարիա գացած էր։ Իսկ երկրորդ շրջանի հինգերուն մանաւոր իշխանութիւն տուի 1897 դեկտեմբեր 21/2 յունուար 1898ին՝ Թաթուլ Դուրեանի, Թորգոմ Պիլիճեանի և Գնել Գալէմքեարեանի, 1898 մարտ 1/13ին՝ Փառէն Մելքոնեանի, հոկտեմբեր 10/22ին՝ Վահրիճ Շահլամեանի և երրորդ շրջանէն Տիրայր Մարգարեանի՝ օգոստոս 15/27ին։ Դպրեվանքցիներէ զատ պաշտօնի վրայ գտնուողներուն ալ պէտք եղած տուուչութիւնները կատարած եմ։ Հետզհետէ ամիթ ներկայանալուն բոլոր գաւառական պաշտօնի վրայ գտնուողները լանջախաչով և չքանչանով ալ քաջալերելու և զօրացնելու հետամուտ եղած եմ։ Այս տեղեկութիւնները բաւական ըլլան Դպրեվանքցոց պաշտօններու մտնելուն սկզբնաւորութիւնը բացատրելու. անոնց պաշտօնավարութեանց շարունակութեանը հետեւիլ նպատակէս դուրս կը նկատեմ և զանց կ'ընեմ։ Իբրև վարդապետական աստիճաններու տուուչութեան յաւելուած յիշեմ՝ 1899 յուլիս 30/11 օգոստոսին Կեսարիոյ առաջնորդ Տրդատ Պալեանի, եպիսկոպոսական ձեռնադրութենէն ետքը, ծայրագոյն վարդապետութիւն տալս, որպէսզի իւր պաշտօնավարութեան ընթացքին վարդապետական օրհնութիւններ կատարելէ չարգիլուի։ Իսկ Դպրեվանքցիներու պաշտօնավարութեան մասին մնծաւ գոհունակութեամբ պիտի յայտնեմ, թէ ուր ուրեք որ գտնուեցան՝ միշտ իբր ժրաջան, անձնուէր, ուսումնասէր, ժողովրդական, եկեղեցւոյ և ազգի պաշտպան, կարօտելոց ինամածու, և պարտքերնուն հաւատարիմ պաշտօնեաներ՝ գովելի և յարգելի և սիրելի վկայուեցան, և այդ վկայութիւնը իբրև աշխատութեանցս լիուլի վարձատրութիւն կ'ընդունիմ։

Անցնելով Դպրեվանքէ նոր աշակերտներ հասցնելու մասին, հանրածանօթ է Դուրեանի ուսումնական արժանիքը և ուսուցչական կարողութիւնը, և այդ մասին բացատրութիւններ տալ ուզելը, ստուգութիւնը երկբայութեան փոխարկել կ'ըլլար։ Աշակերտներու ընտրութիւնը ըստ առաջնոյն Կ. Պոլսոյ մէջ կը կատարուէր, և այսպէս կազմուեցաւ 1896ի աշակերտներու մը նացորդներէն և նոր ընտրուածներէն բաղկացած դասարանը, Դուրեանի առաջին շրջանը։ Իմ նախաձեռնութիւնս եղաւ նաեւ Դուրեանը եպիսկոպոսութեան բարձրացնել տալ, որ պահանջ մըն էր իւր նորատացիկ դիրքին ու պայման մը նոր վարդապետներ հասցնելու։ Ուստի ինչպէս պատրիարքական փոխանորդ Գաբրիէլ ծէվահիրճեանը ձեռնադրել տուի Ներսէս Ասլանեանի հետ 1898 սեպտեմբեր 20|2 հոկտեմբերին, հոկտեմբեր 25|6 նոյեմբերին ալ Եղիշէ Դուրեան ձեռնադրուեցաւ Յակոբ Աշոտի և Գէորգ Իւթիւճեանի հետ։ Բայց մինչեւ Դուրեան ձեռնադրուած, ես ձեռնադրեցի վեց սարկաւագները 1898 օգոստոս 30|11 սեպտեմբերին։ Իմ և Դուրեանի համերաշխ գործակցութիւնը անաղարտ մնաց մինչեւ վերջը, միայն պարագայի մը մէջ մեր տեսութիւններ համաձայն չը գտնուեցան, երբոր նա անփոփոխ մնաց Դպրեվանքը լքանելով առաջնորդական պաշտօնի անցնելու միտքին վրայ։ Եթէ Դպրեվանքի ապագային տկարանալը նախատեսելով՝ աշխատեցայ յորդորներով և աղաչանքներով վինքն այդ մտադրութենէն ետ կեցնել, իսկ նա Դպրեվանքի պաշտօնին մէջ իւր ասպարէզը նեղ, բախտը սեղմ և ապագայն անապահով կարծելով, պնդեց ընդարձակ հրապարակ նետուիլ, և արդիւնքներէն օգտուիլ և Զմիւռնիոյ առաջնորդութիւնը ստանձնեց, և իզուր աշխատած եղայ յիշեցնելով ալ թէ Աշըդեան և ես Արմաշէ եկած էինք պատրիարքական աթոռը բաղմիլ։ Դուրեան իւր պաշտօնավարութեան միջոցին տասը աշակերտներ ձեռնադրեց, Մեսրոպ Նարոյեան, Սահակ Օտապաշեան, Մեհրուժան Գոնտոյեան, Երուանդ Փերտահճեան, Արտաւազդ Գալէնտէրեան, Կորիւն Եսայեան, որք են իմ ձեռնադրած վեց սարկաւագները, որոնց միացան Ղեւոնդ Դուրեան, Գարեգին Խաչատուրեան, Գրիգորիս Պալտգեան և Եղիշէ Խաչերեան։ Զորս ալ Զմիւռնիայէ գալով Արմաշի մէջ ձեռնադրեց, իւր ձեռաց ներքեւ հասնողներէն, Պարգեւ Դանիէլեան, Շաւարշ Գասպարեան, Շահէ Սահակեան և Պասկ Տէր-Խորէնեան։

որով ինքն ալ տասնեւչորս ձեռնադրածներ ունեցաւ։ Պէտք է խոստովանիլ որ Դուրեանի մեկնելէն ետքը Դպրեվանքի փայլը աստիճան մը նուազեցաւ, և Թորգոմ Պիլիճեան, Սղան Համամճեան ու Մեսրոպ Նարոյեան, որոնք յաջորդաբար վերատեսչութեան կոչուեցան, չէին կրնար իմ և Դուրեանի ժամանակներուն բարձրութեան յաւակնիլ։ Դուրեանի մեկնելէն ետքը հասնող աշակերտներուն սարկաւագութիւնը դարձեալ ես տուի, ցորչափ պատրիարք կը գտնուէի, 1906 մարտ 19/1 ապրիլին չորսերու, և դեկտեմբեր 24/6 յունուար 1907ին հինգերու, իսկ անկէ ետքը ձեռնադրութեանց համար Նիկոմիդիոյ առաջնորդ Ստեփանոս Յովակիմեան հրաւիրուեցաւ ու կատարեց։

Ըսած եմ անգամ մը, թէ իմ նախընտրած կերպս եղած է, առաջնորդի մը դէմ հակառակութեան նշանը տեսնելուս, զայն անմիջապէս ետ առնուլ և այլուր փոխադրել, որպէսզի առաջիկային ասպարէզը փակուած և գործունէութիւնը ջլատուած չըլլայ։ Այդ նախազգուշութիւնը առաւելապէս գործածած եմ Դպրեվանքցիներու վրայ, որոնք իբրև նորահաս ոյժեր առջևնին երկար և ընդարձակ ընթացքի հաւանականութիւնը ունէին։ Այսպէս հեռացուցած եմ, օրինակի համար՝ Մուշեղ Սերոբեանը Սրաբկիրէն, Թաթուլ Դուրեանը Զմշկածագէն, Զաւէն Տէր-Եղիայեանը Կարինէն, որոնք իրենց գործունէութիւնը շարունակած են Ատանա և Պիլէճիք և Վան։ Միայն երկու պարագաներու մէջ յանկարծակիի եկած եմ, երկուքն ալ Մուշի մէջ, և ներքին զըրպարտութեանց հետեւանօք։ Բաբգէն Կիւլէսէրեան ձերբակալուեցաւ, և հազիւ կրցայ Կ. Պոլիս փոխադրել տալով 1900 դեկտեմբեր 28/10 յունուար 1901ին պատրիարքարանի յանձնել տալ, իսկ Գնէլ Գալէմքեարեանը ազատաբար բանտարկութենէ հանել տուի և իւր տեղը թողուլ յաջողեցայ 1904 մարտ 27/9 ապրիլին, բայց վերջապէս երկուքն ալ ստիպուեցանք անձնական երաշխաւորութեան ներքև մայրաքաղաքին մէջ գործածել քարոզչական պաշտօններով, և նորոգեալ կրօնական ժողովի անդամակցութեան ալ չհամարձակեցանք կոչել, արժանաւորութիւնին յայտնի ըլլալով մէկտեղ։

Այսչափ ալ Դպրեվանքի իմ պատրիարքութեան ժամանակ վարած կեանքին վրայ, զոր բաւարար կը կարծեմ ընդհանուր պաշտօնավարութեանս մասին գաղափարը լրացնելու, միացնելով

Ցիշատակագիրքիս և Ազգապատումիս մէջ և Խոհք ու Խօսքիս սկիզբները գրուածներուս հետ։

ԿԹ

Դամասկոս, 1918 փետրուար 25|10 մարտ Կիր.

Պարիզաբնակութեանս ժամանակին յիշատակները լրացնելու համար թող ներուի քանի մը անհատական և զուտ անձնական դէպքեր առաջ բերել. ո՞չ ապաքէն ինքնակենսագրութիւնը այն տեսակ ակնարկներու ալ համարձակութիւն կուտայ։

Պարտաւորեալ ըլլալով անձամբ արքունեաց, նախարարութեանց և դեսպանատանց և վարժարանաց և անկեղծնոցաց շրջիլ, անհրաժեշտ դարձած էր ամսական վարձքով կառք պահել, որ որչափ ալ ծանօթ և գիտցուած ըլլար, վտանգներէ ապատ չը մնաց։ Առաջին անգամ 1897 յուլիս 22|3 օգոստոսին Գումգապուէ գալուս Ալիպէյ ելքէն բարձրացած ատեննիս՝ ղեկը կառքէն բաժնուեցաւ, և կառքը ամենայն ուժգնութեամբ սկսաւ դէպի վար սուրալ։ Բարեբախտաբար բարապան Կարապետ Սրապեանի ուշած շարժումէն կառքը գնաց մայթերու զարնուիլ ու կեցաւ, և մօտակայ Աճառեանց տունը հանգստանալով՝ կրցայ ճանպան չարունակել։ Ուրիշ փոքր վտանգներ ալ անցուցած եմ 1903 մարտ 13|26ին Գատըրկայի էջքին վրայ, և 1904 յունիս 10|23ին Ղալաթիոյ մէջ, բայց մեծագոյնը տեղի ունեցաւ 1903 մայիս 12|25ին Տոլմապաղչէի էջքին առորտը. ձիերը սանձարձակ վազած ատեննին բեռնաբարձ գոմէշի կառքի մը կը հանդիպին, ուսկից հեռանալու ճիգին մէջ կառքը կը շրջի և կը վնասուի, այլ ես բարեբախտաբար ի կախ կենալով անվտանգ կ'ազատիմ, և արքունական ախոռապետին մօտ հանգստանալով ետ կը դառնամ։

Հեռաւոր թաղեր ալ այցելել փոփոքելով 1904 յուլիս 26|8 օգոստոսին Ապատը գացած էի. Ալէմտաղ ալ երթալու պատրաստուած ատեն, Իւսկիւտարի մէջ շարժումը ընդարձակուելուն արքունեաց կողմէ արգիլուեցայ, բայց միտքս չփոխեցի, առաջ

տնեցիները օդափոխութեան դրկեցի, և 1906 մայիս 13|26ին քրոջս հիւանդութիւնը պատճառելով, առանց կանուխէն լուր տարածելու, գացի և թաղին կացութեամբ ալ հետաքրքրուեցայ։

Կայսեր հաստատած բարեգործական և հանրօգուտ հաստատութեանց այցելութիւնները զանց չըրի, իբր քաղաքավարական պարտականութիւն, և այս նպատակով այցելեցի նախ Բերայի բարձունքին վրայ բացուած մեծ անկեւանոցը, 1903 յունիս 25|8 յուլիսին Զինիլիքէօշկի հնութեանց թանգարանը, և 1905 մարտ 30|12 ապրիլին Համիտիյէ հիւանդանոցը, բերանացի կամ գրաւոր գոհունակութիւն ալ յայտնարարելով։

Պապական անսխալութեան դէմ բողոքելով հռոմէական եկեղեցիէ բաժնուող, երբեմն կարմեղական աբեղայ, տիեզերահռչակ ատենաբան Հայր Յակինթոս Լոյզոն (Hyacinthe Loyson), որուն հետ սերտ մտերմութեամբ կապուած էինք Եւրոպիոյ մէջ, յատկապէս այցելելու համար Կ. Պոլիս էր եկած, և 1901 յունուար 6|19ին Ծննդեան տօնին Մայր Եկեղեցւոյ մէջ իմ ձեռքէ հաղորդուեցաւ։ Խոստովանութեան համար Մկրեան Յովհաննէս աւագերէցը յանձնարարեր էի, և այս տարի խոստովանութիւնը ու մեղայն իտալերէնի թարգմանեցի, իբրև երկուքին հաւասարապէս ծանօթ լեզու։

Յատկապէս զիս տեսնելու համար 1901 սեպտեմբեր 3|16ին Կ. Պոլիս եկաւ իտալացի մտերիմներէս զօրավարութեան ատենաբանով ծովակալութեան բժշկապետ Փելիքս Սանթինի (Felice Santini), որ միշտ ալ թղթակցութիւն կը պահէր։ Ինչպէս նաև իւր ընկերակիցը բժշկական ուսուցչապետ Հեկտոր Մարքիաֆավա (Ettore Marcjiafava), որուն անունը յիշեցի 1875ի հիւանդութեանս և Բարիզ երթալուս առթիւ (Տե՛ս Լ)։ Եռաքէն երկուքն ալ ծերակոյտի անդամակցութեան բարձրացան։

Եռաձայն երգեցողութեան տուած քաջալերութեանս իբր նշանակ պիտի յիշեմ 1906 ապրիլ 13|26ին Ղալաթիոյ դպրաց դասուն երգակցութեամբ յատուկ պատարագ մատուցանելս Ս. Լուսաւորիչ եկեղեցին, և Մայր Եկեղեցւոյ դպրաց դասուն երգեհոն նուիրելս։

Երգեցողութեանց կանոնաւորութեան որչափ հետամուտ, այնչափ ալ ծեքծեքեալ քաշկռտուքներուն հակառակ եմ եղած, և կրնամ ըսել, թէ եռաձայնի պաշտպանութեան մեծ գրգիռը եղած է մեր երաժիշտ տիրացուներուն կամահաճ և քմահաճ եր-

գերը խափանել, և խազերով ձայնագրեալ եղանակներու հպատակ պահել։ Այդ նպատակով Իւղաբերից Արիներուն, պատրաստի Ընտրեալին, Խաչի Այսօր երեւումին, և ուրիշ նմանօրինակ կըտորներուն ամփոփ եղանակներ պատրաստել տալով կիրառութեան մուծեր էի։

Մայր եկեղեցւոյ մէջ ամպիոն մը չինուած է ժամանակին իբր քարոզելու դիւրութիւն, փորձի համար 1902 մարտ 24/6 ապրիլին ուզեցի անկէ քարոզ խօսիլ, բայց տեսնելով որ եկեղեցւոյն սիւները լսելութիւնը կը խանգարեն, փորձը անյաջող դատեցի, և շարունակեցի եկեղեցւոյն բեմէն քարոզել, երբեմն ալ պատրիարքական աթոռէն ծանուցումներ ընել։

Երթեւեկի դժուարութեանց սահմանը ցուցնելու եւ իմ միջամտութեան ընդարձակութիւնը բացատրելու համար բաւական ըլլայ յիշել, թէ նոյն իսկ Բարձրդրան օրէնսգէտ Գաբրիէլ Նորատունկեանի եւ Հանրօգուտ Շինութեանց գիտական ճիւղին պետ Գաբրիէլ Սերվիչէնի դարմանի համար Եւրոպա երթալուն արտօնութիւնները ձեռք բերելու համար իմ յատկապէս արքունեաց դիմելուս և դիմումները կրկնելուս պէտք եղաւ, զի նախարարներուն խնդրանքին իսկ ղլացմամբ պատասխանուած էր։ Այսչափ բաւական ըլլայ մնացեալները հետեւցնելու։

Եթէ նմանօրինակ պարագաներ քաղել ուզուի, շատ դէպքեր եւ դէմքեր կրնայի յառաջ բերել, բայց բաւական բան Ցիշատակագիրքի եւ Ազգապատումի մէջ և Խոհիք ու Խօսքիս սկիզբը ակնարկուեցան, և ամբաստանութեանց վրայ խօսուած ատենը պիտի կրկնուին, առ այժմ կը փակեմ պատրիարքութեանս նկարագիրը, և կ'անցնիմ անոր վերջանալուն և վերջանալէն ետքը տեղի ունեցած դէպքերուն վրայ խօսիլ։

Ը

Դամասկոս, 1918 փետրուար 26/11 մարտ Բշ։

Եկեղեցական պաշտօնները իրենց բնութեամբ առանց պայմանաժամի եւ իբր ցկեանս տեւողական կը տրուին։ Սակայն Տաճկաստանի մէջ այդ ձեւը բոլորովին խափանուած է, եւ պատճառն

ալ եկեղեցականի եւ հոգեւորականի հետ ազգային եւ քաղաքական գործունէութիւն ունենալնին է, որ ահիթ կ'ընծայէ ձրգտումներու եւ ընդհարումներու, հակառակութիւններու ու լքումներու, եւ յառաջ կը բերէ տարաժամ փոփոխութիւններ։ Իմ պաշտօնավարութեանս տեւողութիւնը իննեւտասներորդ դարուն սկիզբէն մինչեւ վերջը պաշտօնի հասնող Կ. Պոլսոյ պատրիարքները գերազանցեց, տասներկու տարիէ միայն երեքուկէս ամիս պակաս, որ է կլոր հաշուով տասներկու տարի։ Գուցէ աւելի ալ երկարէր, եթէ օսմանեան Սզատութեան հռչակումը տեղի չունենար, որ հինը դադրեցնելու եւ ամէն բան նորելու մարմաջը արծարծեց. Կ. Պոլսոյ պատրիարքն ալ բացառութիւն չէր կրնար կազմել, եւ ահա՛ իմ ալ պաշտօնէ դադրելուս իսկական չարժառիթը։

Սզատական առաջին շարժումը տեղի ունեցաւ Եւրոպակողման Մանասթիր քաղաքը, 1908 յուլիս 10|23ին. նոյն երեկոյ ես լուրը առի հեռագրական գործակալութեանց ձեռքով. միւս առաւտու յուլիս 11|24ին երկտող մը երեւեցաւ լրագիրներու մէջ, թէ օսմանեան երեսփոխանութեան վերաբացումը հրամայուած է սահմանադրութեան համաձայն։ Ես օրը օրին ձեռնարկեցի Ազգային Սահմանադրութեան պահանջներն ալ պատրաստել, այսինքն է՝ Ընդհանուր ժողովոյ վերակազմութիւնը, Եկեղեցական Համագումարի հաւաքումը, վարչական գործերու որոշումը, եւ յուլիս 17ին տօնական յիշատակութեան մը պաշտօնական պայմաններով։ Հրաժարելու հարկը զգացած էի, բայց անպատշաճ կը դատէի առանց օրինական դիրքը վերանորոգելու՝ պաշտօնը ու պատասխանատուութիւնը լքանել, զոր պէտք էր վերանորոգեալ իշխանութեան փոխանցել։ Սակայն յուլիս 16|29ին հրաժարելու պարտաւորուեցայ հակառակորդ գործունէութեան պատճառով։ Այդ գործունէութեան մէջ երեք տարբեր տարրներ յայտնի կը տեսնուէին. կուսակցականութիւնը, զեւոնդականութիւնը եւ անձնականութիւնը, որոնք՝ առանց պայմանաւորեալ համերաշխութեան՝ միեւնոյն նպատակի կը դիմէին. Օրմանեանը պատրիարքութենէ հեռացնել, զի իրենց նպաստաւոր չէր եղած, եւ ստուգիւ ալ չէր եղած, վասնզի հակառակին օգտակարութեան չէր համոզուած։

Կուսակցականութեան բուն պետերը, որոնք արտաքսման կը գործէին, տակաւին Կ. Պոլիս դառնալ չէին կրցած երեք չորս

օրերու մէջ, հետեւաբար երկրորդականներ էին մայրաքաղաքին մէջ շարժումի ձեռնարկողները, բայց իրենց գործը ըստ ամենայնի համաձայն էր պետերու ուղղութեան, որոնք վրայ հասնելով զայն իւրացուցին և ընդարձակեցին։ Ղեւոնդականութեան պետերը Մազսուտեան և Երէցեան ներկայ էին, և թէպէտ ակներև հրապարակի վրայ երեւնալէ կը զգուշանային, սակայն իրենց փաստաբաններն ու պաշտպաններն ու թեւարկուներն էին որոնք շարժումին կ'առաջնորդէին և շարժումին իսկութիւնը կը մատնանշէին, զի ես պատասխանատու կը նկատուէի Մազսուտեանի Կ. Պոլիս բերուելուն, անոր հաշիւներուն պրպտուելուն, և անոնց թերի ու ապօրինի կողմերուն մէջտեղ հանուելուն, հետեւաբար վրէժինդիր զգացումը սոսկալի օգտուելու պատեհը կ'ընծայէր իրենց։ Իսկ անձնականութեան տարրը մեծ ու զգալի ներկայացուցիչներ շատ ունէր, զի ես երբեք ընդհանուրին զոհողութեամբ մատնաւորներ գոհացնելու չէի հետեւած, բայց յուլիս 16|29ին ցոյցին գլուխ գտնուողներ՝ Սեւակ Սուրէնեան, Խընդիր Սիմոնեան եւ Արիստակէս Փասպարեան՝ չուզելով իսկ ինքզինքին կը մատնէին. կարողութեամբ չափաւոր բայց յաւակնութեամբ մեծամիտ փաստաբաններ՝ ո՛չ իմ և ո՛չ Վարչութեան վրայ նպաստաւոր գաղափարներ չէին ազդած, պաշտօններու մարմաջին յագուրդ չէր տուած, անձնական շահու ծրագիրներին ընթացք չէր ունեցած. իրենց զայրոյթին ենթարկուիլս բնական հետեւանք էր։

Իմ վրաս խօսելով պաշտօնէ քաշուելու բնաւ դժուարութիւն չունէի։ Վարչական պաշտօնները իբր պարտադիր բայց ապաշնորհ հարկ նկատած եմ, և ինձ սիրելին ու հաճելին միշտ ուսումնական ու գրականն եղած է, սակայն հարկին հպատակիլն ու անխորդակ գործադրելն ալ իբր խիղճի նուիրական պարտաւորութիւն ընդունած եմ։ Ահա՛ պատրիարքական պաշտօնը յամառօրէն պահելուս ներքին պատճառը։ Նոյն էր այս անգամ ալ. չփոթ ժամանակի և անկերպարան պարագայից մէջ պատրիարքարանը անտէրունչ թողուլ և պատրիարքական իշխանութիւնը անգոյութեան մատնել, կրնար պատասխանատուութիւն հրաւիրել և անախորժ հետեւանքներու տանիլ, անոր համար ո՛չ հրաժարականը կանխեցի, ո՛չ կանխելու յորդորներուն անսացի, եւ ո՛չ առանց օրինաւոր կամ ապօրինի հրաւէրի մը գործել ուզեցի։

Յուլիս 16|29 առաւօտուն իմ հրաւիրած ժողովին իջայ, ուզեցի ցոյցը տեսնալ, ուզեցի Վարչութեան միտքը իմանալ, ուզեցի ինծի կռուան մը ունենալ։ Ցոյցը 40-50 հոգւոյ գործ մըն էր, Ղալաթիոյ սպասաւորներն ու հեռաքրքիրներն ալ միասին համրելով։ Վարչութեան ժողովականները իմ հրաժարիլս առաջարկեցին և յորդորեցին, իբրև հանդարտութեան միջոց և իբրեւ իրենց ապահովութեան պայման։ Ես ատեն միայն հրաժարականս գրեցի, յատկապէս յիշելով Ազգ. Սահմանադրութիւնը տասներկու տարի ամբողջութեամբ պահելս, և կատարեալ վիճակի մէջ ազգին յանձնելս։ Այս պարագաներն են որ իմ և ուրիշներուն միջև բացատրութեանց տարբերութիւն մը յառաջ բերած են։ Անոնք սովորած են զիս տապալած, մերժուած, գահընկէց և պաշտօնանկ ըսել, իսկ ես հրաժարած ըսած եմ և թերեւս երկուքնիս ալ իրաւունք ունինք։ Անոնք երեւոյթին կը կառչին, ես ներքինին կը նայիմ. հրաժարելու պատրաստական ըլլալով մէկտեղ, ցոյցն ու Վարչութեան միտքը ինծի հիմ ընել ուզած եմ, հրաժարականին ճանպան իմ կամքով բացած եմ, ցոյցը գիտակցաբար հրաւիրած եմ, քանի որ նախաձեռնութեամբս վրաս պատասխանատուութիւն հրաւիրելէ զգուշացած եմ։ Այսօրուան օրս ամէն բերան իմ քաշուիլս ինքնակամ եղած կը ճանչնան և որով իրաւունք պիտի ունենային զիս ինքսին պարտական ընել, եթէ ես ցոյցէն ժամ մը առաջ ինքնայորդոր հրաժարագիր ստորագրած ըլլայի։ Ուրախ եմ որ իմ ընթացքին մէջ ես արդարացած կը մնամ։

Պատրիարքութենէ հրաժարողներուն կամ հրաժարեցուցողներուն ես առաջինը չեմ, և վերջինն ալ չեղայ։ Իննեւտասներորդ դարու առաջին տարիէն սկսելով մինչև այսօր միայն Ներէս Վարժապետեանն է որ աթոռի վրայ վախճանեցաւ, եթէ չյիշեմ Իգնատիոս Գոգմաճեանը որ աթոռ չնստած վախճանեցաւ։ Ամէն հրաժարողներուն գործը հրաժարած օրերնին փակուեցաւ, պաշտօնէ դադարումնին ուզուեցաւ և դադարեցան, և այլեւս անցեալով զբաղող չեղաւ. ինծի միայն պահուած էր հրաժարականի օրէն ամբողջ չորսուկէս տարի անցեալին ներքև մնալ, կախակայեալ կացութիւն մը վարել, ամբաստանուիլ, հարցաքննուիլ և դատուիլ, որ ոչ մէկ հրաժարեալ կամ դադարեալ պատրիարքի դէմ գործածուած էր։ Շփոթ ժամանակին հետեւանքն էր այս,

թէ պժգալի կիրքերու ժայթքումն էր. եղելութեանց պատմութիւնը պիտի բացատրէ։

ՀԱ

Դամասկոս, 1918 փետրուար 26|11 մարտ Բշ.

Սթոռէ ինչնելս և պատրիարքութենէ դադարիլս բաւական չեղաւ երեք հակառակորդ տարրներն ալ գոհացնել. նախատելու և անարգելու և մինչև իսկ տանջելու ձգտող կիրքեր ասպարէզ եկան։ Յուլիս 16|29ին Ղալաթիոյ ժողովարանէն տուն եկած էի, հետեւարար պէտք եղած կարգադրութեամբ պատրիարքարանէ մեկնած չէի, միայն թէ ինչինչ կարեւոր բաներ ձեռքի պայուսակիս մէջ էին, և ինչինչ ալ նախատեսութեամբ նախընթաց օրերու մէջ տուն բերած էի, և սկսայ հնարաւորութեան ներածին չափ գործառնութեանցս ամփոփումն ընել։ Առաջին ձայները որ անձնականիս դէմ սկսան լսուիլ՝ Նպաստից դրամը աղիկամի գործածած, և լաւ մաս մը, մինչև 30-40,000 ոսկի, իւրացուցած ըլլալս էր. ուստի ես ալ պարտաւոր էի անկէ սկսիլ և Նպաստից հաշիւները ու տեղեկագիրը պատրաստել, որպէսզի հրատարակեմ և զրոյցները վերջացնեմ։ Դրամական գեղծարարութեան խնդիրը դիւրաւ մատնացոյց կ'ընէր երեք տարրներէն զեւոնդականութեան վարած գլխաւոր դերը, մանաւանդ որ անձնականութեան տարրին գլխաւորներն ալ Մագուտեանի փաստաբաններն էին։ Զրոյցը ծրագիրի, ծրագիրը գործի, և գործը գործադրութեան շուտով յառաջեցին, ապառնական լուրեր բերողներն ալ պակաս չեղան, և յուլիս 25|7 օգոստոսին տխուր իրականութիւնը յայտնուեցաւ։ Մատթէոս Իզմիրլեան նախորդ պատրիարքի ստորագրութեամբ գրուած մը ալ տպագրութեամբ ցրուեցաւ, թէ արդեօ՞ք Օրմանեանի փախչելէն ետքը իրմէ հաշիւ պիտի պահանջուի, ուսկից ծագում առաւ զիս հակողութեան ներքև առնելու և փախուստս արգիլելու գաղափարը։ Իզմիրլեան գրուածին հեղինակութիւնը մերժեց, բայց քննութիւն բանալէ և մերժումը ապացուցանելէ

զգուշացաւ, կ'երեւի որ եթէ գրուածը յերիւրուած էր, համամտութեան վրայ վստահութիւնը ստացուած էր։ Վերոյիշեալ օրը յանկարծ Ըթըր փողոցի թիւ 1 բնակարանիս շուրջը խաժամուժի ամբոխ մը լեցուեցաւ, օտարազգի հեւաքրքիրներ և ձայնակիցներ ալ խառնուեցան, հայհոյներ բարձրացան, ազազակներ չատցան, պատուհաններու երկաթներէն մագլցողներ ալ եղան։ Նըպատակն էր զիս բռնի պատրիարքարան տանիլ ու փակել, զի ես առանց պատրիարքարանի գրաւոր հրամանին տեղէս չմեկնիլս կը պնդէի։ Ժամերով տեւեց այս խայտառակութիւնը, մինչև որ ոստիկանութիւնը միջամտեց, և ինքն ուզեց տիրանալ իմ անձին, և ոստիկանական նախարարութեան մէջ ապահովել։ Պաշտօնական հրամանին պարտաւորուեցայ համակերպիլ. կառք բերուեցաւ, ոստիկաններուն հետ նստեցանք, և հաւաքուած խաժամուժով շրջապատուած անցանք Բերայի և Ղալաթիոյ մեծ փողոցները և կամուրջը, և Պապը Ալիի պողոտայէն վեր պարապորդներ աւելցան, ազազակներ չլռեցին, երեք չորս տեղ անիւները վնասելու և կառքը ու մէջինները վտանգելու փորձեր ալ եղան։ Կառքին մէջ աղմկուած խայտառակ կատակերգութեան վերջը կը դիտէի, ասուածային աջոյն պահպանութեան կը յանձնուէի և կը հաւատամ թէ ներքին ալյալութիւն չէի զգար։ Բարձրդուռէն անդին խաչփողանին վրայ մրցակից պայքար մը սկսաւ ոստիկաններու և զիս պատրիարքարան տանիլ ուզողներուն միջև, զի առաջինները ոստիկանութեան ապարանքը տանիլ կը պնդէին, բայց յաղթանակը եաքիններուն մնաց, և ուղիղ հասանք պատրիարքարան, ուսկից հեռացած էին Դուրեան տեղապահ և պաշտօնեայք. միայն ոստիկանները յաջողեցան խուժանը ներս չընդունիլ, եւ զիս ժողովական սենեակը ապահովել։ Իրողութիւնը Իթթիհատի կեդրոնէն կը լսուի և կը տեսնուի, և հայ ամբոխին իւրովի դատի ու վճիռի ու գործադրութեան յաւակնիլը ապօրէն կը նկատուի, ուստի կ'որոշուի միջամտել և զիս տուն դարձնել։ Թուրք լրաբեր մը կը կանխէ տեղեկութիւն բերել, մինչ Զիլինկիրեան վարդապետ և Ինճէեան Միհրան փաստաբան (այժմ Մատթէոս եպիսկոպոս) կ'ուզեն զիս մնալու համոզել, իսկ ես կը նախադասեմ իշխանութեան յանձնուիլ։ Շուտով կը հասնին Իսմայիլ Հապգը պէյ հոգարապետ, Թալէաթ պէյ (այսօր Մեծեպարքոս) եւ Ենճիպ պէյ, ամբոխին կը յայտարարեն՝ թէ հայ եղբայրներ ազա-

տութեան իմաստը լաւ չեն հասկցած, թէ գործերին ապօրինի է, թէ պէտք է չեղածի վերածուի։ Ինձի ալ ամէն վստահութիւն կը ներշնչեն, կառք բերել կուսան, հեծեալ ոստիկաններու ջոկատ մը կը հրամայեն, և միասին կառք նստելով գիս մինչեւ Բերայի տունս անվտանգ ու ապահով կը հասցնեն։ Բերայի ոստիկանութեան հսկիչներ՝ Ռիզա Թէվֆիգ և Սէլիմ Սըրրի պէյեր պէտք եղած միջոցները ձեռք կ'առնեն, նոր հաւաքուած ամբոխը կը ցրուեն, զգուշութեան պահակներ կը դնեն, և Իթթիհատի գլխաւորներէն ուրիշներ ալ լուր առնելու կը փութան։ Այցելուներ ալ կ'ունենամ. բարեխտաբար տնեցիք գիւղացնացութեան գտնուելով սիրտհատնում չեն ունենար, և արկածին լուրը յաջող վերջաւորութեան հետ միասին կ'առնեն։ Ահա՛ այդ եղելութեան գլխաւոր գիծերը, զոր ալլուր աւելի մանրամասնութեամբ պատմած եմ և որ ուրիշ արդիւնք չունեցաւ, բայց եթէ օտարազգիներուն աչքին հայութեան անունը կոտրել, և ազգային օգտին և պատիւին իսկ անգիտակ ըլլալին հաստատել։ Սակայն ցոյցին ներքին հեղինակներուն կարճամիտ ձգտումներէն տարբեր բան մը չէր սպասուեր։

Երբոր արտաքին կերպով ջնասելու դիտումը չիրականացաւ, մեծ զարկ տրուեցաւ անտեղի գրութիւններու և աղտեղի պատկերներու, որոց տարածման համար ստորին միջոցներու իսկ դիմում եղաւ։ Նոյն իսկ ցերմ համակիր ճանչցուած հրապարակագիրներ և գործադիրներ տիրող հոսանքէն տարուեցան, և բարեմտութեամբ կամ չահագիտութեամբ սկսան ձայնակցիլ և գործակցիլ։ Իւրաքանչիւր ոք իր միտքով պարագայ մը խծբծելով նոր մեղադրանք մը կազմել կը ջանար կամ նոր բան մըն ալ ինքն ըսած ըլլալ կ'ուզէր։ Օրմանեանի դերը թատերական բեմի վրայ հանելու ալ հասան, և ծանօթ բարեկամ մը խեղկատակ դերակատարութիւնը ստանձնեց։ Միւս կողմէն աւելի գործունէութիւն ցուցնելու հետամուտներ պաշտօնական ամբաստանութիւններ ալ սկսան բանաձեւել, և անոնց ոյժ տալու համար երեսփոխանութեան առջեւ հանել, և օրինական գործողութեան տարրակ զգեցնել։ Նպատակն էր Օրմանեանը գործունեայ ասպարէզէն միանգամընդմիշտ հեռացնել. բարձր դիրք ունեցողներ ալ այս բանին կամակից էին, զի այս կերպով իրենց ճանպան աւելի բաց կը նկատէին։

Այս ամէն ժխորին և աղուլիանեարուն մէջ հանդարտ մնացող և անտարբեր դիտողը կարծես ես միայն էի, գրուածները կը կարդայի, տպուածները կը տեսնէի, խօսուածները կը լսէի, բայց ո՛չ պատասխանել կը մտաբերէի եւ ո՛չ հերքել կ'աշխատէի։ Համոզուած էի թէ սուտն ու անհիմնը օր մը չէ օր մը իր իսկութեամբ կը յայտնուի, և թէ իմ կողմէ որևէ գիր կամ խօսք կըրնար խծբծողներուն նիւթ մատակարարել։ Արդէն անոնք ալ այնպիսի ոճ մը կը գործածէին որ զիս պատասխանելու ստիպեն, և խմբագիրներ ալ ինքնամատոյց կ'ըլլային ինչ ալ գրեմ նոյնութեամբ և արագութեամբ հրատարակելու։ Զիս գրգռելու միտքով մինչև իսկ լռութիւնը հաւանութիւն կը ցուցնէ, կամ հերքելու անկարողութիւնը կը յայտնէ կ'ըսէին, բայց ես իմ նախընտրած ճանապէս չէի շեղեր, և լուռ կը մնայի ամէն յարձակմանց դէմ, անբացատրելի անտարբերութեամբ. զի ամենուն յայտնի էր որ ո՛չ խօսքի դանդաղ էի և ո՛չ գիրի ծուլացող։ Այլ ինչ որ օրինական էր զայն անթերի կատարել փութացի. պաշտօնական գիր ու թուղթ ու կնիք Դուրեանի փոխանցեցի, որ տեղապահ ընտրուած էր յուլիս 16|29ին ժողովին մէջ իմ մասնակցութեամբ։ Նպաստից հաշիւներն ու տեղեկագիրները ձեռագիր և տորագրեալ յղեցի, Նպաստից դրամէն երեք հազար ոսկիէն աւելի պատրաստը անոր անունին դարձուցի, պատրիարքարանի մէջ պահուած իրաց տեղերը ցուցուցի, գրասեղանին ու դրամարկղին և յատուկ դարաններու բանալիները յանձնեցի. փոխանցումները իմ կողմէս լրացնելու համար Տիգրան Բարաղամեան և Խաչիկ Խորասանճեան վստահելի անձերը փոխանորդ նշանակեցի, եւ 1908 օգոստոս 28|10 սեպտեմբերին հրաժարագիրէս քառասուն օր ետքը ամէն բան աւարտած էր, և օրինաւորապէս լրացած ըլլալուն պաշտօնագիրն ալ պահանջեցի և ստացայ։ Ելեւմտական զեղծարարութեան և դրամաշորթ նենգութեան գրոյցը, որ այնչափ շըշուկ և շռինչ յուզած էր, ինքնին լռեց և թաղուեցաւ, և այլ եւս անպաշտօն կամ պաշտօնական կերպով հրապարակի վրայ չը լսուեցաւ։

Բարեմիտ ծանօթներէն քանիներուն հոգ էր եղած թէ ինչո՛ւ յուլիս 11|24էն ետքը, և յատկապէս 13|26 կիրակի օրը իսկոյն հրապարակ չեմ նետուած և պոռոտախօս ու մեծադղորդ քարոզներով ժողովրդականութիւն շահիլ չեմ ուզած, որով հնար կ'ըլ-

լար, կ'ըսեն, պաշտօնի վրայ մնացած ըլլալ և ազգային օգտին ծառայել։ Ոչ թէ անձիս պաշտպանութեան, այլ եղելութեանց բացատրութեան համար այս մասին ալ քանի մը տողեր աւելացընեմ։ Մինչև կիրակի տակաւին պաշտօնական կատարեալ յայտարարութիւններ չէին եղած, և ամենայն ինչ ժողովրդական շարժումէ անդին չէր անցներ։ Մինչև կիրակի ո՛չ Բարձրդուռն ու կառավարութիւնը և ո՛չ Ցունաց և ուրիշ պատրիարքարաններ պաշտօնական ցոյց մը չկարգադրեցին, ինչպէս որ շաբաթ օրէ ամէն տեղէ լուրեր առած և ստուգած էի։ Եթէ կիրակին ես հրապարակ ելնայի՝ անձնական նախաձեռնութեամբ և ոչ վարչական կերպարանքով բան մը ըրած պիտի ըլլայի, մինչ ժողովներ յատկապէս հրաւիրած և հինգշաբթի 17|30ին տօնական հանդէսը կատարել կարգադրած էի, որ աւելի օրինաւոր և պատուաւոր եղած պիտի ըլլար։ Ժողովրդականութիւն շահելու ունայնամիտ ճիգեր ինծի ընտանի չեն եղած, որ այս անգամ ալ նոյն ոճին հետեւէի։ Մանաւանդ թէ գիտէի որ ինծի դէմ հակառակութիւնը վարող տարրները կանխամտածութեամբ տոգորեալ էին, եւ եթէ ես յանկարծ այս տեսակ քայլ մը առնէի, ամենայն հաւանականութեամբ սատապատիր ցոյցերով ժողովուրդը խաբելու եւ պաշտօնի վրայ մնալու հետապնդող պիտի կածուէի և պիտի ըսուէի, որ փոխանակ զիս զօրացնելու՝ աւելի տկարացնելու պիտի ծառայէր։ Բարեմիտներ, որ իմ պատրիարք մնալս կը փափաքէին, հարկաւ կարողութեանս վրայ նպաստաւոր գաղափար ունէին, և ուրեմն պէտք էր որ իմ ընթացքս յարգէին, և ո՛չ թէ ինծի խելք սորվեցնելու փութային։ Բոլոր կեանքս կը վկայէր թէ ես ժամանակին պարագաները յօգուտ գործածելու սկզբունքով տոգորուած մէկն եմ, և թէ սահմանադրական օրէնքին տիրապետութիւնը ճանչցող, Սահմանադրութեան ներքև ապրած, սահմանադրական կերպերը գիտցող, սահմանադրական պայմաններէն օգուտ քաղող միակ եկեղեցականն եմ, որ կրնայի Օսմանեան Սահմանադրութեան ներքև հայութեան օգտին աշխատիլ, և ուրիշներէն շատ աւելի յաջողիլ։ Գուցէ իսկ Օսմանեան Սահմանադրութեան անունով պանծացող, անոր հաստատութեան աշխատող, բայց սահմանադրական կացութեան անփորձ վարիչներուն ալ օգնական և ոգեկից կ'ըլլայի, և հայութեան հանդէպ անոնց համակրութիւնը աւելցնելու և անփորձ պահելու կը յա-

ջողէի։ Եթէ իմ նկատմամբ այդ մտայնութիւնը ունեցողներ չը գտնուեցան, ես զայն մուրալու պէտք չունէի։ Ազգային ծառայութեան ես պաշտօնեայն եմ, ծառայութեան կոչողներ ուրիշներ են, ես ինծի համար պաշտօն փնտռելու ո՛չ պարտք ունէի, եւ ո՛չ ալ փնտռած ատենս աղնիւ զգացում ցուցուցած կ՚ըլլայի։ Բայց նոր չէ որ ոչ միշտ իսկական կարողութեան եւ ոչ վկայեալ փորձառութեան տէրերը կը փնտռուին, այլ ստէպ ցուցադրութիւնն ու ցուցամոլութիւնը, անխորհուրդ ձեռնարկն ու վըտանգաւոր քայլը կը նախադասուին, յառաջ անցնողներ ձեռուընին լուսով դուրս կ՚ելլեն, իսկ մնացեալը հանրութիւնը, եւ մեր առիթին մէջ՝ հայութիւնը կը կրէր։

ՀԲ

Դամասկոս, 1918 փետրուար 27|12 մարտ Գշ.

Մաթէոս Իզմիրլեան նախորդ պատրիարք 1896է 1908 իբր աքսորական մնացած էր Երուսաղէմի Ս. Յակոբեանց մայրավանքը Յորենաթաղի Կիրակոսեան ընդարձակ յարկաբաժինը. Վեհապետեան պատրիարքի եւ բոլանդակ միաբանութեան կողմէ մտադրութեան առարկայ եղած, թէպէտ ոչ ամենուն հաւասարապէս համակրելի, ղեւոնդական խնդիրէն ծագած բաժանմանց պատճառով։ Ես աշխատած էի զինքն Կ. Պոլիս դարձնել տալ եւ չատ ալ հետապնդած՝ այդ խնդիրը չկրկնելու համար Հմմիտէ ազգապարտութիւն ընդունելու չափ։ Բայց յաջողած էի զինքն ներքսագոյն կողմեր աքսորելու որոշումը խափանել տալ, եւ ինքն ալ անծանօթ չէր այդ եղելութեանց։ Սակայն առաջին օրէն իր արեւը հաշտ չէր եղած ինծի հետ. Ներսէս պատրիարքն ալ մեղադրած էր առաջին օրը ինծի ծայրագունութիւն տուած ըլլալուն համար, եւ քանիցս երեսս զարկած էր ի ծնէ հայադուան չըլլալս։ Ինչևիցէ սահմանադրական ազատութեան հռչակուելէն եւ ընդհանուր ներումէն օգտուելով Կ. Պոլիս դարձած էր եւ արքայավայել հանդէսով ընդունուած, երբ ես արդէն հրաժարած եւ տունը փա-

կուած էի, և կը սպասէի որ իւր նախկին վերաբերումն ալ փոխուած ըլլայ. սակայն Իզմիրլեանի կիրքը խոշոր մնացած էր, ինչպէս խոժոռ մնացած էր իւր դէմքը, իմ բարի գալստեան և բարեմաղթութեանց գիրս ալ անպատասխանի թողլու եւ լռութեան մէջ թաղելու չափ։ Պատրիարքական աթոռ վերադառնալը ես ալ իրաւացի կը դատէի, իբր արքայական հրամանով տուած բռնի հրաժարականին փոխարինութիւն, և այդ զգայմամբ ալ չնորհաւորութիւն գրեցի՝ միշտ անպատասխանի մնալու պայմանով։ Հոկտեմբեր 22|4 նոյեմբերին պատրիարք ընտրուեցաւ, 31|13ին ուխը ըրաւ և պաշտօնի ձեռնարկեց, նոյեմբեր 1|14ին ալ կաթողիկոսական առաջին ընտրեալ հռչակուեցաւ, այնպէս որ այլեւս իրեն յառաջացման արգելք ըլլալուս վախ մը չունէր։ Եթէ կանուխէն Ընդհանուր Ժողովին մատուցանել տրուած ամբաստանագիրը արդիւնք մը պիտի ունենար, արդէն ունեցած էր, և Ռուսահայերէ իմ ընտրելութեան մասին ցուցուած փափաքը ամբաստանութեան փաստով եաեւ թողուած էր։ Այդ փափաքը գուցէ արդիւնք ունեցած ըլլար, եթէ իրաց վիճակը փոխուած չըլլար, բայց այլեւս նշանակութիւն չունէր, սակայն Իզմիրլեանի իմ նկատմամբ հայեցուածը միշտ նոյն կը մնար, պատրիարքութիւնը ձեռքը և կաթողիկոսութիւնը առջեւը ըլլալով մէկտեղ։

Ընդհանուր Ժողովոյ առաջին անգամ իւր նախագահած 1908 նոյեմբեր 7|20ի նիստը իբր ազգային կենսական և կարեւորագոյն գործ նկատեց իմ մասին տրուած ամբաստանագիրը, և նախագահին հովանաւորութեամբ առաջին խնդիր ըրաւ այդ գրուածը։ Նիստը կառավարող ատենապետ բժիշկ Վահրամ Թորգոմեան, դիտել տուաւ իրեն՝ թէ Սահմանադրութեան նկատի առած պատրիարքի դէմ ամբաստանութիւնը պաշտօնի վրայ եղող պատրիարքը հեռացնելու համար կազմուած է, և ո՛չ հրաժարեալ պատրիարքը դատելու. սակայն Իզմիրլեանի պէտք էր որեւէ կերպով զիս նախատել, և իւր ազդեցութեամբ գիրին նկատառումը եւ Քննիչ Յանձնաժողովի կազմութիւնը որոշուեցան, թէպէտ Յանձնաժողովի ամբողջացումը հապիւ դեկտեմբեր 19|1 յունուար 1909ին լրացաւ։ Այլեւս ես պաշտօնապէս ամբաստանեալ մըն էի, ձայնէ զուրկ, պաշտօնի անընտրելի, և՝ Իզմիրլեանի եղրակացութեամբ՝ եկեղեցական պաշտամանց մասնակցելէ արգիլուած, ինչոր տարիներ տեւեց, և չվերջացաւ՝ բայց եթէ իւր գերեզման մտնելէն ետքը։

Ցանձնաժողովն ալ այդ մտայնութեանց առջեւ գործելը և ըշտապելը իրեն պարտք չսեպեց, և կարծես թէ այն ամբաստանագիրը, որուն հիմամբ ինք ընտրուած էր, անբաւական սեպելով, նոր ամբաստանագիրներ հայթայթելու ատեն տուաւ, որոնք իւր ընտրութեան ատեն նախատեսուած չէին։ Եւ որ Գումգաբուի խայտառակ ցոյցէն ետեւ այլայլած չէի, և որուն տառապանքէն հիւանդացած ալ չէի, կարեվէր ցնցուեցայ նոյեմբեր 7|20ի որոշումէն, գործին պաշտօնականութիւնը և իշխանութեան կանխամտածուած թշնամութիւնը չարաչար ազդեցին վրաս. երկրորդ օրն իսկ ծանրապէս հիւանդացած էի, 10|23ին ուղեղիս մէջ արեան համախռնութիւնը (Congestion Cerecbrale) յայտնուած էր. իսկ հիւանդութեան տակաւ զայրանալը և վտանգաւոր դառնալը նոյեմբեր 25|8 դեկտեմբերին եօթը բժշկապետներու խորհրդակցութեան հարկը պատճառեց. Տէրամբ վտանգին առջեւը առնուեցաւ, բայց ձմեռնային եղանակը կազդուրումը դանդաղեցուց։

Իսկ Ֆոնիչ Ցանձնաժողովը 4-5 ամիսներ դրաւ ամբաստանագիրները հաղորդելով դրաւոր բացատրութիւն պահանջելու, զոր ես քանի մը օրով լրացուցի ու յղեցի. իսկ Ցանձնաժողովը դարձեալ ձգձգեալ յապաղումը շարունակեց, կ'երեւի թէ իրեն տրուած հրահանգը գործ վերջացնել չէր, այլ զիս ընկճեալ և նրկուն վիճակի մէջ պահելու առիթ պատրաստել։

Այս միջոցներուն ես 3-4 անգամ բերանացի տեսակցութեան մը շնորհը խնդրեցի Իզմիրլեանէ, այլ միշտ պատիպաս դարձուածներով կամ լռին մերժմամբ շնորհին չարժանացայ, գուցէ կը վախնար որ ներքինը արտայայտելու հարկին ներքև գտնուէր։ Այսպէս անցան օրերը մինչև որ իւր կաթողիկոսութիւն Ռուսաց կայսրէն հաստատուեցաւ, և 1909 մայիս 23|5 յունիսին Կ. Պոլիսէ մեկնիլը որոշուեցաւ։ Այն ատեն միայն մտաբերեց որ Ռուսահայոց աչքին կրնար տգեղ երեւնալ զիս բնաւ տեսնել չուզելը, և մայիս 18|31ին տեսակցութեան հրաւէր ատացայ և հրաւէրը չը մերժեցի և իրեն ներկայացայ Բերա Թոգաթլեան պանդոկը, ուր իջեւանած էր ուղեւորութեան պատրաստուելու համար։ Մեր խօսակցութեանց նիւթերը հատուածիս համար շատ կարեւորութիւն չունին, միայն նշանակալից էր եկեղեցական պաշտամանց արդելքին համար տուած բացատրութիւնը, թէ անախորժ ցոյցի մը առիթ տալ չէր ուզած, մինչ միւս օր ժամանակ լրագիրի տը-

նօրէնին ըսած, և տնօրէնն ալ իւր լրագիրին մէջ հրատարակած էր, թէ ամբաստանեալ ըլլալուս համար ներել չկրնալը յայտնած ըլլայ։ Տեսակցութիւնը ընդարձակօրէն հրատարակած եմ Յիշատակագիրքիս մէջ։ Իզմիրլեան չմեկնած մայիս 22|4 յունիսին ամէն միջոց գործածեց Դուբեանի պատրիարքութիւնը յաջողցնելու, իրեն հրահանգներուն հաւատարիմ կամակատար մը թողած ըլլալու համոզմամբ, և միւս օր 23|5ին հանդարտ սիրտով ուղեւորեցաւ Օտեսա և անտի Բեթրպուրկ, չօծուած ու գործի չսկսած զգուշաւորութեան խրատներ լսելու համար ռուսական կառավարութենէն, որուն յայտնի էին Իզմիրլեանի հակառուսական զգացումները, ամէն առիթներով՝ մանաւանդ պոլոժէնիական խընդիրներով արտայայտուած։ Իզմիրլեան հեռացած էր, բայց իւր հաստատած դրութիւնը իրմէ ետքն ալ տեւեց։ Ֆոնիչ Յանձնաժողովը, որ 1908 դեկտեմբեր 19|1 յունուար 1909ին կազմուած էր, տարի մը ետքը՝ 1909 դեկտեմբեր 12|25ին զիս բերանացի բացատրութեանց կը հրաւիրէր, և իբր տարի մի եւս ետքը՝ 1910 հոկտեմբեր 22|3 նոյեմբերին իւր տեղեկագիրը կը ներկայացնէր։ Թուականները պերճախօս մեկնաբաններ են տիրող նպատակին թաքուն կողմերը արտայայտելու։ Վաւերագիրներ և յիշատակագիրներ չունիմ այս պահուս իմ ձեռքիս տակ որ ամբաստանութեանց քաղուած մը կարենամ ներկայել. գրութիւններ և հարցաքննութիւններ հրատարակուած են Յիշատակագիրքիս մէջ և հետաքրքիրներ կրնան այնտեղ տեսնել։ Ընդհանուր կերպով աննշանակ և անկարեւոր կէտեր են, որոնք որչափ ներկայացնողներուն, նոյնչափ ալ հարցաքննիչներուն և իշխանութեան վրայ եղողներուն և ժողովականներուն անուղղակի միտքերով գործելը կ'ապացուցանեն, այսինքն է՝ ատեն անցունել և զիս նկուն պահել. կը կարծէին թերեւս որ եթէ հրապարակի վրայ ըլլայի՝ իրենց տհուսարար պիտի ազդէի։ Ամբաստանութեան նիւթ էին Սահմանադրութիւնը լիապէս գործադրած չըլլալս՝ երբ բարձր ու բուռն հրաման մը զայն արգիլած էր. մասնաւոր կալպադրութիւններ իւրովի կատարած ըլլալս՝ երբ Սահմանադրութիւնը հարկին ներքև ամէն իրաւասութիւն կուտայ պատրիարքին. վարչական ժողովներ նորոգած չըլլալս՝ երբ կայսերական բացարձակ արգելք մը նորոգել չէր ներեր, և այլ ասոնց նման անհիմն և անտեղի խծբծանքներ, որոնք տարիներով զբաղեցուցած են Խորհրդարանական Ֆոնիչ

Յանձնաժողովը, Ընդհանուր Ժողովին և պատրիարքական իշխանութեան կամակցութեամբ։ Այս կարգին կրնան յիշուիլ Տէրունեան Յովհաննէսը թողնի մը վայելքէն արգիլելս, որուն անիրաւաբար ձեռնամուխ լինել կ'աշխատէր. Զըպլաղեան Ղազարոսին քեռորդւոյն մահուան առթիւ չթողուքելս՝ երբ ինքն անձամբ պաղատախառն խնդրած էր պատրաստուած թողուքները ետ ձգել. Էքսէրճեան Հմայեակ քահանայի մէկ ազգակիցին ազգակցական մերձաւորութիւնը չներելս՝ երբ բուսական պատճառ չը կար. կեսարացի քահանայի մը դէմ Ժողովին կողմէ կարգալոյծ ընելու որոշումը առժամաբար կարգազուրկ ընելու փոխելս՝ երբ պահանջուած կանոնական ազդարարութիւնները լրացուած չէին. և ուրիշ ասոնց նման պատահարներ, զոր ամբաստանողներ բեռան առնելու իսկ պէտք էր քաշուէին, սակայն բուն նպատակը յանցապարտ ընել չէր, այլ ամբաստանութեանց պատրուակով ընկճուած պահել։

Ամենէն աւելի խօսուածը և ապացուցական կարծուած ամբաստանութիւնը Լահէյի Խաղաղական Ժողովին ուղղած հեռագիրս է, որուն պատճէնը տեսած չէին և ենթադրական հիմամբ իբր ազգային շահուց մատնութիւն կ'որակէին։ Հեռագիրը ստիպողական դարձած էր Պուլկարահայոց մասնակցութեամբը, որոնք պատրիարքարանիս իրաւասութեան ներքև էին իբր ստակուին օսմանեան գերիշխանութեան ենթարկեալներ, պարտնակութիւնը համիտեան բռնութեանց նպաստաւոր բնաւ ակնարկ չունէր, եւ ժամանակն ալ անժամանակ էր, զի Ժողովին արդէն որոշումը տրուած ըլլալը ստուգուելէն ետքը յղուած էր, ինչպէս որ հաստատուեցաւ հեռագրատունէն իմ հանել տուած վաւերական պատճէններով, և այդ ամբարտակն ալ քանդուեցաւ։

Քանի Յանձնաժողովը 1908 նոյեմբերէն մինչև 1910 հոկտեմբեր քաշքշելէն ետքը՝ վերջապէս տեղեկագիր մը ներկայած էր, և ստիպեալ ամբաստանութեանց հիմ ու կարեւորութիւն չունենալուն ակնարկած, և այս պատճառով տեղեկագիրը Ընդհանուր Ժողովին մէջ քննելու թողուեցաւ, և գործը դարձեալ երկարելու համար նոր ամբաստանութեան դուռ մը բացուեցաւ։ Իզմիլեան կաթողիկոս 1910 դեկտեմբեր 11|24ին վախճանած էր, բայց կարծես թէ իր հոգին տակաւին կը սաւառնէր, և 1911 յուլիս 8|21ին գործը Ատենապետաց Դիւանին կը յանձնուէր, իբր

Քննիչ Յանձնաժողովով քննել նոր ամբաստանութիւնը, իբր թէ ես եղած ըլլամ ռուսական կառավարութեան Դաշնակցականաց դէմ բացած հալածանքին դրդիչը։ Բոլոր փաստաբանութիւնը կը հիմնուէր ռուսական դեսպանատան երկրորդ թարգմանին ըսած քանի մը բառերու վրայ, զորս նա յիշած ըլլայ իր մէկ նամակին մէջ, և ռուսական դատախազն ալ ակնարկած կ'ըլլայ իւր ամբաստանագիրին մէջ։ Ատենապետաց Դիւանը հարցուփորձը յետաձգեց մինչև հոկտեմբեր 19|1 նոյեմբեր, և անհիմն զրոյց ըլլալը շատ շուտ և դիւրին յատնուեցաւ թուականներու բաղդատութեամբ, և երրորդ քարտուղարի մը ակնարկին պետական գործողութեան մը հիմը դառնալու անբաւականութեամբ։ Այս Յանձնաժողովին տեղեկագիրն ալ 1911 դեկտեմբեր 23|5 յունուար 1912ին ներկայացուեցաւ, և ամենայն ինչ առձեռն պատրաստ ըլլալով մէկտեղ, տարի մը եւս յետաձգուեցաւ ամբաստանութեանց վերջաւորութիւնը, և հազիւ թէ 1912 դեկտեմբեր 21|3 յունուար 1913ին որոշում տրուեցաւ և վերջացաւ։ Դուրեան պատրիարքն ալ հրաժարած էր արդէն և 1911 դեկտեմբեր 2|15ին Արշարունի Յովհաննէս յաջորդած էր, և անոր օրուան պահուած էր չորսուկէս տարի ամբողջ ձգձգուած, քաշկռտուած, խծբծուած դատաստանին վերջաւորութիւնը։ Ելքը այն եղաւ ինչ որ առջի օրէն ալ ակներեւ էր. ամբաստանութեանց մերժում և անպարտութեան հռչակում։ Անբարեմիտ հակառակութեան հիմը Իզմիրլեան պատրիարք դրած էր, Դուրեան պատրիարք չէր կարողացած կամ չէր ուզած իւր վարդապետին կազմած դրութիւնը այլայլել, Արշարունի պատրիարք յաջողեցաւ խիղճի ձայնը լսելի ընել։ Որոշումը տրուեցաւ Ընդհանուր ժողովի միաձայնութեամբ. զի քսանի չափ բուռն հակառակորդներ հակառակ քուէի անիրաւութիւնը զգալով՝ ձեռնպահ մնալ նախադասած էին։ Արշարունիի օրովն էր նաև որ չորս տարիէ աւելի լռելէ ետքը առաջին անգամ պատարագեցի Սան-Սթէֆանոյի Ս. Ստեփանոս եկեղեցին 1912 օգոստոս 12|25ին՝ ձեռնադրութեանս յոբելեանական տարեմուտին։ Դուրեան ալ 1910 յուլիս 4|17ին Ղալաթիոյ Ս. Լուսաւորիչ եկեղեցին պատարագել արտօնած էր, այլ գործադրութիւնը խափանուած էր պատրիարքական կարգադրութեանց անբաւականութեան պատճառով։ Հատուածիս նպատակն էր ամբաստանութեանց խընդիրին ընթացքը լուսաբանել, յայտնուած հոգւոյն և իրողու-

թեանց տրուած գոյնին իսկութիւնը արտայայտել, ուստի զանց ըրի բոլոր մանրամասնութեանց մտնել, և երկարապատում ըլլալ։ Ինչոր կ'ուզէի յայտնել՝ կամայական ու քմահաճ ձգձգումներ էր. գրածներս բաւական են ապացուցանել, թէ ամբաստանութիւն կազմելը օրէնքէ դուրս էր, և չորսուկէս տարի երկարելը օրէնքի հակառակ էր։

ԼԳ

Դամասկոս, 1918 փետրուար 27/12 մարտ Գշ.

Առանձինն հատուածի նիւթ ընել կ'ուզեմ ամբաստանութեան հանդէպ իմ անձնական վերաբերումս, ստիպուելով կրկնել նաև ինչինչ վերեւ ակնարկածներէս։

Երկու տարբեր շրջանակներու մէջ կրնային նկատի առնուիլ ամբաստանութիւններ, և այնպէս ալ նկատեցի։ Մէկը անպաշտօն՝ լրագիրներու, զրոյցներու բարբանջանքներու շրջանակը, որուն հանդէպ կատարեալ անտարբերութիւն պահեցի, ո՛չ այլայլեցայ և ո՛չ զայրացայ, ո՛չ պատասխանեցի և ո՛չ հերքեցի, այլ թող տուի որ խօսին ու գրեն մինչև որ իրենք ալ ձանձրանան, և ի զուր յոգնելնին տեսնելով լռեն։

Միւս շրջանակը պաշտօնականն էր, որուն դէմ սկիզբէն անտարբեր չկրցայ ըլլալ, այլ յետոյ կրցայ ինքզինքս անտարբերութեան տալ։ Նոյեմբեր 7/20ին Ժողովին որոշումը զիս կաթուածահար ըրաւ և մինչեւ մահամերձ հիւանդութեան հասցուց, ուսկից հազիւ կատարելապէս ազատեցայ 1909 յունիս 1/14է մինչև սեպտեմբեր 14/27 Սան-Սթէֆանօ գիւղի օդափոխութեամբ։ Անկէ ետքը տան մէջ փակուած կեանքէն ալ հրաժարեցայ, եւ սկսայ երեկոյները պտոյտի ելլալ Բերայի բարձունքներուն օդաւէտ կողմերը։ Երբոր մարմնական յուզումէն ազատեցայ՝ հոգւոյ յուզումէն բոլորովին զերծ չէի, և քանիցս պատրիարքներու և երեսփոխանութեան դիմում ըրի որոշումը չտապելու և գործը վերջացնելու համար։ Բայց այդ փափաքէն ալ հրաժարեցայ երբ

որ Դիմաքսեան Հմայեակ եպիսկոպոս յատենի ժողովոյն դիտողութիւն ըրաւ, թէ իմ գրութիւններով ժողովը ժամավաճառ ընել կ'ուզեմ։ Այնուհետեւ ինչպէս յուզումէ ու այլայլութենէ ազատ էի, նոյնպէս վերջացնել տալու փափաքէն ալ հրաժարեցայ, և այլեւս թող տուի որ ինչ կ'ուզեն ընեն և ինչչափ կը բաղձան երկարեն, և հոգւոյ ու միտքի կատարեալ անաարբերութեամբ նայեցայ ամէն անցուդարձերուն։

Իմ մտաւորական անդորրութեան լուսաւոր փաստ են այս միջոցին արտադրած գրական արդիւնաւորութիւններս, և ի լոյս ընծայած լուրջ երկասիրութիւններս։ Ասոնց մի փոքր մասը իմ անձնականիս կը պատկանի, ինչպէս են Նպաստից Յանձնաժողովոյ Տեղեկագիրը, և երկոտասանամեայ պատրիարքութեան Յիշատակագիրքը։ Առաջինը չուտով տպուեցաւ և ցրուեցաւ, և իր արդիւնքը ունեցաւ, վասնզի բանաձեւուած ամբաստանութեանց մէջ բնաւ դրամական զեղծումներու ակնարկ չեղաւ, թէպէտ առաջին անգամ անոնցմով սկսաւ ամբաստանութեանց դրութիւնը։ Կը յուսայի որ վարչական ամբաստանութեանց զրոյցներն ալ պիտի կրնայի նոյն կերպով կարճել, և Յիշատակագիրքին ձեռք զարկի, բայց որովհետեւ ես գործը չաւարտած վարչական ամբաստանութիւնները պաշտօնական շրջանակին մուծուեցան, այլեւս աւելորդ սեպեցի Յիշատակագիրքը շարունակել և հրատարակել, սպասելով պաշտօնական ձեռնարկներուն լրանալուն։ Պահ մը առկախ թողուելէն ետքը նորէն ձեռք առի լրացնել, որպէսզի ձախող որոշման մը պարագային իբրեւ հերքում ու պատասխան մէջտեղ հանեմ։ Վերջէն երկրորդ մաս մըն ալ աւելցուցի պաշտօնական գործողութեանց վաւերական տեղեկութիւնները պարունակող. երկու մասերն ալ տպագրեցի առձեռն պատրաստ ունենալու համար, բայց երբոր ամբաստանութեանց ընթացքը բացարձակ անպարտութեան վճիռով փակուեցաւ, այլեւս աւելորդ կը դատեմ պաշտպանողականներ հրատարակել, և տպագրուած պրակները կը պահուին Տէր-Ներսէսեան Վահրամ և Հրաչեայ եղբարց մօտ, և միտքս է մէջտեղ չհանել մինչև մահուանս ջրը, և անկէ ետքը հրապարակելը արտօնել իբրև մահավերջիկ երկասիրութիւն։ Երկու պրակները միանալով քառածալ երկիջեան 160 երեսէ աւելի հատոր մը կը կազմեն։ Որչափ ալ Յիշատակագիրքը հանդարտ հոգւով գրուած է, սակայն հնար չէ որ վշտացած

սիրտի արձագանգներ չհնչեն անոր մէջ, որոնցմէ բոլորովին անմասն կը մնան միւս աշխատութիւններս։

Պատրիարքութեան օրէն Լոյս կրօնաթերթի մէջ սկսած էի չորս Աւետարաններու Հանապատումը հրատարակել, և կրօնաթերթին դադրելէն ետքը կը շարունակէի Արեւելք օրաթերթին մէջ, և գործը հասուցած էի մինչև աւանակով Երուսաղէմ մտնելուն յաջորդող օրերը։ Առաջին գործս եղաւ նախապէս հրատարակուած յօդուածները վերաքննել, և Աւետարանին պատմութիւնը լրացնել մինչև Պենտեկոստէի օրը։ Զոր և աւարտեցի 1909 յունուար 25|7 փետրուարին։ Հանապատումը չորս Աւետարաններուն պարունակութիւնն է չարայարելով և համաձայնեցնելով և բացատրելով պատմուած, բազմաթիւ դրուագներով ճոխացած եւ Պաղեստինի տեղագրական պատկերներով զարդարուած։ Տպագրութիւնը աւարտեցաւ 1911 փետրուար 11|24ին։ Այդ աշխատութեան մէջ նպատակն էր Աւետարանը ժողովուրդին ընտելացընել. անոր համար պարզ և յստակ ոճով ըրած եմ խմբագրութիւնը, վարդապետական և քննադատական խնդիրներուն խորերը չեմ մտած, թէպէտ թեթեւակի ակնարկել և դիւրամատոյց կերպով բացատրել զանց չեմ ըրած։ Գիրքը լաւ ընդունելութիւն գտաւ ժողովուրդին մէջ, և քահանայական դասուն շատ օգտակար եղաւ. առաջին տպագրութիւնը գրեթէ սպառած է։ Գործը ութսնալ 1100 երես հատոր մը կազմած է, և դրամական շահ մը չապասելուս համեմատաբար դիւրագնոյ վաճառման յանձնուած է։

Իմ գաղափարս եղած էր որ յառաջադէմ Եւրոպան ի նպաստ Հայոց շահագրգռելու համար աւելի օգտակար է Հայոց խնդիրը լաւ ուսումնասիրութիւններով ծանօթացնել, քան իրենց տառապանքներով գութ շարժել կամ աղաչանքներով ողորմութեան յորդորել։ Այդ գաղափարիս հետեւանքն էր որ ձեռնարկեցի գաղղիերէն աշխատութիւն մը պատրաստել Հայոց Եկեղեցի (Eglise Arménienne) մակագրութեամբ, և համառօտ ու պարզ կերպով ամփոփելով անոր պատմութիւնը, դաւանութիւնը, բարեկարգութիւնը, վարչութիւնը, արարողութիւնը, գրականութիւնն ու ներկայ կացութիւնը, նպատակ ունենալով ամէն կէտի մէջ անոր հնութիւնը, ուղղութիւնն ու ազատախոհութիւնը պանծացընել, և Հայոց Եկեղեցին ներկայացնել իբրև տիպար մը որ կըր-

նայ հիմ ըլլալ բաժանեալ եկեղեցիներուն միութեան մասնալու։ Տպագրութիւնը ուզեցի Բարիզ ընել տալ. զի հարկաւ Բարիզէ եկած գիրք մը աւելի յարգ ու վարկ կ'ունենար քան թէ Կ. Պոլիս հրատարակուածը։ Ուսաի Փրետերիկոս Մաքլէր (Frederic Macler) հայագէտ ուսուցչապետին միջնորդութեամբ Էրնէսթ Լերու (Ernest Lerout) հրատարակիչ-գրավաճառին հետ պայմանաւորուեցանք, և վերջին փորձերը ես ալ տեսնելով 1910 յուլիս 12|25ին լրացեալ առաջին օրինակը ստացայ։ Այդ հրատարակութիւնը բաւական արձագանգ ունեցաւ Եւրոպիոյ մէջ, Հայոց վրայ նպաստաւոր գաղափար կազմելու ծառայեց, եկեղեցական բարեկարգութեամբ զբաղողներուն առատ նիւթ ընծայեց, մինչև իսկ Լուդովիկոս Ֆիւկէրօն (Louis Fugairon) բժշկապետը թղթակցութեան սկսաւ, Գաղղիոյ մէջ Հայ Եկեղեցւոյ ճիւղ մը հաստատելու համար։ Օտարազգեաց մէջ ստացած համբաւէն աւելի ազգայնոց կողմէ ալ գնահատուեցաւ, զի Հայ Եկեղեցւոյն վրայ այսչափ ամփոփ և այսչափ կանոնաւոր տեսութիւն ներկայացնող գիրք մը չկար։ Թէ՛ Ռուսահայերու և թէ՛ Տաճկահայերու կողմէ յայտնուած փափաքանաց վրայ ես ինքս հայերէնի վերածեցի և Կարապետ Սրապեան Զմիւռնիացի վաճառականին նիւթական օգնութեամբ տպագրութիւնը վերջացուցի 1911 ապրիլ 30|11 մայիսին, և հետզհետէ երկրորդ և երրորդ տպագրութիւններ ալ կատարուեցան, միշտ աւելի դիւրագին ձեւով՝ տարածումը ընդարձակելու համար, զի դպրոցներու մէջ ալ իբրև ձեռնարկ ընդունուեցաւ։ Գրիգոր Գրիգորեան (Gregory), հնդկահայ պետական պաշտօնեայ հանգստեան կոչուած և Լոնտրա հաստատուած, անգլիերէն թարգմանութիւնը կատարեց և ճոխ կերպով տպագրեց, Մանչեսթրի եպիսկոպոս Ուելտօնի (Welledon) գնահատական յառաջաբանով. որուն նախընծայ օրինակը ստացայ 1911 ապրիլ 26|9 մայիսին։ Ռուսահայեր ալ ուզեցին ռուսերէնը ունենալ Ռուսաց ծանօթացնելու համար, որ և կատարուեցաւ Մոսկուայի մէջ Լազարեան Ճեմարանի ուսուցիչ Կարապետ Կոստանեան ուսուցչապետի հոգածութեան և Բուսաղեան Արսէն վաճառականի նիւթական օգնութեամբ, և առաջին օրինակը ստացայ 1913 յունիս 17|30ին։ Երկրորդ անգղերէն թարգմանութեան մըն ալ ձեռնարկեց Նիւ Եորքի մէջ Հայագիտական Հանդէսի խմբագրապետ Արշակ Մահտէսեան, վերջէն հատորի վերածելու դիտմամբ, սա-

կայն վերջին լուրը չեմ ստացած։ Գերմաներէնի ալ թարգմանուեցաւ Յովհաննէս Լէբսիուս (Johannes Lepsius) հայախնամ երէցին հոգածութեամբ, այլ տպագրուած ըլլալուն տեղեկութիւնը դեռ չեմ առած։ Այսպէս Հայոց Եկեղեցի երկասիրութիւնս, եւ անով Հայոց Եկեղեցւոյն արժանիքը բոլոր լուսաւորեալ և գիտական աշխարհին մէջ տարածուեցաւ։ Հայ հռոմէականներն ալ անկէ օգտուեցան Հռոմի հանդէպ պահանջնին զօրացնելու., որով պապն ալ իմ գիրքը դատապարտեց և իւր արգիլեալ գրոց ցուցակին (Index) անցուց 1911 ապրիլ 26/9 մայիսին, որ վնասէ աւելի օգուտ բերաւ անոր տարածման, ինչոր իմ բուն նպատակս էր և անոր համար ամէն թարգմանութեանց յօժարակամ արտօնութիւն տուի, առանց որևէ փոխարինութիւն կամ չահակցութիւն պահանջելու։ Փափաքս էր որ ուրիշ մասնագէտներ ալ նըմանօրինակ երկասիրութիւններ հրատարակեն, Հայոց ազգութեան, հնութեան, քաղաքակրթութեան, գրականութեան, վաճառականութեան վրայ, և քանիներու ալ յորդոր կարդացի, բայց տակաւին հետեւողներ չունեցայ։

Աւելի մեծ աշխատութիւնս եղած է Ազգապատումը, որ է Հայ Եկեղեցւոյ և Հայ Ազգի զուգընթաց պատմութիւնը, և որուն ձեռնարկեցի Հայոց Եկեղեցի երկասիրութիւնս աւարտելէ անմիջապէս ետքը՝ 1910ին վերջերը, բայց հրատարակութիւնը սկսաւ գործը յառաջացնելէ ետքը, 1912 օգոստոս 1/14ին, և առաջին պրակը լոյս տեսաւ օգոստոս 31/13 սեպտեմբերին։ Ազգապատումը կրնայ իւր տեսակին մէջ նշանաւոր երկասիրութիւն մը ըսուիլ, զի աշխարհաբար լեզուով, կատարեալ ընդարձակութեամբ, քննադատական ոճով, ժամանակագրական ճշդութեամբ, և անճըշդութեանց ուղղութեամբ հաւասար ուրիշ գործ մը տակաւին հրատարակուած չէ, մանաւանդ յատուկ մտադրութիւն դարձուած է Մխիթարեան հրատարակութեանց կաթոլիկական քաշքշուքները մերկացնելու և հերքելու։ Գործին առաւելութիւններէն մէկն ալ ամէն մի եղելութեան կամ ճշդութեան համար աղբիւրը նշանակելն է։ Հրատարակութիւնը հետզհետէ լոյս տեսաւ Պարզեանց Սուքիաս եպիսկոպոսի արդեամբ և քառածալ երկիջեան տասը թերթերէ բաղկացեալ պրակներով, որոնցմէ տասը հատը առաջին և տասնումէկ հատը երկրորդ հատորը կը կազմեն, ընդամէնն 3400 էջ, պատմական ցուցակներէն զատ, որք պատմու-

թիւնը կը հասցնեն Քրիստոսի օրէն մինչև 1808 տարին, Դանիէլ Սուրմտեցի կաթողիկոսի մահը։ Պատմութիւնը պիտի շարունակուի մինչև հրատարակութեան վերջին օրը, և Երուսաղէմ եղած ժամանակս հատոր մի ևս կազմելու բուսական ձեռագիր պատրաստած եմ, և պատմութիւնը հասուցած մինչև Իզմիրլեան Մատթէոս կաթողիկոսի օծումը 1909ին։ Բարեպատեհ առիթին կը ապասէ անոր տպագրութիւնը, և ներկայիս տիրող ռազմական կացութեան վերջանալուն ալ կը մնայ յետին ժամանակուկից միջոցին ատուգապատումը պատրաստել, եթէ Տէր հաճի արևս երկարել, որ մտնելու ժամուն մօտեցած է։

Գրական աշխատութեանցս մասին տուած տեղեկութեանցս նպատակը կրկին էր, զի երկասիրութիւններս ծանօթացնելու պատեն կ'ուզէի առաւելապէս զայն չնշտել՝ թէ այնչափ միտքի ու սիրտի հանդարտութիւն ունէի, որ երբ մէկ կողմէն անտեղի եւ անիրաւ հալածանքը կը շարունակէր, ես կրնայի ամփոփ միտքով և անվրդով սիրտով լուրջ ուսումնասիրութեանց և օգտակար աշխատասիրութեանց նուիրուիլ։ Այդ ընթացքին կ'առաջնորդէր զիս իմ բնածին բերմունքը, ներքին ու խորին համոզմունքը, փորձառական գործունէութեան զգացումը, և եթէ անզգամութեամբ խօսիլ կը ներուի, աշխարհի վրայ իւր ետեւէն հետք ու անուն թողլու ուղիղ փառասիրութիւնը, զի ասոնք ամէնքն ալ հաւասարապէս գրական կեանքին առաւելութիւնը կ'ապացուցանեն, եւ ես ուրախ եմ որ վերջապէս առաջնորդական և պատրիարքական ապաշնորհ վարչականութիւններէ ետքը զուտ գրական կեանքի նուիրուելու բախտն ունեցած եմ։ Ահա՛ իմ գլխաւոր նպատակս, ահա՛ իմ ներքին զգացումս։

Հետեւաբար ո՛չ ազգի դէմ ցուած եմ և ո՛չ հալածողներուն դէմ զայրացած, և ո՛չ ալ քէն ընելով ազգին օգտակար գործ մը տեսնելու պատեհը մերժած։ Կնքահօրս Մաղաք Փափազեանի որդին Յակոբ Փափազեան ամուրի սեղանաւորը, Մուրատեան վարժարանի աշակերտ, իր երախտագիտական նշանակ բարեգործութեան մը նպաստելու միտքն ունէր և բնական կերպով Մխիթարեանց յանձնելու կը միտէր։ Ես կրցայ զայն համոզել և իւր միտքը հայ հանրութեան կողմը դարձնել, և այս կերպով չորս հազար ոսկւոյ նուիրատուութեամբ գնուեցաւ Վէնեան Ծանանի հանգուցեալ հայազգի դեղապործին տունն ու պարտէզը, որ

պատկից էր Բերայի Էսայեան վարժարանին, և անոր մէջ հաստատուեցաւ թաղական մանկապարտէզը, իրապէս պարտէզի առաւելութիւնները վայելելով, զոր անունով միայն ունէր Ս. Երրորդութիւն եկեղեցւոյ բակին սալայատակին վրայ։ Այդ գնումը տեղի ունեցաւ 1910 դեկտեմբեր 8/21ին, ճիշդ հալածանաց տաք միջոցին։ Գարակէօզեան Տիգրանի կտակին կարգադրութիւնը պատրիարքութեանս ատեն կատարած էի, կը մնար միայն Ս. Փրկչեան որբանոցը յարմար և վայելուչ տեղ մը փոխադրել։ Այդ նպատակին յարմար դատուեցաւ և գնուեցաւ Բերա, Շիշլիի բարձունքին վրայ, կիսաշէն հիւանդանոց մը բաւականաչափ պարտէզով։ Գարակէօզեան գերդաստան և գերդաստանին կողմէ սեղանաւոր Եդուարդ գործին վարիչներէն էր, և ինձի դիմեց չէնքին նորոգութեանց, փոփոխութեանց և յաւելուածոց հսկել, և անոնք լմննալէն ետքը որբանոցի փոխադրութեան, ներքին վարչութեան, աշակերտաց դաստիարակութեան, ուսմանց կարգաւորութեան վրայ պէտք եղած հսկողութիւնը կատարել, եւ ես յօժարակամ լրացուցի այդ աշխատութիւնները՝ երեկոյեան պտոյտներուս նպատակակէտ ընելով Գարակէօզեան ազգային որբանոցը, և ամէն մանրամասնութեանց հետեւելով, պաշտօնեաները հրահանգելով, և աշակերտները խրատելով։ Այս յիշատակութիւններն ալ կը հաւաստեն թէ ի՛նչ հանդարտ զգայուսմով կը դիտէի շուրջս յարուցուած հալածանաց և զրկմանց ճիգերը։

ՀԴ

Դանասկոս, 1918 փետրուար 28/13 մարտ Դշ.

Երբոր պաշտօնական կեանքը կը դադրի՝ միջադէպներ, պահանջներ, ընդհարումներ միանգամայն կը դադրին, կեանքը միօրինակ նոյնութիւն կը ստանայ, յիշատակներու նիւթեր և բացատրութեանց պարագաներ կը նուազին, կենսագրական յիշատակներ գրելն ալ չի կրնար երկարօրէն դիպուածներ պատմել և ոչ պատահարներու ցուցադրութեան պարտաւորուիլ։ Ուստի թէ-

պէտ պատրիարքութենէ հրաժարելէս մինչև հալածանքներու վերջանալը և անպարտութեան վճիռը ամբողջ չորսուկէս տարիներ անցան, սակայն նորութիւններ քիչ եղան, և առանց նորութեանց կեանքը քիչ խօսքով ապառեցաւ, ուստի ուրիշ ընելիք չունենալով՝ պէտք է անցնիմ նոր ժամանակամիջոցի մը հանգամանքները բացատրելու։ Իրաւ անցած միջոցին գլխաւոր դիպուածներէն մին էր Կ. Պոլսոյ մէջ ծագած յեղափոխութիւնը, եւ Սուլթան Սպտիւլհամիտի ծերակոյտի և երեսփոխանութեան հաստատումը որոշմամբ գահընկէց հռչակուիլը, և իւր եղբօր Մէհմէտ Ե. Բէշատի գահ բարձրանալը 1909 ապրիլ 14|27ին, սակայն ես ոչ մի յարաբերութիւն չունենալուս յիշատակութեան իսկ պէտք չտեսայ։ Նոյնը պիտի ըսեմ Սատանայի և Կիլիկիոյ Հայոց կոտորածի մասին, որուն մէջ ո՛չ պաշտօնապէս և ո՛չ անպաշտօն ընելիք մը չունէի։ Այդ դիտողութիւնները անցողակի փակելով կ'անցնիմ նոր ժամանակամիջոցին, զոր իդէպ կը կարծեմ կազմել անպարտութեան վճռէն մինչև Երուսաղէմի լիազօր պատուիրակ ընտրուիլս և ուղեւորիլս, որ է տարուան մը և չորս ամսուան ժամանակ. այս միջոցն ալ հետաքրքրական նորութիւններէ և բացատրական պահանջներէ զուրկ ատեն մը։

Անպարտութեան վճիռով կապանքներէ արձակուած ըլլալով պաշտօնական շրջանակի մէջ մտնելու արտօնուած կ'ըլլայի, եւ առաջին անգամ 1913 մարտ 14|27ին եկեղեցական երեսփոխան ընտրուեցայ, որ և մարտ 29|11 ապրիլին վաւերացաւ։ Ես չուզեցի հրաժարիլ անուշխատ կերպով ազգային կեանքի մէջ գլխաւորուած ըլլալու համար, զի երեսփոխանութիւնը հնգեռամեայ նիստերու պարզ ներկայութիւնն է, խօսելու պարտք մը չը կայ, և երեք նիստին անգամ մը գտնուիլ բաւական է։ Առաջին անգամ ներկայ եղայ մայիս 17|30ի նիստին, անգամ մըն ալ եւ երկու պատրիարքի բացակայութեան իբրեւ նախաթոռ եպիսկոպոս նախագահական Հայր մերը ըսի։ Բայց երբ յուլիս 19|1 օգոստոսին կրօնական ժողովականութեան ընտրուեցայ, իսկոյն հրաժարեցայ, զի վարչական ասպարէզէ հեռու մնալ կը փափաքէի, և հրաժարականս ալ ընդունուեցաւ օգոստոս 2|15ին։ Բայց Կրօնականի ընտրութիւնը նորոգուեցաւ վեց ամիս ետքը՝ 1914 փետրուար 28|13 մարտին, ուսկից հրաժարիլ յարմար չէր, զի երեսփոխանութեան մէջ պայքարի նիւթ եղած էր իմ ընտրուիլս

թիւնը, և համակիր ընտրողներ պզտիկ ձգել պիտի ըլլար իրենց յաջողութիւնը անարգելս. միւս կողմէ պատրիարքն ալ Դպրեվանքի աշակերտութենէն Զաւէն Տէր-Եղիայեանն էր, որ զիս մօտը ունենալու մեծ փափաք կը յայտնէր։ Ուստի պարտաւորուեցայ ընդունիլ, և առաջին նիստին, 1914 մարտ 19|1 ապրիլին, առաջին ատենապետ ալ ընտրուեցայ, սակայն երկար չպաշտօնավարեցի, զի ապրիլ 26|9 մայիսին Կ. Պոլիսէ մեկնեցայ։ Աչքառու պարագայ մը եղած էր 1912 նոյեմբեր 8|21ին Տէր-Եղիայեանի պատրիարքական ուխտին օրը իմ և Դուրեանի իբր նախաթոռ երեսփոխաններ անոր երկու կողմը գտնուելիս, որ իրեն ուսուցիչն ու տեսուչն եղած էինք։

Գաւառական պաշտօններու ալ հրաւէրներ ստացայ, զանազան վիճակներէ մտադրութիւններ յայտնուեցան, Սասնա հաւանութիւնս խնդրեց ընտրութիւն կատարելու համար, Եգիպտոս ընտրութիւն ալ կատարեց 1913 նոյեմբեր 3|16ին, բայց ամենուն բացասական պատասխան տուի. Եգիպտոսի հրաժարական ալ հեռագրեցի նոյեմբեր 14|27ին, և Գաւառական ժողովը յակամայից պարտաւորուեցաւ զիջանիլ և ընդունիլ նոյեմբեր 20|3 դեկտեմբերին։ Պօղոս Նուպար բաշա հայկական գաւառաց բարեկարգութիւնը հետապնդելու համար Բարիզ գտնուած ատեն զիս իրեն գործակցութեան հրաւիրեց և ճանապարհածախսն ալ յղեց, սակայն զայն ալ մերժեցի և գումարը դարձուցի։ Միայն չկրցայ դիմադրել մեծեպարքոս Քեամիլ բաշայի հրաւէրին, որ հայ գաւառաց բարեկարգութեան համար ազգայիններէն ոմանց հետ մը տերմական խօսակցութիւն մը կազմակերպելու առթիւ, եկեղեցականներէն զիս էր հրաւիրած, և պարտաւորուեցայ երկու անգամ Բարձրդուռ երթալ, և խորհրդակցութեանց մասնակցիլ, որ՝ ինչպէս նախատեսելի էր՝ գործնական արդիւնք չունեցաւ, եւ Քեամիլ բաշայի իւր անկեղծ խոստումը իբր երաշխաւորութիւն ներկայած ատեն, համարձակեցայ հարցնել՝ թէ ո՞րչափ ատեն պաշտօնի վրայ մնալու երաշխաւորութիւն ունի։

Երբոր վարչական պաշտօններէ կը խուսափէի, եկեղեցականներու և ուսումնականներու յօժարափոյթ հետեւեցայ, քարոզի և դամբանականի հրաւէրներուն շուտով հաւանեցայ, Քահանայական Միութեան դասախօսութիւնները քաջալերեցի, կարգադրեցի և բանախօսեցի։ Բերայի Էսայեան Սանուց լսարաններուն

ալ աանենաբանեցի, Դպրեվանքի քանեհինգամեակին առթիւ 1914ին կատարուելիք հանդէսին և հրատարակուելիք հատորին համար մտադիւր աշխատեղայ, և կլխաւոր զբաղումս եղաւ Ազգապատմի շարունակութիւնը և հրատարակութիւնը, և Հայոց Եկեղեցւոյ երրորդ տպագրութիւնը, որ անգամ մը Տէր-Ներսէսեան տպարանին հրդեհին մէջ, 1903 մայիս 10|23ին, հրկիզուելէն ետքը, սեպտեմբեր 23|6 հոկտեմբերին կրկին սկսաւ տպագրուիլ։ Արդէն յիշած եմ Գարագէօզեան ազգային որբանոցին համար շարունակական աշխատակցութիւնս, զոր հնարաւոր չափով տարածեցի նաև Օրթաքէօյ փոխադրուած Ս. Փրկչեան, և Խասքէօյ հաստատուած Գալֆայեան աղջկանց որբանոցներու վրայ ալ։

Առողջութեան համար որչափ ալ անհոգ չէի և կանոնաւոր կենցաղով և հանապազօրեայ պտոյտներով զայն կը պահպանէի, սակայն զարձեալ ծանր ու վտանգաւոր հիւանդութեան ենթարկուեցայ 1913 օգոստոս 18|31ին, որ առաջ իբր ուղեղային արեան համախռնում (Congestion Cerebrale) ներկայացաւ, և վերջէն վատ օդի (Malaria) տենդային տապնապ յայտնուեցաւ, բժիշկներն իսկ երկանաց մատնեց, և անեցիները Ղալաթիոյ փրկչական պատկերը բերել տալու մղեց օգոստոս 28|10 սեպտեմբերին։ Բայց Տէրամբ այս անգամ ալ վտանգէ ազատեցայ սեպտեմբեր 9|22ին։ Այդ հիւանդութեան օրերուն էր որ Վիեննայի Մխիթարեաններէն Հ. Գաբրիէլ Մենեվիշեան զիս դարձի բերելու և հռոմէադաւանութեան վաստկելու միտքը կը յղանար, և երկու անգամ քրոջս Եւգինէի հսկողութեամբ արկիլուելով, անոր բացակայութեան միջոցին սեպտեմբեր 18|1 հոկտեմբերին կը յաջողէր մօտս գալ անկողինի ծառայած միջոցին։

Ազգասիրական խօսակցութիւններէ հոգեւորականներու եւ անոնցմէ դարձի յորդորներու անցնելով՝ կը ջանայ զիս իր միտքին համոզել, պապէ օրհնուած պզտիկ խաչ մըն ալ ընծայներկայելով։ Խաչը կ'ընդունիմ, խաչին ամէն տեղ նոյն եղած ըլլալը յայտնելով, և ձեռքս ալ չօշափելի փաստ մըն ալ ունենալ ուզելով, իսկ յորդորներուն խստիւ կը պատասխանեմ և ուժիս բաւելուն չափ բացատրութիւններ ալ կուտամ, և 1875ին Վիեննայի մէջ իրենց աբբահօր միջնորդութեամբ Հասունեանի ըրած ապարդիւն ջանքերն ալ (Տե՛ս I.) կը յիշեցնեմ, որով Մենեվիշեան ձեռնունայն կը մեկնի։ Կասկածելով որ յերիւրուած զրոյց-

ներով կրնայ միտքերը պղտորել, մտերիմներու ձեռքով իսկութիւնը հրապարակ կը հանեմ։ Միջադէպը բաւական աղուլիսներու նիւթ կ'ըլլայ, և Մենեվիշեան կը ստիպուի Վիեննա մեկնիլ։ Հիւանդութեանս անդրադառնալով՝ հետեւորդ տկարութեան պատճառով սեպտեմբեր 26|9 հոկտեմբերին Մեծկղզի օդափոխութեան կ'երթամ, և երեք շաբաթէ բաւական կազդուրուած կը դառնամ, և աշխատութիւններս կը շարունակեմ։ Վատօդէն յառաջ եկած վտանգալից տագնապը բժշկապէս տարօրինակ պատահար մը նըկատուելով, զիս խնամող Թորգոմեան բժիշկը յատուկ տեղեկագիրի նիւթ ըրած, և նոյեմբեր 26|10 դեկտեմբերի Հայ Բժշկական Ընկերութեան նիստին մէջ ընթերցած, և Բժիշկ հանդէսի մէջ հրատարակած է։

Իրաւ շատ կարեւոր յիշատակներ չեն այս ժամանակամիջոցին համար յառաջ բերածներս, այլ արդէն ըսի թէ անպաշտօն կեանքը աղքատ է հեռաքրքրական յիշատակներէ, եւ ես չեղածը չէի կրնար յերիւրել։ Իբրև լրումն աւելցնեմ, թէ պաշտօնավարութեանս միջոցին պահեստի գումար ունենալու ո՛չ աշխատած և ո՛չ յաջողած եմ, եւ վերադարձէս սկսելով հայթայթել կրցած իբր 1300 ոսկւոյ գումարին արժեթուղթերը պատրիարքութեանս օրէն Տէր-Ներսէսեան քեռայրիս և քեռորդիներուս փոխանցած էի՝ ամուրի քոյրս Եւգինէն պահպանելու պայմանով։ Պատրիարքարանի վրայ ունեցած եօթն հարիւր և աւելի ոսկւոյ պահանջս ալ ժամանակին վարիչները զլացան, դրամական ամբաստանութիւն տեղի չունենալով և անպարտութեան վճիռն ալ արուած ըլլալով իսկ, այնպէս որ ամէն միջոցներէ զուրկ մնացած պիտի ըլլայի, եթէ կառավարութենէն հրաժարեալ պատրիարքներու տրուած հանգստեան թոշակը ինծի ալ չնորհուած չըլլար, որ 1908 նոյեմբեր 29|12 դեկտեմբերին հաղորդուեցաւ և 1909 յունուար 27|9 փետրուարէն սկսելով վճարուեցաւ։

27

Դամասկոս, 1918 փետրուար 28|13 մարտ Դշ.

Օսմանեան ազատութեան հռչակուելէն և ռուսականին աբ-
ռնկէ քիչ առաջ հրատարակուելէն սկսելով, երբ որ ամէն կողմ
վերանորոգում և բարեկարգութիւն սկսաւ խօսուիլ, մեր ազ-
գին մէջ ալ եկեղեցական բարեկարգութեան խնդիրը ընդարձակ-
ուեցաւ, և ամէն կողմէ խօսակցութիւններ և խմբագրութիւն-
ներ, ծրագիրներ և առաջարկներ սկսան երևան գալ, իւրաքան-
չիւր ոք իր տեսութեանց կամ հաճոյից համեմատ եկեղեցական-
նոր կացութիւն մը ստեղծել փափաքելով։ Այս խուռն ու բուռն
արտայայտութեանց մէջ ես սիրեցի յամառ լռութիւն պահել,
գիտնալով որ բոլոր գրողներ և խօսողներ զիրարու արուծեն, և ըզ-
գալի հետևանք մը պիտի չկարենան ունենալ, քանի որ իրենց
համար հաստատուն հիմ մը չունէին, և բոլոր փաստերնին ժա-
մանակին պահանջին, ժամանակակից հոգւոյն, և ժամանակնե-
րու փոփոխութեան վրայ հիմնուած էր, որոնք առաձգական ի-
մաստ ունին և հաստատուն գետին չեն ընձեռեր։ Բայց եթէ
այն ատեն լռեցի ու չխօսեցայ, հարկաւ ես ալ իմ տեսութիւն-
ներս ունէի, մանաւանդ եկեղեցական նիւթերուն մասին չատե-
րէն աւելի ծանօթութիւն ունենալով։ Արդ ինչ որ ցարդ գրա-
ւորապէս չեմ հրատարակած, գոնէ այս խոհիմ ու խօսքերուս մէջ
յիշատակել կ'ուզեմ, բոլորովին ծածկած չըլլալու համար։

Նախևառաջ պիտի դիտեմ թէ Բարեկարգութիւն բառը, զոր
գաղղիերէն Discieplline բառին իբր համանշանակ գործածել սովո-
ենք, երբեք կարգը այլայլել ու փոփոխել չի նշանակեր, և շատ
տարբեր է Réforme բառէն զոր յաճախ Բարեփոխութիւն կը թարգ-
մանենք։ Բարեկարգութեան բուն իմաստն է եղած կարգ ու կա-
նոնը ճշդութեամբ և լրութեամբ գործադրել ու պահել, զանցա-
ռութենէ զգուշանալ, զեղծումէ խորշիլ, հաւատարմութեամբ
հետևիլ։ Ըստ այսմ անոնք որոնց բուն նպատակն է եկեղեցական-

կանոնները փոփոխուած, ծէսերը համառօտուած և պարտքերը թեթևցած տեսնել, Բարեկարգութիւն բառը սխալմամբ կը գործածեն, եթէ գիտակցաբար ներքին միտքերնին արտաքին վարագոյրով ծածկել չեն մտաբերեր։

Երկրորդ դիտողութիւնս է, թէ օրէնսդիտական առողջ ըմկդրունքով, օրէնքներ և կանոններ կրկին ծագում կրնան ունենալ, մէկը վարէն վեր և միւսը վերէն վար յառաջելով։ Վարէն վեր է ծագումը՝ երբոր մարդուն միտքն ու կամքն է անոր ծընունդ և կեանք տուողը. միտքը օգտակարութիւնն ու յարմարութիւնը կը դատէ, և կամքն ալ իրականացումն ու գործադրութիւնը կը հրամայէ։ Այսպէս են ամէն մարդկային օրէնքներ և կանոններ, ինչ ալ ըլլայ իրենց բնութիւնը, և ինչ հեղինակութեամբ ալ կատարուի անոնց վճռումն ու հրամայումը։ Իսկ վերէն վար է ծագումը՝ երբոր գերագոյն իշխանութիւն մը իւր բացարձակ հեղինակութեամբը և կատարեալ իրաւունքով մը մը կ'որոշէ, կը վճռէ և կը հրամայէ։ Այսպէս են ընդհանրապէս կրօնական օրէնքներն ու կանոնները, որոնք աստուածային գերագոյն իշխանութեամբ հաստատուած են, և մարդիկներուն հաղորդուած, որ գիտական բացատրութեամբ Յայտնութիւն կը կոչուի, և կը պարունակէ տեսական և գործնական մասեր, հաւատալիք ճշմարտութիւններ և կատարուելիք գործեր։

Ընդհանուր սկզբունքով օրէնքի մը և հրամանի մը փոփոխութիւն միայն օրէնքին տէրը կամ օրէնսդիրը կամ ծագումտուող իշխանութիւնը կրնայ տալ, և հետևաբար մարդկային միտքն և կամքը ձեռնհաս չէ Աստուծոյ հաստատած ու յայտնած օրէնքը ու կանոնը փոփոխել, և որոնք որ բարեկարգութիւն ըսելով կը մտաբերեն կրօնական յայտնեալ օրէնքը փոփոխել, թեթևցնել կամ դադրեցնել, առողջ սկզբունքի հակառակ կը խօսին, և երբ կը կարծեն նպատակին դիմել, ո՛չ արդար և ո՛չ իրաւացի և ո՛չ իսկ մտաւորական սկզբանց համաձայն կը խօսին։ Քրիստոնէական օրէնքներու և կանոններու գալով, ընդունուած է որ անոնց հեղինակը ինքն Քրիստոսն է, որ խորհուրդներն ու հրամանները առաքեալներուն հաղորդեց ու սորվեցուց, անոնք ալ աշխարհի հաղորդեցին ու սորվեցուցին և առաքելական եկեղեցի կազմակերպեցին։ Առաքելոց հետևող հայրապետներ ու վարդապետներն ալ առաքելոց անունով գործեցին և առաքելոց հեղինակութեամբ զօրա-

ցան։ Մարդկային միտքն ու կամքը տեղի տուաւ աստուածային իշխանութեան, և քրիստոնէութեան վերաբերեալ ամէն ինդիրներ ո՛չ միտքի զօրութեամբ և ո՛չ կամքի հաճութեամբ և ո՛չ ժամանակի պահանջից փաստով լուծուեցան, այլ դէպ ետև բարձրանալով՝ առաքեալներուն հաստատածն ու սրբեցուցածը փընտրուեցաւ, և առաքելական հեղինակութեամբ զօրացաւ առաքելական եկեղեցին։

Անուրանալի է սակայն՝ որ եթէ մարդկային միտքն ու կամքը իշխանութիւն և հեղինակութիւն չունի կրօնական օրէնքներ և կանոններ փոփոխելու, շատ յարմարութիւն ունի անոնք աղաւաղելու և եղծանելու, և այս է իսկական պատճառը որ քրիստոնէութեան միակ բուն բաղմաճիւղ ծառի նման բազմաթիւ ոստերու բաշխուած է, և բազմատեսակ եկեղեցիներ կը պարունակէ, որոց իւրաքանչիւրն ալ իւր ուղղափառութիւնը, այսինքն ուղիղ առաքելութիւնը կը պնդէ, թէպէտև իրարու անհամաձայն ըլլալովնին հարկաւ չեն կրնար ամէնքն ալ ուղիղ ուղղափառութեամբ ճոխանալ։ Ուրեմն անհրաժեշտ է այժմեան քրիստոնէութենէ ետ ետ բարձրանալով՝ մինչև հնագոյն դարերը հասնիլ, և այն ալ ո՛չ թէ յանկարծական ոստումով մը հինը վերանորոգելու մարմաջով, որ տեղականութեան և շարունակութեան փաստը չունի իրեն կողմ, այլ սկիզբէն դէպ առաջ շարունակութեամբ որոնելով՝ թէ ո՛ւր կանգ առած է իւրաքանչիւրին վերջնական կազմակերպութիւնը։ Այդ տեսութեամբ միանգամ ընդ միշտ դուրս թողած կ'ըլլանք նորագանդական կամ բողոքական դրութիւնը, որ վեշտասաներորդ դարուն մէջ յանկարծական ոստումով մը առաջին դարուն վերադառնալ կարծեց, և առանց իրեն հիմ ունենալու աւանդական շարունակութիւնը և տակաւ կազմակերպութիւնը, իւր միտքին յղացմամբ և հաճոյից որոշմամբ ուզեց սկզբնական դարը կերպարանել և վերանորոգել, որով իսկապէս կրօնական և քրիստոնէական սկզբունքէն շեղեցաւ, և մարդկային միտքն ու կամքը իբր իրաւացի իշխանութիւն և բաւարար հեղինակութիւն ընդունուած եղաւ։

Կը մնան ուրեմն մեր առջև հին եկեղեցիներ կոչուածները, լատինական և յունական և հայկական դրութիւնները, որոնք կրնան բաղդատութեան դրուիլ իրարու հետ։ Այդ թէպէտև հետևողներու թիւով անհաւասար են, ինչ որ պարզապէս քաղա-

քական անցքերու հետևանք է, սակայն Աւետարանի ալ վկայութեամբ հos փոքրիկը քաջալերուած է իբրև արքայութեան երկնից արժանացող և վայելող։ Լատինականը իւր կազմակերպութիւնը մինչև 1870 կը հասցնէ, Վատիկանեան ժողովով հռչակուած պապին անսխալականութեամբը, նախընթաց տարիներու մէջ ստացած քաղաքական ուղղութեամբը, և պետական ճոխութեամբ կատարած փոփոխութիւններովը, որոնք զինքը յայտնապէս կը հեռացնեն զուտ քրիստոնէական և ստոյգ առաքելական դրութենէն։ Յունական եկեղեցին ալ իւր կազմակերպութիւնը կը հասցնէ մինչև 864, Փոտիոսի և Կերուլարիանի ժամանակ ստացած կերպաւորութեամբը, և բիւզանդական կամ կայսերական դրութեամբ ձևակերպուած եկեղեցիովը, որ նոյնպէս շատ հեռու կը մնայ նախնական դարերէն, և ակնյայտնի կը ցուցնէ արտաքին ազդեցութեամբ աղաւաղուած ներքինը։ Իսկ հայկական եկեղեցին իւր պաշտօնական կերպաւորումը կը դադրեցնէ 431ին Եփեսոսի ժողովով, որով մերձաւորագոյն կը գտնուի առաքելական և նախնական կազմաւորութեան, և աւելի մօտաւոր կ'ըլլայ վերէն վար եկող օրէնքներուն և կանոններուն, և հետևաբար երբոր երեք՝ այսինքն հռոմէական և բիւզանդական և հայկական դրութեանց բաղդատութեանը կը մտնենք, հայկականը անհակառակ կը ստանայ առաւելութեան արժանիքը, և պիտի հռչակուի աւելի հաւատարիմ հինին, աւելի պահապան նախնականին, աւելի հետևող ուղիղին։

Սակայն այդ առաւելութիւնը կը վերապահեմ և կը վերագրեմ պաշտօնական և սեպհական հայկական դրութեան, և չեմ տարածեր այժմեան կիրառութեան մէջ եղող դրութեան վրայ, վասնզի համարձակօրէն պիտի ընդունիմ թէ մեր եկեղեցին ալ ունի այժմ յաւելուածական և աղաւաղական մասեր, որոնք ամենայն իրաւամբ կրնան ուղղելի ըսուիլ. միայն թէ ինչ որ մեր մէջ յաւելուածական և աղաւաղական է, կատարեալ պաշտօնական ձև չէ առած, և պաշտօնական դրութիւնը հաստատուն կը մնայ 431ին կամ Երրորդ ժողովի հիման վրայ, և ինչ որ պատահմամբ կամ անհոգութեամբ, կամ բռնութեամբ կամ տգիտութեամբ եղած է, կրնայ ամենայն իրաւամբ ուղղուիլ, խոհեմութեան և պատշաճողութեան պայմանները ամուր պահելով։ Խօսքերնիս տեսականէն գործնականին և վերացականէն թան-

ձրացեալին բերելով՝ պէտք է ընդունինք թէ մեր եկեղեցւոյն մէջ շատ մը կէտեր՝ սովորական, ծիսական, կանոնական, դաւանական՝ յոյնէն ու լատինէն վերջին ատեններ ներմուծուած են, և յանգպատ օրէնքի կարգ անցած են, և այսօր այնպէս կը կարծուին՝ իբրև թէ Թարգմանչաց դարուն կամ Լուսաւորչի ժամանակին աւանդութիւններն ըլլան։

Յունական եկամուտները յունական տիրապետութեան հետեւանքն եղան, երբ մինչև իսկ բռնութիւններ ի գործ դրուեցան Հայ Եկեղեցին յոյնին ձուլելու կամ նմանցնելու։ Հայերը այն ատեն մասնաւոր զիջողութիւնները իբրև մեծագոյն չարիքէն ազատելու միջոցներ ընդունեցին։ Լատինական եկամուտները առաջին անգամ Հայաստանի Ունիթորներուն գործունէութենէն բղխեցան, և մեր վարդապետներ լատին դպրոցամոլ դըրութեան (Scholasticisme) փայլէն շլանալով՝ բուսական սեպեցին անջատման չորս կէտերէն, այսինքն՝ Պապուքեանի, Քառասանի, Որոդոյ քղխուսի ու Երկու բնութեանի դուրս եղած լատին վարդապետութիւնները առհասարակ իւրացնել, և նոյնիսկ Գրիգոր Տաթեւացին իւր Հարցմանց Գիրքին մէջ այդ տկարութենէն ազատ չէ մնացած։ Հայաստանի Ունիթորներէն ետքը Կիլիկիոյ Աղթարմանները աւելի ևս ընդարձակեցին այդ ուղղութիւնը, և ամենէն վերջը Մխիթարեան միաբանութիւնները իրենց կաթոլիկամիտ հրատարակութիւններով և կարգացման պատրուակներով ևսքան զևս սփռեցին ու ընտելացուցին լատինական եկամուտները։ Ես ազատաբար կ'ընդունիմ բառնալ և հեռացնել մեր եկեղեցիէն ամէն յունական եւ լատինական յետին ժամանակներու յաւելուածները ու աղաւաղումները, և համամիտ եմ մեր դաւանանքը ամփոփել Եփեսոսի ժողովով, մեր կանոնականը կազմել Թարգմանչաց դարով, մեր ծիսականը ձևակերպել առաուելն Օձնեցիի ժամանակով, մինչև իսկ կը հաւանիմ Շնորհալիի յաւելուածները կամաւորութեան վերածել և պարտաւորիչ չճանչնալ։ Ահա՛ իմ ըմբռնած եկեղեցական բարեկարգութիւնս, հիմնական սկզբունքներու դէմ չմեղանչելով, հայկական դրութեան հաւատարիմ մնալով, և իրապէս ու տիրապէս բեռները թեթևցընելու նպատակին ծառայելով։ Շատ առիթներ ունեցած եմ իբրև ուսուցիչ և իբրև ուսումնասիրող մասնաւոր կէտեր զննելու և քննելու, և միշտ շատ թեթև և շատ ամփոփ գտած եմ

Հայ Եկեղեցւոյ նախնականը, նուազ բեռնաւորեալ իւր դաւանականը, ազատական իւր դրութիւնը, և դիւրատար իր կանոնները։ Հետևաբար բաւական է եկամուտները վերցնելով զուտ հայկականը պահել, որ շատերուն փափաքած թեթևութիւնը իրականանայ, ո՛չ թէ ժամանակի պահանջին կամ ժամանակին մտայնութեան կամայական փաստով, այլ նախնականութեան և պահպանողականութեան հիմամբ հաստատուած։ Շատ օրինակներ կրնայի յառաջ բերել խորհուրդներու և արգելքներու, ազգակցութեան և օրինականութեան, քահանայութեան և նուիրապետութեան վերաբերեալ նիւթերէ, այլ որովհետև զգացումներս բացատրել է նպատակ և ո՛չ վարդապետել ու վիճաբանիլ, զանց կ'ընեմ այս մանրամասնութեանց միջամտել։

Գործադրութեան մէջ խոհեմութեամբ և խոհականութեամբ վարուելու պայմանը յիշեցուցի, վասնզի գիտեմ թէ դիւրին չէ նախապաշարմանց դէմ մաքառիլ, օգտակար չէ խիզճեր վրդովել, վնասակար է գահավէժ որոշմանց հետևիլ, վտանգաւոր է առանց նախապատրաստութեանց ձեռնարկներ ընել։ Ուստի ինչպէս անզգալաբար մուտք գտած են եկամուտները և տեղ գրաւած են ոգաւորումները, պէտք է որ նոյնպէս ալ անզգալաբար վերցուին և աստիճանաբար անհետանան։ Այդ կէտը Հայոց Եկեղեցի գիրքիս մէջ ալ բացատրած եմ։ Երբոր Էջմիածին ուսուցիչ էի, երջանկայիշատակ Մակար կաթողիկոսի խօսած եմ, բանիբուն և կարող և խոհական եկեղեցականներէ Յանձնաժողով մը կազմել, որ խնամով ուսումնասիրէ նախնական Հայ Եկեղեցին իւր ամէն տարրներով, զտէ և զատէ հինն ու նորը, սեպհականն ու եկամուտը, և իւր աշխատութեանց արդիւնքը կանոններու և հրահանգներու կերպով բանաձևէ, և իւր աշխատութիւնը անպաշտօն տպագրութեամբ յղուի եպիսկոպոսներու, կարող վարդապետներու, ուսեալ քահանաներու և հմուտ աշխարհականներու, և անոնց տեսութիւններն ու կարծիքները հաւաքուելով Յանձնաժողովին դառնան, որ երկրորդ խմբագրութեամբ ընդունելի կարծիքները իւրացնէ, և այդ երկրորդ խմբագրութիւնը՝ իբրև պատրաստ նիւթ՝ ազգային եկեղեցական մեծ ժողովի մը հանուի, և հաստատութիւններով ու փոփոխութիւններով վաւերանայ, և Հայ Եկեղեցւոյ դաւանութեան ու վարչութեան, կանոնականութեան ու արարողութեան օրինագիրք ըլլայ, և ըստ

այնմ սկսի կատարուիլ ամենայն ինչ որ Հայ Եկեղեցւոյ կեանքը կը կազմէ և անոր զուտ ինքնութիւնը կ'ապահովէ։ Կաթողիկոսը առաջարկս ընդունելի դատեց, և ինձի պիտի յանձնէր նախապատրաստութիւններով զբաղիլ ամառնային արձակուրդին ատեն; սակայն ես կանուխէն պարտաւորուեցայ էջմիածինէ մեկնիլ (տե՛ս խե), ինքն ալ շատ չապրեցաւ, և գաղափարը գործնականութեան չմտաւ։ Սակայն ինչ որ յապաղած է՝ կորած չէ, կ'ըսէ լատին առածը (Quod differtur non aupertur), և ոչինչ կ'արգելուր որ ինչ որ այն ատեն չկրցաւ գործադրուիլ, առաջիկային կարենայ իրականանալ։

Այսչափ ինչ բաւ ըլլայ ընդհանուր խնդրոյ մը նկատմամբ, և նորէն դառնամ կենսագրական յիշատակներու։

ԼԶ

Դամասկոս, 1918 մարտ 1/14 Եշ.

Սաղիմական կամ զեւոնդական խնդիրին՝ ընթացքը, և իմ ունեցած մասնակցութիւնս, և խնդիրին իսկութեան մասին տեսութիւններս գրած եմ մինչեւ պատրիարքութեանս վերջը (տե՛ս Կ), բայց պատրիարքութեան հետ՝ մասնակցութիւնս ալ վերջացաւ և այլեւս այդ խնդիրով չզբաղեցայ մինչև 1914ին պատուիրակութեան պաշտօն ստանձնելս։ Հետեւաբար 1908էն 1914 վեց տարուան գործողութիւնները ինձմէ օտար մնացած են, և անոնցմով զբաղելու ալ պէտք չէի զգար, եթէ դարձեալ խնդիրին հետ մասնակցելու չպարտաւորուէի, զի եղելութեանց ընթացքը և կապակցութիւնը դիւրահասկանալի ընելու համար հարկ կ'ըլլայ միջանկեալ վեց տարիներու գործողութիւնները համառօտիւ քաղել, գոնէ իբրեւ լրացուցիչ տեղեկութիւն։ Բայց վաւերական աղբիւրները չունիմ ձեռքիս տակ, և միայն յիշողութեամբ պիտի կարենամ համառօտ բան մը գրել։

Վարչութեան Ատենապետաց Յանձնաժողովը, որ իր տեղեկագիրը մատուցանելու վրայ էր, իրօք ալ զայն ներկայեց Դուր-

եանի տեղապահութեան միջոցին, բայց Երեսփոխանութիւնը կազմուած և գործի ձեռնարկած ըլլալուն, և Երուսաղէմի համարատուութիւնը ընդունող և հաշիւները քննող կեդրոնի իշխանութիւնը Սահմանադրութեան համաձայն Երեսփոխանութիւնն ըլլալով, Վարչութեան եկած տեղեկագիրը Երեսփոխանութեան յանձուեցաւ, եւ գործն ալ անոր ձեռքն անցաւ։ Երեսփոխանութիւնն առանց մերժելու այդ տեղեկագիրը, որ Մագուտեան Ղեւոնդ վարդապետին նպաստաւոր չէր, որոշեց գործը աւելի խորապէս քննել տալ, և իւր մէջէն նոր Յանձնաժողով մը կազմեց իրապէս փորձառու եւ վկայեալ անձերէ, որոնք բոլոր անցեալ տեղեկագիրները եւ հաշուեթուղթերը նոր քննութեան ենթարկելով՝ Մագուտեանը 11,000 եւ այսչափ ոսկւոյ դումարի վերծաբերութեան պարտաւոր դատեցին, նոյնչափ դումարը իրմէ պահանջել եզրակացուցին, եւ Երեսփոխանութիւնն ալ անոնց տեղեկագիրը հաստատեց եւ Մագուտեանը վճարման դատապարտեց։

Բայց մինչև որ այդ վճիռը տրուէր, Երուսաղէմի կացութիւնը բոլորովին այլափոխուած էր, Դուրեանի տեղապահութեան ատեն ազդեցութիւնը Իզմիրլեանի ձեռքն էր, յետոյ պատրիարքութիւնն ալ իրեն անցած էր, եւ հաշուեպահանջ կողմը կը սպասէր որ Իզմիրլեան կտրուկ որոշմամբ խնդիրը վերջացնէր, և իւր ճանչցած եւ ուսումնասիրած գործը փակէր։ Իզմիրլեան եթէ հաշուեպահանջութեան հեղինակը չէր, հրահրիչն էր եղած, գործին մանրամասնութեանց տեղեկացած, պատրիարքարանի ալ տեղեկագիրներ յղած եւ կերպով մը գործը իւրացուցած, ունէր տեղեկութիւն, ունէր իշխանութիւն, ունէր յօժարութիւն, և կրնար իւր գիտակցութեամբ եւ իւր ազդեցութեամբ Վարչութիւնն ալ Երեսփոխանութիւնն ալ վերջնական որոշման մը առաջնորդել, մանաւանդ որ Կեդրոնն ալ շատ աննպաստ տրամադրուած էր Մագուտեանի հանդէպ։ Հակառակ այդ ակնկալութեանց՝ Իզմիրլեան անգործ մարդ մը դարձաւ, Երուսաղէմի մէջ հաշուեխոյսներ զօրացան, հաշուեպահանջները տապալեցին, փոխբատեամբ կեանքերնին ապահովելու պարտաւորեցին, Վեհապետեան պատրիարքն ալ իրենց համակերպելու եւ գործակցելու ստիպեցին, եւ Մագուտեանի հակառակ տրուած վճիռը մեռեալ տառ դարձուցին։

Յակոբ Աշոտ Փափազեան եպիսկոպոս, Գէորգ Ֆիքրի Ամէմ-

եանի եւ Հայկազուն Պեկեանի հետ քննիչ եւ կարգադրիչ յղուեցան, բայց կացութեան տիրապետող հաշուեխոյս Ղեւոնդականներ պատուիրակութիւնը ո՛չ ճանչցան եւ ո՛չ ընդունեցան, որ մազապուր Յոպպէ ապաւինելով անգործ Կ. Պոլիս դարձաւ։ Յոպպէ ապաստանող հաշուեպահանջներն ալ անձամբ խօսելու և գործելու համար Կ. Պոլիս ուղեւորեցան։

Միւս կողմէն Մագսուտեան Ընդհանուր Ժողովոյ վճիռին քննադատութիւնները կը հրատարակէր, հաշիւի եւ եզրակացութեան սխալներ մատնանիշ կ'ընէր, եւ իւր գօրացած դիրքովը կը յոխորտար։ Վճիռին գործադրութեան կերպը գտնելու համար հրաւիրուած փաստաբաններ ալ գործին անհնարութիւնը կը յայտնէին, զի Երեսփոխանութիւնը պետական դատարան չէր, որուն վճիռը կարենար գործադիր իշխանութեան յանձնուիլ։

Գործերու այդ առաջին արարուածին երկրորդ մը կը յաջորդէր։ Իբրեւ թէ բոլոր անկարգութեանց պատճառ Վեհապետեան պատրիարքն ըլլար, յատենի Երեսփոխանութեան պաշտօնապէս կ'ամբաստանուէր, կը դատապարտուէր, պաշտօնանկ կը հռչակուէր, եւ Յակոբեան Դանիէլ վարդապետ տեղապահ կ'անուանուէր, և տեղապահին անկարութիւնը գտնելու համար Պարգև Փափազեան, Օսմանեան Դրամատան համարակալը, օգնական կը տրուէր, և իրաւունք փնտռելու եկող հաշուեպահանջներն ալ միասին Երուսաղէմ կուգային, բայց վանք մտնելու համար հարկ կ'ըլլար օրինաւոր պաշարում և ռազմագիտական միջոցներ գործածել։ Թէպէտ վանքին կը տիրանային, և Վեհապետեան բռնութենէ ազատած զիրենք կը քաջալերէր, բայց միւս կողմէն թատերական խաղ մը կը խաղցուէր, զի պաշտօնական պատրիարքին պատուոյ իրաւունքները պահուած էին, և զինքն գործէ հեռու պահելն ալ ծերութիւնը չյոգնեցնելու պատրուակով կը վարագուրուէր։ Յակոբեան եպիսկոպոսանալու համար Էջմիածին կ'ուղեւորէր, Տրդատ Պալեան եպիսկոպոս կը փոխանորդէր, բայց ան ալ իւր կարգին իւր խաղը կը խաղար, եւ Երուսաղէմի վիճակը չէր բարւոքուէր, Մագսուտեան ալ ապահովութեամբ իւր ընթացքը կը շարունակէր։ Երբ Վեհապետեանը ամբաստանելու գաղափարը ծագեցաւ, անուղղակի թելադրած էի պատրիարքը պաշտօնանկ չընել, այլ անոր օգնական մը յղել, և երթալու յօժարութիւն իսկ յայտնած էի, բայց այդ ատեն Օրմանեանը լը-

սել և Օրմանեանի գործ յանձնել ներեալ չէր, նա ամբաստանեալ մըն էր, եւ անվերջանալի դատավարութեան ենթարկուած կը մնար։

Երրորդ արարուածը կը բացուէր Հայկ Խօճասարեան ուսուցչին պատուիրակութեամբ, որ պաշտօն ունէր պատրիարքական ընտրութեան համար ընտրելեաց եօթնանուն ցանկը պատրաստել տալ, զի 1910 հոկտեմբեր 5/18ին Վեհապետեան վախճանած էր, և աթոռը իսկապէս թափուր էր։ Խօճասարեան կուգար, Միաբանական ժողով կը գումարուէր, ընտրելեաց ցանկը կը քուէարկուէր, բայց հաշուեխոյս Ղեւոնդականաց մեծամասնութեանը շնորհիւ ցանկը կը կազմուէր եօթը անարժան կամ անյարմար անուններով։ Խօճասարեան առանց դիտողութեան ցանկը Կ. Պոլիս կը տանէր, բայց հոն ինքն ալ ցանկին անընդունելի եւ անգործադրելի ըլլալը կը յայտարարէր, Երեսփոխանութիւնն ալ նոյն որոշումը կուտար, եւ Երուսաղէմ կը գրուէր նոր և յարմարագոյն ցանկ մը պատրաստել։ Սակայն ցանկը քուէարկող մեծամասնութիւնը իւր ըրածը կը պաշտպանէր, եւ նոր քուէարկութեան չէր մօտենար, եւ գործը կը քաշքշուէր։

Իբրեւ անելանելի կացութեան դարման նոր պատուիրակութիւն մը յղել կ'որոշուէր, և յառաջ կը կոչուէր համարակալ Պարգև Փափազեան, որ տեղապահի ընկերանալով գործունէութիւն էր ցոյց տուած եւ Երուսաղէմը ուսումնասիրած։ Իրմով սկսող չորրորդ արարուածը աւելի դժխեմ տեսարան կը բանար, զի այս անգամ կաց եւ կռիւ, խարազան և գաւազան հրապարակ կ'իջնէին, Փափազեան պատուիրակ խարազանով վանքէն կը հանուէր, և Յակոբեան տեղապահ պարզապէս կ'արտաքսուէր, Յոպպէ կ'ապաւինէր, և Երուսաղէմ հաշուեխոյս Ղեւոնդականներու բաց ասպարէզ կը դառնար։ Թէպէտև Տնօրէն ժողովը, որ այս առթիւ բացարձակ վարիչ էր դարձած, բոլոր հաշուեխոյսներէ չէր կազմուած, և յանուն Տնօրէնին Ամէմեան Սարգիս վարդապետ, հաշուեպահանջներու գլխաւորներէն, փոխտնորդ կամ վարիչ էր նշանակուած, սակայն միաբանական մեծամասնութեան գործունէութիւնը կը տիրապետէր, Յակոբեան Յոպպէ կը մնար, կէս անիշխանական ձեւը կը շարունակէր, և Կեդրոնը նորօրինակ կամ տարօրինակ դաղափարներու կը մղուէր։

— Դաշնակցական խումբը գործը ձեռք կ'առնէ և արմատաքի

դարման պատրաստել կ'ուզէ. ազատական կոչուած խումբը, ինչպէս ուրիշ առիթներու մէջ, այս պարագային ալ ոյժ կուտայ Դաշնակցութեան, միւս կուսակցութիւններ ալ հակառակ չեն ըլլար, և արմատաքի դարման կարծուած ծրագիրը, որ է Երուսաղէմի համար նոր Կանոնագիր մը, հապճեպ չտապով եւ գործին օտար գործիչներով կը խորհուի, կը կազմուի, կը ներկայուի, կը քուէարկուի և կը հաստատուի 1913 դեկտեմբեր 7|20ին։ Այս ալ կ'ըլլայ սաղիմական եղերերգութեան վերջին արարուածը։ Նոր Կանոնագիրին պարունակութիւնը մէկ բառով բացատրել ուզած ատեննիս կրնանք ըսել՝ Երուսաղէմի պատրիարքութիւնը աշխարհականացնել, Աթոռն ալ, վանքն ալ, միաբանութիւնն ալ միանգամայն։ Երուսաղէմի եկեղեցական մարմինը ամբողջապէս, իւր գլխով և իւր անդամներով, կը կապտուէր ամէն իրաւունքներէ, ըլլան վարչական կամ տնտեսական, ըլլան ներքին կամ արտաքին, և կը մնար միայն պատարագ մատուցանելու, ժամերգութիւն կատարելու, և թափօր շրջելու իրաւունքը։ Երուսաղէմի թէ՛ վարչական և թէ՛ տնտեսական գործերը կը յանձնուին Կ. Պոլիս նստող և հինգ անդամէ բաղկացած Խնամակալութեան մը, որուն վրայ կը հսկէ Վարչութիւնը, և ասոր վրայ ալ Երեսփոխանութիւնը։ Իսկ Երուսաղէմի մէջ գործողներուն գլխաւորը կ'ըլլայ Երեսփոխանութենէ ընտրուած ներկայացուցիչ մը, որ ամէն ժողովներու պիտի մասնակցի, ամէն գործերու պիտի միջամտէ, ամէն գանգատ ու բողոք պիտի ընդունի և որոշէ, և առանց որոյ հաւանութեան ու հաստատութեան բան մը պիտի չգործուի, և ո՛չ իսկ աշխատաւոր միաբան մը հնար պիտի ըլլայ ընդունիլ։ Խնամակալութիւնը պիտի ընտրէ և Վարչութիւնը պիտի հաստատէ և ղրկէ չորս աշխարհական պաշտօնեաներ իբր կալուածապետ, մատակարար, համարակալ և գանձապահ, որոնք միանալով պիտի կազմեն Տնտեսական Մարմին մը։ Այս պաշտօնեաներն ու ներկայացուցիչը պիտի ունենան իրենց հետ օգնականներ և ստորադաս պաշտօնեաներ, ամէնն ալ աշխարհականներ և անորոշ թիւով, որչափ որ ուզեն կամ հարկաւոր կարծեն։ Բոլոր այդ պաշտօնեաները վճարեալ պիտի ըլլան Երուսաղէմի անտուկէն. ներկայացուցիչին ամսականը յիսուն ոսկի, և մնացածները անոր համեմատութեամբ։ Ներկայացուցիչն ու Տնտեսական Մարմինը վարչականութեան ալ տէր պիտի ըլլան, զի ամէն գործ վերջիվեր-

ջոյ ծախքի մը կամ թոշակի մը պայմանը կ'ենթադրէ, և ծախք ու թոշակ անոնց բացարձակ ձեռնհասութեան յանձնուած պիտի ըլլան։ Եւրոպիոյ մէջ նոր օրէնքներ դրուեցան, բնութիւններ ջընջելու կամ եկեղեցական պաշտօններ ամփոփելու համար, բայց եկեղեցականութիւնը պահելու և եկեղեցականութիւնը աշխարհականացնելու գիւաը հայ Դուշնակցականներու և իրենց համախոհներուն պահուած էր։ Երեսփոխանութեան մէջ գտնուեցան այդ ծրագիրին դէմ խօսողներ, և յատկապէս եկեղեցականներ, բայց իրենց ձայնը ազդեցութիւն չունեցաւ, և նոր Կանոնագիրը լաւ մեծամասնութեամբ քուէարկուեցաւ։ Ես ալ Երեսփոխանութեան մէջ մտած էի 1913 մայիսէն ի վեր, այլ Կանոնագիրին վիճաբանուած և քուէարկուած ատենը ծանր հիւանդութեանս և ապաքինութեանս ատենին կը զուգադիպէր, և պաշտօնապէս խօսելու առիթ չունեցայ, սակայն ամէն առթի և ամէն պարագայի մէջ հակառակ կարծիք ունենալս յայտնած էի, և ընդդիմադիր ըլլալս հրապարակաւոր էր։ Միաբանութիւնն ալ լուռ չէր կեցած, նամակներով և հեռագիրներով դիտողութիւններ ըրած էր, յիշելով յատկապէս Աթոռոյ պարապութեան ատեն փոփոխութիւն չընելու, և առանց միաբանութեան հաւանութեան Կանոնագիր չայլայլելու կանոնները, սակայն իւր ձայնը նկատի չէր առնուած։ Քուէարկուելէն ետքն ալ իւր ընդդիմութիւնը յայտնած էր, եւ Վարչութիւնը հայրապետական հեղինակութեամբ միաբանութիւնը լռեցնելու համար 1913 դեկտեմբեր 19|1 յունուար 1914ին, Գէորգ Ե. կաթողիկոսի դիմած էր, բայց կաթողիկոսն ալ միաբանութեան իրաւունք տուած էր, եւ 1914 փետրուար 14|27ի կոնդակով Աթոռոյ պարապութեան ատեն փոփոխութիւն կատարելը ապօրինի դատած, և քուէարկեալ Կանոնագիրը մինչև ցընտրութիւն նորոյ պատրիարքի անգործադիր թողուլ հրամայած էր։

Ահա՛ համառօտ քաղուած մը 1908 յուլիսէն մինչև 1914 ապրիլ տեղի ունեցած Երուսաղէմի անցքերուն, որոնք առիթ ընծայեցին իմ լիազօր պատուիրակ ընտրուելուս և Երուսաղէմ ուղեւորելուս։

ՀԷ

Դարձասկոս, 1918 մարս 2/15 Ուր.

Վարչութեան կողմէ պատուիրակ ընտրուիլս տեղի ունեցաւ Խառն Ժողովոյ 20 ներկաներու 18 քուէով 1914 ապրիլ 21/4 մայիսին, և ուղեւորիլս 26/9ին։ Ընտրութիւնը տեղի կ'ունենար նոր Կանոնագիրին հաստատուելէն ետքը, իսկ ես այս Կանոնագիրին ընդդիմադիր էի, ուստի առաջին անգամ պէտք է այս առեղծուածը պարզել։

Այն Վարչական Խառն Ժողովը, որուն հովանաւորութեան ներքև կազմուեցաւ 1913 դեկտեմբեր 7/20ի Կանոնագիրը, գործէ քաշուեցաւ 1914 տարւոյն սկիզբները, և փետրուար 28/13 մարտին նոր Վարչութիւնը ընտրուեցաւ, որուն ես ալ անդամակից ըլլալ ստիպուեցայ և Կրօնականի ատենապետութիւնն ալ ստանձնեցի, ինչպէս յիշած եմ։ Նոր Վարչութիւնը խոհականագոյն տարբերներէ կազմուեցաւ, որ դիւրաւ զգաց նոր Կանոնագիրին գործադրութեան անյարմարութիւնը, սակայն Ընդհանուր Ժողովէ հաստատուած որոշում էր, և որոշումը իր ոյժն ունէր։ Կանոնագիրը փոփոխելու համար Երեսփոխանութեան դարձնել ապաժամ էր և ելքն ալ յեղակարծ, զանց ընել և անգործ թողուլ դիւրին չէր, զի պաշտպաններ ունէր, գործադրելն ալ նոր Վարչութեան համոզման համաձայն չէր։ Իբրեւ միջոցահման եղանակ մը Վարչութիւնը եկաւ Երեսփոխանութեան առջեւ յայտարարել, թէ գործադրութիւնը դժուարութեանց կը բաղխի և շատ նախապատրաստութեանց պէտք ունի, ուստի ինքն առայժմ պիտի աշխատի գետինը պատրաստել, որ հնար լինի գործադրութեան անցնիլ։ Այդ գաղափարը կոչուեցաւ գործադրութիւնը հետապնդել, և մէկ կողմ թողուեցաւ գործադրել բացատրութիւնը։ Երեսփոխանութիւնն ալ թափանցեց գործին ներքինը, եւ գոհ եղաւ որ իր պատիւը կը պահուի, և Վարչութիւնը ազատութիւն ստացաւ իւր ծրագրած ձեւով գործել՝ և պարտաւորութենէ ալ զերծ մնալ, զի

հետապնդողը ելքը չ'երաշխաւորեր։ Այդ բանաձեւին մէջ գլխաւոր դերն ունէր, և ահա թէ ինչո՛ւ զայն իրականացնելու համար իմ վրաս դարձաւ Խառն Ժողովին միաձայնութիւնը, զի երկու պակաս քուէներէն մէկը իմս էր։ Այլեւս ինձի անհնար էր խուսափիլ, և յօժարակամ յանձնառութիւնս յայտնեցի։ Արդէն երկար տարիներէ իվեր Սուրբ Տեղերը և Պաղեստինը տեսնելու փափաքն ունէի, և ահա՛ առիթը կը ներկայանար. մեծ համարում ունէի Երուսաղէմի Ամենին կարեւորութեան վրայ, և ահա՛ այդ նպատակին աշխատելու դուռը կը բացուէր. հաստատուն էր նոր Կանոնագիրը վիժեցնելու դիտումս, և ահա՛ անոր բախտը իմ ձեռքս կը յանձնուէր։ Ահա՛ առեղծուածին լուծումը։ Պատուիրակութեան աշխարհական ընկեր մը աւելցնել պէտք էր, եւ ընտրուեցաւ Քաղաքական ժողովականներէն Գէորգ Կիւրեղեան փաստաբանը, որ յանձն առաւ միայն համառօտ ժամանակ մը գործակցիլ, գլխաւորապէս կալուածական վաւերագիրները ուսումնասիրելու համար, որոց մասնագիտութիւնն ունէր։ Երեսփոխանութիւնը կանխած էր իրեն ներկայացուցիչը ընտրել Վահան Թէքէեան բանաստէրը, վարչական եւ վանական եւ եկեղեցական նախընթաց չունեցող մը, որ կը ցուցնէր թէ Երեսփոխանութիւնն ալ մեծ կարեւորութիւն չէր տար իւր ներկայացուցչին գործունէութեան։ Անոր ուղեւորութիւնն ալ յետաձգել տալ դիւրին չէր, երթալն ալ արդարացնելու համար ըսուեցաւ թէ հետապնդող Պատուիրակութեան ի՛ընկերանայ տեղն ու գործը սերտելու և ուսումնասիրելու, որպէսզի Կանոնագիրին գործադրութեան ժամանակը հասած ատեն պատրաստ գտնուի։

Ուղեւորութիւնս տեղի ունեցաւ ընտրութենէն հինգ օր ետքը, ապրիլ 26|9 մայիսին, զի չտապեցնող պարագայ մըն ալ վրայ եկած էր։ Երուսաղէմէ մասնաւոր հեռագիր մը զեկուցած էր թէ փոխանորդութիւնը վարող Ամէմեան գաղտնի կերպով վանական գոյքեր իւրացուցած և Պիլէճիք իւր ծննդավայրը յղած է. ենտուկները Զմիւռնիոյ մէջ առաջնորդարանի ձեռքով զննութեան ենթարկուած էին, և պէտք էր այդ գործը շուտով քննել, ստուգել և դարմանել։ Մասնաւոր կերպով յանձնարարուեցաւ Պարգև Փափազեան պատուիրակը խարազանող վարդապետը պատժել, ինչպէս նաև Յոպպէի մէջ սպասող արտաքսուած տեղապահին կացութիւնը ճշդել և պատշաճը կարգադրել։ Ասոնք և ուրիշ

նմաններ գլխաւոր պաշտօնին յաւելուածներ կը կազմէին։ Ես կանխեցի ուղեկիցներէս առաջ մեկնիլ, թէ Զմիւռնիոյ առաջնորդ Ինճէեան Մատթէոս եպիսկոպոսի հրաւէրը յարգելու, և թէ Սեճէմեանի սնտուկներուն գործը նայելու համար։ Շաբաթ ապրիլ 26|9 մայիսին Կ. Պոլիսէ մեկնեցայ, կիրակի առտու Կէլիպոլուցիներէ պատուասիրուեցայ, երկուշաբթի 28|11ին Զմիւռնիա հասայ, հայ եւ յոյն առաջնորդներու և ազգայնոց ամէն դասակարգերու ցուցադիր պատուասիրութեամբ, գիշերեցի մեծամեծներէն Էսատեան Ղուկասի տունը, հրաւէրներ ունեցայ, կուսակալէն պատուուեցայ, պատգամներ ըրի, քարոզեցի, եւ չորեքշաբթի 30|13ին նոր հասնող Կիւրեղեանի և Թէքէեանի հետ դարձեալ նաւելով մայիս 1|14ին Պիրէոն և Աթէնք շրջեցայ, 3|16ին Աղեքսանդրիա հասայ, ուր Պօղոս Նուպար բաշա յատկապէս Գահիրէէ եկած էր անձնական ծանօթութիւն ընելու, և 5|18ին Յոպպէ ու 6|19ին Երուսաղէմ մտայ փառաւոր հանդիսութեամբ։ Ինծի ուղեկից էին չորս վարդապետներ, յատկապէս դիմաւորելու եկած, Վահան Քէշիշեան թարգման, Սիմէոն Թելեան Յոպպէի տեսուչ, Ղուկաս Յովհաննէսեան Ռէմլէի տեսուչ, եւ Մատթէոս Գայլգճեան Եգիպտոսի տեսուչ։ Երուսաղէմի պաշտօնավարութիւնս 1914 մայիս 6|19էն մինչև 1916 օգոստոս 6|19 ճիշդ երկու տարի ու երեք ամիս տեւած է, որուն ներքին ուղղութիւնը եւ արտաքին նշանակութիւնը բացատրելու չմտած, իդէպ կը համարիմ մասնաւոր եւ կզգիացեալ դիպուածները քաղել։

Սեճէմեանի սնտուկները պատրիարքարանի ազգարարութեամբ Զմիւռնիոյ մէջ վար դրուած, և առաջնորդարանէ ու մաքսէ նշանակուած անձերու կողմէ զննուած, և պարունակութիւնը մի առմի արձանագրուած էր, և անձնական գոյքերէ տարբեր վանական և ո՛չ մի բան գտնուած էր։ Ես միասին առած էի զննական արձանագրութեանց բնագիրները, իսկ Սեճէմեան Երուսաղէմի մէջ կառավարութեան ձեռքով քննութիւն բանալ տուած, և տեղեկատուութիւնը Պօղոս Վարժեան երիտասարդ սարկաւագի վրայ հաստատուած էր, և Վարժեան իբրև զրպարտիչ պետական դատարանի յանձնուած և վանական կարգադրութեամբ ալ Ռէմլէի Ս. Գէորգ վանքը ապաշխարութեան ղրկուած էր։ Զմիւռնիոյ քննութեամբ զրպարտութեան մասին երկբայութիւն չըլլալով, Վարժեանի համար եկեղեցական խիստ պատիժ կը պա-

հանջուէր ինձմէ, սակայն մասնաւոր քննութեանց ձեռօք կը հաստատուէր թէ նա հաշուեխոյս կողմին գլխաւորներուն ձեռք միամիտ գործիք մը եղած էր հեռագիրը յղելուն մէջ, հաշուեպահանջ Աճէմեանը աղարտելու և վանական կառավարութեան մէջ փոփոխութիւն յառաջ բերելու դիտմամբ։ Ըստ այսմ արդարութիւնը կը պահանջէր պատիժներ աւելի բարձրէն սկսիլ, ինչ որ միաբանութեան մէջ նոր միջադէպերու առիթ պիտի ընծայէր։ Ուստի բաւական սեպեցի ժամանակ մը ևս Վարժանը ապաշխարութեան ներքև թողուլ, խստիւ խրատել, և կառավարական դատարանին առջև ալ գործը դիւրացնելով խնդիրը փակել։

Պարգև Փափազեան պատուիրակի վրայ խարազանը փորձողը եղած էր Հմայեակ Երէցեան վարդապետը, դիւրագրգիռ ու գրգռիչ, յախուռն ու առջև նետուող անխորհուրդ բնաւորութիւն մը։ Վատահելի եւ լիուլի պատմութիւններ հաստատեցին թէ բաւական թիւով խումբ մը եղած էր Փափազեանի վրայ յարձակողը, լուտանքներ խօսելով, սպառնալիքներ կըրկնելով, և ոհաբեկել աշխատելով, որոց կարգին Հմայեակ ալ ձեռք նետած էր իւր խարազանին, որ աւելի անունին նշանակութեամբը քան թէ հարուածին ուժգնութեամբը կարևորութիւն կ'առնէր։ Ըստ այսմ պատուիրակին դէմ եղած անարգանքը, որ խնդիրին էութիւնը կը կազմէ, միայնոյ Հմայեակի գործը չէր եղած, և մէկ տեսութեամբ մը աւելի ծանր էին լուտանքն ու սպառնալիքը, քան խարազանին փորձը, և եթէ գործը իւր իսկութեան մէջ նկատի առնուէր, պէտք էր մէկէ շատ աւելի անձերու վրայ տարածել խստութիւնը, նոյնիսկ Զիլինկիրեան Եղիշէ եպիսկոպոսէ սկսելով, որ պատուիրակը հալածողներուն գլուխը անցած էր։ Արդ իմ նպատակս և իմ պաշտօնս կը պահանջէր աւելի միջադէպները պակսեցնել և յարմարիլ, քան թէ նորեր ստեղծել, ուստի խոհեմութիւն սեպեցի միայնոյ Հմայեակի հանդէպ լռութիւն պահել, քան թէ շատերու դէմ խստանալ։

Վարչութեան առաջարկած էի որ ինծի տրուելիք պաշտօնը նման ըլլար Անդրիանուպոլսեցի Պօղոս պատրիարքի պաշտօնին՝ իբրև Ծայրագոյն կառավարչութիւն կատարեալ իշխանութեամբ գործելու և ուրիշի կապուած չըլլալու պայմանով, մինչ Պատուիրակութիւնը, որչափ ալ ինազօր յաւելուածով զար-

դարուած՝ տեղական պաշտօնէութիւնը չէր դադրեցներ, և Տնօրէնէն անկախաբար գործելու իրաւունք չէր տար, և պէտք կ'ըլլար շատ մը ձեւակերպութիւններէ անցիլ, մինչև որ բան մը որոշել տրուէր և որոշումը գործադրութեան դրուէր։ Տնօրէնն ալ հինգ անդամ ունէր, Դաւիթ Տէրտէրեան լուսարարապետ և Սարգիս Ամէմեան փոխանորդ՝ հաշուեպահանջներէն էին, Վահան Փէշիշեան թարգման՝ երկու կողմերն ալ կը չօշափէր, Աթանաս Ալանեան Սեցարութեան Տեսուչ և Յարութիւն Պարոնեան դիւանապետ՝ հաշուեխոյս կողմին կը պատկանէին, այնպէս որ ոտքի ամուր կը ուանն ալ կը պակսէր ազդու տնօրինութիւններ ընելու։ Միւս երկու անդամակիցներ՝ Գրիգորիս Պոյաճեան և Հմայեակ Երէցեան առջի օրէն հրաժարած էին և գործունէութիւն ունեցած չէին։ Պոյաճեան նոր հրաւէրիս ալ հրաժարականով պատասխանեց։

Առաջին գործը, զոր անձնական իշխանութեամբ կարգադրեցի, ելեմտից տեսչութիւնը Պարոնեանէ առնելն էր, վի գործը փափուկ էր, ինքն ապիկար, և Մագուտեանի հրահանգներուն ծառայ էր։ Մագուտեան Վերիտոն կը մնար և Պարոնեանի հետ շարունակ թղթակցութեան մէջ էր։ Այդ միտքը Երուսաղէմ չհասած յղացեր էի, և Գայլգճեանը, որ Գահիրէի կալուածոց տեսուչն էր և Աղեքսանդրիա ողջունելու եկած էր, միասին առած և Երուսաղէմ բերած էի։ Այս առաջին փորձը յաջող քալեց, բայց շուտով զգացի թէ պատուիրակի անունն ու կերպարանը պիտի չներէ շարունակ այսպէս ազատաբար գործել։

Իբրև պաշտօնակից կամ ընկերակից ինծի հետ եկողներ, Կիւրեղեան և Թէքէեան, շատ քիչ ատեն մնացին Երուսաղէմ։ Կիւրեղեան ամիս մը կամ քիչ աւելի զբաղեցաւ հին մուրհակները, հրոլարտակները ու կալուածագիրները պրպտել, և անոնց մէջ ամփոփում մը քաղել, և իւր գործը աւարտած սեպելով և Կ. Պոլսոյ մէջ փաստաբանական յանձնառութիւններ ունենալով մեկնեցաւ Կ. Պոլիս, և պատուիրակութիւնը իմ վրաս մնաց ամբողջապէս։ Վարչութիւնը խորհեցաւ քաղաքական ժողովականներէն Բարսեղ Աւետիսեան վաճառականը յաջորդ յղել, սակայն դեռ խորհուրդը չիրագործուած պատերազմներու շռինդը սկսաւ, և գործը դժուարացաւ, և մինչև վերջը առանց գործակիցի մնացի։

Թէքէեան առջի օրեր բնաւ դիմողութիւն չունէր, և հանգ

վիստ կ'ապրէր Զարտախ կոչուած յարկաբաժինին մէջ, որ վանքին տրամադրելիներուն մէջ ընտրելագոյն սեպուած է։ Սրդէն որոշուած էր որ իրեւ ներկայացուցիչ գործունէութիւն պիտի չունենար, ասկայն հաշուեխոյսներ սկսան իրեն մօտենալ, զինքն գրգռել, գործունէութեան յորդորել, անոր ձեռքով վիս չափաւորելու կամ չէզոքացնելու համար։ Նոր Կանոնագիրին դէմ բողոքողներ նոր Կանոնագիրին պաշտպան դարձած էին. թէքէեան ալ միամտաբար, կամ թէ իրեն գործունեայ դիրք մը ստեղծելու մտայնութեամբ, սկսաւ իւր յարկաբաժինէն գանգատիլ, և պատրիարքարանի մէջ պաշտօնատեղի ուզել գործերուն մօտէն հսկելու համար։ Հարկադրուեցայ իրեն գալուն նպատակը իրեն յիշեցնել. գիրի դիմեց, գիրով ալ պատասխանեցի. չէի կրնար Կանոնագիրի գործադրութեան անցնիլ, քանի որ դեռ հետապնդութեան վրայ էինք։ Կեդրոնին ալ դիմեց, անկէ եկող նամակներուն ալ յատակօրէն պատասխանեցի։ Բնակութիւնը քաղաքամիջի պանդոկ մը փոխադրեց, այն ալ աննշանակ թողուցի, և օրուան մէկը լսեցի որ առանց լուրի և առանց հրաժեշտի Եգիպտոս մեկնած է։ Ամսաթոշակի պահանջման խնդիր յարոյց, պաշտօն չունենալով թոշակ պահանջելուն չհամակերպեցայ. Կեդրոնը իրեն ձեռքը գտնուող երուսաղէմապատկան գումարներէ վճարում մը ըրաւ, անոր ալ դիտողութիւն ըրի. վերջապէս ինքն ալ ստիպուեցաւ լռել, և նոր Կանոնագիրին գլխաւոր տրամադրութիւններէն մին փակուեցաւ ու վերջացաւ իւրովի։ Այս ամէնը կատարուած էր մեր գալուն երկրորդ ամիսը չլրացած։

Վարժապետութիւնը կամ ուսուցչութիւնը ինծի ընտիր ախտ մը դարձած է, և ամէն պաշտօններուս մէջ դպրոցական զբաղումներու լայն բաժին տուած եմ։ Տարբեր չէր կրնար ըլլալ Երուսաղէմի պաշտօնն ալ, ուր ժառանգաւորաց Վարժարան մը կար, շատ համեստ և պարզ նախակրթական ծրագիրով։ Քիչ մը շարժում ազդելու համար մայիս 19|1 յունիսէն, այսինքն հասնելէս երկու շաբաթ ետքը, սկսայ շաբաթական ազատ դասախօսութիւններ ընել, որուն միտքաններէն ալ բաւական թիւով կ'ունկնդրէին։ Նիւթ ընտրած էի Հայ Եկեղեցւոյ պատմութիւնն ու վարդապետութիւնը։ Իսկ աւելի հիմնական բան մը ըրած ըլլալու համար լրացուցիչ դասարաններ բանալու աշխատեցայ, որ նպատակով մէկ երկու տարի առաջ Մոսկուայի մեծամեծներէն

Յովհաննէս ժամահարեանց դրամագլուխ մըն ալ նուիրած էր, բայց գործադրութիւնը կը յապաղէր։ Յուլիս 28|10 օգոստոսին նոր շրջանաւարտները զատեցի, և առանձին յարկաբաժինի մէջ զետեղեցի, և սեպտեմբեր 22|5 հոկտեմբերին դասախօսել սկսայ, նիւթ ունենալով Աւետարանի ներածութիւն, տրամաբանութիւն ու հոգեբանութիւն, և բնական ու ջատագովական աստուածաբանութիւն։ Իսկ 1915 հոկտեմբեր 14|27ին նոյն տարւոյ շրջանաւարտներէն երկրորդ դասարան մը կազմեցի, և առաջիններուն սկսայ տեսական և բարոյական աստուածաբանութիւն, առաքելական թղթոց ներածութիւն, գրաբարի վարժութիւն, և ատենաբանութիւն. իսկ 1916 հոկտեմբեր 24|6 նոյեմբերին լրացուցիչ դասարանները կամ լսարանները եղան երեք, և երկրորդ տարւոյ նիւթերու շարունակութենէն զատ՝ կանոնագիտութիւն կամ եկեղեցական օրէնսգիտութիւն ալ աւելցաւ։ Այդ ուսուցչական աշխատութիւնները կատարեցի միշտ սիրայօժար յանձնառութեամբ, առանց որևէ փոխարինութեան։ Ուսուցչական զբաղումներս դադարեցան 1917 ապրիլ 12|25ին, երբոր գպրանոցի աշակերտները նոր օրէնքներու զօրութեամբ զինուորագրուիլ ու մեկնիլ պարտաւորուեցան։

Յրիւ նիւթերէն առայժմ այսչափը քաղելով կ'անցնիմ պատուիրակութեան յատուկ գործունէութիւնս բացատրել։

ՀԸ

Դանիսկոս, 1918 2|15 մարտ Ուրբ.

Կեդրոնական Վարչութեան մտադրութիւնն էր, որ Յակոբեան տեղապահ գործի գլուխ դարձուէր, զի Վեհապետեանի պաշտօնանկութենէն ետքն ալ՝ մահուամբը թափուր մնացած աթոռին տեղապահ հաստատուած էր, առանց միտք դարձնելու մահուան պարագաներէն ծագող միարանութեան ընտրողական իրաւունքին։ Ասով Յակոբեան նախապէս զինքը ընդունողներէն ալ սկսած էր իբր ապօրինի պաշտօնավարող մը նկատուիլ, և այս

տեսակէտը չեշտուած էր իւր անունին ընարելեաց եօթնանուն ցանկին մէջ չմտնելովը։ Արդէն խումբ մը զինքը բռնի վանքէն վտարած էր, և ինքն ալ անգործ Յոպպէ կը մնար, որ համակիր խումբէն ալ իբրև ապիկարութեան նշանակ կը նկատուէր, այնպէս որ վանքին մէջ ո՛չ այս և ո՛չ այն կողմէն անոր համակիր և պաշտպան մէկ մը չկար։ Ինչ ալ ըլլար Կեդրոնական Վարչութեան մտադրութիւնը, ես չէի կրնար զինքը միասին Յոպպէէ Երուսաղէմ բերել, և երբոր միատեղ գալու շարժումներու սկսաւ, հարկ սեպեցի ազդարարել որ համբերէ մինչև որ ես Երուսաղէմի մէջ կարևորը կարգադրեմ։ Զմոռնանք յիշել, որ եթէ ես իմ ձեռքով տեղապահութիւնը վերականգնէի, շատ ամփոփած պիտի ըլլայի իմ պատուիրակութեան գործունէութիւնը։

Երուսաղէմ հասնելով իրականութեան աւելի մօտէն հասու եղայ, որ Յակոբեանը տեղապահ ուզող մէկ մը չկար, և ես ընդհանուր կամքին վրայ բռնացած պիտի ըլլայի, եթէ Յակոբեանին պաշտպան կանգնէի։ Մինչև իսկ իմ ընդունելութեան առաւելագոյն չքեղութիւնն տրուած էր, երբ հեռագիրով լուր առած էին թէ Յակոբեանը միասին չեմ բերեր։ Յակոբեան գրեթէ հանապազօրեայ թղթակցութեան սկսաւ իր իրաւունքները ինծի հաղորդելու, և պաշտօնագիրներու պատճէններով հասատտելու, որոց միշտ յետաձգման դրութեամբ պատասխանեցի, թէ տակաւին պէտք եղած նախապատրաստութիւնները լրացած չեն, մինչև որ ինէ իրեն նպաստաւոր որոշում մը ունենալէն յոյսը կտրելով, Յոպպէէ մեկնեցաւ Կ. Պոլիս երթալ որ Կեդրոնին մէջ իւր իրաւունքը պաշտպանէ։ Բայց ես փութացի գործերուն իսկական վիճակը հաղորդել, և Կեդրոնն ալ հակառակ որոշումէ զգուշացաւ, քարոզչական պաշտօն տուաւ, թէպէտ տեղապահ կոչման կիրառութիւնը չդադրեցուց, մինչև որ նա Անդրիանուպոլսոյ կուսակալութենէն իբրև կասկածելի ամբաստանուեցաւ, և Բարձրդուռէն զայն պաշտօնի չգործածելու հրաման տրուեցաւ։ Այսպէս միանգամընդմիշտ տեղապահութեան խնդիրը փակուեցաւ։

Երբոր Կ. Պոլիսէ կուգայի, Արդարութեան և Կրօնից և Ներքին Գործոց Նախարարներէն պաշտօնագիրներ ունէի Երուսաղէմի կառավարչութեան ուղղուած, որոնց մէջ ըսուած էր թէ Երուսաղէմի հայ պատրիարքութեան գործերը պիտի հոգայ ու վարէ։ Այս գիրերը բաւեցին որ կառավարութիւնը, որ վերա-

պահութեամբ Ահէմեան Սարգիս վարդապետի դիմումները կ'ընդունէր, այլևս ունկնդրութիւնը դադրեցնէ, և ինծի հարկ ըլլայ յարաբերութիւնները ձեռք առնել։ Սակայն տակաւին ներքինին մէջ փոփոխութիւն մուծանել չուզեցի, մինչև որ Ահէմեան, որ նտուկներուն միջադէպին ատենէն վանքէ հեռանալ մտադրած էր, օդափոխութեան պէտք ունենալը պնդեց և յամառեցաւ, և վերջապէս ստիպուեցայ մեկնիլը արտօնել 1914 յուլիսի մէջ։ Այսպէս փոխանորդութիւնն ալ վերջացաւ, և գործոց բնական ընթացքով լիազօր պատուիրակութիւնը ներքին վարչութեան փոխուեցաւ առանց անունը փոխելու, և ինծի անցան բոլոր մեծաւորական գործունէութեան պատկանեալները՝ Տնօրէն ժողովոյ նախագահութիւն, կառավարական յարաբերութիւն, պաշտօնագիրներու ստորագրութիւն, պատահական խնդիրներու լուծում, առօրեայ կարգադրութեանց հրամանատուութիւն, ժամարարներու ժամուցներու բաշխում, հաշիւներու վերահսկողութիւն. արդէն եկեղեցւոյ մէջ ձախակողմեան դասը առանց պատուանդանի աթոռը առջի օրէն զետեղուած էր։ Միայն չուզեցի նոր կամ նորոգեալ պարտամուրհակները ստորագրել, ապագային խնդիրի նիւթ տուած չըլլալու համար, և Տնօրէն ժողովով այդ ստորագրութեան իրաւունքը լուսարարապետ Դաւիթ Տէրտէրեանի տրուեցաւ, որ իբրև փոխ-նախագահ ճանչցուած էր։

Իբր Երուսաղէմի վարիչ պաշտօն վարելս երկու տարի տևեց 1914 օգոստոսի սկիզբէն մինչև 1916 օգոստոսի սկիզբը։

ՀԹ

Դամասկոս, 1918 մարտ 2/15 Ուր.

Որևէ գործի մէջ կատարեալ գիտակցութեամբ յառաջելու պայմանն է՝ ամէն պարագայից մօտէն և լիագոյն և վստահելի տեղեկութիւններ ունենալ. և որովհետև Երուսաղէմի մեծ խընդիրը հաշուական էր, նախևառաջ ուզեցի անոր վրայ աշխատիլ, և ստոյգ տեղեկութիւններ քաղել, և քաղածներս գիրի առնուլ

Պարտքի խնդիրը առաջին էր, և պէտք էր գիտնալ անոր սկզբնաւորութիւնը, շարունակական աճումը, ոճման պատճառները, և պարտատէրներուն ո՛վ և ո՛ւր ըլլալը։ Այս նպատակին համար հին հաշուետոմարները գիւաններէն հանեցի, քաղուածներ կազմեցի, տարեկան փոփոխութիւնները ճշդեցի, ինծի օգնական ունենալով ելևմտից տեսուչ Գայրգճեան վարդապետը, և համարակալ Սողոմոն Գրիգորեանը։ Այդ զննութեանց արդիւնքն եղաւ որ Աղեքսանդրիոյ ծանօթ գետինին վաճառումին վրայ, ինչ ալ ըլլային վաճառումին մասին դիտողութիւնները, 1900 ապրիլին վերջը, Աթոռին ելևմտական ամավերջին, հաշուեփակը առանց պարտքի գոցուած էր, և նոր պարտքը գոյացած էր 1900 մայիսէն սկսելով։ Այդ 1900էն 1905 հինգ տարիներու մէջ Մագսուտեան Ղևոնդ վարդապետի տեսչութեան ներքև գոյացած պարտքը 1905 ապրիլի հաշուեփակին եղած էր 23,000 ռսկի։ Այդ հաշուեփակէն մինչև 1914 ապրիլի վերջ հաշուելի բաղադրեալ տոկոսը 4 առ 100 սակով ալ 10,000 ռսկւոյ կը մօտենար, որով Մագսուտեանի տնտեսութեան վրայ ծանրացող պարտքը կ'ըլլար 33,000։ Իսկ 1914 ապրիլի հաշուեփակը 38,000 ռսկւոյ պարտք կը ցուցնէր, Մագսուտեանի տեսչութեան հետեւող ինը տարիներու մէջ բարդուած պարտքը կ'ըլլար միայն 5000, որ համեմատաբար շատ թեթև գումար մը կը կազմէ նախընթաց հինգ տարիներու վրայ հաշուելիք պարտքին համեմատութեամբ, և ինքնին կը հերքուի Մագսուտեանի կողմէ իր տեսչութենէ ետքը գոյացած պարտքերուն մասին ձայնարկուած աղաղակները։ Այդ եզրակացութիւնը ցուցուած է մանրամասնօրէն կազմուած ցուցակներով և բացատրութիւններով, որոնք Հաշուական Տեղեկագիրին առաջին մասը կը կազմեն։

Վանքին ընդհանուր հաշիւներն ալ ուզեցի քաղել, այն օրէն սկսելով որ վերջին անգամ Երեսփոխանութենէ վաւերացուած են, բովանդակ քսանեմէկ տարիներու հաշիւներ, որոնք կը կազմեն Երուսաղէմի հաշուական համարատուութիւնը, և որուն մէջ տարիէ տարի կը տեսնուին մանրամասնեալ հաշուեցուցակները, բաղդատական տեսութիւնները ու բացատրական տեղեկութիւնները։ Այդ ընդարձակ Տեղեկագիրը մաքուր ընդօրինակութեամբ և բազմապրութեամբ կարևոր տեղեր հաղորդուեցաւ, բայց շինութեանց և նորոգութեանց, վաճառումանց և գնմանց

գործողութիւնները, որոնք Մագուտեանի տնտեսագիտութեան գաղանիքները կը կազմեն, հաշուետոմարներու մէջ չկային և Տեղեկագիրին մաս չկրցան կազմել։ Այս աշխատութեամբ ոչ միայն ես կրցայ ներքին համոզում և լիակատար գիտակցութիւն կազմել, այլ թերի մնացած պաշտօնական գործողութիւն մը լրացուցած եղայ, եւ հետաքրքիրներուն ճարակ և յագուրդ մատակարարեցի։

Կարգը հասած էր նոր Կանոնագիրին մասին կարծիքս համարձակութեամբ յայտնելու, և այս նպատակով գրեցի Դիտողագիրը, որուն մէջ խիստ քննադատութեամբ միառմի յառաջ բերած եմ անոր պարունակած անտեղութիւնները և ազգային կեանքին վնասները և տիրող օրէնքներու հետ հակասութիւնները։ Իբրև նախաբան յիշուած ընդհանուր տեսութիւններէ ետքը, բացատրաբար յառաջ բերուած են Երուսաղէմի Աթոռին դիրքը, Ազգային Սահմանադրութեան սկզբունքները, Ուլնեցի Կաթողիկոսին հռչակած և Հաննայի կոչուած նզովքները, և զանազան խնդիրներու առթիւ տեղի ունեցած որոշումները։ Անցած եմ քաղել նոր Կանոնագիրին բարոյական և նիւթական վնասները և երևակայուած օգուտները իրականացնելու անբաւականութիւնը, ակնարկուած են միտքերը վրդովող եղելութեանց իսկական պատճառները, փակած եմ անձիս նկատմամբ խօսուած կէտերուն լուսաբանութեամբը։ Դիտողագիրը տպագրուեցաւ քառածալ երկիջեան 24 երեսներով, և ցրուեցաւ բոլոր միաբաններու, Կեդրոնի պաշտօնական անձերու, երեսփոխաններու և առաջնորդներու, խմբագիրներու և ազգային խնդիրներով զբաղողներու, ամէն կողմերէ գնահատուեցաւ և իւր արդիւնքն ալ ունեցաւ, զի նոր Կանոնագիրը այլևս մոռացութեան մէջ թաղուեցաւ։

Միշտ Երուսաղէմը իւր իսկութեան և կարևորութեան մէջ ազգին ծանօթացնելու համար ձեռնարկեցի Հայկական Երուսաղէմի Նկարագիրը պատրաստել, պէտք եղած ծանօթութիւններով ճոխացած։ Աւարտած եմ Ս. Յակոբեանց մայրավանքը և մայր եկեղեցին, իրեն յարակից եկեղեցիներով և շինութիւններով և տիրող սովորութիւններով։ Մտադիր էի սեպհական և ընկերովի Սրբավայրերն ալ նկարագրել, կալուածներն ու ստացուածները պատկերացնել, հանգէսներն ու յարաբերութիւնները բացատրել,

սակայն ուրիշ զբաղումներ վրայ հասան և խափանուեցայ։ Եթէ գործը այդ մասերով լրացած և պատկերազարդ տպագրուի, ուխտաւորներուն ձեռքը օգտակար ուղեցոյց և հեռաւորներուն ձեռքը յաջեցուցիչ տեղեկատու մը կրնայ ըլլալ, և Երուսաղէմի վրայ վարկպարագի դատաստաններ չընելու և ազգային շահին հակառակ միտքեր չունենալու կը ծառայէ։

Ձեռնարկեցի Կնճիռ մըն ալ գրել Ղևոնդական կնճիռը ու Մագուտեանի դերը լիովին լուսաբանելու համար, սակայն երբոր հաշուական բաղդատութիւններու մտայ, զգացի որ առանց վաւերական աղբիւրներ ունենալու վճռական բան մը անհնար պիտի ըլլար ըսել, և գրութիւնը կիսկատար թողուցի։

Այդ գրութիւնները կրաւեցին Երուսաղէմ հասնելէս ետքը սահող առաջին ամիսները, որոնք բոլորովին պատուիրակութեան պաշտօնիս հետ կապուած էին, եւ նպատակին անհրաժեշտ էին։ Յաջորդ 1915 տարւոյ սկիզբէն, և ճշդիւ յունուար 9|22էն ձեռնարկեցի Ազգապատում աշխատութիւնս լրացնել, որ մինչև 1808, կամ մինչև Դանիէլ Սուրմառեցի կաթողիկոսին մահը, գրուած և երկու հատորներով տպագրուած էր։ Նոր աշխատութիւնը սկսայ Եփրեմ Զորագեղցի կաթողիկոսով, և մինչև 1917 հոկտեմբեր աշխատեցայ, ուրիշ զբաղումները չյեռաձգելու պայմանով, և երկասիրութիւնս հասցուցած եմ մինչև Մատթէոս Իզմիրլեան կաթողիկոսին օծումը 1909ին։ Վերջերս պարտաւորուելով Երուսաղէմէ մեկնիլ և այլևս գիր ու գիրք, յիշատակագիր ու վաւերագիր չունենալով ձեռքիս տակ, շարունակութիւնը թողած եմ բարեպատեհ ժամանակին, եթէ կեանքի օրեր և ոյժ և գրութեան միջոց և ուշ ունենամ։

Առայժմ Դամասկոսի պանդխտութեան կամ տարագրութեան մէջ, յիշողութենէ զատ տրամադրելի աղբիւր չունենալով, 1917 նոյեմբեր 22|5 դեկտեմբերէն իվեր, իբրև ժամանցի զբաղում սկսած եմ սոյն կենսագրական Խոհ ու Խօսքեր գրել։

2

Դարեւսկոս, 1918 մարս 2/15 Ուր.

Երուսաղէմի պաշտօնավարութեանս միջոցը թէպէտ երկու տարի երկարեցաւ, բայց պէտք է խոստովանիմ՝ թէ ո՛չ պահանջուածին և ո՛չ փափաքածիս չափ արդիւնաւոր չեն եղած։ Շատ գեղեցիկ ծրագիրներով և շատ ընդարձակ միտքերով ճանապարհ ելած էի Կ. Պոլիսէ. տիրող խնդիրները վերջացնել, հաշուական կացութիւնը բացատրել, համերաշխութիւն գոյացնել, միաբանութիւնը ոգեւորել, վանական հոգին վառել, բարեկարգութիւնները լրացնել, վարժարանը բարձրացնել, և տիպար վանքի մը պահանջած պայմանները լրացնելով՝ արժանաւոր գլուխի մը յանձնել։ Այս նպատակին համար պէտք էր Կեդրոնէն կատարեալ զօրութիւն ու պաշտպանութիւն ունենալ, և ազգէն նիւթական միջոցներու առատութիւն ձեռք ձգել։ Թէպէտ Կեդրոնէն կատարեալ զօրութեամբ օժտուած չէի, բայց մեծ յոյս ունէի հետզհետէ ընդարձակել և աւելցնել, մանաւանդ եթէ չօշափելի բարւոքումներ տեսնուիլ սկսէին։ Իսկ նիւթականին համար բարեսէր ու բարեպաշտ, բարեգործ և բարերար անձանց անունները կ'որոճայի, մանաւանդ մեծ յոյս դրեր էի ռուսահայոց և գաղթահայոց ունեւորներուն վրայ, որոց մէջ վստահութիւն և համակրութիւն վայելելու նշաններն ունէի։ Այն երեք ամիսներու մէջ, որ 1914 մայիսի սկիզբէն մինչև օգոստոսի սկիզբը անցան, հազիւ թէ հնար էր տեղը ճանչնալ, պարագաները ուսումնասիրել, տեղեկութիւն հաւաքել, և գիտակցութիւն կազմել, հարթելով նաև Ամէմեան, Յակոբեան և Թէքէեան միջադէպները, զորս վերև բացատրեցի, և որք անհրաժեշտաբար ժամանակի կորուստ պատճառեցին։

Հազիւ թէ նախապատրաստութիւնները վերջացուցած կը կարծէի, և ահա՛ 1914 օգոստոսին պատերազմի առաջին ռումբը կ'արձակուէր Եւրոպիոյ մէջ և երկու կողմերու գաշնակիցներ և բարեկամներ, մէկը միւսին ետևէն, պատերազմիկ պետութեանց

թիւերը կը ստուարացնէին։ Սեպտեմբերի մէջ օսմանեան կայսրը ութիւننալ իւր մասնակցութիւնը կը յայտարարէր, և բոլոր Եւրոպա ամբողջաբար պատերազմի դուշտ կ'ելլար, և պատերազմին համեւրոպական կերպարանը չճշդուած համաշխարհական կը դառնար։ Այսպէսով նախնական ծրագիրին հիմերը քարուքանդ կը տապալէին, պաշտօնական զօրութիւնը անհնարութեան կը մատնուէր, նիւթական զօրութեան ակերը ու խողովակները կը խցուէին, անձնական և անհատական գործունէութենէ, և սեղմ շրջափակին տկարացած ոյժերէն զատ առձեռն պատրաստ միջոց չէր մնար, գեղեցիկ ծրագիրները երազ կը դառնային։

Այդ բռնադատեալ կացութեան առջև հարկ կ'ելլար ինքն իր մէջ ամփոփուիլ, վանական կեանքին կանոնաւորութիւնը ապահովել, վարժարանին ընթացքը չխափանել, եկեղեցական պաշտամունքը թերի չթողուլ, Աթոռին դիրքը չվտանգել, ներքին համաձայնութիւնը պահպանել, միջադէպներ ստեղծողներուն ու գլուխ վերցնողներուն ասպարէզ չտալ։ Մանավեան Յարութիւն սարկաւագի անզեղջ խառնակութեանց և գրգռութեանց տարուբերեալ ձեռնարկները կարգալուծութեամբ և արտաքսմամբ վերջ գտան, չորս սարկաւագներու ըմբոստութիւնը ժամանակաւոր ուրարարկութեամբ դադրեցաւ, Զիլինկիրեան Եղիշէ եպիսկոպոսի գլխաւորութեամբ Երէցեան Հմայեակ և Սամուէլեան Սերովբէ վարդապետներու Ընդհանուր ժողովի և ընտրեալ Տնօրէնին համար կազմած շարժումը սաստով մը խափանուեցաւ, Զիլինկիրեանի կեդրոնին ուղղած բողոքը յանդիմանական պատասխանով վիժեցաւ, նոյնին վանական գործոց համար զինուորական և քաղաքական իշխանութեանց դիմելը պատշաճ ազդարարութեանց շնորհիւ արդիւնք չունեցաւ, վերջապէս կացութիւնը վրդովելու և միջադէպներ գրգռելու փորձերուն ասպարէզ չտրուեցաւ, և սովորական կեանքը շարունակեց և ասկէց աւելին ալ չէր կըրնար պահանջուիլ խանգարեալ և խաթարեալ պարագաներու բըռնակալ տիրապետութեան ներքև։

Ամենէն տկար կողմերնիս դրամական անձկութիւնն էր։ Վանական հասոյթը ուխտաւորական արդիւնքներէ և կալուածական վարձքերէ կը բաղկանայ. առաջինը իսպառ ցամքեցաւ, և երկրորդը անուանական դարձաւ, վարձակալներուն անկարողութեան կամ գործերնին դադրեցնելնուն պատճառաւ, և վը-

ճարդներուն ալ հետզհետէ արժէքը կորսնցնող թղթադրամով տալուն համար։ Գերագոյն և հզօրագոյն հարկին առջև փոխառութեանց լուծին ներքև մտնելէն զատ միջոց չմնաց, և ծանր տոկոսով փոխառութիւններ կնքել ստիպուեցանք, և ես ալ համակերպիլ պարտաւորուեցայ, միայն թէ զգուշացանք կալուած և ստացութիւն ձեռքէ հանելէ, և առառաւելն քիչ մը բան գըրաւի ենթարկելու հարկին հպատակեցանք։ Ասոր հետ մէկտեղ անունդը չհասուցինք այն խեղճութեան, որուն հասուց ինծի յաջորդող իշխանութիւնը. եթէ ինչինչ ծախքեր յապաւեցինք՝ մեծ գրկանքներ չպատճառեցինք, ժամուցները մինչև վերջը հնչունդրամով տուի, հալածեալ և տարագիր ազգայիններու բաւականաչափ օգնեցինք, զինուորական պահանջքներու և գրաւումներու ալ ենթարկուեցանք. վերջապէս գիրքերնիս չատորնացուցինք։

Իմ վրաս խօսելով, քեռայրիս Միհրան Տէր-Ներսէսեանի 1914 հոկտեմբեր 25|7 նոյեմբերին վախճանելէն ետքը կառավարութենէ վճարուած հանպատեան թոշակը անոր որբերուն և քրոջս յատկացուցած էի, Երուսաղէմի պաշտօնը ստանձնելուս առթիւ որևէ ամսաթոշակէ և փոխարինութենէ հրաժարած էի, և նոյնիսկ ճանապարհածախսի համար ստացած գումարս պատրիարքարանի պահանջիս հաշուել յօժարած էի, Երուսաղէմի և պատրիարքարանի անտուկներուն բեռ չըլլալու համար, պատրիարքարանէ նոր առհաշիւներ ստանալու համար ալ դժուարութեանց կը հանդիպէի։ Սնունդիս համար Երուսաղէմի վանքին խոհանոցէն ուտառանէն կիսովի կ'օգտուէի, բայց ինէ ալ ծախսել պարտաւորէի, որ է ըսել թէ դիւրութեանց մէջ գտնուող մը չէի։ Արդէն ըսի թէ փոքրիկ խնայողութիւնս քեռայրիս և քեռորդիներուս փոխանցած էի, և քեռայրիս մահուամբ այն ալ թոզօնին խառնուած կը մնար, և չէր կրնար կարգադրուիլ մանչ զաւակին օտար և ոչ բարեկամ երկիր գտնուելովը, ինչ որ քեռայրիս եղբօր խաբկանքներուն պատճառանք կը դառնար։

Ահա՛ դարձեալ միջոց մը որ, անպաշտօն վիճակի ցամաքութեան կերպարանը կը զգենու, և նորութիւններու ու միջադէպներու պաշար չ'ընծայեր և կենսագրական յիշատակները չի ճոխացներ։ Երբ յուսալի էր բեղմնաւոր արտի մը հանդիպելով լան հունձք ունենալ, խոպան ու խոզանդ երկրի ամպաղութեան կը

հանդիպիմ, զի չէ թէ իղձն ու բաղձանքը, այլ գործն ու եղեալ լութիւնը կենսագիրներու նիւթ կը մատակարարեն։

ՁԱ.

Դամասկոս, 1918 մարտ 3|16 Շբ.

Ս. Յակոբեանց վանքի հիւրերուն համար լաւագոյն և յարմարագոյն յարկաբաժինը Յորենաթաղի վրայ եղող Կիրակոս պատրիարքէ շինուած յարկաբաժինն է, ուր բնակած են նաև Խրիմեան և Իզմիրլեան իրենց ակամայ ուխտաւորութեան միջոցին. նոյնը պատրաստուած էր ինծի համար։ Մայր տաճարի արևելակողմէն 17 ոտքով մեղմօրէն բարձրացող սանդուխ մը մեծ բակէն կը հանէր Յորենաթաղի բակը, որ Կալիվրայ ալ կը կոչուի, երբ աջ դառնալով դարձեալ 17 ոտքով ցից սանդուխ մը կը հանէ յիշուած յարկաբաժինը։ Միջավայրը սրահ մըն է երեք բաժինով, առաջին մուտքը ապակեփեղկով ալ զատուեցաւ, և հոն կը բացուին խոհանոցն ու արտաքնոցը. միջին մասին վրայ կը բացուին երկու սենեակներ, որոց մէկը ննջարան էր և միւսը հոգածու վարդապետին պահուած. երրորդ մասը երեք ոտք ևս բարձր է, և անոր վրայ կը բացուին զբաղմանց սենեակը և ճաշասրահը։ Ինչպէս կը տեսնուի՝ բաւական ընդարձակ և հանգիստ յարկաբաժին մըն է։ Զբաղմանց սենեակին մէջ ունէի երկու պարզ գրասեղաններ, մին պաշտօնական և անձնական գրութեանց և միւսը գրական աշխատութեանց յատկացեալ. կարասին ալ գոհացուցիչ էր։

Զիս հոգալու և խնամելու որոշած էին Սահակ վարդապետ Աստուածատուրեանը, ընիկ Կ. Պոլսեցի, Պէշիքթաշի թաղէն, առաջ Երուսաղէմի վանք եկած, յետոյ Էջմիածին փոխադրուած, Մայր Տաճարին լուսարար և Խրիմեան կաթողիկոսի փոքրաւոր եղած, և Էջմիածին ձեռնադրուած։ Խրիմեանի վախճանէն ետքը Մշոյ Ս. Կարապետը կ'երթայ, և դարձեալ Երուսաղէմ կուգայ իբրև հիւր. ընութեամբ հեզահամբոյր և աշխատութեամբ ան-

խոնջ, տնաշէն և տանտիկին անձ մը, տնական ամէն տեսակ աշխատութեանց գիտակ և վարժ, ու յետին ծառայութիւններէ իսկ չխորշող։ Ես որ տնական հոգածութեանց ո՛չ վարժութիւն ունէի և ո՛չ գիտակցութիւնը, անփոխարինելի բախտ մը ունեցայ այսպիսի ինամածուով մը, որ ինծի ընաւ հոգի ու ջանքի պէտք չթողուց, որչափ ատեն որ Երուսաղէմ մնացի։

Օրական աշխատութիւններս յայտնի եղան արդէն Երուսաղէմի պաշտօնավարութեանս մասին գրածներէս. ընդհանրապէս օրն ի բուն սենեակիս մէջ կը զբաղէի, պաշտօնական և ուսուցչական պաշտօններով պատրիարքարան ու վարժարան գացած ժամերէս զատ։ Այցելութեանց համար վանքի մէջ կը չրջէի որչափ որ պիտոյից ու պատշաճից պայմանները կը պահանջէին, իսկ երեկոյեան հանգիստի համար, ստէպ պատրիարքարանի լքեալ պարտէզը յարդարել տալով՝ հոն ատեն կ'անցունէի, և առաջին ամառը քաղաքին հետաքրքրական տեղերը տեսնելու կը չրջէի։ Միաբաններէն ամենուն հետ լաւ յարաբերութիւններ ունենալու հոգ կը տանէի, բայց աւելի մտերմօրէն մօտս յաճախողներն ու բանիմաց կերպով խօսակիցներն էին Դաւիթ Տէրտէրեան, Մատթէոս Գայրգճեան և Մեսրոպ Նշանեան վարդապետները, առաջին երկուքը արդէն յիշուած և ներկայացուած գրութեանս մէջ, իսկ երրորդը վարժարանի ու տպարանի ու թանգարանի տեսուչ, և վանականներուն ամենէն ուսումնականը։

Եկեղեցական պաշտամանց անպակաս էի առտու և երեկոյ կանուխ երթալու և չվերջացած չելլալու պայմանով։ Որովհետև վանքին մէջ Զիլլինկիրեանէ զատ եպիսկոպոս չկար, և նա ալ առանց փոխարինութեան աշխատանքներու հետամուտ չէր, գրեթէ հաստատուն հանդիսապետն կ'ըլլայի նախատօնակներու և ատեաններու, թափօրներու և գնացքներու, որոնք Երուսաղէմի մէջ յաճախ ու երկար են, և իրաւունքի պարագաներ պարունակելնուն՝ անտնօրինելի պարտաւորիչ են։ Պատարագի մատուցմանց համար գլխաւոր Սրբավայրերու չրջանը լրացնել ջանացի, իսկ անկէ զուրս միայն բացառիկ պարագաներուն յանձնառու կ'ըլլայի, եպիսկոպոսական պատարագներու մի մասը թագադիր վարդապետներու յատկացնելով։

Կերակուրի կողմէ ստամոքսիս մարսողականութիւնը նուազած ըլլալուն, պարտանոր էի թեթև ուտելիքներով և չափաւոր

քանակներով մնանիլ. սուրճէ ալ կտրուած ըլլալով, ծխախոտն ալ արդէն բնաւ գործածած չըլլալով, թէյն էր իմ նախասիրածը և գործածածը. առաւօտեան նախաճաշս և երեկնադէմին նախընթրիքս սրճախառն կաթ էր, ճաշին և ընթրիքին չափաւոր կ'ուտէի, ապուր մը, կերակուր մը, և աղանդեր կամ միրգ մը։ Կը սիրէի մերթընդմերթ սեղանակից ունենալ գլխաւոր միաբանները, ուստի տարեդարձներու և անուանակոչութիւններու առիթներ կը կազմէի։ Նոր հասնելուս մէկ մէկ անգամ բոլոր վեղարաւորները ճաշի հրաւիրեցի, մերձաւորութեան առաջին քայլը առած ըլլալու համար, իսկ անկէ ետքը բնական էր որ աւելի մօտէն վարուողին ես ալ աւելի մօտիկ ըլլայի։

Պաշտօնական թղթակցութիւններս ես ինքնին կը գրէի, ի բաց առեալ Տնօրէնին որոշմամբ միաբանական չրջանակին մէջ հաղորդուելիքները, զորս կը հոգար դիւանապետ վարդապետը, որուն օգնական տրուեցաւ Յակոբեան տեղապահին գրագիրը՝ Աշոտ Նշանեան, որ տրամադրելի մնաց Յակոբեանի Կ. Պոլիս մեկնելէն ետքը։ Տաճկերէնի քարտուղարութիւնը կը վարէր Սողոմոն Գրիգորեան համարակալը, իսկ գաղղիերէն ու իտալերէն գրուելիքները ինծի կը մնային։

Երուսաղէմի օդին հետ չատ հաշտ ապրեցայ, և հիւանդութիւն ըսուելու արժանի տկարութիւն չունեցայ։ Զբաղումներս ալ չափով ու կանոնով և միատեսակ չարունակութեամբ կատարելս օգնած է առողջութիւնս պահպանելու։

Բնակած յարկաբաժինս փոխել պարտաւորուեցայ երբոր Կիլիկիոյ կաթողիկոս Սահակ Խապայեան՝ Սիսի վանքէն տարագրուելէն և միջոց մը աստ և անդ թափառելէն ետքը՝ Սիւրիոյ ընդհանուր հրամանատար և ծովակալ նախարար Ահմէտ Ճէմալ բաշայէ արտօնուեցաւ Երուսաղէմի վանքը բնակիլ, և անակընկալ հասաւ 1915 հոկտեմբեր 31|13 նոյեմբերի գիշերը։ Պարտք ու պատշաճ էր իրեն յարմար և ազատ յարկաբաժին մը յատկացնել, և որովհետև իմ բնակածէս յարմարագոյնը չկար, որոշեցի զայն յանձնել։ Ինծի համար Ս. Մինաս կոչուած պատրիարքարանի արտաքին թաղին մէջ ծուռ սանդուխի սենեակները յարկաբաժինի վերածուեցան, սանդուխին գլուխը զոցուելով խոհանոց եղաւ, գլխաւոր սենեակին դուռը ներսի կողմը բացուեցաւ, Ս. Մինասի սենեակներէն մին իբրև ննջարան աւել-

ցուեցաւ, ընդհանուր արտաքնոցներէ մին ալ զատուեցաւ, և Ս. Մինասի թաղին վրայ գոհացուցիչ յարկաբաժին մը կազմելով նոյեմբեր 22|5 դեկտեմբերին հոն փոխադրուեցայ, և Կիրակոսեան յարկաբաժինը յանձնեցի Խապայեանի, իր հետևորդ Մխիթարեան Գիւտ եպիսկոպոսին հետ։

Երուսաղէմի մէջ անձնական տեսակէտէ անցուցած կեանքին վրայ ալ գաղափար մը տուած ըլլալու համար այսչափը բաւական կը սեպեմ։ Այս միջոցը կը սկսի 1914 մայիսին և կը տևէ մինչև 1916 օգոստոսը, երբ կազմակերպական փոփոխութիւն մը զիս ալ պարտաւորեց իմ կեանքս փոփոխելու։

ՁԲ

Դամասկոս, 1918 մարտ 3|16 Շբ.

Փոփոխութեանց նշանակութիւնը լաւ ճշդելու համար պէտք է անոնց պատճառին բարձրանալ, ինչ որ զիս կը ստիպէ ազգային տագնապին վրայ խօսիլ։ Որչափ ալ նիւթը փափուկ, ակնածութիւնները շատ, ստոյգ տեղեկութիւնները քննելի, և վաւերագիրներ անգոյ ըլլալուն, շատ աւելի հաճելի էր այդ պատճառները չպրպտել, և ազգային տագնապին վրայէն լռութեամբ անցնիլ, սակայն գրուածի մը կապակցութիւնը այնպիսի անտրնօրինելի հարկ մըն է, որ բռնադատիչ կօրութիւն կը կազմէ և յակամայից հպատակելու անհրաժեշտութիւնը կը ստեղծէ։ Ուստի այդ նիւթին ալ մտնենք այնչափ, որչափ հարկը կը պահանջէ, որչափ թերի տեղեկութիւնները կը ներկայեն, որչափ վերջ չգտած եղելութիւններ կը ներեն։

Համաշխարհական պատերազմին բերմամբ նորէն իրարու դէմ կը գտնուէին ռուսն ու թուրքը, հինաւուրց ոսոխներ, և հնար չէր որ պատերազմի մէկ ճիւղն ալ չբացուէր ռուսութուրք ասիական սահմանագլուխին վրայ։ Շարժումը տեղի պիտի ունենար հայաբնակ, կամ՝ բուն բառը գործածելով՝ Հայաստան հողին վրայ, և ռուսական յարձակողականը չէր կրնար յօգուտ

չգործածել տեղական հայ տարրին օժանդակութիւնը. ուստի ռուսական կառավարութեան հովանաւորութեամբ կը պատրաստուին ռուսական բանակին մարտակից ըլլալու սահմանուած խումբեր։ Խումբ մը կը կազմուի տաճկահայ փախստականներէ և գաղթականներէ, որոնց սիրտին մէջ անջինջ կը մնար անցեալ կոտորածներուն և աւերածներուն տխուր տպաւորութիւնը, իրենց սիրելիներուն մահը և իրենց ստացութիւններուն կորուստը։ Խումբ մըն ալ կը կազմուի կովկասահայ կամաւորներէ, որոնք կէս մը ազգային եռանդեամբ և կէս մը պետական դրդմամբ իրենց համարիւն եղբարց բարօրութեան երևակայութիւններով կ'օրօրուէին։ Խումբ մըն ալ կը կազմուի ռուսական կանոնաւոր զինուորութեան մէջ գտնուող հայերէ, զորս եթէ զինուորական սովորութիւնը առաջ հեռու երկիրներ կը ցրուէր, այսօր իրենց տեղը կը հաւաքէր, գիտնալով որ կրկին եռանդով կրկնապատիկ ոյժ մը կրնան արտադրել։ Ռազմական շարժումին առաջին ասպարէզ կ'ընտրուի Վանայ նահանգը, ռուսական բանակին առջևէն և ետևէն կը քալեն օժանդակ խումբերը։ Յարձակողը հարկաւ ո՛չ խնամելու կուգայ և ո՛չ փայփայելու, մանաւանդ երբոր վրիժառու զգացումը խռհական մտածումին վրայ կը զօրանայ։ Ընդունինք ալ որ հայ կամաւորը, ռուսին պատրաստածը, քիչ մը աւելի յառաջացած ըլլայ, բայց չկրնար հաստատուիլ թէ այժմեան քաշածը անցեալին քաշածէն աւելի ըլլայ, զի ստուգիւ ըրածը կրածէն աւելի չէ եղած։

Այս ասանկ ըլլալով մէկտեղ, Թուրքիոյ ազատ կառավարութիւնը, որ իւր ազատութիւնը հայ տարրին ռահահորդութեամբ և օժանդակութեամբ ձեռք ձգած էր, անօրինակ քէնի ու վրէժի խստութեան կը յորդորուի։ Կրնար թերեւս արդարանալ գործ մը որ կիրքի յուզմամբ նոյն տեղւոյն վրայ նոյնհետայն կը կատարուի, թերևս եւ այն՝ որուն գէշ աղէկ ու աւելի պակաս օրինականութեան ձև կը տրուի, թէև վկայութիւնը ստուգ և դատաստանը անարդար ըլլայ։ Բայց երբ այդ պարագաներն ալ պակսին, շատ դժուար կ'ըլլայ ջատագովութեան ձեռնարկողին վիճակը, երբոր կ'ուզէ անօրինակ գործեր պատերազմական պահանջներու փաստով արդարացնել։ Մանրամասնութեանց մտնել չեմ ուզեր, ամէն զբրուցուածի հաւատք ընծայելու ալ դիւրամէտ չեմ, բայց երբ

զանազան կողմերէ նոյն բաները կը կրկնուին, և երբ գործերուն հետքերն ու հետևանքները տարածուելով և ընդարձակուելով մինչև աչքի մօտ կը հասնին, դիւրին չ'ըլլար եղածը երկբայութեան քողով ծածկել կամ գործուածը հերքման պատրուակով անտեսել։ Չեմ կրնար մեկնել որ Վանայ եղելութեան վրէժը Պրուսայէն կամ Նիկոմիդիայէն առնուի։ Չեմ կրնար համոզուիլ որ ծեր ու տղայ, կին ու պառաւ հաւասարապէս պատուհասակոծ ըլլալու ենթարկուին։ Չեմ կրնար հասկնալ որ յանկարծօրէն ամբողջ ժողովուրդներ տարագրութեան հանուին, կիներ ու այրեր իրարմէ զատուին, և այրեր անծանօթ վայրերու և անկոխ ձորերու մէջ անհետանան։ Չեմ կրնար բացատրել որ մանկամարդ կիներ, նորահաս աղջիկներ և անտիական տղաներ կանանոցներու աւարաբաժին տրուին։ Չեմ կրնար մտածել որ եկեղեցիներ քանդուին, վանքեր կործանուին, պաշտամունք արգիլուին, կրօնք անարգուի, կրօնափոխութիւն հրամայուի, նոյնիսկ ազատական օրէնքներու տիրապետութեան ներքև։ Չեմ կրնար միաքս սեղմեցնել որ անաւաղութիւնը իբրև միջոց գործածուի տարը մը ջնջելու։

Հայուն անջատողական գաղափար վերագրել սեթևեթեալ պատճառանք եղաւ, զի Հայուն բախտին իսկական դարման չէր և հնարաւորութեան հիմ չունէր և մտաբերեն ալ անիմաստ էր, և երբեք սկզբնական չեղաւ, ուրեք երբեք ծայրայեղ միտքերու մէջ ծագեցաւ. դժխեմ արարքին դժպհի հակատուրքն էր։ ծովը ինկողը օձին ալ կը փաթթուի, կ'ըսէ առածը։ Ո՛վ որ դիտում ունեցաւ հայ տարրը ջնջել, պէտք էր մտածէր որ ազգ մը երկրի երեսէն ջնջել հնար չէ, մանաւանդ երբ նա աշխարհիս ամէն կողմ ցրուած ու տարածուած է, երբ ուրիշ տեղեր կարող և կարևոր կեդրոններ ունի, երբ բազմադարեան փորձառութեամբ փորձանաց դէմ տոկալու փորձը տուած է։ Հայը Թուրքիոյ անհրաժեշտ տարրն է, Թուրքիոյ վեհապետները իրենց նախաձեռնութեամբ Հայերը իրենց մականին ներքև հաւաքեցին և զօրացուցին։ Թուրքիոյ գաւառները շէնցնողը, հողը մշակողը, արհեստներուն հետևողը, առևտուրը ապահովողը հայն է եղած և հայն է տակաւին։ Հայը Թուրքիայէն պակսեցնողը Թուրքիոյ ոխերիմ թշնամին եղած կ'ըլլայ։ Թուրքիա իւր իսկ ինքնութիւնը կը վտանգէ, երբ հայը կը ջնջէ։ Բարձր տեղեր ըսած եմ, այս

առթիւ ալ կը կրկնեմ. Թուրքիոյ կայսերութեան շինուածին քարը Թուրքն է, շաղախը հայն է. առանց շաղախի շէնքեր չեն ամրանար, չեն բարձրանար։

Ահա՛ խորին համոզումներուս անկեղծ խոստովանութիւնը։ Այլ յայլմէ կ'ըլլամ երբոր այնպիսի եղելութիւններ կը լսեմ որ ոչ տրամաբանութիւնը կ'ընդունի և ոչ հոգեբանութիւնը կը մեկնէ։ Կը կարծեմ որ հայուն դէմ ձեռք առնուած դժնեայ ձեռնարկները ո՛չ բարձրացուցին և ո՛չ ապահովեցին ձեռնարկողներուն դիտումները, և հետևութիւնը անդրագոյն ևս մղեցին քան որչափ ինչ կրնար ենթադրուիլ ձեռնարկներէն առաջ։ Այսօր եթէ Թուրքիոյ հայաբնակութիւնը կիսուեցաւ ալ, մնացորդ կէսը աւելի մտադրութիւն գրաւեց և աւելի կարևորութիւն ստացաւ, քան որչափ ինչ ունէր ամբողջ դժնդակ ձեռնարկներէն առաջ։

Ազգային ապագային գաղափարը տալ էր նպատակս, մանրամասնութեանց մանել չէի սիրեր, հետևաբար խորհրդածութիւններուս ալ վերջ կուտամ. և որովհետև խօսքը Երուսաղէմէն բացուեցաւ, դարձեալ Երուսաղէմ կը դառնամ։ Խապայեան Սահակ կաթողիկոս, որ Թուրքիոյ հաւատարիմ ըլլալու կերպարանը կը վայելէր, և իբրև թէ Թուրքիոյ վարիչներէն գնահատուած ու սիրուած էր, մեծագոյն հարուածը ինքը կրեց, իւր Աթոռէն տարագրուեցաւ, ստացութիւններէն զրկուեցաւ, գիրերն ու գրութիւններն գրաւուեցան, կալուածները օտարացան, աստանդական թափառեցաւ և մինչև իսկ յեռանեալ գիւղ մը աքսորական զրկուեցաւ։ Աքսորավայրը փոխուեցաւ իրաւ, երբ Երուսաղէմի վանքին բնակութիւնը իբր շնորհ պարգևուեցաւ, նիւթապէս դիւրութիւն ընծայուեցաւ, այլ բարոյապէս կացութիւնը աւելի ծանրացաւ։ Շնորհուած նիւթական դիւրութիւնը ոչ օրինական սկզբունքէ կուգար, այլ Ահմէտ Ճէմալ բաշայի անձնական ծանօթութենէն կը բղխէր, և որ իւր Ատանայի կուսակալութեան օրէն ճանչցած էր Խապայեանը և ամէն պարագայի հանդէպ հլու հպատակութեան պատրաստականութիւնը հասկցած, և որևէ կարգադրութեան մը կամակատար գործիք ըլլալուն համոզուած։

27

Դարեւսկոս · 1918 մարտ 3/18 Շբ.

Հայութեան դէմ հալածանք բացողը բաւական չսեպեց հայ անհատներու կեանքին ու ինչքերուն, հայ Եկեղեցւոյ պաշտամանց ու հաստատութեանց, հայ կրօնքին ինքնութեան ու պահանջին դէմ ուղղել իւր փքիններըը, և նոյնիսկ պետական սկզբունքով, նախնական ուանդութեամբ և կայսերական հրովարտակով ճանչցուած ու հաստատուած հայութիւնը ուզեց իւր կազմէն կրկել, և անոր նոր կազմակերպութիւն մը տալ, որով իւր կարեւորութիւնը կորսնցնէ, և, եթէ հնար ըլլար, գոյութիւնն իսկ վտանգէ։ Այդ նպատակով կազմուած է Հայոց Կաթողիկոսութեան եւ Պատրիարքութեան Կանոնագիրը, որ 1916 յուլիս 19/1 օգոստոս թուականը կը կրէ, և կայսեր ու բոլոր նախարարներու ստորագրութեամբ վաւերացած է, և ո՛չ ալ, ինչպէս ուրիշ կարգադրութեանց համար սովորութիւն էր, առժամեայ ըլլալը յիշուած է, ո՛չ ալ սահմանադրական ձեւով խորհրդարաններուն հաստատութեան վերապահուած է, այլ մէկ անգամէն իրրեւ անփոփոխելի օրէնք հռչակուած է, որով 1863ի Ազգային Սահմանադրութիւնը պարզապէս կը ջնջուի (յօդ. 37), և ոչ թէ բարեփոխութեան կամ վերաքննութեան կ'ենթարկուի, այլ իրր նորինորոյ մարմին մը կամ հասարակութիւն մը կազմուի։

Հիմնական կէտ եղած է Տաճկահայերը Էջմիածնի Մայր Աթոռէն բաժնելը, որով կասկ ու յարաբերութիւնները քորոմոլին կը կտրուին (յօդ. 1), իրրեւ թէ եկեղեցիներու նուիրապետական կարգերը և առաքելական օրէնքները քաղաքական իշխանութենէ կազմուած ըլլային, որ անոր կամքովն ալ փոփոխուէին։ Հայերը Մայր Աթոռէ բաժնել նոյն է ինչ որ է կաթոլիկները Հռոմէն բաժնելը. և ինչպէս այս, այն ալ օրինաւորապէս չէր կրնար հրամայուիլ։ Ուրիշ բան էր եթէ պատերազմի միջոցին յարաբերութիւնները ընդհատուէին, քանի որ թշնամի տէրու-

թեանց սահմանագլուխները իրարու դէմ փակուած կը մնան և յարաբերութիւններ չեն ըլլար, նոյնիսկ անհատական նամակներով։

Գլխաւոր կարգադրութիւններէն մէկն ալ Կիլիկիոյ, Աղթամարի, Երուսաղէմի և Կ. Պոլսոյ աթոռները միացնելն և մէկի ձուլելն է։ Աթոռներու գոյութիւնն ու ծագումը ու կեանքը եկեղեցական օրէնքներով եղած է, և եկեղեցական օրէնքներով միայն կրնայ փոփոխուիլ. հոգևորական իրաւասութիւնը ո՛չ քաղաքական իշխանութենէ կը բղխի, և ո՛չ քաղաքական իշխանութիւնը կրնայ տալ. տուած ալ չէ որ ետ առնէ։ Հետևաբար քաղաքական իշխանութեան ոտնձգութիւնը իրաւական և օրինական սկզբունքներու հակառակ է։ Քաղաքական իշխանութեան եկեղեցւոյ գործերուն միջամտութիւնը որոշ գիծերով սահմանափակուած է արտաքին հետևանքներու մէջ. անձերը ճանչնալ, իրաւասութիւններն ապահովել, գործածուած միջոցները ճշդել, և իւր դերը պաշտպանել։ Երբոր հոգևորականին և իրաւասականին և նուիրապետականին միջամտել ձգտի, իւր սահմանէն անդին անցած կ'ըլլայ, և այդ քայլին հետևանքները վրան կը հրաւիրէ։ Զոյս աթոռներու ձուլուելէն և Մայր Աթոռոյ իրաւասութիւնը ջնջելէն ետքը, այս ամէն իշխանութիւնը իւր վրայ կեդրոնացընող անձին կեդրոնը Երուսաղէմի Ս. Յակոբեանց վանքին մէջ կը ղրուի, և հայութեան կեդրոնը պետական կեդրոնէն հեռացընելով անոր կարևորութիւնը նուազել կը խորհուի, հայն ալ արևելեան փոքր ազգութեանց նման գաւառացի և գաւառանման հասարակութիւն մը դարձնելով։ Բայց քանի որ յոյնէն և հրեայէն զատ՝ հայ-կաթոլիկ և հայ-բողոքական հասարակութեանց կեդրոններն ալ մայրաքաղաքին մէջ կը պահուին, հայադաւանը հայը, որ հայութեան գրեթէ ամբողջութիւնն է և մայրաքաղաքին մէջ ալ կարևոր տարր կը կազմէ, պէտք էր որ իւր կեդրոնը արթուն քաղաքականութիւն ունենար ոչքին առաջ, որ կարենար մօտէն հսկել, եւ ոչ թէ այդ ամենակարեւոր գործը պարզ կառավարիչի մը ձեռքը թողուէր։

Վերոյիշեալ կէտերէն Սահմանադրութեան ջնջումով կառավարութիւնը ինքնիրեն հակասած կ'ըլլայ, և միւս երկուքներով իրմէ օտար եղող հոգևորականութեան հովեր առած կ'ըլլայ, որոնք կը տկարացնեն իւր ձեռնարկին զօրութիւնը։

Այն յօդուածը որով կրօնից նախարարութիւնը իբրև միակ

դիմումի պաշտօնատեղի կը նշանակուի (յօդ. 2), թիւրիմացութեան տեղի կուտայ, դիմումը աղաչանք ալ է, պահանջ ալ է։ Եթէ պահանջի խօսք պիտի ըլլայ, հարկաւ կրօնականը կրօնքով և հոգևորականը հոգևորով կրնայ զբաղիլ և իրաւունք պահանջել։ Սակայն աղաչանքին դուռը ամէն անհատի բաց է, ևս աւելի պատրիարքին, որ հայը կը ճանչցուի, և հօր մը իւր զաւակներուն ամէն տեսակ պէտքերուն համար միջնորդել արգիլեալ չէ և արգիլուիլ չկրնար։ Յօդուածը հարկ էր աւելի յատակ կերպով բանաձևել։

Կանոնագիրին բոլոր յօդուածներուն մէջ տիրող հոգին սա՛ գլխաւոր կէտերուն կը վերածուին. հասարակութեան ազգև իւր գործերուն միջամտելու դուռերը փակել, ժողովրդական քուէարկութիւնը խապառ խափանել, և պատրիարքական վարչութեան վրայ ազգը հսկող և համարատու չճանչնալ։ Երեսփոխանութիւնը ջնջուած է, Քաղաքականը եկեղեցականաց մասնակցութեամբ պարզ Տնտեսական մը դարձած է, առաջնորդները պատրիարքարանէ պիտի ընտրուին, թաղականները առաջնորդներէ պիտի նշանակուին, տեսուչ խորհուրդներ և հոգաբարձութիւնները պիտի վերցուին. մէկ խօսքով ազգայնութեան կերպարանը խափանուելով, ամէն բան լոկ կրօնական կերպարանի պիտի փոխարկուի։ Այդ մասին խորունկ դիտողութիւններու չեմ մտներ, մասամբ Յունաց պատրիարքարանի Կանոնագիրը, և մասամբ Պոլսոյ էնիէ կանոնադրութիւնը նոր Կանոնագիրին դրութեան կերպով մը կը մօտենան, և հնար չէ պնդել թէ հոգևորական իրաւասութիւնները և եկեղեցական կանոնները կը խանգարուին։ Միայն թէ պետական շահը ուղիղ նկատած չեմ կարծեր, որ երբ պատրիարքարանը տկարացնել կ'ուզէ, զայն աւելի զօրացուցած կ'ըլլայ բացարձակ տէր ընելով ազգին գործերուն, ինչ որ օրինակով և փորձով ալ տեսնուած է Յունաց պատրիարքարանին վրայ։

Դիտողութեան արժանի կը տեսնեմ նաև առաջնորդութիւնները առնուազն 15,000 հոգիէ կազմուած հայաբնակութեանց ենթարկել (յօդ. 23)։ Առաջնորդարանները ժողովուրդը խնամելու և ժողովուրդին հսկելու համար հաստատուած են, և խնամքն ու հսկողութիւնը ոչ թէ անձերու թիւով, այլ տեղւոյ սահմանով կրնայ իւր գործը արդիւնաւորել։ Ծանօթութիւն ու-

մերձաւորութիւն, յարաբերութեանց դիւրութիւն ու տեղերու կարևորութիւն, ասոնք են որ պէտք էր նկատի առնուէին, եւ յարմարագոյն կ'ըլլար թերևս պայմանը կուսակալութեանց սահմաններուն կապել, քան թէ հայաբնակութեան ազգահամարին վրայ հիմնել։ Նոր կազմակերպութեան վրայ այդ դիտողութիւնները բաւական սեպելով, և ընդարձակագոյն և մանրամասնեալ քննադատութենէ խուսափելով՝ անցնինք անոր գործադրութեան պարագաները պատմել, որ իմ կեանքիս ալ փոխուելուն պատճառ եղաւ։

Կանոնագիրը յատուկ տրամադրութիւններ նշանակած էր բոլոր աթոռները իր անձին վրայ միացնող կաթողիկոս-պատրիարքին ընտրութեան համար, և իր կանոնը յարգած ըլլալու համար կը սպասուէր որ ընտրողական գործողութիւններ հրամայէր։ Սակայն այդ կէտին մտադրութիւն չդարձուեցաւ, և կառավարութիւնը իւրովի իր նոր կազմած պաշտօնը իր ուզած անձին յանձնեց, և Խապայեան Սահակ կաթողիկոսը բովանդակ Թուրքիոյ Հայոց կաթողիկոս-պատրիարք նշանակեց։ Այդ ընտրութեան մէջ Ամէն ճէմալ բաշայի դերը կասկած չի վերցներ, որ, ինչպէս յիշեցի, Ատանայի կուսակալութեան ժամանակէն անոր նպատակայարմարութեան վրայ համոզում գոյացուցած էր. ծանր կասկածներ յայտնուած են նոյնինքն Խապայեանի ալ այդ գործին մէջ դեր ունեցած ըլլալուն վրայ, որոնք ծագած են մէկ քանի անգամ երկուքին առանձինն տեսակցութեանց վրայ տարածուած շշուկներէն, եւ Խապայեանի օր առաջ սպասողական կերպով Ռէմլէ քաշուելէն, իսկ սպասածին յապաղելուն վրայ լռին դառնալէն։ Միայն ատոյգ է որ ոգևին կ'աշխատէր և ամէն միջոցներ կը գործածէր Երուսաղէմի թափուր Աթոռը գրաւելու, որ երիտասարդութենէն իվեր իր երազն էր եղած, գուցէ աթոռներու ձուլման կէտը իւր նպատակին մէջ եղած չէր, բայց իբրև իւր գլխաւոր նպատակին յարակից պայման՝ սիրով ընդունած կ'ըլլայ։

Յուլիս 29|11 օգոստոսին Երուսաղէմ կը հասնի առջի օր նախարարութենէն տրուած պաշտօնական հեռագիրը, և Խապայեան իսկոյն իւր շնորհակալութիւնը կը հեռագրէ, և առանց վարանման, առանց խորհրդակցութեան, առանց բացատրութիւն պահանջելու կամ լուսաբանութեան սպասելու՝ յանձնառու կ'ըլ-

լայ պաշտօնի մը, որուն իսկութեան անգիտակ կ'ենթադրուէր։ Այս պարագային որևէ անձ կամ խորհրդակցութեանց պիտի դիմէր, կամ բացատրութիւն պիտի խնդրէր, և կամ լուսաբանութեան պիտի սպասէր, որով Ֆապայեանի փութկոտ չնորհակալութիւնը նախապէս զոլծին մէջ դեր ունեցած ըլլալը կը հաստատէ։ Միւս օր յուլիս 30/12 օգոստոսին միաբանութիւնը ժողովի կը հրաւիրէ, հեռագիրը և հրամանը, նոր կազմակերպութիւնը և իւր պատրիարքութիւնը կը հաղորդէ Զիլինկիրեանի ձեռքով, որ Միաբանական Ժողովներուն վերջին տարւոյն ատենապետը գտնուած էր. թէպէտ նոր գումարումը նոր դիւանով պէտք էր բացուէր։ Ես բոլորովին անգիտակ՝ միաբաններուն երթուղարձէն կը հետաքրքրուիմ, և լրոզութիւնը կը լսեմ, և միաբաններուն չնորհաւորութեան համար Ֆապայեանի մօտ երթալէն և դառնալէն ետքը ես ալ կ'երթամ ցաւ յայտնելու որ ինէ գաղտնի պահել ուզած էր, և դիտնալով ալ որ վարիչը ես եմ, զիս զանց ըրած, և դիմած էր մէկու մը որ քնաւ կերպարան և պաշտօն չունէր։ Բայց շատ յառաջել չուզեցի, երբ ինքն յայտարարեց թէ սխալմունք մըն էր եղաւ։ Հարկաւ կամաւոր էր սխալմունքը, զիս իբրև հակառակորդ ենթադրելով, և արդեւք մը հանել կրնալէս խիթալով։

Երեկոյին նորէն կը դառնամ մօտը ուղղակի քաղաքավարական պարտք կատարելու, յայտարարելով որ հայ ազգութեան կերպով մը գոյութիւնը ճանչցուած ըլլալուն փաստ մըն է եղածը, և ինքն ալ իբրև պարտք կրնայ յանձնառու լինիլ բեռը ստանձնելու, բայց զգոյշ լինի որ լպրծուն գետնին վրայ չսահի, իւր անունը ատելի չդարձնէ, ազգին մէջ վատ յիշատակ մը չթողու, և եթէ չապասեց կանուխէն պայմանները իմանալու և հրովարտակը տեսնելու, գոնէ առաջիկային ծանր քայլ առնէ և ամուր կենայ, և հոգ տանի որ եկեղեցական իրաւունքները և ազգային եկեղեցւոյ միութիւնը չտուժեն, և գայթակղութեան առիթներ չտրուին։ Մեկնելու ատենս երբոր օգնութիւն կը խընդրէր, և օգնութիւնը աջակցութիւն և գործակցութիւն կը մեկնէր, պատասխանեցի թէ՝ Ինքնամատոյց չեմ ըլլար, հրամանի չեմ փախչիր։

Իր փափաքն էր ժամ առաջ պատրիարքարան մտնել և տեղ բաղմիլ, բայց յայտարարեցի թէ պէտք էր պատրիարքա-

րանը մաքրել և յարդարել, և աթոռ բարձրանալն ալ եկեղեցական արարողութեամբ կատարել։ Ուստի պէտք եղած կարգադրութիւնները փութացնելու հոգ տարի և հսկեցի, և վերջապէս օգոստոս 6/19ին, կիրակամուտի երեկոյին, Կիրակոսեան յարկաբաժինէն թափօր կազմելով, և հանդիսական Հրաշափառով եկեղեցի առաջնորդեցի, և աթոռ բարձրացնելով շնորհաւորական արարողութիւնն ալ լրացուցի ու լրացնել տուի։

Յաջորդ օր, օգոստոս 7/20ին Կիրակի կէսօրին, ես ալ իմ բնակութիւնս դարձեալ Յորենաթաղի Կիրակոսեան յարկաբաժինը փոխադրեցի, պաշտօնական ամէն միջամտութենէ և մասնակցութենէ հեռացայ։ Նորա առաջին հրամանն եղած էր վարի դասէն իմ աթոռը վերցնել տալ, բայց լուսարարապետը փորձով գիտնալով որ ի գուճս նստելով քանիցս վնասուած եմ, և միշտ յոտընկայս մնալն ալ դժուար է, միջնորդեց պզտիկ աթոռակ մը դնել, և համոզում գոյացնել տալով զետեղեց։

ԶԴ

Դամասկոս, 1918 մարտ 6/19 Գշ.

Օգոստոս 6/19ին Խապայեանը առաջնորդած էի պատրիարքութեան յարկաբաժինը, 7/20ին փոխադրուած էի Կիրակոսեան յարկաբաժինը, 8/21ին հազիւ թէ տեղաւորուած էի, կառավարութեան թարգմանն ու ոստիկանապետը կը ներկայանան երեկոյին դէմ, և կառավարիչին կողմէն կ'ազդարարեն, որ մինչև երեք օր պէտք է մեկնիմ և Ներքին Գործոց Նախարարութեան հրամանին համեմատ Դամասկոս բնակիմ։ Բնական էր որ հկողներուն բան մը չէի կրնար ըսել, միայն թէ կրնայի մատնել թէ ի՞նչ էր այդ հրամանին շարժառիթը։ Դիպուած մը տեղի չէր ունեցած, կազմակերպական փոփոխութիւնը շատ մօտ էր, ուրեմն կանխաւ կարգադրուած տնօրէնութիւն էր, որ ուրիշ բան չէր կրնար ըլլալ, բայց եթէ նոր կազմակերպութեան իմ կողմանէ հակառակութիւն ենթադրելը, և Խապայեանի նորատացիկ կա-

ցութեան դժուարութիւն հանել կարենալս, և այս տեսակէտով Խապայեանի ալ կամակից գտնուած ըլլալը հաւանական կը դառնար, և լսողներուն միտքերը այն կողմ կը միտէին։ Ես փութացի թէ՛ ընդհանուր հրամանատար ճէմալ բաշայի և թէ՛ Ներքին Գործոց նախարար Թալէաթ պէյի հեռագրել, թէ ես գործէ քաշուած և միայն եկեղեցական ու գրական կազմանց մէջ փակուած, իմ սիրած առանձնական կեանքին նուիրուած եմ, և կը խնդրեմ ծերութեան օրերս վանական հանդարտութեան մէջ անցնիլ։ Կաթողիկոսն ալ վերջապէս համոզուեցաւ թէ իմ մէջ հակառակութիւն ու դժուարութիւն յարուցանելու բնաւ տրամադրութիւն չկայ, ուստի 11|24ին Երուսաղէմ մնալուս համար ինքն ալ հեռագրեց ճէմալ բաշայի, և կառավարիչին կողմէն թոյլտուութիւն ստացուեցաւ մինչև հեռագիրներուն պատասխանին հասնելուն ուղևորութիւնս յապաղել։ Սակայն ես պատրաստութեանց սկսայ՝ հրամանին փոփոխութեան վրայ չատ յոյս չդնելով։ Բայց հակառակ ակնկալութեանս 17|30ին կառավարիչին կողմէ հաղորդուեցաւ թէ Երուսաղէմ մնալուս բարձրագոյն հաւանութիւն ստացուած է, և 19|1ին ալ ճէմալ բաշայէ ուղղակի կաթողիկոսին հասած հեռագիրը նոյնը հաստատեց, և այսպէս տասներկու օրեր սեղ անտոյդ վիճակը վերջացաւ, և սկսայ ինծի համար նոր և առանձնական կեանք մը կազմել։

Առաջին որոշումներէս մին եղաւ աւագերիցութեան կարգը մտնալ և կարգավարութիւն ընել ուրիշ վարդապետներու պէս, որ Երուսաղէմի վանքին սովորութեամբ չորս օրով կը լրանայ, որ են՝ մուտք, աւագերէց, հետևակ, ելք։ Առաջին անգամ կարգի մտայ օգոստոս 23|5 սեպտեմբերին Յովակիմայ և Աննայի տօնին օրը, զի նախընթաց օրը մուտքի պատշաճ չկար։ Հանդիսապետութեան հարկն ալ քիչցաւ եպիսկոպոսներու չատնալովը. նախատօնակի և տեսանի կը մասնակցէի եթէ կաթողիկոսն էր հանդիսապետը, իսկ ուրիշ եպիսկոպոս եղած ատեն՝ դասին մէջ տեղս կը մնայի։ Երբոր դպրոցական տարին ալ բացուեցաւ, հոկտեմբեր 24|6 նոյեմբերին, սկսայ դասախօսել երեք լրացուցիչ դասարաններու կամ լսարաններու միանգամայն։ Այդ միջոցին Արմաշի Դպրեվանքի աշակերտներն ալ Երուսաղէմ եկած էին։ Օգուտ քաղելով պաշտօնական տաղտկանքներէ ազատելէս, սկսայ կանոնաւոր կերպով հետևիլ Ազգապատումի շարունակու-

թեան, և այս աշխատութիւնը աւելի ևս ընդարձակուեցաւ երբոր 1917 ապրիլ 12/25ին դասախօսութիւններն ալ դադրեցան աշակերտաց զինուորագրուելովը. կեանքիս մնացած կէտերը մնացին ինչպէս էին (տե՛ս ՁՂ)։ Պատրիարքարանի պարտէզը կաթողիկոսին յատկանալուն, սկսայ վարժարանի պարտէզը յաճախել, իսկ պտոյտներս գրեթէ խափանուեցան. չէի ուզեր աչքի զարնելու ձևով մէջտեղերը երևնալ։ Վարակիչ ախտերու չատնալը և փողոցներու խառն բազմութեամբ խռնուիլն ալ իրենց դերը ունեցան։

Կաթողիկոսի հետ յարաբերութիւնը պահեցի պաշտօնական և պատշաճական պահանջներու չափով. ութը տասը օրը գիշեր մը այցելութեան ալ կ'երթայի, ուր մեր խօսակցութիւնները գրչակրոնական ու պատմական ու ծիսական շրջանակէն դուրս չէին ելլար։ Առաջին օրը խնդրուած ալակցութիւնը ու խորհրդակցութիւնը անգամ մը միայն տեղի ունեցաւ Կ. Պոլսոյ պատրիարքական փոխանորդը նշանակելուն առթիւ, այլ երկրորդ մը տեղի չունեցաւ. ոչ ինքն պաշտօնական գործողութեանց վրայ խօսք կը բանար, և ոչ ես հարցում կ'ուղղէի. պաշտօնական շրջանակէն քոլորովին հեռու մնալս ինծի չատ հաճելի էր։ Իր կողմէն պահուած լռութիւնը աւելի չեշտուեցաւ Մագուտեան Ղևոնդ վարդապետի ներկայութենէն, զոր անմիջապէս Վերիտոնէ բերեր տուաւ, ելևմտից տեսչութիւնը յանձնեց, եւ իրեն վարչական ու անտեսական խորհրդական նշանակեց, և պաշտօնապէս ալ հռչակեց համախմբեալ միաբանութեան։ Մագուտեան պաշտօնական վճռով մը դատապարտուած էր, և դատապարտութեան զօրութիւնը չէր ջնջուեր կապմակերպական փոփոխութեամբ, մինչև որ նոր պաշտօնական գործողութիւն մը չկատարուէր։ Մագուտեանի համար նոր պաշտօնատուութիւն մը տեղի չունեցաւ, և մէկէն նոյն պաշտօնին դառնալը, որուն մէջ զեղծարարութեան վճիռի ենթարկեալ էր, օրինական ու խոհական միտքերու վրայ լաւ ապաւորութիւն չըրաւ։ Մագուտեան սկսաւ իսկոյն իւր շահը կարդադրել, որուն միայն նուիրուած էր, և դարձեալ նոյն ուղղութեամբ կը քալէր։ Վանական հաշուետոմարներու մէջ երկու հաշիւ բացուած էր իւր անունին. մէկուն մէջ պարտապան կը ցուցուէր իւրացուցած գումարներուն, միւսին մէջ պահանջատէր կը ցուցուէր իւր կալուածական հասոյթ-

ներուն, որոնք իրեն չէին վճարուեր, բայց առանձինն կը նշանակուէին հաշուեյարդարութեան ատեն նկատի առնուելու համար։ Մաքսուտեան նկատի իսկ չառաւ պարտապան հաշիւը, և սկսաւ պանձել պահանջատէր հաշիւը, և այդ նպատակով մինչև իսկ վանքապատկան ընտիր և ապահով կալուածներ վաճառուեցան։ Խապայեան հոգւով սրտով Մաքսուտեանի կապուած, եւ ոտքով ձեռքով անկէ կաշկանդուած, ո՛չ ձեռնարկեց և ո՛չ մըտաբերեց արգիլել կամ մտադրութիւն դարձնել հաշիւ պահանջելու, և հաշիւ քննելու պայմանն ալ մոռցաւ, թէպէտ իւրովի Տնօրէն ժողով մըն ալ անուանեց անուանական կերպով։ Մաքսուտեանի բարեկամներէն դիտողութիւն չէր սպասուեր, իսկ նախկին հաշուեպահանջներն ալ, ժամանակին դժնէութեան և նոր կազմակերպութեան հարուածին ներքև, խոհեմութիւն սեպեցին լռել ու չխօսիլ, քանի որ հակառակ ոյժ մը չկար ուսկից պաշտպանութիւն յուսացուէր. իմ ալ ուղղութիւնս ու յորդորներս նոյն եղան. անպտուղ ձեռնարկներէ զգուշանալ և թողուլ որ ժամանակը, եթէ հանի, ինքն կարգադրէ անկարգ եղելութիւնները։

Խապայեան նոր կազմակերպութիւնը լրացնելու կամ իւր դիրքը ամրապնդելու համար ձեռնարկեց Հոգևոր և Խառն ժողովները կազմակերպել։ Հոգևորը տասներկու հրովարտակով ճանչցուած առաջնորդներէ, և Խառնը Հոգևորէն առնուած չորս եկեղեցականներէ և ութը աշխարհականներէ պիտի բաղկանար։ Հոգևորին համար այս անգամ բացառութիւն եղած էր կէսը ոչ-առաջնորդներէ ալ առնել։ Շուտով լսուեցաւ թէ ազդարարութիւն եղած է կաթողիկոսին երբեմն պատրիարքները գործի չխառնել, ինչ որ շատ հաճութեամբ լսեցի, գործի կոչուելուն վտանգէն ազատուելով։ Հրովարտակով ճանչցուած առաջնորդներ գտնուեցան՝ Ստեփանոս եպիսկոպոս Յովակիմեան Նիկոմիդիոյ, Կարապետ եպիսկոպոս Մազլումեան Պանարմայի, Պետրոս եպիսկոպոս Սարաճեան Հաճնոյ, Մովսէս վրդ. Ոսկերիչեան Անտիոքայ, և Գարեգին վրդ. Խաչատուրեան Իկոնիոնի, որոնց միացուեցաւ Եղիշէ եպիսկոպոս Զիլինկիրեան երբեմն առաջնորդ Բաղիշոյ։ Վերջինէն զատ միւս հինգերը տարագրեալ ու զանազան կողմեր ցրուած էին, և այդ առթիւ արտօնուեցան Երուսաղէմ գալ. մնացեալ վեցերուն համար քանիներ առաջարկուելով մեր-

ժուեցան, ինչպէս Մկրտիչ եպիսկոպոս Աղաւնունի, Երուանդ վրդ. Փէրատճեան, Սմբատ վրդ. Սալպաշեան, իսկ ընդունուածներն եղան՝ Տրդատ եպս. Պալեան, Մաղաքիա եպս. Տէրունեան, Մեսրոպ եպս. Նարոյեան, Գիւտ եպս. Մխիթարեան, Դաւիթ վրդ. Տէրտէրեան և Գրիգորիս վրդ. Պոյաճեան։ Ասոնցմէ առաջին երեքը Մաղնլսայէ և Կ. Պոլիսէ շմեկնեցան, և Հոգևոր ժողովը կամ Սինոդը լինը անդամով մնաց, բայց քանի մը նիստեր ըրաւ աննշանակ որոշումներով, որոց գլխաւորներն եղան երկու երեք ամուսնալուծութիւններ։ Իսկ Խառն ժողովը չկրցաւ ժամանակին լրանալ. ընդունուածներն ալ չեկան, ժողով ալ չկազմուեցաւ ու չգործեց։

Խապայեանի պաշտօնավարութիւնը, Երուսաղէմի մէջ 1916 օգոստոս 6|19էն՝ աթոռ բարձրանալէն՝ մինչև 1917 նոյեմբեր 6|19՝ Երուսաղէմէ մեկնելուն օրը, տասնուհինգ ամսուան միջոց մըն է, որուն վրայ ընդհանուր տեսութիւն մը ըրած ատեննիս, պիտի խոստովանինք թէ նշանակելի օգտակարութիւն մը չունեցաւ։ Կիլիկեցիք արդէն իրմէ ուծացած էին Սոյ Աթոռին վրայ եղած ժամանակ արդիւնք արտադրած չըլլալուն համար, Թուրքիոյ Հայոց միակ Աթոռը անցնելով՝ վրան փոփոխութիւն չտեսնուեցաւ։ Քանի որ տառապեալ տաճկահայ ազգութեան միակ և ամէնիշխան պետը կը դառնար, և պարզ կառավարական առուչութեամբ այդ պաշտօնը կը ստանար, իրաւունք ունէր իւր ժողովուրդին պաշտպանութիւնը առաջարկել և անոր պէտքերուն հոգածութիւնը պահանջել, եթէ ոչ քաղաքականը, գոնէ հոգևորականն ու կենցաղականը։ Նա չհամարձակեցաւ և ո՛չ իսկ առաջարկել որ աստ և անդ մնացած կամ խմբուած տաճկահայութեան մնացորդները հոգևոր միխիթարութենէ չզրկուին, և առանց հոգևոր միխիթարութեան չմնան. թող թէ բռնադատիչ ուրացութեանց դէմ բողոքել, անիրաւ զրկանաց դարման պահանջել, և սպանութեանց ու թշուառութեանց վերջանալը խնդրել։ Արդէն ըսի և կը կրկնեմ՝ թէ հոգևորականին համար պահանջ և կենցաղականին համար խնդրանք չկրնար զլացուիլ կրօնական պետի մը, մանաւանդ կառավարութեան կամքով պաշտօնի անցած պետի մը. Կաթողիկոս և Պատրիարք միացեալ կոչումները պէտք էր որ իրենց ընդարձակութեամբը արդարանային։ Ընդհակառակն որոշմանց մէջ վարանոտ, յարաբերութեանց մէջ երկչոտ, ձեռ-

նարկներու մէջ անգործ կեանք մըն էր զոր անցուց, Երուսաղէմի մէջ բաւականանալով և գոհունակութիւն զգալով, Երուսաղէմի ըղձացեալ Աթոռին տիրապետած, պատուոյ արտաքին նշաններով փառաւորուած, և Մագուստեան բարեկամին օգտակար եղած ըլլալուն համար։ Եւ ո՛չ ալ Երուսաղէմի Աթոռին և միաբանութեան օգուտ մը կամ օգնութիւն մը ըրաւ։ Իրաւ դժնդակ էին ժամանակները, այլ փոյթն ու ջանքը կրնար աւելի բան մը ընել, քան թէ յետին պայմանի և խեղճ անուղղի հասցնել միաբանութիւնը. արդէն չափով տրուած հացն ալ կը մատակարարուէր իններուն հազար քիլօ ցորենով, զոր ժամանակին ես էի ապահոված ընդհանուր հրամանատարութենէն, եւ աւելորդ պարծենկոտութիւն էր Մագուստեանի բերնով կրկնուածը՝ թէ չորաչար կը տուռապի հացը ճարելու համար։

Անհարկի և վտանգաւոր յայտարարութիւն եղաւ տուած ստորագրութիւնը, թէ վանքին ետևը պարիսպներու ներքև եղած ընդարձակ գետինը առանց իրաւունքի (Ֆոլոլէ) գրաւուած է Աթոռէն։ Ահմէտ ճէմալ բաշայի բաղձանքներէն մէկն էր քաղաքներու մէջ հանրային պարտէզներ կազմակերպել։ Այդ նպատակին համար նախապէս պահանջած էր Աթոռէն ընդարձակ գետինը կամ Մեծ Սրտը որ քաղաքին միջավայրը կը գտնուի, և թէպէտ շատ աշխատած էի գետինին անյարմարութիւնը առջև դնելով ատացութիւնը ազատել, սակայն անհնարութեան հպատակելով՝ հաւանած էի գետինին մի մասը միայն թողուլ և այն ալ հանրային պարտէզ ըլլալու պայմանով քաղաքապետութեան (Պէլէտիյէ) յանձնել, որ եթէ չըլլար՝ ետ առնելու իրաւունք ունենային։ Գետինին վրայ բաւական աշխատութիւն կատարելէն ետքը ձեռնհաս անձեր ալ անյարմարութիւնը տեսան, գործը կիսակատար թողուցաւ և վանքին ետևի գետինին վրայ դարձաւ ճեմալին աչքը։ Անոր բանակցութեանց վրայ էինք երբոր կազմակերպական փոփոխութիւնը տեղի ունեցաւ, և ես գործէ քաշուեցայ։ Իմ առաջարկներն էին՝ որ առաջին առնուածը ետ տրուէր, վանքին մօտ կտորը չգրաւուէր, տարեկան ցորեններս ապահովուէր, և դարձեալ հանրային պարտէզի պայմանով վանքին նուէրը ըլլար։ Սակայն Խապայեանի յայտարարութեամբ առաջ առնուած գետինը ետ չտրուեցաւ, գետինը ամբողջապէս գրաւ-

ուեցաւ, եւ վանքը առանց իրաւանց տէր դարձող խոստովանուեցաւ։

Ընդհանուր կերպով կէտեր յիշելս բաւական ըլլայ իմ խոհքերս կամ մտածումներս իմացնելու։

ՁԵ

Դամասկոս, 1918 մարտ 6/19 Գշ.

Կենսագրական Խոհ ու Խօսքերու վերջին հանգրուանին հասայ. ճիշդ չորս ամիս է այսօր որ Երուսաղէմէ մեկնած եմ, եւ շաբաթ մը պակաս է որ Դամասկոս կը գտնուիմ. հոս են կաթողիկոսն ու վեց սինոդականները կամ Հոգեւոր Ժողովի անդամները եւ կաթողիկոսին սարկաւագն ու խոհարարը (տե՛ս Զ.)։ Բնակութիւննիս առժամեայ փոփոխութիւններէն ետքը այսօր ազգային սեպհականութեանց մէջ ամփոփուած է։ Ես ու Զիլինկիրեան եպիսկոպոս ու Պօյաճեան վարդապետը վանքին մէջն ենք, կաթողիկոս Ոսկերիչեան վարդապետով, ու սարկաւագով ու խոհարարով հին տեսչարանին մէջ հաստատուած է, Մազլումեան ու Սարաճեան եպիսկոպոսներ ու Խաչատուրեան վարդապետ վանքին յարակից տունին մէջ սենեակներ ունին։ Կեանքերնիս ու կերակուրնիս բաժան բաժան է։ Կաթողիկոսը ծանր գտաւ Երուսաղէմէ տարագրեալներնիս միասնական կեանքով պահել, ինչպէս Երուսաղէմի Ցունաց պատրիարքը իրեններուն հետ կը պահէ, և Իւրաքանչիւր ոք զինքը հոգայ հրամանով ցրուեց։ Ես ուրիշ փորձերէ ետքը Խաչատուրեան վարդապետի հետ սեղանակցութեան ձև մը հաստատած եմ և անով կը կառավարուիմ, միւսներն ալ մէկով երկուքով անկախաբար կ'ապրին։

Կաթողիկոսը տէրութենէ ունեցած տասն հազար դահեկանի ամսականով, իր ունեցածով և պատահաբար ձեռքը հասածով կը կառավարուի. սինոդականներ այստեղ իրենց նուիրուած ցոքենի նպաստին դրամէն օգտուեցան. ես պատրիարքութենէ պա-

հանջիս հաշուոյն մասնավճարներով կ'ապրէի, թէպէտև ոսկեդրամ պահանջածս թղթադրամով կը վճարուի, որուն հարիւրը տասնուհինգէ քսանի մէջտեղերը կը խաղայ, իսկ պետական թոշակս որք քեռորդիներուս և քրոջս տրամադրել ստիպուած եմ։ Երբոր նեղուիլ սկսայ յունուարի մէջ՝ պետական նպաստ խնդրել պարտաւորուեցայ և զինուորական իշխանութենէ ամսական պարէն ստացայ։ Իմ օրինակէս քաջալերուած կաթողիկոսն ու ժողովականներն ալ նոյն օգնութիւնը խնդրեցին և ստացան փետրուարի վերջերը։ Ժողովականներուն վեց ամիսէ իվեր անվճար հաղար դահեկանի ամսականները այս օրեր կարգադրել և վճարել աւետուած է։ Սակայն քաղաքին վիճակը տարապայման նեղցած և սուղութիւնը առասպելական աստիճանի բարձրացած է. այսօր քաշ մը սև և խմոր հացը թղթադրամ հարիւր քսան դահեկանի գնելու ստիպուած ենք. արծաթ մէճիտիյէն ալ արժէքը կորսնցուց, արծաթախառն մետաղով մէճիտիյէներ հրապարակ հանուելուն պատճառով։

Առողջութիւնս վտանգուեցաւ քաղաքիս խոնաւ մթնոլորտէն. առաջ ամիսուկէս յամառ փորհարութեամբ նեղուեցայ, յունուար 23|5 փետրուարին քառօրեայ տենդով հիւանդացայ, որ երկիցս կրկնուեցաւ և վիս զգալապէս տկարացուց. վերջերս ջղացաւով ալ տառապեցայ, և դեռ ասոնց ամենուն ազդեցութենէն ազատ չեմ։ Որչափ ալ բժիշկներ կազմս և կենսական գործարաններս գննելով՝ վիս կատարելապէս առողջ և տոկուն կը գտնեն, սակայն ոչ-կենսական տկարութիւններն ալ բաւական վհատեցուցիչ ազդեցութիւն կը գործեն, միանալով տեսութեան ու լսելութեան ու մարսողականութեան օրէօր աւելի տկարանալուն հետ։ Ընդհանուր հրամանատար Ահմէտ ճէմալ բաշա, որուն հոս հասնելէն անմիջապէս ետքը ներկայացայ 1917 նոյեմբեր 15|28ին, առաջարկեց և խոստացաւ վիս Կ. Պոլիս ղրկել և հանգստացնել, սակայն ինքն Կ. Պոլիս երթալով ալ, և Ներքին Գործոց փոխնախարարութեան անցնելով ալ խոստումը չկրցաւ իրագործել, և կ'երևի թէ կեդրոնական կառավարութեան կողմէ աննահանջելի անհամաձայնութեան հանդիպած է։ Այստեղ լուրջ աշխատութեան ձեռնարկելու բնաւ դիւրութիւն չունենալով, և անկայուն կացութեան մէջ բան մը կարգադրել անհնար ըլլալով, տասնուչորս քառակուսի մէտր տարածութեամբ սենեակի մը մէջ փակ-

ուած, ամենայն ինչ անոր մէջ լրացնելու սիրուած, սենեակի ծառայութիւններն ալ անձամբ կատարելու պարտաւորուած, և գլուխի համար կէս քառակուսի մէտրէ պակաս հատարակ սեղան մը միայն ունենալով՝ իբրև ժամանցի զբաղում ոչն Խոհի ու Խոսքերս գրել որոշեցի, որչափ ալ կենսագրական յիշատակներ գրելու շատ փափաքող չէի, և կ'երևի որ երբ հատուածներուս չարքն ալ աւարտեմ, գործս ընդօրինակելէ զատ զբաղում պիտի չկարենամ գտնել։ Օրերս ընդհանրապէս առանձինն կ'անցունեմ. յունուարի մէջ նպաստաւոր օդերով կրցայ քիչ մը պտոյտներ ընել, և գիշերները ծանօթներու տուներն այցելել, իսկ յունուար 23|5 փետրուարին անդով հիւանդանալէս ի վեր դուրս ալ ելած չեմ, օդերն ալ անկէ ետքը աւելի խառնակեցան, անձրև և խոնաւ և ցուրտ շատցան, զգուշաւորութեանց հարկը սաստկացաւ, և այս կացութեան ներքև կը գտնուիմ այսօր ալ, և օդերուն շտկուելուն և իմ լիապէս կազդուրուելուն կը սպասեմ որ քիչ մը աւելի շարժուն կեանք մը նորէն ձեռք առնել կարողանամ։

Դամասկոսի անհատական կեանքս պատկերացնելու այսչափը բաւական կը սեպեմ, և հանրութեան կ'անցնիմ, զի Դամասկոս կարևոր և մտադրութեան արժանաւոր ազգային կեանք մը ունի այսօր։ Հատատուն հայ տեղացին զանազան կողմերէ եկած և ընիկ դարձած չորս հարիւրի իսկ չէր հասներ, այլ այսօր հայաբնակութիւնը քաղաքիս մէջ տասը հազարէ աւելի կ'ըսուի։ Ազգային տապնապին առիթով տարագրեալներուն և կոտորածով ու հիւանդութեամբ ու անսուաղութեամբ պակսածներուն բեկորներն են ասոնք, զորս երեք մարդասէր զգացումներ յորդորուեցան հաւաքել, և անկոխ անապատներէ և անշէն ձորերէ բերելով ստոյգ մահուան ճիրանէն ազատեցին։ Ընդհանուր հրամանատար Ահմէտ Ճէմալ բաշա, և այժմ Դամասկոսի կուսակալ Թահսին պէյ, և ասոնց մտադրութեանցը լիովին գործադրող, առաջարկներու հնդինակ և միջոցներու պատրաստող հայ գաղթականութեանց քննիչ և հսկիչ Հասան Վասֆի պէյ, ասոնք են այն երեքները զորս պատուով յիշել պարտաւորութիւն կը զգամ, արդիւնքները մօտէն տեսնելէս ետքը։ Այսուհետև հաւաքուած Հայերուն մէկ մասը ինքզինքին ապրեցնելու կարողներ էին, իբր կէս մասը առևտուրներու և արհեստներու և պաշտօնէութեանց մէջ մտնողներ էին, որ ինքզինքին և իրենցները անօթի չձգելու

չափ միջոց կը ճարէին, իսկ բոլորովին լքեալներ, անոք այրիներ, անտիրական որբեր այրիանոցի և որբանոցի մէջ հաւաքուած էին, մէջտեղ մնացողներն ալ ազգային ազքատախնամի մը նպաստներէն կ'օգտուէին։ Գէշ աղէկ տանելի և ուրիշ տեղերու հետ բաղդատմամբ լաւագոյն վիճակ ունէր Դամասկաբնակ հայ տարագիրը մինչև վերջին փետրուար ամիսը։

Այդ միջոցին սկսան երևան գալ նոր դժուարութիւններ, ալմտեաց սպառումը գիները բարձրացուց, զինուորական պէտքը պատրաստ պարէնը քիչցուց, գերմանական շահագիտութիւնը տրամադրելին նուազեցուց, միջոցներու պակսիլը աշխատութիւններն ալ պակսեցուց, որաբական ըմբոստութիւնը հայթայթումները դժուարացուց, Դամասկոսի ընդհանուր կեանքը ցընցուեցաւ, տարագրեալ հայուն կեանքը սառեցաւ, վատթարագոյն օրերու ստուերամած երևոյթով մթամքեր զգածուեցան։ Եւ ահա՛ 1918 փետրուար 17|2 մարտ շաբաթ առաւօտուն ոստիկաններ և զօրականներ արևէն առաջ փողոցներ կ'ելլան և դիմացնին եկող հայ տարագրեալը կը հաւաքեն, չուաններով իրարու կը կապեն և առջևնին ձգելով զինուորութեան կը տանին, այնպիսի և այնչափ անկարգութեամբ՝ որ մինչև իսկ կիներ ալ զինուորագրութեան անունով կը ձերբակալուին։ Ո՛չ լուր տրուած էր, ո՛չ ազդարարութիւն եղած էր և ո՛չ հրաման հրատարակուած էր։ գաղտնածածուկ գործադրութիւնը գաղտնախառն նպատակ մը ունէր անշուշտ, և արևելեան ռուսութուրք սահմանագլուխներուն վրայ ռուսական բանակին քալելովը կովկասային խումբերու Տաճկաց վրայ խոյանալուն հակարարքը կարծուեցաւ. պատրուակեալ կոտորածին զոհեր պատրաստելու կերպ մը, ինչպէս առաջ այս միտքով խօսքեր կը սպրդէին տաճիկ բերաններէ։ Սոնեւ սարսափը տիրեց, շուկաներ պարպուեցան, խանութներ գոցուեցան, տուներ փակուեցան, ամենայն ոք կեանքը ազատելու շտապի մէջ՝ գտած ծակը ծածկուեցաւ, մինչ միւս կողմէն խրոխտ խօսքեր համարձակ կը կրկնուին։

Շփոթին ու սարսափին ուղիղ հետևանքն եղաւ զիներուն յանկարծ բարձրանալը ու ցորենին և ալիւրին և հացին առասպելական զիներուն թևակոխելը։ Սոնց հետ համեմատաբար ամենայն ինչ կը սղէր. կառավարութիւնը իր բացած որբանոցին և այրիանոցին հացն ու պարէնը կը դադրեցնէ, զինուորական

հրամանատարութիւնն իւր զինուորներուն օրական հացը կը կիսէ, իսկ նպաստ ընդունողներուն բոլորովին կը զլանայ, մինչ միւս կողմէ տուներ կը խուզարկուին՝ պահուըտածներ գտնելու, և բռնութիւններ կը գործուին՝ ծածկուածներ իմանալու։ Այլևս ո՛չ արհեստաւորն և ո՛չ խանութպանը ո՛չ իրեն սնունդը կը գտնէ և ո՛չ իրեններուն օրապահիկը կը ճարէ. անօթիներ փողոցներու մէջ կը նուաղին և կ'անշնչանան. այրիանոցի և որբանոցի մէջ անօթութենէ մեռնողներ վերջին երկու շաբաթներու մէջ հարիւրէ աւելի կը համրուին։ Անաւաղութեան տագնապէն խումբ խումբ անօթիներ խանութները կողոպտելու կը յարձակին, խանութներ ապրանքին ապահովելու համար կը փակուին, ծանր գիներով գնելու լուծին ներքև խոնարհողներն ալ վնտռածնին չեն գտներ։ Ահա՛ քաղաքիս տխուր պատկերը երեք շաբաթէ ի վեր. սոյն այս օրն ալ տակաւին իւր խստութեամբը կը շարունակէ։

Հասան պէյ, որ կեղրոնական որբանոցով մը և այրիանոցով մը և երեք խառն մանուճիւղերով 1700 տառապեալներու սնունդը կը հոգար կառավարութեան հացով ու պարէնով, այսօր յուսաբեկութեան մատնուած է։ Աղքատախնամի անդամները իրենց անձը ազատելու համար ծածկուած՝ ո՛չ կրնան նպաստ հաւաքել և ո՛չ նպաստ բաշխել։ Զինուորական հրամանատար Մէհմէտ ճէմալ բաշա կեղրոնի հրամանէն դուրս բան մը ընել չկրնալը կը պատասխանէ և անդէն զինուորի իմա՛ տարապարհակ գործաւորի պէտք ունենալը կը պնդէ, կուսակալ Թահսին պէյ առայժմ յուսադրական խոստումներով կը զոհանայ և իր բարեմիտ բարեացակամութեամբը կ'երաշխաւորէ։ Կաթողիկոս-պատրիարք Խապայեանը կրնար, կամ պարտաւոր էր, հնարաւոր հոգածութեան համար ամէն միջոց գործածել, բայց այն ալ անբացատրելի անգործութեան մատնած է ինքզինքը։ Կարօտներու ձայները զինքն կը նեղեն, լքեալներու թախանձանքներ զինքն անհանգիստ կ'ընեն, անոնց ձեռքէն ազատելու համար դեկտեմբեր 7/20ին Լիբանանի Զահլէ աւանը օդափոխութեան գնաց, ձմեռուան ցուրտին ձիւնապատ գագաթներ մօտենալով և միայն յունուար 22/4 փետրուարին Դամասկոս դարձաւ։ Հանրութեան գաղափարը, ազգային թէ օտարազգի, պաշտօնական թէ անպաշտօն, տխուր տպաւորութեամբ տեսաւ տառապեալ ժողովուրդին հայր ըլլալու պարծեցողին՝ տառապելոց ձեռքէն խուսափելու փութաջանու-

թիւնը։ Համարձակ թելադրութեանց համարձակողներ եղան, այլ նա ձախող և թիւր մեկնութեամբ մը իրեն չքմեղանաց փաստ ըրաւ՝ նոր կազմակերպութեամբ կրօնականէն դուրս խնդիրներու համար դիմումին արգիլուած ըլլալը։ Վերջին օրեր Հասան պէյն ալ գայթակղեցուց, երբոր իւր փոքրաւոր վարդապետին միջոցաւ առաջարկեց, թէ կարօտեալներու դիմումներէն անհանգիստ կ'ըլլայ, և կը խնդրէ որ զինքն այդ անհանգստութենէն ազատէ։ Տաքրագրելոց զգայուն խնամակալը պատասխան ղրկեց՝ թէ ժողովուրդին համար անհանգիստ ըլլալ կրօնական պետին պարտքն է. անհանգիստ չըլլալու համար կրնայ պաշտօնէն հեռանալ։ Խապայեանի անտարբեր վարմունքը և անկարեկիր ընթացքը յառակա դարձած ամէն բերաններու մէջ՝ իբրև նշանակ կը գործածուի։ Ազգին ցաւերը կը քաշեմ խօսքերով օղիի գաւաթները բերանը տանելը։ Կասկածով կը խօսուի նաև իրեն արամադրութեան յանձնուած նպաստից գումարներուն կիրառութեան վրայ։ Ցաւ մըն ալ այս է որ կացութեան ցաւերուն վրայ կը բարդուի։

Ահա՛ այսօրուան կացութեան ստուերագիծը. փողոցներէ հեւ խանութներէ և տուներէ հաւաքուած հազարի մօտ զինուորցուներ կամ ձերբակալեալներ նեղ և ողտեղի տեղեր խնուած կը սպասեն։ Ամէնն ալ քաղաքի մէջ կամ կեդրոններ արհեստանոցներու և հիւանդանոցներու և պաշտօնատուններու մէջ անզէն պիտի գործածուին կ'ըսուէր, բայց հիմայ մաս մը Մահալլաթի կողմը ճանապարհ բանալու ղրկուած կ'ըսուի, մնացածներն ալ Աֆուլէէ Ռայագ խճուղին յարդարելու պիտի ղրկուին։ Անդին շատերը իրենց գաղտնի ծածկարաններուն մէջ կը տոկան, զի կոտորածներուն կրկնուելուն գաղափարը միտքերէ և վախը սիրտերէ ջնջուած չէ, ամեն առթի մէջ վտանգեալ կեանքերու հեռաւոր պատկերը կը նշմարուի, զինուորագրեալները նեղութեանց և պահուածները անսուազութեան մէջ։

22

Դամասկոս, 1918 մարտ 7/20 Դշ.

Կենսագիրը չատ կը տարբերի պատմագիրէն. սա եղելութեանց կարգով կը քալէ, իսկ նա ըմբռնմանց և զգայմանց կը հետևի, և կարգն ու շարքը կ'անտեսէ, որով երբեմն կը ստիպուի յետահայեաց ակնարկներու վերադառնալ։ Ես ալ նոյն ստիպման դիմաց կը գտնուիմ, ինչինչ դիպուածներու մասին տեսութիւններս յայտնելու համար։

Իզմիրլեանի օծումէն առաջ կայսեր ներկայանալու եղած հրաւէրը յատուկ պատիւ չէր, այլ յատուկ զգուշաւորութիւն, անոր միտքը հակառուսական ըմբռնումներէն դարձուցանելու համար։ Իզմիրլեան Կ. Պոլսոյ մէջ Պօլօժէնիէի քննադատողներուն գլուխն էր եղած, ռուսական կարգադրութիւնը բռնութիւն որակած, պոռոտախօս փքիններ արձակած, տեղեկագիր խմբագրած, նոր ծրագիր կազմած, Մակար-Մելքիսեդեկ խնդիրը բորբոքած, և պիտի երթար նոյն այդ կարգադրութեամբ եկեղեցին կառավարել։ Ականջէ ականջ խօսուած լուրերն ալ հաստատեցին, թէ պատուասիրական ցոյցերուն հետ նշանակալից ապդարարութիւններ ալ ունեցաւ Բեթրպուրկի նախարարներէն։ Այս նախազգուշական միջոցը իր արդիւնքն ունեցաւ. Իզմիրլեան Ռուսիոյ մեծ գովաբանող մը դարձաւ, արդէն Օտեսա ոտք կոխելէն սկսած էր Ռուսաց կայսրութիւնը ու օրէնքները օրհնաբանել նոյնիսկ Ռուսահայոց չափազանց երևնալու չափ, ճիշդ այն ատեն որ Ռուսիոյ կառավարութիւնը հայ կուսակցականաց դէմ սաստիկ հալածանք յարուցած էր։

Իզմիրլեան չմեկնած ամէն ջանք ըրաւ որ Դուրեանը պատրիարքական աթոռ բարձրացնէ, որպէսզի Կ. Պոլսոյ մէջ լրեն ապասարկու ունենայ իր ձեռնասունը։ Երբ 1909 մայիս 22/4 յունիսին Դուրեան ընտրուեցաւ, Իզմիրլեան Գումպարու իջնալով ընտրութեան կը հակէր, և յաջորդ օրը 23/5ին Կ. Պոլիսէ

կը մեկնէր։ Սակայն Դուբեան կ'երևի նորա նպատակին չծառայեց։ Էջմիածնի դիւանին մէջ իմ Խրիմեանի գրած շարունակական և ընդարձակ տեղեկագիրներս կարդալով՝ Իզմիրլեան սկսած է ցաւով գանգատիլ, որ Դուբեան զինքն անցուդարձերէն անտեղեակ կը պահէ։

Իզմիրլեանի Էջմիածին հասնելէն ետքը օծումը յունիսէն սեպտեմբեր յապաղելը, և այդ միջոցին Բիւրականի մէջ անգործ ամիսներ անցունելը, և օծման հանդէսին փառաւորութեան համար ժամանակին անօգուտ վատնումը լաւ տպաւորութիւն չպզդեց։ Իզմիրլեան արտաքին ցոյցերը անարգող, և պարզասէր անձ կը ճանչցուէր և այնպէս ալ կ'երևէր Կ. Պոլսոյ մէջ, բայց կ'երևի թէ սխալ չէ առածին պատգամը, թէ Փառք զքարս փոխեն (Honores mutant mores)։

Միջադէպ մը աւելի չեշտեց Իզմիրլեանի և Դուբեանի յարաբերութեանց ցրտութիւնը։ Կուսակցականներ շատ կը պնդէին եկեղեցիները քաց ունենալ, իրենց պռոտոխոս ատենաբանութեանց բեմ կազմելու համար։ Մինչ խոհական հասարակութեան խիղճը զոց կ'ուզէր եկեղեցիները, անոնց նուիրականութիւնը պաշտպանելու համար։ Բերայի Թաղ. Խորհուրդը մերժած էր Դաշնակցականաց առաջարկը Ս. Երրորդութիւն եկեղեցին մեծ ցոյցի մը տրամադրելու, իսկ Դուբեան պատրիարք չկրցաւ Դաշնակցականաց չհնազանդիլ, և ցոյցն ու ատենաբանութիւններ կատարուեցան եկեղեցւոյն մէջ։ Ատենաբանը Դաշնակցականաց դէմ ռուսական հոլածանքէն զգածուած՝ աչքը կը գոցէ ու բերանը կը բանայ ռուսական կայսրութեան դէմ։ Դեսպանատունը իրողութիւնը իր կառավարութեան կը հաղորդէ, կառավարութիւնն ալ կաթողիկոսին կ'ազդարարէ որ այդ ցոյցերը խափանել տայ, կաթողիկոսն ալ մեղադրանաց խօսքերով հրահանգներ կ'ուղղէ պատրիարքին։ Դուբեանի ծանր կուգայ որ հեռուէն պատրիարքարանի գործերուն միջամտութիւն կ'ըլլայ, և բանիւ ու գրիչով իւր դժգոհութիւնը կը յայտնէ։

Իզմիրլեան 1909 սեպտեմբեր 13/26ին օծուած, 1910 դեկտեմբեր 11/24ին վախճանեցաւ, միայն տասնուհինգ ամիս պաշտօնավարութեամբ, որուն վրայ ինքն ալ ցաւելով, իւր անկոդինին մէջէն կը յայտարարէր, թէ այդչափ կարճ ժամանակի համար չէր արժեր տեղէն շարժուիլ և պաշտօնի անցնիլ։ Իւր մանկ-

արագահաս եղած ըլլալուն մեկնութեան պէտք տեսնուեցաւ, եւ Տէր-Մկրտիչեան Կարապետ եպիսկոպոսի կողմէ ուղղուած դիտողութեան քանի մի ոչ անպատշաճ խօսքերը իբրեւ պատճառ խօսուեցան։ Սակայն Իզմիրլեան արդէն սիրտի հիւանդութիւն ունէր, եւ տարի առաջ ճարտար բժիշկներէ քննուելով զգուշութեանց հրահանգներ, եւ յատկապէս ծխախոտի կիրառութենէն զգուշանալու ազդարարութիւն ստացած էր, իսկ ինքն կարեւորութիւն չէր տուած, եւ իւր չափազանցեալ ծխամոլութիւնը անփոփոխ կը շարունակէր։ Յուզման մը պահուն սիրտի կաթուածին ենթարկեալ ըլլալը նախատեսուած էր. յուզումն ալ իրօք տեղի ունեցած է, բայց ոչ Տէր-Մկրտիչեանի խօսքերէն, զի Իզմիրլեան եկեղեցականի մը քանի մի բառերէն այլայլողը չէր։ Վատահելի աղբիւրէ քաղուած լուրեր կը հաւատան, որ դաշնակցական կազմակերպութիւնը հալածանքէն ու դատաստանէն ազատուելու համար, Իզմիրլեանի առաջարկած է կուսակցութեան տրամադրելի ընել Գէորգ Դ.ի կողմէ Ճեմարանին համար հաստատուած երեք հարիւր հազար ռուբլիի գումարը։ Իզմիրլեանը ուզելով ալ չէր կրնար ուզածնին ընել, քանի որ Պոլսոյ զօրութեամբ սինոդի եւ պրոկուրորի հաւանութիւնը անհրաժեշտ էր, մինչ Դաշնակցականները առաջարկը պահանջի, եւ պահանջը ստիպման հասցնելու չափ կը յառաջեն, եւ յուզման պատճառը իրենք կ'ըլլան, եւ քոզարկելու կեղծիքը իրենք կը ստեղծեն։

Այդ կէտերը յիշեցի, ոչ թէ Իզմիրլեանի մինչեւ վերջը իմ վրայ հաշտ աչքով չնայելէն գրգռուած, այլ եղելութեանց մասին ունեցած տեղեկութիւններս ծածկած չըլլալու համար։ Իրաւ է որ Կ. Պոլիսէ մեկնելէն ետքը այլեւս իրեն գիր կամ հեռագիր չեմ ուղղած, զի մինչեւ իւր մահը ամբաստանեալի անունը վրայէս չէր վերցած, եւ իր ունենալիք վարմունքը կասկածելի էր ինծի համար. Կ. Պոլսոյ մէջ պահած ընթացքը կասկածս կը զօրացնէր։

Իզմիրլեանի յաջորդին ընտրութեան ատեն, 1911 դեկտեմբերին, տակաւին կը տեւէր վրաս ամբաստանեալի անունը, սակայն ռուսահայ հասարակութիւնը, որ կարեւորութիւն չէր տար Տաճկահայոց Երեսփոխանութեան ընթացքին, բուռն ցոյցերու եւ յայտարարութեանց սկսաւ դիս իբր կաթողիկոսական ընտրելի ներկայելու։ Գլխաւորապէս Տիգրիսի եւ Նոր-Նախիջեւանի մէջ գումարումներ տեղի ունեցան միտքերնին հռչակելու, բազմա-

թիւ ստորագրութիւններով հեռագիրներ ալ ուղղեցին ինծի։ Սակայն Ռուսահայոց այդ մտադրութիւնը աւելի ևս գրգռեց Տաճկահայոց մէջ գործող կուսակցականները և պաշտօնականները, զի այդ շարժումին մէջ առաջիններ իրենց նպատակին և երկրորդներ իրենց պատուոյն հակառակ նշաններ կը նշմարէին։ Էջմիածնի միաբանութեան մէջ ալ համաձայնութիւնը կը պակսէր, զի գործօն դեր ստանձնողներուն մէկ մասը կը սիրէր իրեն ձեռքը գործիք դարձող կաթողիկոս մը, և միւս մասը եկեղեցւոյ բարգաւաճման և պայծառութեան ծառայող անձ մը ունենալ կը փափաքէր։ Այսպէս կը մղուէր իմ անունի շուրջը ծագած պայքարը, որուն մէջ անտարբեր մնալէ և ձայն չհանելէ զատ բան մը չէի կրնար ընել, զի հետապնդել օրինաւոր և պատուաւոր չէր, ելքն ալ բնաւ հաւանական չէր։ Իսկ կանխաւ հրաժարական հրատարակել բարեկամ անձերը վիրաւորել էր, և կերպով մը ինքզինքը ցուցադրել էր։ Սակայն առանձինն և մտերմաբար չէի վարաներ յայտնել՝ թէ կեղտկարծ և անհաւանական նպատակի համար պայքարիլ աւելորդ էր։ Ասով մէկտեղ ոչ միայն լրագրական յօդուածներով, այլև յատուկ տետրակներով իմ ընտրելիութիւնս պաշտպանողներ պակաս չէին։

Վերջին պայքարը պաշտօնապէս մղուեցաւ դեկտեմբեր 12|25ին ընտրելեաց քառանուն ցանկը քուէարկելու առթիւ, ուր իմ ընտրելիութեան աշխատողներ պնդեցին անունս քառանուն ցանկին անցունել, յուսալով անկէ ետքը դաղտնի քուէի մէջ շատեր իրենց կողմն ունենալ։ Բայց յաջողութիւն չունեցան, և ցոյցը կատարեալ ընելու միտքով քսանեւչորս եկեղեցական ու աշխարհական քուէարկուներ, Պարզեանց Սուքիաս եպիսկոպոսի գլխաւորութեամբ, ժողովը թողուցին ու մեկնեցան։ Ասոր վրայ անատոյգ կացութիւն մը կը ծագի, մեկնողներ կ'ենթադրեն ընտրողական գործողութիւնը խափանել, ուրիշներ կը կարծեն այս կերպով Դուրեանի ընտրութիւնը յաջողցնել։ Պետական ներկայացուցիչը մնացողներուն թիւը բաւական կը դատէ օրինաւոր ընտրութիւն կատարելու։ Դուրեանի ընտրութեան համաձայնութիւն ցուցնելով ներքին նպատակնին յաջողցնելու աշխատողներ վերջին պահուն իրենց յայտնած համաձայնութեան հակառակ կը քուէարկեն, և 13|26ի քուէարկութեան մէջ երկու առաջարկելիներէն Սուրէնեան, Դուրեանէ մէկ երկու քուէ աւելի ստանալով,

առաջին ընտրելի կ'ըլլայ, կայսերական որոշումն ալ այդ առաջ-ելութիւնը կը յարգէ, և 1912 յունիս 11|14ին Սուրէնեան կ'օծուի և Գէորգ Ե. կոչմամբ աթոռ կը բարձրանայ։ Ինծի համար գո-հունակութեան առիթ էր դարձեալ տաղտաղանքի և տագնապի չմատնուիլս, թէպէտ կրնայի յուսալ որ եկեղեցական բարեկար-գութեան համար կարևոր քայլեր առնելու պատեհ ունենամ, միշտ այն ուղղութեամբ որ իմ համոզումս է եղած, և զոր յա-տուկ հատուածով բացատրեցի (տե՛ս Հե)։ Իմ ուսումնասիրու-թեանցս մէջ զանազան կէտեր որոճացած եմ, գլխաւորապէս քա-հանայական դասակարգին բարձրացման, ամուսնական օրէնք-ներու ուղղութեան, տօնական և պահեցողական կարգերու կա-նոնաւորման, և առհասարակ եկեղեցական օրինագիրքի մը կազ-մաւորման շուրջը։

Գէորգ Ե. կաթողիկոս հասարակ կրթութեան և հասարակ կա-րողութեան տէր անձ մըն է, նախնական կրթութիւնը պետական և ոչ-ազգային վարժարանի մը մէջ առած, բայց ունի ունակական վարժութիւն Աթոռի գործերուն՝ երկարատև առաջնորդութեամբ, սինոդականութեամբ ու տեղակալութեամբ։ Միտքով անձուկ, կամքով տկար, գործով դանդաղ, շրջանակի ազդեցութեան հլ-պատակող, թելադրութեանց դիւրաւ համակերպող անձ մըն է Սուրէնեան, գործերը իրենց կայուն վիճակին մէջ վարելու յար-մար, և լաւ ու վատ առաջարկութեանց հաւասարապէս հետե-ւելու պատրաստական։ Եկեղեցական գործոց շարքին ըրած միակ նշանաւոր գործը՝ հարսանիքի արգիլեալ օրերը նուազեցնելու կոնդակն է։ Նախապէս Կ. Պոլսոյ Աթոռն ալ կարծիք յայտնելու հրաւիրուեցաւ, և Կրօնական Ժողովէ ուսումնասիրութեան Յան-ձնաժողով մը կազմուեցաւ, որուն ես ալ մասնակցութեան կան-չուեցայ, և պաշտօնական պատասխանն ալ ես գիրի առի, և կաթո-ղիկոսական կոնդակն ալ մեր գրութեան համաձայն կազմուեցաւ։ Գլխաւոր սկզբունքն եղաւ թէ հարսանիքի արգելքը պահոց օրերու պահանջից և տէրունի տօնից յարգանաց համար է հաստատուած։ Սակայն աւելորդ էր լուր օրերու տերունիները այդ աստիճանի բարձրացնել և կը բաւէր արգելքը միայն հրամայեալ և նախնա-կան տէրուններու վրայ ամփոփել։ Պահոց օրերէն ալ մեծ պահքի միջոցէն դուրս տօնի հետ կապակցած պահքերը կիսովի և կա-մաւոր կրնային նկատուիլ և արգելքի չենթարկուիլ, պահելով

միայն պաշտամամբ լրացած պահքերու օրերը ու արգելքը։ Այս կերպով կիրակիներէ եւ մեծ պահքէ դուրս քիչ օրեր կը մնային արգելքի ենթարկուած, իսկ կիրակիներուն համար ալ որոշուեցաւ եկեղեցական օրը նախընթաց երեկոյէն հաշուել ըստ նախնական սովորութեան, և կիրակիի երեկոյեանէն ետքը պատարագրութիւնը արտօնել։

Գէորգ կաթողիկոսին անունը ուելի հռչակ ստացաւ, երբ այս վերջին տարիները սկսաւ աստիկ յուզուիլ Հայկական Խընդիրը։ Սուրէնեան համակերպելով իւր կաթողիկոսարանի գործերուն գործիչներուն թելադրանաց, և ռուսական կառավարութեան ընդդրկած ուղղութեան, իւր ստորագրութիւնը չզլացաւ թղթակցութեանց և գրութեանց և յայտարարութեանց, որոց մէջ կը բացատրուէին գաւառացի տաճկահայ հասարակութեան տառապալից վիճակը, տաճիկ կառավարութեան պաշտօնէից կողմէ գործուած կամ թոյլատրուած անկարգութիւնները, և հայութեան դէմ բացուած հալածանքը՝ բանի տարապրութեանց և զրկանաց, յափշտակութեանց և սպանութեանց միջոցներով։ Ասով էջմիածնայ կաթողիկոսը օսմանեան կառավարութեան յայտնի թշնամի և զրպարտիչ նկատուեցաւ, և ատելութեան ու հակառակութեան առարկայ դարձաւ, և նոր կազմակերպական փոփոխութեան զօրութեամբ՝ Թուրքիոյ հայութիւնը Մայր Աթոռոյ իրաւասութենէն հանել հրամայուեցաւ, և քաղաքական իշխանութեամբ նորատեսակ կաթողիկոսութիւն մը ստեղծուեցաւ։ Այդ անցուդարձերու մէջ Սուրէնեանի անունը ոմանց կողմէն պարսաւուեցաւ և ոմանց կողմէ գովուեցաւ, իւրաքանչիւրին ըմբռնման և մտայնութեան համաձայն, բայց միշտ առանց Գէորգի գործնական և խոհական արժանեաց ոչ գովեստին և ոչ պարսաւին։ Տակաւին կը տեսէ Գէորգի անունին շուրջը այդ ներհակ ընդդէմ կարծիքը, և պիտի տեսէ ցորչափ շարունակեն աշխարհի վրայ համաշխարհական պատերազմին արհաւիրքը, և հայութեան վրայ չփոթ կացութիւնը և աղետալի տագնապը։

24

Դամասկոս, 1918 մարտ 8/21 Եշ.

Պատերազմի արհաւիրքը երեքուկէս տարիէ իվեր այնպէս ազդած է բոլանդակ աշխարհի վրայ, և պատերազմի ազէտները այնչափ ծանրացած են անխտիր ամէն երկիրներու մէջ, որ ամենուն բերանն է ոչ միայն համաշխարհական պատերազմին վերջանալը, այլև անգամ մըն ալ պատերազմին տեղի չունենալը, և նոյնիսկ պատերազմը զրգռողներ ու վարողներ ու երկընցընողներ կը փութան յայտարարել, թէ պատերազմ կ'ընեն պատերազմները իսպառ դադրեցնելու համար։ Այս իմաստով տեսութիւններ, կարծիքներ, առաջարկներ, ծրագիրներ, դաշնագիրներ ալ չարունակ երևան կուգան։ Թող ինձի ալ ներուի այդ նիւթին նկատմամբ տեսութիւններս պարզել, որչափ ալ նիւթը ինձի օտար և չրջանակէս դուրս ըլլայ, սակայն իբրև գիտական հարց ես ալ խորհած եմ անոր վրայ, և ըստ դիպաց կարծիքներ ալ յայտնած։

Իմ տեսութեամբ պարզապէս ինքնախաբութիւն (utopie) մըն է միտքի տեսութիւններով և սրտի զգացումներով պատերազմին վերջանալուն սպասել, իբրև թէ եղբայրական սկզբունքը, մարդկային զգացումը, մարդասիրական տեսութիւնը, հետևանքներու աղէտը, համասեռներու կապակցութիւնը, արդարութեան զօրութիւնը, բարոյական տեսակէտը, և ասոնց նման ուրիշ շատ մը մտածումներ պիտի կարենան վերջ տալ պատերազմներուն։ Ամենեն վայրագ գազանը մարդն է ըսուած է, իսկ ես սովոր եմ կրկնել՝ Շահն է աշխարհի շահնշահը, բացարձակ իշխանը, գերագոյն ազդակը, և ամենատէր բռնակալը։ Հետևաբար չեմ ուզեր և ոչ խօսքի նիւթ ընել բանաստեղծներու երևակայական թռիչները, քերթողներու վերացական գաղափարները և բարեմիտներու անավաստակ փափաքները։ Բանական տեսութիւնը չի կրնար զսպել մարդկային ձգտումը, երբոր խնդիրի նիւթ է իր շահը, և երբ կը զգայ իր զօրութիւնը։

Զորութեան դեմ իրաւունք արժէք չունի (Conbro la forza ragion non vale)։ Աշխարհի վրայ տեղի ունեցող առաջին հակառակութիւնը կամ վէճը, ինքնին երկիւղը և օգուտին փոփոխը բնական զօրութեամբ լուծուեցաւ. կայէն սպանութեամբ լուծեց Աբէլի դէմ զգացած հակառակութիւնը, թէպէտ երկուքը եղբայրներ էին; ո՞ւր մնաց ուրեմն արեան ձայնը, ո՞ւր իրաւունքի սկզբունքը, ո՞ւր սիրտի զգացումը։ Բիրտ ոյժի զօրութի՛ւնը նուիրագործուեցաւ, և ո՛չ իրաւունքի արդարութիւնը։ Այն օրէն մինչև այսօր նոյն է տիրող ընթացքը, և եղբայրասպան պատերազմներն են խնդիրներ լուծելու միջոցները։

Այլ սակայն եթէ ընթացքը իւր էութեան մէջ նոյն մնաց, իւր կերպարանին մէջ փոփոխութիւն կրեց. երկու ներհակ զօրութեանց վրայ երրորդ գերագոյն զօրութիւն մը սկսաւ իւր ազդեցութիւնը զգայնել, և ներհակընդդէմ պայքարները լռեցնել։ Հայր մը կրցաւ երկու զաւակներուն վէճը իւր ձայնովը վերջացընել. գերագոյն զօրութիւն մը երկու նուազ զօրութիւնները լռեցուց։ Այս փորձը իրեն յաջող հետևանքներ ունեցաւ, հայրական իշխանութիւնը կամ զօրութիւնը ընդարձակուելով նահապետական դարձաւ, նահապետականը իշխանականի փոխուեցաւ, իշխանականը թագաւորական եղաւ, թագաւորականը պայմանադրականի անցաւ, պայմանաւորականը օրինական կազմակերպուեցաւ, օրէնքը իւր որոշ օրէնքները ունեցաւ, և այսօր մարդկային ընկերութեանց մէջ օրէնքը գերագոյն զօրութիւն եղաւ, որով ոչ միայն անհատ անհատի, հանրութիւն հանրութեան, ընկերութիւն ընկերութեան, այլ մինչև իսկ անհատը իւր կառավարութեան դէմ օրէնքի զօրութեամբ իրաւունք պահանջելու և խնդիր լուծելու բաց ճանապարհ մը ունի իւր առջև։ Յառաջխաղացութիւնը մեզ կը հասցնէ տէրութիւն տէրութեան դէմ, կամ ուրիշ բացատրութեամբ, ազգ ազգի դէմ հանող խնդիրներուն լուծման ոյժը փնտռելու։ Բայց այդ լուծման ներքին իսկութիւնը փնտռելու չմտած, հարկ է մէկ երկու օժանդակ կէտեր բացատրել։

Առաջին յիշեցնելիքնիս այն է, որ ամէն շրջանակի մէջ ծագած խնդիրներ, թէպէտ միշտ շահու տեսակէտէն կը յուզուին, սակայն իրենց բնութեամբ երկու տեսակ են. մէկուն մէջ պարզ նիւթական շահն է խնդիրին առարկայն, հաշուական ձև ունե-

ցող, չափի և թիւի պայմանով յուզուած, քանակի և որակի տարբերութենէն բղխած, և աւելիի ու պակասի վէճով արծարծուած։ Իսկ միւսը անձնական ըմբռնումէ մը, մեծութեան ձըգտումէ մը, պատուոյ զգացումէ մը, ազդեցութեան առաւելութենէ մը, գործունէութեան ապատութենէ մը, կամ վնաս խափանելէ մը, կամ ուրիշ նմանօրինակ բնական ու բանական տեսակէտէ մը բղխած է, արտաքին պարագաներու չափէն ու թիւէն կախում չունի, և ամենափոքր պատահարէ մը ամենամեծ պահանջ կը զարթուցանէ։ Այդ երկու տեսակէտներուն առաջին յիշածնիս անտեսական է, իսկ երկրորդը քաղաքական կը կոչենք, առաւելապէս տէրութիւն տէրութեան դէմ պարագային վրայ հիմնուելով։

Միւս նախագիտելիքն է որ օրինական գերագոյն զօրութեան գործնական վիճակի անցնելուն համար երեք տարրներ անհրաժեշտ են. առաջին՝ որոշ ու յատուկ և օրինագիրքի մէջ ընդունուած և զօրութիւնը ամբողջ պահած օրէնք մը, երկրորդ՝ օրէնքը մեկնեցնող, խնդիրը վճռող, և գործադրութեանը կարող իշխանութիւն մը, և երրորդ՝ դատախազ և դատափետ կողմերուն չափուած ու ձևուած, որոշուած ու ճանչցուած անհատականութեամբը (individualité)։ Անհատականութիւնը բնական (naturelle) կը կոչուի, երբոր որևէ մարդկային անհատի մը վրայ է խօսքը, բարոյական (morale) կ'անուանուի՝ երբոր որևէ կազմակերպուած և օրինաւորապէս ճանչցուած ընկերութեան կամ մարմինի մը վրայ կը խօսուի. քաղաքական (politique) պիտի կոչէինք՝ երբոր խօսքը տէրութեան մը կամ ազգի վրայ դառնար, ինչ որ մինչև հիմայ տեղի ունեցած չէ, իսկ պատերազմները դադրեցնելու համար անհրաժեշտ պահանջ է։

Նախագիտելիքներու երկու դլուխները իրարու միացուցած ատեննիս, յայտնի է որ բնական անհատականութիւնը ունի իրեն համար պետական օրինագիրքը և դատական իշխանութիւնը՝ թէ անտեսական և թէ քաղաքական խնդիրներուն համար, և անոնց ձեռքով կրնայ ստանալ իր իրաւունքին պաշտպանութիւնը և պաշտպանութեան իրականացումը և անիրաւ հակառակորդին զսպումը։ Իրեն առջև բաց է նաև կամաւոր ատեանի (arbitrage) միջոցը, երբոր երկու կողմեր համաձայնին խնդիրը լուծելու կոչուած անձերու վրայ, անոնց խիղճին և ընդհանուր

արդարութեան սկզբունքին տալով օրէնքին ոյժը, և կամաւոր յանձնառութեամբ լրացնելով գործադրութեան մասը։

Ինչ որ կը նշմարուի բնական անհատականութեան վրայ, նոյնութեամբ կը պատշաճի բարոյական անհատականութեան վրայ, որ այս տեսակէտին ներքև բնաւ չի տարբերիր բնական անհատականութենէ, միակ պայման ըլլալով որ բարոյական մարմինը օրէնքէ և իշխանութենէ հաստատուած ըլլայ, իւր կազմակերպութեան պայմանները որոշուած և ճշդուած ըլլան, և բարոյական մարմինին անունին գործը վարող անհատականութիւնները պարտուպատշաճ ընտրութեամբ և հաստատութեամբ արտօնուած ըլլան։ Օրէնքներն ու դատարանները միևնոյններն են, այլ պիտի զատորոշուին՝ համաձայն բարոյական մարմինի հպատակութեան և գործին տեղւոյն տարբերութեան։ Բարոյական մարմիններուն համար աւելի յաճախ և աւելի դիւրամատոյց է կամաւոր ատեաններուն եղանակը, քանի որ շատ կէտեր անոնց համար կամաւոր պայմանագրութեամբ հաստատուած են։

Այժմ գանք մեր բուն նպատակին, այսինքն քաղաքական անհատականութեանց, տէրութիւն տէրութեան և ազգ ազգի դէմ հանող խնդիրներուն։ Եթէ ասոնց խնդիրները պարզ տնտեսական են դիւրաւ կրնան լուծուիլ կամաւոր ատեաններու ձեռքով, մինչև որ օրինական և հաստատուն ատեաններ կարենան կազմուիլ։ Լա Հէյի (La Haye) ատեանը տակաւին կատարեալ կերպարան մը չառաւ։ Վերջին տարիներու մէջ փորձով տեսանք Եւրոպայոյ մեծ տէրութեանց Ամերիկայի փոքր հանրապետութեանց հետ կամաւոր ատեանի առջև դատուիլը, և մեծ տէրութեան անիրաւ վճռուած ատեն յօժարութեամբ համակերպիլը։ Ըսել է որ տնտեսական խնդիրներ դատարանով լուծելու կերպը սկսած է, և շարունակելով աւելի կանոնաւոր և աւելի ընդհանրացեալ ձև մը կրնայ ստանալ, և այդ երեսէն ծագելիք պատերազմները կրնան խափանուիլ։

Բոլոր խնդիրը կը կեդրոնանայ ուրեմն քաղաքական անհատականութեանց քաղաքական խնդիրով իրարու դէմ պայքարի մտնելնուն վրայ։ Քաղաքական շահը հնար չէ ո՛չ չափել և ո՛չ որակել։ Ըմբռնման և զգացման հետևանք է անոր կարևորութիւնը, և իրարու հանդէպ բռնուած դիրքին, ստացած առաւելութեան, ապագայ հնարաւորութեան, փորձառական կամ երե-

ւակայական գնահատումներու արդիւնք է տրուած արժէքը, և անոր հիմամբ ընտրուելիք ընթացքը, արգիլուելիք վնասը, ձեռք ձգուելիք օգուտը։ Այս մասին ո՛չ պատճառաբանութիւն, ո՛չ կշռադատութիւն, ո՛չ խոհականութիւն իրական արժէք չունին. կիրքն է որ կը յուզուի, ձեռնարկ մըն է յանկարծ ի՛ըլլայ, և անգամ մը նեաը աղեղէն արձակուելուն պէս՝ այլևս ետ չի դառնար, ինչպէս եղաւ ներկայ համաշխարհական պատերազմը։

Արքայազարմ իշխան մը աւստրիական հողի վրայ սերպիացի անչափահաս երիտասարդէ մը կը սպաննուի. Աւստրիա Սերպիոյ թագաւորութեան բողոք և պահանջ կ'ուղղէ, Սերպիա մինչև ատիճան մը պահանջը հաճեցնելու կը զիջանի, Աւստրիա զիջումը տեսնելով պահանջը կը սաստկացնէ, Սերպիա չկարենալով մինչև հոն զիջանիլ՝ դժկամակութիւն կը յայտնէ, Աւստրիա պատերազմի ռումբը կ'արձակէ, Սերպիա կը ստիպուի պատասխանել, Ռուսիա իւր պաշտպանեալը չ'ուզեր անօգնական թողուլ, Գերմանիա իւր նիզակակից Աւստրիոյ օգնութեան կը հասնի, Գաղղիա իւր նիզակակից Ռուսիոյ օգնելու կը շարժուի, Գերմանիա Պելժիոյ չէզոք հողէն Գաղղիոյ վրայ կը քալէ, Պելժիա անձնապաշտպանութեան կը ստիպուի, Անգղիա չէզոքութեան իրաւունքի և դաշնագիրի անարգուելուն վրէժխնդիր կը յայտնուի, Թուրքիա իւր նիզակակից Գերմանիոյ հետևելու կը ստիպուի, Իտալիա իւր շահերուն անտեսուելուն համար դաշնակիցներէն կը բաժնուի և թշնամի կը դառնայ, և ահա պատերազմը համաերկրականի կը փոխուի, և վերջէն ուրիշ տէրութեանց ալ աւելնալովը համաշխարհականի կը վերածուի։ Այդ ահեղակի ժխորին արմատը իշխանի մը սպանութիւնն է, որևէ մարդասպանութեան պէս տեղական եղեռնագործ ատեանով վերջանալիք դիպուած մը։ Բայց այս երևցածն է։ Բուն իսկութիւնը Գերմանիոյ քառասուն տարիէ իվեր զինուորականութիւն զօրացնելով, և ամէն կողմ տարածուիլ և ազդել ուզելով՝ խրոխտանալու սկսիլն է, և իւր նպատակին ոյժ աւելցնելու համար առիթի սպասելն է, մինչ միւս տէրութիւններ դիւրութիւն և ասպարէզ տալու մտադիր չէին։ Ահա՛ քաղաքական անհատականութեանց քաղաքական շահը, որ ինչպէս ասկէ առաջ կ'ըլլար, և ասկէ ետքն ալ պիտի ըլլայ, ո՛չ սիրտի զգացումներով կ'արգիլուի, ո՛չ դատարանով կը լուծուի, ո՛չ իրաւունքի հիմամբ կը պարզուի։ Բիրտ ոյժն է

չարժող և շարժուող ազգակը որ առջև կ'անցնի իրաւունքի պատրուակով իրաւունք ոտնակոխելու։

Որպէսզի առանց բիրտ ոյժի քաղաքական կնճիռներու այդ ճիւղն ալ կարենայ լուծուիլ, պէտք է որ այս ալ ունենայ իւր օրինագիրքը, իւր դատական իշխանութիւնը, և իւր ճշդուած անհատականութիւնները։ Այն ատեն միայն, ինչպէս բնական անհատ մը անպատիժ կերպով ուրիշին կեանքը վերջացնել և ըստացութիւնը գրաւել չի կրնար, և ինչպէս բարոյական անհատականութիւն մը չի կրնար ուրիշ բարոյական անհատականութեան մը ապարէզը համարձակօրէն ինքն գրաւել, նոյնպէս ալ հնար չըլլայ քաղաքական անհատականութեան մը ուրիշ քաղաքական անհատականութեան երկիրը մտնել, ստացութիւնը սեպհականել, կացութեանը վնասել, գոյութիւնը վերանպել։ Այս նպատակին համար օրինագիրքի մը կազմութիւնը անհնար չեմ տեսներ, վասնզի վերիվերոյ իրաւունքի սկզբունքները նոյն են, և միայն ընդարձակութեամբ և պարագաներով կը տարբերին։ Դատական իշխանութեան մը կազմութիւնն ալ անհնար չեմ նկատեր, զի կամաւոր ատեաններու դրութեամբ հնար է երիցագոյն և ազդուագոյն տէրութեանց ներկայացուցիչներէն բարձրագոյն արիսպագոս մը հաստատել, որոշեալ պայմաններով հաւաքուիլ և վճռել, և վճիռը բոլոր տէրութեանց ազդեցութեամբ գործադրել։

Իմ տեսութեամբ բուն խնդիրը և անլուծելի հանգոյցը երրորդ արտայայտիչ պայմանն է. քաղաքական անհատականութեանց որոշումն ու կազմութիւնը, կամ որ նոյն է՝ անոնց գոյութեան պայմանները։ Խնդիր է թէ ինչո՞վ քաղաքական անհատականութիւն մը պիտի որոշէ իր սահմանները, իր պարունակութիւնը, իր միութիւնը, իր գոյութիւնը։ Որո՞նք պիտի ըլլան միութեան պայմանները, մինչև ո՞ւր պիտի տարածուին ինքնուրոյն վարչութեան կամ ազատ տէրութեան պահանջները։ Մինչև հիմայ այդ մասին նախընթաց մը չէ եղած, ըլլայ իսկ թերի և անկատար, որ կարենար իբրև նմոյշ ծառայել, և դնելով վերցնելով, աւելցնելով ու յապաւելով, կատարելագոյն ձևի վերածուէր, հետևաբար ամենայն ինչ պէտք է ի նորոյ ստեղծուի, խորհուի և գործուի։

Ընկերվարականութիւնը (Socialisme), որ կը յաւակնի նոր դա-

բուն աւեստարանը դառնալ և մարդկութեան բոլորովին նոր ձեւակերպութիւն մը տալ, մէկդի թողլով իր անխորհուրդ և յախուռն ձեռնարկները, երկու կէտ այժմ կը պաշտպանէ իբրև հիմնական սկզբունք և հին աշխարհը յեղափոխելու միջոց, որոց այժմեան տէրութիւններն ալ կամաց կամաց կը մօտենան։ Այդ երկուքներն են՝ մնայուն զինուորականութիւնը ջնջել, և փոքր ազգութեանց իրենց բախտն ու կառավարութիւնը որոշելու իրաւունք տալ։ Սակայն երբոր մնայուն զինուորականութիւնը կը վերցուի, զէնքն ալ չի վերցուիր, այլ զինեալ ազգութեան ծրագիրը կը ներկայացուի։ Ամէն քաղաքացի զինավարժ պիտի ըլլայ, կազմութիւններ ու բաշխումներ և հրամանատարութիւններ որոշուած պիտի ըլլան, զէնքերը կեդրոնի մը մէջ պիտի պահուին, և երբ պէտքը յայտնուի, ամէն քաղաքացի պարտաւոր պիտի ըլլայ զէնք առնել ու ճակատ երթալ և հրամայեալ տեղը հրամայեալ գործը կատարել։ Չեմ յիշեր որ կանանց ալ յատուկ զինուորական ծառայութիւններ որոշուած ըլլան, բայց այս ինչ ստոյգ է, որ այս կերպով զինուորականութիւնը ոչ թէ կը ջնջուի, այլ կը տարածուի և կը զօրանայ. արդէն այս է այսօր Գերմանիոյ վրայ տեսնուած զինուորական օյժին աղբիւրը։ Գերմանական օրէնքով ամէն արու՝ նախակրթարանէն սկսելով՝ մարզանք կը ստանայ, և չափահաս եղած ատեն արդէն պատրաստուած զինուոր է, և պաշտօնէն ու գործարանէն, արտէն ու կըրպակէն կոչուած ատեն իբրև վարժ զինուոր գործի կը ձեռնարկէ։ Հետևաբար չեմ կարծեր որ այս առաջին պայմանով զինուորականութիւնը ջնջուի և պատերազմը դադրի։

Գալով երկրորդ կէտին, որ է փոքր ազգութեանց իրենց կացութիւնը որոշելու իրաւունք տալ, կամ ուրիշ բառով քաղաքական անհատականութիւն տահմանել, չեմ գիտեր ի՞նչպէս պիտի որոշուին փոքր ազգութիւնները, մինչև ո՞ւր պիտի իջնայ փոքրկութեան չափը, ո՞ր յարաբերութեամբ պիտի կազմուին ազգութիւնները. աւանդութեա՞մբ, արիւնո՞վ, լեզուո՞վ, կրօնքո՞վ կամ թէ կամաւոր ընտրութեա՞մբ. մինչև ո՞ւր պիտի յարգուի նախագրաւման (prescription) սկզբունքը, ի՞նչ արժէք պիտի ունենայ երկարատև տիրապետութիւնը, ի՞նչ վիճակ պիտի ունենան ցրուեալ գաղթականութիւնները, ինչո՞վ պիտի ոչնչանայ ազգի մը գոյութեան իրաւունքը. վերջապէս չատ մը ևս այս

տեսակ պատճառներ։ Խօսքը աւելի պարզելու և միտքը լաւ ևս յայտնելու համար օրինակով խօսիմ, և օրինակը մեզի մօտ տեղերէն առնեմ։ Հայը ամենէն փոքր ազգութիւն մը նկատուած է արդէն և իր բախտը որոշելու իրաւունք տալ կը խօսուի. ո՞վ պիտի ըլլայ այդ իրաւունքը վայելող հայը, ո՞ւր է այդ իրաւունքը վայելող հայուն տեղը։ Եթէ հայաբնակ կամ Հայաստան կոչուած օսմանեան նահանգներ միայն պիտի առնենք, անոր չատ կողմերը Քիւրտերն ալ կան, Միջագետքի մէջ Արաբացիներ և Ասորիներ, Վանայ կողմը Քաղդէացիներ, Սեբաստիոյ կողմերը Թուրքեր, Տրապիզոնի կողմը Լազեր և ցրիւ գտնուող Եգերացիներ։ Միթէ հայ չէ՞ն ռուսական նահանգներու մէջ գտնուող երկու միլիոն Հայերը, միթէ հայ չէ՞ն պարսկական գաւառներու մէջ ապրող մօտ հարիւր հազար Հայերը, հապա Փոքր Ասիոյ, Կոստանդնուպոլսոյ, Պուլկարիոյ, Եգիպտոսի և Ամերիկայի մէջ գտնուողնե՞րը։ Ասոնք իրենց բնակավայրի՞ն վրայ պիտի հաշուուին թէ Հայաստան տէրութեան բացակայ քաղաքացիներ պիտի սեպուին։ Վրացիներն ալ փոքր ազգ մըն են, բայց իրենց գլխաւոր քաղաքները Հայերով լեցուած են և հայ ազդեցութիւն կը կրեն։ Հա՞յը վրացի պիտի սեպուի, թէ վրացին հայ։ Լեհաստան մը կազմուեցաւ իբրև փոքր ազգութիւն, բայց Աւստրիոյ Կալիցիան անոր չխառնուեցաւ, Բրուսիայի Բոզէն և Կնէզէնը լեհ չհրատարակուեցան։ Օրինակները շատ ևս կրնայի յիշել, այլ զանց կ'ընեմ։ Հետևութիւնը այս է, թէ աւելի քան ազգութիւնը՝ պէտք է երկրի բաժանումը պնդել, և որոշ սահմանի մը մէջ գլխաւոր և ուանդական տեղը նկատի առնել, բայց այն ատեն ալ ծանր խնդիրներ պիտի ծագին երկիրներու բաժանմանց սահմանները ճշդելու ատեն։

Ամէն պարագայի մէջ պէտք է միանգամընդմիշտ գորդեան հանգոյցը աղեքսանդրեան սուրով մը լուծել, և գործնական ուղղամտութեամբ տրամաբանական ու քաղաքագիտական պահանջից համաձայն պայմաններ հաստատել, որպէսզի վերև ակնարկուած քաղաքական անհատականութիւնները հաստատուին, եւ քաղաքական շահու խնդիրները ամուր կուռան գտնեն, և բնական ու բարոյական անհատականութեանց նման հաստատութիւն ունենան, օրէնքով պաշտպանուած և իրաւունքով ճոխացած անհատականութիւններ դառնան, անձիտնմխկի գոյութիւնին ա-

պահովուի, պայքարները անպտուղ և ապարդիւն դառնալով լը-
ռեն, և պատերազմներու նպատակը ջնջուելով դադարին ու վեր-
ջանան։ Եթէ շահը շահով մը չզսպուի, ոչ մի այլ ոյժ կամ փաստ
կամ մտայնութիւն կամ զգացում չի կրնար բիրտ ոյժով ձեռք
ձգուելիք նպատակները անհետացնել, և Աքէլներու վրայ յարձա-
կող Կայէնները աշխարհի վրայէն վերցնել։

Վերև յիշած գործնական և տրամաբանական և քաղաքա-
գիտական պայմանները զտել զատել և հաստատել, գիտեմ որ
ոչ մէկուն կամ մէկալին գործն է, և ոչ դիւրաւ որոշուելիք
ձեռնարկ է, այսու ամենայնիւ կ'ուզեմ այստեղ քանի մը կէտեր
առաջ բերել, գոնէ իմ մտաւորական աշխատութեանս և ուսում-
նասիրութեանցս արդիւնքը յայտնած և հաղորդած ըլլալու հա-
մար։ Եւ ահա՛ իմ խոհքերուս համառօտ ամփոփումը։

Քաղաքական անհատականութեան կամ ազգութեան մը կազ-
մութեան արտադրիչները ցեղական ծագման և սեպհական երկ-
րամասի կէտերն են։

Երկու կէտերն ալ դարերու ընթացքով պատահական յաւե-
լումներու կամ յապաւումներու ենթակայ են։

Ազգութեան մը գոյութիւնը չի կրնար պաշտպանուիլ, երբ
իւր երկրամասէն օտարացած է և ցեղական տարրը միլիոնի մը
չի հասնիր։

Փոքր ազգութիւն է այն՝ որ գոնէ մէկ միլիոն անհատ ու-
նի, մեծ է տասը միլիոնէ, և երիցագոյն է քսանուհինգ միլիոնէ
աւելի անհատ ունեցողը։

Ազգութիւն կազմելու պայմաններ են՝ պատմական գոյու-
թիւն, քաղաքական կեանք, և քաղաքակրթեալ տէրութիւն ու-
նեցած ըլլալը։

Էական պայման է սեպհական դպրութիւն և գրական կեանք
ունեցած ըլլալը և տակաւին զայն պահելը։

Բիրտ ոյժով տիրապետութիւնը իրաւունք չ'արտադրեր, երբ
ցեղական ձուլման, նիւթական յառաջդիմութեան, բարոյական
զարգացման և քաղաքական բարգաւաճման առաջնորդած չէ։

Ազգութեան մը բնական անհատներ են ծագմամբ ու յարաբե-
րութեամբ անոր հետ կապուածները. լեզուի կիրառութիւնը էական
պայման չէ. կրօնքի տարբերութիւնը բացասական պայման չէ։

Կազմուելիք ազգութեան մը ձայնատու են ցրուած անհատ-

ներն ալ, որոնք կեդրոն դառնալու կամ կեդրոնին հետ կապուելու պատրաստ են։

Կազմուած ազգութեան մը կրնան պատկանիլ անոր երկրին մէջ ծնածները, և հինգ տարի իրական և տեւական բնակութիւն ունեցողները, եթէ կ'ուզեն այդ պայմաններէն օգտուիլ և իրենց նախնականէն հրաժարիլ։

Կազմուած ազգութեան մը պատկանող բայց ուրիշ տէրութեանց ներքև գտնուող մասերը, պէտք է առանց դժուարութեան նոյն ազգութեան թողուին ու կցուին։

Ազգութեանց գերագոյն արիւապագը կը կազմուի երիցագոյններէն և մեծերէն և փոքրներէն նշանակուած չորս չորս անդամներով. մասնակցութեան տեւողութիւնը տարեկան է, և շարքը նախակարգեալ յաջողութեամբ կը կարգադրուի։

Նախագահութիւնը վեցամսեայ է և ընտրական, և պարզ ատենապետական գործողութենէ աւելի դեր չունի։

Իւրաքանչիւր խնդիրի դատավարութեան առթիւ, դիմամարտ դատախազներ իրաւունք ունին շահակից և կասկածաւոր ազգութեանց և ներկայացուցիչներու անձնականութեանց դիտողութեամբ փոխանակողներ պահանջել։

Դատավարական ձևերը ընդհանուր սովորութեամբ ընկալեալներու հետևողութեամբ կը պահուին։

Գերագոյն արիւապագին պաշտօնական մարմինը տարբեր տարբեր ազգութիւններէ պիտի առնուի, արիւապագին ազատ ընտրութեամբ։

Գերագոյն արիւապագը պիտի գործէ որևէ ազգութենէ կամ տէրութենէ անկախ և ուղղակի ժողովին իշխանութեան հպատակող քաղաքի կամ ուանի կամ դղեակի մը մէջ։

Ծագումով ազգութեան մը պատկանող անհատներ ազատ կերպով ուրիշ ազգութեան և տէրութեան կրնան պատկանիլ կամ անցնիլ, երբոր միլիոնէ պակաս տարրի մը, կամ էական պայմանները չլրացնող տարրի մը կը պատկանին, և կամ պարզապէս ուրիշի մը անցնիլ կ'ուզեն։

Ընդունուած է երիցագոյն և մեծ և փոքր ազգութեանց դաշնակցական կապակցութիւնը դիւանագիտական յարաբերութեանց, ընդհանուր շահերու միացմանց, բարգաւաճման միջոցներու դիւրութեանց և իրերապաշտպան կապակցութեանց նպատակակէտներով։

Ազգութեանց կամ տէրութեանց անձեռնմխելիութեան դէմ մեղանչողներ գերագոյն արիսպագին վճռով և երիցագոյն ու մերձաւոր տէրութեանց ձեռքով կը զսպուին, հատուցմունք և տուգանք գերագոյն արիսպագէն կը վճռուին, եթէ փոխադարձ հաւանութեամբ չեն կարգադրուիր։

Քաղաքական անհատականութեանց քարտէսի մը կազմութիւնը անհրաժեշտ է, ինչպէս բնական անհատականութեանց ազգահամարը, և բարոյական անհատականութեանց արձանագրութիւնը։

Ամփոփումս թէև շատ թերի և զտուելու ու շտկուելու կարօտ, դոնէ կրնայ իմ միտքս յայտնել, և ուրիշներու միտքը բանալ։

Այսուհետև կ'ուզուին ցարդ մտածած ու մտադրած նիւթերս, և մինչև որ նոր մտածումներ, նոր նիւթեր զարթուցանեն, կ'ուզեմ միջանկեալ կերպով նախնիքներուս, ծնողքներուս և ազգատոհմիկներուս վրայ փոքրիշատէ տեղեկութիւն տալ, իմիններով զիս ճանչցնելու նպատակով։ Կը փափաքէի ազգային ընդհանուր կացութեան վրայ տեղեկութիւններ տալ և տեսութիւններ պարզել, սակայն հարկ էր հաստատուն և սեռական կրուանի մը վրայ գտնուիլ, մինչ այսօրուան օրս երերեալ և տատանեալ վիճակի մը մէջ կը գտնուինք, և սպասելու հարկ կը ծագի։

ՁԸ

Դամասկոս, 1918 Մարս 9/22 Ուր.

Նախնիքներուս վրայ ծանօթութիւններս գարերով վեր չեն բարձրանար, եւ պիտի բաւականանամ լսածովս ու միտքս պահածով։ Սակէ իբր 130 տարի առաջ Ռոտոսթօ կամ Թէքիրտաղ կը գտնուի եղեր Տէլիօրմանլը Յովհաննէս, Դանուբի հարաւային եկերքը Տէլիորման գաւառէն եկած, առոյգ երիտասարդ մը, բուռն և հուժկու, որ իրեն բնաւորութեան յարմար կը գտնէ Եէնիչէրի գունդին մէջ զինուորագրուիլ, ինչ որ այն ատեններ քրիստոնեայ կամաւորներու ալ ներեալ էր, եւ այդ անուանին ներքև համարձակ ու ազատ կեանք անցուցնել։ Ազգով հայ, կրօնքով

հայադաւան, ծագմամբ ալ պէտք է պատկանի Անեցի կոչուած Բագրատունեաց ժամանակի գաղթականութեանց, որոնք Սեւ Ծովի հիւսիսէն պատելով և տեղ տեղ բաշխուելով՝ աւելի առաջ անցնողներ մինչեւ Դանուբի գետեզերքները հասան։ Յովհաննէս 1785ին կ'ամուսնանայ, եւ նոր փեսայութեան մօտ օրերը դաւաճանութեամբ կը սպաննուի իւր զինուորակիցներէն, որոց վրիժառութեան առարկայ եղած է եղեր իւր բուռն և ահացուցիչ գործերով, դուցէ և յաջողակութեան նախանձով, և կրօնական տարբերութեամբ։ Նորապսակ այրին յղի վիճակի մէջ մայրաքաղաք կ'ապաւինի, եւ Թընկրեանց տունը պատսպարան կը գտնէ, կ'աշխատի և կը խնամուի, ուր և 1786ին զաւակը կը ծնի, որ թէպէտ Ղալաթիոյ Ս. Լուսաւորիչ եկեղեցին կը մկրտուի Աստուածատուր անունով, այլ մայր և տղայ հռոմէադաւան ուղղութեան կը հետեւին, որուն կը պատկանէր Թընկրեանց գերդաստանը, իրենց ասպնջական տունը։ Այս պարագաներով հայրական պապենական ճիւղէն բնաւ ազգակից ու մերձաւոր չունինք, զի Յովհաննէս Ռոտոսթոյի մէջ պանդուխտ է եկած, այն տեղ հետք չէ թողած, ինչպէս ստուգած եմ Ֆէսլեան Սրխատակէս ծերունի աւագերէցէն, իսկ Տէլիօրմանի կամ Վիտին քաղաքի մէջ բնաւ յիշատակութեան չեմ հանդիպած։

Աստուածատուր կ'երեւի իր հօրմէն արիւն քաշած է, զոր երբեք ճանչցած ալ չէր, զի երիտասարդութեան ատեն ինքն ալ ծովակալութեան նաւապներու (գալէոնճոս) գունդին կ'արձանագրուի, ազատ ու համարձակ կեանք կը վարէ, բայց տակաւ հանդարտելով՝ դերձակութեան կը հետեւի, միշտ ծովակալութեան (ՆԷչանէ) ծառայելով, ուր մինչեւ ձեւոդ կարող վարպետի (մաէսթրօ) աստիճանին կը բարձրանայ։ Քանըհինգ տարեկան եղած ատեն 1811ին Կ. Պոլսոյ մէջ կ'ամուսնանայ Տալիթա Եէնիսէրքիսեան օրիորդին հետ, գուստր Անկիւրացի ցփսիավաճառ Սարգիսի, որ Անկիւրիոյ հռչակաւոր այծեմազ ցփսիներու («ոֆ) առեւտուրով և ընտանեօք մայրաքաղաք փոխադրուած էր. բայց Սօֆճուխանին մէջ նախապէս ուրիշ Սարգիս մըն ալ եղած ըլլալով, Եէնի-Սէրքիս (Նոր-Սարգիս) մակդիր կոչմամբ կը սկսի որոշուիլ։

Աստուածատուրի և Տալիթայի զաւակներ եղած են աղջիկ մը վաղամեռիկ, Յովհաննէս՝ եւրոպական դերձակութեան հետեւող և ամուրի մեռած 1881 ապրիլ 27|9 մայիսին, Անտոն որ հայրս

է, և Միքայէլ ամուսնացեալ և զաւակաց տէր և եղբօրը Յովհաննէսի արհեստակից ընկեր։ Հայրս եղած է որ ընտանեկան ոտոչ տոհմանուն մը ունենալու փափաքով՝ իւր մեծ հօրը Տէլիօրմանը մականունը Օրմանեան ձեւին վերածելով՝ հաստատուն տոհմանուն մը յատկացուցած է մեր ազգատոհմին։ Ինչպէս կը տեսնուի Օրմանեան տունէն միայն Միքայէլի զաւակները ունինք իբր ազգական. իսկ Եէնիսէրքիսեանց ճիւղէն ազգակցութիւնը բաւական ընդարձակուած է։

Մօրենական կողմէն Միասէրեան գերդաստանին կը պատկանիմք, քնիկ Անկիւրոյի և հռոմէադաւան, որուն մասին դիւանական գրութեանց մէջ հանդիպած եմ, թէ չուրջ 1735ին Միասէր օղլու Օքսէնտ Կաֆայէ Անկիւրիա գաղթած և ազգատոհմին արմատն է եղած։ Ինչպէս յայտնի է, Կաֆայի հայութիւնն ալ Բազրատունեաց գաղթականութեամբ կազմուած է, որով երկու կողմէն ալ միեւնոյն բնագաւառի սերունդին պատկանած կ'ըլլամ։ Չեմ կրցած ստուգել թէ Օքսէնտ Միասէրեան արդէն հռոմէադաւա՞ն Կաֆայէ եկած է, թէ ոչ Անկիւրիոյ կրօնափոխութեան առթիւ հռոմէադաւանութիւնը ընդունած է։ Օքսէնտի թոռ կամ թոռնորդի կը կարծեմ Պետրոս Միասէրեան՝ մօրենական մեծ հայրս, Անկիւրիա մնացած չուրջ 1790ին, դերձակութեամբ զբաղած, և այնտեղ 1817ին պսակուած՝ 1798ին ծնած Վերոն Պալեանի հետ, որուն նախնեաց վրայ տեղեկութիւն չեմ կրցած քաղել, բայց Պալեանք ալ Անկիւրիոյ լաւ տուներէն մէկն են եղած։ Պետրոս և Վերոն զաւակներ ունեցած են, բայց շատ վաղամեռիկ եղած են, Սլիքման մանչ մը երիտասարդ տարիքին ամուրի վախճանած է, իրենց զաւակներէն միայն մայրս Եղիսաբէթ ապրած է, որով այս կողմէն ալ մօտիկ ազգականներ չեմ ճանչցած։ Միասէրեան էր Հայր Միքայէլ, Անտոնեան միաբանութենէն, Պետրոսի հօրեղբօրորդի մը, ինչպէս նաև Հայր Ռափայէլ աբբահայր, Հայր Միքայէլի եղբօրորդի, երկուքն ալ միաբանութեան ուսումնական վարդապետներէն, որոց աշակերտած եմ Հռոմի վանքին մէջ։ Պալեան տունէն ճանչցայ միայն Էմմանուէլ վարդապետը, Վերոնի եղբօրորդի, որ հռոմէադաւանութենէ Հայ Եկեղեցւոյ վարդապետ եղաւ, և յետոյ այն ալ լքելով ամուսնացաւ, և փոխկառավարիչի (գայմագամ) պաշտօն վարեց գաւառներու մէջ։ Նախնեաց վրայ աւելի տեղեկութիւն չունիմ, և կ'անցնիմ ծնողաց։

Հայրս Անտոն ծնած է 1817 Կաղանդի գիշերը, յունվար 1|13 ին, եւ Ղալաթիոյ Ս. Լուսաւորիչ եկեղեցին մկրտուած յունուար 4|16ին։ Տղայութեան տեսն՝ 1825ին՝ կ'աշակերտի լատին վեղարաւոր Փրանկիսկեանց (Franciscani couventuali) Բերայի Ս. Անտոն (Sant Antonio) վանքի դպրոցը, և քաղցրաձայն ըլլալով՝ երգեցողութեանց կը մասնակցի և Իտալերէն լեզուի կ'ընտելանայ։ Հռոմէադաւանները 1828ին Կ. Պոլիսէն հեռացուելուն առթիւ նոյն վանքին մէջ գիշերօթիկ կը մնայ, եւ 1829 մայիսին Դաղմատացի Ճիովանի Պրաթիչ (Giovanni Bratic) նաւապետ մը իբրեւ որդեգիր թրիէսթէ կը տարուի, այլ սակայն նաւապետին կինը չի հաճիր ամուսնոյն ըրածին և տղան կը նեղէ, որ ճարահատ Կ. Պոլիս դառնալ կ'ուզէ, և նաւապետը կը դարձնէ 1830ին երկու երիք ամիս առագաստանաւի ճամբորդութեամբ թէ երթալուն եւ թէ գալուն։ Իտալերէնի հմտութեամբը Կ. Պոլսոյ մէջ անմիջապէս դեղագործութեան կ'աշակերտի լատին Թոտորաքիի դեղարանը, մինչեւ որ տրհնտին տիրանալով՝ 1836 ին դեղագործ Մաղաք Փսիլազեանի հովանաւորութեամբ սեփական դեղարանի տէր կ'ըլլայ Սատմպոլ քաղաքամէջը, Մարբուճճուլար փողոցը, Եարըմ խանի ներքեւը։ Անկէ ետքը՝ 1838 փետրուար 12|24ին կը նշանուի Եղիսաբեթ Միասէրեանի հետ, և 1839 յունվար 22|3 փետրուարին կը պսակուի Բերա, Լալէ փողոց, հօրը տունին մէջ։ Քիչ ետքը ապրիլի մէջ տունը կ'այրի, և Այասփաշա տաճկաբնակ փողոցի մէջ տուն մը կը փոխադրուին, ուսկից հայրս ու մայրս կը գաղտուին և կը բընակին Բերա, Եօղուրթհանէ փողոց, յետոյ թիւ 9 կարգաթիւով նշանակուած, Լէքէճեան Անտոնի տունին մէկ սենեակը։ Հայրս չէր կրնար յարմարիլ հօրը և եղբայրներուն արբեցողական սովորութեան, և այդ էր պատճառը որ հօրմէն կը զատուէր։

Մայրս Եղիսաբեթ, Անկիւրացւոց աղաւաղմամբ Էսամ կոչուած, ծնած է Անկիւրիա 1823 յուլիս 24|5 օգոստոսին, և 1824 ին իննամսեայ ատնդիաց մանուկ՝ ծնողացը հետ Կ. Պոլիս կը փոխադրուի, բայց հռոմէադաւան Անկիւրացւոց Կ. Պոլիսէ հեռացուելուն առթիւ, 1828 փետրուար 2|14ին ծնողացը հետ դարձեալ Անկիւրիա կը դառնայ։ Հինգ տարեկան փոքրիկ աղջկան միտքին վրայ այնպիսի սաստիկ տպաւորութիւն մը կը թողու աքսորի պետական պաշտօնէից ընկերացող հայ քահանային երեւոյթը, որ, մինչեւ

ուշ տեսներ չէր կրսուած այդ տպաւորութիւնը։ Անկիւրիայէ կը վերադառնան 1830ին, և մայրս նուրբ ասեղնագործութեան վարպետուհիի մօտ արհեստին մէջ կը յառաջանայ, բայց գուրկ կը մնայ դպրոցական կրթութենէ և կարդալ գրելու կարողութենէ, որ այն տեսն սովորական ալ չէր աղջիկներու համար։ Տնական կեանքով և արհեստին հետեւողութեամբ կը մեծնայ մինչև հօրս հետ ճանչցուիլը 1838 փետրվար 10|22ին, և 12|24ին նշանուիլը, և 1839 յունուար 22|3 փետրուարին պսակուիլը։ Հայրս 22 և մայրս 16 տարեկան են եղած պսակուած առեսնին։

Անտոնի եւ Եղիսաբեթի զաւակները տասն են եղած, և են՝ Պետրոս 1840 փետրուար 11|23ին ծնած, որուն անունը առնուած է մօրեղբայրս մեծհօրս անունէն, որ փոփոխած է իւր անունը տալ իւր թոռանը։ Երբ հայրս իւր ծնողաց հետ չէր կրցած համաձայնիլ, անոնց ու զոքանչը իրեն մօտ կը բռնէր, մանկամարդ ամուսնոյն օգնութեան և խնամոց համար։ Անդրանիկ Պետրոս կը մեռնի 1841 օգոստոս 4|16ին, մէկուկէս տարեկան եօթն օր պակաս տարելով, և կը թաղուի Բերայի Թագսիմ գերեզմանոցն, վերի ծայրի բարձրավանդակին վրայ, ուր կը գտնուէին Եէնիսէրքիսեանց զանազան ճիւղերուն գերեզմանները։

Պօղոս, որ ես եմ, 1841 փետրուար 11|23ին ծնած, անդրանիկին ծնած օրէն օրը օրին ճիշդ տարի մը ետքը։ Կը մկրտուիմ Ղալաթիոյ Ս. Փրկիչ եկեղեցին փետրուար 18|2 մարտին, գաւառացի քահանայէ մը, որուն անունը տոմարին մէջ չեմ գտած. կնքահայր կ'ունենամ Մաղաք Փափազեանը, որ հօրս պստակին և անդրանիկին մկրտութեան ալ այդ դերը վարած է, և միշտ եւ յամենայնի հօրս պաշտպանն ու հովանաւորն եղած է։ Պօղոս անունը դրուած է իրը Պետրոսին կապակից անուն։ Ծնունդիս օրը այն տարին հանդիպած է Բուն Բարեկենդանի երեքշաբթիին, որ հռոմէադաւաններու սովորութեամբ դեռ Բարեկենդան կը սեպուի, և մօրս երկունքին ժամուն, տաճկական ժամահաշուով գիշերուան երեքին, Լէքէճեանց վերի սենեակը Բարեկենդան փակելու ուրախութիւններ կը կատարուին եղեր։ Գաւառացի քահանային անճարակ կերպով մկրտութիւն կատարելէն, ականջիս ջուր է գացեր, որուն պատճառաւ տկարութիւն եմ անցուցեր, խեւէս խորան են բացեր որուն ապին դեռ կը մնայ, և տկար առղայութիւն ունեցեր եմ, և բժշկութեանս համար մայրս Բերայի

Ս. Անտոն եկեղեցին ուխտ է ըրեր, և միջոց մըն ալ վանական Փրանկիսկեանց տարակը հաղուեցուցեր իւր վոքրիկ տղուն։ Իմ ծնունդէս վեց ամիս ետքը անդրանիկ Պետրոսին մեռնելովը անդրանկութեան ժառանգ եմ եղած։ Կենսագրական գրութեանս մէջ արդէն գրուեցաւ տղայութենէս սկսելով (տե՛ս ԺԸ)։

Մարտիրոս 1843 յունուար 18|30ին ծնած, կէս գիշերէն ետքեք ժամ ետքը։ Միւս օր դայեակը ըստ հին սովորութեան աբիւն հանելու (հաճամաֆ) սովորութիւնը կը կատարէ, բայց վերքերը ապէկ չպատելուն, տղուն արիւնը առատ կը հոսի, և երեկոյին հայրս գործէ դառնալուն նորածինը հոգեվարք կը գտնէ և ինքն մկրտութեան ջուրը կուտայ, և Մարտիրոս անունը կը դնէ արիւնազանգ մեռնելուն համար միօրեայ կեանքով յունուար 19|31։ Կաթոլիկ վարդապետներէն Սմբրոսիոս Մաղաքեան կը սկսի խնդիր յուսկել՝ թէ հայրս մկրտող դառնալուն համար ամուսնութիւնը լուծուելիք կ'ըլլայ, այլ Հասունեան եպիսկոպոսը փոխանորդ Մաղաքեանը կը լռեցնէ և հօրս գայրոյթը կ'ինջեցնէ ու կը հանդարտեցնէ։

Վիշէն, 1844 փետրուար 21|5 մարտին ծնած, կէս օրէն ժամը մը ետքը, և մարտ 1|13ին մկրտուած։ Կարմրուկ հիւանդութենէ մը ետքը, զոր միասին ունեցանք, աւելի տկար մնաց, և քիչ մը տան դպրոց յաճախելէն ետքը՝ վերջին տարին ինծի հետ միասին Անտոնեանց նախակրթարանը կ'երթար։ Եօթը տարին լրացուցած էր երբ ես Հռոմ կը մեկնէի, և ինքն զաւակներուն երկրագոյնը կը մնար։

Կոմիտաս, 1845 հոկտեմբեր 14|5 նոյեմբերին ծնած, կէս գիշերէն երկու ժամ ետքը, և 29|10ին մկրտուած, կազմով առողջ և հասակով բարձր. ճիշդ հինգուկէս տարեկան էր իմ Հռոմ մեկնելուս ատեն, և կը պատրաստուէր Վիշէնի հետ Անտոնեանց նախակրթարանը երթալ իմ մեկնելէս ետքը։

Ագապի 1848 յունուար 4|16ին, կէս օրէ երկու ժամ առաջ ծնած, և 11|23ին մկրտուած, յիսնօրեայ մանուկ՝ հնտախտէ կը մեռնի մարտ 16|28ին։ Ագապի անունը կնքահօր Մաղաք Փափազեանի կամքով էր դրուած, որ Սոփիա ամուսին և Պիստոս ու Էլպիս աղջիկներ ունենալով, երրորդ աղջիկ չէր ունեցած, և Սոփիայի գատերաց անունները իւր անին վրայ ուզած է լրացնել։

Սերովբէ 1849 մարտ 24|5 ապրիլին ծնած կէս օրէ ժամ մը առաջ և 30|11ին մկրտուած, երկու տարին նոր լրացուցած եւ հապիւ ոտք ելած մանկիկ էր, երբ ես Հռոմ կը մեկնէի։

Այսպէս եօթը զաւակներէն Պետրոս և Մարտիրոս և Սգապի վաղամեռիկ էին եղած, եւ երեք ալ տունը կը մնային, Վիշէն և Կոմիտաս եւ Սերովբէ, երբոր ես 1851 մայիսին Հռոմ աշակերտութեան կը մեկնէի։ Կեանքերնիս բոլոր Բերա անցած էր, ուր իմ ծնելէս առաջ հայրս ձեռնարկած էր սեպհական փոյտաշէն տուն կառուցանել Ֆէրիտիյէ փողոցը, յետոյ 33 թուահամարով նշանակուած, ուր քիչ ետքը փոխադրուած էր, և այն տունին մէջ ծնած են Մարտիրոսէ սկսած հինգ զաւակները։ Միւս երեք զաւակները առայժմ չեմ յիշեր, զի հատուածս Հռոմ երթալուս հանգրուանին փակել է նպատակս։

Հայրս իր դեղագործութիւնը կը շարունակէր յաջող ընթացքով, և դիւրակեաց ոճով կ'ապրեցնէր ու վայելուչ ձեւով կը պահէր իր տունը։ Իր զբաղումը դեղ պատրաստելէ և վաճառելէ աւելի փորձառական բժիշկի (empiriste) ընթացք էր, և յատկապէս գաղտնի հիւանդութիւններ կը դարմանէր, որոց համար շատեր պաշտօնական բժիշկի դիմելէ կը քաշուին, իսկ հօրս պէս ծանրապլուխ անձի մը դեղարանին ներքին սենեակը խնամուելու աւելի հաճելի և դիւրին կը գտնեն։ Այս սենեակին պատին վրայ հայրս մեծ տառերով գրած ունէր. Tu te domiue speravi non confundar coi aeternum, զոր վերջէն Հայերէնի փոխեց. Ի քեզ Տէր յուսացայ, մի՛ ամաչեցից յաւիտեան։ Հայր Աթանաս Տողրամաճեան վարդապետ, տանը խոստովանահայրը, որ աւանդական դեղերով բժշկութեան հետեւող էր, և մինչև արքունական կանանոցը մուտք ունէր, հօրս պատրաստել կուտար իր դեղերը, որոնցմէ զանազան մասնադեղեր հայրս ալ կը գործածէր։ Կանոնաւոր և տնարար կենցաղ ունէր հայրս, բոլորովին տանը ու աշխատանքը հոգածութեան և կրթութեան նուիրուած։ Ազգային զգացմանց ալ եռանդուն էր, և ժամանակին ազգասիրներուն նշանաբանն եղող Համազգեաց Ընկերութեան հիմնադիր ընկերներէն մէկն էր։ Թրիէսթէ գացած ըլլալուն առթիւ աւստրիացի հպատակի անցագիր ունեցած է, զոր միջոց մը պահած և գլխարկ ալ գործածած է, որ Սինեօր Անտոնաքի կոչման պատճառ եղած է։ Բայց յետոյ հայրենասիրական զգացմամբ անցագիրը կը պատռէ,

գլխարկը կը նետէ եւ օսմանեան հպատակութիւնը ձեռք կ'առնէ։ Կը յիշեմ եւս որ ձեռքէն եկածին չափ եղբայրներուն արբեցողական միտումը մեղմելու ալ կ'աշխատէր։ Իսկ մայրս աշխատասէր, տնաշէն, համեստաբարոյ եւ ճարտար կին մըն էր եղած, տան ամէն պէտքերուն ճարտար եւ ինքնին հոգացող, որով միակ ազախինի մը օգնութեամբ բազմաթիւ զաւակներու վրայ ծնողի եւ խնամածուի պարտքերը լրացուցած է, եւ տունն ալ վայելուչ եւ պատուաւոր կերպով պահած։ Հայրս ու մայրս ձեռք ձեռքի տուած իրենց խնայողական ճիգերով ամառնային միջոցներուն օդափոխութեան համար գիւղապնակութեան պէտքն ալ զանց չէին ըներ, եւ լաւ կը յիշեմ Վոսփորի Պէյգոզը եւ Մարմարայի Հէյպէլի կղզին անցուցած զուարճութեան օրերնիս։ Հայրս ձկնորսութեան ալ սիրահար հետեւող մըն էր, կարթերը իւր ձեռքով կը պատրաստէր, յատուկ նաւակ ու նաւավար կը պահէր, եւ մինչեւ Վոսփորէն դուրս ալ ձկնորսութեան կ'ելնէր։ Սառաջները ծխախոտի մոլի ըլլալու չափ գործածող մըն էր, ծխախոտը հակերով կը գնէր, լաւ տերեւները ինքը կը զատէր, եւ կտրողը աչքին առջեւ գործելու համար տուն կը բերէր, բայց երբոր փնասը ըզգաց, կիրառութիւնը իսպառ դադրեցուց։ Տնական պարէններն ալ անձամբ պատրաստող էր. ապուխտի, երշիկի, աղած ձուկերու պահեստները եւ մոմի պաշարը իւր ձեռքէն կ'անցնէին, եւ հետամուտ էր ձմեռուան պէտքը աշունէն համբարուած ունենալ։ Հասոյթի զանազան տեսակները ծախքերու զանազան տեսակներու կը պատշաճեցնէր եւ զատ զատ կը պահէր, եւ ինքն իրեն ալ չէր ներեր մէկը միւսին գործածելու։ Քաղցրեղինայ պատրաստութեան մէջ ալ մայրս կատարեալ արհեստագործութիւն ունէր։ Վերջապէս համեստ չափով բայց կանոնաւոր ընթացքով բարօրութեան վիճակ ունէր առանին կեանքերնիս։

Իմ մեկնած ատենս հայրական ու մայրական պապերս ու մամերս չորսն ալ կենդանի էին. մայրականները մեզի հետ բնակակից էին, իսկ հայրականները Միքայէլ հօրեղբօրս հետ կ'ապրէին։ Միքայէլ ամուսնացած էր Մինասեան Սրուհիի հետ 1844 յունիս 18|30ին, անդրանիկը՝ Յարութիւն ծնած էր 1845 ապրիլ 1|13ին, որուն համար սովոր էր նա կատակաբանել, թէ ապրիլ 1 էր երբ խաբուեցայ, թէ ոչ այս անպիտան աշխարհը եկողը ես չէի։ Երկրորդ զաւակը Ստեփան եւ երրորդը Սոֆիա ես չգացած ծնած էին արդէն։

Ազգակիցներէս Միասէրեան և Պալեան և Օրմանեան ճիւղերէն եղողները արդէն յիշուեցան, իսկ Եէնիսէրքիսեան ճիւղը բոլոր աղջիկներէ կազմուած է, զի հայրս միակ մօրեղբայր մը ունեցած է որ սերունդ ալ չէ ունեցած։ Մօրաքոյրներէն Սրբուհի ուխտաւոր ամուրի մնացած է, և հիւանդութենէ մը տեսութիւնը կորուսած է. Լուսիա օտարազգի Զուբբարի (Zuppar) հետ ամուսնացած է. բայց ամենէն ընդարձակ ճիւղը եղած է Գանթարեանի կողակից Աննա մօրաքրոջը սերունդը, որուն հետ մեր յարաբերութիւնները աւելի սերտ են եղած։ Այս ճիւղէն է Յովհաննէս Գանթարեան, որ բարեկեցիկ վիճակ ունեցած է, և զաւակներէն աւելի կարեւոր դիրք ունեցած է Անտոն Գանթարեան, ծխախոտի ընկերութեան դիւանապահը։ Նոյն սերունդին կը պատկանի Սոֆիա, Կեսարացի Գալֆայեան Գէորգի կողակիցը, որուն զաւակներէն Ամբրոսիոս և Խորէն առաջ Վենետիկոյ Մխիթարեան, ետքէն Հայ Եկեղեցւոյ վարդապետներ, Ամբրոսիոս ամուսնացած և Խորէն եպիսկոպոսացած, և Նարպէյ ու Լուսինեան անուններով ինքզինքնուն արքայազուն իշխանութեան հովեր և ձեւեր տուած։ Ասոնց քոյրն է Տիկին Աննիկ Մարկոսեան, Աննա մօրաքրոջ սերունդէն, աւելի խօսուած են նաև Սրապ Թղլեան արդիւնաւոր ու ծանօթ ուսուցիչը և Քերիմեանց բարեկեցիկ գերդաստանը, և ճիշդ այդ վերջիններուն տունն է հանդիպած հօրս ու մօրս իրար ճանչնալը։

Նախնեացս ու ծնողացս վրայ տեղեկութիւնները մինչև 1851 ին Հռոմ Անտոնեանց վանքը աշակերտութեան երթալս հացնելով՝ հատուածս կը փակեմ և չարունակութիւնը նոր հատուածի կ'անցունեմ, ուր դէպքերու փոխադարձ յարաբերութեանց պիտի հանդիպինք, որոնք թէպէտ յիշուած են, բայց տեղեկութեանց կապը կապելու համար նորէն պիտի յիշուին։

ՁԹ

Դամասկոս, 1918 մարտ 9/22 Ուր.

Ընտանեկան յիշատակներս նախադասած եմ միշտ նիւթերու համաձայնութեամբ ամփոփել, քան թէ ժամանակագրական կար-

գին հպատակիլ, ինչ որ աւելի յարմար կը դատեմ եղելութեանց մասին որոշ գաղափար կազմել տալու։

Հռոմ մեկնած ատենս չորս պապոնքս կենդանի էին ըսած էի, սակայն անոնց վախճանը ուշացած չէ և յետսընդդէմ կարգով եղած է, նուազ տարիք ունեցողէն դէպի աւելի ունեցողին յառաջելով։ Առաջին վախճանողը եղած է մօրենական մեծ մայրս Վերան 1851 յունիս 18|30ին, տակաւին յիսուն երեք տարեկան, և մեկնելէս միայն 36 օր ետքը։ Միւս տարին 1852 հոկտեմբեր 1|13ին կը վախճանի մօրենական մեծ հայրս Պետրոս 63 տարեկան։ Տարի մը ետքն ալ կը վախճանի հօրենական մեծ մայրս Տալիթա 1853 օգոստոս 28|9 սեպտեմբերին՝ 66 տարեկան։ Անանկ որ 1866ին Կ. Պոլիս դառնալուս միայն հօրենական մեծ հայրս Սատուածատուրը կենդանի գտայ, որ վախճանեցաւ 1867 սեպտեմբեր 20|2 հոկտեմբերին՝ 82 տարեկան, միեւնոյն օրը որ երկրորդ անգամ Հռոմ կ'ուղեւորէի և ճիշդ շոգենաւ մտնելէս ետքը։ Մերձաւորագոյն կորուստը ունեցած եմ ամենէն պզտիկ եղբօրս Սերովբէի մահուամբ 1857 յուլիս 15|27ին, տակաւին եօթ ուկէս տարեկան, որ թաղուած է Գատըքէօյի Հայոց Գուշտիլի գերեզմաննոցը։ Լսած եմ որ պզտիկին մահը տեղի ունեցած է անճարակ վարժապետի մը զայն ահացուցիչ ձեւերով սարսափահար վախցնելէն։

Տան կացութեան վրայ տարբերութիւն յառաջ բերած է 1855 յուլիս 20|1 օգոստոսին Բերայի մեծ հրդեհը, որուն մէջ այրած է Բերայի մեր փայտաշէն տունը, երբ տնեցիք Գատըքէօյ գիւղաքնացութեան կը գտնուէին, և ատիպեալ ձմեռն ալ նոյն գիւղը կ'անցունեն։ Գիւղը այդ միջոցին ընդարձակուելու շարժում մը ունէր, և մանաւանդ Եւրոպացիք աւելի ոյժ տուողներ էին, Սիոնեան մայրապետներ (Soeurs de Sion) օրիորդաց գիշերօթիկ վարժարան կը բանան, Լաբլանշ (Laplanche) գաղղիացին մանաւորլաւ վարժարան մը կը կազմակերպէ, օդն ու ջուրն ալ հաճելի կը դառնան, որով հայրս ալ կ'որոշէ այնտեղ հաստատուիլ եւ Բերայի ժխորէն հեռանալ։ Բերայի հրկիզեալ տան հողը կը վաճառէ, և Գատըքէօյ Գուշտիլի փողոց թիւ 20 բաւական ընդարձակ հող մը կը գնէ, Օտարանոց (Զէ-բէ-+լէ+) կոչուած նոճիներուն կից, և 1857 մարտ 6|18ին նոր փայտաշէն տունի հիմնարկէքը կը կատարէ, և շինուածը շուտով բնակելի վիճակի հասցնելով՝

հոն կը փոխադրուի։ Միայն թէ գեղինը խոպան և զառիվեր ըլլալուն՝ շատ ծախքերու կը պատաւորուի զոյն ձեւի բերելու, և մէկը միւսէն բարձր մասերով բանջարանոցի և ծաղկանոցի վերածելու, և շրջապատը և բաժիններըը որմափակ ամրացնելու, բայց ինքն շատ գոհ կը մնայ պարտէզներու մէջ և դիմացը բաց օդաւէտ բնակութիւն մը պատրաստած ըլլալուն համար։ Գաալքէօյ չկոած 1852 յուլիս 31|12 օգոստոսին աղջիկ զաւակ մը ունեցեր էր, վաղամեռիկ Ագապին հաշիւի չառնելով վեց մանչերու վրայ բաղձացեալ առաջին աղջիկը, որ կը մկրտուի Եւգինէ անունով և էֆտիկ փողաքշական աղաւաղմամբ։ Երկու եւս աղջիկներ Գաալքէօյի տունին մէջ կ'աւելնան, Լուսիկ 1858 փետրուար 12|24ին ծնած և փետրուար 26|10 մարտին տան մէջ մկրտուած, և Ագապի 1861 յուլիս 11|23ին ծնած և 16|28ին մկրտուած, որուն վրայ կրկնուած է վաղամեռիկին անունը։ Այս երեքով կը լրանայ ծնողաց տասը զաւակներուն չարքը։

Հայրս եռանդուն կերպով զաւակացը կրթութեան և ուսման հետամուտ՝ առաջնորդը սեղուոյն թաղական և տնական դպրոցներէ կ'օգտուի, և վերջէն Վիչէնին ու Կոմիտասին Լաբլանշի վարժարանը լրացեալ ընթացք կատարել կուտայ, և Եւգինէն Սիոնեանց մօտ գիշերօթիկ կը դնէ, և անոր երկու տարի մնալէն ետքը կը հանէ և Լուսիկը կը դնէ։ Մանչ զաւակներու տպագրային համար, իմ որդէն եկեղեցականութեան մտած ըլլալով, մէկը բժշկութեան և միւսը դեղագործութեան կը սահմանէ, և այս նպատակով Վիչէնը 1863 սեպտեմբեր 19|1 հոկտեմբերին ճանպայ կը հանէ Հռոմ, իտալական համալսարանի ընթացքը ընելու, օգտակարագոյն գտնելով ինծի մօտ ըլլալը և վանքի մէջ կանոնաւոր կեանքը։ Թէպէտ Հայր Ռափայէլ Միասէրեան վանահայրը աշխարհական երիտասարդին համար քաղաքական կեանքը յարմարագոյն նկատելով՝ առջի օրեր Վիչէնը Ռուպինօ ուսուցիչին տունը կը վեռեղէ, սակայն հօրս պնդելուն վրայ շուտով բնակակցութեան և սեղանակցութեան կ'ընդունուի ամսաթոշակի վճարմամբ։ Վիչէն երկու տարի իտալերէն և լատիներէն լեզուներու վարժուելէ և փիլիսոփայութեան դասերու հետեւելէն ետքը, համալսարանի մէջ բժշկական դասընթացքներու ձեռնարկեց, և կանոնաւորապէս շարունակեց, և վանական շրջանակի մէջ ապրեցաւ. միայն անգամ մը, 1868ին

ամառնային մեծ արձակուրդին, Կ. Պոլիս գնաց ու դարձաւ։

Կոմիտաս, որ դեղագործութեան սահմանուած էր, միջոց մը հօրենական դեղարանը վարժութեանց հետեւեցաւ, և երբ Կ. Պոլսոյ զինուորական բժշկական վարժարանը սկսաւ ցերեկեայ աշակերտներ ընդունիլ, Կոմիտաս դեղագործութեան ճիւղը մոռաւ, զինուորական համազգեստ հագնելով։ Բայց շուտով միտքը փոխեց, աչքին ստորին և ծառայական երեւցաւ դեղագործութեան զբաղիլը, և փափաքեցաւ կատարեալ բժշկական ընթացք շարունակել։ Թէպէտ եղբայրը արդէն բժշկութեան հետեւելու բակըսած, սակայն հայրը չուզեց զուակին փափաքին արգելք ելլել, և դիւրաւ հաւանեցաւ որ նոր ալ բժշկութեան հետեւի օսմանեան զինուորական վարժարանին մէջ, և այսպէս երկու եղբայրներ միանգամայն բժիշկ ելլալու պատրաստուեցան։ Օսմանեան վարժարանին ուսուցչական լեզուն գաղղիերէն էր երբոր Կոմիտաս կ՚աշակերտէր, անկէ ետքը գաղղիերէնը խափանուեցաւ և թուրքերէնը ուսուցչական լեզու ընդունուեցաւ։ Բայց միշտ Կոմիտասի օսմանեան աշակերտութենէն ելլելը վինքը աւելի մօտիկ պահեց թուրք տարրին, երբոր իբրեւ վկայեալ բժիշկ աշխատութեան ասպարէզը թեւակոխեց։

Ընտանեկան կեանքը բնաւ երբեք տարբերութիւն չունէր այն կերպարանէն, զոր նախընթաց հատուածիս մէջ պատկերեցի և նորէն կրկնելու հարկ չեմ տեսներ, և կը բաւականանամ գլխաւոր դէպքերը քաղելով։ Երբոր 1866 փետրուարին Հռոմէն դարձայ, տան մէջ ուելցած երեք քոյրերէս զատ գտայ նաեւ Եէնիսէրքիսեան Սրբուհի հօրս մօրաքոյրը, որ թէպէտ տեսութենէ զրկուած, սակայն մեծապէս օգտակար կ՚ելլար մօրս ոչ միայն տնական գործերու մէջ, այլ առաւելապէս պզտիկները ըզբաղեցնելու և պահպանելու համար։ Սուր լսելութեամբ և ամուր յիշողութեամբ ամէն բանի կը հետեւէր, և ակնկալութենէ շատ վեր գործունէութիւն ունէր։

Գատըքէօյի մէջ հայ կաթոլիկ եկեղեցի չկար, և Գուշտիլի ու Սէօյլուտլի թաղաբաժիններու մէջ բաւական թիւով հայ կաթոլիկ ընտանիքներ կային։ Իմ գալէս օգտուելու և գոնէ կիրակնօրեայ և ազնական պատարագներ ունենալու համար, կանուխէն հայրս պատարագամատոյց սեղան կազմած մը և մայրս պատարագի զգեստ մը պատրաստած էին, և տան միջին սրահը

մատուռի վերածելով՝ կանոնաւոր կերպով պատարագել սկսաց ի միխիթարութիւն հայ կաթոլիկ ընտանեաց, որոնք 50-60 հոգիէ աւելի կը խռնուէին կիրակի և տօն օրերը, և ես ինձի պարտք սեպեր էի անպակաս գտնուիլ, և ուրիշ պաշտօն յանձն չառնել։

Մինչեւ 1867 սեպտեմբեր Կ. Պոլիս մնացած միջոցս ընտանեկան շրջանակի մէջ նոյութիւն տեղի չունեցաւ. եղբայրներս իրենց բժշկական ուսմունքը կը շարունակէին, Եւգինէ վարժարանէն հանուած էր մօրը օգնական ըլլալու, Լուսիկ վարժարան կը մնար, և Սպապի դեռ տհաս մանուկ էր։ Երկրորդ անգամ Հռոմէ դառնալէս ետքը՝ 1869 փետրուար 15|27ին վախճանեցաւ Միքայէլ հօրեղբայրս ալ, որ կանուխէն իւր Յարութիւն և Ստեփան զաւակները Հռոմի Անտոնեանց վանքը ղրկած էր, այլ անյարմար դատուելով ետ դարձուած էին, և հօրեղբուն մահուանէն ետեւ երկուքն ալ վինուորական դեղագործութեան մտած էին, աշակերտութիւնին աւարտելով պետական ծառայութեան մտնելու միտքով, ինչպէս որ ալ գործադրեցին։ Ստեփան 1878 պատերազմին Պոսնայի բանակին ծառայութեան ղրկուեցաւ, սակայն ոչ տեղը հասնելուն, և ոչ ուր մնալուն և ինչ ըլլալուն լուրը կրցաւ առնուիլ և անյիշատակ անհետացաւ։ Իսկ Յարութիւն Կ. Պոլսոյ մէջ բաւական յաջող ասպարէզ ունեցաւ, դեղօրէից ըշամարանին տեսուչ նշանակուեցաւ, և կայսերական պալատ ալ ընդունուեցաւ կենդանիներ զմռսելու պաշտօնով։ Ընտանեկան յիշատակներս ասոնցմէ զատ նկատողութեան արժանի պատահարմը չեն ներկայեր, մինչեւ այն միջոցը՝ որ 1871ին գործակատարութեան պաշտօնով չորրորդ անգամ Հռոմ դարձայ։

Երբոր հոն հասայ Վիչէն իւր ընթացքին վերջերն էր, և 1872 յուլիս 28|9 օգոստոսին իւր աւարտական քննութիւնը առաւ, և գործօն բժիշկի վկայականը ստացաւ կատարեալ յաջողութեամբ։ Մինչեւ այն ատեն կենակից էինք երկուքնիս, և երբ գործօն կեանքի պիտի սկսէր, ուզեց յարմար տեղ մը քիչ մը ազատ բժշկութիւն ընել և յանձն առաւ Անքոնա գաւառի մէջ Արչեվիա (Arcevia) գիւղի պաշտօնական բժշկութիւնը։ Նոյն ատեն Կոմիտաս ալ Կ. Պոլսոյ մէջ իւր ընթացքը աւարտեց, բայց հմտութիւնը ընդարձակելու և գիտութիւնը կատարելագործելու համար նա ալ իմ մօտս եկաւ 1872 սեպտեմբեր 29|11 հոկտեմբերին. միւս օր Վիչէն ալ Արչեվիայէ դարձաւ և 30|12ին երեք եղբայր-

նել միասին Հռոմ գտնուեցանք, եւ միասին ապրեցանք մինչեւ 1873 յունուար 8|20, երեք ամիս ժամանակ, երբ Վիէն կատարելագործման նպատակով Բարլիզ մեկնեցաւ եւ Կոմիտաս մնաց ինձի հետ չորս ամիս ժամանակ եւս։ Մինչեւ այն ատեն ձախորդութեան դժնդակ շունչը կարծես չէր համարձակած մեր ընտանեկան շրջանակին վրայ ազդել, բայց մինչեւ վերջ նոյնպէս տեւելը ապահովուած չէր։ Նոյն 1873 տարւոյ ապրիլի վերջին օրերը հայրս ձեռքէ դեղ կը մատակարարէ բարեկամ մէկու մը, այլ անմտադրութեամբ մէկ անօթի տեղ ուրիշ անօթ մը կը բանայ, դեղին կերպարանին նմանութիւնը մտադրութիւնը չարթնցնելը, եւ առաջը վնասակար դեղ ըլլալով, առնողը կը թունաւորուի եւ կը մեռնի, եւ իսկոյն ապրիլ 30|12 մայիս կիրակի օր հայրս ձերբակալուելով դէպքին անգիտակ Սկիւտար կը տարուի, դեղին մատուցողը իրեն կը ցուցուի, իր տուած ըլլալը կը յայտնէ եւ դեղը առնելու հրաւիրուած ատեն ունվրդով բերանը տանիլը՝ անգիտակցութեան եւ անմտադրութեան փաստը կ'ըլլայ, մարդասպանական կասկածը կը փարատի, անմտադրութեան կամ թէ անհոգութեան պատասխանատուութիւնը կը մնայ, եւ ձերբակալութիւնը կը շարունակէ։ Տունի մէջ գործելու ուրիշ մարդ չգտնուելով եւ մայրս ալ այս տեսակ գործոց ոչ փորձը եւ ոչ կարողութիւնն ունենալով, չփոթած մէջ տեղ կ'իյնայ, պաշտօնական եւ անպաշտօն բարեկամաց դիմելէ ու չրջելէ զատ ուրիշ բան չէր կրնար ընել, բայց ամէն կողմէ ընդունելութիւն եւ քաջալերութիւն կը գտնէ, եւ վերջապէս հայրս երաշխաւորութեամբ տունը կը դառնայ, սակայն գործէ կը քաշուի ինքն իր վրայ վստահութիւնը վերցնելով եւ համարձակութիւնը կորսնցնելով։

Հռոմի մէջ լուր չէինք առած այս անցուդարձերուն վրայ, եւ միայն երկու շաբաթ ետքը մայիս 14|26ին պատահմամբ Կ. Պոլսոյ լրագիրներու վրայ կը կարդանք ձախորդութեան եւ ձերբակալման լուրը, եւ անմիջապէս Կոմիտասի Կ. Պոլիս երթալը կ'որոշուի, ոչ միայն զի նա միայն էր տրամադրելի անձը, այլ զի կառավարական գործոց ալ յարմարութիւն ունէր իւր յարաբերութիւններով եւ ծանօթութիւններով, փորձառութեամբ եւ ընտանութեամբ։ Ուղեւորութեան համար ճար ճարակ ընելով մեր օր 15|27ին ճանապարհ կը դնեմ Վիէննայի վրայէն, որպէսզի անարգել կարենայ անցնիլ, քանի որ Միջերկրականի

ճանապով ատեն պիտի կորսնցնէր տիրող հնտախատին և կպուշուԹեան տրպելտրանին (գաբանԸՆա) պատճառով։ Կոմիտաս Կ. Պոլիս հասնելով գործը ձեռք կ'առնէ, քաղաքական և դատական պաշտօնատանց առջև գործին բնաւորուԹիւնը հաստատելու համար պէտք եղած միջոցները կը գործածէ։ Վիչէնի ալ լուր կուտամ որ Կ. Պոլիս դառնալու փուԹայ, երբ Բարիզէ Լոնտրա անցած կը պտնուէր։ Նա ալ իւր ծրագիրը ամփոփելով Բարիզ կը դառնայ, և անկէ Հռոմ կը հասնի հոկտեմբեր 1|13ին, և 10|22ին Հռոմէ ալ կը մեկնի Կ. Պոլիս դառնալու, երբ ես ալ կ'ելլամ Հիւսիսային Իտալիոյ պտոյտը ընելու, իբրև պահանջ մը Le Vatican et Les Arméniens հատորին հրատարակուԹեան աշխատուԹիւններէն հանգչելու համար։ Հօրս գործը անհնար կ'ըլլայ բոլորովին դատարանէն ազատել, և անհոգուԹեան կամ անմատդրուԹեան անուամբ լոկ հինգ կամ վեց ամսուան բանտարկուԹեան վճիռը կը տրուի, և զայն լրացնելու համար 1874 սեպտեմբեր 7|19ին կեդրոնական բանտը (ՄԷՀԸԷՐհանէ) կը մտնէ, և դեկտեմբեր 23|4 յունուարին մասնաւոր զեղչով մը կ'ելլէ։ Սակայն ինչպէս առաջ՝ նոյնպէս անկէ ետքն ալ կոմաւորապէս գործէ քաշուած, հանգըստեան կոչուածի կեանք մը կը ակսի վարել, երբ տակաւին վաԹսուն տարեկան իսկ չէր։ Տունին արտաքին կառավարուԹիւնը երկու բժիշկ եղբայրներուս վրայ կը մնայ, խառնուելով հօրս տրամադրելի միջոցներուն, իսկ հայրս տան ներքին հոգածուԹեան կը նուիրուի։ Եղբայրներուս կամքով կ'որոշուի նաև Գատըքէօյէ Բերա դառնալ, երկու բժիշկներու աշխատուԹեանց ասպարէզը ընդարձակելու համար, ինչպէս որ ալ կը գործադրուի 1875 մայիսին, վարձելով Թագսիմի Թաղաբաժինին մէջ ԸԹԸր փողոց Թիւ 1 անկիւնի տունը, Սուրբ Յովհան Ոսկեբերան հայ կաԹոլիկ եկեղեցւոյ և գաղղիական հիւանդանոցին եռևի գըրան դիմացը։ Այստեղ իջայ ես շիտակ 1876 մայիս 7|19ին վերջին անգամ ըլլալով Հռոմէ դառնալուս։ Քոյրերէս Եւգինէ և Լուսիկ բաւականաչափ օգտուած էին Գատըքէօյի վարժարանէն, իսկ Ապտպիին անհնար եղաւ կանոնաւոր վարժարան յաճախել, սակայն նա ալ մասնաւոր դասերով և լուրջ ինքնօգնուԹեամբ իւր քոյրերուն հաւասար կրցաւ յառաջանալ։

Այլևս երեք եղբայրներ միասին էինք տան մէջ, հայրերնիս ալ գլուխնիս, որ փուԹաց վաճառել Գատըքէօյի տունը 1878

յուլիս 23/4 օգոստոսին, պարապ մնալով գրաւուելէն վախնալով և գինը տոկոսի դնելով։ Տան կացութիւնն ու բարեկեցութիւնը պակաս բան մը չունէր, և իւրաքանչիւր ոք իւր ընթացքը կանոնաւորապէս կը կատարէր և կ'արդիւնաւորէր։ Վիշէն ամուսնի Բերայի մէջ ունէր իւր յաճախորդները, և Ս. Յակոբայ հայ կաթոլիկ անկեղանոցին բժշկապետն ու հոգաբարձուն էր։ Կոմիտաս աւելի Ստամպօլի կողմը կ'աշխատէր թուրք յաճախորդներու և գաւառացի ազգայիններու, և իրեն խորհրդակցութեան սենեակ հատատած էր Կամուրջին գլուխը, Վալիտէ Հանի անկիւնը, Ծաննի դեղարանին վրայ։ Երեք քոյրեր ալ տան ներքինները կը հոգային մօրերնուն առաջնորդութեամբ, և ապատաւոր՝մը ու խոհարարուհի մը ծառայութեան գործերը կը հոգային։ Դարձեալ այստեղ ալ ընտանեկան յիշատակաց հանգրուան մը կը կազմեն, Հայ Եկեղեցւոյ վերապարձէս նոր հատուածը զատելով։

Ղ

Դամասկոս, 1918 մարտ 10/23 Շբ.

Առաջին կէտը որ այս պարագային մէջ կ'ինայ, վերադարձի մտադրութեանս մասին տնեցւոց վերաբերումն է։ Ուստի անմիջապէս պէտք է յայտնեմ, որ թէ հայրն և թէ երկու եղբայրներս առանց այլևայլութեան ինծի համամիտ գտայ ըստ ամենայնի, գործօն դեր ալ ստանձնելու չափ համարձակ։ Այդէն յիշեցի թէ հայրս Համազգեաց Ընկերութեան հիմնադիրներէն էր եղած, հակահասունեան պայքարին մէջ եռանդուն յառաջընթացներէն էր, ընթերցմամբ և տեղեկութեամբ կաթոլիկութեան պատպական ծայրայեղութիւններէն զզուած էր, ուստի բնաւ վարանում չունենալու անկէ բաժնուելու։ Եղբայրներս՝ արդէն զարգացեալ և ուսեալ անձեր և համարձակ գործիչներ՝ անպայման ջատագով յայտնուեցան, քոյրերս առանց խնդիրին խորը մտնելու իրենց յարգած և յարգելի եղբայրներուն հետևելու կամքն ու

նէին. կը մնար մայրս որուն միտքէն չէին հեռացած 1828ի տըպաւորութիւնները. միանգամայն անուս անձանց բնական եղող նախապաշարման և հնացեալ վարժութեան ազդեցութիւններէն զերծ չէր։ Մենք իրեն վրայ ծանրանալ չուզեցինք, ինքն ալ բաւականացաւ իւր խոստովանութեան և հաղորդութեան մասին ազատ մնալ, յօժարակամ հաւանելով որ իւր անունն ալ իրենները հետ հայ պատրիարքարանի տոմարներուն մէջ արձանագրուի, և բնաւ դժգոհութիւն ու դժկամութիւն չցուցուց իրենները ըրածին կամ ընելիքին վրայ. ուրախութիւն և գոհունակութիւն իսկ զգալով Հայոց պատրիարքարանի կողմէն իւր մեծ զաւակին ստացած դիրքին և պատուոյն և փառաւորութեան վրայ։ Նա բնաւ այլայլութիւն չզգաց երբ 1879 հոկտեմբեր 28|9 նոյեմբերին Հայոց պատրիարքարան երթալու մեկնեցանք ես եւ հայրս եւ եղբայրներս, ու երբ ես կաթոլիկ շղարշաւոր գտակը թողլով հայ փակեղով տուն դարձայ։ Քանիցս ներկայ ալ գտնուեցաւ իմ կատարած հանդիսութեանց։ Խոստովանահայր ունեցաւ Հայր Նիկողոս Պապշեան վարդապետը, որ իրեն մօրաքեռ թոռն էր, Հաւատոյնեանց Ջերմ վարիչն էր, ինծի ալ մտերիմ էր, դիրքին փափկութիւնը կը զգար և ըստ այնմ կը վարուէր։ Հետևաբար բնաւ երբեք դիտողութեան դէպք չպատահեցաւ, երբոր տունը հայ քահանաներով և վարդապետներով և եպիսկոպոսներով կը լեցուէր, և երբ Ներսէս պատրիարք իր այցելութեամբ տուներնիս պատուեց, որուն մայրս իւր անկեղծ յարգանքները ներկայեց, և ուրիշներէն ալ չխորշեցաւ։

Մտադիր չեմ այլևս ընտանեկան կեանքերնուս մանրամասնութեանց մանել, ինչ որ գրեցի բաւական է զայն լիովին պատկերացնելու. միւս կողմէն ամէն ընտանեկան կեանքեր իրարու կը նմանին, և բաւական է աստիճանը և գլխաւոր պարագաները ճանչնալ որ մնացածն ալ ամէն ոք կարենայ միտքովը կազմել։ Ուստի պիտի գոհանամ միայն գլխաւոր դէպքերը յիշել և քանի մի ընդհանուր տեղեկութիւններ տալ։

Հայ պատրիարքարանի իրաւասութեան անցնելէն ետքը ազգային կեանքին հետ մերձաւորութիւն և մասնակցութիւն գոյացնելու առիթներ պիտի ներկայանային մերիններուն։ Հօրս սարիքը և անփորձութիւնը չէր նեղեր նորընորոյ գործունէութիւն կազմել, ուստի ոչ իրմէ պահանջուեցաւ և ոչ ինքն ու-

ցեց ազգային պաշտօն մը կամ գործունէութիւն ունենալ։ Իսկ Վիշէն կատարեալ ազգային կեանք ունեցաւ, Ս. Յակոբայ հայ կաթոլիկ անկիւնոցի պաշտօնէն անմիջապէս Ս. Փրկչեան Ազգային Հիւանդանոցի բժշկութեան անցաւ, իբրև բժշկապետ Միքայէլ Ռափայէլեանի օգնական կամ փոխանակող՝ անոր հիւանդութեան և Կ. Պոլիսէ բացակայութեան պատճառով, որուն յաջորդեց ալ մահուանէ ետքը իբրև միակ բժշկապետ։ Այն ատեն Ազգային Հիւանդանոցը զանազան ճիւղերու համար տարբեր բժիշկներ չէր պահեր, այլ միակ բժշկապետ մը ներքին և արտաքին հիւանդութիւնները կը խնամէր, վիրահատ և յիմարաբոյժ էր միանգամայն։ Վիշէն այս բոլոր գործերը կը լրացնէր երկու հերթապահ օգնականներու հետ։ Հոգաբարձութեան ալ խորհրդակիցն էր ամէն պարագայի մէջ, նոյնիսկ շինութեանց և արտաքին կարգադրութեանց համար, և իւր կազմած տարեկան և քառամեայ տեղեկագիրները իբրև գլուխ գործոց կը յարգուին տակաւին և գերազանցող չունեցան։ Ճշդապահութեամբը և ճարտարութեամբը բժշկական մարմինին մէջ ալ նշանաւոր տեղ գրաւած էր, և Գեաթիպեանի հռչակեալ անունով պզտիկ Գեաթիպեան կոչուիլ սկսած էր։ Վիշէն ազգային երեսփոխան ալ ընտրուեցաւ և վարեց, Բերայի թաղական և վարժարանաց հոգաբարձու ալ եղաւ, ամէն խնդիրներու հետեող և կարծիք տուող, որով կատարեալ ազգային կեանք ունեցող մը եղաւ։ Այնպէս չեղաւ Կոմիտաս, որ բնական բերմամբ հաշակ չէր առներ և ախորժ չէր զգար հանրային գործերէ, զորս զուր ջանք և անօգուտ վաստակ կը դատէր, և տարապարհակ աշխատանքի տեղ կը դնէր, եւ բնաւ ազգային պաշտօնի մը յանձնառու չեղաւ, նոյնիսկ Ազգ. Հիւանդանոցի բժշկութեան, եւ միայն պատահաբար եղբօրը հիւանդութեան օրերը անոր բացակայութիւնը լրացուց եղբայրական զգացմամբ։ Քոյրերէս աւելի Ագապին եղած է որ փոքրիշատէ կանայի ձեռնարկներու մասնակցութիւն ունեցած է, բայց միշտ առանց գործօն դեր ստանձնելու։

Ընտանեկան շրջանակի գլխաւոր և նշանակելի դէպքեր ամուսնութիւններն են, և կ'անցնիմ անոնց մասին անկաշկանդ և անպատրուակ կերպով իրողութիւնները պատմել։ Երեք եղբայրներէն ես երիցագոյնը կուսակրօնութեան նուիրուած էի, երեք քոյրերէս ալ երիցագոյնը Եւգինէն ամուրի մնաց, և մեր տանը

տանտիկինը եղաւ, երբոր հետզհետէ մայրս սկսաւ ծերանալ ու տկարանալ և ցնդիլ։ Միւս չորսերը ամուսնութեան ներքև մըտան, և ընդհանուր կերպով պիտի յայտարարեմ, թէ որչափ բաղդաւոր եղանք փեսաներնուս կողմէն, նոյնչափ դժբախտ եղանք հարսներնուս կողմէն։ Գլխաւոր պատճառներէն մին կրնամ ըսել ժամանակի պարագայն. քոյրերս յարմար տարիքի մէջ ամուսնացան, մինչ եղբայրներս ամուսնանալու համար նախապէս արժանաւոր դիրքի մը միջոցները պատրաստելու դիտմամբ որոշումին և գործադրութիւնին յապաղեցին, և բնական կերպով այդ միջոցին պատահական յարաբերութիւններ ունեցան, և ապաժամ ամուսնութեան ատեն աւելի պատահարաց քան բուն նպատակին հետևիլ պարտաւորուեցան։

Առաջին ամուսնութեան օրհնութիւնը ընդունողը եղաւ քոյրերէս երկրորդը Լուսիկ, որ 1886 հոկտեմբեր 30/11 նոյեմբերին պսակուեցաւ Բերա, և օրհնութիւնը կատարուեցաւ Ս. Յարութեան եկեղեցին։ Լուսիկի հետ ամուսնացողն եղաւ Գաբրիէլ Լէքէճեան, նոյն այն Լէքէճեան Անտոնի որդին, որուն անունը տեղի ունեցած էր իմ ծնունդը։ Գաբրիէլ աշակերտած էր Անտոնեան միաբանութեան, և հետզհետէ յառաջանալով քահանայական ձեռնադրութիւն իսկ ընդունած էր շատ տհաս երիտասարդութեան մէջ, սակայն չուտով զգալով վրան դրուած բեռին իրեն անյարմարութիւնը, գրեթէ թօթափած էր և աւելի նկարչութեամբ կը զբաղէր։ Իւր մեծաւորներն ալ զինքն չէին ստիպեր, եւ մինչեւ իսկ զինքն ալ թոյլ տուին սքեմը թողուլ և Եւրոպիոյ մէջ արուեստը կատարելագործելու երթալ, և այսպէս 1879 օգոստոս 2/14ին Կ. Պոլիսէ Հռոմ մեկնեցաւ, և-լաւ զարգացում ունեցաւ։ Տարիներ ետքը իբրեւ պարզ աշխարհական Հայոց պատրիարքարանին իրաւասութեան ներքև մտաւ, և իբր գործի ասպարէզ Եգիպտոս գնաց, ուր նկարչութեան հետ լուսանկարչութեան ալ հետևեցաւ, մինչև որ կրցաւ իրեն սեպհական լուսանկարչատուն բանալ։ Միշտ և յամենայնի պարկեշտ և օրինաւոր կեանք ունեցած էր, ուստի ընտանիք կազմելն ալ պայմանն ու պարտք դատեց, Կ. Պոլիս եկաւ, քրոջս ձեռքը խնդրեց, և ծնողք ու եղբայրներ, տաներէց ու պատրիարք դիւրաւ հաւանեցան, և այսպէս կնքուեցաւ և օրհնուեցաւ Օրմանեան Անտոնի դստեր և Լէքէճեան Անտոնի որդւոյն ամուսնութիւնը։ Ծնողները

իրարու նախանձանօթ եղած էին, թէպէտ Լէքէճեան Անտոն չէր ապրեր այլեւս։ Գաբրիէլ եւ Լուսիկ անմիջապէս մեկնեցան Եգիպտոս, Լէքէճեան Գահիրէի մէջ առաջնակարգ հաստատութիւն մը հիմնեց եւ պահեց, իւր նկարներուն Լոնտրայի ցուցահանդէսին մէջ վարձատրուելուն վրայ, անդրիական բանակին լուսանկարիչ անուանուեցաւ, նկարչութեան արուեստին հմտութեամբը Եգիպտոսի լուսանկար տեսարաններուն ճաշակի գերազանցութիւնը արաւ, եւ ընդհանուր հռչակ ստացաւ։ Գաբրիէլի եւ Լուսիկի ընտանեկան կեանքը մաքուր եւ երջանիկ եւ նախանձելի եղաւ, եւ երբեք իր վրայ դիտողութեան առիթ չտուաւ։ Միակ աղջիկ զաւակ մը ունեցան, 1889 հոկտեմբեր 22|3 նոյեմբերին որ Էլիզ-Ատրինէ կոչուեցաւ դեկտեմբեր 29|10 յունուարին կոտորուած մկրտութեան առթիւ, բուսականաչափ ուսում և կրթութիւն ստացաւ և 1909 փետրուար 5|18ին ամուսնացաւ մահճաբարձ երկաթուղեաց Գահիրէի փոխ-տեսուչ Ճանիկ Զագբրի հետ։ Լուսիկի ամուսնութեան ատեն ես Կարին կը գտնուէի, բայց իմ հաւանութիւնս յօժարակամ յայտնեցի, զի սկզբունքով անդարմանելի կացութիւն չեմ ընդունած, և պատուով ու օրէնքով եկեղեցականութենէ հրաժարողներուն երբեք արգելք չեմ եղած, մանաւանդ թէ քաջալերած եմ ազատեղի եկեղեցականութեան նախադասելով։ Իսկ անձին կողմէ Գաբրիէլ աշակերտութենէն ինծի ծանօթ էր, և իր պարկեշտ ու բարեմոյն բնաւորութեան կատարելապէս գիտակ էի, և վերջին անգամ Հռոմ երթալուն ալ համաձայնած և օգնած էի Անտոնեան միաբանութեան մէջ ունեցած պաշտօնական դիրքով։ Գաբրիէլ և Լուսիկ, և յետոյ Էլիզ և Ճանիկ ալ, քանի անգամներ Կ. Պոլիս այցելած են, և միշտ մեզի հիւր եղած։ Գաբրիէլ և Լուսիկ 1893 մարտ 6|18ին Գահիրէէ Ամերիկա ալ գացին, և իրենց լուսանկարները Զիգակոյի (Chicago) արուեստահանդէսին մէջ վարձատրուեցան, և նոյեմբեր 25|7 դեկտեմբերին Գահիրէ դարձան։

Երկրորդ ամուսնութիւնը եղաւ Վիչէնինը, որ իւր անորոշ կենցաղէն ձանձրացած և ընտանեկան օրինաւոր կեանք կազմելու փափաքով՝ յանկարծական որոշումով և հապճեպ ընտրութեամբ կը նշանուի ու կը պսակուի Աշնանեանց դուստր և Մաքսուտեանց քեռորդի Երանուհի օրիորդի հետ, ազգակցաց անուններուն քան թէ օրիորդին ծանօթութեան վրայ հիմնելով իւր ըն-

տրութիւնը, պարագայ մը որ Վիչէնի ծանրախոհութենէն օտար էր, բայց կ'երևի թէ բուռն խղճ մը տիրապետած էր իր վրայ։ Ես բացակայ էի և Էջմիածին կը գտնուէի։ Պատկի օրհնութիւնը կատարուած է 1888 փետրուար 29|12 մարտ նահանջ օրը և Վիչէն տուն փեսայ գացած է Օրթաքէօյ հարսին ընդարձակ տունը, ուր այրի մայր ու աղջիկ միայն կը բնակէին։ Հարսին եղբայրը Տիրան Աշնան դատական պաշտօնով Զմիւռնիա կը մնար։ Վիչէն քառասունը չորս տարեկան էր, ընտրածն ալ շատ հեռու չէր, որ նպաստաւոր պարագայ կրնար ըսուիլ՝ եթէ օրիորդին նախընթացը գոհացուցիչ և բնաւորութիւնը յարմար ըլլար։ Վիչէն զգացած էր իր հոպճեպ ընտրութեան ձախողութիւնը, երբոր օգոստոս 11|23ին Կ. Պոլիս գտնալուս առաջին տեսակցութիւնը ունեցանք։ Դեկտեմբեր 11|23ին իւր անդրանիկը ծնաւ, որ Հրանտ-Նիկողոս կոչուեցաւ 1889 մարտ 3|15ին կատարուած մկրտութեան ատեն, և երկրորդ անունը դրուեցաւ ի յիշատակ հանդուցեալ մօրենական մեծ հօրը։ Վիչէն շուտով կորսնցուց իւր զբաղմութիւնը, ամուսնական նոր յարկը սկսաւ իրեն ծանր գալ, և քաղցկեղի հիւանդութեան մըն ալ բռնուեցաւ, որ պատահական վարակումէ աւելի ներքին վիշտին արտայայտութիւնը համարուեցաւ։ Կողակցին խնամքը ապասուածը չէր, որ տունէն հեռացնելու իսկ կ'աշխատէր, ինչպէս յայտնեցաւ, և 1889 հոկտեմբեր 29|10 նոյեմբերին Ս. Փրկչեան Հիւանդանոցը փոխադրել տուաւ, ուր Վիչէն այնչափ աշխատութիւն կրած և երախտիք ունեցած էր։ Ես Սրմաչէ գալուս առթիւ նոյեմբեր 16|28ին այցելեցի խեղճ եղբօրս նոյն հիւանդանոցին մէջ, ուր տասը տարիէ իվեր հազարաւորներ խնամած էր, և այժմ ինքն կը խնամուէր հոգաբարձութեան սիրայօրդոր ջանքով։ Վերջինը եղաւ մեր այդ տեսակցութիւնը, զի դեկտեմբեր 3|15ին վշտագին կեանքին վերջ կուտար, քառասունըհինգ տարի ինը ամիս եւ տասներկու օր ապրած, և 4|16ին Բերայի Ս. Երրորդութիւն եկեղեցին յուղարկաւորութիւնը կը կատարուէր, համակրութեան և պատուոյ մեծամեծ ցոյցերու մէջ։ Վիչէն եղբայրս իւր բնաւորութեամբ եւ իւր ճարտարութեամբ, իւր ազգային ծառայութիւններով եւ Հիւանդանոցի մէջ խնամեալներու երախտագիտութեան զգացմամբ բարձր դիրք մը ստեղծած էր սիրտերու զգացումին, ազգային աշխատակին, և բժշկական մարմնին մէջ հաւասարապէս, և եթէ

Կեանքը վաղահաս մահուամբ կարճուած չըլլար, ազգին և քաղաքին բժշկական դասակարգին մէջ յառաջադաս տեղը գրաւելու սահմանուած էր։ Հայրս Շիշլիի գերեզմանատան մէջ թաղ մը գնած, շրջապատած, և Օրմանեան Գերդաստան արձանագրութեամբ մարմարեայ կոթող մըն ալ կանգնած էր, Մեր հասատուն քնակավայրը այս պիտի ըլլայ ըսելով։ Վիշէն առաջինն էր որ այդ թաղման թաղին մէջ կը թաղուէր, և իւր անունը կոթողին վերևը կ'արձանագրուէր։ Երանուհի հարսին ընթացքը պաղութիւն թողած էր երկու տուներու մէջ, և յուղարկաւորութեան տիրութիւն ընողը Կոմիտաս եղբայրնիս եղած էր, և հետևաբար փոխադարձ երթևեկն ու. յարաբերութիւնն ալ դադրած էին, և հազիւ թէ պատրիարքութեանս առեն բարապանի ձեռքով եղբօրարդիս բերել տալով տեսած եմ։ Վիշէնի ժառանգութեան գործերուն ալ բնաւ միջամտութիւն չըրինք. տղուն ընթացքն ալ մայրը իւրովի կարգադրեց, բայց տարի անցնելով և պատրիարքութեանս դիրքէն հրապուրուելով պահ մը սկսան մօտենալ, և մենք համակիրպեցանք, և Հրանտը մեծ դրամատան մը մէջ զեռեղելու ալ յաջողեցայ, սակայն յետոյ դարձեալ իւրովի զբաղուիներ գտան և հեռացան, երկդիմի անձանց մօտեցան և մայրը մեզմէ դադտնի իւր զաւակը լատին ծէսով հատարակ դասակարգէ լատին կոթոլիկի մը աղջկան հետ ամուսնացուց 1914 յունուար 27|9 փետրուարին, փեսան ալ հարսին դաւանութեան հպատակեցնելով, որով դարձեալ յարաբերութիւններէ խզուեցան, մեր գերդաստանին ուղղութենէն օտարացան և փոխադարձ ընտանեկան կապակցութենէ ալ բաժնուած եղան։

Երրորդ ամուսնութիւնը Ապապին եղաւ։ Կարնեցի Տէր-Ներսէսեան Խաչատուր Խանի կրտսեր զաւակը Միհրան իմ Կարնոյ առաջնորդութեան պարագայով տունին ծանօթ և երթևեկող եղած էր, և այդ տոթիւ Ապապին վրայ համակրութիւն սկսած էր զգալ։ Բայց զօրաւոր դիրք մը չունէր, եղբօրը Տիգրանին և Եօզղատցի Ասլանեան Տիգրանի ընկերակցութեամբ փոքր սեղանաւորութեամբ կը զբաղէր, որ չատ համեստ դիրք մը կրնար հայթայթել։ Բայց եղբօրս Կոմիտասի հետ սերտ մտերմութիւն ունէր, սա ալ անոր վրայ մեծ համակրութիւն կը տածէր, բարեմոյն ընաւորութեան, պարկեշտ կենցաղին, մաքուր սիրտին և աչալուրջ գործունէութեան ականատես ըլլալով։ Այսպէս երբ

կուքը կը համաձայնին, մեր ընտանեկան շրջանակին մէջ Կոմիտաս համոզում գոյացնել կուտայ. միւս կողմը արդէն պատրաստական էր, և վերջապէս 1890ին գործը որոշման կը յանգի, սեպտեմբեր 6|18ին պաշտօնական նշանադրութիւնը կ'ըլլայ, եւ նոյեմբեր 12|24ին պսակի օրհնութիւնը տեղի կ'ունենայ, զոր ես ինքս կը կատարեմ մեր տան մէջ յատկապէս Արմաշէ Բերա գալով։ Նշանադրութեան ատեն Գաբրիէլ ու Լուսիկ ալ Եգիպտոսէ Կ. Պոլիս եկած կը գտնուէին, բայց պսակին չէին կրցած սպասել։ Նշանաւոր պարագայ էր երկու կողմի ծնողաց չորս խնամիներուն կենդանի և յոբելեար եղած ըլլալը։ Մինրան տուն փեսայ կ'ընդունուի, զի Վիշէն հեռացած և վախճանած էր, Կոմիտաս պաշտօնապէս միայն բնակակից կը սեպուէր, հայրս ծերացած էր, ես Արմաշ էի, տունը ժիր հոգացողի պէտք ունէր։ Առաջին առթիւ Մինրանի դիրքն ալ կը բարուոքուէր, զի պզտիկ սեղանաւորութենէն Անքր (Ancre) ապահովագրական ընկերութեան անցած, անկէ ալ Բարիզի Իւնիօն (Union) ապահովագրական մեծ ընկերութեան կ'անցնէր Սիմոն Գոյսէրլեանի տեսչութեան ներքև, և ապահովագրութեան կեանց ճիւղին պետ կը նշանակուէր։ Մինրան և Ագապի իրարու կատարեալապէս յարմարած էին և իրարու վրայ կը գուրգուրային։ Մայրս փեսան սիրեց, Եւգինէ քոյրս շատ գոհ մնաց, և ամենայն ինչ կանոնաւոր կ'երթար։

Առաջին զաւակնին ծնաւ 1892 ապրիլ 20|2 մայիսին, ճիշդ այն օրերը որ ես Արմաշէ եկած Կ. Պոլիս կը գտնուէի էջմիածին պատրիարքական պատգամաւոր երթալու համար, և յանձնարարեցի մկրտութիւնը յապաղել մինչև դառնամ, և ես անձամբ կատարեմ, ինչպէս ալ ըրի մայիս 17|29ին, ոչ թէ հանդիսաւորի, այլ մկրտիչ քահանայի դերը կատարելով և երախան ձեռքովս աւազան իջեցնելով։ Անունը Պօղոս դրի, իմ առաջին անունս նորոգելով, թէպէտ կնքահայրը Վահան կ'ուզէր, և Պօղոս-Վահան ալ ըսի, բայց Պօղոս անունը տիրեց, զոր թէպէտ նոխապէս սովորական և ոչ նորալուր գտան, սակայն իմ անունս ըլլալովը պատուաւոր դարձաւ։ Ես բնաւ նորածինի և մանկիկի փորձառութիւնը չունէի, զի ես ինքս տղայ մեկնած էի տունէն 1851ին, և երբ 1866ին դարձայ նոր քոյրեր արդէն աղջիկներ էին։ Պօղոսը ինձի հետաքրքրական առարկայ դարձաւ, և այն օրէր որ Արմաշէ կուգայի, հոգեբանական գնաւթիւններ կ'ընէի

թէ ի՛նչ կերպերով գիտակցութիւնը կը սկսի և կը զարգանայ պզտիկ տղոց վրայ, և այդ նպատակով փորձեր ալ կ'ընէի խաղալիքներով և զանազան մանր առարկաներով. այբուբենի տառերն ալ խաղալիքներու ձեւերով ճանչցնել տալու յաջողեցայ։ Պէտք է ըսել թէ փորձերս ալ լաւ գետնի վրայ կ'ելլային, զի ուշիմ տղեկ մը եղաւ Պօղոս, և մշակուելով աւելի եւս բացուեցաւ։ Տնեցւոց ալ հրահանգներ պակաս չէի ըներ, թէ ի՛նչ խօսքերէ պէտք է զգուշանան, և ի՛նչ ձեւերու ու կերպերու պիտի հետեւին։ Մայրը ինքն կատարեց ատնտուի դերը, իր զաւակը ուրիշի յանձնելէ զգուշանալով, և ամէն մի պզտիկ բանի համար սիրտ կը հատցնէր։ Կոմիտաս ալ բժշկական տեսակէտէն խնամքն ու հրահանգները զանց չէր ըներ։ Հօրս համար թոռ զգուելու առաջին տոնիթն էր, զի Վիչէնի զաւակը հեռու մնացած էր, եւ մօրը պաղ յարաբերութիւններն ալ դիւրութիւն չէին ընծայած։

Ագապի երկրորդ զաւակին ծնունդէն առաջ տեղի ունեցաւ հօրս մահը 1894 ապրիլ 1|13ին։ Բաւական ատենէ ի վեր չնչաբերելութիւն մը կը տիրէր վրան, որ երթալով սաստկացաւ, եւ տարիքին յառաջանալովը աւելի ապրեցիկ դարձաւ և վտանգաւոր երեւոյթներ սկսան երեւան գալ։ Մահուանէ երկու շաբաթ առաջ Կոմիտաս լուր տուած էր, թէ վտանգը կը մօտենայ, սակայն ես Սրմաշէ չհեռացայ, պաշտօնական զբաղումներս չէին ներեր, վերջին տեղեր ալ եկած տեսնուած էի, գալով ալ բանի մը օգտակար ըլլալիք չունէի, վտանգն ալ յանկարծական տագնապի մը պատճառութենէն կախում ունէր։ Իրօք ալ մահուան օրը Կոմիտաս եկած տեսած էր, և վտանգի նշան չնշմարելով մեկնած էր, երբոր հազիւ թէ նա քիչ տունէն կը հեռանայ, յանկարծական տագնապ մը հօրս շունչը կը սպառէ, և Կոմիտասի եռեւէն մարդ և լուր հատցնելու և ետ կոչելու կը տիպուին։ Հայրս վախճանած էր 77 տարի և 3 ամիս ապրած, մինչև վերջին վայրկեանը ուշը վրան էր, ըրածին ըսելիքին գիտակ, տնական գործոց կը հետեւէր։ Իտալերէն լեզուի հմտութիւն ունէր, գաղղիերէնը հասկնալու ինքնօգնութեամբ հասած էր, գործէ և առեւտուրէ և ապրանքէ լաւ կը հասկնար, խնայողական բայց ոչ կծծի մատակարարութիւնը կը սիրէր, զաւակացը զարգացման նախանձախնդիր և աշխատող եղած էր, սուտէ և խաբէութենէ խորշելով կը խորշէր, պարտք ունենալէ այնպէս կը խորշէր որ անհան-

գիստ կ'ըլլար եթէ տեղ մը պարտք ունենար, և վճարելու ինքը կը փութար տանիլ և յանձնել։ Կրօնասէր էր և պատուիրանապահ, բայց և կրօնական խնդիրներու վրայ սեպհական տեսութիւններ ունէր, որոնք սխալ և մոլոր չէին, բայց ինքնատիպ կնիք կը կրէին։ Առակներու և առածներու ընդարձակ կիրառութիւն ունէր, և զուարթութեանց ու զուարճութեանց հաճոյքով կը մօտենար։ Դեղարանը փակելէն ետքը իւր արտօնագիրով, փորձառական և ոչ վկայեալ դեղագործներու դեղարաններուն պատասխանատուութիւնը կը ստանձնէր և օրը հոն կ'անցուներ։ Վերջին ատեններ Ծաննի մեծ դեղագործին երկու դեղարաններէն Բերայինը իւր անունով կը գործէր։ Մէկ խօսքով իւր տեսակին մէջ անարժէք մէկ մը չէր։ Յուղարկաւորութիւնը կատարուած էր ապրիլ 3|15ին կիրակի օր, մեծաշուք հանդէսով և ներկայից խուռն բազմութեամբ, և թաղուած է Շիշլիի գերեզմաններոցը իւր պատրաստած թաղման թաղին մէջ, իսկ ես ապրիլ 21|3 մայիսին Սրմաշէ գալով գերեզմանին այցելեցի։ Նոյն օրը վախճանած էր Միքայէլ հօրեղբօրս վերջին զաւկին բժիշկ Պետրոսի Վահրամ նորածինը, զոր մեր թաղին մէջ ամփոփել տուի։ Իսկ Միքայէլի մեծ որդին Յարութիւն անագան ամուսնացած էր նոյն 1894 տարւոյ յունուար 30|11 փետրուարին։

Միհրան և Սգապի երկրորդ զաւակ մը ունեցան նոյն 1894 տարւոյ սեպտեմբեր 1|13ին երբ բոլոր Կ. Պոլիս և Բերա յատկապէս երկրաշարժի ահուդողի մէջ էր, ամէն ոք դեռնայարկեր իջած էր բնակիլ, և Սգապիի երկունքն ալ տունին վարի սենեակին մէջ տեղի ունեցած էր։ Մկրտութեան համար ապասեցին որ ես Սրմաշէ գալով անձամբ կատարեմ, սակայն գալս դժուարացաւ, և վերջապէս կատարել տուին նոյեմբեր 20|2 դեկտեմբերին։ Միհրանի պապին և Պօղոսի մկրտութեան կնքահայր եղեր էր Տիգրան եղբայրը, երկրորդ զաւակին ալ կնքահայր եղաւ Տիգրանի մեծ որդին Վահրամ, և երախայինն անունը կոչուեցաւ Արաքսի-Իսկուհի, երկրորդ անունը Միհրանի մօր անունէն առնելով։ Կրնար վախցուիլ որ երկրաշարժի ահուդողը մօրը և որդուն վրայ ազդէր, սակայն երկուքն ալ անվտանգ ու անհետեւանք անցուցին տագնապը։

Միհրան և Սգապի յատկապէս Սրմաշ եկան իրենց զաւակներով Դպրեվանքի սաներէն առաջին դասարաններուն քահա-

նայական ձեռնադրութիւն և աբեղայական օրհնութիւն տալուս առթիւ, որուն ներկայ գտնուեցան 1895 յունիս 18/30ին, և երբ հօթն նորընծաները Կ. Պոլիս բերի Իզմիրլեան պատրիարքի ներկայելու, օգոստոս 23/4 սեպտեմբերին նորընծայից հացկերոյթին ալ տրուեցաւ մեր տունը, որուն ներկայ եղան նաեւ Մշոյ միաբան Ներսէս Խարխանեան և Երուսաղէմի միաբան Վահրամ Սգարեան վարդապետներն ալ։ Նորընծաները Կ. Պոլիս էին տակաւին, երբ Կոմիտասի պսակը օրհնեցի։

Կոմիտաս շատոնց կենակից էր դերասանուհի Յովհաննէս Սճէմեանի կնոջ՝ հին դերասանուհի Շապիկ Քէօյլիւեանի հետ, որ ամուսինէն բաժնուելէն ետքը ուրիշներու հետ ալ կենակցած էր։ Սճէմեան դեռ կ'ապրէր, և ամուսնալուծում պահանջել դժուար էր, զի յանցապարտութիւնը հաւանաբար կնոջ վրայ պիտի ծանրանար և վճիռը նպաստակին պիտի չծառայէր։ Այլ երբ Սճէմեան մեռաւ, խնդիրը դիւրացաւ, և կենակցութիւնը օրինաւորութեան դարձնելու համար ջանացի պսակի օրհնութիւնը տալ, և գործին ազեղ կողմը փակել։ Կոմիտաս և Շապիկ շատ սիրով ապրած էին, և այնպէս ալ շարունակեցին ապրիլ, միայն թէ կնոջ շռայլ կեանքը, անխորհուրդ ծախքերը, քմահաճ պահանջները, ծանր նեղութեան եղբօրս վրայ, որ չկրնալով դիմադրել և ուզելով կինը միշտ գոհացնել՝ պարքարի տակ ինկաւ, կնոջ անխոհեմութիւնը իր գործերուն ալ վնասեց, ներքնապէս նեղուեցաւ, բայց կարծես թէ կնոջ կողմէն դիւթուած էր որ անոր ամէն ձգտումներուն, հաճոյքներուն, և նոյնիսկ անխորհուրդ և նախապաշարեալ ուղղութեան համակերպելով համբերեց և կրեց, սակայն նիւթական նեղութեան հետ իրեն քաջալերով առողջութիւնն ալ գամագիւտ եղաւ։ Պսակի օրհնութիւնը կարծես աւելի վնասակար քան թէ օգտակար եղաւ այս կողմէն, զի Շապիկի վրայ վստահութիւն ներշնչեց չլքուելու և չարձակուելու, և աւելի ուժգնութեամբ իւր ընթացքին մէջ յառաջացաւ։ Սակայն իմ դիտումս բարոյական տեսակէտն էր, և ծանր էր ինձի եղբօրս օրէնքէ դուրս կենակցութեան մէջ գտնուիլը։ Այս ալ երկրորդ հարսն եղաւ, որ, ինչպէս կանխեցի յիշել, բարեբախտութիւն չբերաւ, և պատճառն ալ դարձեալ ապաժաման ամուսնութիւնն էր, զի Կոմիտաս յիսուն տարեկան էր պսակին օրը։

Մինրանի և Սպասլիի երբորդ զաւակը ծնաւ 1896 օգոստոս

23|4 սեպտեմբերին, Կ. Պոլսոյ մեծ կոտորածէն և երկիւղալի տագնապէն միայն ինն օր ետքը, որուն մէջ Ագապի ալ մեծ յուզումներ ունեցած էր, թէ Միհրանի և թէ ինձի համար երկիւղներ ալ կրած էր, սակայն այս անգամ ալ մայր ու աղայ անվնաս ու անվտանգ անցուցին։ Պատրաստուած ըլլալով Սրմաշ դառնալ, սեպտեմբեր 7|29ին մկրտութիւնը կատարել տուի բոլորովին պարզ կերպով և անձամբ դրոշմի մասը կատարեցի։ Ինչպէս իւր տեղը գրած եմ, սեպտեմբեր 10|22ին մեկնեցայ հոկտեմբեր 15|27ին դարձայ, և նոյեմբեր 6|18ին պատրիարք ընտրուեցայ, և այդ կէտէն նոր հանգրուան մը կը կազմեն հատուածը փակելու, որ արդէն ալ բաւական երկարեցաւ, իրարմէ անկախ միջադէպներուն յատուկ բացատրութիւններ պահանջելուն պատճառով։

ՂԱ

Իսմիրնոյ, 1918 ապրիլ 18|1 մայիս Դշ.

Պատրիարքական ընտրութիւնս ինչպէս դիս յուզած էր, նոյնպէս ամեցիներն ալ սկիզբէն, թէպէտև պատուոյ բարձրացումը լաւ տպաւորութիւն յառաջ կը բերէր։ Կ. Պոլսոյ չփոթ վիճակէն իրենք ալ տաղտկացած և անսաստդութենէ նեղուած՝ Կ. Պոլիսէ հեռանալու գաղափարը ունեցած էին, և որոշման իսկ հասուցած և պատրաստութեան ձեռնարկած. Միհրան քեռայրս ալ Եգիպտոս էր ուղևորած՝ այնտեղ իրեն համար կայութիւն մը եւ ընտանեաց համար բնակարան մը պատրաստելու, որով ընտրութեան օրերը նա Կ. Պոլիս չէր գտնուեր։ Առաջին ըմբռնումներ հեազնետէ մեղմացան, և իմ ալ կամակար յանձնառութիւնս, ընտեղիներն ալ հանդարտեցուց, և սկսան միայն գործին հրապուրիչ կողմը մտածել, և պատրիարքական աստիճանին պահանջած տնական յարմարութեան և զգեստներու պիտոյից և պաշտօնական պայմաններու աշխատիլ, մինչև որ հաստատութիւնը տեղի ունեցաւ, և 1896 նոյեմբեր 20|2 դեկտեմբերին դիս պատրիարքարան առաջնորդելու համար պատուիրակութիւններ, պաշտօ-

նէութիւններ, բարեկամներ և հետաքրքիրներ տունը լեցուեցան, և մեծաշուք հանդիսանօք մեկնեցայ։ Այն օր ամենուն աչքին զարկաւ մօրս ուրախութիւնը իւր զաւկին փառաւորութեան համար, և լրագիրներն ալ խօսքերէ ու վարմունքէ իրրև նշանակալից պարագայ յատկապէս փութացեր էին յիշատակել՝ գլխաւորապէս յաջողութեան համար սրտագին մաղթանքները։ Կոմիտաս եղբայրս գիւղէն իջած էր ընտրութեան միւս առտուն, իսկ Միհրան Եգիպտոսի մէջ հեռագրական գործակալութենէն իմացած էր ընտրութիւնը և Եգիպտոս գտնուող քրոջս ու քեռայրիս հետ խնդակցութիւններ կը փոխանակէին, և տեղափոխութենէ ձեռնթափ ըլլալով օր առաջ Կ. Պոլիս դառնալու պատրաստութեանց կը ձեռնարկէր։ Իմ միտքս հանգուցեալ հօրս կ'երթար, որ հարկաւ դժուարութեան մտածումներէ անկախաբար, մեծ ուրախութիւն և մխիթարութիւն պիտի զգար իւր որդւոյն ազգային շրջանակին մէջ բարձրագոյն դիրքի հասնելուն վրայ։ Վիշէն ալ չկար որ ազգային գործերու փորձառութիւնն ունէր, և եղելութիւնը իւր իսկութեան մէջ կրնար գնահատել։

Միհրան շուտով կը դառնար, և տնական նոր կարգադրութեանց գլուխը կ'անցնէր, իսկ դեռ նոր չհասած Գամիկ Հիւնքեարպէյլենտեան բարեկամն էր, որ արտաքին գործառնութեանց և պատրաստութեանց հոգը ստանձնեց, զի պատրիարքարանի և հիւանդանոցի պաշտօններով ազգային սովորութեանց և պաշտաճից կատարելապէս տիրացած էր։ Թէպէտ առջի օրեր այս ու այն կողմէ ակնարկներ եղան որ հաստատուն բնակութիւնս պատրիարքարանի մէջ ըլլայ, սակայն ես չորեքշաբթիէ կիրակի չորս օր մնալով տուն դարձայ, որովհետև նշանակութիւն չունէր պատրաստ և հանգիստ տուն ունեցած ատեն, պատրիարքարանի մէջ նեղուիլ և անհանգիստ ապրիլ։ Արդէն նախորդ պատրիարքներն ալ՝ Վարժապետեան, Վեհապետեան, Աշըգեան և Իզմիրլեան պատրիարքարանէ դուրս բնակութիւն ունէին, և պատրիարքարանի բնակութիւնը Խրիմեանով վերջացած էր, երբոր պատրիարքարանին մէջ խոհանոց պահելու սովորութիւնը խափանուեցաւ և Գամիկ Հիւնքեարպէյլենտեան՝ որ մատակարարն էր՝ պաշտօնով հիւանդանոցի գրասենեակը փոխադրուեցաւ։ Միայն պէտք էր որ տուն մնացած ատենս առձեռն գործողութեանց ու պաշտօնական և անպաշտօն այցելութեանց եկողներ դժուարութեան

չհանդիպէին, անյարմարութիւն տեղի չունենար և խօսքի տեղի չտուէր։ Այս նպատակով խիստ հրահանգներ տուած էի որ իմ առն գտնուած տաեռս տղաքը մէջտեղերը չգտնուին և տըղայական խաղ ու աղաղակէ զգուշանան, տնեցիներն ալ եկող գացողներու հետ չհետաքրքրուին, այլ եկողներ տունը մնացող բարապանի ձեռքով սենեակս առաջնորդուին, և ելեքտրական զանգակով տրուած նշանին համեմատ պատուասիրութիւններ բարապանի ձեռքով կատարուին, և գրեթէ կատարեալ պաշտօնական ձև պահուի։ Ընդունելութեան սրահն ալ, որ իմ աշխատութեան սենեակիս հանդիպակացն էր, միշտ տրամադրելի մնայ պատուաւոր և պաշտօնական այցելութեանց համար։

Իմ տնական կեանքս ալ կանոնաւորութեան վերածած էի։ Երեկոները պատրիարքարանի գործերը աւարտելով կամ դադրեցընելով ուշ տուն կը դառնայի, ուր ընդհանրապէս կ'աշխատէի հասած նամակները կարդալու և մակագրելու, ծանօթագրուած գիրերը աչքէ անցունելու, պատրաստուած նամակները քննելու և ստորագրելու։ Կարևոր գիրերը անձամբ կը պատրաստէի, ինչ որ դժուար էր պատրիարքարանի մէջ ընել՝ եկող գացողի, խօսող խնդրողի և պաշտօնէից դիմումներու պատճառով. թող օրուան մէջ այս ու այն տեղ այցելելու համար ծախսուած ժամերը։ Այս զբաղումները կը կատարէի մինչև եւրոպական ժամը 8, որ ընթրիքի հաստատուն ժամն էր, և անկէ ետքը ժամանակը հանգիստ ընելով ննջելու տեղը կը հասնէր։ Առաւօտները տունէ չելած կը ճաշէի, պատրիարքարանի մէջ երեկոյեան դէմ թէյով կամ օշարակով և պաքսիմատով կը գոհանայի։ Կիրակիները եկեղեցւոյ կը նուիրէի, և երկուշաբթիները անձնական ըզբաղմանց համար տուն կը մնայի, սակայն սովորութիւնս գիտցողներ հոն ալ հանգարտ չէին թողուր։ Ամառուան միջոցին գիւղերու տօնական օրերուն կամ մասնաւոր այցելութիւններու առիթներով շաբաթ երեկոյէն դիւղ կ'ելլէի, վարժարանը կ'այցելէի, ծանօթ տուն մը հիւր կ'ըլլայի, կիրակին դարձեալ եկեղեցւոյ և կարևոր այցելութեանց կը յատկացնէի և երկուշաբթիներ քիչ մը շունչ առնելու համար պտոյտ մը կը կատարէի։ Աշխատութեան յաճախութիւնն ու կանոնաւորութիւնը ամենուն աչքին կարկած էր։ Այս մասերը ընտանեկան կեանքին հետ ալ կապուած ըլլալուն այստեղ բացատրել անյարմար չսեպեցի։ Աւելցնեմ

որ հակառակ չարաչար աշխատութեանց՝ պատրիարքութեան միջոցին ծանր հիւանդութիւն չեմ ունեցած։ Առողջապահական պայմաններու ալ խնամով հետևած եմ։ Ակռաներս կանուխէն վատացած ըլլալով 1893 փետրուար 13|25էն սկսայ ամբողջական ատամնաշար գործածել, ոտքիս երակներուն ուռելուն պատճառաւ (Varice) 1902 դեկտեմբեր 4|17էն առաձգական զանկապաններ կամ առողջապահական փաթթոններ կրելու ստիպուեցայ։ Առանին մարմնամարզի սովորութիւն ալ պահեցի, 1902 մարտ 20|2 ապրիլէն երկաթեայ զոյգ գունդերու և 1904 մարտ 3|16էն առաձգական գործեաց կիրառութեան ալ սկսայ։

Տնական հանգամանքներէն մէկն ալ տունին նեղ դալն եղաւ, բայց չուզեցի տուն տեղ փոխելով աչքի զարնել, և օգուտ քաղեցի մեր բնակած Ըթըր փողոցի վարձու տունին միևնոյն սեպհականութեամբ երեք յարակից տուներ ըլլալէն, երկրորդը Ագարճա փողոցին կողմէ և երրորդը չեղակի երկու փողոցներու մէջ։ Բնակութեան ընդարձակութիւնը պահանջ դարձաւ ինծի՝ պէտք եղած մասերէն, տղայոց մեծնալէն, և հիւրերու տրամադրելի տեղ ունենալէն։ Նախապէս 1899 մայիս 2|14ին Ագարճայի կողմի տունէն երկու սենեակներ մերինին կցեցի, մօրս մահուանէն ետքը 1902 փետրուար 7|20ին անկողինս անոր սենեակը փոխադրեցի, զոր առաջ մեծ և ամբողջական վարագոյրով զատած էի աշխատութեան սենեակին մէջ, և երբ այսչափին ալ չը բաւեց, 1905 հոկտեմբեր 30|12 նոյեմբերին երկու սենեակները թողլով՝ երրորդ տունը ամբողջապէս կցեցի, ներքին անցքեր բանալով, և հոն զետեղեցի ննջասենեակս ու գրադարաններս, և Միհրան ու Ագապին իրենց զաւակներով։ Տուներու կցման աշխատութիւնները հոկտեմբեր 24|6 նոյեմբերին սկսան և նոյեմբեր 7|20ին աւարտեցան։

Պատրիարքութեան ժամանակի տնական յիշատակներն ալ նախընթացներուն պէս նիւթերու նմանութեամբ և յարակցութեամբ պիտի շարունակեմ պատմել, և ոչ ժամանակագրութեան հետևելով։

Քեռորդիներուս ուսումնական ընթացքէն սկսելով, երեքն ալ՝ Պօղոսն ու Սրապքսին ու Սիրարփին՝ չորս տարեկան ըլլալնուն Համազգեաց օրիորդաց վարժարանը սկսայ յղել, ուր մանր մանչերն ալ կ'ընդունուէին, և կարող ու բարեկամ տեսչուհի մը

յատուկ կերպով վիրինք կը խնամէր։ Այնտեղ շարունակեցին մինչև 1902, ուսկից նոր դպրոցական տարեմուտին՝ սեպտեմբեր 19|2 հոկտեմբեր՝ Էսայեան երկսեռ վարժարանը փոխադրեցի։ Իմ ուղղութիւնս եղած է որ նախակրթական ուսումը ազգային շրջանակի մէջ տրուի, որպէսզի իրենց ինքնութիւնը կազմուի, և անկէ ետքը միայն օտար վարժարաններ անցնին լեզուներու և ընդարձակագոյն ուսումներու համար։ Պօղոս երկու տարիով Էսայեանի վերի դասարանները աւարտեց, 1904 սեպտեմբեր 6|19 ին Բերայի Սուլթանիյէ վարժարանը մտաւ, և երկու տարի ալ հոն շարունակելէ ետքը՝ 1906 սեպտեմբեր 7|20ին Ֆօր գաղղիացւոյն բացած գաղղիական վարժարանը անցաւ, աւելի ևս գաղղիերէնի մէջ զօրանալու համար, որուն ընթացքը լրացուց 1908 ին, երբ ևս ալ պատրիարքութենէ հրաժարեցայ։ Տղուն ապագայ զբաղումին համար նախադասեցի վաճառականութիւնը, որ քաց ասպարէզ ունի իւր առջև՝ աւելի ազատ կեանք մը քան որևէ պաշտօնէութիւն, և նոյն իսկ բժշկական ու փաստաբանական ընթացքէն աւելի։ Այս նպատակով 1909 յունուար 2|15ին Միհրան Մուրատեան կարող և յաջող, ուղղամիտ և խղճամիտ վաճառականի մօտ դրինք, ուր երկու տարի գործնական վարժութիւնն ընելէն ետքը՝ Մուրատեանի խորհրդով Մարսիլիա զբնաց վաճառականական վարժարանի ընթացք կատարելու։ Միհրան ինքն անձամբ տարաւ տղան 1910 սեպտեմբեր 8|21ին, որ քննութիւն տալով երկրորդ դասարան ընդունուեցաւ, և Միհրան սեպտեմբեր 28|11 հոկտեմբերին Կ. Պոլիս դարձաւ։ Պօղոս երկու տարիով ընթացքը լրացուց, և Մուրատեանի Մանչեսթրի վաճառատունը մտաւ 1912 յուլիս 21|3 օգոստոսին, և կատարելապէս անգղիական առևտրականութեան մէջ վարժուեցաւ։ Երկու տարի ետքը Մուրատեան մտադիր ըլլալով իտալական վաճառատուն մը ևս բանալ, Պօղոսը Միլանօ քերել տուաւ, սակայն վերահաս պատերազմը գործին սկզբնաւորութիւնը խափանեց, և Պօղոս Իտալիայէ Եգիպտոս անցաւ յաջող ժամանակի սպասելու նպատակով։

Իսկ աղջիկներէն Արաքսի 1906 սեպտեմբեր 5|18ին Էսայեանի ընթացքը աւարտելով, Բերայի անգղիական օրիորդաց վարժարանը մտաւ, իսկ Էսայեանի չրջանաւարտի վկայականը ստացաւ 1907 փետրուար 3|16ին հանդիսական գումարման մէջ։

Միւս տարին 1907 դեկտեմբերին Սիրարփի ալ իրեն ընկերացաւ և ընթացքնին շարունակեցին տարւոյ մը տարբերութեամբ։ 1911ին Արաքսին դարձեալ ղրկել աւելորդ դատուեցաւ, բայց ուրուկհետև 1912ին Սիրարփի ընթացքը լրացնելով վկայական պիտի ստանար, Արաքսին ալ նորէն վարժարան դարձաւ և վերջին տարին միւսին ըրին։ 1913 յունիս 14|27ին աւարտական քննութիւնները տուին և դեկտեմբեր 6|19ին վկայականները ստացան։ Երկուքին ալ ընթացքը յաջող եղաւ, մանաւանդ Արաքսիինը, որ 1907 դեկտեմբեր 6|19ին չորս, և 1908 դեկտեմբեր 5|18ին հինգ մրցանակներ միանգամայն ստացաւ, և վերջին 1913 տարին անգլիական ընդհանուր վարժարանաց մրցման քննութեանց մէջ առաջին մրցանակին արժանացաւ։ Սիրարփի ալ միշտ անոր ամենամօտ հետևողն էր եղած և մրցանակներ ստացած։ Վարժարանէ ելնելէն ետքն ալ տունին աշխատութիւնները շարունակեցին, Արաքսին աւելի ոյժ տուաւ երաժշտական ու գծագրութեան ճիւղերուն, իսկ Սիրարփի գրական և լեզուական ճիւղերուն հետևեցաւ։

Մայրս տարիքը առնելով զառամութեան նշաններ սկսաւ ցոյց տալ, ինչ որ իմ տեսութեամբ իդէպ է վերագրել միտքի անմշակութեան, զի մինչևոյն տարիքին մէջ հայրս երբեք այդ վիճակը չունեցաւ։ Մարմնով ալ հեազհետէ կը տկարանար, կը կծկէր և կը պզտիկնար, և հարկ կ'ըլլար զգեստները շարունակ կարճեցընել։ Ժամ մը առաջուան եղելութիւններուն յիշողութիւնը կը կորսնցունէր, ընդհակառակն իր երիտասարդութեան և հարսնութեան պարագաները կը պատմէր շարունակ։ Իր սովորական փափաքն ու աղօթքն էր որ երեք օրէ աւելի մահուան անկողին չունենայ, և փափաքն ալ կատարուեցաւ, զի 1902 յունուար 10|23ին անկողին ինկաւ, և այցելող բժիշկը կենսական ոյժերուն սպառումը հաստատեց, և 14|27ին հոգին աւանդեց։ Մինչև յետին վայրկեանը սիրտի հանգարտութիւն վայելած ըլլալու համար՝ իւր խոստովանահայր Պագշեանը կանչեցի վերջին թոշակը մատակարարելու, առանց սակայն հրապարակային ցուցադրութեան, ինչ որ նա ալ ամենայն խոհեմութեամբ կատարեց, եւ յուղարկաւորութեան մասին խնդիր չյուզուեցաւ, զի անձնագրական տոմսն ալ (ժամանիյէ Ընէլէրէ) Հայոց պատրիարքարանին իրաւասութեան ներքև ըլլալը կը հաստատէր։ Յուղարկաւորու-

թիւնը պատրիարքի մը տիրամօր արժանաւոր հանդիսութեամբ և փառաւորութեամբ կատարուեցաւ յունուար 16|29ին, բոլոր եպիսկոպոսներ և վարդապետներ, և ամէն եկեղեցիներէ բազմաթիւ քահանաներ հաւաքուած էին դագաղին շուրջը և մի մասն ալ դասին մէջ իր սգաւոր կայնած. իսկ ժողովրդեան բազմութիւնը անհամար, և ժողովականներու և մեծամեծներու դասակարգէն բազմաթիւ յոյժ։ Ես դասին մէջ մնացի և եղբօր Կոմիտասի հետ բազմութեան ցաւակցական ողջոյնները ընդունեցի, և յետոյ մեռելաբարձ կառքին հետէն մինչև Շիշլիի գերեզմանոցը ընկերացայ։ Տիրամօրս նկարագիրը կանուխէն տուած եմ և կրկնելու պէտք չեմ տեսներ. նա տարեցաւ եօթանասուն երկուքուկէս տարիէ քանի մը օր պակաս, հօրս մահուանէ ետքը եօթը տարի և իննուկէս ամիս եւս ապրեցաւ և անկէ տասնինը ամիս աւելի ապրած եղաւ։

Մօրս մահը բնութեան օրինաց համաձայն էր, եւ պարզապէս կենսական կօրութեանց պակսելովը կը վախճանէր, որով ցաւը կը մեղմանար, իսկ ինչ որ կատարելապէս ցաւալի եւ անակնկալ եղաւ Ագապի քրոջս մահն էր, որ սաստկապէս ազդեց բոլոր ընտանեաց և իմ վրայ յատկապէս։ Ամենէս պըզտիկն էր, տակաւին քառասուն և չորսուկէս տարեկան էր, հազիւ տասնեւհինգ տարիէ իվեր ամուսնացած էր, երեք մանրուք զաւակներ կը թողուր ինն է տասուիրեք տարեկան, որոնք մայրենի խնամոց անհրաժեշտ պէտք ունէին։ Ծանր հիւանդութիւններ չէր քաշած, անձնական սկարութեան նշան չէր տուած, և բոլորովին չսպասուած մի պահուն 1905 դեկտեմբեր 11|24ին անկողին ինկաւ, և 20|2ին հոգին աւանդեց։ Հիւանդութիւնը թոքատապ (Pneumonie) դատուեցաւ, որ թոքերը յանկարծ և ամբողջաբար գրաւեց, և խեղճը չկրցաւ սաստկութեանը դիմանալ և ինն օրով կեանքը վերջացաւ։ Այնչափ անակնկալ էր Ագապին մահը, որ առաջին պոյժին ժողովուրդին մէջ հիւանդագին Եւգինէն մեռած կարծուած էր, և ոչ թէ առողջ Ագապին։ Ես մինչև վերջին շունչը քովը մնացի և յետոյն պահուն ուրիշները հեռացնելով բժիշկին հետ մինակ էի, բժշկական խնամքը պակաս չեղաւ, գործանողը Վահրամ Թորգոմեան, եղբայրը Կոմիտաս Օրմանեան ու դրացին Մազսուտ Շէրպէթճեան բժիշկներ ջանքերնին պակաս չբրին, այլ չյաջողեցան։ Ցուղարկաւորու-

թիւնը տեղի ունեցաւ դեկտեմբեր 23|5 յունուարին, որ աւելի նշանաւոր դարձաւ հանրային սուգի նշանակութեամբը, քան հանդիսական լիուլի պարագաներովը։ Իւր քաղցր բնաւորութեամբը, գրաւիչ վարմունքովը, սիրայորդոր ջանքերովը, աղքատաց կարեկցութեամբը ընդհանուր համակրանաց առարկայ էր. Էսայեան վարժարանի կարօտ աշակերտաց և աշակերտուհեաց կարող տուներէ պարբերաբար ճաշի կերակուր մը պատրաստելու գործին նախաձեռնարկը և յորդորողը ինքն էր եղած։ Թաղումը տեղի ունեցաւ Շիշլիի գերեզմանատունը ընտանեկան թաղին մէջ, ուր եղբօրմէս, հօրմէս ու մօրմէս ետքը ինքն չորրորդ կ'երթար յուխտենական քունը ննջելու, եւ ես անձամբ օրհնեցի եւ կնքեցի անոր գերեզմանը։ Յուղարկաւորութեան օրը պատարագի մատուցումը դժուար ըլլալուն 1906 յունուար 15|28ին յատուկ հոգեհանգստեան պատարագ մատուցի Ս. Երրորդութիւն եկեղեցին, մօտս յիշատակն ալ կըցելով, որուն մահուան չորրորդ տարեդարձը կը լրանար։ Փափաքելով Ագապին յիշատակը անմահացնել, որևէ փառաւոր մահարձանէ նախադասելի համարեցի գրաւոր յուշարձան մը կանգնել Ագապի վերատուութեամբ, բաւական ստուար հատոր մը, որուն սկիզբը կենսագրական և մահագրական (Neerologique) յօդուած մը եւս ինքս խմբագրեցի զգայուն շեշտերով, և անոր ետեւը հաւաքեցի խօսուած դամբանականները եւ կարդացուած ուղերձները, լրագրական յօդուածները, յիշատակին նուիրուած ցաւակցական նամակները, և իւր անձնական հատորին (Album) մէջէն գլխաւոր գրուածները։ Հատորը սգակերպ շքեղութեամբ կարգադրեցին իւր կեսարթուներ Վահրամ եւ Հրաչեայ, եւ 1907 յունուար 1|14ին առաջին օրինակներ հրապարակ հանեցին։ Ես փութացի մի մի օրինակ նուէր զրկել բոլոր անոնց, որոնք եկեղեցական հանդիսութեան, յուղարկաւորութեան մասնակցութեամբ, ցաւակցական գիրերով, յատուկ հրատարակութեամբ, մասնաւոր այցելութեամբ և ըղձից յայտարարութեամբ իրենց համակրութիւնը վկայեցին քրոջս յիշատակին։ Ագապին անմայր թողած որբերուն մայրական խնամքը կատարեալ հոգածութեամբ և լուրջ արթնութեամբ ստանձեց մօրաքոյրնին Եւգինէ, և կրնայ ըսուիլ թէ կատարեալ մայր մը եղաւ, մօր պակասութիւնը զգալի չընելու չափ։

Ազգականական շրջանակէն տեղի ունեցած մահերէն յիշեմ յետապանքն ալ։ Հրեղբօրորդիս Յարութիւն, պետական դեղապետ և արքունական զմուսագործ, վախճանեցաւ 1898 սեպտեմբեր 8/20ին, ամուսնութենէն հինգերորդ տարին չլրացած, միակ փոքրիկ աղջիկ մը թողլով զոր Միշէլին (Micheline) կոչած էր՝ իր Միքայէլուհի՝ իւր մօրը յիշատակին. մօրմէս քսան ամիս ետքը 1903 սեպտեմբեր 12/25ին մեռաւ անոր մօրքեռորդին Պիրիճիկ Առաքելեան, Սիւպիւ (պճնազարդ) կոչուած ճաշարանապետ Գրիգորի կողակիցը, որ միակ զաւակ մը ունեցած է Անտոն՝ հեռագրական պաշտօնեայ, և երկուքն ալ իրմէ շատ առաջ վախճանած էին։ Ագապիին մահուանէն ալ քսան ամիս ետքը՝ 1906 սեպտեմբեր 1/14ին կը վախճանէր անոր ները Աղաւնի, Տիգրան աներձապին կողակիցը, չորս մանչ և երկու աղջիկ չափահաս զաւակներու մայր, որուն յուղարկաւորութեան անձամբ նախագահեցի։

Մահերու դիմաց պատկերէն ալ ինչինչ յիշատակած ըլլալու համար աւելցնեմ հանգուցեալ Ալեքսանդր Տէր-Ներսէսեանի դստեր Արուսեակի ամուսնութիւնը ծանօթ տաճկաբան ուսուցիչ և հեղինակ և Պետական Խորհրդոյ օգնական անդամ Պետրոս Կարապետեանի հետ 1904 օգոստոս 30/12 սեպտեմբերին, որոնց գործը դիւրացնելու համար մեր տունը տրամադրած էինք իրենց փոխադարձ տեսակցութեամբ, և Լուսիկ քրոջս դուստր Էլիզ ալ 1909 փետրուար 5/18ին Գահիրէի մէջ պսակուեցաւ մահճաբարձ շոգեկառաց ընկերութեան Գահիրէի փոխ-տեսուչ Կ. Պոլսեցի Ճանիկ Զագըրի հետ։ Իսկ 1913 յուլիս 29/11 օգոստոսին ուսուցչուհի Զապէլ Համբիկեան պսակուեցաւ Ամերիկեան քարտուղի ընկերութեան պաշտօնեայ Պետրոս Սլեանագեանի հետ. Զապէլ ոչ միայն քեռորդիներուս ուսուցչութիւնն էր վարած, այլ իբրև տնեցի մը մտերմութիւն էր պահած և Ագապիին հիւանդութեան ատեն ողջոյց հոգն էր ստանձնած։ Նոյն 1913 տարին օգոստոս 28/10 սեպտեմբերին Տիգրան Տէր-Ներսէսեանի կրտսեր դուստրը Արուսեակ պսակուեցաւ առևտրական Գէորգ Գուլումճեանի հետ։ Կարապետեանենց և Սլեանաքեանց պսակը անձամբ օրհնեցի, իսկ Գուլումճեանց պսակին անկողին ինկած հիւանդ էի։

Ընտանեկան յիշատակներուն կարգին տեղի կրնան ունենալ ուղևորութիւններն ալ. թէպէտև մեր տունէն միայն Մինրան քեռ-

դայրս եղաւ, որ ապահովագրական ընկերութեան գործերով 1903 փետրուար 16|1 մարտին Եգիպտոս, 1908 յունիս 16|29ին Սոֆիա, 1909 հոկտեմբեր 18|31ին Բարիզ, 1909 փետրուար 10|23ին դարձեալ Եգիպտոս և 1909 օգոստոս 31|13 սեպտեմբերին Սելանիկ ուղևորեցաւ, և կարճ միջոցի մէջ գործերը աւարտելով դարձաւ։ Արդէն 1910 սեպտեմբեր 8|21ին Մարսիլիա գացած էր Պօղոս որդին առևտրական վարժարան տանելու, իսկ 1913 ապրիլ 3|16ին Մանչեսթր գնաց զաւակը տեսնելու, և մայիս 8|21ին Զմիւռնիոյ Ծոցին մէջ վտանգուող շոգենաւէն անվտանգ ազատելով 11|24ին Կ. Պոլիս դարձաւ։ Իրեն Մէճիտիյէ երրորդ աստիճանի շքանշան ստացած էի, ինչպէս և Կոմիտաս եղբօրս համար երրորդ աստիճանի սամանիյէ, սակայն յետոյ Կոմիտաս կայսերական կանանոցին համար նշանաւոր ծառայութեան մէջ գտնուելով՝ առաջին աստիճանի մեճիտիյէով, իւլայի աստիճանով, պալատական խորհրդակցի բժշկութեամբ և քաղաքապլխութեան բժշկական ժողովականութեամբ առաւելապէս վարձատրուեցաւ։ Իսկ Լուսիկ քոյրս 1899 յուլիս 17|29ին ամուսնոյն և զաւակին հետ, և 1906 յուլիս 3|16ին միայն զաւակին հետ Կ. Պոլիս եկան և երեք ամիսէ վերադարձան։ Ճանիկ և Էլիզ ալ 1909 յունիս 2|15ին և 1911 ապրիլ 18|1 մայիսին Կ. Պոլիս այցելութեան եկան և ամիս ու ամիսուկէսէ Եգիպտոս վերադարձան։ Իբրև տնական յիշատակ մը աւելցնեմ ևս 1897 փետրուար 13|25ին հօրս սեպհական Մարբուճճլար փողոցի դեղարանին վաճառումը։

Միջադէպ մըն ալ յիշեմ պատրիարքութեանս սկիզբէն մինչև Երուսաղէմ ուղևորիլս անցած տասնեւութ տարիներու յիշատակները փակելու համար, ուր նոր հանգրուան մըն ալ կը կազմեմ վերջին տարիներու յիշատակները գտնելու համար։ Անպարտութեան վճիռէն առաջ 1912ին լրագրական խմբագրի մը հետ տեսակցութեան առիթով՝ պատահաբար խօսքը Աւետիս Սուրէնեանի փաստաբանին վրայ կը դառնայ, և ես համարձակօրէն անոր յաջողութեան վրայ գաղափար մը չունենալս կը յայտնեմ։ Խմբագիրը այդ տեսակցութիւնը յօդուածի նիւթ կ'ընէ և Սուրէնեանի համար խօսուածն ալ կը պատմէ։ Սուրէնեան իբր թէ ես իւր վարկը կոտրած և շահուն վնասած ըլլամ, քաղաքական դատարանի առջև գիս դատի կը կոչէ, գործը կը յանձնեմ Գրիգոր Զոհրապ փաստաբանին, զի թենեակին մէջ մէկու մը միայն խօսուած

խօսքը դատի նիւթ չի կրնար ըլլալ, իսկ հրապարակողը ես չեմ։ Զոհրապ պատշաճ գրութիւնը պատրաստեց և մատուցուեցաւ, որուն վրայ Սուրէնեան նոյեմբեր 1|14ի դատավարութեան օրը, դատարանի առջև դատը ետ կը կոչէ, գովեստի խօսքեր ալ կ'ընէ, և խնդիրը կը փակուի։ Այս ալ իւր տեսակին մէջ նորութիւն մըն էր, և կ'երևի այս կերպն ալ պէտք չէր պակաս ունար, որ պատահարներուն տեսակները լրանային։

ՂԲ

Դամասկոս, 1918 ապրիլ 19|2 մայիս Եշ.

Երուսաղէմի պատուիրակութեամբ 1914 ապրիլ 26|9 մայիսին Կ. Պոլիսէ մեկնելէս անմիջապէս ետքը առաջին յիշատակելի եղելութիւնը Եւդինէ քրոջ եւ Արաքսի ու Սիրարփի քեռորդիներու՝ ապրիլ 30|13 մայիսին Եւրոպա մեկնելնին է։ Միհրան քեռայրս փափաքելով իր աղջիկներուն եւրոպական կեանքի ծանօթութիւն տալ՝ կ'որոշէ որ անգամ մը մինչև Մանչեսթր երթան Պօղոս եղբայրնին տեսնելու, իրենց մայրաղիր դարձած Եւգինէ քոյրս ալ միասին։ Այս նպատակով Մարսիլիա, Բարիզ եւ Լոնտրա դադար առնելով, և քաղաքները ճանչնալով Մանչեսթրը, ուսկից միևնոյն ճանապով երկու ամիս ուղևորութեամբ յուլիս 1|14ին Կ. Պոլիս կը դառնան։ Միհրան ալ իր զաւակներուն զարգացմամբ և երջանկութեամբ ապրող հայր մըն էր, և ուրախ սիրտով անոնց յառաջդիմութեամբ կը մխիթարուէր, երբոր յանկարծական հիւանդութիւն մը՝ սիրտի տկարութեամբ ծանրացած՝ քիչ օրով հոկտեմբեր 25|7 նոյեմբերին զայն ալ կը տանի իւր սիրելւոյն Այգապիին հետ միանալ յաւիտենականութեան ծոցը, ասնոր մահուանէ մերձաւորաբար ինը տարի ետքը, և իւր կեանքին վաթսուներորդ տարին հազիւ սկսած, զի ծնած էր Կարին 1855 յունիս 29|11 յուլիսին։ Ցուղարկաւորութիւնը կատարուած է 27|9ին արժանաւոր վայելչութեամբ, և Օրմանեանց ընտանեկան թաղը թաղուած։ Ես գոյժը առի 26|8ին, և նոյեմբեր 2|15ին յատուկ

հոգեհանգստեան պատարագ և պաշտօն կատարել տուի Երուսաղէմի Ս. Յակոբեանց Մայր Եկեղեցին։ Միհրան իւր դէրքն ու գործը պատուով ու յաջողութեամբ կատարելու կարողութիւն ու հմտութիւն ու վարժութիւն ունէր, բայց ուր առաւել կը գերազանցէր՝ իւր պարկեշտ և կանոնաւոր, բարեմոյն և շինիչ, որդեաէր և տնաշէն բնաւորութիւնն էր, որով Ագապիի հետ կատարեալ զուգակից մըն էր և ընդհանուր համակրութիւն կը վայելէր։ Տունը գրեթէ անոք և անօգնական կը մնար, եւ ներքին հոգածութեան հետ արտաքիններն ալ Եւգինէ քրոջս վրայ կը ծանրանային, և ինծի հարկ կ'ըլլար քաջալերութեամբ և հրահանգներով զիրենք զօրացնել։ Ինչ որ կացութիւնը աւելի կը ծանրացնէր՝ արդէն տարածուած պատերազմի վիճակն ու մանչ զաւակին Պօղոսին արտաքսման գոնուիլն էր, որ հնար չէր թողնը կարգադրել և ժառանգական գործողութիւնները լրացնել, որով ինծի կը մնար քեռորդիներուս խնամքը ստանձնել եւ անոնց պէտքերը հոգալ։ Եղբայրս արդէն շատոնց տունէն բաժնուած էր, իսկ որբերուն հօրեղբայրը իր անձնական շահին մշակողն էր. արդէն եղբայրը տուն փեսայ էր և եղբօրորդիները իրեն գրեթէ օտար կը սեպեր։ Միհրանի մայրը Իսկուհի Տէր-Ներսէսեան ծնեալ Յովասափեան, գրեթէ ինքնաւնամեայ, տակաւին կ'ապրէր իւր որդւոյն մահուան ատեն և ուսկից կը ծագէր Տիգրանի՝ Տէր-Ներսէսեան Միհրանի ժառանգութեան մասնակցելու ձգտումը, նոյնիսկ մօրը 1916 փետրուար 7|20 ին մեռնելէն ետքը ձեռնարկներ ընելով և մաս մըն ալ իւրացնելով։

Երբ քեռայրիս մահուան պարագաներով կ'զբաղէինք, եղբօրս Կոմիտասի մահուան գոյժը վրայ կը հասնէր։ Կոմիտասին իր կենսական կորովը կորանցուցած և հիւծելու ճանապան մտած ըլլալը արդէն յիշեցի, այդ վիճակին հետևանքն էր իր մահը, որ տեղի կ'ունենար 1915 յունուար 6|19ին Պէօյիւքտէրէ գիւղը Վերին Վոսփորի վրայ։ Յուղարկաւորութիւնը տեղի կ'ունենար միւս օրը 7|20 Ծնունդի Մեռելոցին Բերայի Ս. Երրորդութիւն եկեղեցին, իսկ գոյժը ինծի կը հասնէր 9|22ին։ Կոմիտաս զաւակ չունէր, իւր կնոջ առաջին ամուսինէն ունեցած աղջիկը Սաթենիկ ամուսնացած էր, եւ եղբօրս դրամական կացութիւնն ալ պարտքերու ներքև էր, ուստի բնաւ անոր թողօնին չուզեցի միջամտել։ Այրին Շագիկ ալ երկու ամիս ետքը կը վախճանէր,

մարտ 5|18ին, և Պէօյլուքտէրէի եկեղեցին կը կատարուէր յուղարկաւորութիւնը, որով այս կողմէն ամէն գործ ու խնդիր ինքնին կը փակուէր։

Այս պարագաներուն ժամանակ պատերազմին արշաւիրքը երթալով կը սաստկանար, և Կ. Պոլիս մայրաքաղաքն ալ Տարտանելի պատերազմին հետևանօք տագնապէ եւ արկածէ կը սկսեր վախնալ, և շատեր հեռանալու որոշում կուտային, մերոնք ալ քոյրս Եւգինէ և քեռորդիներս Արաքսի և Սիրարփի՝ նոյն տպաւորութեան ներքև 1915 օգոստոս 4|17ին Կ. Պոլիսը կը թողուին և կ'երթային Պուլկարիոյ Սոֆիա քաղաքին մէջ բնակիլ։ Սակայն Պուլկարիա ալ պատերազմին մասնակցելու որոշում կուտար, և պատերազմական շրջանը դարձեալ մերայնոց վրայ վատ տպաւորութիւն կ'ազդէր, որով Սոֆիա հասնելնէն եօթը ամիս ետքը՝ 1916 մարտ 31|13 ապրիլին Պուլկարիոյ մայրաքաղաքէն ալ հեռանալով կը դիմէին Հելվետիոյ շէկոք և հանդարտ երկիրը, և ճանապարհին պատերազմական շարժումներով խճողուած ըլլալուն՝ ամսօրեայ ուղեւորութեամբ մայիս 1|14ին կը հասնէին ծրնէվ գաղղիերէն նախօս քաղաքը, եւ հոն կը դադարէին, ուր չորս ամիս ետքը սեպտեմբեր 11|24ին կուգային իրենց միանալ Եգիպտոս բնակող Լուսիկ քոյրս իւր էլիզ զաւակով, վերջնոյս օգափոխութեան պէտք ունենալուն պատճառաւ, և անշուշտ միւսներուն ալ հոն գտնուելէն քաջալերուելով։

Այսօր տակաւին ծրնէվ կը գտնուին Եւգինէ ու Լուսիկ քոյրերս եւ էլիզ ու Արաքսի ու Սիրարփի քեռորդիներս։ Քոյրերս իրենց և իրենցներուն հոգածութեամբ կը զբաղին, իսկ քեռորդիներէս Արաքսի երաժշտութեան և նկարչութեան գլխաւոր հաստատութեան կը յաճախէ և գովելի աշխատութեամբ իւրաքանչիւր վեցամսեայ դասարան փոխելով կը յառաջդիմէ, եւ կատարեալ արուեստագէտ մը ըլլալ կը խոստանայ։ Սիրարփի գրական ճիւղին հետևելով Լեզուաց եւ Դպրութեանց բարձրագոյն վարժարանին ընթացքը յաջողութեամբ աւարտեց, և այժմ նոյն ճիւղին համալսարանական ընթացքին ձեռնարկած է, և երբ մէկ կողմէն կ'աշակերտի, միւս կողմէն ուսուցչութեամբ ալ զբաղիլ սկսած է։ Իսկ էլիզ իրեն ասպարէզ ընտրելով հիւանդապահական աշխատութեանց ճիւղը, ամենայն լրջութեամբ քաղաքին գլխաւոր հիւանդանոցին մէջ կը պաշտօնավարէ և կը զարգանայ։

Բերայի մեր բնակած տունին կցուած երկրորդական տունը արդէն Կ. Պոլիսէ մեկնելէս ետքը Միհրանի կենդանութեան պարպել ու թողուլ տուած էի, իսկ գլխաւոր տունը տակաւին մեր վրայ կը մնայ վարձքով, զի թէ զայն պարպել անհնարին իմիր է, և թէ օրըստօրէ խաղաղութեան վերահաստատուելուն պատրաստ տուն ունենալը անհրաժեշտ է թէ ինձի և թէ մերայնոց։ Իսկ առայժմ նոյն տունին մէջ իբրև պահպանող և խնամող կը մնան հանգուցեալ Սկեքսանդր Տէր-Ներսէսեանի զաւակները Սըմբատ և Վարդան, Զարեհ և Սաթենիկ, ակն ունելով որ օր առաջ ինձի ալ կը յաջողի մայրաքաղաք և մեր տունը դառնալու արտօնութիւն ստանալու, որ ընդհանուր հրամանատար Ահմէտ Ճէմալ բաշայէ 1917 նոյեմբեր 15]28ին ինքնայորդոր առաջարկուեցաւ և խոստացուեցաւ, սակայն դեռ չարդիւնաւորեցաւ, ինքն ալ Կ. Պոլիս դարձած և Ծովային Նախարարի պաշտօնին ձեռնարկած և պահ մըն ալ Ներքին Գործոց Նախարարութեան տեղակալութիւնը ստանձնած ըլլալով մէկտեղ։ Իսկ Կ. Պոլսոյ մէջ իմ գործերուս հոգածութիւնը և պէտք եղած ատեն ներկայացուցչութիւնը յանձնած եմ Միհրանի Տիգրան եղբօր որդւոյն Հրաչեայի՝ Սկեքսանդր եղբօր որդւոյն Զարեհի օժանդակութեամբ։

Մեր տան ընտանեկան կեանքէն փոքրիշատէ տեղեկութիւններ հաղորդեցի, այնպէս որ հնար է յատակ գաղափար մը կազմել անոր անցեալին և ներկային վրայ, և գրածս բաւական սեպելով այս նիւթն ալ կը փակեմ։ Այժմեան կացութիւննիս յայտնի կը տեսնուի, երեք եղբայր ու քոյր կը մնանք Անտոնի եւ Եղիսաբեթի տասը զաւակներէն, չորսը վաղամեռիկ, երեքը գործունեայ ճանպու մէջ տարաժամ վախճանած։ Ես այստեղ Դամասկոս, ուր իբր տարագիր կը մնամ, կեանքի հանգստութեան պահանջներէն զուրկ, և պարբերական տենդով նեղուած վերջին ամիսներուն մէջ։ Տենդին կրկնումներով տկարացած՝ և այսօր ալ, որ պարբերական օրս է, Սուագ Հինգշաբթի ըլլալով և եկեղեցին ալ աչքիս առջև տեսնելով մէկտեղ եկեղեցի ինչպէս եւ պաշտամանց մասնակցիլ չկրցայ։ Երկու քոյրերս և երեք քեռորդիներս ժընէվ կը գտնուին, ինչպէս վերը գրեցի, իսկ Միհրանի Պօղոս որդին կը գտնուի Եգիպտոս եւ իր չափին մէջ առևտրական գործով կը զբաղի կ'ըսեն, թէպէտ ստոյգ և որոշ լուրեր չունիմ։ Անորոշ և անստոյգ կացութիւն մը կը տիրէ ամենուս վրայ, և պիտի տիր

րէ ցորչափ համաշխարհական պատերազմը տեւէ եւ ընդհանուր հաշտութեամբ կանոնաւոր և կարգաւոր կեանքը չվերահաստատուի, որուն երբը մեր մակաբերական հաշիւներէն օտար կը մնայ, և մօտաւոր իրականութեան նշաններ չներկայեր։ Տէր տեսցէ և ողորմեսցի։

ՂԳ

Դամասկոս, 1918 ապրիլ 20/3 մայիս Ուր.

Խոհ ու Խօսքիս համար ցարդ մտադրած նիւթերս սպառեցի, սակայն այդ գրութիւնը ինձի ժամանցի պատրուակ մըն է ներկայ անգործ վիճակիս մէջ, ուստի ըստ դիպաց եւ ըստ պարագայից նոր հատուածներ աւելցնելու պէտքը կը գտամ անձնական և պատահական, հանրական ու գիտական նիւթերու վրայ անխտիր։ Բնական է որ միտքիս խոհերը գրիչի ներքև խօսքի փոխարկեմ, եւ տեսութիւններս ու տեղեկութիւններս գիրի առնդեմ։ Հետևաբար, եթէ երբեք պատեհ առիթը ներէ կամ յորդորէ գրածս հրատարակութեան տալ, թող ընթերցողը ի զուր կարգ ու կանոն, շարք ու խնամք չփնտռէ գրածիս մէջ, եւ քննադատութեանց չտճապարէ։

Այս յառաջաբանէ ետքը կ'ուզեմ ամփոփում մը տալ իմ գրական կեանքիս, համախմբելով ինչ որ այդ կեանքին շուրջը կը դառնայ, թէպէտև շատ կէտեր գրածիս ընթացքին մէջ ցրիւ յիշատակուեցան, բայց յատուկ ամփոփում մը կրնայ լաւագոյն գաղափարը տալ ինձի սիրելագոյն եղող նիւթին վրայ։

Գրական կեանքի հիմը կը կազմէ մէկուն ինչ ունեցած ըլլալը կամ ստացած միտքի մշակութիւնը։ Երկու եղած են իմ կատարած շրջանները, խօսքը չընելով մանկական ժամանակի տարրական մասին։ Մէկը Անտոնեանց վանքին մէջ բարձր նախակրթարանի ընթացքը, և միւսը Հռոմի Աթոռին համալսարանական դպրանոցին եկեղեցական գիտութեանց շրջանը։ Առաջինին մէջ աւանդուած նիւթերն եղան հայերէն, իտալերէն, գաղղիե-

րէն և լատիներէն լեզուներ, կրօնագիտական եւ Ս. Գրոց պատմական գիտելիքներ, աշխարհագրութիւն և պատմութիւն, տրամաբանութիւն և հոգեբանութիւն, իսկ գիտութեանց մէջ միշտ համարողականը աւանդուեցաւ։ Հայերէնը՝ բացառաբար գրաբարը եղաւ միշտ, ճարտասանական եւ չափաբերական վարժութիւններ, աշխարհաբարը երբեք դասաւանդութիւն չեղաւ. մինչև իսկ ընկերական նամակները գրաբար կը գրէինք իրար։ աշխարհաբարը անհատական վարժութեան սահմանին մէջ մնաց, որուն ես աւելի հետեւողութիւն ունեցայ, եւ ամենէն լուրջ աշխատութիւններս ալ աշխարհաբար հրատարակած եմ, ժողովրդական եւ սահուն լեզուով, ինչ որ հետևանք էր աշխարհաբարի կարևորութեան եւ բաւարարութեան մասին ունեցած համոզումներուս։ Իտալերէնի գործածական լեզուի չափ ընտելացած եմ 22 տարի Իտալիա բնակելով. լատիներէնը դպրոցական ուսմանց շրջանակին մէջ միայն ծառայած է, իսկ գաղղիերէնի վարժութիւնս աւելցած է պաշտօնական կեանքի մլանելէս ետքը։ Հռոմէական Դպրանոցի ուսմանց ծրագրին մէջ յունարէնի և. եբրայեցերէնի միամեայ դասեր կային, սակայն կամաւոր և յոյժ տարրական ըլլալուն, և վանական գրաղմանց տեն աւելցնելու համար չէի հետևած, որ եթէ զանց ըրած չըլլայի՝ գուցէ ապագային զարգացնելու և օգտակար ընելու պատճառ եղած կ'ըլլար։ Եւրոպա ուղևորութեանց առիթով գերմաներէնի քանի մը ամիսներով զբաղեցայ, սակայն առիթը անցնելէ ետքը զարգացնելու պատեհ չեղաւ և լքուեցաւ։ Տաճկերէնը վանական ծրագրին մէջ չկար և գուրկ մնացի, այլ երբ պաշտօնական կեանքի մտայ, պէտքը զգալի եղաւ ու քանի մը անգամ դաս առնել սկսայ, բայց գործը մնաց վարժութեան, ու պաշտօնական խօսակցութեան տիրացայ, մաքուր եւ յստակ գրուած մը կարդալու չափ եղայ, բայց գիրի չկրցայ վարժուիլ։

Ուսմանց մէջ աւելի դրականին քան թէ հաճոյականին հետևած եմ։ Ուսաի ինծի նախադասելի եւ նախասիրելի եղած է պատմական ճիւղը, որուն մէջ բազմահատոր գործեր երիտասարդութեանս ատենը կարդացած եմ. բանաստեղծական մասը զիս շատ չէ հրապուրած։ Իրաւ պատանեկութեան եւ առաջին երիտասարդութեան տարիներուս ես ալ բաւական չափաւ բաներ գրած եմ, բայց աւելի վանքի մէջ գրական երեկոյթներու, եւ

տօնական ու շնորհաւորական պարագաներու մէջ պէտք եղածը լրացնելու համար։ Աշխատութեանցս մէջ ալ միշտ պատմականը եղած է որ առաջին տեղը գրաւած է։ Ընթերցանութիւններու մէջ ալ բանաստեղծութիւններ, դիւցազներգութիւն, վիպասանութիւններ չեն եղած նախընտրածներս, և ինչ որ ալ այս ճիւղէն կարդացած եմ, պատմական առընչութիւն կազմածներն են եղած, քան թէ պարզ երևակայականները։

Գիտական շրջանները անցուցած եմ Հռոմէական Դպրանոցի համալսարանը. փիլիսոփայական ընթացքին մէջ մտած են՝ տրամաբանական, հոգեբանական, և բարոյական իմաստասիրութիւններէ զատ, համարողական եւ բնագիտական դասերն ալ. ասոնց հետևած եմ խնամով մրցման յաղթանակները ստանալու չափ, բայց յետոյ յատուկ հետապնդութիւն չեմ ըրած։ Աստուածաբանական և իրաւագիտական շրջանը բացառապէս կրօնական և վարդապետական նիւթեր կը պարունակեն, որոնց մէջ յաջողութեան լիագոյնը արտադրած եմ, բայց ապագային պէտքն ու պարտքը լրացնելու չափ միայն հետևած եմ, գլխաւորապէս ուսուցչութեան և ջատագովութեան նպատակով, և ոչ յատուկ զբաղման նպատակ դնելով։ Ինչ որ ինծի բոլորովին օտար մնացած է՝ երաժշտական ճիւղն է, ձայնի անյարմարութիւնը անդրատին վանական շրջանէն այս վարժութիւններէն եւ հմտութիւններէն, և այդ կացութիւնը ապագային ալ շարունակած է, որով կատարելապէս տգիտութեան վիճակ մը պահած եմ մինչեւ վերջ։ Բնական բերմամբ մը խորշած եմ նաև անդամոցնական հմտութիւններէ, վախնալով որ անկատար եւ չափաւոր հմտութիւն մը աւելի վնասակար կը դառնայ, անձնական զգայութիւնները խղճահարական կասկածներու ենթարկելով։ Ահա գրական կեանքիս կրաւորական կողմը։

Ներգործականը երկու գլխաւոր ճիւղերու մէջ կը սիրեմ նըկատել, այսինքն՝ ուսուցչական պաշտօններու և հեղինակութեան արդիւնքներու մէջ։

Ուսուցչութիւնը կարծես յատուկ կոչումս եղած է, զի 1860 հոկտեմբեր 28|9 նոյեմբերին սկսայ դասախօսել Անտոնեանց վանքը, եւ դեռ վերջին օրեր կը դասախօսէի Երուսաղէմի վանքին մէջ։ Դասախօսեցի Անտոնեանց վանքը, որչափ ատեն որ այնտեղ մնացի, ամէն տեսակ նիւթերու՝ հայերէնի, լատիներէնի, իմաս-

սասիրութեան և աստուածաբանութեան ճիւղերուն մէջ. Բրօքա-
կանտայի վարժարանին հայերէնի ուսուցիչ եղայ, Կ. Պոլիս եղած
ատենս դասախօսեցի Անտոնեանց Շիշլի գիշերօթիկ և Համազգա-
յին օրիորդաց վարժարաններուն մէջ, և Հռոմէ քաշուելէն ետ-
քը Օրթաքէօյի վանական ուսումնարանին մէջ։ Կարնոյ առաջ-
նորդութեան ատեն թաղական վարժարանին մէջ դասատուու-
թիւն ստանձնեցի, Կ. Պոլսոյ Կեդրոնականին կրօնուսոյց եղայ,
Էջմիածնի Ճեմարանին աստուածաբանութեան նիւթեր աւանդե-
ցի, Սրմաշի Դպրեվանքին գլխաւոր ուսուցիչն եղայ, պատրի-
արքութեանս ատեն վարժարաններ շրջած ատենս դասախօսա-
կան հրահանգներ և ուղղութիւններ կը ցուցնէի, Երուսաղէմի
մէջ ալ լրացուցիչ դասարաններ կազմակերպեցի եւ ուսուցչու-
թիւնը իմ վրաս առի։ Ուսուցչութեան յարակից էր վարժարա-
նական տեսչութեան պաշտօնը, զոր նոյնպէս գրեթէ բոլոր կեան-
քիս մէջ վարեցի ըլլայ իբր օգնական, ըլլայ իբր գլխաւոր, ըլ-
լայ իբրև վերին հսկող։ Առաջին սկզբնաւորութիւնը ըրի Անտոն-
եանց վանքը 1859 հոկտեմբեր 5|17ին իբր օգնական, զոր երկար
տարիներ վարեցի և յետոյ գլխաւոր տեսչութեան անցայ, Կ. Պոլ-
սոյ գիշերօթիկին փոխ տեսուչ եղայ, Համազգայինին ընկերա-
կից տեսուչ, Օրթաքէօյի վանքին տեսուչ, Կարնոյ վարժարան-
ներու տեսչութիւնը ուղղակի վրաս առի առաջնորդութեանս ա-
տեն, Սրմաշի Դպրեվանքին տեսուչ և վերատեսուչ եղայ յաջոր-
դաբար. տեսակ մը վերին հսկողութիւն էր պատրիարքութեան
ատեն վարժարաններու մասին կատարած և մօտէն ունեցած հո-
գածութիւնս։ Այնպէս որ կրնամ համարձակ յայտարարել թէ
բոլոր գործունեայ կեանքս վարժարաններու մէջ անցած է, նոյն
իսկ վարչական պաշտօններ վարած ատենս։ Տեսակ մը ուսուց-
չութիւն է քարոզչութիւնն ալ, որուն խնամով հետեւած եմ, եւ
ընդհանուր ըմբռնման մէջ իբրև ընդունելի և գնահատելի քարո-
զիչ մը ճանչցուած եմ։ Քարոզչութեանս մէջ հետեւած ուղղու-
թիւնս եղած է անխտիր ժողովուրդին հասկացողութեան համա-
ձայն խօսիլ, հետեւաբար երբոր հարկ եղած է՝ բարձր ոճ գոր-
ծածած եմ, բայց ամենէն սովորական, չըսեմ ստորին, ոճով խօ-
սած եմ յետամնաց գիւղերու մէջ։ Ջանացած եմ միշտ բարոյա-
կան գետինի վրայ մնալ, վարդապետական նրբութիւններէ եւ
հռետորական դարձուածներէ խորշած եմ սկզբունքով, պատմա-

կանը գործածած եմ պէտք եղած չափով միայն։ Դամբանական-ներու և հարսանիքներու մէջ զգուշացած եմ մարդահաճոյ և շողոքորդ ակնարկներէ, իսկ հանդիսական ատենաբանութեանց մէջ աշխատած եմ գործնական գեղջնի վրայ մնալ, կացութիւնը անխարդախ բացատրել, և պէտք եղած պայմանները հրահանգել։ Քարոզչական ոճը Դպրեվանքցւոց ալ յատկապէս ուսանդած եմ, և Դպրեվանքի ոճը սկսած է բեմերու վրայ տիրապետել, հնօրեայ ոճէն բոլորովին տարբեր, աւելի ազդեցիկ և աւելի գնահատուած։

Կարգը եկաւ որ գրական կեանքին մէջ արդիւնաւորած աշխատութիւններս ալ յիշեմ։ Անտոնեանց վանքին մէջ առօրեայ բաներ եղած են պարագայից համեմատ արտագրութիւններս, ոտանաւորներ՝ որոնք քանի մը տեսակով հաւաքած եմ և քանի ալ ճառեր, որոնցմէ շատեր պահուած չեն։ Երբոր գործունեայ ապարէզը մտայ՝ նախնեաց հակահասունեան պայքարին դիմաց գտնուեցայ, և իբր պարտաւորեալ աշխատութիւն և իբր ժամանակի պահանջ ձեռնարկեցի լրագրական յօդուածներու եւ յատուկ տեսակներու հրատարակութեան. լրագրական յօդուածները ոչ միայն հայերէն թերթերու, այլև գաղղիերէն լրագիրներու ալ տարածեցի, իսկ մասնաւոր տեսակները արդէն յիշած եմ իրենց կարգին։ Այս աշխատութիւնը աւելի ընդարձակուեցաւ Հռոմի գործակատարութեան տարիները, գլխաւորաբար իտալերէն լրագիրներու ու հանդէսներու մէջ, և որպէսզի մեր դիտած նիւթերը անցընեմ, հարկ եղաւ քաղաքական թղթակցի դերն ալ ստանձնել, և յատկապէս երկու թերթերու կանոնաւոր և շաբաթական թղթակցութիւններ տալ։ Նպատակին աւելի ևս օգտակար ըլլալու համար թղթակցութիւնը Հռոմի և Գաղղիոյ զանազան գաղղիերէն թերթերու տարածել հարկ եղաւ, այնպէս որ կատարեալ լրագրական խմբագիրի աշխատութիւնը կատարեցի բաւական տարիներ։ Միևնոյն ատեն հանդէսներու ընդարձակ յօդուածներ, եւ հինգ վեց առանձին տեսներ ալ հրատարակեցի, մինչև հարիւրի մօտ էջերով, որոց գլխաւորն եղաւ Վասիլիան եւ Հայք գաղղիերէն հրատարակութիւնը 300 երեսներէ բաղկացեալ։ Այս առաջին գործունեայ շրջանին աշխատութիւնները դրեթէ բացառաբար հակահասունեան խնդիրին շուրջը կը դառնան։

Հայկական Եկեղեցի վերադարձիս ատենները նշանակութեան արժանի կրնան սեպուիլ ատենաբանութիւններս, որոնք լրագիրներով եւ մանաւոր տեսրներով ալ հրատարակուեցան, ամէնն ալ պարագայից բերմամբ արտասանուած լսարաններու մէջ։ Միւնոյն ատեն լրագիրներու ալ թղթակցութիւններ եւ յօդուածներ կուտայի երբեմն ծածկանունով եւ երբեմն առանց որեւէ ստորագրութեան, ինչ որ կարինէ ալ շարունակեցի Կ. Պոլսոյ ազգային եւ օտարազգի թերթերու։ Գլխաւորապէս Մասիս եւ Արեւելք օրաթերթերու մէջ ընդարձակ եւ շարունակական յօդուածներ ունիմ զանազան ազգային խնդիրներու վրայ։

Էջմիածնի Ճեմարանին ուսուցչութեանս ատեն սկսայ դասախօսական ձեռնարկներ կամ դասագիրքեր պատրաստել բնական եւ տեսական աստուածաբանութեան համար կանոնաւորապէս եւ ուրիշ նիւթերու համար մասնաւորապէս։ Այս ձեռնարկները դեռ ձեռագիր կը մնան, եւ գործածուած են Սրմաշի Դպրեվանքին եւ Երուսաղէմի Դպրանոցին համար ալ։ Զանազան կողմերէ խնդրանքներ եւ առաջարկներ եղած են որ կատարեալ Աստուածաբանութիւն մը պատրաստեմ, սակայն մինչեւ հիմա խոյս տուած եմ այս միտքէն։ Համոզումս այն է թէ մեր այժմեան դաւանական եւ կանոնական եւ ծիսական գիրքը շատ եկամուտ պատուաստներ ունի գլխաւորապէս լատինականէն, որ բաւական ազդեցութիւն գործած է մեր Եկեղեցւոյն վրայ Հայաստանի Ունիթորներուն եւ Կիլիկիոյ Աղթարմաներուն եւ Մխիթարեան գիրքերուն ձեռքով։ Եթէ այժմեանը ուսանիմ, եկամուտները հաստատած ըլլալէ կը վախնամ, իսկ եթէ գրելու ձեռնարկեմ, տակաւին ժամանակը հասած չեմ կարծեր, եւ այս երկու ծայրերուն մէջ այդ նիւթով չզբաղիլը աւելի ապահով սեպած եմ։

Դասախօսական ձեռնարկները կամ առձեռն դասագիրքերը Սրմաշի մէջ ալ պատրաստած եմ գլխաւորաբար նոր Կտակարանի ներածութեան եւ մասնաւորապէս ազնից ու ծիսից տոմարագիտութեան եւ աշխարհագրութեան դասերու համար, որոնք նոյնպէս ձեռագիր կը մնան, զի ափյափոյ պատրաստուած դրպրոցական գործեր են։ Սեւտարաններուն մասը Հանապատումիս մէջ խտացած է եւ Սուաքելական Գործոց եւ Թղթոց մասը յարմար ատենին կը մնայ, որուն դեռ ակնկալու կը սպասեմ։ Դպրեվանքի վերատեսչութեան եւ Կ. Պոլսոյ պատրիարքութեան միջոցին

ալ շարունակած եմ գլխաւոր նիւթերու մասին լրագիրներու եւ հանդէսներու գրութիւններ տալ, եւ Մասիս ու Լոյս կրօնաթերթերու ալ հրատարակութեան եւ խմբագրութեան համար ջանք ու աշխատանք պակաս չընել։

Գրական արդիւնաւորութեան համար յարմարագոյն եւ իմ ձգտումներու հրջանկագոյն ժամանակամիջոցը եղած է պատրիարքութենէն հլլելէս կամ հրաժարելէս ետքը՝ երբ կրցած եմ քանի մը լուրջ գործեր հրապարակ հանել, ինչպէս են՝ Հանապատումը, գաղղիերէն եւ հայերէն Հայոց Եկեղեցին եւ Ազգապատումը։ Առաջին գործը իր մէջը լրացեալ է, սակայն առաքելական մասը անոր լրացուցիչը պիտի ըլլայ. երկրորդը ինքնիրմով լրացած է, իսկ երրորդը շարունակութեան եւ աւարտման կը կարօտի։ Երուսաղէմի մէջ պատրաստած եմ Երրորդ Հատորի մը բուսական գրուած, որ մինչեւ քսաներորդ դարու սկիզբները կը հասնի, սակայն դեռ բուսական նիւթ կայ գրելիք։ որուն համար առկախ եղելութեանց աւարտման եւ տագնապալից ժամանակին դադարման սպասել անհրաժեշտ է։ Երուսաղէմի մէջ զբաղեցայ տեղական խնդիրներով ալ եւ կազմեցի քսանըմէկ տարուան հաշիւներու եւ պարտքերու բազմագրեալ Տեղեկագիրը, վերջին Կանոնագիրին մասին տպագրեալ Դիտողագիրը, եւ Երուսաղէմի հայկական սեպհականութեանց ձեռագիր Նկարագիրը, այս վերջինը կը կարօտի Ս. Յակոբեանց մայրավանքէն դուրս եղող մասերուն լրմանը։

Այստեղ Դամասկոսի մէջ անկայուն վիճակի մէջ և գիրքէ ու գրադարանէ զրկուած, նոյնիսկ գրելու յարմար սեղանի մը կարօտ, ժամանցի նպատակով Խոհիք ու Խօսքս գրել ձեռնարկեցի, ապասելով որ հանդարտ դիրքի և առձեռն միջոցներու և գրական դիւրութիւններու բնական դրութիւնը վերստանալով կարենամ օրերուս վերջին մասն ալ օգտակար ընծայել թերի աշխատասիրութեանցս լրացմամբ, գլխաւորապէս Հանապատումի և Ազգապատումի շարունակութեամբ, որոց ետեւէն, եթէ տակաւին կեանք ունենամ, Ծիսական Բառարան մը կազմելու դիտաւորութիւն ունիմ, որուն նմոյշները Հիւանդանոցի Ընդարձակ Օրացոյցներուն մէջ երեւցած են, և աւելին ալ փափաքներս կը ձգտին, թէպէտ կեանքի տարիներս յոյս չեն ներշնչեր։ Կազմս և կենսական գործարաններս զննող բժիշկներ վստահացուցիչ գուշակութիւններով կ'ուզեն քաջալերել, որոց խօսքերը անոյշ կը

հնչեն լսելութեանս, սակայն ստուգութիւն չեն տար մտայնութեանս։ Ապրինք ուրեմն որչափ կենաց Տէրը ժամանակ կը շնորհէ, և քանի ժամանակ կ'ունենանք գործեացուք զքարիս։

ՂԴ

Դամասկոս, 1918 ապրիլ 25|8 մայիս Դշ.

Իբրեւ անցելոց յիշատակ՝ Մահացուցակ մը կ'ուզեմ կազմել այստեղ այն գլխաւոր անձերու, որոնց հետ գործունեայ կեանքիս մէջ շփումներ ունեցած եմ, լոկ մեր յարաբերութեան պարագաները յիշելով և իրենց մասին անկաշկանդ տեսութիւններ աւելցընելով։ Ոմանց անունները արդէն իրենց կարգին յիշուեցան, սակայն դարձեալ ակնարկել աւելորդ չեմ կարծեր։ Հարկաւ չենթադրուիր որ կատարեալ Մահացուցակ մը ըլլայ իմ կազմելիքս, զի կատարեալ ցուցակ մը շատ երկար հաւաքածոյ մը կազմած պիտի ըլլար, այլ կը բաւականանամ անոնցմով՝ որոնք տար և այժմ միտքիս առջև կը ներկայանան և յիշողութեանս մէջ կը նորոգուին։

Հ. Պօղոս Վարդապետ Պոյնուէյրեան Անտոնեան միաբանութեան հին և արդիւնաւոր անդամներէն, որ 1851ին գիս շոգեւոր առաջնորդած էր Հռոմ աշակերտութեան երթալուս առեն։ Ամէն առեն սրտակից և աջակից եղած էր իմ ընթացքիս և գործերուս, ես ալ անոր օգնած էի Գործ կայ գործող չկայ մակագրութեամբ ազգային գործունէութեան մասին գործնական հրատարակութեան, իսկ Հասուկեան Քաղաքականութիւնը ինքն խմբագրած էր և Տփղիս տպագրել տուած։ Առաջնակարգ դեր ունեցաւ վանքին վաճառումէն ետքը գումարին կիրառութեան և Պազանճեանի հաշուական խնդիրներուն մէջ։ Անտոնեանց մէջէն նա եղաւ որ գիս գովեց և քաջալերեց վերադարձս կատարելու։ Բնութեամբ անկեղծ և համարձակ, սիրելի եղած էր միաբանութեան և ժողովուրդին։ Վախճանեցաւ ի Կ. Պոլիս լի աւուրբք ի խոր ծերութեան 1881 դեկտեմբեր 5|17ին, երբ ես Կարին կը գտնուէի։

Գեորգ Դ. Քերեսքեշեան, Ամենայն Հայոց Կաթողիկոս, որուն կեանքն ու գործերը արդիւնաւոր և գովելի եղած են, և կաթողիկոսաց շարքին մէջ նշանակալից տեղ մը գրաւելու արժանացած է։ Իւր օրով Էջմիածնի Աթոռը վարչական և մատակարարական և ուսումնական բարեկարգութիւն և զարգացում ստացած է, որոնց պատմութիւնը ծանօթ է արդէն։ Իւր օրով տեղի ունեցաւ իմ վերադարձս, օրհնութեամբ ողջունեց իմ դիմումս և սիրով պատասխանեց իմին իրեն ուղղած յարգանաց և հպատակութեան նախընծայ գրութեանս, միայն ընթացք չտուաւ Ներսէս պատրիարքի կողմէ առաջարկուած լանջախաչի շնորհման, երբ արդէն Կարնոյ առաջնորդ ալ էի։ Իւր մահը առիթ եղաւ Աթոռին հռոմեայ պարապութեան, որ իմ եպիսկոպոսական ձեռնադրութեանս յապաղման ալ պատճառ եղաւ։ Վախճանեցաւ Էջմիածին 1882 դեկտեմբեր 6/18ին ծերութեան տարիքի մէջ։

Հ. Սուքիաս Վարդապետ Գազանճեան, հրաժարեալ աբբահայր Անտոնեանց, յառաջագոյն թեմակալ արքեպիսկոպոս Անտիոքայ, յետոյ լոկ անուանական արքեպիսկոպոս։ Իւր կեանքէն և գործերէն բաւական բան պատմած եմ սոյն գրութեան մէջ։ Նա վարժարանի տեսուչ էր երբեմն, երբ ես Հռոմի աշակերտութեան մտայ, բայց ոչ շատ ետքը Կ. Պոլիս գնաց։ Կարողութենէ զուրկ չէր, և բաւական գործունէութիւն ունեցած էր, սակայն յաջողութեամբ շատ չփայլեցաւ։ Հակահասունեան պայքարին նախայարձակը և գրեթէ առաջնորդը եղաւ, բայց և միանգամայն անձնական տեսութիւնները շատ հետապնդելով նպատակին չհասաւ, Անտոնեան միաբանութիւնը անպայման կերպով Հակահասունեան խնդիրին մէջ խառնեց և մինչև քայքայման աստիճանը տարաւ անոր մասնակցութիւնը։ Դրամական գործերու մէջ անկշիռ և անհաշիւ վարմունքը վինքն ստիպեց աբբահայրութենէ հրաժարիլ։ Ազգային և միաբանական շրջանակներէ հաւասարապէս մէկ կողմ թողուելով, և էնֆիյէճեանի հակառակութեան յաղթանակել չյաջողելով, վերջապէս Հռոմի հետ հաշտուելու խոնարհեցաւ, և 1876էն ետքը առանձնական և աննշանակ կեանք մը վարեց։ Վախճանեցաւ Կ. Պոլիս 1883 յուլիս 1/13ին, երբ ես կարինէ նոր դարձած մայրաքաղաք կը գտնուէի։

Տիկին Նազլը Վահանեան, ծնեալ Արզումանեան, մայր Աբ-

գարութեան Գործոց խորհրդական Յովհաննէս Վահանի և գրագէտ ու լայնախոհ Տիկին Սրբուհի Տիւսաբի։ Հայ ազգին մէջ կանացի գարգացման գլխաւոր ծագում և զարկ տուող, յարգելի և աշխատասէր կին մը, որ կրնայ բարձրագոյն դիրքն գրաւուած ըսուիլ ազգային տիկնանց մէջ։ Նախագահեց Դպրոցասէր Տիկնանց Ընկերութեան, իւր ազդեցութեամբ շատեր գործի մղեց, Անտոնեանց բացած Համազգեաց օրիորդաց վարժարանի խնամակալուհի եղաւ, և ինծի յանձնեց ազգային լեզուի և հմտութեանց մէջ առաջնորդել իւր երկու ազջիկ թոռներն, որոնք եղան Տիկին Սրաքսի Յովհաննէս Կիւլպէնկեան՝ հանգուցեալ, եւ Տիկին Սաթինէ Գաբրիէլ Սերվիչէն։ Վախճանեցաւ Կ. Պոլսոյ Սան-Սթէֆանօ գիւղը 1884 յուլիս 17|29ին խոր ծերութեան տարիքի մէջ, երբ ես տակաւին մոյրաքաղաք կը գտնուէի։

Յովհաննէս Զամիչեան, երբեմն Առեւտրական և Երկրագործական գործոց նախարար եղած։ Հակահասունեան հասարակութեան ամենէն խոհական ու ծանրագլուխ և բանգէտ անձը կըլնար ըսուիլ իրաւամբ. կանուխէն Հասունեանի դարձուածներուն հակառակորդ եղած, անկեղծօրէն փարած էր հակահասունեան չարժումին, թէպէտ պարզ ժողովականէ աւելի դեր ստանձնել չէր ուզած, բայց իւր խօսքերն ու կարծիքները միշտ գերակշիռ կարեւորութիւն ունէին։ Բայց երբ տեսաւ որ անձնականութեան վէճեր օրըստօրէ կ'ընդարձակուին, և գործին ուղղութիւնը ու յաջողութիւնը կը վտանգեն, հետզհետէ սկսաւ գործնական մասնակցութենէ քաշուիլ։ Երբոր ես վերադարձի ծրագիրներով կը զբաղէի, և պէտք ունէի Հակահասունեանց ապագային վրայ ճիշդ գաղափար ունենալ, ինծի գործոց կանոն ընելու համար Զամիչեանի դիմած եմ ատէպ՝ Քիւրքէլեանի ընթացքին, Պազանճեան-Էնֆիյէճեան առանին պայքարին և Կէօչէեան Յակոբի հակառակութեան մասին խորհրդակցելու, և անոր ալ յուսաբեկ նախաձեռնութիւնները ազդած են իմ վրայ մտադրութիւնս հանդարտ սիրտով եւ անվրդով միտքով կառավարելու։ Վերջի տեսներ ինքն Զամիչեան ալ գոլեմէ քաշուած դիրք ունէր, թէպէտ իմ ծրագիրիս իրեն անյարմար ըլլալը կը յայտնէր։ Վախճանեցաւ Վոսփորի Արնավուտքէօյը 1884 հոկտեմբեր 18|30ին հակահասունեան դրութեան մէջ, Կարին դառնալու համար Կ. Պոլիսէ մեկնելէս դրեթէ ամիս մը ետքը։

Ներսես Վարժապետեան, արքեպիսկոպոս և պատրիարք Կ. Պոլսոյ և կաթողիկոսական ընտրութենէ հրաժարեալ, հանրածանօթ անուն եւ ազգային մեծ գործիչ, թէ ներքին վարչութեան տեսակէտէն և թէ յատկապէս ազգային ապագայ բարօրութեան համար ունեցած նախաձեռնութեան կողմէն։ Պատմութիւնները ընդարձակ խօսած են այս մասին, ես ալ զանազան հատուածներուս մէջ անդրադարձած եմ այդ մասին, որ Հայկական Խնդիր անունը առաւ։ Մանրամասնօրէն բացատրած եմ՝ թէ Ներսէսի նախաձեռնութիւնը կատարելապէս օրինաւորութեան գետինին վրայ էր, օսմանեան քաղաքականութեան դէմ բնաւ կէտ մը չունէր, մանաւանդ թէ օսմանեան տէրութենէ ալ հովանաւորուած էր։ Պէտք եղած կերպով լուսաբանած եմ նաև կաթողիկոսական ընտրութենէ հրաժարելուն պարագան և Սգգապատուվիս մէջ պատշաճ ընդարձակութեամբ պատմած եմ իր գործերը։ Գալով իմ վրայ՝ խոստովանած եմ և կը կրկնեմ թէ Ներսէսի անձը, վարմունքը, արժանիքը և արդիւնաւորութիւնը լաւ մաս մը ունեցած են իմ վերադարձիս իրականացման մէջ. փոխադարձաբար Ներսէս ալ իր կողմէ իմ վրայ չափազանց վստահութիւն, սէր և համակրութիւն ցուցուցած է, և իւր մահուան անկողինէն Կարին դառնալս փութացնել հրամայած է, որպէսզի իմ դիրքս որ և է կերպով վտանգի կասկածէն ազատ մնայ։ Ներսէս տարաժամ վախճանեցաւ, 47 տարեկան, իր հնացեալ շաքարախտի հետեւանօք, Վոսփորի Օրթաքէօյի մէջ 1884 հոկտեմբեր 26/7 նոյեմբերին, Կ. Պոլիսէ մեկնելէս ամիս մը և Կարին հասնելէս 15 օր ետքը։ Իր կենսագրականը ես խմբագրեցի Արեւելք օրաթերթին համար։

Գրիգոր Վարդապետ Էնֆիյէնեան. Զմմառի աշակերտութենէն, չափաւոր կարողութեան և ուսման տէր, բնաւորութեամբ գործունեայ և աշխատասէր, այլ յախուռն և կրքոտ և բուռն, եւ իւր կարողութիւնը անձնականին գործածելու հակամէտ, որով որչափ արդիւնաւոր եղաւ հայահաստատնեան պայքարին, նոյնչափ պատճառ եղաւ անոր քայքայուելուն։ Պաշտօնական անուն եւ դիրք մը չստանձնելով ամէն գործի և ընթացքի տիրանալ աշխատեցաւ, Յովհան Քիւրքէլեանը պատրիարք ընտրել տուաւ իբրև իրեն գործիք, սակայն չկրցաւ խափանել անոր դասալիք փախուստը։ Եպիսկոպոսաց ժողովին ատեն իրաւանց պաշտպանու-

թեան համար հրատարակութիւն մը հանեց, և Հակահասունեանց Մեծմուսայի Հայասիս լրագիրը իր ձեռքին մէջ ամփոփեց, սակայն հանրային խնդիրները անձնական շահէն վերծ չպահեց։ Քիւրէղեանի փախուստէն ետքը պատրիարքական տեղապահութիւնը վարեց, առանց պաշտօնական անուանման, Գազանճեանի և Անտոնեանց ասպարէզ չտալու համար ամէն միջոց գործածեց, եւ թէպէտ կրցաւ անոնք արգիլել, սակայն իրեն ձեռքին տակ հակահասունեանութիւնը իւր նշանակութիւնը կորսնցուց, և Քիւրէղեանի գաղափարութիւնն ալ իրեն վրայ պատասխանատուութիւն հրաւիրեց։ Շատ աշխատեցաւ, շատ յոգնեցաւ, առաջներ արդիւնք ալ ունեցաւ, բայց երբ կիրքը սաստկացաւ, կարծես թէ ինքն իւր արդիւնքները ոչնչացուց, կիրքի բռնութեան տակ հիւծեցաւ, և նոյնիսկ կեանքը վրայ տուաւ, երբ տակաւին տարիքն ու կորովը իրեն աւելի երկար գործունէութիւն կը խոստանային։ Վախճանեցաւ Բերա 1886 փետրուար 27|11 մարտին։

Մկրտիչ Սանասարեան, ռուսահայ առեւտրական և դրամատէր, Վան ծնած բայց ազգութենէն Կովկաս փոխադրուած։ Մը-տաւորական կորողութեամբ չափաւոր, այլ սիրտի բարութեամբ չափազանց մեծ անձնաւորութիւն, որ զանազան մասնաւոր բարեգործական նպաստներէ հոգը, յատուկ և մեծ վարժարանի մը գաղափարը ընդգրկեց Կարապետ Եղեանցի խորհրդով, վարժարան մը՝ ամբողջապէս և ուղղակի տոճկահայ գաւառաց օգուտին նուիրուած։ Հաստատութեան մասին առանձինն խօսած եմ (տե՛ս Լէ)։ Իմ մասնակցութիւնը եղաւ իր ծրագիրին գործադրողն ըլլալս Կարնոյ մէջ, և զինքն անձամբ ճանչցայ Կարին այցելելուն առիթով. փառաւորութեան մէջ համեստ, կենցաղին մէջ բարի, վարմունքին մէջ համեղ, յարաբերութեան մէջ գրաւիչ, յարգելի և պատուելի անձնաւորութիւն մը։ Վախճանեցաւ Բարիզ 1890 մայիս 19|31ին, բայց թաղուեցաւ Տփղիս, և մարմինը Կ. Պոլիսէ անցնելուն պատշաճ պատիւներ ընծայուեցան, երբ ես Արմաշ կը գտնուէի։ Իրեն յիշատակին այբուբենական տուներով շարականման գովաբանութիւն մը հրատարակեցի։

Մակար Ա. Տեր-Պետրոսեան, Ամենայն Հայոց Կաթողիկոս։ Մակարի արժանաւորութեան վրայ առաջին գաղափարը կազմած էի Ներսէս պատրիարքի վկայութեամբ, երբ կամաւորապէս ընդ-

հանրացած կարծիքով՝ հին ժամանակներու մարդ, յիսուսմիտ եւ նոր գաղափարներու թշնամի անձ մը կը նկարագրուէր, այդ գաղափարը աւելի կը զօրանար, երբ երկրորդ ընտրեալ կամ ընտրելի ըլլալով քուէից կարգով՝ ռուսաց կայսրութենէն կաթողիկոսութեան կը բարձրացուէր։ Մելքիսեդեկի եւ թոզուիլը բացատրած եմ իր կարգին, թէ ընտրողներու կողմէն անընտրելի ըլլալը գիտնալով աւելի քուէ առած էր, իսկ ռուսական կառավարութեան կողմէն ոստիկանական նկատմամբ յեռաձգուած էր եւ կանուխէն ալ յեռաձգելի ըլլալը ազդարարուած էր։ Տաճկահայոց եպիսկոպոսութեան մէջ ծագած կարծեաց տարբերութիւնը վերջապէս յաջող լուծման կը յանգէր Յարութիւն Վեհապետեան պատրիարքի յաջող վարչականութեամբ։ Նոյնպէս պատրիարքի վկայութեամբ կազմած գաղափարս հաստատութիւն գտաւ՝ երբոր եպիսկոպոսական ձեռնադրութեան համար Էջմիածին գացի եւ առաջին անգամ զինքը ճանչցայ, առաւել ուժեցաւ գաղափարս՝ երբոր դպրոցական տարի մը ուսուցչութիւն վարեցի Էջմիածնի Ճեմարանին մէջ։ Կրնամ հաւատալ թէ գրեթէ ոչ ոքէ պատկառանք չեմ զգացած իմ ներսս, թէպէտ յարգանք և սէր ունեցած եմ իւրաքանչիւրին արդիւնաւորութեան և արժանեաց, Մակար թերեւս միակն է որ պատկառանք ազդած է վրաս։ Ազգային և եկեղեցական նիւթերու մասին կատարեալ հմտութիւն ունէր, թէպէտ արտաքին ուսումներէ զուրկ էր. նորութեանց հակառակ չէր, երբոր ուղղութիւնը լաւ էր. Ճեմարանը ներկայ ժամանակին պահանջից և բարձրութեան հասցնելու համար ըրած ջանքերը յուսաւոր փաստերն են։ Վախճանեցաւ Էջմիածին 1891 ապրիլ 16|28ին, խորին ծերութեան տարիքը հասած։

Խորէն Արքեպիսկոպոս Գալֆայեան, Գանթարեան, Խորխոռունի, Նար-Պէյ, Լուսինեան, զանազան ժամանակներ գործածած ազգանուններուն համեմատ։ Իրարու մերձաւոր ազգականներ էինք, վի հօրեղբայրս մեծ մայրս Տալիթա և իւր մօրեղբայրս մեծ մայրն Սննա հարազատ քոյրեր էին։ Խորէն արժանեաց տէր անձ մըն էր իբր գրագէտ և բանասէր, իբր ատենաբան և ճարտարախօս, իբր բանիմաց և քաղաքագէտ, և այս տեսակէտէն ընդհանրապէս գովուած է, և գովուած է արժանապէս։ Սակայն իւր թեթեւ և երեւոյթի զակատեալ ընաւորութեամբը ինքն իւր արժանիքը նըւազեցուց, աւելորդ ձգտումներով օրինաւորը կորսնցուց, և երկ-

դիմի ընթացքով իւր վախճանը մթագնեց և փութացուց։ Բարոյական կեանքին մէջ անզգոյշ ընթացքը, պարդարանքի և պերճանքի տարապայման սիրահարութիւնը, չպարկ և հրապուրանքի անձնուէր միտումը, աւելի արդիւնք երեւցնելու քան զործելու ջանքը, արքայապարմ իշխան ըսուելու համար հետապընդած կեղծիքը, արքունեաց ստրկային հայ երեւցած ատեն՝ նոյնին դէմ գաղտնի ձեռնարկները, ասոնք ամէնքը իւր կեանքը ըստորնացուցին, և պատրիարքութեան հասնելու անյագ տենչն ալ յուսակորոյս թողուցին, և կաթուածահար անշուք մահ մը պատրաստեցին, որչափ ալ զայն եւսքանզեւս ստորնացնելու մեղադրանքէն գլուխին չէ արդարացնել Աշըգեան Խորէն պատրիարքը։ Վախճանեցաւ 1892 նոյեմբեր ամսոյ առաջին օրերը, որու յուղարկաւորութեան ներկայ եղայ պարզ գուգադիպութեամբ Արմաշէ գալով։

Գարեգին Եպիսկոպոս Սրուանձտեան, Բերայի քարոզիչ, նախապէս զանազան գաւառական և առաջնորդական պաշտօններ վարած, հայագէտ և հայրենագէտ, Վան ծնած և բոլոր հայաբնակ գաւառներ շրջած, և գնահատելի յիշատակներ և տեղեկութիւններ և հին աւանդութեանց և մնացորդաց հաւաքածներ հրատարակած, որով հայագիտութեան շրջանակին մէջ արդիւնաւոր հեղինակ հանդիսացաւ, ազգային ծառայութեանց անխոնջ մշակ եղաւ, ժողովրդական հոգածութեանը համար արժանապէս գովուեցաւ, ուղղամիտ և բարեմոյն բնաւորութեամբը ընդհանուր համակրութիւն շահեցաւ։ Անխորհուրդ ձեռնարկներէ ոգւով չափ հեռու՝ բայց օրինաւոր հայրենասիրութեամբը զրպարտուեցաւ և կասկածաւոր երեւնալու դժբախտութիւնն ունեցաւ։ Իրարու շատ մօտաւոր սիրելիներ էինք, դէմքով և կազմով եւ տարիքով ալ շատ նմանութեան ունէինք, մինչև իսկ ծանօթներէ իրարու տեղ չփոթուելու չափ. եպիսկոպոսութեան ալ օծակիցներ եղանք։ Կանխահաս մահուամբը յուսալից կեանքը կընքեց 51 տարեկան եղած ատեն, որուն կարծես թէ առիթն ալ ընծայեց առողջապահական և բժշկական խնամքները անարգելով՝ հակառակ իր վրայ տիրացած ապպիւտիին, որ իր առողջ կազմին ալ դաւառնեց։ Դեռ Կ. Պոլիս կը գտնուէի, 1892 նոյեմբեր 17/29 ին իւր մահուան օրը, և Աշըգեան պատրիարքի կողմէն Նար-

Պէյի զլացած հանդիսաւոր յուղարկաւորութեան Սրուանձտեանի վրայ կրկնուիլը արգիլելու համար՝ խորին վիշտիս և սաստիկ դաւիս հակառակ՝ պարտաւորուեցայ պատարագելու և դամբանականը խօսելու յանձնառու ըլլալ, այլայլմէ զգածուած և թախծութեամբ ողողուած վիճակի մէջ։

Յակոբ Կեօչեան, հակահատուածեան մեծամեծներէն, նախայարձակ գործող, հակառակութեանց պատրաստակամ, նախազգուշութեան անմատդիր անձնաւորութիւն մը, իւր նշանաւոր դրամատիրութեան և յախուռն բնաւորութեան վրայ վստահացող, հակառակ իւր կրթութենէ և զարգացումէ զուրկ ըլլալուն։ Որչափ օգտակար եղաւ հակահատուածեան չարժումին սկիզբները անձնական ջանքերով և նիւթական զոհողութիւններով, նոյնչափ ալ վերջները գործին վատնդուելուն պատճառ եղաւ, ընկերակիցները պաղեցնելով, կամապաշտ ձեռնարկներով, էնֆիյէճեանի առաջարկներուն կուրօրէն հետեւելով, և անոր թելադրութեանց անձուկ գործադիր հանդիսանալով։ Վերջին ատեններ իւր իսկ որդւոյն տեղեկատուութեամբ աքսորուեցաւ ալ, և դառնալէն ետքը տուանձնական կեանքի մէջ քաշուեցաւ և մնաւ Բերա 1893 յունուար 10|22ին։

Գրիգոր Կիւտիւկեան, վաճառական, շատ չէր զլուցուած, բայց մեզի համար նշանակութիւն ստացաւ, երբ Աբիկ Ուենճեանի յորդորմամբ Արմաշի Դպրեվանքին նոր ուսումնարանին շինութեան ծախքը ստանձնեց, և Դպրեվանքին բարերարներու կարգը դասուեցաւ։ Վախճանեցաւ Գատըքէօյ 1894 նոյեմբեր 25|7 դեկտեմբերին։

Հ. Սերովբէ Վարդապետ Հանրմեան, Անտոնեան միաբանութեան բաւական զարգացած և շատ աշխատած մէկ անդամը։ Առաջին անգամ աշակերտութեան երթալուս տեսուչի օգնականնշանակուեցաւ մեր վրայ, ուսուցչութիւն ալ ըրաւ, վանահայր ալ եղաւ, թէ Անտոնեանց դատին և թէ Անտոնեանց տպագրատանմէջ դեր ունեցաւ։ Հռոմի մէջ մահամերձ հիւանդութեան ատեն յատկապէս Կ. Պոլիսէ եկաւ թէ զիս հոգալու և թէ գործերուն տիրանալու։ Մինչև վերջն ալ սիրոյ յարաբերութիւններս ա-

նեղծ պահուեցաւ։ Վախճանեցաւ 1898 մայիս 21|2 յուլիսին Օրթաքէօյի Անտոնեան նոր կազմուած վանքը պատրիարքութեանս երկրորդ տարին։

Ստեփանոս Պետրոս Ժ. Ազարեան, Հայ կաթոլիկաց կաթողիկոս-պատրիարք, հմուտ և զարգացեալ, բանգէտ և վարչագէտ անձնաւորութիւն, Հասունեանի աջակից և օգնական եղած, եւ անոր կաթոլիկական նպատակներուն կատարելապէս համամիտ, սակայն բոլորովին հակոտնեայ կերպով, զի ուր Հասուն ամէն բան բուռն զօրութեամբ և ակնյայտնի հակառակութեամբ կ'ուզէր յաջողցնել, Ազարեան շահեցողական և խաբուսիկ կերպերով կ'ուզէր իրականացնել։ Ուստի ամենուն հետ բարեկամական ձեւեր, խաբէական կերպեր, ստապատիր եղանակներ և կեղծաւոր ձեւեր կը գործածէր, և անով իւր դիտումին ու նպատակին հասնիլ կ'աշխատէր։ Ազարեանի հետ մօտէն յարաբերութիւններ պահած եմ կեանքիս առաջին շրջանին մէջ, գրեթէ մտերմական կապեր ունեցած ենք Եպիսկոպոսաց ժողովին առեն, թէպէտ ոչ ես հաւատացած եմ անոր անկեղծութեան, և ոչ նա հաւատացած է իմ անկեղծութեան։ Պատրիարքական ընտրութենէն ետքն ալ քաղաքավարական և պատշաճողական յարաբերութիւնները անթերի պահեց, և այցելութեանց և հանդիպմանց ատեն սիրալիր ձեւեր երկուքներնուս կողմէն ալ հաւասարապէս գործածուեցան։ Ազարեանի շահեցողական ձեւերը լաւ ծառայեցին հակահասունեանութիւնը անհետացնելու, մինչ Հասունեանի բուռն ընթացքը ծառայած էր զայն գոյացնելու և արծարծելու։ Մեռաւ Բերա 1899 ապրիլ 19|1 մայիսին, երբ տակաւին գործելու ուշն ու ոյժը կը պահէր։

Գրիգորիս Եպիսկոպոս Ալեաբեան, Սկիւտար Սէլամիէյի քարոզիչ, Թոչնիկ անունով ալ ծանօթ երբեմն Թոչնիկ Պեզասեան լրագիրի խմբագրապետ եղած ըլլալուն համար։ Թէպէտ Կ. Պոլսեցի, բայց աւելի գաւառական գործիչ եղած իբր վարժապետ, իբր վարդապետ և իբր եպիսկոպոս։ Վերջին անգամ Մշոյ առաջնորդութենէն կառավարական հրամանով հեռացուած եւ Սկիւտարի Ս. Խաչի քարոզչութեան մէջ մնացած, վարչական ժողովներու մուտքը արգիլուած, և Կիլիկիոյ կաթողիկոսութեան ընտրութիւնը մերժուած։ Հնար չէ ուրանալ Ալէաթճեանի ան-

հատական կարողութիւնը, անխոնջ աշխատասիրութիւնը, և հանրային շահերու նախանձախնդրութիւնը։ Ուղղամտութեանը մասին ալ ներքնապէս կասկածելի չէր, բայց արտաքին համարձակ և յախուռն կերպերը և ակնածութեանց դէմ ըմբոստ վարմունքը զինքն կասկածելի ըրին։ Մեր յարաբերութիւնները միշտ լաւ եղան մինչև իւր մահը 1899 օգոստոս 15|27ին, և յօժարակամ գոյի վայելուչ և փառաւոր ընել իւր յուղարկաւորութիւնը։

Խորէն Աբրգեան Արքեպիսկոպոս, նախկին պատրիարք Կ. Պոլսոյ և նախընթաց վանահայր Արմաշի։ Ուսմամբ և զարգացմամբը գոհացուցիչ, վարքովն ու բարքովը գովելի, սկզբունքներովը յետադիմական ըլլալու չափ պահպանողական, վարչական ու քաղաքական ձիրքերէ զուրկ, տնտեսական մատակարարութեան մէջ տկար. ահա՛ Աշըգեանի ներքինը քանի մը տողերով ամփոփուած։ Իբրև վանահայր բաւական պաշտօնավարութիւն ունեցած էր, վանքին տնտեսականութեան բացառութեամբ, իբրև պատրիարք անբաւարար նկատուեցաւ և իրաւամբ, կառավարութեան հանդէպ համակերպող և խոհական ընթացքը մինչև ատրնութեան մղեց, անխորհուրդ ձեռնարկներու դէմ զգուշութիւնը գրգռիչ ձևերու հասուց, վարչական գործերուն ուղղութիւնը անատուգութեան մատնեց։ Գուցէ այս պարագաներու մասին իրմէ աւելի մեղադրելի ըլլան զինքն ընտրողներն ու բարձրացնողներ, բայց ինչ որ իրեն անձնականին կը վերագրուի աներկբայաբար, ապագային կառավարական լաւ թոշակի արժանանալու համար ազգային գործոց մասին անփութութիւնն է, միանգամայն իւր դիրքը ապահովելու համար եպիսկոպոսակիցները կասկածելի ցուցնելու և նկուն պահելու միտումներուն հետ։ Պատրիարքութենէ հրաժարելէն ետքը բոլորովին անգործ կեանք մը անցուց, և վախճանեցաւ Մարդիքէոյ 1899 հոկտեմբեր 26|7 նոյեմբերին, օրը օրին Ներսէս պատրիարքի մահուանէն 15 տարի ետքը, որուն յայանի մեղադրողն եղած էր իւր խօսքերուն և գիրերուն մէջ։ Կանուխէն իրարու հետ լրագրական վէճ մը մղած էինք. նա Ասողիկ և ես Տիրայր ծածկանուններու ներքև, բայց յարաբերութիւններս շատ անուշցաւ Դպրեվանքի հիմնարկութեան և յառաջդիմութեան ձեռնարկներով. և Դպրեվանքի անունը յատկապէս կը յիշեմ իբրև իրեն պաշտօնավարութեան պատուաբեր և արդիւնաւոր և նշանակալից գործը։

Գրիգոր Զանճեանց, ռուսահայ խմբագրապետ, որ ազգային շրջանակին մէջ մեծ գործունէութիւն չէր ունեցած յառաջագոյն, բայց 1894է 1896 տաճկահայ գաւառներու տագնապէն ետքը, մեծ փութաջանութեամբ արդարացուց լրագրական խմբագրութիւնը, որքոց և կարօտելոց ի նպաստ յատուկ հրատարակութեամբ և հօթը որքանոցներու ծախքերը հանգանակութեամբ հոգալով։ Վախճանեցաւ Մոսկուա 1900 օգոստոս 27|9 սեպտեմբերին և յատուկ հոգեհանգիստով փութացի փառաւորել իւր յիշատակը և վկայել ազգային երախտածանօթութիւնը։

Տիկին Սրբուհի Տիւսաբ, դուստր Տիկին Նազլը Վահանեանի, և քոյր Արդարութեան Նախարարութեան խորհրդական Յովհաննէս Վահանի, ազգային հոգւով ոգեւորեալ և ազգային գրագիտութեամբ զբաղեալ, թէպէտ եւրոպացիի հետ ամուսնացեալ, այսինքն արքունական նուագածուաց վարիչ Բօլ Տիւսաբ բաշայի հետ։ Իւր ազգային վէպերը իրաւամբ գնահատուեցան, Դպրոցասէր Տիկնանց Ընկերութեան նախագահութիւնը վարեց թէ մօրը օգնականութեամբ և թէ ուղղակի անձամբ, անձնական աշխատութիւններ յօժարակամ կատարեց Ընկերութեան նպատակը ընդարձակելու։ Ասոնց հետ մէկտեղ համախմբութեանց մէջ իբրև աչքառու անձնաւորութիւն պատուուեցաւ, և գրական ու գիտական շրջանակներու մէջ պատուոյ տեղ գրաւեց անհակառակ։ Իւր հայադաւան կրօնքը անեղծ պահեց, թէպէտ զաւակները լատին կաթոլիկութեան մէջ էին, սակայն իւր սիրեցեալ դստեր Տօրինի (Տորոթիա) ծաղկահասակ տարիքին մէջ մահը բոլորովին այլայլեց իր էութիւնը, զինքն անմխիթար սուգի տուաւ, թախծութիւնը ու տխրութիւնը աճեցնելու ջահակիր ստեղծեց, իւր զուարթութիւնը և առողջութիւնը մինչև իսկ խոհականութիւնը գիտակցաբար փճացուց, և վերջին վայրկեանին հռոմէադաւան մեռնիլ ուզեց, որպէսզի դստեր գերեզմանին քովը հանգչելուն արգելք չյարուցուի։ Վախճանեցաւ Բերա 1901 յունուար 3|16ին։ Իմ ծանօթութիւնս իրեն հետ վերջին անգամ Հռոմէ գալէս ետքը սկսաւ, և փոխադարձ յարգանաց և գնահատման կապը մինչև վերջը չարունակեց. միայն չկարողացայ զինքը ի բաց կեցնել իւր գիտեալ վճռականութեան վտանգաւոր յամառութենէն։

Յարութիւն Բաբա Տաշեան, Արտաքին Գործոց Նախարարու-

թեան խորհրդական և Ազգային Վարչութեան ատենապետ, զազրելիական վարժարանաց ընթացիք զարգացնել, ազգային գործերու շարունակ մասնակցած, պետական պաշտամանաց մէջ վարժուած և յառաջացած մինչև վէզիրութեան աստիճան, և քաղաքագիտական բարձր հանճարով օժտուած, գիւանագիտական կրութեանց քաջավարժ հեղինակ, և կայսերական իշխանութենէն յարգուած և համակրուած։ Տատեան մեծ յարգ ու վարկ և բարձր անուն ու պատիւ վայելեց ոչ միայն ազգային, այլև արքունական, պետական, դեսպանական և եւրոպական շրջանակներու մէջ։ Իրարու անծանօթ չէինք կանուխէն, բայց սերտ յարաբերութիւններս իւր ատենապետութեամբ և իմ պատրիարքութեամբ աճեցաւ, գործակցութիւններս անթերի եղաւ ու մնաց, թէպէտ տարբեր տեսութեանց կէտեր ունէինք, մանաւանդ կուսակցականներու հանդէպ գործածուելիք միջոցներու մէջ, զորս նա կը կարծէր դիւրաւ շահիլ նիւթական և դրամական միջոցներով, սակայն իւր փորձերն իսկ վինքն յուսախաբ թողուցին։ Վերջին անգամ Իզմիրլեանի հրաժարելէն և անոր Վարչութեան ցրուելէն ետքը՝ ազգային վարչութիւնը կառավարական ձևէն ազգային ձևի վերածելու մէջ տարած ջանքը ու ստացած յաջողութիւնը իւր գերազանց երախտիքն եղաւ։ Վախճանեցաւ 1901 հոկտեմբեր 7/20 ին, դրամական ոչ ընդարձակ վիճակի մէջ, արդէն երբեք այդ մասին հաստատուն գիրք չէր ունեցած։

Ստեփան Բաբա Ասլանեան, զինուորական բժշկապետ և Ազգային Վարչութեան երկրորդ ատենապետ, որ քսանօրեայ տարբերութեամբ կը հետևէր առաջին ատենապետին յաւիտենական ուղևորութեան։ Օսմանեան վարժարանին առաջին քրիստոնեայ աշակերտներէն, մեծ յաջողութեամբ շրջանը աւարտած և եւրոպական հաստատութեանց մէջ գիտութիւնը կատարելագործած, կառավարական պաշտօններուն մէջ մինչև զօրավարութեան աստիճանին բարձրացած, և երկար ժամանակ ուսուցիչ ալ եղած։ Իսկ ազգային շրջանակին մէջ խոհական գործիչներու կարգին առաջնակարգ դիրք և ջանք և արդիւնք և յաջողութիւն ունեցած, այն աստիճան որ կրնանք համարձակ հաւատալ, թէ չէ եղած ազգային խնդիր մը որուն մէջ Ասլանեան գործօն դեր և խոհական արժանիք ունեցած չըլլայ։ Մանրամասնութեանց մէջ

մանել դժուար կ'ըլլայ, վի պէտք կ'ըլլար 1855է ասդին ունեցած ազգային կեանքը ամբողջաբար քաղել և Ազգային Սահմանադրութեան սկզբնաւորութեան անցքերը պատմել։ Ասլանեանի ազգային գործոց մէջ կատարելապէս սուզուիլը զինքն ալ պահ մը կասկածելի ցուցուցին, այլ շուտով իսկութիւնը յայտնուեցաւ, և իւր նախնական դիրքը կատարելապէս վերանորոգուեցաւ։ Կանուխէն շատ մօտէն յարաբերութիւններ պահելու առիթ չէինք ունեցած, բայց վերջին Վարչութեան մէջ շատ սրտակից կապերով իրարու մօտեցանք, և փոխադարձ յարգն ու համակրութիւնը, համամտութիւնն ու գործակցութիւնը երթալով աճեցաւ, այնպէս որ իւր վերջին կամքերն իսկ ուզեց ինծի աւանդել։ Ութսունամեայ էր վախճանած ատեն, այլ երիտասարդական աշխոյժն ու եռեռոյթն, մատչութիւնն ու աշխատութիւնն կատարեալ էր տակաւին, և բժշկաց վկայութեամբ իւր ախտին ներքին պատճառը եթէ թաքուն մնացած չըլլար, դեռ երկարամեայ ժամանակ ևս ապրիլը աներկբայ էր։ Վախճանեցաւ 1901 նոյեմբեր 17|30ին, և Շիշլիի գերեզմանատան մէջ ես ինքս հոգացի վայելուչ մահարձան մը կանգնել։

Պօղոս Պետրոս ԺԱ. Եմմանուէլեան, *կաթողիկոս-պատրիարք Հայ կաթոլիկաց. Ազարեանի յաջորդեց զմմառեան եպիսկոպոսներու քուէներով, որոնց միաբանութենէն էր և Բրօքականտայի աշակերտած ըլլալով աւելի ուսումնական էր, թէպէտ մայրաքաղաքի կեանքին և գործերուն փորձառութիւնը չունէր։ Երկար չեղաւ պաշտօնավարութիւնը, բայց խնդիրներու տեղի չը տուաւ և պատուովը վախճանեցաւ 1904 ապրիլ 5|18ին։ Զինքն կը ճանչնայի Բրօքականտայի աշակերտութենէն, թէպէտ յետոյ յարաբերութիւն և շփուելու առիթ չէինք ունեցած, և պաշտօնավարութեան միջոցին ալ հաշտ ապրեցանք։*

Հ. Յուսիկ Վարդապետ Պաղտասարեան; *Անտոնեան միաբանութենէն, որուն հետ միասին Հռոմ ուղևորուած էինք 1851ին, չափաւոր կարողութեան տէր, համեստ ձիրքերով ճոխացած. միաբանութեան մէջ աչքառու դիրք չգրաւեց, աւելի գաւառական պաշտօններով զբաղեցաւ, և վախճանեցաւ Օրթաքէօյի վանքը 1905 յունուար 14|27ին։*

Կարապետ Եզեանց, ռուսական կառավարութեան բարձր աստիճանաւոր եւ Հանրային Կրթութեան գլխաւոր պաշտօնեայ, միանգամայն ազգային գործիչ, Բեթրպուրկի հայ ուսանողաց պաշտպան, եւ եւ գրագէտ, յատկապէս իրեն ճիւղ ընտրելով օտարազգի հեղինակներու գործերէն Հայոց վերաբերեալները թարգմանութեամբ ազգին ծանօթացնելը։ Բայց իւր աւելի մեծ արդիւնքը եղաւ ռուսահայ երկու բարերարներուն՝ Սանասարեանցի եւ Իզմիրեանցի՝ ներշնչողն, յորդորողն, առաջնորդողն եւ գործադրողն եղած ըլլալը։ Սանասարեանցի վարժարանը և Իզմիրեանցի գրական մրցանակը ծանօթ հաստատութիւններն են, եւ նշանակալից է անոնց կեդրոնն ու մատակարարութիւնը Տաճկահայոց յանձնուելու միտքը։ Ինքն ալ մասնաւոր կտակ մը ունեցաւ Սանասարեան վարժարանին ի նպաստ։ Վախճանեցաւ Բեթրպուրկ 1905 մայիս 31|13 յունիսին, և յիշատակը կատարեցինք Կ. Պոլսոյ մէջ ալ։

Աբիկ Ունճեան, վաճառական եւ սեղանաւոր, պետական բարձր աստիճանաւոր, և ցորենի ու ալիւրի գործարանատէր և կառավարական հայթայթիչ։ Ուսմամբ և կրթութեամբ զարգանալու առիթ չէր ունեցած, բայց ուշիմութեամբ եւ փորձառութեամբ ամէն տեսակ գործունէութեան քաջավարժ էր, կատարեալ կրօնասէր եւ եկեղեցասէր, անհամեմատ ազգասէր եւ փութաջան գործիչ, ամէն տեսակ ձեռնարկներու մասնակցող և առաջնորդող, նուիրող և բարերարող, որ գրեթէ իր սրտին վրայ բռնադատող մէկ մըն էր։ Նոյնիսկ ազգային բարօրութեան և ապագային խնդիրներէն հեռու չէր, այնպէս որ այս անուամբ բանտարկութիւն և դատապարտութիւն ալ կրեց։ Միայն անիսահեմ ձեռնարկներէ զգուշաւորութիւնը եւ կուսակցական բռնադատութեանց չհպատակիլը դաւաճան ձեռքեր քաջալերեցին իրեն կեանքին չխնայելու և սպանութեան յանդգնեցան 1905 Օգոստոս 13|26ին Պալաթիոյ հրապարակին վրայ։ Սովելոց նպաստող 1880ի Յանձնաժողովը, Սկիւտարի Ս. Կարապետ եկեղեցւոյ շինութիւնը, և մանաւանդ Արմաշի Դպրեվանքը Աբիկ Ունճեանի անունը անմահացնող յիշատակներ են։ Իրեն հետ յարաբերութիւններս աւելի սերտ եղան Սովելոց Յանձնաժողովին և Արմաշի Դպրեվանքին գործերով. պատրիարքութեան ատեն ալ ա-

ռանց պաշտօնական դեր ստանձնելու աջակից եւ խորհրդակից եղաւ։ Արդէն իր ոճն էր ամէն գործի մասնակցիլ, այլ պաշտօնական դեր չստանձնել։

Տիգրան Եուսուֆեան, զարգացեալ անձնաւորութիւն, պետական բարձրաստիճան պաշտօնեայ՝ դատական ճիւղին մէջ, իսկ ազգային շրջանակին մէջ առաջին երիտասարդութենէ սկսելով մինչեւ ծերութիւնը եւ մինչեւ վերջին շունչը պաշտօնական գործունէութենէ երբեք չպակսած, եւ ամենէն բարձր դերերը վարած, Երեսփոխանութեան եւ Վարչութեան ատենապետած, եւ պահ մը պաշտօնէական դրութիւն փորձուած ատեն՝ առաջին և նախադահ պաշտօնէութիւնը վարած։ Եուսուֆեան մեղմ բնաւորութեամբը, առանց կիրքի, ուռանց բռնադատութեան համոզիչ խօսքերովը և հաշտարար ընթացքովը ատենական գործերը յաջողցնելու մասնագիտութիւնն ունէր, և այս ոճին տիպարը կը նկատուէր։ Վախճանեցաւ Բերա, Շիշլիի թաղաբաժինը, 1906ին, ուր փոխադրուած էր Եէնիքէօյի տունը հրկիզուելէն ետքը։ Մեր յարաբերութիւնը միշտ սերտ և մտերմական եղաւ ամէն ժամանակ, թէ պաշտօնական և թէ ոնպաշտօն կեանքին մէջ։ Եուսուֆեան մեղմ բնաւորութեան հետ պինդ օրինապահութիւն ալ ունէր, և նշանակալից պարագայ մըն է այս մասին Միտհաթ բաշայի դատին ամբաստանիչ ատեանին անդամակցութեան կոչուած ըլլալով, հրաժարեալ Սուլթան Մուրատը եւ մայր կայսրուհին ամբաստանութենէ ազատելու մասին կատարած նախաձեռնութիւնը՝ օրինական պայմանաց տկարութեան փաստով, որչափ ալ բարձրագոյն հաճոյքը հակառակը կը փափաքէր։

Բարդղիմէոս Արքեպիսկոպոս Զամիչեան, պատրիարքական տեղապահ եղած, եւ երկար տարիներ Պրուսայի առաջնորդութիւնը վարած, գործունէութենէ ոչ անմասն, այլ փառքի երեւոյթներու և արտաքին շքեղութիւններու հոգի տուող, եւ այս նպատակին հասնելու համար միակ միջոց պետական պաշտպանութիւնը կարծելով՝ ամէն տեսակ ստորնութիւն և չողոքորթութիւն և հլու հպատակութիւն յօժարակամ կատարող։ Անձնական կենցաղով ալ հաճոյից եւ տիրժակաց չափազանց ծառայող, մինչեւ իւր մարմնոյ առողջութիւնն ալ զոհելու չափ։ Այս պա-

բագաներ արգելք եղան որ իւր բաղձանքներուն պատշաճակէտը կարենար ձեռք ձգել, և Կ. Պոլսոյ պատրիարքական աթոռը բարձրանար, որուն համար թէպէտ կառավարական պաշտպանութիւնը ձեռք ձգել կարծեց, սակայն ոչ ազգը հաճեցաւ և ոչ պաշտպանութիւնը գործնական եղաւ, զի արքունեաց մէջ իսկ իրեն մասին խօսուեցաւ թէ մարդը մարդելոյզէն կրնան կանազանել։ Իր գիւտը եղաւ ինքզինքը աղաց գաղտնել էնդէղ գոլ (ապատագրութիւն յանձն չառնող ստրուկ) անուանել։ Նա չյուսաց որ պատրիարքութիւնը ինծի վիճակէր, թէ ոչ Եգիպտոսի համար ուղած անցագիրս շուտով կը հանէր. ընտրութենէն ետքը բեկանել տալու ջանքերն ալ չյաջողեցան, սակայն ես բարեկամական յարաբերութիւն չպակսեցուցի, և զինքն Կ. Պոլիսէ հեռացընել տալու համար եղած թելադրանքներուն ալ չհետևեցայ, որ իրեն ականջն ալ հասաւ, եւ շնորհակալութեան եկաւ եւ սկսաւ պաշտօնավարութիւնս գովաբանել։

Մկրտիչ Ա. Խրիմեան, Ամենայն Հայոց Կաթողիկոս, որու մասին այնչափ խօսուած և այնչափ գրուած է և այնչափ ալ հանրածանօթ են իր գործերը, որ այստեղ բացատրութիւն աւելցնել յայտնի աւելորդաբանութիւն եղած կ'ըլլար. բաւական ըլլայ ուրեմն մեր յարաբերութիւնները յիշել եւ իր մասին իմ տեսութիւնս պարզել։ Ազգային շրջանակի մէջ երկուքնիս ալ գործիչ գտնուելով՝ միշտ իրարու հետ սերտ և անկեղծ յարաբերութիւն ենք պահած. ես յարգած եւ պատուած եմ անոր անձնուրոյթիւնը ու արժանիքը, նա պատուով վերաբերուած է իմ ուսմանցս եւ հմտութեանցս։ Առաջին տեսակցութիւնը ունեցանք երբոր զայն Վանէն հանելով Կ. Պոլիս կը տանէր կառավարութիւնը, և ես զինքը Կարնոյ մէջ հիւրընկալեցի։ Իւր կաթողիկոսական ընտրութեան քաջալերիչ եղայ և երկու քուէով մասնակցեցայ, պատրիարքութեանս ատեն միշտ իրեն պատիւն բարձր պահել աշխատեցայ օսմանեան արքունեաց և կառավարութեան առջև, Մայր Աթոռոյ խնդիրներուն աջակցեցայ, և իբրև ազգային կեդրոն, զինքն միշտ գիտակ պահեցի ամէն անցուդարձերու եւ խնդիրներու։ Խրիմեան բոլորովին սիրտ եւ զգացում էր, խոհական զգուշաւորութիւն, վարչական նրբութիւն, գործունէութեան ճարտարութիւն իրեն սեպհական չէին. իր նշանաբանն

ալ էր՝ Ինձ խորհիլ չի։ Ամէն պաշտօններէ ունցաւ՝ վարժապետ, վարդապետ, առաջնորդ, վանահայր, պատրիարք, կաթողիկոս, և կրնանք համարձակ ըսել՝ թէ ո՛չ մէկուն մէջ նշանակալից յաջողութիւն չունեցաւ, շատ պաշտօններէն գանգատներով հեռացուեցաւ, սակայն երբեք ընդհանուր համակրութիւնը եւ պաշտելութեան հանող յարգանքը չկորսնցուց։ Ա՛յս էր Խրիմեանի բնաւորութեան գաղտնիքը, իւր ժողովրդական վարմունքը, իւր անկեղծ և անսեթևեթ խօսակցութիւնը, չնայելով որ կատարեալ աշուղ մըն էր, և իւր բոլոր աշխատասիրութիւնները այս ճիւղին կը վերաբերին, և ութսունը անցունելէն ետքն ալ տակաւին բանաստեղծական քերթուածներ էին իւր ժամանցի զբաղումները։ Այդ համոզումը առաջնորդեց իւր կաթողիկոսական ընտրութիւնն ալ, և ես իբր ընտրող համարձակ յայտարարեցի՝ թէ Խրիմեանը պիտի ընտրենք, ոչ թէ Աթոռին արդիւնաւորութիւն աւելցընելու, այլ Աթոռին վրայ համակրութիւն հրաւիրելու համար։ Ինչ որ Խրիմեանի ճշմարիտ և սեպհական արդիւնքն է, գաւառաբնակ հայուն բարօրութեան համար եղած ջանքերուն ստեղծիչն ու սկզբնապատճառն եղած ըլլալն է, որչափ ալ գործը իր նպատակակէտէն անդրագոյն ևս քալած ըլլայ։ Լի աւուրքք ութսունևեօթնամեայ վախճանեցաւ Էջմիածին 1907 հոկտեմբեր 29|11 նոյեմբերին, եւ թէպէտ կառավարութիւնը իւր Կ. Պոլիսէ անցնիլը արգիլած եւ իրմէ ձեռնադրուելու համար գացողներուն դժուարութիւն յարուցած էր, սակայն ևս չվարանեցայ անօրինակ հանդիսութեամբ յիշատակը կատարել։

Յովհաննէս Աւագ Քահանայ Մկրեան, քահանայական դասակարգին մէջ աչքառու դէմք մը։ Կանուխէն ազգային և կրօնական նիւթերու և գործերու հետեւող,* իւր հօրենական Պարտիզակ աւանին մէջ գլխաւորներէն մին եղած է և առեւտուրով զբաղած։ Պատահական ձախողուածէ մը ազդուած եկեղեցականութեան կը դիմէ, պահելով առաջին կեանքին վարժութիւնն ու կերպերը։ Իրմով իրականացաւ շատոնց մուցուած նորութիւն մը, այսինքն քահանայի մը պատրիարքական փոխանորդութեան կոչուիլը, զոր կատարեց Ներսէս պատրիարք, և Մկրեան բաւական ազդեցիկ և գործունեայ փոխանորդութիւն վարեց բաւական տարիներ, սակայն վեղարաւորներու դիւր չեկաւ և ամէն տե-

սակ դժուարութիւններ ստեղծեցին, մինչև որ ստիպուեցաւ հրաժարիլ։ Ներսէս ուրիշ քահանայ մը կոչեց փոխանորդութեան, սակայն Մկրեանի կարողութիւնը չունէր և շուտով քաշուեցաւ, և դարձեալ վեղարաւորներ գրաւեցին պատրիարքական փոխանորդութիւնը։ Իսկ Մկրեան միշտ պահեց իր դիրքը և արժանաւորութեան ատաիճանը, որ շատերէ իրեր խրոխտութիւն նկատուեցաւ, սակայն յայտնի էր որ քահանայութեան ատորնութիւնը անտանելի էր Մկրեանին՝ վեղարաւորաց ճոխանալուն համեմատ։ Բայց ես միշտ այլապէս նկատեցի, քահանայական դասակարգին բարձրանալուն ջերմ պաշտպան մը ըլլալով։ Իր միջնորդութեամբ առաջին անգամ Ներսէս պատրիարքի ներկայացայ 1877ին, և մինչև վերջը մտերմական մնացին մեր յարաբերութիւնները, եւ պաշտօնավարութեանս մէջ միշտ ձեռնտու գտնուեցաւ։ Փոխանորդութենէն ելլալով Պարտիզակ չդարձաւ, Բերայի քահանայական խումբին անդամակցեցաւ, եւ Սմէմեան Գրիգոր աւագերէցին մահուանէ ետքը աւագերէցութիւն ալ վարեց։ Վախճանեցաւ Բերա 1910 սեպտեմբեր 14|27ին. իսկ ես ամբաստանեալի կացութեան մէջ ըլլալով չկրցայ յուղարկաւորութեան մասնակցիլ։

Ցարութիւն Արքեպիսկոպոս Վեհապետեան, պատրիարք Երուսաղէմի, յառաջն Կ. Պոլսոյ, եւ ութի առաջ 21 տարի Կարնոյ առաջնորդութիւնը վարող։ Սա ալ նշանաւոր անձնաւորութիւններէն է, որուն ծագումն ու պաշտօնները ու արդիւնքները հանրածանօթ են, եւ իմ բացատրութեանս չեն կարօտիր։ Վեհապետեանի հետ անձնական յարաբերութիւն ունեցած չէինք, զի իմ Ղալաթիոյ քարափէն Սև Ծովի շոգենաւը մտած ատենս, նա Սև Ծովէ ուրիշ շոգենաւէն Սամսոնի քարափը կ'ելլար։ Կարնեցւոց զիս ընտրելու համար զինքն հրաժարեցնելը հարկաւ իրեն դիւր պիտի չիգար, սակայն Կարին հասնելով զինքն վատաբանողները լռեցնելս եւ զինքն պաշտպանելս այնչափ դիւր եկած էր իրեն, որ անկեղծ սիրոյ կապ մը գոյացուց մէջերնիս։ Իւր Կ. Պոլսոյ պատրիարքութեան ատեն ամէն կերպով զիս պատուեց ու պաշտպանեց, և ես իմ պատրիարքութեանս ատեն իւր պատիւը բարձր պահել աշխատեցայ, հակառակ որ ինքնամեայ տարիքի մօտ իւր կորովը կորուսած և բուռն հակառակութիւն-

ներէն թուլցած, փոփոխական պարագաներու հետ փոփոխուելու կը ստիպուէր։ Սակայն ուղղամտութիւնը իրմէ երբեք չպակսեցաւ, եւ նիւթական կարողութիւնը ոչ անձին՝ այլ Աթոռին ծառայեցուց. եւ երբ ճշմարտութիւն մը ճանչցաւ, զայն ընդգրկելու ընաւ չվարանեցաւ։ Կեդրոնական Վարչութեան գինքն ամբաստանելով պաշտօնանկ հռչակելը ոչ միայն անիրաւ այլեւ աննպատակ եւ անխորհուրդ ձեռնարկ մըն էր, նոյն օրերուն տիրող պետական ուղղութեան հետեւանքով, որ սակայն Վեհապետեանի պատիւը չատորնացուց, իսկ Աթոռին գործին ընաւ օգուտ չբերաւ, եւ մինչեւ այսօր Աթոռին դատարկ մնալը անոր հետեւանքն եղաւ, իբր զի Խապայեանի պետական հրամանով Աթոռը գրաւելը, ազգային օրինականութեամբ եւ եկեղեցական կանոնով կատարուած գործ չի կրնար համարուիլ։ Վեհապետեան վախճանեցաւ 1910 հոկտեմբեր 5|18ին։

Մաստեոս Բ. Իզմիրլեան, Ամենայն Հայոց Կաթողիկոս, դարձեալ հանրածանօթ մի անձնաւորութիւն, որուն գործոց և պաշտօնավարութեանց վրայ տեղեկութիւն տալու կարօտութիւն չի զգացուիր։ Իզմիրլեանի հետ յարաբերութիւններս սկսաւ վերադարձէս ալ առաջ. անկէ ետքը յանձնաժողովներու մէջ միասին գլուխ ընելեցանք, և իւր և իմ պատրիարքութեանց տեսչներուն շարունակ շփման մէջ եղանք, և իմ պաշտօնէ հեռանալէս ետքն ալ հալածանաց պարագաները ճշմարտուեցան։ Իմ կողմէս իրեն դէմ որևէ դեր մը կատարած ըլլալս չեմ յիշեր, սակայն չեմ գիտեր ինչո՛ւ առջի օրէն մինչեւ վերջ անհամակիր զգացում մը ունեցաւ, զոր սակայն գործով և երբեմն խօսքով ալ յայտարարել չվարանեցաւ։ Անոր աչքին մեծ թերութիւնս էր ի ծնէ հայադաւան չըլլալս, թէպէտ ես կը պատասխանէի թէ աւելի լաւ է գիտակցաբար մնալը քան պատահաբար մէջը գտնուած ըլլալը։ Իզմիրլեան ունէր անխոնջ գործունէութիւն մը ազգային պաշտօններու մէջ, անբասիր կեանք իւր անհատական կենցաղին մէջ, և նախանձայոյզ ընթացք օրինապահութեան առջև։ Բնութեամբ խիստ և կրքոտ, միշտ ընդդիմադիր ուղղութեան հետեւեցաւ, սկսելով Ղալաթիոյ Օճախին մասնակցութենէն, բայց վարչական կարողութեան մէջ խիստ չափաւոր ըլլալով՝ միշտ ուրիշին ազդեցութեան ներքև գործեց. առաջ Ղալաթիոյ Օճախին-

առաջին պատրիարքութեան ատեն Հնչակեանց, երկրորդ պատրիարքութեան ատեն Դաշնակցականաց, եւ կաթողիկոսութեան ատեն միաբանութեան չտեսդէտ խմբակին։ Որչափ ալ այս մասին Խրիմեանի հետ նմանութիւն մը կը կրէր, սակայն չկրցաւ իւր շուրջը անկեղծ համակրութեան շրջանակ մը կազմել, և այնչափ անձկացեալ կաթողիկոսութիւնն ալ տասնեւհինգ ամիսէ ուելի չկրցաւ վայելել, և իւր բուռն կիրքերէն ծագած սիրտի ախտէն ու իւրայնոց կողմէ կրած տագնապէն անակնկալ վախճանեցաւ 1910 դեկտեմբեր 11/24ին։

Հայր Յակինթոս Լոազօն, (Père Hyacinthe Loyson) լատին եկեղեցական, հրեական Կարմելեան կրօնաւոր, պապական անսխալութեան դէմ բողոքող, հռոմէական եկեղեցիէ անջատուող, ընդդիմադիր հրատարակութեանց հեղինակ, հին կաթոլիկաց ուղղութեան հետեւող, ազատօրէն ամուսնացող, և իր պերճախօս քարոզիչ և տաղանդաւոր հռչակ ստացող։ Ծանօթութիւններս սկսաւ 1871ին վերջին անգամ երթալուս ատեն, եւ մեզ իրար մերձեցնողը եղաւ երկուքներնուս ալ հաւասարապէս Վատիկանի դէմ վարած պայքարը։ Մտերմութիւններս հետզհետէ աճեցաւ իմ Հռոմ եղած տարիներուս մէջ. իւր գործունէութեան ալ օգնեցի զանազան առիթներու մէջ, խորհրդակցութեամբ եւ քաջալերութեամբ ալ աջակցեցայ, իսկ Կ. Պոլիս դառնալէս ետքը շարունակ թղթակցութիւն պահեցինք. իմ վերադարձս և պաշտօններս զինքն աւելի ոգեւորեցին, իսկ պատրիարքութեանս ատեն իրեն սիրտի և խիղճի կատարեալ հանդարտութիւն պարգեւեց տուաքելական եկեղեցւոյ մը նուիրապետութեան մեծ աստիճանաւորէ մը իւր ընթացքին հաւանութիւն գտնելը։ Լոազօն սիրտի և զգացման մարդ՝ վարչական գործերու մէջ յաջողութիւն չունեցաւ, և Ժընէվ և Բարիզ կազմակերպած հասարակութիւնները չկրցաւ մինչև վերջ կառավարել, և գրեթէ ամէն եկեղեցականներէ և դաւանութիւններէ անկախ դրութիւն մը ունեցաւ։ Իւր համակրութիւնը մեծ եղաւ դէպի Հայոց Եկեղեցին և իւր հոգեւոր սփոփանքը ուզեց անկէ ընդունիլ, իւր ութսունամեայ տարեդարձին առթիւ հոգեւոր մխիթարութիւնն ալ Բարիզի հայ եկեղեցւոյ մէջ ընդունեց, Երուսաղէմի և Կ. Պոլսոյ մէջ Հայոց եկեղեցին հաղորդուեցաւ, և վերջին թոշակը Բարիզի տեսուչ Քիպարեան

Վասամշապուհ քահանային ձեռքէն առաւ։ Վախճանեցաւ 1912 յունուար 27/9 փետրուարին Բարիզի մէջ։

Սաւֆիաս Արքեպիսկոպոս Պարզեանց, Մայր Աթոռոյ նշանաւոր եպիսկոպոսներէն մէկը, շատ պաշտօններ վարած եւ շատ անցքեր անցուցած, լաւ ձիրքերու տէր, և գրական աշխատութեանց ձեռնտու և քաջալերող։ Միայն թէ բուռն և խիստ, անկախ և անվերապահ բնաւորութեամբը այնչափ համակրութիւն չգոյացուց իւր շուրջը, որչափ արդիւնաւորութիւն և արժանաւորութիւն ունէր։ Մայր Աթոռոյ պաշտօններուն մէջ ամէն տեղ և ամէն ատեն օգտակար հանդիսացաւ, թէ Աթոռին մէջ և թէ վիճակներու մէջ, բայց իւր անունը աւելի փառաւորեց շատ կարևոր գործերու հրատարակութեան ծախքերը նուիրելով։ Այս կարգէն եղաւ Ազգապատմիս երկու հատորներուն տպագրութեան ծախքը ստանձնելն, որուն համար երբոր իրեն չնորհակալութիւն գրեցի, պատասխանեց թէ Հայ Եկեղեցւոյ ընդարձակ և ճշդուած պատմութիւնը ունենալու համար ինքն պատրաստ էր խմբագրութիւնն իսկ վճարել, մինչ լոկ տպագրութեան ծախքով նպատակին իրականացման համար ինքն պարտաւորութիւն կը զգայ չնորհակալութիւն մատուցանել։ Մեռնելէն ետքն ալ հրատարակութեանց օգնութիւնը չարունակելու համար, նոյն նպատակին կտակեց իւր թողօնը։ Մեր յարաբերութիւնները շատ չէին եղած՝ առիթներ ունեցած չըլլալով, բայց Ազգապատումէն ետքը չափազանց յարգալից եղաւ, և այդ զգացման հետևանքն էր 1911ի Կաթողիկոսական Ընտրողական ժողովին մէջ իմ անունս շուրջը կազմակերպած ցոյցը։ Վախճանեցաւ Էջմիածին 1914 սեպտեմբեր 12/25ին, երբ Երուսաղէմ կը գտնուէի։

Յակոբ Փափազեան, Կնքահօր՝ Փափազեան Մաղաքի որդին եւ քոյրերուս կնքահայրը, սեղանաւոր Լոնտրա հաստատուած, և վերջին տարիներ գործէ քաշուած եւ Կ. Պոլիս հանգըստեան կեանքի մտած։ Եղբայրական յարաբերութիւն ունեցանք, թէպէտ քիչ ատեն իրարու մօտ եղանք։ Մահամերձ հիւանդութենէս ետքը զիս 1875ին հիւրընկալեց, իսկ հանրութեան օգտակար եղաւ Բերայի Էսայեան վարժարանին յարակից Ծաննիի տունին ու պարտէզին 4000 ոսկի գինը վճարելով եւ

թաղը վայելուչ մանկապարտէզով օժտելով՝ իմ թելադրութեանս համաձայն։ Իւր կենդանութեան ուզեց որ անունը գաղտնի մընայ և միայն մահուանէ հաքը կաթոլիկի մը ընդհանուր ազգութեան համար ըրածին յայտնուիլը յանձնարարեց։ Վախճանեցաւ Բերա 1916 ապրիլ 11|24ին։

Հ. Ռափայէլ Վարդապետ Միսաքեան, Անտոնեան միաբանութեան աբբահայր, իմ առաջին աշակերտութենէս ուսուցիչս, և հետզհետէ տեսուչս եւ վանահայրս եւ վերջէն աբբահայրս ալ եղած։ Ուսեալ և հմուտ անձնուիրութիւն՝ որ միայն մէկ երկու տարուոյ բացառութեամբ բոլոր կեանքը վանական շրջանակի մէջ անցուց, և օգտակար եղաւ իր խոհական ընթացքով և գրական արդիւնքներով։ Աբբահայրութեան ընտրուեցաւ 1876ին Անտոնեանց տապնական ժամանակ եւ Գաղանճեանի հրաժարելէն ետքը. չկրցաւ միաբանութիւնը վերստին կօրացնել և վերականգնել, և միայն տիրող կացութիւնը պահելու աշխատեցաւ իւր քանամեայ աբբահայրութեանը միջոցին։ Վերադարձէս ետքն ալ սիրոյ յարաբերութիւնները անթերի պահեց, եւ պատրիարքութենէս ետքը յարգանաց յարաբերութիւններ ալ բարդեց։ Իննանամեայ վախճանեցաւ Օրթաքէօյ 1917 փետրուար 8|21ին։

Այս տեղ կը փակեմ Մահացուցակս, որ՝ ինչպէս կանխաւ յայտարարեցի՝ գլխաւորապէս իմ վրայ ապաւորութիւն թողուցող անունները կը պարունակէ, ապաթէոչ՝ եթէ բոլոր ծանօթները ուզէի յիշել, անհատնում ցուցակ մը պէտք կ'ըլլար կազմել։ Չկրցի յիշատակել կարգ մը ազգայիններու եւ եկեղեցականներու անունները, որոնց հետ սերտ յարաբերութիւն ունեցած եմ, սակայն ոմանց յիշատակութիւնը գրութեանս մէջ եղած է, եւ ամէնն ալ գրել երկար կ'ըլլար։

ՂԵ

Դանակոս, 1918 ապրիլ 29|12 մայիս Կիր.

Գպրեվանքը կեանքիս ամենէն ցայտուն յիշատակն է կրնամ ըսել։ Զի վարչական կեանքը արդէն իմ միտքովս նուազ կարեւ-

ւորութիւն ունեցող է, իսկ Դպրեվանքին մէջ ես գրական կեանք վարեցի, և աշակերտութիւն մըն ալ հասուցի, որով կրաւորապէս և ներգործապէս իմ սիրած միջավայրիս մէջ ապրեցայ։ Այս վայրկեանիս հոն կ'երթայ իմ միտքս, և այնչափ արկածալից տագնապներուն կարգին, զորս աղգովին կրեցինք ու կը կրենք, ես մեծ նշանակութիւն կուտամ Դպրեվանքի տագնապին, որ այսօր ոչ ես է։ Արմաշ գիւղի հայաբնակութեան հետ Դպրեվանքն ալ տարագիր եղած է, եկեղեցին տակնուվրայ եղած է կ'ըսեն, Զարխափանի պատկերը, աւագ սեղանը, Գարագոչի գերեզմանը խախտած են կ'ըսուի, վանքն ալ գրաւուած է և պատերազմիկներու որբերուն պատսպարան է նշանակուած։ Աշակերտութիւնը մասամբ ցրուած, մասամբ Կ. Պոլիս փոխադրուած, անկէ ալ Երուսաղէմ բերուած, իսկ այժմ տարիքի պահանջմամբ զինուորագրուած, կէսը ծառայութեան մէջ, կէսը այս ու այն կերպով ծառայութենէ ազատ։

Երբոր Դպրեվանքի նիւթական ոչնչացած է, և առաջիկային վերակազմելու և վերականգնելու հաւանականութիւնը նուազած է, անցեալը կը մնայ քաղցր յիշատակ, որ Մոնիֆերուս մէջ գլխաւոր տեղ մը կը գրաւէ, և Մոսֆի վերածուելով՝ մխիթարութեան առիթ կրնայ ընծայել, որչափ ալ վերյուշութեան կարգին դարձեալ արկածներ են որ դիմացնիս պիտի ելլան, և տագնապներ են որ ցաւերու պատճառ պիտի ըլլան։ Սակայն չէ՞ որ մեր սիրելիներուն ալ կորուստն որոճալով ինքզինքնիս սփոփած կը զգանք։ Ահա՛ այդ դիտմամբ է որ գրութեանս կարգին հատուած մըն ալ կուգամ նուիրել Դպրեվանքի աշակերտութենէն յառաջ եկած վեղարաւորներուն, համառօտակի քաղելով իրենց կեանքն ու գործունէութիւնը, և ներկայելով այժմեան կացութիւնը, որչափ որ գիտեմ և իմացած եմ, թէպէտ ոչ ամէնքը վաւերական ստուգութեամբ։ Դպրեվանքցի վեղարաւորներուն թիւը 35 է, առաջին 14ը ինձմէ, և երկրորդ 14ը Դուրեանէ ձեռնադրուած, և մեր հեռանալէ ետքը վեցը Ցովակիմեանէ ձեռնադրութիւն առած, իսկ վերջին երկուքը Նարոյեանէ։ Ես երկու խմբովին ձեռնադրութիւն ըրի և երեք մասնաւոր, երկու ձեռնադրութիւն ըրաւ Դուրեան, երկուք ալ Ցովակիմեան, և մէկ անգամ միայն Նարոյեան։ Այսչափը իբր նախաբան յիշելով՝ անցնիմ երեսուն եւ վեցերուն վրայ միառմի խօսիլ, իրենց ձեռնադրութեան կարգին հետեւելով։

1. Բաբգէն Կիւլէսէրեան, աւազանի անուամբ Յարութիւն, Սինթապցի։ Բացման օրը ներկաներէն չէր, բայց տարիքի պահանջմամբ առաջ անցաւ։ Լիւպոյն շրջան վարոց հօթներու խումբէն 1895 յունիս 18/30ին ձեռնադրուած, 1896 մայիս 26/7 յունիսին մանաւոր վարդապետութիւն և 1897 հոկտեմբերին ծայրագոյն վարդապետութեան աստիճան ստացած, որ իր ընթացքը փոկնց Եղիշէի Պատմութեան վրայ քննական աւարտաճառով։ Վանքէն առաջին մեկնողներէն մին եղաւ 1896ի տոպնապին ատեն։ Առաջնորդի պաշտօններ վարեց Ճանիկ և Մուշ, վերջին տեղէն բանտարկութեամբ հանուեցաւ և Կ. Պոլսոյ մէջ քարոզչութեամբ և գրականութեամբ զբաղեցաւ, քանի մը հրատարակութիւններ արտադրեց, գլխաւորաբար Լոյս կրօնաթերթին խմբագրապետն եղաւ։ Ազատութեան հռչակուելէն ետքը Գաղատիոյ առաջնորդ ընտրուեցաւ և վիճակին վրայ եպիսկոպոս ձեռնադրուեցաւ։ Իր փափաքն էր Եւրոպա անցնիլ ու եւսքանչեւ զարգանալ, և վերջապէս յաջողցուց Սինթապի ճեմարանին հանպանտկութեանը համար մինչև Ամերիկա երթալ, ուր գտնուեցաւ պատերազմին սկիզբէն, և այլեւս հոն մնաց։ Վերջերս Գաղղիական ընկալը և այժմ Բարիզ գտնուիլը լսուած է։ Բաբգէնի տիրող նկարագիրը ուսումնասիրութիւն է՝ վարչականէն ոչ զուրկ։ Այստեղ անցողակի յիշեմ, թէ իմ նպատակս եղաւ հայ եկեղեցական նախնեաց մոռցուած անունները վերյիշել մեր սաներուն վրայ, և Դուրեան ալ ինէ ետք նոյն միտքին հետեւեցաւ։

2. Խորով Պեհրիկեան, աւազանի անունով Խաչատուր, Զարացի, բացման օրը ներկայ եղողներէն և առաջին շրջանի հօթներէն մին։ Իր աւարտաճառին նիւթը Տաթեւացիին գործերը եղան։ Առաջնորդական պաշտօններ վարեց Տրապիզոն, Մուշ եւ Խարբերդ. վերջինէն հանուեցաւ Ազատութեան հռչակուելուն կուսակցականաց գրգռմամբ։ Բաւական նեղուեցաւ Կ. Պոլսոյ մէջ, մանաւոր քարոզչութիւններ ալ վարելով, և ուր ուրեմն Կեսարիոյ առաջնորդ ընտրուեցաւ, և անոգան եպիսկոպոսական ձեռնադրութիւն ստացաւ պատերազմին սկսելուն ատենները, որ իրեն դէմ ամբաստանութեան պատճառ եղաւ, իբր թէ թշնամի երկրէն գրդռութիւն բերած ըլլայ. բանտարկուեցաւ, դատուեցաւ, և բողոքներէ ետքը ազատուեցաւ Տիարպէքիր երթալ,

սակայն տեղը չհասաւ, և ճանապարհի վրայ ապանոուած ըլլալը կը հաստատուի։ Խոսրովի նկարագիրը հանդարտ և խոհական վարչականութիւնն է եղած։

3. Զաւէն Տեր-Եղիայեան, աւազանի անունով Միքայէլ, սերընդեամբ Սղերդցի, ծննդեամբ Մուսուլցի, իսկ մնդեամբ Պաղտատցի։ Դպրեվանքին երկրորդ տարին մտաւ աշակերտութեան, իբր քահանայական ասպիճանի ստիմանուած, որուն կը պատկանէր իւր գերդաստանը իբր քսանհինգ ծնունդներու յաջորդութեամբ, բայց երբոր երրորդ տարուոյ վերջը ընկերները կուսակրօնութեան նուիրուիլ հաւանեցան, ինքն ալ անոնց հետեւիլ ուզեց։ Իւր աւարտաճառը գրեց Օձնեցիի մատենագրութեան վերայ։ Իրեն յանձնուած էինք Դպրեվանքը երբ ես ու Դուրեան մեկնեցանք 1896ին։ Իսկ Կ. Պոլիս գալով պահ մը քարոզչութեամբ զբաղեցաւ, գլխաւորապէս Խասքէօյի արկածեալ թաղը։ Առաջնորդական պաշտօն վարեց Կարին և Վան, ուսկից Տիւարպէքիր անցաւ, և նոյն վիճակին վրայ եպիսկոպոսական ձեռնադրութիւն ստացաւ։ Արշարունի պատրիարքի հրաժարելէն ետքը՝ երբ Երեւփոխանութիւնը հիներէն ձեռք քաշելով նորերուն անցնիլ որոշեց, Զաւէն նախագահուեցաւ և պատրիարք ընտրուեցաւ 1913 օգոստոս 30|12 սեպտեմբերին, և վիճակներու այցելութեամբ Կ. Պոլիս հասնելով՝ գործի ձեռնարկեց նոյեմբեր 8|21ին։ Երեք տարի պաշտօնավարեց, մինչև որ կառավարական հրամանով տաճկահայ մեծ Աթոռները մէկի վերածուեցան և Սահակ Խապայեան Կիլիկիոյ կաթողիկոսին տրուեցան. Զաւէն պատրիարքութենէ հանուեցաւ, Պաղտատ յղուեցաւ, ուսկից Մուսուլ անցած՝ Պաղտատի գրաւուելուն առիթով, և տակաւին հոն մնացած գիտենք զինքն անպաշտօն կացութեան մէջ։ Զաւէնի նկարագիրն է արթուն և տակուն վարչականութիւն։

4. Մուսեղ Սերոբեան, աւազանի անունով Արտաշէս, Սալանպէկցի. բացման օրերուն ներկաներէն մին, և առաջին շրջանի եօթներէն մին։ Աւարտաճառի նիւթն առաւ Նարեկացիի Աղօթամատեանը։ Առաջնորդական պաշտօն վարեց Արտաքիր, ուսկից յարմար դատեցի հեռացնել զրպարտութեանց չընդարձակուելուն համար, որպէս կրցաւ Աւանայի առաջնորդ ընտրուիլ, և եպիս-

կոպոսական ձեռնադրութիւն ալ առաւ Կիլիկիոյ Աթոռէն իւր ընկերներէն առաջ։ Ապատութենէ ետքը համարձակ գործունէութեան ձեռնարկելուն պատճառաւ, Ատանայի կոտորածէն ետքը լրեն դէմ ալ դատապարտութիւն վճռուեցաւ ի բացակայութեան, զի փութացած էր կանխաւ Եգիպտոս մեկնիլ, ուսկից Ամերիկա անցաւ։ Շատ աշխատեցաւ Մայր Աթոռոյ եպիսկոպոսաց շարքին մտնել, որ կարենայ Ամերիկայի առաջնորդ ըլլալ, և մինչև իսկ այս նպատակով Էջմիածին ալ գնաց, սակայն Գէորգ Ե. կաթողիկոս ամուր մնաց անոր առաջարկը մերժելու մէջ, որով այժմ Պոսթընի մէջ կը մնայ, իբրև պարզ եկեղեցական պաշտօնեայ կամ, ինչպէս կ'ըսեն, իբրև հոգեւոր հովիւ։ Մուշեղի նկարագիրն է եռանդուն և համարձակ և բուռն գործունէութիւն թէ գրական և թէ վարչական ասպարէզներու մէջ, չափազանցութենէ չխորշելու չափ առաջ մղուող, որով չէ քաշուած կուսակցականներու իսկ համակիր և խորհրդակից ելեւալ։

5. Սմբատ Սաատէրեան, աւազանի անունով Գրիգոր, Ատաբազարցի, առաջին ներկաներէն և առաջին եօթներէն մին. ընթացքը փակեց Լամբրոնացիի վրայ աւարտաճառով։ Գաւառական պաշտօն վարեց Նիկոպոլիս, որ է Շապինգարհիսար, եւ անկէ Կարին անցաւ, որուն վրայ եպիսկոպոս ալ ձեռնադրուեցաւ, և պաշտօնը մինչև պատերազմի սկիզբը և մինչև Հայոց տարագրութիւնը շարունակեց։ Քաղաքացիներու հետ ինքն ալ ելլելու կը ստիպուի, և վատահելի տեղեկութիւնները կը հաւատան Երզնկայէ մեկնելէն ետքը սպանուած ըլլալը։ Սմբատի նկարագիրն է քաղցր և համեղ գործունէութիւն, պարտքէն ու պահանջէն ոչինչ թերի չթողլով։

6. Աղան Համամճեան, աւազանի անունով Նշան, Ապուշեխցի, որ երբեմն Արծրունի ալ ատորագրած է, իբրև Աղան անունին յարակից և իբրև Ակնայ գաղթականութեան բնաշխարհ։ Աւարտաճառին նիւթ առած է Լուսաւորչի Ցաճախապատումը։ Իւր առաջին գործունէութիւնը Դպրեվանքին մէջ կեդրոնացաւ իբրեւ տեսուչ և իբրև ուսուցիչ։ Կազմով ոչ զօրաւոր և միանգամայն սաստիկ ջղային ըլլալով, պատահական պարագաներէ ազդուելով և խրտչելով՝ հալածանաց մենամղութեամբ (Manie de

persécution) *ախտացաւ ուսկից զինքն բուժելու համար հայրենիքը օգափոխութեան ղրկեցի, զիւրին պաշտօններու տարի, ապատ թողուցի, Հիւանդանոց փակեցի՝ ըստ պարագայից, սակայն ոչ մէկէն կրցաւ օգտուիլ։ Իմ հրաժարելէս ետքն ալ ընդհանրապէս Ազգային Հիւանդանոցը մնաց միշտ նոյն վիճակի մէջ, մինչև որ տարւոյս սկիզբները վախճանած ըլլալուն գոյժը առինք։ Իւր նկարագիրը աւելի գրական գործունէութիւնը եղած պիտի ըլլար, եթէ առողջութիւն վայելէր։*

7. Մաքրոց Փափազեան, *ազգանի անունով Ներսէս, Վանեցի, Մեսրոպ չուշտակ վարդապետի որդին և յայտնի զրող Վրթանէսի և գործիչ Վահանի եղբայր. առաջին շրջանի եօթներուն վերջինը, որ Շարականները առած էր իրեւ աւարտաճառի նիւթ։ Ուշապի ընութեամբ երկիւղած, նոյնչափ բերմամբն ալ յախուռն։ Առաջին անգամ Կ. Պոլիս դառնալուն տեղապահ Զամիչեանէն հակառակութեան առարկայ եղաւ և Պուլկարիա խոյս տուաւ, ուր Սիմեան կաթողիկոսէ առաջնորդական փոխանորդութեան պաշտօն ստացաւ և յետոյ առաջնորդութեամբ Ամերիկա փոխադրուեցաւ։ Հոն կուսակցականներու հետ շփմամբ անոնցմէ կը վատակուի, և ապատ գործիչ ըլլալու համար սքեմն ալ կը թողու, իւր երէց եղբօր Յուսիկի սիրուհին ալ կը շահի, և այս վիճակին մէջ ազատութեան հաչակուելէն ետքը Կ. Պոլիս կուգայ և Ներսէս անունով Դաշնակցականաց քերան եղող Ազգասաեարs թերթին մէջ իւր խմբագիր և իւր մատակարար կը պաշտօնավարէ, մինչև պատերազմի և տարագրութեանց ատենը, և Ազգասաեարsի ջնջման ատեն ինքն ալ կը ձերբակալուի և կ'աքսորուի ու կեանքն ալ վրայ կուտայ ուրիշ սպանելոց շարքին, ինչպէս հասած լուրերէ կ'իմանանք։ Մաքրոց գրական և գործնական լաւ եկեղեցական եղած կ'ըլլար իւր առաջին մատնութեան հետևանօք, եթէ պատահարներու բերմամբ տարադէպ շփումներու մէջ գտնուած չըլլար։*

8. Թաքուլ Դուրեան, *ազգանի անունով Սարգիս, Կ. Պոլսեցի, մօրենական կողմէ Դուբեանի ազգակից. Դպրեվանքի տարեգրի ատեն 1896 սեպտեմբեր 15 | 27 ին ձեռնադրուած չորսերուն առաջինը, որուն մանաւոր վարդապետութիւնն*

տուի 1897 դեկտեմբեր 21/2 յունուար 1898ին։ Առաջնորդարան պաշտօն վարեց ի Զմշկածագ, յետոյ ի Պոնտրմա, ապա ի Պլլեճիք, և հուսկ յետոյ ի Գոնիա։ Սիրտը ուղիղ, աշխատութիւնը լաւ, խօսքը ունակնածու, վարմունքը յախուռն. մեծ յաջողութիւն և արդիւնաւորութիւն չի կրցաւ կազմել իւր գործունէութեան մէջ։ Արիւնի տկարութեամբ հիւանդացաւ, և բժշկութեան համար Գոնիայէ Զմիւռնիա անցնելով՝ հոն տարաժամ կնքեց իր կեանքը, պատերազմէն բաւական առաջ։ Թոմթուլի նկարագիրը խառնուրդ մըն էր, որուն մէջէն դժուար է ճշդել տիրապետող կողմը։

9. Փառէն Մելքոնեան, աւազանի անունով Ներսէս, ծնընդեամբ Հռոմկլայի, սննդեամբ Այնթապցի. երկրորդ շրջանի ձեռնադրուած չորսերէն մին, որուն մասնաւոր վարդապետութիւն տուի 1898 մարտ 1/13ին։ Առաջ Արմաշի մէջ աշխատեցաւ, առաջնորդական պաշտօն վարեց Սղերդ և Եդեսիա և Մարաշ, բայց գլխաւորապէս Սասնայի կատարածէն ետքը որբոց և այրեաց հոգաբարձութեամբ արդիւնաւորեցաւ, հուսկ յետոյ Պաղատատի առաջնորդութեան գնաց։ Հոն էր պատերազմի միջոցին, երբ քաղաքին գրաւման ատեն յաջողած է տեղէն չհեռանալ, ուր տակաւին կը մնայ և կը պաշտօնավարէ։ Փառէնի նկարագիրն է խօսքէ ու երևնալէ խուսափիլ, լռին գործել և արդիւնաւորապէս աշխատիլ։

10. Վահրիճ Շահլամեան, աւազանի անունով Դաւիթ, ծընընդեամբ Կիւմիւշխանէցի, սննդեամբ Տրապիզոնցի. երկրորդ շրջանի չորսերէն մին, որուն մասնաւոր վարդապետութիւն տուի 1898 հոկտեմբեր 10/22ին։ Առաջնորդական պաշտօններու մէջ գտնուեցաւ Վան, Գոնիա, Անկիւրիա և Ռոտոսթօ։ Զափազանց յախուռն բնաւորութիւնը հակառակութեանց առարկայ եղաւ շատ կողմերէ, մինչև որ դաւաճանութեամբ սպաննուեցաւ Կ. Պոլիս, Ազատութեան հռչակուելուն ամիսները. ոմանք ըսին ազգային գործոց թշնամութեամբ և ուրիշներ բարոյականի վրիժառութեամբ։ Վահրիճի արդիւնաւոր կեանք մը անհնար չէր ըլլար, եթէ իւր խօսից և վարմանց խոնարհանութիւն խառնելու զգուշաւորութիւն ունենար։

11. Թորգոմ Պիլիճեան, որ յետոյ թարգմանաբար Գուշակեանի փոխուեցաւ, ուսազանի անունով Մկրտիչ, Պարտիզակցի. երկրորդ շրջանի չորսերէն վերջինը, որուն մասնաւոր իշխանութիւն տուի 1899 դեկտեմբեր 21|2 յունուարին։ Վանական պաշտօններու մէջ աշխատեցաւ սկիզբները և Դուրեանի մնկնելէն ետքը փոխ-վանահայր և վերատեսուչ ալ ընտրուեցաւ։ Առաջնորդական պաշտօնով գնաց Սեբաստիա, որուն վրայ եպիսկոպոս ալ ձեռնադրուեցաւ, այլ յետոյ հրաժարեցաւ։ Եգիպտոս տեղափոխեցաւ գնաց և առաջնորդ ընտրուեցաւ, և տակաւին պաշտօնի վրայ է այնտեղ, թէպէտ վերջերս Բարիզ գացած ըլլալը լսուեցաւ և դառնալէն յուր չտունք։ Թորգոմ ծանրապլուխ և գործին տէր առաջնորդ մըն է, որ համակրութիւն և յարգանք ալ կը վայելէ։

12. Գնել Գալեմքեարեան, ուսազանի անունով Ներսէս, Կ. Պոլսեցի. առաջին շրջանի աշակերտներէն էր, բայց տարեկան քննութեանց չմասնակցեցաւ՝ Կ. Պոլիս գացած ըլլալով, և մնաց երկրորդ շրջանին, և ընկերներուն 1896ին ձեռնադրուած ատեն դարձեալ Կ. Պոլիս գտնուելով և ժամանակին չգալով, դարձեալ ետև մնաց, և վերջապէս առանձինն ձեռնադրեցի Գատըքէօյի եկեղեցին, 1897 յունուար 19|31ին, և նոյն տարւոյ դեկտեմբեր 21|2 յունուարին մասնաւոր իշխանութիւն ալ տուի։ Առաջնորդական պաշտօն վարեց Մուշ, այցելու գնաց Ռումանիա և եպիսկոպոս ձեռնադրուեցաւ, և վերջէն Սեբաստիայէ ընտրուեցաւ։ Տարագրութեան ատեն աթոռէն վտարուած և կենաց վտանգի ալ հանդիպած ըսուեցաւ, ատկայն վերջէն կուսակալի պաշտպանութեամբ ազատ մնացած ըլլալը իմացուեցաւ, և Կ. Պոլիս փոխադրուեցաւ, ուր այժմ Գատըքէօյի քարոզիչ է։ Գնէլ լաւ ձիրքեր ունի, բայց հանդարտութիւնը ատէպ մինչև դանդաղութեան կը հասցնէ։

13. Տիրայր Մարգարեան, ուսազանէն Երուանդ, Կ. Պոլսեցի. երրորդ շրջանէն միակ կուսակրօնութեան հետևողը, զոր առանձինն ձեռնադրեցի 1897 սեպտեմբեր 28|10 հոկտեմբերին Սամաթիոյ եկեղեցին և մասնաւոր իշխանութիւն տուի 1898 օգոստոս 15|27ին։ Իւր գործունէութիւնը ամփոփուեցաւ Դպրեվանքի մէջ

փոխ-տեսչութեամբ և պատրիարքարանի մէջ կրօնական դիւանագիտութեամբ։ Տիրայր կազմով նիհար ու մանր ըլլալով՝ ժողովրդական մեծ տպաւորութիւն գործելու յարմար չեղաւ, թէպէտ գրական գործունէութեամբ կարողութեան տէր էր։ Վերջերը որոշեց Կ. Պոլիսէ հեռանալ և Ամերիկա մեկնեցաւ, ուր կը գտնուի տակաւին քաղաքներէն մէկուն մէջ հոգևոր հովիւի պաշտօնով։

14. Մկրտիչ Զլղաստեան, աւազանի անունով Յովհան, Դատուանցի. երկրորդ չրջանի աշակերտներէն, որ կուսակրօնութեան յանձնառու չըլլալով մեկնած էր Դպրեվանքէն, և երբ Տրապիզոնի վիճակէն Զանայի վրայ ուղեցին քահանայանալը, ան ինքնաձեռնադրեցի Սկիւտարի Ս. Կարապետ եկեղեցիին մէջ 1898 յունիս 12|24ին, Դպրեվանքցւոց քահանայութեան դիմելը քաջալերելու դիտմամբ։ Տրապիզոնի վիճակէն Սեբաստիայի գաղութին մէջ քահանայագործելու փոխադրուած էր, երբ պատահական արկածով երէցկինը ու զաւակը կորսնցուց։ Անկէ ետքը Եթովպիոյ գաղութին քահանայութեան յղեցի, և անկէ դառնալէն ետքը տեղայ օրհնեցի։ Առաջնորդական պաշտօններու մէջ մնաց ժամանակ մը, և Զաւէն պատրիարքի Տիարպէքիրէ գալէն ետքը վիճակին տեղապահութեան կոչուեցաւ, մինչև վերջին տարագրութեան միջոցը։ Վստահելի լուրեր կրակով սպաննուած ըլլալը կը հաւատան։ Բաւական գործունէութիւն ունէր, սակայն իւր կենցաղին մասին աննպաստ խօսքեր շատ եղան։ Այստեղ կը փակուի իմ ձեռնադրած տասնուչորսերուն շարքը։

15. Մեսրոպ Նարոյեան, յաւագանէն Խաչատուր, Արդերցի՝ Մշոյ գաւառէն։ Դպրեվանքի տագնապի միջոցին ցրուած դասընկերներէն։ Դուրեան Եղիշէ եպիսկոպոսէ ձեռնադրուած 1901 մայիս 20ին, յետոյ ինն ընկերներով միասին։ Իւր գործունէութիւնը Դպրեվանքին մէջ ամփոփուեցաւ, որուն փոխվանահայր և վերատեսուչ ալ անուանուեցաւ, և այդ անունով եպիսկոպոսացաւ։ Պաշտօնը պահեց մինչև տարագրութեան օրը, և Գոնիա աքսորուեցաւ, ուսկից դարձեալ Կ. Պոլիս տարուեցաւ, և այժմ Պէշիքթաշի քարոզչութիւնը կը վարէ։ Պետոկոն նոր կարգադրութենէ ետքը Կրօնական ժողովի կամ Սինոդի ան-

գամ ընտրուեցաւ և հաստատուեցաւ, բայց հրաժարեցաւ և կը շարունակէ Պէշիքթաշի քարոզչութիւնը վարել։

16. Սահակ Օտապաշեան, յաւազանէն Թերովբէ, Սեբաստացի, Սեբաստիոյ առաջնորդ Պետրոս եպիսկոպոսի հետ Կ. Պոլիս եկաւ, և անկէ Դպրեվանք յղուեցաւ, և Դուրեանի ձեռնադրած տասներէն մին եղաւ։ Առաջնորդական պաշտօններ վարեց Սեբաստիա, Սամսոն և Պրուսա, ուսկից ինքնամատոյց յանձնառու եղաւ Երզնկա երթալ պատերազմի դժուարին ժամանակամիջոցին, այլ տեղը չհասաւ, և Շապինգարահիսարի կողմերը ըսպաննուեցաւ։ Գաւառական պաշտօններու համար արթուն և անձնուէր պաշտօնեայ մըն էր։

17. Մեհրուժան Գոնցոլեան, Աշխարունի, աւազանէն Տիգրան, Մարզուանցի. Դպրեվանք յղուեցաւ պատրիարքութենէ ետքը. ձեռնադրուեցաւ տասներու շարքին մէջ, առաջնորդական պաշտօնով Սրաբկիր յղուեցաւ, և զոհացուցիչ պաշտօնավարութիւն ունէր, երբ անակնկալ որոշմամբ սքեմէ և կուսակրօնութենէ հրաժարեցաւ և ուսուցչութեամբ սկսաւ զբաղիլ։ Այդ վիճակին մէջ տարապրութեան ենթարկուեցաւ, և տիրող խառնակութեանց միջոցին հաւանաբար բռնական մահուամբ կեանքն ալ կնքեց։

18. Երուանդ Փերտահնեան, աւազանէն Յովհան, Ամասիացի, նախընթացին ընկեր վանք երթալուն մէջ և տասն օծակիցներէն մին։ Ուսուցչական պաշտօնով գտնուեցաւ Ամասիա, և առաջնորդական պաշտօնով Ֆոդի և Երզնկա, և վերջէն Զաւէն պատրիարքէ պատրիարքական փոխանորդութեան կոչուեցաւ, և անոր պաշտօնէ դադարելէն ետքը սա ալ Երուսաղէմ յղուեցաւ։ Սինոդի անդամակցութիւնը կառավարութենէ չընդունուեցաւ, և Երուսաղէմ կը գտնուէր երբ մենք անկէ հեռացանք, և կը կարծենք թէ այնտեղ կը մնայ քաղաքին գրաւուելէն ետքն ալ։ Երուանդի նկարագիրը լաւ վարչականութիւն է։

19. Արտաւազդ Գալենտրեան, աւազանէն Եփրեմ, Պրուսայի Եէնիճէէն, տաղնապի ժամանակին ցրուած դասարանին մնացորդներէն և Դուրեանէ միասին ձեռնադրուած տասներէն մին։ Գա-

եառական ինչինչ պաշտօններէ ետքը Եդեսիոյ առաջնորդ ընտրուեցաւ և գովութեամբ վարեց. տարագրութեան ժամանակ Եդեսացւոց ընդդիմութեան մասնակից սեպուեցաւ, և քաղաքին ընկճուելուն վրայ ինքն ալ դատուեցաւ ու սպաննուեցաւ։ Արտաւազդ վարչական խոհականութեան հետ յատուկ յաջողակութիւն և գործունէութիւն ունէր երգեցողութեան և երաժշտութեան համար։

20. Կորիւն Եպայեան, *ուսպանէն Բարունակ, Ասլանպեկցի. սա ալ ցրուած դասարանին մնացորդներէն, և տասներուն մէջ ձեռնադրուած։ Իւր համարձակ տեսութիւններով և չափազանցեալ յայտարարութիւններով պաշտօնական դիտողութեան ենթարկուեցաւ, և Բալուի պաշտօնավարութենէն ետքը Մարաշի առաջնորդութեան կոչուեցաւ Մուշեղի պաշտպանութեամբ, եւ արթուն գործունէութիւն ցուցուց։ Սակայն մահացու հիւանդութեան հանդիպելով տարաժամ կերպով մահկանացուն կնքեց Մարաշի մէջ։*

21. Ղեւոնդ Դուրեան, *ուսպանէն Գառնիկ, Սկիւտարցի, Դուրեանի մերձաւոր հօրենական ազգակցութեամբ։ Դպրեվանք գնաց պատրիարքութեանս ատեն և տասներու դասարանին ընկերակցեցաւ և միասին ձեռնադրուեցաւ։ Պատրիարքարանի մէջ անձնական քարտուղարութիւն վարեց. մէկ երկու մանր հրատարակութիւններ ալ հանեց, և վարդապետներէ չատերուն կասկածելի դառնալուն պատճառով՝ նորոգուած Կրօնական Ժողովոյ անդամակից ընտրուեցաւ. Դուրեան տեղապահէն փոխանորդութեան կոչուեցաւ և անկէ ետքն ալ շարունակեց, թէպէտ նպաստից բաշխման գործին մէջ խօսից առիթ տուաւ։ Անդրիանուպոլսոյ առաջնորդ ընտրուեցաւ և նոյն վիճակին վրայ եպիսկոպոսացաւ։ Պուլկարիա այցելու ղրկուեցաւ եւ առաջնորդ ընտրուեցաւ, և պուլկարական կառավարութենէ ալ ընդունուեցաւ, և նոյն պաշտօնին վրայ կը մնայ մինչև ցայսօր։ Վարուելու և շահելու կարողութիւն ցոյց տուած է իւր պաշտօնավարութեանց մէջ։*

22. Գարեգին Խաչատուրեան, *ուսպանէն Խաչիկ, ծննդեամբ Տրապիզոնցի և անդեամբ Կ. Պոլսեցի։ Մխիթարեանց Մուրատ-Ռափայէլեան վարժարանին ալ աշակերտած, այլ դաւանական*

տարբերութեան պատճառով ետ եկած և եկեղեցականութեան փափաքով Դպրեվանք գացած, և տասներուն դասակից և օծակից եղած։ Ուսուցչական և տեսչական պաշտօն է ունեցած Սաղ ամիտոին մէջ, եւ առաջնորդական պաշտօն վարած Մարաշ եւ Արաբկիր. Դպրեվանքին մէջ ալ ուսուցչութիւն եւ տեսչութիւն ըրած է, և վերջէն Գոնիայի առաջնորդ ընտրուած և յաջողակութեամբ վարած է։ Տարագրութեան առթիւ Մամպուճ տարուած, ուսկից Երուսաղէմ եկաւ Սինոդի անդամակցութեան ընտրուելով եւ հաստատուելով, եւ կաթողիկոս-պատրիարքին իւր ժողովականներուն հետ Երուսաղէմէ հեռացուցուած ատեն Գարեգին ալ Դամասկոս եկած, ուր կը մնայ տակաւին։ Վարչական եւ ուսուցչական ձիրքերու հետ՝ եւ թերեւս աւելի՝ գրականին հետամուտ է նա, յատկապէս բանասիրական ճիւղը մշակելով։

23. Գրիգորիս Պալտաֆեան, աւազանէն Գրիգոր, Կ. Պոլսեցի, Սանասարեան վարժարանէ ընթերցաւարտ եղած, մեքենագիտութեան հետեւելու համար Գերմանիա յղուած, և դառնալէն ետքը ասիական երկաթուղեաց եւ Էրէյլիի ածխահանքերուն մէջ պաշտօն վարած։ Քանիցս եկեղեցականութեան փափաք յայտնելէ ետքը, իմ մէկ անորոշ կրութեամբս Զօնկուլտաքէ Արմաշ կ'երթայ եւ Դուրեանէ յարմար դատուելով՝ տաներու դասարանին մէջ կ'ընդունուի եւ միասին կը ձեռնադրուի։ Դասթէմունի առաջնորդական պաշտօնով երթալէն ետքը պատրիարքարանի անձնական քարտուղարութեան մէջ Ղևոնդ Դուրեանի հետ միասին կը պաշտօնավարէ և նոյն պատճառով Կրօնական ժողովի ալ կ'անդամակցի։ Գերմանիա վերադարձած էր ուսումնարանական ուսմանց մէջ զարգանալու համար, երբ պատերազմի սկիզբները Կ. Պոլիս կը դառնայ, և մայրաքաղաքէ որոշակի հեռացուածներէն մին կ'ըլլայ, և մինչև Տէր-Զօր կը յղուի. սակայն կը յաջողի Պաղտատի երկաթուղւոյն մէջ իբրեւ պաշտօնեայ մտնել, եւ վերջերը Իսլահիէի կողմերը կը յղուի, սակայն այս օրեր ուր գտնուիլը ստուգուած չէ։ Աւելի արտաքին գործառնութեանց քան թէ եկեղեցական ասպիճանին պահանջից յարմարութիւն եւ վարժութիւն կը ցուցնէ։

24. Եղիշէ Խաչերեան, աւազանէն Սուրէն, Պարտիզակցի,

Դպրեվանքի տագնապէն առաջ աշակերտութենէ արձակուած կենսական գործարանաց տկարութեան պատճառով, բայց յետոյ վտանգէ զերծ կարծուելով՝ Դուրեանէ հրաւիրուած, և իւր իսկ անունով ձեռնադրուած տաններուն շարքին, միանգամայն Զմիւռնիոյ առաջնորդութեան կացած ատեն միւսին տարած։ Սակայն վիճակը ծանրանալով՝ հիւծախտէն վտանգուած կը վախճանի իւր նորահաս երիտասարդութեան տարիքին մէջ։

25. Պարգեւ Դանիէլեան, ուսազանէն Հայկ, Ոսկեղջուրի Խասգիւղցի. իբրև որբ և անօգնական տղայ գերմանացի մարդասէրներէ Գերմանիա կը տարուի Կ. Պոլսոյ 1896ի կոտորածէն ետքը, բայց կրօնափոխութեան չհաւանելով պատրիարքարան կը դիմէ և զինքը ետ բերել կուտամ և Դպրեվանք կը յղեմ։ Կ'աշակերտի Դուրեանի վերատեսչութեան երկրորդ շրջանին, որոցմէ չորսը արդէն սարկաւագ եղած էին Դուրեանի Զմիւռնիա մեկնած ատեն, ուստի քահանայական և աբեղայական կոչման ժամանակը հասնելուն՝ յատկապէս զինքը Զմիւռնիայէ կը հրաւիրեմ իրենները ձեռնադրելու, ինչպէս որ ալ կը գործադրուի։ Պարգև Նիկոմիդիոյ առաջնորդին օգնականութենէ ետքը ուրիշ առաջնորդական պաշտօններ վարեց և տարագրութեան միջոցին Պրուսայի վիճակը կը գտնուէր, ուսկից ոչ միայն տարագրուեցաւ, այլև ամբաստանուեցաւ և դատապարտուեցաւ և Տէր-Զօրի մէջ բանտարկուեցաւ։ Վերջին տեղեկութեանց համեմատ բանակ ուղարկուած առանձնական կեանք կը վարէ նոյն կողմերը։ Պարգևի չի պակսիր ոչ աշխատասիրութիւնը և ոչ յաջողակութիւնը։

26. Շաւարշ Սահակեան, ուսազանէն Արշաւիր, Շապինգարահիսարցի, Դուրեանի վերջին ձեռնադրած չորսերէն մին. առաջնորդական պաշտօնով գտնուեցաւ զլխաւորապէս Եւդոկիա, և արդիւնաւոր աշխատութեամբը կը գովուէր, երբոր տարագրութեան միջոցին հեռացուեցաւ, և նոյն առիթով սպաննուեցաւ, ինչպէս վստահելի տեղեկութիւններէ կը քաղենք։ Խոհական ու անխոնջ աշխատող մըն էր, որ լաւ ապագայ կը խոստանար։

27. Շահէ Գասպարեան, ուսազանէն Հմայեակ, Այնթապցի, և չորս օծակիցներէն մին։ Հալէպի առաջնորդութենէ վերջը Ատանայի առաջնորդութիւնը կը վարէր ընդհանուր համակրութեամբ

ու արդիւնաւոր գործունէութեամբ, երբ ուսումնական զարգացման փափաքանօք պաշտօնէ հրաժարեցաւ և Ամերիկա ուղևորեցաւ։ Այնտեղ կը գտնուի տակաւին և աստուածաբանական ճիւղին համալսարանական կանոնաւոր ընթացքը կը կատարէ յաջողութեամբ, միանգամայն հոգևոր հովիւի եկեղեցական պարտաւորութիւնն ալ կը լրացնէ։ Ապագային համար արժանաւոր և օգտակար զարգացեալ եկեղեցական գործիչ մը ըլլալու սահմանուած կը տեսնուի։

28. Պապկ Տեր-Խորենեան, աւագանէն Անուշաւան, Գուրտպէլէնցի, Դուրեանի վերջին չորսերուն կրտսերագոյնը։ Միջոց մը մայրաքաղաքի մէջ քարոզչութեամբ և մասնաւոր աշխատութիւններով վարժուելէն ետքը՝ առաջնորդական պաշտօնով Քղի և անկէ Խարբերդ յղուեցաւ, և ակնկալութիւնները արդարացուց։ Սակայն տարագրութեանց ատեն նա ալ քաղաքէն հանուեցաւ և ճանապարհին սպաննուեցաւ, ժիր երիտասարդութեան հասակին մէջ, երբ լաւագոյն ակնկալութիւններու իրաւունք կ'ընծայէր։ Այստեղ կը փակուի Դուրեանի ձեռնադրած տասնուչորսերու շարքը։

29. Սուրեն Գալեմեան, աւագանէն Պօղոս, Սրաբկիրցի, Դուրեանի օրէն կազմուած դասարանէն, որոց սարկաւագութիւնը ետ տուած էի, իսկ քահանայական ձեռնադրութիւնը կատարուեցաւ իմ պատրիարքութենէ ելլելէս ետքը, և Նիկոմիդիոյ առաջնորդ Յովակիմեանի յանձնարարուեցաւ 1909ին վանք ելլալ և ձեռնադրել, ինչպէս որ ալ կատարեց։ Սուրէն Բաղէշի առաջնորդութիւնը կը վարէր տարագրութեան ատեն, և քաղաքացւոց հետ ինքն ալ հանուեցաւ, և սպաննուած ըլլալը վստահելի լուրերէ քաղուած է։ Գործունեայ և աշխոյժ բնաւորութեամբ ապագային համար լաւ յոյսեր կը ներշնչէր։

30. Գեղամ Թէվէքելեան, աւագանէն Խաչիկ, Շապինգարահիսարցի, վերջինին ընկերակից և օծակից։ Առաջնորդական պաշտօնով Քղի յղուեցաւ և ազգային տագնապին ատեն սա ալ տարագրուեցաւ և սպաննուեցաւ։ Բնութեամբ հեզ և մեղմ, բայց գործով ժիր երիտասարդ էր Գեղամ եւ յուսալից ապագայ կը խոստանար։

31. Վահրամ Նազարեթեան, աւագանի անունը պահած, Նիկոմիդացի, եւ վերջին երեքներուն ընկերակից եւ օծակից։ Սա կանուխէն մտադրած էր Թուրքիայէ հեռանալ, և առաջին առիթով Ամերիկա ուղեւորեցաւ, ուր հոգեւոր հովիւի պաշտօն կը վարէ, այլ թէ զարգացման կը հետեւի՞, մեզի անծանօթ կը մնայ։

32. Համազասպ Եղիսեեան, աւագանէն Յակոբ, Եօզգատցի, վարժապետութեամբ զբաղած և կանուխէն ալ Դպրեվանք գալու խնդրանք մատուցած, բայց յետաձգուած տարբեր յարաբերութեան մէջ գտնուելուն համար։ Վերջերը նորէն դիմում կ'ընէ և կ'ընդունուի հաստատեալ տարիքի մէջ, եւ ձեռնադրութեան պատրաստուած երկու սարկաւագներու կ'ընկերակցի, եւ ասոնք ալ կը ձեռնադրուին Յովակիմեանէ 1910ին։ Առաջնորդական պաշտօնով կը յղուի Սամսոն-Ճանիկի վիճակը կառավարելու, և տարապրութեան ատեն քաղաքէն կը հանուի եւ կը սպաննուի։

33. Հրանդ Յովասափեան, աւագանէն Արմենակ, ծննդեամբ Կարնեցի, կամ աւելի ճիշդը Ռասպաթ գիւղը ծնած եւ Կարին մկրտուած, եւ ննդեամբ Կ. Պոլսեցի դարձած։ Յովակիմեանի վերջին ձեռնադրած երեքներէն մին։ Համեստ և փութաջան եւ բիտասարդ մըն էր, և Զմիւռնիոյ առաջնորդ Ինճէեանէ ալ օգնական ընտրուած և գոհութեամբ ու գովութեամբ պահած էր։ Սակայն կենցաղին վրայ կասկածներ հրաւիրելով արձակուած և Կ. Պոլիս դարձած էր, ուսկից տարապրութեանց առթիւ Գոնիա աքսորուողներէն մին կ'ըլլայ, բայց կառավարութեան անձնուէր ծառայութիւն խոստանալով կ'ազատի, եւ Կ. Պոլսոյ մէջ Տաճար չաքաթաթերթը կ'սկսի հրատարակել կառավարութեան ծախքով և ուղղութեամբը։ Այս է իւր այժմեան զբաղումը Ֆէրիքէօյի քարոզչութեան հետ միասին։

34. Հմայեակ Պաղտասարեան, աւագանէն Թորոս, Պիլէճիքցի, նախընթաց երկուքին օծակից։ Առաջնորդական պաշտօնով Մալաթիա գտնուեցաւ, բայց իւր ընթացքն ու կենցաղը ծանր մեղադրանաց տեղի տուաւ, և տարապրութեան ատեն իւր գլուխէն ալ փորձանքներ անցան, մինչև զինուորագրուելով՝ գործաւորներու խումբին մէջ դրուցաւ, եւ վերջապէս ազատելով

Երուսաղէմ յղուեցաւ, ուր թողուցինք զինքը և անշուշտ այնտեղ կը մնայ տակաւին։

Նարոյեան իւր Արմաշի պաշտօնավարութեան ատեն երկու սարկաւագներ ձեռնադրած էր, որոնք տարագրութեան առթիւ Կ. Պոլիս եկած էին աշակերտներուն հետ։ Հոն պատրիարքարանի հաւանութեամբ երկու սարկաւագները կը ձեռնադրէ, բայց առաջին պատարագին չմատուցած՝ Երուսաղէմ երթալու համար ճանապայ կը հանուին, ուր իրենց նախընծայ պատարագին ալ մատուցին սովորական հանդիսութեամբ։ Այս երկուքն են.

35. Մամբրէ Սիրունեան, աւագանէն Արշամ, Կարնեցի, որ Երուսաղէմի մէջ դպրանոցին կառավարչութեան կոչուեցաւ։

36. Խորէն Թաշեան, աւագանէն Կարապետ, Զիլէցի, որ ժամարարութեան և կարգավորութեան կը հետևէր և չափաւոր կերպով ալ ուսմանց կը կբաղէր պարապորդութենէ խուսափելու համար։

Ահա՛ 1889էն մինչև 1916 քանքեօթը տարիներու մէջ Դըպրեվանքի տուած վեղարաւորաց արտադրութիւնը երեք հարիւրէ աւելի ընդունուած աշակերտութեան մէջէն։ Այս երեսունվեցները կրնանք այժմ բաշխել հետևեալ կերպով.

Հիւանդութեամբ վախճանածներ՝ 4 — Սղան, Թաթուլ, Կորիւն, Եղիշէ։

Բռնամահ վախճանածներ՝ 13 — Խոսրով, Սմբատ, Մաշթոց, Վահրիճ, Մկրտիչ, Սահակ, Մեհրուժան, Արտաւազդ, Շաւարշ, Պասկ, Սուրէն, Գեղամ, Հմայեակ։

Աւելի կամնուազ խստութեամբ տարագրուածներ՝ 8 — Զաւէն, Երուանդ, Գարեգին, Գրիգորիս, Պարգև, Հմայեակ, Մամբրէ, Խորէն։

Արտասահման գանուողներ՝ 7 — Բաբգէն, Մուշեղ, Թորգոմ, Տիրայր, Ղևոնդ, Շահէ, Վահրամ։

Հանգարտ մնացածներ՝ 4 — Փառէն, Գնէլ, Մեսրոպ, Հրանդ։

Եպիսկոպոս եղողներ՝ 9 — Բաբգէն, Խոսրով, Զաւէն, Մուշեղ, Սմբատ, Թորգոմ, Գնէլ, Մեսրոպ, Ղևոնդ։

Կարգաթողներ՝ 2 — Մաշթոց, Մեհրուժան։

Դպրեվանքը որչափ ալ վեղարաւորաց զարգացման նպատակին կը հետևէր, քահանայութեան և վարժապետութեան դասակարգերն ալ բարձրացնելու նպատակին կը ծառայէր, և իւր առաջին շրջանը ասոնց բաւականութիւն տալու ծրագիրով կազմած էր։ Սակայն Դպրեվանքի առաջին շրջանը լրացնողներն իսկ ստորնացուցիչ և անգոհացուցիչ կը տեսնէին քահանայական աստիճանը, և խորշելով կը խորշէին քահանայական դասակարգին մանելէ։ Ըստ այսմ երեք հատունացեալ տարիքով քահանայութեան պատրաստուելու համար եկողներէն զատ, որք են՝ Պուքրէշի Յարութիւն Սարգիսեանը, Մարաշի Հմայեակ Վարժապետեանը և Այնթապի Ներսէս Թավուզճեանը, նաև Զլղատեանէ զատ՝ միայն երեք հատ կը յիշեմ քահանայ ձեռնադրուած Դպրեվանքցիներ, որք են Եղնիկ Թէքէեան՝ Մըխալըճցի, Համազասպ Պետիկեան՝ Վառնացի և Արշակ Նժդեհեան՝ Կովկասցի։ Շատեր շատ տեղերէ հրաւիրուեցան, բայց մերժեցին։ Հետաքրքրական է այս մասին Զաւէնի պատրաստն։ Երբոր առաջին շրջանին երրորդ դասարանը աւարտողներուն կուսակրօնութեան մասին առաջարկներ կ'ուղղէի՝ զինքն զանց ըրի, քանի որ քահանայութեան նպատակով եկած էր՝ իւր հօր Պատատի փոխանորդ Աւետիս Տէր-Եղիայեան քահանայի առաջարկութեամբ։ Ուստի ինքն ներկայացաւ իրեն մասին հարցում ուղղելու, և երբ ես կանխաւ եղած մտադրութիւնը յիշեցուցի՝ «Ի՛նչ, ըսաւ, անոնք վարդապետ և եպիսկոպոս պիտի ըլլան և ես քահանայ մնալով անոնց ոտքին խալնէ՞ պիտի փռեմ»։ Եւ այս կերպով ինքն ալ կուսակրօն սարկաւագութեան ընդունուեցաւ։ Բախտը անանկ բերաւ որ առաջին ինքն պատրիարք ընտրուելով՝ ամենէն աւելի բարձրացած եղաւ։

Իսկ վարժապետութեան հետևողներ շատ եղան, գրեթէ բոլոր Դպրեվանքի ծրագիրին առաջին մասը լրացնողներ, նոյնիսկ ամբողջապէս չլրացնողներն ալ։

Ինծի չէր նայեր Դպրեվանքին արդիւնաւորութիւնը գովաբանել, սակայն իրողութիւններ ինքնիրեն կը խօսին։ Դպրեվանքով կուսակրօն եկեղեցականութեան զարգացումը ընդարձակուեցաւ, պատիւը բարձրացաւ, արդիւնաւորութիւնը տարածուեցաւ, անձնուէր ծառայութեան սկզբունքը նուիրագործուեցաւ, և գաւառներու ու վիճակներու պէտքերը լրացնելու փու-

թանչան և յօժարակամ աշխատողներ առատացան։ Դպրեվանքի վեղարաւորներէն մէկուն կամ մէկալին վրայ նշմարուած կամ խօսուած թերութիւններ կոչումին էութեան դէմ չեն, և առաւելագոյն արդիւնաւորութեան մէջ կ'ընկղմին, և վերջապէս երբեք հրեշտակներ հասուցած ըլլալու յաւակնութիւնը չունինք և չունեցանք, ապաթէոչ այս բծախնդիրներ Յիսուսն ալ պիտի քննադատէին և պարսաւէին՝ տաներկու ընտրուածներէն մին Իսկարիովտացին եղած ըլլալուն համար։

ՂԶ

Դամասկոս, 1918 ապրիլ 30/13 մայիս Բշ.

Գրութիւնս իւր պատահական և կցկտուր ոճովն ալ բաւականաչափ տեղեկութիւն տուած կը կարծեմ՝ թէ՛ իմ կենսագրական տեղեկութեանցս և թէ մտաւորական տեսութեանցս մասին, այնպէս որ զայն աչքէ անցընողը կրնայ որևէ գաղափար մը կազմել անձիս նկատմամբ, և որովհետև անկեղծօրէն իսկութիւնը յայտնել ջանացած եմ, կրնայ միանգամայն իւր սկզբունքներուն և գաղափարներուն համեմատութեամբ զիս գնահատել կամ քննադատել։

Ինչ որ առաջին տեսութեամբ մը ամենուն աչքին պիտի զարնէ, կեանքիս այլևայլութիւններն են։ Սովորական կեանքերը ընդհանուր նկարագիր մը կամ կերպարան մը կ'ունենան, և իրենց կենցաղն ու զբաղումը, գործերն ու անցքերը անոր շուրջը կը դառնան, և միօրինակութիւն մը կը տիրէ՝ ոչ աստիճանով այլ տեսակով, կ'աճի կամ կը նուազի, կը շատնայ կամ կը քիչնայ, բայց վերջապէս միեւնոյն կեանքի շրջանակին մէջ կը մնայ։ Ասոր հակառակը եղած է իմ կեանքը. շատ մը իրարմէ տարբեր ու իրարու անյարիր շրջաններու համախմբութիւն մը, անկապակից տեսութեանց միաւորութիւն մը, եւ փոխադարձաբար անկախ գործերու գումարում մը։ Ես իսկ վարանոտ անորոշութեան մէջ կը գտնուիմ, երբոր կ'ուզեմ ճշդել թէ ի՛նչ եղած

է կեանքիս տիրող նկարագիրը։ Ո՞ւր Անտոնեանց վանքին երկիւղած ու բարեպաշտ ուսանողը, և ո՞ւր Վատիկանի դէմ պայքար մղող հաստատամիտ գործիչն ու գրիչը։ Ո՞ւր հռոմէական դրութեան ջատագով աստուածաբանը, և ո՞ւր հակահռոմէական աստուածաբանութեան եռանդուն ուսուցիչը։ Ո՞ւր եւրոպական ոստաններու մէջ հանգստաւէտ կեանքով ապրողը, և ո՞ւր Հայաստանի անկոխ լեռներն ու անշէն ձորերն ու շինական խրճիթներուն մէջ զուարթամիտ թափառողը։ Ո՞ւր պահպանողական սկզբունքներով սնած ու գործած աշակերտը, եւ ո՞ւր աջատամիտ եւ լայնախոհ սկզբունքներու հետեւողն ու պաշտպանողը։ Սակայն իրականութիւն մըն է, որ այս ամէնն ալ ճըշմարտուած են իմ կեանքիս մէջ, եւ իրարու ներհակ ծայրերու ծառայելով մէկտեղ՝ ո՛չ ինքնութիւնս եմ կորուսած, և ո՛չ խիկութիւնս շփոթած, ո՛չ անարգանաց հանդիպած, և ոչ զարմացմանց տեղի տուած, այլ միեւնոյն և ինքնիրեն համաձայն անհատականութիւնս եմ պահած։

Ես իմ մէջս ամփոփուելով՝ այս տարբերեալ ու տարուբերեալ ու ի չհամազգեաց կազմակերպեալ կեանքիս ուրիշ մեկնութիւն չեմ գտնար, բայց եթէ լաւագոյնին դիմելու անկեղծ տենչանքը, և անդրագոյն մղումէ առաջ եկած վիճակիս և համոզմանս անկեղծօրէն ծառայելը, և լաւէն լաւագոյնին և լաւագոյնէն ամենալաւին տեսութիւնն ու գիտակցութիւնն ստացած ատեն, համարձակ յառաջանալու հաստատուն միտքս, ատոնց հետ միացընելով տեսականաբար Օրէնքին և գործնականաբար Իշխանութեան հեղինակութիւնը յարգելու անխարդախ կամքը։ Այդ ընթացքը ոչ հոպեբանական ներհակութիւն և ոչ տրամաբանական հակասութիւն կը ներկայէ, և հետեւաբար գործադրելի ըլլալու դժուարութիւն չի պարունակեր։

Նորահաս կամ լաւ եւս տնաս աշակերտութեանս ժամանակ տեսածիս հետեւելով և թելադրուածին համակերպելէ տարբեր բան մը չէի կրնար ընել, և խղճմտութեամբ վարեցի այդ դերը օրինակելի ճշդապահութեամբ։ Կրօնական սկզբունքներս, դաւանական ըմբռնումներս, գործնական արարքներս միեւնոյն ուղղութեան վրայ պահեցի. տարբեր համոզում չէի կրնար ունենալ, տարբեր ընթացք ալ պէտք չէր որ ունենայի։ Զափահաս աշակերտութեանս և հետախոյզ ճիգերուս մէջ գտնուած դաւանանքս

սկսաւ զիս չգոհացնել, հռոմէադաւան սկզբունքներուն հիմերը սկսան տկար երեւնալ, գործածուած փաստեր կամայականութեան ձեւեր և այլևայլութեան իմաստներ սկսան ցուցնել, բայց տակաւին իմ վրայ չէի զգար այնչափ հեղինակութիւն և այնչափ փորձառութիւն, որ կարենամ կացութիւնը յուզել և խզել։ Եկեղեցական պատմութեան մրցակից քննութեան մէջ միջնադարեան հաւատաքննութեան պաշտպանութիւնը նիւթ տրուեցաւ, այնպէս պաշտպանեցի՝ որ մրցանակը տարի, թէպէտ համոզումս լիուլի չէր։ Աստուածաբանական մագիստրոսութեան հանդիսական քննութեան մէջ պապական իշխանութիւնը այնպէս պաշտպանեցի՝ որ հռոմէականներն ալ զարմացուցի, թէպէտ ըմբռնումս համաձայն չէր։ Սակայն համալսարանական ծրագիրը այս էր, և ես այս ծրագիրին աշակերտած էի, և ուսումնական իշխանութեան հեղինակութեանը դէմ ըմբոստանալու ոչ պարագայք կը ներէին և ոչ օրինաւորութիւնը կը թոյլատրէր։ Պարտեայ եւ Պահանջից և Պաշտաճից հպատակիլը գերագոյն իմաստութիւնն է, ուսկից երբեք բաժնուիլ չեմ ուզած։

Հակահաւատեան խնդիրին ախոյեաններէն եղայ, գործով պայքարեցայ, գրիչով մաքառեցայ, հռոմէական պապութեան դէմ համարձակ կռուեցայ, ես որ հռոմէական դրութեան խորերը թափանցած էի և հռոմէականութեան հլու հպատակ կը կարծուէի։ Սակայն անիրաւ պահանջները, ապօրէն ձեռնարկները, անձնասէր նպատակները, անարդարանալի արարքները մերկապարանոց և ակնյայտնի էին. առաջին ըմբռնումներս աճած էին, փորձառութիւնս լրացած էր, մտայնութեանս փոփոխութիւնը կատարեալ էր, աւելի առաջ ալ երթալու մտադրութիւնս կազմուած էր, բայց աստիճանաբար յառաջելը խոհեմութեան պահանջ էր, և ես այս միտքով ճանապայ կ'ելլայի։ Ոչ կիրքն էր իմ առաջնորդը և ոչ չանն էր իմ ուսուցիչը։ Հաւանաբար աւելի հանգիստ և օգտաւէտ ապագայ մը կը խոստանար ինձի հռոմէադաւան եկեղեցին, քան տարապեալ ու տագնապեալ հայադաւան եկեղեցին, որուն հետուէն հետու կը դիմէի, սակայն բարոյական պարտք կը զգայի ոչ անձնդիւրութեան, այլ անձնուրացութեան նպատակով գործել։ Սքեմը թողլով, ոչ մերժելով և ոչ հրաժարելով, աշխարհական կեանք ալ վարեցի, բայց աշխարհիկ կենցաղի չծառայեցի, յանձնարարեալ գործունէութիւն իրը պայման

գործածեցի, չափն ու կանոնը այնպէս խղճմտօրէն կարգադրեցի, որ ոչ մեղադրանքի տեղի տուի և ոչ վերատին սքեմի դարձած ատենս դիտողութեան պատճառ տուի, և ոչ ալ դժուարութեան դիմաց գտնուեցայ. անցողական միջադէպի մը պէս ամենը չանակ պահեցի. կերպարան մըն ալ այս էր որ անցուցի. կերպարաններու տարբերութեան մէջ թիւ մը միայն աւելցուցի։

Հայադաւան Եկեղեցին վերադարձայ, ուսկից մէկ երկու ծնունդով միայն հեռացած էին նախնիքս, և որուն աւազանին մէջ կնքուած էին հայրս և մեծ հայրս։ Այս անգամ ալ ոչ բախտն էր իմ փնտռածս և ոչ փառքն էր իմ հետապնդածս։ Ներսէս պատրիարքէն խնդրած էի զիս վարչական ասպարէզէ հեռու պահել և գրական համեստ չրջանակի մը մէջ թողուլ։ Ներսէս ինքն ալ վերադարձիս օրուան գգայուն ատենաբանութեան մէջ ըսած էր. «Հռոմին ապարանքը թողուցիք և Հայուն հիւղակը եկաք». բայց և կ'աւելցնէր. «Հոն հիւր էիք, հոս տանուտէր էք, այն ձերը չէր, այս ձերն է»։ Ահա՛ իմ ընթացքիս ալ հիմը։ Հայ Եկեղեցւոյն վրայ այնչափ աւելցած էր համակրանքս, որչափ ուսումնասիրած եմ անոր ներքինը. այնչափ ազատամիտ և լայնախոհ գտած եմ անոր խսկութիւնը, որչափ բաղդատած եմ ուրիշ եկեղեցիներու հետ։ Այս բաղդատական և խորաթափանց հետազօտութիւնը չեմ կարծեր թէ հայ եկեղեցականութեան մէջ աւելի լիովին կատարող կամ աւելի հեղինակօրէն կատարել կրցող ուրիշ մը գտնուի։ Պարագաներն են որ զիս երկկողմանի կանոնաւոր ուսումնասիրութեանց մտցուցին, և ես եղելութիւնը գիտել կուտամ և ոչ թէ կարողութիւն կ'ուզեմ ցուցնել։ Սակայն Հայոց Եկեղեցին կը նկատեմ իւր նախնական կացութեան մէջ, Պարթևաստանց և Թարգմանչաց դարերու եկեղեցին, զերծ ունիթորական և աղթարմայական և Մխիթարեան պատուաստներէն։ Հայոց Եկեղեցի հրատարակութեանս մէջ այս միտքս երկարօրէն բացատրած եմ. ա՛յն է իմ դաւանանքս, ա՛յն է իմ հաւատքս։

Կրօնական սկզբանց մէջ պահպանողական մըն եմ, բայց պահպանողականութեամբ ազաւաղմանց և յաւելմանց պաշտպանը չեմ. հինն է իմ նպատակս, նորելիքները և եկամուտները և օտարամուտները պաշտպանել պահպանողականութիւն չէ։ Դարուս հոգին թեթեւութիւն կ'ուզէ. պարտաւորիչ կէտեր քիչ, միտք յոգնեցնողը սակաւ, ձեռք կաշկանդողը պակաս, բեռ ա-

ելցնողը նուապ, եւ այսպէ՛ս է Հայոց Եկեղեցին։ Բայց պիտի կարենա՞նք այդ վիճակը իրականացնել, օտարամուտը թօթափել, նորելիքները կարճել, եկամուտները վտարել։ Այսօրուան վաղուան գործ չէ ասիկա. իմ արեւն ալ մտնելու վրայ է, ես տեսնելու յոյս չունիմ. բայց ապագային վրայ յոյս ունիմ, միայն թէ օրինաւոր ճանպով յառաջացուի, յախուռն ձեռնարկներէ զգուշացուի, կամայական որոշումներու տեղի չտրուի, նախնականը ըլլայ օրէնք, բուն հայկական Եկեղեցին ըլլայ զգուշութիւն։

Ոչ փափաքած՝ այլ պարտաւորուած գաւառական առաջնորդութիւնը յանձն առի յօժարակամ. հարկաւորը կամաւոր ընել գործոց կանոն է ինծի համար. հարկը արդիւնքի փոխակերպել իմաստութիւն է իմ համոզմամբ։ Եւ որովհետեւ պարտաւորութիւնը գերագոյն տէր է՝ մոռցայ գրականը, մոռցայ ուսումնականը անձնական տեսակէտէն, վարչութիւն ու կրթութիւն եղան այն օրէն իմ երկու թեւերս, որոնցմով գործեցի, որոնցմով սաւառնեցայ։ Առաջնորդարան և վարժարան, քաղաք և աւան, գիւղ և շէն եղան ասպարէզս, միայն ասոնց դարձուցի մատդրութիւնս, վի շատ բաներու եռեւէն միանգամայն հետապնդողներ՝ ոչ մէկուն մէջ կրնան յաջողիլ։ Նոր կեանք և նոր կերպարան, ոչ եւս հռոմէական դաւանական ուսումներ, ոչ եւս կաթոլիկական ումպէտ պայքարներ, ոչ եւս գիրի և գիրքի քաղցր զբաղումներ. ժողովրդական տառապանքներու հոգացողութիւն, հայաբնակ անկիւններու այցելութիւն, նեղութիւններ եւ դժուարութիւններ խափանելու՝ գոնէ նուազեցնելու՝ ջանքեր, մանուկներ դասախարակելու, վարժարաններ շատցնելու և բարեկարգելու փութաջանութիւն. ահա՛ նոր կեանքիս կերպարանը, նախընթացէն բոլորովին օտար, կարծես բերում ու միտում այլայլած, էութիւն և բնութիւն փոխած մէկն ըլլայի։

Նորութիւն մըն էր հայաբնակ գաւառներու բարօրութեան խնդիրը, և ես ալ հայաբնակ գաւառներէն կարեւորագոյնին մէջ պաշտօնի գլուխ կը դտնուէի. անտարբեր գտնուիլ անհնար էր, և կը խոստովանիմ թէ չգտնուեցայ։ Ասով չեմ իմանար թէ կուսակցութեանց մէջ գտնուեցայ, կամ կուսակցականաց համակիր եղայ, կամ անխորհուրդ ձեռնարկներու մասնակցեցայ, կամ վըտանգաւոր քայլեր քաջալերեցի։ Գործը իրեն օրինաւոր և արդ-

դարացի կողմն ալ ունէր և անկէ դուրս չելայ։ Զրպարտուեցայ, բայց չամբաստանուեցայ. հակողութեան ենթարկուեցայ, բայց չդատապարտուեցայ. առանց պաշտօնական որևէ ձեւի մը ենթարկուելու՝ ապատօրէն իմ տեղս դարձայ և դերս պահեցի։ Ահա՛ բաղմակողմանի կեանքէս նոր դրուագ մըն ալ։

Առաջնորդութիւնը թողլով ուսուցիչ եղայ. նոր կերպարանափոխութիւն սովորական առմամբ դժուարահաւատալի, գործունեայ կերպով դժուար իրականալի, բայց ինծի համար ոչ մէկը և ոչ միւսը. օրինաւոր իշխանութեան կամքը կը պարտադրէր, անհատական բերմունքս ալ համաձայն էր. առաջնորդը լռեց, ժողովրդական տարտղնանքը հեռացաւ, գիրի ու գիրքի, դասերու պատրաստութեան և աւանդութեան շրջան մը բոլորեցի, որ ոչ նախընթացին հետ կապ ունէր, և ոչ հետեւորդին վրայ ազդելու նպատակն ունէր։ Տարբերեալ կերպարաններու թիւ մըն ալ այս էր։

Նոր կերպարան Արմաշի Դպրեվանքին մէջ՝ վանական կեանց պահպանութեամբ, հասարակաց կեանքի կանոնաւորութեամբ, վանահայրական մատակարարութեամբ, տեսչական հակողութեամբ, ուսուցչական աշխատութեամբ, դասագիրքի պատրաստութեամբ, լեռներու մէջ առանձնացեալ, ժխորէ հեռու, վարչական զբաղումներէ ազատ, ներքին կեանք վանքին մէջ, արտաքին կեանք վանքին համար։ Այս կերպարանն ալ վարեցի կատարեալ համակերպութեամբ, ախորժ հաճութեամբ, խղճամիտ ճշդութեամբ և անձնուէր պարապմամբ, իբրև թէ ուրիշ բան եղած չըլլայի. բայց չմոռնամ որ վանական կանոնաւոր կեանքը իմ սկզբնական օրրանս էր եղած։

Վանական առանձնութենէն և գրական զբաղումներէն ետքը դարձեալ ժխորին մատնուեցայ պատրիարքական աթոռին վրայ, ամենէն փոթորկալից և կատարեալ տագնապալից օրերուն մէջ։ Կոտրածներու արիւնը դեռ չպաղած, տառապելոց կսկանը դեռ չդադրած, որբոց և այրեաց վիճակը դառնացած, անօթիներու և մերկերու թախանձանքները բարձրացած, միջոցներու անբաւականութեան հետ խառնուած, բանտերը զրպարտեալներով լեցուած, դատապարտութիւնները անկշռադատ բազմացած, փախստականներուն ընտանիքները լքուած։ Ասոնց հանդէպ վեհապետ մը կիրքով ու կամքով զայրացած, կառավարութեան նշա-

նաբանը հայը զրկելն ու վտանգելն եղած, տիրող տարրը սուր շողացնելու և հրազէն պարպելու անպայման արտօնուած, կուսակցական խումբեր զայրացած և զայրացնելու ջանագիր, պաշտպան տէրութիւններ անկարեկիր հանդիսատեսներ դարձած, եւրոպական քաղաքականութիւնը անգործութեան մատած, եւ այս վիճակին մէջ ես հայ տարրը պաշտպանելու, պահպանելու, խնամելու, դարմանելու և բարւոքելու պատասխանատուութեան ներքև ընկճուած։ Կերպարան մը նոր և նորատեսիլ, անով աւելի դժուարացած՝ որ դիմադրելու միջոցներէ ալ զրկուած կը մնայի, միայն անձնական արթնութիւն, անխոնջ աշխատութիւն, պարագաներու ուսումնասիրութիւն և միջոցներու հայթայթման ճիգերուն վրայ դնելով բոլոր յոյսը։

Երբոր մէկ կողմէն պայքարի ճիգն էր որ կը ծանրանար, պէտք էր ներքին վարչութեամբ ալ զբաղիլ, թաղերու մատակարարութեան հսկել, գաւառաց կազմակերպութիւնը հոգալ, վիճակները առաջնորդներով և վարչութիւններով զօրացնել, վարժարանաց բարեկարգութիւնը քաջալերել, մանկտւոյն առողջ դաստիարակութեան հոգ տանիլ, տնտեսական կացութիւնը ամրացնել, եկեղեցիներու և վարժարաններու անհրաժեշտ նորոգութիւնները լրացնել, եկեղեցական պաշտամանց պայծառութիւնը ուելցնել, քարոզչական պարտաւորութենէ ետև չմնալ, միջանկեալ խնդիրները զանց չընել, Երուսաղէմի կնճիռով յոգնիլ, Էջմիածինի կալուածները պաշտպանել, կարեւոր գրութիւնները անձամբ խմբագրել, և ուրիշ շատ մը այս տեսակ խնդիրներն ու գործերն ալ խնամով հետապնդել, որ տարբեր կերպարան մըն էին վերոյիշեալին յարակից և ընթացակից։

Պատրիարքութենէ ետքը հալածեալի և ամբաստանեալի կերպարանը ակսաւ, և կամայական երկարաձգութեամբ չորս ու կէս տարի շարունակեց. կուսակցական հակառակորդներ զինուեցան, բարեացակամներ գործունեայ դեր ստանձնել չհամարձակեցան, Իզմիրլեան պատրիարք գրգռեց, Դուրեան պատրիարք ներքին իրաձը յայտնելու արիութիւն չունեցաւ։ Իսկ ես պահ մը վերջ տալու քայլեր առի, այլ շուտով համոզուեցայ գործին քմահաճ կամայականութեան, և այլեւս ձեռնթափ եղայ, և իսոր անտարբերութեան մէջ թաղուելով՝ գրաւոր և կարեւոր երկասիրութիւններով ժամանակս արդիւնաւորել ջանացի. Կերպարան մըն ալ այս նախընթացներէն տարբեր։

Վերջընթերը Երուսաղէմի պատուիրակութիւնն է, որ պատերազմի շրջանդներով նպատակին չհասաւ. վերջինը Խապայեանի նոր պաշտօնը և պատրիարքարանի պետական կամքէ բղխած նոր կանոնագիրն է, և այժմեանը Դամասկոսի տարապրութիւնս է։ Երեքն ալ իրարմէ տարբեր և այժմէութեամբը ծանօթ կերպարաններ։

Գործնական կեանքիս փոփոխած կերպարաններուն համաձայն է իմ ալ պարագայից համեմատ կերպարանափոխուիլը, այնպէս որ կարենամ իւրաքանչիւր փոփոխութեան անձնաւորութիւնը ըլլալ, և իւրաքանչիւրին մէջ ա՛յն միայն ըլլալ՝ ինչ որ կացութիւնը կը պահանջէ, և անխառն ու անխարդախ իւրաքանչիւրին նըւիրուիլ։

Սա այս օգտուած եմ թէ հմտական պաշարէն և թէ համաձայնութեան հոգւոյն առաւելութիւններէն. խօսակցութեանց մէջ իսկ իւրաքանչիւրին հետ ըլլալով ինչ որ անոր անձը կը պահանջէ և ինչ որ խօսից նիւթը կը պարտադրէ։ Շատեր ըսած են ինծի համար՝ թէ ինծի հետ ամէն նիւթի վրայ հնար է օգտակարապէս խօսակցիլ. և իրօք ալ խօսից և գործոց կանոն ըրած եմ ինծի՝ իւրաքանչիւր տեսակցութեան կամ խորհրդակցութեան կամ խօսակցութեանց ատեն՝ անոր նիւթով միայն զբաղիլ և անոր չըրջանակէն դուրս չելնել, և այս նպատակը միանալով ամէն նիւթի մասին տեղեկութիւն համբարած ըլլալու ջանքին հետ, դիւրացուցած է այդ դերը, որ շատերու զարմանք պատճառած է, իսկ իմ կարծեօք պարզ ունակութեան արդիւնք է։

ՂԷ

Դամասկոս, 1918 մայիս 4/17 Ուր.

Մինչեւ հիմա աւելի անցեալով զբաղեցայ քան թէ ներկայով, ոչ միայն իմ անձնական չրջանակիս, այլեւ ազգային պարունակին մէջ, եւ բնական է որ ես ալ յորդորուիմ յայտնել, հանդիպողն ալ հետաքրքրուի իմանալ՝ թէ ի՛նչ ըմբռնում և ի՛նչ

տեսութիւն ունիմ հայութեան ներկայ վիճակին վրայ։ Սակայն ներկայն կայուն կացութիւն մը չէ, հետևանքն է մերձաւոր անցեալին, և նախընթացն է մօտակայ ապագային. ուստի այս առընչութիւնները հնար չէ զանց ընել, երբոր կ'ուզուի ներկայն պատկերացնել։ Մերձաւոր անցեալը գիտնալու համար ճշդուած և վաւերացուած տեղեկութիւններ պէտք են, և մօտակայ ապագայն մակաբերելու համար վստահելի և ապահով ծանօթութիւններ պէտք են, ինչպէս համարողական գիտութիւնն ալ ծանօթներու պէտք ունի որ անծանօթը լուծէ։ Իսկ ես աստ և այժմ ոչ մերձաւոր անցեալին համար ճշդուած և վաւերացուած տեղեկութիւններ ունիմ և ոչ մօտակայ ապագայի համար վստահելի ու ապահով ծանօթութիւններ ունիմ։ Եւ այս պատճառով մինչև այս կէտս վարանեցայ և խուսափեցայ հայութեան ներկային վերայ հատուած մը նուիրել. սակայն կը զգամ՝ թէ բոլորովին խոյտալով ալ պիտի չարդարանամ. ես պակաս մը պիտի զգամ, հանդիպողն ալ պակաս մը պիտի փնտռէ, թէ ի՛նչ է վերջապէս այս աւուր մտայնութիւնը, թէ այս ինչ տարի այս ինչ օր ի՛նչ են եղեր տիրող տեսութիւնները և փոյփոյուած ըմբռնումները։ Վերջապէս ես վարանումներս ցրուելով բան մը պիտի գրեմ, ոչ իբրև ստուգութիւն և ոչ իսկ իբրեւ մեծ հաւանականութիւն, այլ լոկ իբրեւ յիշատակութիւն մը, թէ ի՛նչ կը մտածուի կամ ի՛նչ կը բաղձացուի այսօր հայութեան զանազան շրջանակներուն եւ զանազան ազդեցութեանց ենթարկեալ բաժիններուն մէջ։

Հայը արդէն վայրավատին և աշխարհի ամէն կողմերը ցրուած, և տարբեր տպաւորութեանց ներքև տարբեր ըմբռնումներով տոգորուած, այսօր եւսքանզեւս բաժանեալ և տարբերեալ վիճակ մը ունի։ Իւր բաժիններուն գլխաւորները կը գտնուին Կովկաս, Թուրքիոյ ներքնագաւառներ, Ասիական Թուրքիոյ արեւմտեան կողմեր և ամերիկեան գաղութ. իսկ երկրորդական բաժիններ կը սեպուին Եգիպտոս, Պուլկարիա, Գաղղիա և Եւրոպիոյ զանազան երկիրներ։ Պարսկահայը կրնանք նկատել իբր Կովկասի յարակից, և հնդկահայը յատուկ կացութիւն չունեցող։ Այս բաժիններուն մէջ ընդհանուր տիրապետող ըմբռնումը երկունքի դրութիւնն է, իբր այն թէ 1878ին յղացուած և աւելի կամ նուազ սաստկութեամբ եւ աւելի կամ նուազ խոհականութեամբ որոճացուած կայուն բարօրութեան գաղափարին լոյս ա-

թեւ ելնելուն ժամն ու ժամանակը հասած ըլլայ։ Եւ որովհետեւ քարտուղարութիւն, բարեւոքում, զարգացում եւ երջանկութիւն այն գաղափարներն են որոնք որեւէ մտայնութեան համար գրուիչ նկարագիրով կը կերպարանուին, հայ եղողին եւ հայութիւն կազմողին համար ալ այս գաղափարներ անձկալի եւ փարելի երեւոյթ չունենալ չեն կրնար. տարբերութիւնը կը մնայ եռանդի աստիճանին և իրականութեան եղանակին վրայ։

Գլխաւոր բաժիններուն գլխաւորագոյնը անտարակոյս Կովկասն է այսօր։ Կայսերական Ռուսիան այն կողմէն արշաւասոյր յարձակում մը կազմակերպեց Թուրքիոյ դէմ, որուն առաջին գլծին վրայ կը գտնուէին հայկական գաւառները, և իրեն զէնքին յաջողութեանը օժանդակ ըրաւ հայը, իբրեւ զինուորական գործողութեանց գործակից. հաւաքեց և զինեց որչափ արամադրելի հայ գտաւ իրեն շուրջը և իրեն ձեռքին տակ, և անոնցմով կազմեց տաճկահայ փախստականներու և հալածանքէ խուսափողներու և կոտորածներէ զայրացածներու վրիժառու խումբ մը, և կովկասահայ կամաւորներէ կազմուած և իր զինուորագրութեանց շարքերու մէջէն մեկտեղ բերուած հայ զինուորականաց ստուար գունդ մը։ Արշաւանքին առաջին նպատակակէտ ընտրեց Վանայ կուսակալութիւնը իբր աւելի հայաշատ և նուազ պաշտպանուած, և պատերազմական յետ և յառաջներէ ետքը այնտեղ հաստատեց իր ակրապետութիւնը, ներելով որ հայկական կերպարան մըն ալ ունենայ ռուսական էութեան ներքև։ Իսկ իր կանոնաւոր բանակներով իր գրաւումները տարածեց Կարնոյ, Տրապիզոնի և Բաղէշի կուսակալութեանց վրայ, երբեմն յառաջելով, երբեմն ընկրկելով, պատերազմական գործողութեանց բախտին համաձայն, սակայն հետզհետէ հաստատուն ձեւ մը աւելցընելով իր գրաւումներուն։ Բնական էր որ այդ յաջող երեւոյթներ հայուն իղձերը գգուէին, և կանխաւ յղացուած գաղափարին ծնունդը մօտալուտ կարծուէր։

Սակայն շուտով ցնդեցան այդ երազները։ Ռուսիա յեղափոխուեցաւ, կայսրութիւնը կործանեցաւ, ժողովրդական կամքաւ եւս ռամկական իշխանութիւններ իրարու յաջորդեցին, ընդբեկուող Ռուսիոյ մէջ գտնուող զանազան ազգութեանց ինքնօրէնութիւնը հռչակեցին, և միաւորութիւնը քակտեցին, և տասնեակ մը ազատ կառավարութիւններ գոյացուցին։ Կեդրոնական

բաժինին գերման ու ռուս հաշտութեան խոնարհելուն հետևանքն՝ այս դրութիւնը գրեթէ օրինական ձեւ մը առաւ, ռուս բանակներ քաշուեցան ոչ միայն Թուրքիոյ գրաւեալ երկիրներէն, այլեւ 1878ին իբրեւ երաշխաւորութիւն պահուած գաւառներէն. Կովկաս ինքնիրեն ազատ հանրապետութիւն եղաւ, բայց զինուորական պատրաստութիւն և զօրութիւն չունէր, Օսմանցիները անարգել վերադարձան պարպուած երկիրները, հայուն փայլուն երազը խանգարուեցաւ, և ամենայն ինչ անառոյգ կերպարանք առաւ։ Կովկասը, որ իբրև միակ ազգութիւնը կը ներկայանայ, երեք տարբերու համախմբութիւն մըն է. հարաւակողմը հայազգի, միջավայրը վրացի, հիւսիսակողմը բուն կովկասցին, այսինքն լեռնաբնակ զանազան ցեղեր՝ իսլամական կրօնքով միայն իրարու մօտեցած։ Երեք տարրները երեսփոխանութիւն և վարչութիւն ունին այսօր համեմատական բաժանմամբ, մաս մըն ալ ռուսականին տալով, թէպէտ պարզ ազանդաւորներու բազմութիւն մըն է, և սեպհական բնաշխարհ և բնակավայր չունի։ Բայց այս կացութեան մէջ մինչև ո՛ւր է ներքին կապակցութիւնը, ինչո՛վ ունեցած է փոխադարձ շահակցութիւնը, ի՞նչ հիմամբ հաստատուած է գործադրութիւնը, մեկի համար գաղտնիք են տակաւին։ Հայերու շարժումներ կը լսենք, բայց վրացւոյն և կովկասցւոյն համընթացեալ չենք լսեր. կարգ մը լուրեր կը շրջին, բայց ստուգութիւնը չապահովուիր, և հաստատուն ելքի մը կը ուռան չեն ընծայեր։ Կովկասի յարակից կը նկատուի Վանայ նահանգը, որուն հայաձև ռուսական տիրապետութիւնը պահ մը դադրեցաւ, և օսմանեան գրաւումի ենթարկուեցաւ։ Վերանորոգուեցաւ կ'ըսեն, հայաձևը բուն հայկական եղաւ կ'ըսեն, բայց ոչ լսուածը ստուգուած է, և ոչ շարունակութիւնը ապահովուած։ Կովկասի բաժինին գործունէութիւնը բաղձանաց հիմ կրնայ ըլլալ, բայց ակնկալութեանց կուռան ըլլալու համար շատ մը նոր պայմաններու կը կարօտի և առկախ ինքզրոց լաւ լուծումէն կախում ունի։

Անցնինք Թուրքիոյ ներքնագաւառներու բաժինին, որ կը բաղկանայ Կարնոյ, Տրապիզոնի և Բաղէշի կուսակալութիւններէն, որուն կրնար պատկանիլ Վանայ կուսակալութիւնն ալ, սակայն կովկասային գործունէութեան կերպարան ստացաւ, և անոր մէջ յիշատակել յարմարագոյն գտաւեցի։ Ռուսական զէնքերու տր-

գինքը և ռուսական կայսերութեան տիրապետութիւնը խնդութեամբ ողջունուեցաւ այս երկիրներուն մէջ մնացորդ բեկորներէն և շատ ալ բնական էր։ Աւելի փորձանքներու ենթարկուած, աւելի կոտորածներով տարուած, աւելի զրկումներով վշտացած գաւառներն էին, որոնց աչքին ամէն փոփոխութիւն բարեգուշակ էր, մանաւանդ երբ նոր եկողն ալ հրապուրիչ տեսութիւնները չափազանցօրէն կը շռայլէր։ Այս շատ բնական ու արդարացեալ երեւոյթը օսմանեան կառավարութեան աչքին անարդարանալի ու յանցապարտ չարժում երեւցաւ, և անոր իրականանալուն ալ չսպասեց, այլ կանխեց և ընդհանուր տարագրութեան գաղափարը կազմեց և կազմածը գործադրեց։ Քաղաքներու եւ գիւղերու հայաբնակութիւնները հապճեպ շտապով խմբովին ճանապայ հանուեցան՝ անպատրաստ և անպատսպար վիճակի մէջ։ Իրենց բնակավայրէն հեռանալէն ետքը՝ անկոխ լեռներու և ձորերու մէջ մասամբ պատրուակով և մասամբ բռնութեամբ նեղ ժամանակի մէջ միասին առնուած նիւթական միջոցներէն կողոպտուեցան, եկեղեցականներ և գլխաւորներ նախապէս, բոլոր այրեր անոնց ետեւէն՝ կիներէն զատուեցան, և անծանօթ անկիւններու մէջ յայտնի հրացանաձգութեամբ գետին փռուեցան, եւ սպաննուած ու վիրաւոր և կիսակենդան խառն կերպով հողով ծածկուեցան, և կամ գիշակեր թռչնոց կեր թողուեցան։ Հնա՞ր էր միթէ որ այս դժպհի որոշումը և դժնեայ գործադրութիւնը աննկատ անցնէր ռուսական գունդերէն և իրենց հետեւող հայ կամաւորաց ջոկատներէն, և փոխադարձ վրէժխնդրութեան զայրոյթը չգրգռէր, և ո՞վ պիտի ըսուի աւելի մեղապարտը, յառաջընթաց գործունէութեամբ օրինակը տուո՞ղը, թէ հետեւորդ գործունէութեան օրինակին նմանողը։

Ռուսական կառավարութեան փոփոխութեամբը և մասնաւոր հաշտութեան հետեւանքովը այս կուսակալութիւններ եւ անոնց յարակից գաւառները ռուսական բանակներէ պարպուեցան, կովկասեան նոր տէրութիւնը հաշտութիւնը մերժեց, եւ յերաշխի գաւառները ետ տալը հերքեց, բայց իւր որոշումը երկընցնելուն համար պատրաստ զօրութիւնը դեռ չունէր, և եռատարը ժողովուրդներու ներքին կազմակերպութիւնը և շահակից գործունէութիւնը դեռ կարգադրած չէր։ Օսմանցին պարապ թողուած երկիրները մտաւ, և տեղացի Հայերու վրայ բռնանալ

սկսաւ, որուն հայ կամաւորներու ջոկատները դարձեալ փոխադարձել ձեռնարկեցին, և աւելին ալ ընել սպառնացին, եթէ տաճկահայ բնակիչներուն վրայ տէրութեան ձեռքը ծանրանար։ Այսպէս պատմուեցաւ, թէպէտ վաւերականութիւնը չգիտցուեցաւ, բայց օսմանեան կառավարութեան ձեռքը կարծես թէ պահ մը թեթևցաւ, և հրապարակագրութիւնը Կովկասի հայը Թուրքիոյ հայերէն զատել սկսաւ, և վերջինը առաջինի գործերուն անպատասխանատու ճանչնալ յայտարարեց, ինչ որ բան մը անցած դարձած ըլլալու նշանակ կրնայ ընդունուիլ։ Թէպէտ այս բաժինին մէջ գործուածներն ալ մեզի ակնկալութեանց ապահով կըռուան մը չեն ներկայեր։

Ասիական Թուրքիոյ արևմտեան նահանգներուն բաժինը հայուն կողմէն ոչ մի շարժում, ոչ մի խլրտում, ոչ մի գործունէութիւն չներկայեց. բայց այս բաւական չեղաւ որ հանդարտ մնալով հանդարտութիւն վայելեր։ Պետական հարուածը անոնց վրայ ալ տարածուեցաւ, և տարագրութեանց որոշումը, կողոպտելու եղանակը, կոտորելու հրամանը անողոք կերպով գործադրուեցաւ, Սեբաստիոյ եւ Տիարպէքիրի կուսակալութիւններէն մինչև Անդրիանուպոլսոյ կուսակալութիւնը տարածուեցաւ ներքնադաւառներէն սկսուած դժպհի հրամանը եւ դժնեայ գործադրութիւնը։ Երբ գործ կամ փորձ պակսեցաւ՝ իբրև արդարացում՝ կասկածն ու կեղծիքը, զրպարտութիւնն ու քսութիւնը, նենգութիւնն ու խաբէութիւնը իբր փաստ գործածուեցան ամբողջ հայութիւնը ամբաստանելու, անդատաստան դատապարտելու, և առանց օրէնքի գործադրելու։ Բոլոր Թուրքիոյ ընդարձակութեան մէջ չմնաց քաղաք մը, չմնաց աւան մը, գիւղ մը որուն հայաբնակութիւնը իւր տեղը մնացած ըլլար։ Հեռաւոր վայրեր վտարուեցան, անապատներու մէջ ցրուեցան, անպատապար թողուեցան, այրեր կիներէ զատուելով՝ անխնայ սպաննուեցան, եկեղեցականներ և գլխաւորներ առաւելագոյն խստութեան ենթարկուեցան։ Տարագրութեանց ճանպան դիակներով սերմանուեցաւ, նիւթական միջոցները կողոպտուեցան, օրապահիկի հայթայթումը զլացուեցաւ, գացած տեղերնին ժողովրդեան շահադիտութեան ենթարկուեցան, վարակիչ ախտերու յաճախութիւնը ընդարձակուեցաւ, անօթութենէ նքթեալներու նուազումը ընդհանրացաւ. ո՛չ թէ տասանորդեցին, ո՛չ թէ կիսեցին, այլ

բնաջինջ ընել ջանացին տարագրեալ խումբերը, օրինաց պաշտպանութենէն և իրենց իրաւանց վայելումէն զրկեալ եղկելիները։ Նիւթականին հետ բարոյական հալածանքն ալ սաստկացաւ. եկեղեցիները փակուեցան, սրբութիւնները պղծուեցան, պաշտամունք արգիլուեցան, կրօնափոխութիւնը բռնադատուեցաւ, չհաւանողները պատժապարտուեցան, հայաջինջ քաղաքականութիւնը յետին նրբութեան հասաւ, գիւտերը աճեցուց, միտքերը սրեց, ձեռքերը ժրեց, հայութեան գերեզմաններ բրեց։ Թուրքիոյ հայաբնակութիւնը երկու միլիոնի մօտ կը հաշուուէր, միլիոն ու կէսի երկբայութիւն չկար, այսօր մէկ միլիոնը գումարելու և գոյութիւնը ապացուցանելու փաստ կը պակսի։

Կ. Պոլիս մայրաքաղաքէն տեղացիներուն խմբովին տարագրութիւնը խնայուեցաւ, բայց երեսուն հազարէ աւելի գաւառացիներ դուրս հանուեցան ու տեղերնին չհասան։ Իբրև կուսակցական չարժմանց պետեր կամ գործակիցներ կամ համամիտներ կամ համակիրներ նկատուեցան ամէն անոնք որ խօսիլ ու գրել գիտէին կամ գիտցող կ'ենթադրուէին, և աքսորուեցան, ցրուեցան, հալածուեցան, անհետացան, փոքր մաս մը ժխորին մէջ չկորսուելու համար խոյս տալով հեռացաւ։ Զմիւռնիա կասկածաւոր կարծուածներ չունենալով՝ ազատեցաւ կուսակալի եւ առաջնորդի համաձայնութեամբ։ Բերիա, Դամասկոս, Վերլտոն և Երուսաղէմ միայն, իբրև հայկական չարժումներէ անմասն տեղեր և արտաքին գաւառներու մէջ անհնչանակ կէտեր՝ խնայուեցան, բնիկները մնացին, բայց տարագիրներ կացութիւնը խճողեցին. անոնք ալ հալածանաց հետևանքներէն անմասն չմնացին։

Տաճկահայը դեռ բնաջինջ եղած չէ, և եթէ երեքէն մէկն ալ մնացած ըսենք, իւր կարևորութիւնը կորուսած չէ. հայը ակնկալութեամբ կ'օրօրուի, թուրքը կասկածով կը հալածէ, և որովհետև գործածուած անլուր բռնութիւնները օտարներն իսկ խօսելու գրգռեցին, այսօր բռնութեանց ձևը փոխուած է, բայց հալածանքին էութիւնը կը պահպանուի։ Տարագրեալներ իբր անիրաւ աքսորական եւ իբր օրէնքի չրջանակէ դուրս թողուածներ՝ զինուորագրութենէ զերծ թողուած էին, այսօր անոնք ալ զինուորութեան կը կոչուին, զինուորական աշխատութեանց ծառայելու, որ աւելի տաժանակիր աշխատութեանց դատապարտութեան պայմանը կ'արդարացնէ քան թէ կանոնաւոր և օրինական զի-

նուորութեան կը նմանի։ Փողոցներէ որսալով, տուներ կոխելով, դուռներ կոտրելով զինուոր կը հաւաքեն, հեռաւոր կողմեր տարապարհակ աշխատութեան կը զրկեն, ուտեստնուն պահեստը կը զլանան, և անօթութենէ և հիւանդութիւններէ կը մահանան։ Անդին ալ անոնց կիներն ու զաւակները ու ազգակիցները պաշտպանէ ու պահապանէ զրկուելով՝ իրենց կարգին անոնք ալ կ'անհետանան, տասնեակներով հանապազօր գերեզմաններց կը յուղարկուին և հողին ներքև կը ծածկուին։ Ներքին փոխառութիւն մը կը բացուի, և հայը կը պարտադրուի որ իւր ունեցածը կառավարութեան յանձնէ, իսկ ուրիշ ազգերու ո՛չ խօսքը կ'ըլլայ և ո՛չ յորդոր կը կարդացուի, զի հայուն ձեռքէն իւր դրամն ալ կորզել կ'աշխատուի։ Իսկ անոր պոնէ հոգևոր մխիթարութիւնը վերադարձնելու, բեկորները իրենց կրօնքով մխիթարելու խօսքն իսկ չըլլար. դրամին տալով հաւատարմութիւն վկայելնուն խօսքն է որ կը կրկնուի։

Հայաբնակութեան արմատին տապարն ալ դրուեցաւ. Կ. Պոլսոյ պատրիարքութիւնը ջնջուեցաւ, պատրիարքը աքսորուեցաւ, Երուսաղէմի պատրիարքութիւնն ալ վերցուեցաւ, Սսոյ և Աղթամարայ կաթողիկոսութիւններ ձուլուեցան, Մայր Աթոռի առաքելական իշխանութիւնը քաղաքական իշխանութեամբ անգոյ հռչակուեցաւ, և բոլորէն զումարուած նոր իշխանութիւն մը ստեղծուեցաւ, և լուռ բերանի, անխօս շրթունքի, անգործ ձեռքի, անշարժ սիրտի մը յանձնուեցաւ, որ անունը զրուցուի, իսկ գործը խափանուի, երևոյթը արդարանայ և իրականութիւնը չքանայ։

Օսմանեան ազդեցութեան ներքև գտնուող հայուն կացութիւնը պարզեցի. խաւարային է ներկայն, մթին է առաջիկայն, բայց ապագային չանցած միւս բաժիններն ալ ներկայեմ։

Աբդուլահմանի գաղութներուն գլխաւորը այսօր Ամերիկեանն է, վերջէն սկսուած բայց շուտով աճած՝ նոր աշխարհին ընծայած չահի դիւրութիւններով և գործի ընդարձակութիւններով։ Գաղութը կազմուած է ընդհանրապէս հալածանքէ և նեղութենէ և կարօտութենէ խոյս տուողներու բազմութեամբ, որոնց սիրտին մէջ չէ մարած անցեալին կրակը, որ կը բորբոքէ վրիժառութեան բոցերը։ Ուստի բոլոր մտադրութիւններն կը դառնայ իրենց թողած, բայց շարունակ կարօտցած, հայկական

գաւառներուն շուրջը։ Անկէ եկող կամաւորներ բաւական կան, անկէ ընձեռնուած օժանդակութեանց չափը պզտիկ չէ, այնտեղ հրատարակուած գրգութեան ստատկութիւնը մեծ է։ Ազատ երկրի մէջ ազատ կը խօսին, գիրար կը հրաւիրեն և հայկական գետինին վրայ աշխատողները կը քաջալերեն։

Եգիպտոսի գաղութը հին է, նոր դիմողներով աճած է. ասոնք ալ իրենց կարգին ամերիկահային նման աշխատողներ են, սա առաւելութեամբ որ Եւրոպիոյ մօտ ըլլալով և ջոջ անձնաւորութիւններ ունենալով, եւրոպական չափմամբ գործը առաջնորդելու դիւրութիւն կ'ունենան, մինչ ամերիկահայը ամբողջ հասարակ դասակարգով կ'ամփոփուի։ Եգիպտոսէ բղխեցաւ Բարեգործական հաստատութիւնը՝ հայը կրթութեամբ եւ ունևորութեամբ զարգացնելու նպատակով, որևէ քաղաքական շարժումէ անկախաբար, սակայն օսմանեան կառավարութիւնը հայուն կրթուիլն ու հարստանալն ալ չսիրեց, և ոչ-քաղաքական նպատակ մը քաղաքականի ուրակից, և այս միտքով հետապնդեց ու հալածեց։

Ուրիշ կողմեր գտնուող գաղութներէն ռումանահայը շուտով ազգային կգացումները կորուսած է, պուլկարահայը իւր տէրութեան օսմանցիին հետ բարեկամութեան և դաշնակցութեանը պատճառով լռել ստիպուած է, անդրիահայի ուշնուրուշը առևտուրի բոլոր սրտով նուիրուած է, գաղղիահայն է որ Բարիզի մէջ, թէպէտ քիչուոր, բայց կեղրոնական դիրք մը առած է, և ուղղակի եւրոպական տէրութեանց և ազդեցութեանց մօտ գործելու, լուսաբանելու, յորդորելու, շարժելու դերերը կը վարէ, իբրև բոլոր արտասահմանին ներկայացուցիչ և դիւանագիտական ջանքերու վարիչ։

Ներկայն ստուերագծեցի համառօտ ակնարկներով, սակայն արդէն ըսի որ ներկայն ոգևորողը ապագայն է, և եթէ հայուն զգացումն ալ փնտռենք, իր այսչափ տառապանքներուն մէջ, ապագային ակնկալութիւնը պիտի գտնենք իբրև զինքը ոգևորող կենսական զօրութիւն։ Ներկայ տառապանքը կը սիրէ նկատել իբրև երկանց ցաւեր, որոց վերջը խնդութիւն պիտի յաջորդէ, և պիտի ուրախանայ թէ՝ ծնաւ մարդ յաշխարհ, հայ աշխարհը լոյս տեսաւ։ Այս տեսակէտն ալ ուրեմն զննենք, ոչ թէ լոկ զգացմանց և ըղձից շրջանակին մէջ փակուելով, այլ քաղաքագիտական

պարունակէն և դիւանագիտական եզանակէն ալ քննելով, որչափ մեր միտքը կը գօրէ, անցեալը կը թելադրէ և ներկայն կը տըրամադրէ։

Ամենուն բերանն է թէ հայուն բարօրութեան ժամանակը հասած է, և թէ այս պատերազմին ընթացքին մէջ չարունակ կրկնուած փոքր ազգութեանց ազատագրութեանց ծրագիրէն օգտուողներէն առաջիններէն մէկը հայն է անշուշտ։

Այս կարծիքին իբր հաստատութեան փաստ, կը խօսուի թէ հայը շատ կրեց, և այսչափ կրածը պարապի չի կրնար երթալ։ Պատճառաբանութիւն մը՝ որ իմ տեսութեամբ ոչ քաղաքականութեան կը յարմարի և ոչ դիւանագիտութեան կ'օգնէ։ Քաղաքագիտութիւնն ալ, դիւանագիտութիւնն ալ ո՛չ սիրտ ունին և ո՛չ խիղճ. գութ անոնց բառարանին մէջ չկայ. իրաւունք ըսածնին ալ շահն ու օգուտն է. քաղաքագիտութեան և դիւանագիտութեան ձեռնածուներ՝ եւրոպական մեծ տէրութիւններ. և ներկայ առիթին մէջ Անգղիա և Գերմանիա ոչ կապ մը ունին Հայաստանի կողմերը, և ո՛չ շահ մը կը յուսան անոր կացութենէն։ Ռուսիա կրնար շահ մը ունենալ, բայց այն ալ քայքայուելու, և եթէ չքայքայուէր, միայն իրեն աւարաբաժինը ընդարձակել կը խորհէր, և ոչ թէ ուրիշը երջանկացնել։ Զեմ ուրանար թէ կովկասահայը բաւական լաւ կեանք մը ունէր ռուսական կառավարութեան ներքև, սակայն այն կանոնաւոր և զարգացման հետամուտ տէրութեան մը ընթացքին հետեւանքն էր, անկախաբար այս կամ այն տարրին օգտակար ըլլալու դիտումէն։ Ուստի հայուն շատ կրած ըլլալը, շատ օգտուելուն հաստատուն փաստ մը չէ իմ տեսութեամբ։

Ռուսիոյ քայքայուելուն վրայ Կովկասեան Հանրապետութիւն մը կազմուեցաւ անոր բեկորներէն, որուն մէջ հայը կովկասցի և վրացի տարրներուն հետ երրորդ մըն է, և թէպէտ թիւով երկուքէն ալ նուազ ըլլայ, սակայն դիրքով ու դերով, արժէքով ու վարժութեամբ երկուքն ալ կը գերազանցէ, և Կովկասեան Հանրապետութեան մէջ գերակշիռ տեղ մը կրնայ գրաւել։ Սակայն հետեւանքը հայկական չըլլար՝ եթէ երեքէն կազմուած միապաղաղ տէրութիւն մը պիտի ըլլայ հաստատուածը. հայ անհատներ կրնան բախտաւորուիլ, բայց ազգութիւնը իբր հանրութիւն շահած չըլլար։ Թող որ եթէ Կովկասահայով միայն Արարա-

տի ու Արցախի ու Փայտակարանի նահանգները պիտի իմանանք, տասնուհինգ նահանգներուն մնացորդները բան մը վատակած չեն ըլլար, նոյնիսկ եթէ այն երեք նահանգները Կովկասեան Հանրապետութեան մէջ ինքնօրէն կացութիւն և ինքնավար տէրութիւն ալ կազմած ըլլան։ Ուրեմն այդ ենթադրութիւնն ալ ժըպտուն երես մը չի ներկայեր։

Կ'ըսուի ևս թէ յաղթութիւնը աներկբայաբար համաձայնական խումբին պիտի ըլլայ՝ տոկունութեան պատճառով, անկախաբար ուրիշ որևէ առաւելութենէ, վասնզի ամբողջաբար ինքզինքը սպառելու պարտաւոր չէ Գերմանիոյ պէս, այլ ամէն կողմերէ մարդ և մթերք և պարէն կրնայ ճարել ազատօրէն և ճարելու համար դրամական անսպառ կարողութիւն ունի։ Իսկ համաձայնականներուն ծրագիրին էական մի մասը օսմանցին կըրճատել ու ամփոփել է, և առաջին կրճատուելիք մասը արևելակողմէն հայկական գաւառները կը կազմեն։ Ուստի եթէ ոչ երբեմն միութիւն կազմած վեց կուսակալութիւններ (Վիլայաթը Սիթթէ) համանգամայն, գոնէ կարևորագոյնները օսմանցիէն պիտի առնուին, և իրենք իրենց ինքնավար կառավարութիւն մը պիտի կազմեն։ Գաղափար մըն է որ հայկական միտքերուն մէջ կրնայ տեղի ունենալ, այլ խնդիր է թէ եւրոպական տէրութեանց մէջ ալ տեղի ունի՞ արդեօք։ Գիտեմ որ եւրոպական տէրութեանց բերանը այդ խօսքը կայ և հրապարակագիրներուն գրիչին ներքև տյապիսի տողեր կ'երևան, այլ՝ Ըսուածին և եղածին միջև մեծ հեռաւորութիւն կայ, կ'ըսէ առածը (Dal delto al fatto de'un gren tratto)։

Կը մնայ որոնել և որոշել թէ ո՛վ պիտի ըլլայ հայուն բարօրութիւն պատրաստողն ու գործադրողն։ Հասարակաց ըմբռնումը իւր հաւատքը հաստատած է եւրոպական տէրութեանց վրայ, որոնք Պերլինի դաշնագիրը ստորագրեցին, և գլխաւորապէս երեքին վրայ, Անգլիա և Գաղղիա և Ռուսիա, որոնք անգամ մըն ալ գործադրել տալու համար մէջտեղ ելան, և վեց կուսակալութեանց դրութիւնն ու բարեկարգութիւնը կազմակերպեցին։ Արդ Պերլինի դաշնագիրէն քառասուն տարիներ անցած են, և դաշնագիրին 61րդ յօդուածը մեռեալ տառ մնացած է բովանդակ այս երկարամեայ միջոցին մէջ, մինչ ինչ որ ուրիշ յօդուածներով որոշուած է, անմիջապէս գործադրուեցան։ Մինչ այսչափը չի բաւեր հետևցնելու թէ ընելու միտք չունին։ Գիտեմ ևս որ ա-

նոնք Եւրոպիոյ մէջ գործող կուսակցականները գրգռեցին իրենց առիթ մը պատրաստել, և երբոր անոնք միտմտաբար խորհուրդին հետևեցան՝ հայուն վրայ կոտորածներ հասան, և եւրոպական տէրութիւններ անկարելի հանգիստներ եղան։ Ո՞վ մեզ կը վստահացնէ թէ այս անգամ թելադրուած գրգռութիւնները և խոստացուած պաշտպանութիւնները առաջիններէն տարբեր են. ո՞չ ապաքէն մէկ նշանակէ այլ շատ բաներ կրնան հետևիլ (Ab uno disce omnes)։ Մինչև որ յայտնապէս չցուցուի կամ չտեսնուի որ եւրոպական տէրութիւններ Հայաստան մը կազմելու կամ Հայաստան մը բարեւոքելու մէջ իրենց օգուտ մը ունին, ո՛չ խօսքերնուն հնար է հաւատալ, և ո՛չ խոստումներնուն վստահիլ։ Ահա՛ իմ փորձառական հաւատքի առաջին կէտը։

Եւրոպա ըսի ընդհանրապէս, բայց հարկ է մասնաւորել և ամփոփել Անգլիոյ և Գաղղիոյ վրայ. Աւստրիա և Գերմանիա՝ իբրև Թուրքիոյ դաշնակիցներ՝ այդ կէտին վրայ չեն մտածեր իսկ. Իտալիա սկիզբէն անտարբեր մնացած է ասիական խնդիրներու մէջ. Ռուսիա արդէն քայքայուած՝ կամովին հրաժարեցաւ նոյնիսկ իրեն հպատակ ազգերու շահերէն, և իրաւունքները իր կամքին ու բախտին թողուց, հետևաբար այն ալ հին հաշիւէն դուրս եկաւ և մեկուսացաւ։

Ամերիկա իրեն նուիրագործած սկզբունքէն վերջերս հեռացաւ, Նոր Աշխարհին Հին Աշխարհին մէջ գործ չունենալուն մօնրոյեան սկզբունքը թողուց, և համեւրոպական պատերազմը իւր միջամտութեամբ համաշխարհականի վերածեց. կրնա՞յ արդեօք յուսացուիլ որ հայուն համար ալ աշխատի։ Ամերիկահայ գաղթականութիւնը այդ յոյսը կը տածէ և ամերիկեան կառավարութեան մօտ դիմումներ կը կազմակերպէ, սակայն Ամերիկա շա՞տ հեռու է հայկական նահանգներէն։ Համակրութիւն կրնայ ունենալ, գուցէ և միջնորդութիւն մը ընել, բայց գործի ձեռնարկելը շատ հաւանական չէ. արդէն Ամերիկա ալ անգլիական ընկերզրուններով տոգորուած կառավարութիւն մըն է։

Հայը ինքնիրեն կրնա՞յ արդեօք իւր նպատակին մէջ գլուխ ելնել։ Այսօր Դաշնակցական շարժումը իւր իսկութեան մէջ դադրած կրնայ համարուիլ իւր բուն պետերուն անհետանալովը, և այժմ գործի վրայ եղողներ, եթէ Դաշնակցական պետ ալ ըլլան, տարբեր ուղղութեան ծառայող են, կանոնաւոր վինուորականու-

թիւն, զէնքը ձեռքին ճակատամարտ մղող և ռազմագիտական սկզբունքներով գործող։ Սակայն ի՞նչ կրնայ ըլլալ այդ զինուորական ոյժը, և ի՞նչչափ կրնայ տոկալ կազմակերպեալ տէրութեան մը ճիգերուն դէմ։ Կ'ըսուի թէ նախապէս հայթայթուած ռուսական զէնքերուն և ռազմամթերքներուն տեղ՝ անգղիական տուուչութիւններ փոխանակեցին, սակայն ի՛նչ և ի՛նչչափ ալ ըլլայ անգղիական առատաձեռնութիւնը, չափաւոր բան մը կըրնայ ըլլալ, այնչափ որչափ Անգղիա իւր դիտումը յառաջ վարելու համար որևէ օժանդակ ոյժ մը պահել կը մտադրէ. բայց այն օրէն որ իւր նպատակին հասնի՝ հայն ալ կը մոռնայ, Հայաստանն ալ, և հայը ինքնիրեն մնացած իւր տկար և չափաւոր կազմովը չի կրնար մեծագոյն ոյժին դիմադրել, և իւր ակնկալութիւնները կը ցնդին, և հայը հայով կազմակերպելու գաղափարը վաղանցուկ երազ կը դառնայ։

Հնա՞ր է արդեօք Կովկասեան Հանրապետութեան ձեռնտուութենէն բան մը յուսալ։ Եթէ Կովկաս իւր այժմեան դիրքով ու չափով երեք տարրներէ միապաղաղ տէրութիւն մը պիտի ըլլայ՝ հաւանական չէ, կարծեմ, որ ոչ իրմէ բաժին մը պակսուելուն հաճի, և ոչ իրեն նոր մասեր յատկացնելու յանդգնի։ Իսկ եթէ երեք տարրներ կատարելապէս զատուելով երեք անկախ կառավարութիւններ կազմեն, հայը ինքնիրեն մնացած, հայը հայով կազմելու ենթադրութեան դարձած կ'ըլլանք, որուն վրայ արդէն կարծիք յայտնեցի։

Կարծողներ կան որ հայուն ապագայ բարօրութեան մէկ հաւանական գործիչը օսմանցին կամ տաճիկը կրնայ ըլլալ, և թէ հայուն առջև միակ բաց ճանապան տաճիկին փարիլ ու տաճիկէն յուսալն է։ Արդ եթէ տաճիկը իւր այսօրուան քաղաքական մըտայնութեամբ պիտի մնայ, այդ ենթադրութեան հաւանականութիւնը կը քիչնայ. այժմեան քաղաքականութիւնը Թուրքիա ըսուած տէրութիւնը ամբողջապէս թրքացնելն է, հայն ու քրիստոնեայն բնաջինջ ընել կամ աննշանակ գոյութեան վերածել, որ խօսքի նիւթ իսկ չկարենայ ըլլալ։ Միւս կողմէն ոչ-թուրք իսլամները, քիւրտն ու լազը, չէրքէզն ու եիւրիւքը, արաբն ու պէտէվին հոգւով ու սիրտով, լեզուով ու կենցաղով թրքացնել, որպէսզի Թուրքիա միատարր ու միապաղաղ երկիր մը ու տէրութիւն մը դառնայ նման Գերմանիոյ, որ գերմանա-

ցիէն զատ տարբ մը չի պարունակեր։ Արդ այս դրութեան մէջ հայուն բարեյոյս ըլլալուն ո՛չ նշոյլ կը մնայ և ո՛չ կռուան։ Իսկ եթէ Թուրքիա սթափուի, և փոխանակ Գերմանիան ընդօրինակելու՝ իրեն աւելի մօտիկ Աւստրիան ընդօրինակէ, այն ատեն կրնայ Փոքր Ասիան Թուրք պահելով՝ հայը, քիւրտը, ասորին և արաբը ինքնավարութեամբ օժտել, և պետական միութիւնը իւր մականին ներքև պահել, և հաւանաբար իւր երկրին զարգացնալուն և իւր տէրութեան զօրանալուն ալ նպաստած ըլլալ։ Բայց ենթադրելի՞ է արդեօք այդ լուծումը։ Որովհետև տաճկին վրայ կը խօսինք՝ իդէպ է տաճկական առած մը յիշել։ Տաճկին մէկուն ըսեր են՝ թէ հոգեհան հրեշտակը էզրայէլ տուներուն տղայ կը բաժնէ. մարդը պատասխաներ է, եթէ մերինը չառնէ՞ տալիքէն չնորհակալ ենք։ Հայեր երբեմն օսմանեան կառավարութեան հետ սիրով և խաղաղութեամբ ապրեցան, բայց այն ատեն հայը կը նկատուէր իբրև կարևոր մի տարր երկրին վաճառականութեան և արհեստագործութեան համար. յայնախոհ կերպով անձեռնմխելի թողած էր անոր կրօնքը, լեզուն, զարգացումը, և ազգային կեանքին միջամուխ չէր ըլլար։ Հնար պիտի ըլլա՞յ այդ սկզբունքին և այդ ընթացքին վերադառնալ։

Հայուն համար տաճկական ձեռնտուութեան գաղափարը տարածելու համար յատուկ բերան եղաւ Տաճար երբեմնի կրօնաթերթը, որուն կառավարութիւնը յատուկ խմբագրութիւնն ալ կազմեց, ծախքն ալ հոգաց, ուղին ալ պատրաստեց, սակայն այն աղ այնչափ յառաջ տարաւ իւր պաշտպանած կէտը, որ փոխանակ հայը հրապուրելու և գգուելու, անոր աւելի սիրելի և աւելի սիրտին մօտ կէտերը սկսաւ անարգել, մինչև իսկ անոր առաքելական նուիրապետութիւնը և անոր կրօնքին հիմնակէտը խախտելու ձեռնարկեց, այնպէս որ եթէ այս պիտի ըլլայ տաճկական ձեռնտուութիւնը, անկէ խորշեցնելու քան թէ հրապուրելու ծառայած պիտի ըլլայ անոր փաստաբանը։

Իմ յօդուածս կատարեալ յոռետեսութիւն մը եղաւ, և ամէն ենթադրութիւնները դժուարութեան ենթարկելով, հայուն ապագային բաց ճանապայ մը չթողած եղայ, սակայն ես եղելութիւնները յառաջ բերի, անցեալէն ապագայն չափել թելադրեցի, և փորձառութեամբ գործնականը լուսաբանել ջանացի։ Իմ սիրտս ու միտքս ալ կ'ըմբոստանայ յուսաբեկ գաղափարներու դէմ, որ

կեանքերը կը թուլցնէ և ջիղերը կ'ընդարմացնէ։ Եթէ երբեք տեսութիւններս հրապարակ ելլան, և գործն ալ տակաւին վերջնական ձև ստացած չըլլայ, կը փափաքէի որ գրածներս իրը խթան ծառայէին, զի դժուարութիւնները ցուցուցած ատենս ինչով յաջողիլ կրնալն ալ յիշեցի. գործիչներ կրնան այդ տեսութիւններէն օգտուիլ, և գործը յաջող ելքին առաջնորդել։ Միւս կողմէն գիտեմ որ աշխարհի մէջ անհնար բան չկայ, ուստի անհաւատալի չէ որ յանկարծական մտայնութեան մը և սիրտի բուռն շարժումի ներքև և համակրութեան արտակարգ ցոլացումի ազդեցութեամբ այնպիսի լուծում մը տրուի՝ որ առաջին տեսութեամբ դժուարին կամ անհնարին պիտի երևար։ Այսպիսի մի վերջաւորութեան համար համաձայնական միութեան յաղթանակը և անոր հակատաճկական միտքը իրև իրենց դիւրին լուծում՝ կըրնան գտնել հայկական գաւառներու ինքնօրէնութեամբ անջատմամբը, և այս ձևն է որ աւելի կը յեղյեղուի այսօր հայասէրներու բերանը, և հայուն համակիր տէրութեանց ծրագիրին մէջ։

Պատերազմներուն վերջաւորութիւնը, հաշտութեան սեղանին շուրջը պատգամաւորներուն համախմբութիւնը մօտ օրերու մէջ հաւանական չերևար, բայց մօտ կամ հեռու՝ օր մը չէ օր մը իրականութիւն պիտի ըլլայ. յոյսով և ակնկալութեամբ սպասենք այն օրուան. զի ո՛վ որ կ'ապրի՝ ելքը կը տեսնայ (Qui vivra verra)։ Այսօր աւելի բան մը ըսել դիւրին չէ, բայց այսօրուան գրածս ալ իրև վերջնական ու վճռական չեմ ներկայեր, անստուգութեան ժամանակ ստուգութիւն չի փնտռուիր. գուցէ պարագաներ փոխուին, նոր շրջաններ երևան գան, վաւերական կամ գոնէ վստահելի լուրեր հասնին, և մտայնութիւններ փոխուին, կամ տեսութիւններ ալ փոփոխուին, և այն ատեն պիտի չքաշուիմ նոր կացութիւնը լուսաբանել, և աւելի յուսադրութեամբ խօսիլ քան ինչ որ այսօր չկրցայ ընել։

ՂԸ

Դամասկոս, 1918 մայիս 6/19 Կիր.

Հոհֆ ու Հոսֆիս ընթացքը կենսագրական ուղղութիւն մը առաւ սկիզբէն մինչև վերջը, զի նաև ընդհանուր տեսութիւնները և վերացական հայեցուածքներ կենսագրական բնոյթ ունին, քանի որ մտայնութիւնս կը պատկերացնեն, և հետազօտութեամբ կամ փորձառութեամբ ստացուած մտաւորական կեանքս կը լուսաբանեն։ Բայց կենսագրական յիշատակներ, Հոհֆեր ու Հոսֆեր, մտածումներ կամ գործողութիւններ, հմտութիւններ կամ համոզումներ, և ուրիշ ինչ ալ ըլլայ որ իմ անհատականութեանս հետ կապ ունի, պարզապէս հանգամանքներ և պատմական պարագաներ են, իսկական էութիւններ չեն. կեանքիս փոփոխութեանց պատմութիւնն են, կեանքի իսկութեան բացատրութիւն չեն։ Արդ էականը կը կանխէ պատահականը, և հանգամանքներ հաստատուն եսին շուրջը կը դառնան, առանց այս հաստատուն եսի գոյութիւն ալ չէին կրնար ունենալ։ Պէտք չէ՞ր արդեօք որ նախապէս էականը և իսկականը և հաստատականը բացատրէի, պատահականին և անցողականին և փոփոխականին վրայ չխօսած։ Սակայն գիտական ուղղութեամբ գրուած մը պատրաստել չէր նպատակս, ինչպէս ամէն կենսագիրին ալ հասարակ է. այսու հանդերձ իբրեւ կենսագրականին լրումն՝ ընդհանուր և վերացական և գիտական տեսութեամբ կեանքի էութեան և իսկութեան վրայ յօդուած մը գրութեանս լրացուցիչ մասը կը նկատեմ, և եթէ ոչ առաջ՝ գոնէ վերջը այդ նիւթն ալ շօշափելու կը մտնեմ։

Մարդիկ կեանքը զգայական գաղափարին վրայ հիմնած են ընդհանրապէս, և կեանքով կ'իմանան այն միջոցը որ օրօրոցին և գերեզմանին մէջտեղը կը պարունակուի։ Օրօրոցէն առաջուանը չեն փնտռեր, գերեզմանէն ետքինը չեն խորհիր, և կեանք կ'ըսեն ցորչափ լոյս արեւ կը վայելեն, և ցորչափ կենսական ոյժերը կը գործեն։ Այս է կեանքը իւր բնական կամ լաւ ևս բը-

նութենական առման մէջ, որ հասարակ է և անքանին, և կերպով մը նաև բուսականին, որ բուսնելէն մինչև ցամքիլը գործարանական գոյութիւն մը կը ներկայէ։ Պիտի բաւականանա՞նք այս կերպով ըմբռնել մարդուն կեանքն ալ, նոյնիսկ օրօրոցի և գերեզմանի միջև պարունակուած միջոցին վրայ ամփոփուելով։

Հասարակաց ըմբռնումը, ընկերային ուսումը, փորձառական գործունէութիւնը, գլխաւոր հետազօտութիւնը բնակոնով չեն լրացներ մարդուն գոյութիւնը և գոյութեան տեւողութիւնը, կամ սովորական բացատրութեամբ՝ մարդուն կեանքը։ Երկու ուրիշ մասեր ալ կը յարակցին մարդկային կեանքի գաղափարը լրացնելու, և բնական կեանքին հետ բանական կեանք մը և բարոյական կեանք մըն ալ կը միացուի. ծանօթ բառեր որոնց բացատրութեան պէտք չի զգացուիր։ Այսպէս մարդկային կեանքին լրումը եռամասնեայ բաժիններով կ'ամբողջանայ, և մեզի իրաւունք կուտայ եզրակացնելու, որ մարդկային կեանքով ապրող չի կրնար ըսուիլ նա որ բնականով միայն կը չատանայ, և բանականը ու բարոյականը կ'անտեսէ։

Բայց չըլլայ թէ այնպէս կարծուի որ բանական ու բարոյական կեանքերը իրենց զարգացման, լրման և ամբողջական կատարելութեան մէջ կ'իմանամ կամ կ'իմացուի. անոնց ամենաթեթև վիճակն ալ և ամենանօսր երեւոյթն ալ բաւական է գոյութիւնը ապացուցանելու և կեանքը մարդկային ընելու։ Անուշ չինականին, և մինչև իսկ անտառային վայրենիին վրայ բանական կեանքը կը ճշմարտուի՝ երբ սուտը ճշմարիտէն կը տարբերէ, և բարոյական կեանքը կ'արդարանայ՝ երբ չարը բարիէն կը զատէ։ Մարդկային կեանքը աստիճանաբար կը բարձրանայ, բայց որչափ բանականով զարգանայ և բարոյականով կատարելագործուի, անծայրական բանականութեան և անապառական բարոյականութեան լրմանը չի հասնիր. ամենագէտ և ամենաբարի ըլլալու առաւելութիւնը անեղական էակին սեպհականութիւնն է. եղականը կրնայ յառաջել որչափ իւր անհատական և ստուգական կարողութիւնները կը ներեն, բայց անհասանելիին հասնիլ չի կրնար։

Ուրեմն մարդկային կեանքին իսկութեան պայմանները պէտք է հաստատենք երրակի կերպարաններուն ամենէն ստորին աստիճանին վրայ, որ բանականով կարող ըլլայ իւր գործոց գիտակ-

ցութիւնն ունենալ, իւր անհատական պէտքերը որոնել և որոշել ինքնիրեն բաւել, իսկ բարոյականով որևէ՝ նոյն իսկ ամենանուազ չափով՝ ընկերային կացութեան մասնակից և ընկերութեան օգտակար ըլլալ։ Զմոռնանք բնականն ալ, զի առանց բնական ոյժին հնար չէ որ բանականը գործէ, և բարոյականը արդիւնաւորէ։ Սողջ միտք յառողջ մարմնի (Mens sana iu corpore sano) առածը մարդկային կեանքին լրումը կը ցուցնէ, իբր զի միտքը որ բանականին վարիչն է, բարոյականին ալ ուղղիչն է, և բնականին ալ գործիչը կրնայ ըսուիլ։

Գրութեանս ոճին հետեւելով հետազօտութիւնները պարզապէս գիտական գետնի վրայ պահել ներեալ չեմ սեպեր, եւ գիտական սկզբունքէն յառաջելով, գործնական գետինին կը հասնիմ, և անոր համեմատութեամբ մեր վարած կեանքը չափել և ծրագրել կ'ուզեմ, մէկ խօսքով կացութեան և կոչման պահանջած պայմանները ճշդել, ճշդուած պայմանները կենաց կանոն ընել, և կազմուած կանոններուն համաձայն գործունէութեան անցնիլ։ Այս միտքով և այս դիտմամբ կը մտնեմ քանի մը հիմնական կէտեր յիշել, որոնցմով պէտք է կանոնաւորուի մարդկային կեանքը ընդհանուր առմամբ, և զորս իւրաքանչիւր ոք կրնայ իրեն պատշաճեցնել, մենք ալ մեր կեանքին, ես ալ իմինիս։

Առաջին կէտը կը նկատեմ՝ ոչ մի զբաղմունք անարգել, ոչ մի գործունէութիւն անգոսնել։ Սառյգ է որ կան ազնուագոյն գործեր, ընդարձակագոյն պարապմունքներ, առաւելագոյն արտադրողներ, կարեւորագոյնին ծառայողներ, բայց ուրիշ է մէկուն միւսէն առաւելութիւնը ճանչնալ, և ուրիշ է ընկերային որեւէ զբաղումը արհամարհել։ Ասող քան զասող առաւել է փառոք։ Բայց յետնագոյնն ալ փառք մը ունի իրեն համար։ Եւ եթէ ներուի քիչ մը ես յառաջել, համարձակ պիտի յայտարարեմ թէ ցուցադրութիւնը չեղակի կը համեմատի կարեւորութեան և անհրաժեշտութեան հետ։ Շէնքերուն հաստատութեան անհրաժեշտ պայմանը հիմն է, բայց հողին ներքև ծածկուած և ոչ իսկ կ'երեւի, ամենէն աւելի ցուցադրուած մասը ճակատն է, բայց շէնքին գոյութեան և հաստատութեան համար բնաւ կարեւորութիւն չունի։ Օդային խառնակութեանց ներքև հերկող և ամառնային տօթին ներքև հնձող մշակը ընկերութեան մէջ նուազ պատուուած անձն է, բոցակէզ կրակին դիմաց սալը ծեծող և հրացեալ զան-

գուածը արօրի վերածող երկաթագործը ընկերութեան մէջ պատիւ վայելող չէ, բայց մեր սնունդը անոնց քրտնաթոր աշխատութեան արդիւնքն է։ Գեղեցիկ ապարանքներ կառուցանող ճարտարապետը՝ աղիւսը թրծող, քարերը կոտրող, շաղախը խառնող գործաւորին կը պարտի իւր պարծանքը։ Սառաքելական գեղեցիկ առակովը ոչ գլուխ ձեռքին և ոչ ձեռքը ոտքին կրնան ըսել՝ թէ իրենց պէտք չունին։ Հետեւաբար ամէն ոք ընկերային ծառայութեամբ իրարու կապուած է, և մէկը միւսին ոչ անարգանք կրնայ ուղղել և ոչ անպէտքութիւն յայտարարել։ Սա առաջին կանոն մը։

Իսկ իւրաքանչիւրին զբաղում մը որոշելուն մէջ կամաւոր ընտրութիւններ ցանցառ են. պարագաներն են որ կ'որոշեն սովորաբար, և պարագաներն ալ ոչ կրնան դասաւորուիլ և ոչ կրնան համրուիլ։ Միայն պէտք է արթնութեամբ և հսկողութեամբ հանդիպումները ուսումնասիրել, ձեռք ձգուած առիթները գործածել, լաւագոյնի հետապնդութեամբ լաւը չկորսնցնել, պարապ մնալէ զգուշանալ, մինչև իսկ անխորհուրդ և աննպատակ ուսանողութեամբ ժամավաճառ չըլլալ, արհեստներու մեծ կարեւորութիւն տալ։ Պատանիներու շուրջը տասնուհինգ տարեկան եղած ատենը ապագային ինչ ընելիքը կամ ինչ կրնալ ընելիքը պէտք է որոշուի, և առաջնակային պատրաստութեամբը ըստ այնմ կարգադրուի։ Ես մինչև իսկ վնասակար կը տեսնեմ տասնուվեցէն կամ տասնուեօթէն անդին ուսմանց աւելորդ հետեւողութիւնը, զի անկէ ետքը ուսանողները դժուարաւ արհեստի գործիքներուն ձեռք կը զարնեն, զարգացում ունեցած ըլլալու գաղափարով մեծամտիլ կը սկսին, թերի ուսումներով լուրջ զբաղման անբաւական կը գտնուին, բախտախնդիր պարապորդութեամբ ընթացքնին կը խանգարեն, և այսպիսիներն են որ ընկերային կեանց ցեցեր կը դառնան։ Արհեստը մեր նախնիք ոսկի ապարանջան անուանեցին, որևիցէ գործի մը յարմարութիւն ունենալը անհրաժեշտ պայման ճանչցան։ Ընկերային բազմութեան հապիւ հարիւրէն տասը պաշտօնէութեամբ կը զբաղի, տասը մըն ալ ազատական զբաղումներով կ'ապրի, մնացածին հարիւրէն քառասունը արհեստաւոր է և քառասունն ալ գործաւոր։ Կը սիրեմ այն որ գործաւոր մասը կը կազմէ, այն որ բազուկն ու շալակը կրնայ տրամադրել իբր վաստակի միջոց, բայց կը փափաքիմ որ արհեստաւոր դասա-

կարգը ուճի և բաղմանայ, մինչև իսկ երկրորդական ուսմանց ճաշակը առնողներ արհեստներու նուիրուին և իրենց ուսումնական առաւելութեամբ արհեստին աղնուացնեն, միջոցները կատարելագործեն, շահերնին ընդարձակեն։ Այս ալ երկրորդ կանոն է՝ հարկաւ զբաղում մը սահմանել և արհեստներու կարեւորութիւն ընծայել։

Ընդհանուր մարդկային ընկերութեան մէջ չկայ անհատ մը, կամ աւելի ճիշդ՝ չի կրնար գտնուիլ անհատ մը, որ ինքնիրեն մնացած, առանց ուրիշ անհատի պէտք ունենալու, ինքնիրեն բաւէ և իւրովի իւր պէտքերը լրացնէ։ Ինչ որ կենցաղը կը պահանջէ ինքզինքը պահպանելու և ապահովելու, չլսեմ առատացնելու և զարգացնելու, ուրիշներու անհրաժեշտ պէտքն պատրաստելու համար. կերած հացը, հագած զգեստը, բնակած տունը, գործածած կարասին, ամէն մէկը յիսունով հարիւրով անձերով պատրաստուած է, սկսելով երկաթը հանքէն հանող, եւ ածուխը լերան մէջ պատրաստող խեղճ գործաւորներէն մինչեւ հացը եփող փուռպանը, հագուստը կարող դերձակը, տունը շինող որմնադիրը, կարասին յարմարցնող արհեստաւորը։ Այս տեսութիւնը մեզ կ'առաջնորդէ եզրակացնել, թէ ինչպէս մենք պէտք ունինք ուրիշի օգնութեան, ուրիշն ալ պէտք ունի մեր օգնութեան, և պարտք ունինք ուրիշին օգնելու։ Հետեւաբար ազատ տէր չենք մեր ժամերուն ու տարիներուն. անոնք ուրիշի օգտակար ըլլալու սահմանուած են, և չենք կրնար ազիկամի անգործ անցունել մեր կեանքը։ Ուրիշին իրաւունքը զլացած, ուրիշին սեպհականութիւնը գողցած կը սեպուինք, երբոր ընկերային կեանքին մէջ աշխատող չենք, արտադրող չենք, ընդհանուր պէտքերուն որևիցէ բան մը պատրաստող չենք։ Ահա՛ կանոն մըն ալ՝ թէ անգբաղ և պարապորդ մնալ ներեալ չէ։

Իսկութեան հետապնդող և ստուգութիւն փնտռող ենք ի բնէ և ի ծնէ, և իսկութիւն ու ստուգութիւն ճշմարտութիւն է. ճշմարտութենէ շեղիլը անգիտակցաբար սխալ և գիտակցաբար սուտ է. երկուքէն ալ կը խորշինք թէ վերացական սկզբունքով և թէ փորձառական վնասով։ Այս է բարոյականութեան հիմը։ Կեանքը բարոյական կողմ ալ ունի ըսինք, զի առանց անոր վըստահութիւն կորած կ'ըլլար, ոչ մենք կրնայինք մեր գործերուն անկասկած գետին մը գտնալ, և ոչ ուրիշը կրնար մեզի հետ ան-

կեղծ յարաբերութիւն պահել. ընկերային շրջանակը փոխանակ բարութեանց և բարօրութեանց առաջնորդելու, տառապանաց և տաղտապանաց տարտարոս կը դառնար։ Եւ այդ կացութիւնը ոչ մենք կը սիրէինք ունենալ, և ոչ ուրիշներ յանձն կ'առնէին տեսնալ։ Ուղղութիւնը, որ ճշմարտութեան գործնականութիւնն է, կը պահանջէ որ կեանքերնիս կատարեալ և իւր ամէն մասերով լրացեալ ըլլայ, և այս նպատակը չի կրնար ձեռք ձգուիլ՝ եթէ ոչ բարոյականի հետեւողութեամբ, խաբէութեանց և նենգութեանց հալածմամբ, խարդախութենէ զգուշանալով և սուտզրուցութիւնը մերժելով։ Ահա՛ բարոյական կենաց կանոն մըն ալ։

Բարոյականութեան պահանջ է նաև ուրիշին իրաւունքը յարգել, որպէսզի մեր իրաւունքն ալ յարգուի։ Իրաւունք ունինք մեր կենաց պահպանութեան, մեր սեպհականութեան վայելման, մեր կարողութեանց զարգացման, մեր պատուոյն յարգուելուն, մերը մեզմէ չյափշտակուելուն։ Եթէ ուրիշներէ մեր իրաւունքները կը պահանջենք, և ուրիշներուն իրաւունքին վնասել չենք զգուշանար, լռելեայն ստիպ տուած կ'ըլլանք որ՝ ինչ որ մենք ուրիշին հանդէպ կ'ընենք, ուրիշն ալ մեզի հանդէպ կարենայ ընել. զի նա ալ մեզի հետ նոյն բնութեան տէր, նոյն կացութեան մէջ, մեզի յարևնման անհատ մըն է։ Եթէ կը բաղձանք որ ուրիշէն չվնասուինք, պիտի զգուշանանք ուրիշին վնասել. կեանքերնիս ընկերային է, համերաշխութիւնը պէտք չէ խանդարուի. բարոյականութիւնն է համերաշխութեան արմատը. բարոյականութենէ մերկանալ և կեանքերնիս վարել ու պահել անհնարին է. կենաց լրումը պատկերացնող երևոյթներուն և գոյութիւնը ապահովող պայմաններուն գլխաւորն է բարոյականութիւնը։ Այս ալ մտադրութեան առարկայ ըլլալու է։

Երբոր բնական կեանքը անբաններուն և բուսականներուն հաւասարեցուցինք, զայն անարգել չէր նպատակնիս, այլ ընդարձակութիւնը ցուցնել։ Բնական կեանքը միայն ապրիլ չէ, այլ լաւ և առողջ ապրիլ, և լաւութեան և առողջութեան հոգ տանիլ։ Սակայն այդ հոգացողութիւնը մարմինը պարարելը չէ, փափկակերութեամբ սնանիլը չէ, ընդհակառակն՝ նա կերաւ ու յագեցաւ, ատուտրուցաւ և լայնացաւ, իւր առողջութենէն ալ չեղեցաւ և անդոսնեաց զսիրելին։ Առանց բժշկական հոգածութեան խորերը թափանցելու ալ փորձով և ստուգութեամբ ծա-

նօթ է՝ որ աշխատութեան մէջ աճող, չարքաշութեանց վարժուող, չափաւորութեամբ պահպանուող, բարեխառնութեամբ շարունակողն է որ բնական կեանքը կը խնամէ ու կը պաշտպանէ։ Շռայլութիւն, որկրամոլութիւն, արբեցութիւն, դատարկապորտութիւն բնական կեանքը կը դաւաճանեն. և երբ մարմինը առողջ չէ, ոչ բանականն արժանապէս կը գործէ և ոչ բարոյականը արդիւնաւորապէս կ'ազդէ։

Դեռ երկարօրէն կրնայինք շարունակել կեանքի ամէն մի հանգամանքը նկատի առնելով, և իւրաքանչիւր համապատասխան կանոնը ուսումնասիրելով. ինչ որ ըսինք իբրև նմոյշ՝ կրնայ մը-նացածն ալ իմաստասիրելու առաջնորդել, ուստի կը փութամ միտքս ամփոփել և քաղուածներէն համառօտել։

1. Կեանքը կատարեալ է՝ երբոր բնականին հետ բանականն ու բարոյականն ալ կը միաւորէ։

2. Բնականին համար աշխատութիւնը չափաւոր է, բանականին համար նպատակայարմար, իսկ բարոյականին համար՝ անպայման։

3. Բնականին զարգացման ջանքը արդար և իրաւացի է, բայց նպատակին համեմատելով օգտակար կ'ըլլայ։

4. Ընկերային ամբարտակին հաստատութեան հիմը բնականն է, ատաղձը բանականն է, բայց անոնք ամրացնող շաղախը բարոյականն է։

5. Ամէն անհատի հանրական զբաղում մը անհրաժեշտ է. անգբաղ անհատը ընկերականութեան դաւաճան է։

6. Ոչ մի զբաղում իւր բնութեամբ ստորին է. ցուցադրութիւնը կարևորութեան չեղակի կը համեմատի. ստորինը ամէն զբաղման թերին է։

7. Ակնուագոյն զբաղումներ ընկերականութեան պահանջ են, բայց գերագոյն և ընդարձակագոյն պահանջ՝ արհեստականներն են։

8. Արհեստաւոր դասակարգը իւր կարևորութեան համեմատ պատիւ ունենալու և սանալու արժանի է։

9. Առանց բանականի կիրառութեան և բարոյականի պահպանողականութեան՝ լոկ բնականով օդ շնչելն ու մարմին պարարելը մարդկային կեանք չէ։

10. Կեանքին լրումը գործունէութիւնն է. լաւ է կարճ կեանքը արդիւնաւորութեամբ, քան երկար կեանքը ապաբդիւնութեամբ։

ՂԹ

Դանասկոս, 1918 մայիս 7|20 Բշ.

Ամեն գրաւոր աշխատութիւն հեղինակող կամ աշխատասիրող անձ սովորութիւն ունի Յառաջաբանով մը իւր միտքն ու նպատակը, հետևած ոճն ու ձևը, գործածած կերպերն ու պայմանները, ուսումնասիրած գիրքերն ու աղբիւրները ցուցընել, և կերպով մը իւր գործին ջատագովութիւնը ներկայել։ Այս յառաջաբանները ստոյգ է որ աշխատութիւնը ուսումնասիրէն ետքը կը գրուին, որպէսզի եղելութիւնը լուսաբանուի, և ոչ մտադրութիւնը յայտնուի, քանի որ աշխատութեան ընթացքին կրնան մտադրութիւններ փոխուիլ, և պարագաներ ու պատահարներ կանխաւ չմտածուածը թելադրել։ Սակայն գրուելով մէկտեղ գիրքին սկիզբը կը դրուին, որպէսզի ընթերցողը նախապատրաստուի և ըստ այնմ ընթերցանութեան մէջ յառաջէ և դատէ։ Ես ալ Խոհիֆ ու Խoսֆիս յօդուածներուն առաջին հարիւրեակը փակելուս առթիւ Յառաջաբան մը գրելու պէտքը կը զգամ, բայց վերջէն գրածս վերջին կը թողում, և Յառաջաբանի տեղ Վերջաբան տուած կ'ըլլամ։

Նախ և առաջ յայտարարեմ որ ոչ հետևած աղբիւր ունիմ և ոչ ուսումնասիրած գիրք։ Երուսաղէմէ մեկնած եմ առանց գիրքի և առանց յիշատակարանի. հաղիւ թէ առձեռն համառօտ օրագրութիւն մը առած եմ մէկտեղ, որով կրցայ ճշդել ինչինչ թուականներ. մնացածը պարզապէս և սոսկապէս ըմբռնումի և յիշողութեան արտադրութիւն է, առանց ուսումնասիրութեան գիրքի առնուած, ինչպէս որ միտքիս առջև կը ներկայանար։ Նոյնիսկ երբեմն առանց կապի և առանց կապակցութեան։ Նպատակս ալ հեղինակութիւն մը արտադրել չէ եղած, այլ միայն ժամանցի զբաղում մը ունենալ, քանի որ խաղի ու ծուխի սովորութիւնը չունիմ, այցելութեանց չրջելու սովոր չեմ, և ընթերցանութեան ալ աչքերս չեն զօրեր։ Սակայն այստեղ մնալնիս մեր նախատեսուած

թենէն աւելի երկարելով, ժամանցի պէտքն ալ երկարեցաւ, գրութիւնս ալ համեմատաբար երկարեցաւ, եւ հատուածներու հարիւրեակը չափաւոր աշխատութիւն մը եղաւ, թէեւ առանց ծրագիրի եւ առանց կանոնաւորութեան։

Այս առանց ծրագիրի գործի ձեռնարկելուն իբրեւ հետեւանք՝ միւնոյն եղելութիւնը կամ պատահարը, զանազան տեսակէտներով և զանազան կապակցութիւններով, նորէն ու նորէն ներկայանալուն պատճառով, անհրաժեշտ եղաւ միւնոյն բանը կրկին եւ երեքկին դարձեալ յիշատակել, որ եթէ կանոնաւոր հեղինակութեան մը համար թերութիւն կը համարուի, սակայն պատահական կերպով գրութեան մը համար պէտք է ներելի նկատուի։ Այս դիտողութիւնը քանի մը տեղեր առիթը հանդիպելուն նշանակած եմ։

Պատահական գրութեան մէկ ուրիշ հետեւանքն է, որ գրածներս նոյն օրուան եւ նոյն տրամադրութեան արտայայտութիւններ են, որ ոչ ապագայն կը նախագրաւեն, եւ ոչ փոփոխութիւնը կ'արգիլեն, եւ ոչ ալ վճռական ոյժ մը կը ստանան՝ նոյնիսկ գլուղին տեսակէտէն ալ։ Այս նպատակով իւրաքանչիւր հատուածին վերեւ գլուխին թուականը նշանակած եմ, որպէսզի եթէ ոք քննադատելու և ուղղելու յորդորուի, նախապէս գրութեան օրն եւ գրութեան ոճն համեմատութեան եւ բաղդատութեան դնէ, և ըստ այնմ իւր դատաստանն ընէ։ Գրութեանս մէջ աւելի ժամանակին հոգին ու տեսակէտն է նկատի առնուելիք կէտը, քան թէ խնդիրին վերացական իմաստը կամ եղելութեան ընդհանուր կերպարանը։

Գաղափարներու արտայայտութեան կարգին անկաշկանդ կերպով տեսութիւններ ըրած եմ անձնաւորութեանց և եղելութեանց վրայ, և ծանր խօսքեր իսկ չեմ խնայած գործիչներու և գործողութեանց վրայ։ Սակայն չկարծուի թէ անձնական կիրքի կամ յուսախաբ ակնկալութեան կամ անհաճոյ եղելութեան մը ազդեցութենէն մղուած եմ աննպաստ արտայայտութեանցս մէջ։ Այս նպատակով զգուշացած եմ խիստ բառերու և ծանր ածականներու գործածութենէն, այլ աւելի եղելութեանց և գործողութեանց նոխընթաց և համընթաց և յետընթաց պարագաները մէջտեղ դնելով՝ ուզած եմ որ եղելութիւններ խօսին և գործողութիւններ աղաղակեն, և այս ոճին մէջ ոչ անիրաւ և ոչ ան-

վայելուչ պարագայ մը կը տեսնամ։ Եւ այս այնչափ յայտնի է որ քննադատած անձերուս և գործերուս լաւ կողմերն ալ չեմ լռած, և նոյն անձերուն հանդէպ պատշաճից պահանջը չեմ պակսեցուցած, և նոյն գործերուն մասին հակասութիւններ չեմ ունեցած։ Սակայն կեղծիքը կամ ակնածանքը իբրև պարտք չեմ համարած, երբոր խնդիրը անձնական շրջանակէն դուրս ելլելով՝ պատմական շրջանակին կը մտնայ. և իմ տեսութեամբ հասարակաց կարծիքը նենգել եւ հանրութիւնը խաբել պիտի ըլլար եթէ իսկութիւնը ծածկէի, կամ մարդահաճոյութեամբ ծամածռէի։

Գրութեանս կարգին շատ անձեր յակոնէ անուանէ յիշուած են, նոյնիսկ կենդանի եղողներ, որոց տիտղոս կամ պատուանուն չեմ տուած։ Եկեղեցականները իրենց կոչմամբ եմ յիշած, կաթողիկոս, եպիսկոպոս, վարդապետ, քահանայ. առանց կաթողիկոսին ընդհանրականութիւնը, եպիսկոպոսին արքութիւնը, վարդապետին ծայրագունութիւնը, քահանային աւագութիւնը յիշելու։ Աշխարհականներուն ալ ոչ աստիճանը յիշած եմ, և ոչ պէյ կամ էֆենտի կամ աղա, պարոն կամ տիար կոչումներ աւելցուցած եմ, և ոչ ալ վե�մութիւն և կամ ազնուութիւն, կամ մեծապատուութիւն ածականներ գործածած եմ։ Արդէն պատմական ոճը այդ յաւելուածները չընդունիր. միւս կողմէն այս տիտղոսները այնպէս խառնիխուռն գործածուած են, որ ոչ աստիճանը և ոչ համաչափ պատիւը կ'արտայայտեն. ուզողը պէյ կ'ըլլայ, ուզողը էֆենտի, յետին դասակարգէ անձ մը ալ թաղականութեան կոչուելով՝ ազնուաշուք էֆենտի կ'ըլլայ, և բարձր աստիճանով ճոխացած պաշտօնէին համապատիւ կը դառնայ։ Որովհետև այս մասին որոշ սովորութիւն մը չի կայ, եւ պաշտօնական կոչմանց կանոն մը սահմանուած չէ, եւ պաշտօնականը անպաշտօնէն զատել դժուար էր, դիւրագոյն եղանակ սեպեցի բնաւին չգործածել տիտղոս կամ պատուանուն, եւ գոհանալով պաշտօնը նշանակել, իբրև իւրաքանչիւրին աստիճանին արտայայտիչ։ Բայառաբար եւ յանցառաբար քաշա տիտղոսը գործածած եմ, որովհետև այդ տիտղոսը քմահաճ եւ մարդելոյզ կիրառութեան տակաւին մտած չէ եւ իւր պաշտօնականութիւնը անվթար կը պահէ։

Հեռուած ուղղութիւնս ընդհանուր առմամբ կենսագրականն է, և անձնական եղելութեանց ու գործողութեանց շուրջը կը

դառնայ։ Հանրային և ազգային եղելութիւններ և գործողութիւններ ալ չօշափած եմ, այնչափ՝ որչափ իմ մասնակցութիւնս կը պահանջէր, և ոչ խորերը թափանցելով կամ կատարեալ պատմութիւնը տալու նպատակով։ Ասով մէկտեղ, ինչինչ ընդհանուր նիւթերու վրայ ալ կանգ առնել և ընդարձակագոյն տեսութիւն յայտնել հարկ սեպեցի, մանաւանդ երբոր հարցը ինծի հետ ալ կապակցութիւն մը ունէր, և իմ տեսակէտս լուսաբանել կարեւոր կը դառնար։ Այնպէս կը կարծեմ թէ գործին ընթացքը կը պահանջէր այս զարտուղութիւնները, քանի որ Խոհիերս էին գլխաւորապէս, զորս բացատրել կ'ուզէի, երբոր անոնք Խօսքերու վերածելու միտքը ունեցայ և գործի ձեռնարկեցի։

Այս գլխաւոր պայմանները բացատրած ըլլալս բաւական ըլլայ գործիս ուղղութեան վրայ գաղափար մը տուած ըլլալու համար. մնացեալ կէտեր ամէն գրութեանց հասարակ պայմաններն են և յատուկ բացատրութեան չեն կարօտիր։ Իսկ գործս, իբր ժամանցի զբաղում սկսուած, Դամասկոսի պանդխտութիւններս երկարելով՝ հետզհետէ բաւական ընդարձակ գրուածի մը ձեւն առաւ, և հատուածներուն հարիւրեակին հասած, և գործին ամփոփման և փակման ձեւ մը տուած ատենս ալ, վերջնական փակումի միտք չունիմ։ Յորչափ մեր անկայուն և տարտամ վիճակը կը շարունակէ և ցորչափ ես ժամանցի զբաղում մը ունենալու կը պարտաւորուիմ, և ցորչափ ինծի համար յարմարագոյն և դիւրագոյն և հաճոյագոյն զբաղումը գրութիւնն է, դարձեալ կ'ուզեմ ըստ պատահմանց և ըստ պարագայից նոր յօդուածներ աւելցնել, գուցէ եւ նոր պատահարներու պատճառով արդէն յայտնած տեսակէտներս փոփոխել կամ հարեւանցի անցած դէպքերը լրացնել. վերջապէս պարապորդութեամբ չձանձրանալու համար Խոհի ու Խօսքերուս շարունակութիւնը իբր միջոց գործածել։

Ճ

Յօդուածներու հարիւրեակին իբրև լրումն, այստեղ կ'աւելցնեմ կեանքիս զանազան բաժանումներուն ժամանակագրութիւնը, ուր ինչչափ մնալս, եւ պաշտօններու ինչչափ տեւելը, ես

ուղեւորութեանց քանի օրեր յատկացուած ըլլալը զատ զատ ցուցնող, որ եթէ շատ կարեւոր կէտ մըն ալ չէ, սակայն կենսագրական յիշատակներու ամփոփում մըն է որ կրնայ հետաքրքրական դառնալ, և անգամ մը կատարուած աշխատութիւն է, զոր այստեղ յառաջ բերել ուելորդ չեմ սեպեր։ Միջոցները տարիով, ամիսով և օրով հաշուած եմ։ Տարի-քիս լրումը այսօր եօթանասունեւեօթը տարի և երեք ամիս է, ճիշդ որչափ եղաւ հօրս կեանքը, որ է ըսել՝ թէ եօթանասունութերորդ տարիէն քառորդ մը անցուցած եմ։ Իւրաքանչիւր բաժանման համառօտ բացատրութիւն մըն ալ տուած եմ, ինչպէս առաջիկային կը տեսնուի։

Իբրև լրումն գրութեանս առաջին հարիւրեակին՝ կ'աւելցնեմ գլխակարգութեանց ցանկն ալ. գլուխները խառն ըլլալուն ամփոփում մըն ալ կ'աւելցնեմ այստեղ, նոյն նիւթին կամ նոյն միջոցին վերաբերեալ հատուածները դիւրութեամբ գտնելու և հետեւելու համար, և գլխաւոր բաժանումներու համեմատ ամփոփումն ալ։

Գրութեանս հանգամանքները.— Ա. Հակիրճ Յառաջաբան, Ղթ. Խոհք ու Խօսքիս կազմութիւն, Ճ. Ժամանակագրութիւն և Ցանկ։ Յօդուած 3

Անձնական կեանքի պարագաներ.— Բ. Առողջական վիճակ. Ե. Տարելից մը լրացած, Զ. Դամասկոսի մէջ, ԺԴ. Պատրաստուած Յիշատակագիրք, ԺԸ. Աշակերտութեան միջոց, ԻԹ. Անձնական կենցաղ, Լ. Մահամերձ խօթութիւն, ԾԴ. Տարելից մը ևս, ԿԹ. Անձնական յուշեր, ՁԱ. Անհատական կենցաղ, ՁՁ. Յետահայեաց ակնարկներ, ՂԳ. Դրական կեանքս, ՂՁ. Կերպարանի ամփոփում։ 13

Առաջին գործունեութիւն.— ԻԱ. Քահանայութեան միջոց, ԻԲ. Կրօնաւորութեան միջոց, և առաջին ասպարէզ։ 2

Անտոնեան Միաբանութիւն.— ԻԳ. Անտոնեանց դատը, ԻԵ. Անտոնեանց տագնապը, ԻԷ. Գործակատարութեան պաշտօն, ԼԱ. Վանքին վաճառումը, ԼԲ. Հռոմէ գալէն ետքը։ 5

Հակահաւատեաց խնդիր. — ԻԴ. Հայ Կաթոլիկ ժողով, ԻԶ. Հակահաւատեան խնդիր, ԻԸ. Զանազան հրատարակութիւններ։ 3

Վերադարձի հանգամանքներ. — Դ. Վերադարձի շարժառիթը, ԼԴ. Դէպի Հայ Եկեղեցին, ԼԴ. Վերջնական որոշում։ 3

Մասնաւոր պատմութիւններ. — ԼԸ. Տարօնոյ քննիչ, ԼԵ. Ղալաթիոյ քարոզիչ, ԽԱ. Բերայի քարոզիչ, ԽԳ. Վանայ քննիչ, ԽԶ. Ատաբազարի քննիչ։ 5

Կարնոյ առաջնորդութիւն. — ԼԶ. Կարնոյ առաջնորդ, ԼԷ. Սանասարեան Վարժարան, ԼԹ. Կարնոյ տագնապը, ԽԱ. Դարձեալ Կարին, ԽԲ. Եպիսկոպոսական ձեռնադրութիւն, ԽԴ. Առաջնորդութեան վերջ։ 6

Արմաշի Դպրեվանք. — ԽԶ. Եկեղեցական Վարժարան, ԽԷ. Արմաշի Դպրեվանք, ԽԹ. Դպրեվանքի տագնապը, ԿԸ. Դպրեվանքի շուրջը, ՂԵ. Արմաշական Դպրեվանքցիներ։ 5

Կ. Պոլսոյ Պատրիարքութիւն. — Է. Վարչական պաշտօն, Ը. Պատրիարքական պաշտօն, Թ. Պաշտօնէ քաշուիլ, Ժ. Պաշտօնավարութեան կերպ, ԺԲ. Արտաքիններու հանդէպ, ԺԳ. Ներքիններու հանդէպ, Ծ. Կ. Պոլսոյ Պատրիարք, ԾԱ. Փոխադարձ ընթացք, ԾԲ. Ներքին կարգադրութիւնք, ԾԵ. Հրաժարականի փորձեր, ԾԷ. Մահափորձի հանգամանքներ, ԾԸ. Վարչութեան նորոգութիւն, ԿԳ. Արկածելոց նպաստներ, ԿԴ. Շինարար ձեռնարկներ, ԿԵ. Հանդիսական առիթներ, ԿԶ. Պաշտօնական դարձուածներ, ԿԷ. Ցարաբերական պարագաներ։ 17

Ազգային խնդիրներ. — ԾԳ. Ապտուլհամիտ և Հայեր, ԾԹ. Կուսակցական դրութիւն, ՁԲ. Ազգային տագնապ, ՁԳ. Կազմակերպական փոփոխութիւն,

ԶԴ. Փոփոխութենէ եւ քը, ԶԵ. Նորանոր տագնապ-
ներ, ԶԷ. Ազգային կացութիւն։ 7

Պատիարքութենէ եւ քը.— Հ. Հրաժարականի խ-
կութիւնը, ՀԱ. Հետեւորդ միջադէպներ, ՀԲ. Ամբաս-
տանութեանց ընթացքը, ՀԳ. Հանդարտ աշխատու-
թիւն, ՀԴ. Անպարտութենէ եւ քը։ 5

Երուսաղէմի գործեր—. Կ. Երուսաղէմի հաշիւ-
ներ, ՀԶ. Երուսաղէմի անցքեր, ՀԷ. Երուսաղէմի պա-
տուիրակ, ՀԸ. Երուսաղէմի վարիչ, ՀԹ. Գրական ըզ-
բաղումներ, Զ. Պաշտօնական կեանք։ 6

Կիլիկիոյ կաթողիկոսութիւն.— ԾԶ. Կիլիկիոյ
խնդիրներ։ 1

Էջմիածնի գործեր.— ԽԵ. Էջմիածնի ուսուցիչ, ԽԸ.
Էջմիածնի պատգամաւոր, ԿԱ. Էջմիածնի կալուածներ։ 3

Եկեղեցական եւ ազգային խնդիրներ.— ԺԹ. Կու-
սակրօնութեան խնդիր, ԿԲ. Ամուսնական հարցեր, ՀԵ.
Եկեղեցական բարեկարգութիւն, ԶԵ. Նորանոր տագ-
նապներ, ԶԷ. Ազգային կացութիւն։ 5

Ընդհանուր տեսութիւններ.— Դ. Հաւատք, Յոյս,
Սէր, ԺԱ. Վարչականութեան ոճը, ԺԵ. Պարտաճանաչ
ըմբռնում, ԺԶ. Ապատութեան սկզբունք, ԺԷ. Նախա-
հոգութեան օգուտ, ՂԴ. Ծանօթներու մահացուցակ։ 6

Ընտանեկան յիշատակներ.— ՁԸ. Նախնիք և ծնողք,
ՁԹ. Ընտանեկան յիշատակներ, Ղ. Ընտանեկանաց
շարունակութիւն, ՂԱ. Դարձեալ ընտանեկանք, ՂԲ.
Այժմեան ընտանիք։ 5

100

ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ ՑՈՒՑԱԿ

(ՀԻՆ ՏՈՄԱՐՈՎ)

	Տեւողութիւն		
	Տարի	Ամիս	Օր
1. 1841 *Փետրուար* 11 - 1851 *մայիս* 13.— *Ծնունդէս մինչեւ Հռոմ աշակերտութեան երթալս ապրեցայ Բերա, Ֆէրիտիէ փողոց, ամառները օդափոխութեան երթալով, անգամ մը Պէյքօղ և անգամ մը Հալքի կամ Հէյպէլի կղզի։*	10	3	2
2. 1851 *Մայիս* 13 - 1851 *մայիս* 25.— *Պոլիսէ Հռոմ ուղեւորութիւնս, Զմիւռնիոյ, Մալթայի եւ Զիւրիխ-Ալէքքիայի ճանպով։*	—	—	12
3. 1851 *Մայիս* 25 - 1866 *յունուար* 19.— *Հռոմի Անտոնեանց վանքը աշակերտական կեանքս, երբեմն սեպտեմբեր հոկտեմբերին օդափոխութեան երթալով, առաջները Ֆրասքաթի, ետքէն Ֆասթէլ, Կանտոլֆօ, Բօրթօտանցիօ, Բօծիօվաթինօ եւ Ֆարֆա։ Այդ միջոցին Քահանայական ձեռնադրութիւնս* 1863 *օգոստոս* 12, *երբ էի* 22-6-1 *տարեկան։*	14	7	24
4. 1866 *Յունուար* 19 - 1866 *փետրուար* 5.— *Հռոմէ Պոլիս դառնալու ուղեւորութիւնս Անքոնայի և Թրիէսթէի ճանպով, Վենետիկ ալ երթալով և դառնալով։*	—	—	16
5. 1866 *Փետրուար* 5 - 1867 *սեպտեմբեր* 20.— *Պոլսոյ մէջ մընացած ատենս իբր աբբահօր քարտուղար, տունը Գատըքէօյ, գործը Բանկալթի, Պոլսոյ և Վոսփորի պտոյտներ։*	1	9	15
6. 1867 *Սեպտեմբեր* 20 - 1867 *հոկտեմբեր* 16.— *Պոլիսէ Հռոմայ վանքը դառնալուս ուղեւորութիւնը միաբանութեան դատին առթիւ, Մարսիլիայի և Լիվօռնոյի ճանպով, բարիզ ալ երթալով ու դառնալով։*	—	—	26
7. 1867 *Հոկտեմբեր* 16 - 1868 *հոկտեմբեր* 17.— *Հռոմ մնացած ժամանակս դատին խնդիրին առթիւ։*	1	—	1
8. 1868 *Հոկտեմբեր* 17 - 1868 *հոկտեմբեր* 25.— *Հռոմէ Պոլիս դառնալու ուղեւորութիւնս, Նաբօլիի և Մեսինայի ճանպով։*	—	—	8

ԻՍՏՈՐԻԱ ՄԱՍԱՎՈՐԻՍ

	Տեւողութիւն		
	Տարի	Ամիս	Օր
9. 1868 Հոկտեմբեր 25 - 1869 Նոյեմբեր 1.— Պոլիս մնացած ատենս, Եպիսկոպոսաց ժողովին տարին, բնակութիւն Գատըքէօյ և Բերա, գործ Բերա։	1	—	6
10. 1869 Նոյեմբեր 1 - 1869 Նոյեմբեր 6.— Պոլիսէն Հռոմ ուղեւորութիւնս Վատիկանեան ժողովին առթիւ, Շիրայի և Պրինտիզիի ճանպով։	—	—	5
11. 1869 Նոյեմբեր 6 - 1870 ապրիլ 19.— Հռոմայ մէջ մնացած ատենս, մինչև փախստեամբ Հռոմի հալածանքէն ապատելնիս։	—	5	13
12. 1870 Ապրիլ 19 - 1870 մայիս 17.— Հռոմէն փախչելով Պոլիս գալու ուղեւորութիւնս, Լիվոռնո դպարելով և շարունակելով Վիէննայի, Դանուբի և Վառնայի ճանպով։	—	—	28
13. 1870 Մայիս 17 - 1871 ապրիլ 24.— Պոլիս մնացած ատենս Հակահասունեան շարժումին մէջ իբրեւ գործող և գրող, միանգամայն վանական պաշտօններ վարելով. բնակութիւն Գատըքէօյ և Օրթաքէօյ։	—	11	7
14. 1871 Ապրիլ 24 - 1871 ապրիլ 29.— Պոլիսէ Հռոմ ուղեւորութիւնս, գործակատարութեան պաշտօնով և աշխարհիկ տարազով, Շիրայի և Պրինտիզիի ճանպով։	—	—	5
15. 1871 Ապրիլ 29 - 1872 յունուար 8.— Հռոմ հասնելէս ետքը վանքին մէջ բնակած միջոցս։	—	8	9
16. 1872 Յունուար 8 - 1872 սեպտեմբեր 30.— Հռոմի բնակութիւնս վանքէն դուրս փոխադրուելէս մինչև երեք եղբայրներ միասին ըլլալնիս։	—	8	22
17. 1872 Սեպտեմբեր 20 - 1873 հոկտեմբեր 14.— Երեք եղբայրներ միասին ըլլալնուս օրէն մինչև անոնց մեկնելէն ետքը հիւսիսային Իտալիոյ շրջագայութեան ելլալս։	1	—	14
18. 1873 Հոկտեմբեր 14 - 1873 Նոյեմբեր 17.— Հիւսիսային Իտալիոյ շրջագայութենէս մինչեւ Միլանոյի մէջ Փափազեանց հետ միանալով Հռոմ դառնալս։	—	1	3

	Տեւողութիւն		
	Տարի	Ամիս	Օր
19. 1873 Նոյեմբեր 17 - 1875 մարտ 20.— Հռոմի բնակութիւնս, շրջագայութենէ դառնալէն եւ Նաբոլի ալ երթալ գալէն մինչեւ մեծ հիւանդութիւնս։	1	4	3
20. 1875 Մարտ 20 - 1875 մայիս 13.— Մահացու հիւանդութեան միջոցը մինչև տունէ ելլալս։	—	1	23
21. 1875 Մայիս 13 - 1875 յունիս 20.— Հիւանդութենէս ետքը տունէն ելնելէս մինչև օդափոխութեան համար ուղեւորիլս։	—	1	7
22. 1875 Յունիս 20 - 1875 յունիս 24.— Ուղեւորութեանս առաջին մասը Հռոմէն մինչև Փարիզ։	—	—	4
23. 1875 Յունիս 24 - 1875 յուլիս 18.— Փարիզ մնացած միջոցս, մինչև Լոնտրա մեկնիլս։	—	—	24
24. 1875 Յուլիս 18 - 1875 օգոստոս 11.— Լոնտրա մնացած միջոցս անգամ մըն ալ Փարիզ գալով և դառնալով։	—	—	23
25. 1875 Օգոստոս 11 - 1875 սեպտեմբեր 4.— Լոնտրայէ մեկնելով և Գէորգ Սամանճեանի ընկերանալով Պելճիա, Հռենոսեան երկիրներ, Հելուետիա և Վիէննա պտտիլս, եւ անկէ Պաւարիա հանդիպելով Հռոմ դառնալս։ Իսկ բոլոր ուղեւորութիւնս 0-2-14։	—	—	23
26. 1875 Սեպտեմբեր 4 - 1876 ապրիլ 30.— Հռոմ դառնալէս ետքը վանքին վաճառումն ալ լրացնելով Պոլիս ուղեւորիլս։	—	9	26
27. 1876 Ապրիլ 30 - 1876 մայիս 7.— Հռոմէ Պոլիս դառնալու ուղեւորութիւնս, Մեսինայի ճանպով։	—	—	7
28. 1876 Մայիս 7 - 1879 հոկտեմբեր 28.— Պոլսոյ մէջ անցուցած ժամանակս՝ Անտոնեան միաբանութեան, Հակահաւատնեան հասարակութեան և Հայոց պատրիարքարանի մէջ զանազան պաշտօններով, մինչև պաշտօնապէս վերադարձս։	3	5	6

	Տեւողութիւն		
	Տարի	Ամիս	Օր
29. 1879 Հոկտեմբեր 28 - 1880 մայիս 12.— Վերադարձէս եւ-քը Պոլիս մնացած միջոցս, իբրեւ քարոզիչ Ղալաթիոյ, մինչեւ Կարին մեկնիլս։	—	6	14
30. 1880 Մայիս 12 - 1880 մայիս 29.— Պոլիսէ Կարին ուղեւորութիւնս։	—	—	17
31. 1880 Մայիս 29 - 1882 օգոստոս 5.— Կարնոյ մէջ առաջնորդութեամբ մնալս, մինչեւ Տարօն մեկնիլս։	2	2	6
32. 1882 Օգոստոս 5 - 1882 օգոստոս 13.— Կարինէ մեկնելով և Խնուս այցելելով Ս. Կարապետի ուղեւորութիւնս։	—	—	8
33. 1882 Օգոստոս 13 - 1882 սեպտեմբեր 9.— Ս. Կարապետ մնացած միջոցս քննչական պաշտօնով։	—	—	26
34. 1882 Սեպտեմբեր 9 - 1882 սեպտեմբեր 15.— Ս. Կարապետէն Ս. Յովհաննէս և անկէ Մշոյ քաղաք։	—	—	6
35. 1882 սեպտեմբեր 15 - 1882 հոկտեմբեր 12.— Մուշ քաղաք մնացածս, քննչական պաշտօնով։	—	—	27
36. 1882 Հոկտեմբեր 12 - 1882 հոկտեմբեր 28.— Առաքելոց վանք, Մատնավանք, Կուիսց վանք շրջիլս մինչեւ Ալաշկերտի վանքը։	—	—	16
37. 1882 Հոկտեմբեր 28 - 1882 Նոյեմբեր 9.— Ալաշկերտ և Բասեն շրջելով Կարին դառնալս։	—	—	11
38. 1882 Նոյեմբեր 9 - 1883 մարտ 24.— Կարին դառնալէս մինչեւ Պոլիս ուղեւորիլս։	—	4	15
39. 1883 Մարտ 24 - 1883 ապրիլ 5.— Կարինէ մեկնելով մինչեւ Պոլիս ուղեւորութիւնս։	—	—	11
40. 1883 Ապրիլ 5 - 1884 սեպտեմբեր 24.— Պոլիս մնացած միջոցս Բերայի քարոզչութեամբ, և Կարնոյ առաջնորդութիւնը պահելով և տպագրին աշխատելով։	1	5	19
41. 1884 Սեպտեմբեր 24 - 1884 հոկտեմբեր 9.— Պոլսէն Կարին դառնալու ուղեւորութիւնս։	—	—	15

	Տեղուտիւն		
	Տարի	Ամիս	Օր
42. 1884 Հոկտեմբեր 9 - 1885 յունիս 10.— Կարին հասնելէս մինչեւ Դերջան մեկնիլս։	—	8	1
43. 1885 Յունիս 10 - 1885 յուլիս 10.— Դերջանի և Քղիի այցելութիւնները լրացնելով Կարին դառնալս։	—	1	—
44. 1885 Յուլիս 10 - 1886 մայիս 4.— Կարին դառնալէս մինչեւ եպիսկոպոսութեան համար Էջմիածին ուղեւորիլս։	—	9	24
45. 1886 Մայիս 4 - 1886 մայիս 28.— Կարինէ Տրապիզոնի և Տփղիսի ճանպով Էջմիածին հասնիլս։	—	—	24
46. 1886 Մայիս 28 - 1886 Յունիս 19.— Եպիսկոպոսութեան առթիւ Էջմիածին մնացած ատենս։ Այս միջոցին եպիսկոպոս ձեռնադրուիլս 1886 Յունիս 8, երբ էի 45-3-27 տարեկան։	—	—	21
47. 1886 Յունիս 19 - 1886 յունիս 26.— Էջմիածինէ Վան ուղեւորութիւնս, Իգդիրի, Պայազիտի և Ալաշկերտի ճանպով։	—	—	7
48. 1886 Յունիս 26 - 1886 օգոստոս 4.— Վան մնացած ատենս քննչութեան պաշտօնով։	—	1	8
49. 1886 Օգոստոս 4 - 1886 օգոստոս 23.— Վանէն Կարին դառնալս Աղթամարի, Բաղէշի, Ախլաթի և Խնուսի ճանպով։	—	—	19
50. 1886 Օգոստոս 23 - 1887 մայիս 19.— Կարին դառնալէս ետքը մինչև Թորդում մեկնիլս։	—	8	26
51. 1887 Մայիս 19 - 1887 յունիս 23.— Թորդումի, Կիսկիմի, և Սպերի վիճակներու այցելութեան պտոյտս։	—	1	4
52. 1887 Յունիս 23 - 1887 յուլիս 6.— Կարին դառնալէս մինչև Կ. Պոլիս ուղեւորիլս։	—	—	13
53. 1887 Յուլիս 6 - 1887 յուլիս 22.— Կարինէ Կ. Պոլիս ուղեւորութիւնս։	—	—	16
54. 1887 Յուլիս 22 - 1887 օգոստոս 19.— Էջմիածին չմեկնած Կ. Պոլիս մնացած ատենս։	—	—	27

	Տարի	Ամիս	Օր
	Տեւողություն		
55. 1887 Օգոստոս 19 - 1887 սեպտեմբեր 3.— Կ. Պոլիսէ Էջմիածին ուղեւորութիւնս Պաթումի և Տփղիսի ճանապով։	—	—	14
56. 1887 Սեպտեմբեր 3 - 1888 յուլիս 19.— Էջմիածին մնացած ատենս, ուսուցչութեան պաշտօնով։	—	10	16
57. 1888 Յուլիս 19 - 1888 օգոստոս 11.— Էջմիածինէ Կ. Պոլիս ուղեւորութիւնս Աղիքսանդրապոլի, Ախալցխայի և Պաթումի ճանապով։	—	—	22
58. 1888 Օգոստոս 11 - 1889 յուլիս 13.— Կ. Պոլսոյ մէջ մնալս Գարակէօմրիւկի և Գատըքէօյի քարոզչութեամբ և Դըպրեվանքի պատրաստութեամբ մինչև Աստաբազար մեկնելս. Արմաշ ալ երթալով ու դառնալով։	—	11	2
59. 1889 Յուլիս 13 - 1889 օգոստոս 23.— Աստաբազարի և Նիկոմիդիոյ քննչութեամբ զբաղած միջոցս։	—	1	10
60. 1889 Օգոստոս 23 - 1889 սեպտեմբեր 9.— Պոլիս դառնալէս մինչև Պոլսէն Արմաշ երթալս, այս առթիւ վերատեսչութիւնը և վանահայրութիւնը ստանձնելս. 18-6-28 տարեկան եղած ատենս։	—	—	16
61. 1889 Սեպտեմբեր 9 - 1892 ապրիլ 17.— Արմաշ մնացած միջոցս, մերթ ընդ մերթ Պոլիս և անգամ մը Պարսիպակ երթալով գալով, մինչև Էջմիածին երթալու համար մեկնելս։	2	7	8
62. 1892 Ապրիլ 17 - 1892 մայիս 2.— Արմաշէ Պոլիս գալով և շաբաթ մը հոն մնալով Էջմիածին հասնելս։	—	—	15
63. 1892 Մայիս 2 - 1892 մայիս 8.— Ընտրութեան համար Էջմիածին մնացած օրերս։	—	—	6
64. 1892 Մայիս 8 - 1892 մայիս 20.— Էջմիածինէ Տփղիս և անտի Պոլիս, և Պոլիսէ Արմաշ ուղեւորութիւնս։	—	—	12
65. 1892 Մայիս 20 - 1896 Յուլիս 18.— Արմաշ դառնալէս մինչև վերջընթեր անգամ Պոլիս գալս, մերթ ընդ մերթ գալով և դառնալով։	4	1	28

Ամփոփումներ	Տեղողությունը Տարի	Ամիս	Օր
66. 1896 Յուլիս 18 - 1896 սեպտեմբեր 10.— Պոլսոյ տագնապի առեն հոն եղած միջոցս։	—	1	22
67. 1896 Սեպտեմբեր 10 - 1896 հոկտեմբեր 14.— Տագնապի ժամանակ Սրմաշ մնացած միջոցս։ Իսկ Սրմաշի պաշտօնավարութիւնս բոլանդակ 7-1-5։	—	1	4
68. 1896 Հոկտեմբեր 14 - 1896 Նոյեմբեր 6.— Պոլիս հասնելէս մինչև պատրիարք ընտրուելս։	—	—	22
69. 1896 Նոյեմբեր 6 - 1896 Նոյեմբեր 20.— Պատրիարք ընտրուելէս մինչև Ուխտի օրը գործի ձեռնարկելս։	—	—	14
70. 1896 Նոյեմբեր 20 - 1899 սեպտեմբեր 23.— Գործի ձեռնարկելէս մինչև առաջին հրաժարագիրս։	2	10	3
71. 1899 Սեպտեմբեր 23 - 1899 հոկտեմբեր 9.— Առաջին հրաժարագիրիս վրայ մնացած միջոցս։	—	—	16
72. 1899 Հոկտեմբեր 9 - 1900 մարտ 8.— Առաջինը ետ առնելէս մինչև երկրորդ հրաժարագիրս։	—	4	29
73. 1900 Մարտ 8 - 1900 մայիս 13.— Երկրորդ հրաժարագիրի վրայ պնդած միջոցս։	—	2	5
74. 1900 Մայիս 13 - 1902 յուլիս 20.— Երկրորդը ետ առնելէս մինչև երրորդը։	2	2	7
75. 1902 Յուլիս 20 - 1902 օգոստոս 19.— Երրորդ հրաժարականի վրայ պնդած միջոցս։	—	—	29
76. 1902 Օգոստոս 19 - 1906 յունիս 16.— Երրորդ հրաժարագիրը ետ առնելէս մինչև չորրորդը։	3	9	27
77. 1906 Յունիս 16 - 1906 յուլիս 17.— Չորրորդին վրայ պընդած միջոցս։	—	1	1
78. 1906 Յուլիս 17 - 1908 յուլիս 16.— Չորրորդը ետ առնելէս մինչև վերջնական հրաժարագիրս։ Իսկ բոլանդակ պատրիարքութեանս միջոցը ընտրուած օրէն 11-8-10։	1	11	29

	Տեւողութիւն		
	Տարի	Ամիս	Օր
79. 1908 *Յուլիս* 16 - 1912 *դեկտեմբեր* 21.— *Վերջնական հրաժարականէս ետքը ամբաստանութեանց և քննութեանց և դատաստանաց միջոցը մինչև անպարտութեան վճիռը։ Սան Սթեֆանոյի գիւղապնացութիւնս* 1909 *յունիս* 1-1909 *սեպտեմբեր* 14, *որ է* 0-3-13։	4	5	5
80. 1912 *Դեկտեմբեր* 21 - 1913 *օգոստոս* 19.— *Անպարտութեան վճիռէն մինչև ծանրապէս հիւանդանալս*	—	7	28
81. 1913 *Օգոստոս* 19 - 1913 *սեպտեմբեր* 26.— *Հիւանդութեանս սկիզբէն մինչև Մեծ Կղզի օդափոխութեան երթալս։*	—	1	7
82. 1913 *Սեպտեմբեր* 26 - 1913 *հոկտեմբեր* 17.— *Մեծ Կղզի օդափոխութեան տեւողութիւնը։*	—	—	21
83. 1913 *Հոկտեմբեր* 17 - 1914 *ապրիլ* 26.— *Օդափոխութենէ դառնալէս մինչև Երուսաղէմ ուղեւորիլս։*	—	6	9
84. 1914 *Ապրիլ* 26 - 1914 *մայիս* 6.— *Երուսաղէմի ուղեւորութիւնս Զմիւռնիա, Աղեքսանդրիա և Յոպպէ հանդիպելով։*	—	—	10
85. 1914 *Մայիս* 6 - 1916 *օգոստոս* 6.— *Երուսաղէմի քննչութիւն և վարչութիւն մինչև Խապայեանի փոխանցումը։*	2	3	—
86. 1916 *Օգոստոս* 6 - 1917 *նոյեմբեր* 6.— *Երուսաղէմի վարչութիւնը թողուլէս մինչև Երուսաղէմէ մեկնիլս։*	1	3	—
87. 1917 *Նոյեմբեր* 6 - 1917 *նոյեմբեր* 13.— *Երուսաղէմէն Դամասկոս ուղեւորութիւնս Նապլուսի և Տրայի ճանպով։*	—	—	7
88. 1917 *Նոյեմբեր* 13 - 1918 *մայիս* 8.— *Դամասկոս հասնելէս մինչև այս ժամանակագրութիւնը փակելու օրս։*	—	5	25
	77	2	27

BnF
L&A

ՑԱՆԿ

Հատուած		էջ
Ա.	Հակիրճ Յառաջաբան	1
Բ	Առողջական վիճակ	2
Գ	Վերադարձիս շարժառիթը	3
Դ	Հաւատք, Յոյս, Սէր	9
Ե	Տարի մը լրացած	12
Զ	Դամասկոսի մէջ	13
Է	Վարչական պաշտօն	14
Ը	Պատրիարքական պաշտօն	16
Թ	Պաշտօնէ քաշուիլ	19
Ժ	Պաշտօնավարութեան կերպը	21
ԺԱ.	Վարչականութեան ոճը	25
ԺԲ	Արտաքիններու հանդէպ	28
ԺԳ	Ներքիններու հետ	31
ԺԴ	Պատրաստուած Ցիշատակագիրք	34
ԺԵ	Պարտաճանաչ ըմբռնում	36
ԺԶ	Ազատութեան սկզբունք	39
ԺԷ	Նախահոգութեան օգուտ	41
ԺԸ	Աշակերտութեանս միջոցը	42
ԺԹ	Կուսակրօնութեան խնդիր	47
Ի	Կրօնաւորութեան միջոց	51
ԻԱ.	Քահանայութեան միջոց	53
ԻԲ	Առաջին ասպարէզ	56
ԻԳ	Անտոնեանց դասը	60
ԻԴ	Հայ կաթոլիկ ժողով	63
ԻԵ	Անտոնեանց տագնապը	67
ԻԶ	Հակահատուածեան խնդիր	71
ԻԷ	Գործակատարութեան պաշտօն	75
ԻԸ	Զանազան հրատարակութիւններ	79
ԻԹ	Անձնական կենցաղ	82
Լ	Մահամերձ խօսքեր	86

ԼԱ	Վանքին վաճառումը	91
ԼԲ	Հռոմէ գալէն ետքը	94
ԼԳ	Դէպի Հայ Եկեղեցին	98
ԼԴ	Վերջնական որոշում	103
ԼԵ	Ղալաթիոյ քարոզիչ	106
ԼԶ	Կարնոյ առաջնորդ	108
ԼԷ	Սանասարեան վարժարան	112
ԼԸ	Տարօնոյ քննիչ	115
ԼԹ	Կարնոյ տապնապը	118
Խ	Բերայի քարոզիչ	124
ԽԱ	Դարձեալ Կարին	129
ԽԲ	Եպիսկոպոսական ձեռնադրութիւն	132
ԽԳ	Վանայ քննիչ	136
ԽԴ	Առաջնորդութեան վերջ	140
ԽԵ	Էջմիածնի ուսուցիչ	142
ԽԶ	Եկեղեցական վարժարան	149
ԽԷ	Արմաչի Դպրեվանք	153
ԽԸ	Էջմիածնի պատգամաւոր	161
ԽԹ	Դպրեվանքի տապնապը	166
Ծ	Կ. Պոլսոյ պատրիարք	170
ԾԱ	Փոխադարձ ընթացք	174
ԾԲ	Ներքին կարգադրութիւնք	179
ԾԳ	Ապուլհամիտ և Հայեր	184
ԾԴ	Տարեվերջ մը ևս	190
ԾԵ	Հրաժարականի փորձ	193
ԾԶ	Կիլիկիոյ խնդիրները	197
ԾԷ	Մահափորձի հանգամանքներ	201
ԾԸ	Վարչութեան նոր դուիլը	207
ԾԹ	Կուսակցական դրութիւն	213
Կ	Երուսաղէմի հաշիւներ	220
ԿԱ	Էջմիածնի կալուածները	229
ԿԲ	Ամուսնական հարցեր	233
ԿԳ	Արկածելոց նպաստներ	238
ԿԴ	Շինարար ձեռնարկներ	246
ԿԵ	Հանդիսական ուրիշներ	252
ԿԶ	Պաշտօնական դարձուածներ	259

ԿԷ	Յարաբերական պարագաներ	267
ԿԸ	Դպրեվանքի շուրջը	271
ԿԹ	Անձնական յուշեր	277
Հ	Հրաժարականին իսկութիւնը	279
ՀԱ	Հեռեւորդ մինչ ադէպներ	283
ՀԲ	Ամբաստանութեանց ընթացքը	288
ՀԳ	Հանդարտ աշխատութիւն	294
ՀԴ	Անպտղութենէ ետքը	300
ՀԵ	Եկեղեցական բարեկարգութիւն	305
ՀԶ	Երուսաղէմի անցքեր	311
ՀԷ	Երուսաղէմի պատուիրակ	317
ՀԸ	Երուսաղէմի վարիչ	323
ՀԹ	Գրական գբաղումներ	325
Զ	Պաշտօնական կեանք	329
ԶԱ	Անհատական կենցաղ	332
ԶԲ	Ազգային ատգնապ	335
ԶԳ	Կազմակերպական փոփոխութիւն	339
ԶԴ	Փոփոխութենէ ետքը	344
ԶԵ	Նորանոր ատգնապներ	350
ԶԶ	Յեռահայեաց ակնարկներ	356
ԶԷ	Պատերազմներու վերջանալը	362
ԶԸ	Նախնիք և ծնողք	372
ԶԹ	Ընտանեկան յիշատակներ	380
Ղ	Ընտանեկանաց շարունակութիւն	387
ՂԱ	Դարձեալ ընտանեկանք	398
ՂԲ	Ամիսն ընտանեկանք	408
ՂԳ	Գրական կեանքս	412
ՂԴ	Ծանօթներու մահացուցակ	419
ՂԵ	Սրմաշական Դպրեվանքցիներ	440
ՂԶ	Կերպարանքներու ամփոփում	457
ՂԷ	Ազգային կացութիւն	464
ՂԸ	Կեանքի իսկութիւնը	479
ՂԹ	Խոհիք ու Խօսքիս կազմութիւն	486
Ճ	Ժամանակագրութիւն և Ցանկ	489

Վ Ե Ր Ջ

BnF
L&A